Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

16294

291-38
П-89

891.99
Պ-89

ՀԱՅԻ ԽՆԴԻՐ

ԸՍԴԵՑԻՆ ՎԻՊԱՍՏՆՈՒԹԻՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՆ

ՊԵՐՃԻ ՊՌՕՇԵԱՆՑ

ԱՇՏԱՐԱԿԵՑԻՈՑ

ԹԻՖԼԻՍ

Ե. Մարտիրոսեանցի տպարանում

1880

20 03

Дозволено цензурою. Тифлисъ, 30 Октября 1879 г.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ
Մ. Աբեղյանի անվան
ԳՐԱԴԱՐԱՆ
3694-48

Типографія И. Мартиросіанца, на Орб ул. д. № 5.

ԻՄ ԱԶՆԻՒ ԲԱՐԵԿԱՄ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՐԵՑԵՍՆԵՑԻՆ

ԵՂԲԱՑՐԱԿԱՆ ՍԻՐՈՑ

ՆՈՒԷՐ

3593

ԻՄ ԱԶՆԻՒ ԵՂԲԱՅՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ

ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԵԿԱՄ

«Հայել Խնդրէս» Ձախատը քո անուհիովը պահելու, քո ուսուան և ազգանուան գլխատառերը գաբնեայ պտակի մէջ լուսատոռուԹեան հրեշտակների ձեռքով ոլջ Հայաստան Թռցնելու մասին Թող չվերտվի քո անխտաստէը հոգին, Թող չվերտաւորի քո պարզ և հաճատ սիրտը։ Այդ ես ասիկ եմ ոչ շողոքորԹուԹեամբ քեզ հաձոյանալու և ոչ գրքէս տպագրուԹեան ծախքը քո քսակից լինելու պատճառաւ։ Այդ մասին ես ունիմ իմ օրինաւոր պատճառները, որ Թէ քեզ և Թէ բոլոր ընԹերցողներին յայտնի կը լինին։

Դու յիշո՞մ ես, Յովհաննէս, քո գրած նամակը, երբ կարդացել էիր «ՓՈՐՁ» հանդեսի մէջ «Կռուածաղիկս» առաջին կտորը, դու մտաբերո՞մ ես այն տողերը, որ Թելադրել էր քեզ քո ղեկտուն սիրտը. ևԹէ դու մոռացել ես, ես միտդ եմ բերում բառ առ բառ արտագրելով.

«Կռուածաղիկդ» առաջին կտորը կարդացի, շատ մտածեցի, որ սրտիս «զգալուն համեմատ եմ կարծեցա քեզ յայտնեմ, բայց խօսքիդ չգտայ. զուտ «եղբայրուԹիւնը՝ այն արդիւնքը որ յառաջ եկու եմ ընԹերցուածից, այս «եղաւ. ևԹէ քո միւս վիպատանուԹիւնդ, որի համար «ՓՈՐՁԻ» մէջ յիշ«շում ես, «Կռուածաղիկ» նման քաղցր է, ապա Թոյլ տուր ինձ եմ ծախքովս «տպագրել և այլն»։

Ահա այն խօսքերը, որոնք այսօր քո անուհով պահել են իմ նեբկայ աշխատուԹեան Ձախատը։ Գիտես ինչ խօսքերը են դրբա։

— Դրբա հայ գրականուԹեան մշակողներին ոգևորող տողերը են։

Մենք շատ ենք տեսել ուրիշի ծախքով տպուած գրքեր, շատ ուղերձներ ենք կարդացել զանազան բարերարների նուիրած, բայց նոցանից և ոչ մինը սրան չէ նմանում։ ևԹէ լաւ քննես, կը տեսնես որ նորա ամէնքն արել են ուրիշների յորդորանօք. իսկ քո նամակդդ այդ չէ դուրս գալիս, դու արել ես առանց ուրիշի խընդրանաց, միմիայն սրտիդ ձայնին լսելով, դու ինքնայորդոր Մեկնուած ես հանդիսացել մեր աղքատիկ գրականուԹեանը։ Դու քո գործովդ հաստատեցիր, Թէ անցան յու-

սահատ անընթեռցասիրութեան օրերը, թէ այժմ հայերը ոչ միայն ձանձչում են ընթերցանութեան յորդը և կարևորութիւնը, այլև արժանապէս գնահատում են։ Ջո խրախոյզ պատճառ դարձաւ ինձ ներկայ բազմազբաղ պարապմանց մէջ ժամանակ գտնել մի ուրիշ նոր վիպասանութեան ձեռնարկելու, քո մեծագործութիւնդ պատճառ կը դառնայ այսուհետև շատ աւելի ծածկուած տաղանդներ մեր պատանեների միջից յառաջ բերելու։

Ահա ինչ հետևանք է յառաջ գալի քո գրած մի երկու տողից։

Ու եթէ այսպէս, ուրեմն մի՛ դադրանար ինձ վերայ, սիրելի բարեկամ, մի՛ միաւորուիր, Թող տիւը, որ քո օրինակին հետևող շատ ցամքանեզնները յառաջ գան մեր կարոզ դաշտ միջից. Թող տեսնեն մեր հարուստները, որ եթէ ցամքաննէն իւր արդար քրտնքից ինքնայօրոգը մի մասը նուիրելով հայ գրականութեանը, այդքան օգտաւէտ գործ կատարեց, ինքեանը եթէ իւրեանց մեծ հարստութիւնից մի մի մասը հանեն, ինչ մեծամեծ ծառայութիւններ արած կը լինին ազգին։

Ընդունիր, ուրեմն, ազնիւ բարեկամ, իմ սրտիս անկեղծ հաւատոքը։ Թող ապաքէն, որ իմ հրեշտակինես Թռչունն քո անունը երկրէ երկիր, Թող ձանաչի ընթերցող հայ հասարակութիւնը Աղէքսանդրապօլցի ցամքաննէս Բաբայեանցին՝ Մեխիենասին

ՊԵՐՃ ՊՈՕՇԵՆԱՆՑԻ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Սօս և Վարդիթեր» վիպասանութեանս մէջ Արարատեան նահանգի սովորութիւնները նկարագրելուս՝ վիպասանութեան պահանջանաց համեմատ պակաս էր մնացել Բուն բարեկենդանից մինչև Ծաղկազարդի կեանքը։

Նոյն դրքիս յառաջաբանի մէջ ես խոստացել էի, երբ և իցէ, այդ սովորութիւնները էլ լոյս ընծայեմ, որով Հայաստանի դիւրաւոր նահանգի տեղական կեանքի պատկերը իւր բարբառի, առածների, աւանդութիւնների և ծէսերի հետ աղատած կը լինիմ ժամանակի անհետացնող ժանիքներից։ Օր ըստ օրէ զանազան ազդեցութեանց ներքոյ կեանքը փոխվում է և հինը իւր բոլոր կաղմակերպութեամբը տեղի է տալիս մի նոր կերպարանափոխութեան։ Այդպէս փոփոխուելով կորել անհետացել են մեր հագուստից մինչև շատ ազգային անհատական յատկութիւններ։

Ներկայս անցեալի հետ համեմատելով քանի տարի յառաջ եղած սովորութեանց նշոյլն անգամ չի երևում։ Արդի հագուստը, ծէսերը, բնաւորութիւնները, կերակուրը և բարբառը նոյնը չեն, ինչ որ մեր հայրերինն էր, Թող Թէ պապերինը։ Ժամանակն ուտում և մարսում է, տիրող տարրը կուլ է տալի ամէն բան։

Նկարագրելով «Սօս և Վարդիթերի» մէջ 40 Թուականների տեղական սովորութիւնները, ես դիտմամբ այժմ ևս «Հացի Խնդրի» Նիւթը վերցրի նոյն Թուականներից, որ մի որոշեալ ժամանակի կեանք ամբողջապէս նկարագրեմ։ Ես կատարեցի ըստ կարեաց իմ պարտաւորութիւնը, տկարանալով միայն լեզուի դարձուածների մէջ։ Դուրս ձգելով նորամուտ օտարազգի բառերը, ես ընդունեցի ներկայ բարբառի մի քանի փոփոխութիւնները։

Պատկերներից շատերը նոյն ժամանակների կեանքից առած են, փոխադրած զանազան տեղերից և գաւառներից վիպասանութեանս պահանջած տեղերը։

Եթէ «Կռուածազնիկը» Արարատեան նահանգի պարսկական տիրապետութեան օրերի նկարագիրն է, «Սօս Վարդիթերն» ու «Հացի խնդիրը» մեր ներկայ կեանքի առաջին շրջանի պատկերն են մեր առաջին պարզումն։

Սիրելի ազգիս բանասիրաց քաղցր ընդունելութեանն եմ պարտական իմ վերոյիշեալ աշխատութեանց համար։

ՊԵՐՃ ՊՈՒՇԵԱՆՑ

ՀԱՑԻ ԽՆԴԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

(ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՆՈՒԻՐ Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱԲԱՑԵԱՆՑԻՆ)

Ը.

ԴԻԼԻՔՈՉ

1840 թէ 50 թուականներին, լաւ չեմ յիշում ժամանակը, միայն այսքանը դիտեմ, որ Հաշտարար Առեանները դուրս գալուց շատ յառաջ էր, մի սաստիկ պարզկայ գիշեր, ջրօրհնէքից յետոյ, ուրթօրէքի ձռձռան ցրտերին՝ մի եախունջում կոլոլուած ձիաւոր էր հարյնում ոչ ձիու փռնչոցը, ոչ իր երեսին սլըլալով խփող սուր քամուն, ոչ աչքերից իջնող արտասունքին և ոչ երկար ընչացքներից կախ ընկած սառցի լուլէքանցը՝ Աշտարակու կողքովը՝ Կաւահանքի կոչուած ձորակի մօտից բարձրանում էր։

Լուսինն առաջնորդում էր այս ճանապարհին ընտելացած, արագընթաց երիվարին, իսկ ինքն երիտասարդն անդադար կրկնում էր անլսօս անասունին և յաճախ յաճախ սանձը թափ տալիս։ Երեւում է, որ ձիաւորն անհամբերութեամբ շտապում է մի մեռադրեալ նպատակի ժամ յառաջ հասնելու։

Եթէ մէկն այդ րոպէին ձեռք տար մեր ճանապարհորդին, կը տեսնէր անշուշտ, որ կրակի նման այրուում է և ընայելով ցրտին ու պարզկին՝ քրտնքի գոլորշին ամպի նման վրայիցը բարձրանում է։

— Կ՚ամեռնեմ ու կը խափանեմ, մնաճուռէր վճռաբար երի-տասարդը, կամ թէ տուն ու տեղը քամուն կ՚բաաւ, հօրը կոսի ու բէգաւի [1] տակի կը վթաղնեմ: Տասն երկու տարի ա՝ ոտս ձիու օրզանդուխ [2] վէր չի եկել չորս մովըով [3], վեց քօմակչի [4], երկու դիլբանդ [5] ու քսանի չափ դրագրներ եմ փոխել ու ոչ մի խէր չեմ տեսել հիմի անջաս [6] ա վէգս ալչու կանենել [7], մեր Սաքօն քամա-կիս Սուրբ Սարգսի պէս կաննած՝ ուզում՚ա ինձ բաղդատորացնել, բաս էլ իմ կերածը հարամ չի՞, որ աչքս բաց Աշտարակցի Խէչանենց Խէչանի աղջկանը ճանդիցս դուրս թողամ: Ինձ ի՞նչ թէ աշխարհ-քը վըտս կը խօսի, թէ աղջիկը բաշխքեաբթմայ [8] ա արած, կամ թէ հէրն ինձ շան տեղն էլ չի գցիլ. նրա բռնին [9] ո՞վ ա մոիկ տալիս, սաղ ըլի Սաքօն, հէրիք ա որ նա ինձ թէւ ու թիկունք ա. մին էլ տեսար Փանդ ու Փէլը [10] բանացրեց, աշխարհքն երար գլխով տուեց, մէջ տեղից Խէչանի աղջկանը դուրս քաշեց, ինձ փէշքաշ արեց, համ ինքը մի լաւ բաղե տէր դառաւ, համ ինձ ընչանք շլինքս Հարսատութիւնի միջին թաղեց: Վէ՛, գնա՛ մէջը լեզ տուր, բենքռատա [11] Մարգա՛ր, սիրուն կնիկը կոպքիդ՝ դուռ ու տունդ լիքը: Փթեցի էս-քան տարի սրա՝ նրա աչքին մոիկ տալով, ընչանք ի՞րը պոի եա-սավլութիւն [12] անեմ. սա էլ փէշակ ա՞, ուզուրդը մեղնից լաւ ա: Տօ՛, մի ասա՛, ո՞վ միտք կանէր, թէ ես քառասուն տարիս անցկացրած, մաղերս չալ ընկած՝ օղորմածիկ Մարօյիս ու երկու երեխէքանցս հո-ղին պահ տալուց յետոյ՝ նոր ջահելանամ, փարբեցութիւնս թո-ղամ, գնամ Աշտարակ, առաջին հարուստը դառնամ: Ընտուր են ասել աշխարհքս մի նորմալան [13] ա, մինը նի՛ա ընում [14], մինը վէր գալիս: Թող մի քանի ամսից յետոյ մինը համարձակուի ինձ ասի փարբեցի եասավուլ Մարգար, ասա՛միները փշրեմ, ասա՛միները, ըս-տուց յետոյ ես Աշտարակցի եմ Աշտարակցի՛, Խէչանենց Խէչանի փե-սայ Մարգար աղէն, թող ամէն մարդի աչքը չորս բացուէն: Զանըմ սա՛ն [15] Սաքօ՛, նա՛ մէնակ ձանաչեց, թէ ես ի՞նչպէս մարդ եմ, թէ չէ ուրիշ եասավուլ չկայ, որ նրանց համար էս բանն աշխատէր.

1 Աչնօրէն պահանջ: 2 Ասպանդակ: 3 Գաւառապետ: 4 Օգ-նական: 5 Թարգման: 6 Հազիւ: 7 Գործս յաջողել: 8 Բաշիքեաբթմայ անել նշանակում է մանկութեան օրերում տղայ աղջիկ նշանելու խօսք տալ: 9 Բերանին: 10 Հնարագիտութիւն: 11 Ծռնատամ: 12 Եասավուլ կը-նշանակէ գաւառական ատիկանութեան ատրին պաշտօնեայ: 13 Սան-դուխտ: 14 Բարձրանում: 15 Կեցցես:

համա չէ, նա լաւ գիտի, թէ Մարգարն ի՞նչ իգիթ [1] տղամարդ ա. ասում՚ա, ես կուզեմ, որ ծերութեանս վախտը քեզ պէս հարևան ունենամ, արի՛, ասում՚ա, Մարգա՛ր, ինձ լսի՛, Խէչանի աղջիկը քեզ համար ուզինք, քեզ համար լաւ երազ եմ տեսել, պոի հարսաս-նաս, համա առաջուց խօսք տուր, որ բանը դլուխ գալուց յետոյ իմ ներքի բաղնին կպած Խէչանի բաղն ինձ բաշխես: Ի՞նչ անհախ [2] էի, քիչ մնաց ղարուլ չէի ընում [3], քիչ մնաց Սաքօն էս փառքին ուրիշնին պոի տիրանայնէր. թէ որ դու չես ուզում, ասում՚ա, Ղահ-բամանին կըտամ, նա աւելի սիրուն ու ջահել ա: Չէ՛, ախպէ՛ր, խելքս հոգի հետ չեմ կերել որ իմ բաղդին քացով տամ. Սա-քօ՛ ջան, ասեցի, քեզ ջարբա՛ [4], մնի տեղակ երկու բաղ՝ թաք ըլի խոստմունքդ կատարես: Ծո՛վ ա ծո՛վ Սաքոյի խելքը, բերնեցս խօսք առաւ թէ չէ, ձիու քամակը թռաւ ու դպա էջմիածին: Ի-րեք չորս սհաթից յետոյ ի՛նչ արեց, ի՛նչ չարեց, գործակալն հրա-մանը բերեց: Հէնց իմանաս մեր Սաքօն Կիվկիվն [5] եղ ունենայ, ձե-ռաց մեր մովըովն գլուխը եղ քսեց, նրա կամքն էլ առաւ, նրա հրամանն էլ վըհն առելցրեց: Ես ու իմ Աստուածը, հալալ ա Սա-քոյի կերածը, երկու իրեք մովըով ա փոխել, ամէնին էլ մտաներն վրա խաղացրել ա ու նօխտին [6] դնչներին [7] դրած՝ որ դիհն [8] ու-գեցել, դէն դէնն ա քաշել. տնաշէնը էս մեր Սև Ջրի գլխի միկիտան-խանէն [9] ձեռք քցած օրից ինքն ա մհալը [10] կառավարողը: Համա ասո՛, որ էս բանը գլուխ չգայ, Խէչանը մովըովն ու գործակալն հրա-մաններըը ոսի տակ ասց, ես հօ աշխարհքի միջին թաղ կընիմ, իմ հրնկերներուն լեղուի սակիցն էլ դուրս չեմ կարող գալ. էլեց-դուրս [11] էն փուշ կենդանի շլսիկ Համբօն: Է՛հ, ո՞նց թէ գլուխ չի գալ ո՞նց թէ հրամանները գործութիւն չեն ունենալ էն սըրբ Գը-ևիդորը վկայ՝ Խէչանի թոզը [12] քամուն կըտամ. մին էլ էն տեսար մեր բոլոր եասավուլներին հաւաքեցի ու դուռը կոխեցի, օրով ցե-րեկով աղջիկը տանիցը դուրս քաշեցի, Թարքիս [13] գրի ու հայդ-դպա վանքը՝ գործակալի դուռը. սաղ ըլին հաստաշլինք Մահմատը, սարի արջ Խէչօն, օղոստոսի ապուէս քաչալ Ալին ու հաւատող Պէհօն, չանները չեն լանայել ինձ համար, գործակալ հայր սուրբն

1 Քաջ: 2 Ցիմար: 3 Չէի համաձայնում: 4 Ընծայ: 5 Թռչուն է: 6 Սանձ: 7 Ընդդունք: 8 կողմն: 9 Գինեատուն: 10 Գաւառ: 11 Մա-նաւանդ: 12 Փոշի: 13 Գաւակ:

էլ մռլըռվլե խաթեր էն սահաթն իր ձեռովը կըպսակի, դեռ ես էնպես անեմ՝ ոնց որ ըլե էս օր պսակը խափանեմ, յետոյ կըտեսնենք: Տօ՛, ցնդե՛լ եմ, խելքս կորցրե՛լ եմ, էս ո՞ր եմ անց կենում: Աշտարակը ո՛րտեղ թողե, ո՛ւր հասայ. ա՛յ սատկած ձի՛, քու իզանըդ[1] կորել էր, դու չգիտես, որ ես Աշտարակ պտի մնանէի, առաջին գալդ հո չէր, որ ճամփեն մոլորեցիր, բարկանում էր մեր շատ պողը ձիու վըրայ ու խելոք կենդանուն մորակի տակին մահացնելով՝ յետ դարձնում դէպի Աշտարակ: Բայց, ի հարկէ, էս բանումը ձին մեղաւոր չէր. շատ էլ հասկացող անասուն ուզեցաւ ծռուել ճամփաբաժանիքը դէպի Աշտարակ, բայց մեր վերացած երիտասարդն այնպէս թափ տուեց սանձն և կրնկեց դէպի Մողնու թառը[2], որ ձին շունչը Պատաշարներումն առաւ:

— Ա՜խ, կատաղաբար փնչեցնում էր ձիաւորը, մի մարդի գործ որ Աստուած չէյաջողե, ապամորդին ի՞նչա կարող անել, ձին ի՞նչ մեղաւոր ա: Աքլորականչին Սև ջրի գլխիցը ձի նատեցի, էս անտէր թղթի կառներըը ծոցիս, միաք ունէի լիսը բացուելուս Աշտարակ մտնեմ, որ դեռ պսակ չդնացած՝ հարսանիքը գլխներին հարամ անեմ, քէֆներըը պնչերիցը հանեմ, էս էլ իմ մասը տարայ իմ աչքը հանեցի. ընչանք յետ կը դառնամ Աշտարակ, պսակն էլ կուտեն՝ պսակաճաշն էլ. նրանից յետոյ վաղն առաջի նման՝ ճաշն ուտելուց յետոյ դու արի՛ ձեռին ջուր աճա՛: Դա՛հ, դա՛հ, մի քիչ էլ ոտներդ փոխի, Դիլիբօզ ջան, էա՛ լիսա, աղօթատանը լաւ բացուեց, տեսնում եմ, որ դու էլ տօսա տօսա ես անում[3], մի սհաթ էլ գնա ու տանուտէր Սիմոնի մըքումը՝ տաք դոմումը դարձրին ու դարմանը քեզ համար ճտահար կըլնի. մի՛ վախիլ, սաղ ըլնի էս գաժինն[4] սրա շնորհքը տանտրունջից բռնած՝ ընչանք գիլին[5] ու վերջին մարդն էլ յայտնի ա. իրանց իրանց կըբերեն ու քեզ համեցէք կանեն, տակդ էլ իտակ կըքերեն, չոր փէյին[6] շաղ կըտան. քեզ մտա՛ղ, Դիլիբօ՛զ, քի՛չ էլ քի՛չ էլ ոնց որ ըլնի՝ քաշ արի՛, տեսնում եմ, որ քրանքումը չդէզպում ես, ջուր ես կարուել, համա ես էլ քեզանից պակաս չեմ:

— Կուզես քեզ մեզապրի՛, կուզես ձիուդ խրախուսի՛ր, կամ

1 Ուշիմութիւն: 2 Բարձրութիւն: 3 Ցոզնածութիւնից ոտքերը կարզին չդնել: 4 Մարակ: 5 Գիւղական սոորին ոստիկանութեան պաշտօնեայ: 6 Քակորի փշրանք:

մորակահար արա, անխելք եղբա՛յր, հէնց որ ձիուդ սիրտ տալու համար Դիլիբօզ անուն ես դրել պէտք է Սև ջրի գլխից մինչև Աշտարակ էլ քար ու քոէֆ չհարցրած՝ էլ դար ու փոս չնայած, մի գլուխ քշէիր: Կամ շուտ ճանապարհ ընկնէիր, որ իւր ժամանակին հասնէիր, կամ թէ խելքդ գլխիդ պահէիր ու ճանապարհից չմոլորուէիր. իսկական Դիլիբօզ էլ որ լինէր քո գետահիր[1] ձիդ, որ Արաբստանու իլխիներիցն[2] էլ լինէր, էլի ոտները ջուր կիջնէին, ուր մնաց թէ քո սուտ Դիլիբօզդ[3]:

— Է՛հ, բանը բանից անց ա կացել, էլ ձին չի փնուտ, մեր անճանօթն իջաւ ձիուցը, սկսեց սանձից քաշել և յուսահատութիւնից լաց եղաւ, մանաւանդ երբ որ արևը սպիտակ ձնի երեսին արծաթափայլ փռուած տեսաւ ու աչքերը Մողնու թառիցը դէպի Աշտարակ դարձրեց՝ ձնները թուլացաւ:

— Է՛հ, գլուխը քարը թէ Մողնու ձորիցը գիլանը[4] դուս կը գան, քեզ պատառ պատառ կանեն, ա՛յ Դիլիբօզ, ասաց նա ու եափունջին ծածկեց ձիու վրայ, բայ թողեց ձիուն և ինքը ոտքով սկսեց վաղել դէպի ներքև:

— Անքուն գամփռները, որոնք սովոր են գիշերը մինչև լոյս գիւղի շուրջ բոլորելիքը պտոյտ պտոյտ անել ու պատառոտել ոչխարի հօտի քամակից մեն մեկոզ շաբաթներով քաղցած գայլերին, օտարականին հեռուից նկատեցին ու ատամները կրճտեցնելով՝ հաչոցի ձայներն իրար խառնած՝ Կարմրաւորի մօտ դիմաւորեցին մեր խելօքին:

Երիտասարդը մի քանի անգամ մորակն օդի մէջ պտըտցրեց, որ դուցէ հեռանան ու կորչին անպիտան շները, բայց նրանք ևս առաւել կատաղեցին ու շուրջ բոլորած՝ մէջ առան տղային. և եթէ չէր պտըտել գեանի վերայ՝ ծուխ ծուխ կանէին:

— Էս էլ քեզ մի յաւ, մտածում էր անբաղդ ճանապարհորդը, լնամիքը հիմի գնացին հարսին ժամ տանելու, ես պտի էս գազանների մէջտեղը կուչ գամ ու սպասեմ, ընչանք որ մի ասասաէր մարդ գայ ինձ սրանցից ազատի, որ գնամ ժամիցը դուս գալուս հասնիմ. ամո՞թ ինձ, հազար ամո՞թ, թէ որ հընկերներս իմացա մինը պատի տակիցն ինձ մխիկ տալուս ըլնէր էս սհաթը,

1 Անշնորհք: 2 Սրամ, ջոկ: 3 Դիլիբօզ կոչուում է նժոյգի մի տեսակը: 4 Գայլերը:

վայն եկել էր ինձ տալել։ Տօ՛, ի՞նչ եմ երեխի պէս կուչ եկել սաղ մհաղը իմ ձեռին դողացնում եմ, մի քանի շների ահից պոկ կա-տու գառնամ, ասեց մեր կարիճն ու դաշոյնը հանեց, տեղիցը վեր թռաւ։

Գաչաննելը մեր հերոսի նստելուց յետոյ պահապաններին նըշ-ման չորս բոլորքը կտրած՝ մնում էին և ոչինչ չէին անում, կան-չալե ծայրը տեանելուն պէս՝ կրակ կտրեցան և ամէն կողմից յար-ձակուեցան տղայի վերայ։

— Տօ՛շ տօ՛շ գոռայ նա և խանչալն օդումը պտըտելուս մէ-կին փոքր ինչ վէրաւորեց, բայց միւս կողմից նա կացնով արիւնը շըշտալով սրածայր լափչին[1] կրնկովն իջաւ, և եթէ կրկին չէր նստել փոքր էր ճնացել, որ շներից մէկը նորա երեսը ծուռտում էր։ Առհասարակ այս է միակ հնարքն այս ոչխարի աներկիւղ շնե-րից ազատուելու. չգիտեմ ինչ են մտածում նրանք, որ նստողի վերայ չեն յարձակուում, միմիայն հակում են, որ չվեր կենայ։

Բարեբաղդաբար, մի գիւղացի կուն[2] դուրս ձգելուս տեսաւ էս բանն ու քթոցը վայր ձգեց, վազեց օգնութիւն հասնելու։

— Հայ, հօյ, կորէ՛ք հա՛ կորէ՛ք, այ շուն, կորէ՛ք, ձէյ գիւ-ղացին և հնազանդ գամփռները, պոչերը ոտքերի արանքները կո-խելով՝ հեռի քաշուեցան։

— Բարի լի՛ս, Մարգար աղայ, էս աջա՛ք աջա՛ք[3], էս ո՞նց ա որ էս վախտ դու ոտով ես մեր գեղը մտնում, որ Աբարանցոնց ոչխարի շների ձեռն ես ընկել, ո՞ւր ա քու ձին, ես թէ չէ էս մո-տիկ գեղերումը մի ձի չգտաը, որ նստէիր։

— Դու գեռ ասա՝ էս ի՞նչ գոփ ու գուռնի ձէնա գալես, պատասխանեց մեր Մարգարը, ամէն բան հօլա կերթայ[4], ձին կոլ-չել չի, նրա բանը խէր ա։

— Հարսանիք ա, Ծվիկենց Ազաջանի աղէն պսակուում ա Խէ-չանենց Խէչանի աղջկայ վրայ։

— Դէ շո՛ւտ, շո՛ւտ էս շներին հակալ հակալը քցի՝[5], առաջ ընկի՛. տանուտէր Սիմոնը գեղումն ա՞, թէ չէ։

— Թաչախակէրն էլ հէնց ինքն ա, որտեղ որ ա՝ ժամ կը տա-նին։ Վա՛հ, տօ էս ո՞ւմ ձին ա, որ առաւօտից քշերհանայ ան-

1 Կօշիկ։ 2 Անասնոց տէր։ 3 Ի՞նչ կընշանակէ։ 4 Կանցնի։ 5 Հա-լածէր։

տէր անտիրական թափը ներքև ա գալես՝ մի եափունջի վրէն, չըլնի՞ սիրունջ գլխին մի բան ա եկել. կա՛յ բռնենք տանենք տանուտէրի կուշտը, լաւ ա, որ դու էլ ըստեղ գտնուեցար, Մարգար աղա՛յ, թէ չէ մեր գեղի վրէն մի շառ[1] կը քցէին, կասէին սիրունջը դուք էք սպանել դէ յետոյ ալի՛ ու ջուղաբ[2] տա՛ւր։

— Էդ իմ ձին ա, ինքն իրան կըգայ, ասաց Մարգարը, դու ընկերից անցկացո՛ւ, տանուտէրի հետ շատ վռազ[3] գործ ունիմ։

— Հապը[4] ձին էլ հետներս քաշե՞նք։

— Չէ՛ ասում եմ, գեռ ինձ տանուտէրի դուռը տա՛ր ու յետ արի ձիս բեր։

Գեռ հարսին երթիկի տակը չէին բերել գեռ տէրտերը նոր էր ուզում պատրաստուել ձեռք ձեռքի տալու, որ գիշերը լերդապա-տառ տուն ընկաւ ու տանուտէրի ականջումը քչփչաց։

— Գեռ ձեռք ձեռքի չտաք, տէրտէր, հրամայեց խաչելըայր տանուտէրը, ես հէնց հիմի յետ եմ դառնում, գիշերն աստղ եմ, որ եասամուլա եկել ինձ վռազ ուզում ա։

— Գեօռ ու չհանդամը[5] գնա՛ր, ասը կոտրուէր, սև ըլէր՝ գը-րանց երեսը ոչ տեսնէինք, խէրի համար հօ չէ՞ն գալ, ասացին մի քանիսն և սկսեցին աղջիկներ պարել տալով պարապել մինչև խաչ-եղբօր վերադառնալը։

— Ըստուր տակիցը լաւ բան չի դուս գալ, տղէ՛ք, աչ աչքիս վերի կոպը հէնց սկսեց խաղալ թէ չէ, գիշերը տուն ընկաւ ու հի-մի էլ ընկնց ա Թուխոտում, որ կասես քեանդիրբաղ[6] ըլի, գուշակեց Խէչանը։

— Ես Էփեմերդուն էս օր մտիկ տուի, մէջ մտաւ տէրտէրը, պրում ա, որ էս օր լուսինը թէ որ բակ ըլէր, երաշն էլ, ամէն բանն էլ օրը պտի կատարուի։

— Ա՛տուած խէր վրայ բերի, տանտիկինը փուշտայ, տեսնենք ընչո՛վ կը վերջանայ։

— Ա՛նտէր ըլի էս պինչը, ձեռքով իւր քթին խփելով նը-շանացի հասկացրեց տանտիկինը տղայ մարդկանցը, շատ փիս եմ փորձել։

---

1 Զրպարտանք։ 2 Պատասխան։ 3 Շուտ։ 4 Լաւ ևս է։ 5 Գերեզ-մաններն ու դժոխքը։ 6 Լարախաղաց։

— Տօ՛, կայէ՛ք, ես մի գնամ տեսնեմ տանուտէրն ընչի՞ ուշացաւ, գաւազանն առաւ դուրս գնաց տէրտէրն և դէպի տանուտէրի տունը:

Ը.

ԱՌԱՋՆՈՐԴՆ ԵՍ ԵՄ, ԲԱԿԼԷՆ ԹԱՇԱԾ ԵՄ ՅԱՆՈՒՄ

— Ինձ լսի՛, Մարգար աղա՛յ, գոգիդ քարը վէր ածի՛ր [1], մեր 70 գեղ մհալն մէջ ինչ աղջկայ վրայ մտաը դնես, թէ որ չգնամ չ'ուզեմ քեզ համար, ես մարդ չեմ, ես իմ հօր տղէն չըլնիմ, մօրից ծնած չըլնիմ, շան մէջքից ընկած ըլնիմ. ամօթ բան ա, մեր գեղն չորս կողմն անօրէն անհաւատ Թուրք ա, ամէնքն էլ կը լանն ու Հայոց հաւատի վրայ կը ծիծաղան, էս լաւ բան չի:

— Դէ ես ի՛նչ մեղաւոր եմ, քու մոլորվի հրամանն ա, կուզես կատարի՛, կուզես յիսի մէջ քցի՛ր, ծործորակը քերելով՝ իրան անմեղ ցոյց տալով պատասխանեց Մարգարը տանուտէր Սիմոնի խօսքին:

— Ախպէր, հաղիր պարզն ասե՛ս, էլ ո՛ւր ես խօսքն օլոր մօլոր քցում, սաքի [2] ես չեմ հասկանում, որ քո մաքինդ Խէչանի աղջկանը չի, նրա մալ ու դովլաթն [3] ա՞, թէ չէ դու որբևէրի, երկու երեխայ թաղած մարդ, որ կնիկ առնել ուզէիր, կը դայիր աշխ աղջկ կուզէիր, էն էլ նշանած աղջի՞կ: Դու էլ լաւ գիտես, որ Խէչանն էս արար աշխարհքի [4] հարստութիւնի տէրն ա. ասենք, ղորթ ա, անասկ ծով ա Խէչանի դովլաթը, էլ վերեքդուստ [5] չի, էլ թիւ ու համրարք չկայ, հանա ում զամանթ [6] էլաւ՝ էլաւ, զամանթի ձամ փէն կապիլ չէն. 15 տարի ա՝ բանը քուրթահ ա էլել [7], հիմի դու ելիլ ես, տաք ջրի վրայ սառը ջուր ես լցնում՝ թէ ի՞նչ. քեզ մնաս՛ղ, Մարգար աղայ ջա՛ն, սրի Խէչանիցը մի քանի շահի փող պրկեմ քո ոտների քրեհը, վեր կա՛յ Աստծու անունը տո՛ւր, քու ձամփէն գնա՛. մոլորվիլ էլ որ հարցմունքս անի, ասա՛, գնացի՝ տեսայ պատկել էն, ես էլ մի կուշտ փլաւ կերայ պատահաձուշէն, մի երկու թաս էլ դինի վրէն խմեցի, Աստուած շնհաւոր անի ասեցի ու եկաս յետ թեքեցի:

— Ի՞նչ ես երկար կատամանին քցել [1] տանուտէր Սիմո՛ն, դու ինձ խելք ո՞ւր ես սորվացնում, ես որ կամ՝ մի հրամանատարատար մարդ եմ, ինձ գրկել են, որ քեզ էս հրամանը տամ ու գլխիդ կանգնեմ՝ որ կատարուի. չէս անի, պատկը չէս խափանի, ես էլ գամչիս կըպտըտեմ, հարսանիքատրի ջանին կընգնեմ ու ծակը կըկոխեմ: Ախա՛ր թէ որ սրա մէջը մի բան չըլնէր՝ գործակալ հայը սուրբն ընչի՞ էս գիրը կը գրէր, որ տէրտէրը չպատկի. հալբաթ [2] մինը գնացել մտանել ա, որ մէջը չհատութիւնի պէս բան կայ, նա էլ էս հրամանը թուանքչու ձեռով թուղրել էր Սև ջրի գլուխը մոլորվելն, որ եասավուլ գրկի, պատկը խափանել տայ: Ես քեզ ոչ գըմա չէի գործակալի թուղթը շանց տամ, տէրտէրի վրայ էր, ու ընչունքի ինքը տէր հայրն էլ հրէս իր ոտովն եկաւ, հիմի բանը կը պարզի:

Աստղ եասավուլ Մարգարն ու գործակալիցը մի ծալմլոտուած թղթի կտոր հանեց տուեց տուն մնացող տէրտէրին, մի կողմից էլ խոնարհութեամբ աջը համբուրեց:

— Աստուած օրհնեսցէ, Մարգար աղա՛յ, փնթփնթայ տէրտէրն ու ակնոցները հանեց աչքերին դրեց, և թուղթն աչքերից հեռու բռնած՝ սկսաւ այս ու այն կողմը դարձնել:

— Ձեռքիցն ելնում ա, որ մեր գործակալի գրածն ա, ասաց տէրտէրը, բայց աչքերս չեն ջոկում, տունը մութն ա, մի գնամ դռանը կարդամ, կամ թէ չէ, տանուտէր, լաւ կըլնի, որ մարդ ղրկես, մեր դերձիկ Սաեփանի տղէն կանչել տաս հարսանքատանից. նա Աստուած իր հօրը բաշխի, ջրի պէս կը կլկլացնի կէս սհաթումը:

— Աղբաթը խէր [3], տէրտէր, քմքածիծաղ տուեց տանուտէրը, սաքի որ սուտ փահլեվանի պէս գեօղլուկը [4] ձեռաց հանեցիր, քնթիդ ծէրին անկեցիր, հա՛ տեսնում չե՞մ, որ բլբլի պէս ծլվլացրիր. էլ աչքերիդ ի՞նչ ես մեղ դնում, մենք հօ իրար ձանա՞նչում ենք, ահի տարին ի՞նչ էիր, թէ մահի տարին ի՞նչ ըլես. հա էդ ես՝ ու էդ ես. մենք հասակակից մարդիկ ենք, կարօտ մնացի, որ մի օր տեսնեմ քեզ մի բարովագիր կամ մի սանադ [5] գրելուս,

1 Մի՛անգիր այդ բանը: 2 Իբր թէ: 3 Կալուածք և հարստութիւն: 4 Բոլոր աշխարհքի: 5 Հաւաքուում: 6 Բաղդ: 7 Վերջացել է:

1 Երկարաբանութիւն անել: 2 Խնդրել: 3 Բաղդ բարի լինի: 4 Ակնոց: 5 Մուրհակ:

նա ուրիշի գրածը կարդալուս. քունն էն ա — խոնարհեցո՛, ապրեցո՛, հոգուց, պահպանի՛չն ասես ու ժամուցը չէրդ քցես։ — Գվե՛ր, գվե՛ր, ձայն տուեց տանուտէրը՝ դուռը բանալով, շուտ հասի՛ էս սհաթս դերձիկ Ստեփանի տղին հասեղ կանչէն, թէ՛զ, ոսպիդ վըայ յե՛տ ես դառել։

— Խէր ըլի՛,[1] Մարգար աղա՛յ, ի՞նչ կայ էսպէս քշերհանայ, դարձաւ տէրտէրը դէպի եասաւուլը, էլ ի՞նչ զուլլուղ[2] ունիք մեր խեղճ խալխի գլխին, ողորմելիքդուսին էլ ոչ չան մնայ, ոչ տաշտուրումը հայ. էս ի՞նչքան կոռ ու բէդառ, ի՞նչքան խարջ[3] ա, որ էս մի քանի տարին իրար վըայ ողորմելի ժողովրդի շինքին բարձել են։ Ես ըլիմ իմ կարգը, էս ա վաթսուն տարիս մօտանում ա, դուռ դեռ չահել ես, Աստուած զըրացնի, թէ կուզ տանուտէր Սիմոնին հարցրու։ Փառք Աստծու, ասենք հիմի քրիստոնէի աշխարհք ա, հիմի մեր խաչին ու հաւատին հայհոյող չկայ, համա էս ի՞նչ է. քանզեցին էս ձեր տնաքանդ մովսիվները[4]։ Աստենք ես քեզ համար չեմ ասում, Մարգար աղա՛յ չան, դու մեր որդին ես, հայ քրիստոնեայ ես, բայց դու ինքդ էլ գիտես, որ առաւօտէնց տեղիցը շուտ զարթնողը խեղճ ժողովրդի գլխին ա չաքուչ կոտրում։ Ելապկայ[5] չգառաս, մեր գլխին պատիժ ու կրակ գառաս, ով ծածկում ա, էլ Աստծու ծըրիցն ըլում ա, իլլաքի թէ[6] մեր հայերը։ Ախա՛ր տե՛ս աշխարհքն ի՞նչ օրին ա հասել. անցեալ օրը մեր քուչումը հաւաքուած՝ ըզըրից ենք տալիս. մին էլ էն տեսնեմ, որ մեր Յօշականցի Սուտասանենց Նէսօն, որ Սիմօդումը գրագիր ա, ձիու վըայ նստած՝ եկաւ. հոգի ունիմ տալացուկ, օր հնե՜ա ի աէր ասեց ու ձին կանգնացրեց։ Ամէնքն էլ տեղներիցը վեր կացան, գոահները վեր կալան գըլուխ տուին, բայց ես ծեր մարդ, էն էլ ինչքան չըլնի տէրտէր, Աստուած օրհնեսցէ ասեցի ու հարց ու բարով տրի նստած տեղցս։ Ախա՛ր ինձ ի՞նչ կը սազէր երեկուան երեխի համար ոսի վեր կենալ։ Ի՞նչ ես կարծում, Մարգար աղա՛յ չա՛ն, ի՞նչ ասի, որ լաւ ըլնի. ոչ տարաւ, ոչ բերեց՝ թէ, տէրտէ՛ր, դու քո սիպտակ միք-

1 Բարի լինի։ 2 Ցաւատանջութիւն 3 Հարկ։ 4 Գաւառապետ։ 5 Ցայտնի է ամենքիս, որ ծառայողներն իրաւունք ունին կօկարդով գլխարկ ծածկելու և գեղին կօճակներով հագուստ հագնելու. Այս բանից առաջ շատ տարին պաշտօնեաները, սկսում էին երկիւղ ներշնչել ժողովրդի մէջ և հարստահարել։ 6 Մանաւանդ։

քիցդ ամաչում չէս, որ ես գալես եմ ու դու տեղիցդ վեր չես կենում։ — Ա՛յ որդի, Նէսօ չա՛ն, ասում եմ, դու մեր բալէն[1] ես, ինձ ի՞նչ լայաղ[2] ա քեզ պէս մի մատը քորփի[3] համար ոտի կանգնել, ի՞նչ կայ, որ Սիմօդումը գրագիր ես։ — Չէ՛, ասում ա, դուք ձեր պատիւը չէք հասկանում, ում գլխին որ շլապկայ տեսնիք, պտի էն սհաթը վեր թռչէիք, ոտի վըայ չորանաք գլխաբաց, թէ կուզ ըսկի չինովնիկ[4] էլ չըլնի։ — Ա՛յ որդի, ասում եմ, ի՞նչ անենք, որ շլապկայ ունիս, մի թէ դրանով քեզ իրաւունք ա տուած, որ[5] ինձպէս մի ոտը դերեզմանումը աէրտէրին խայտառակես, որ քո առաջին տեղիցս ժաժ չեկայ. հիմի ո՞վ չէ շլապկայ գնում, հրէ Սիւնեաց մինն երեք տալ ապասխա, Սիւնեաց մէյդամանովը, որ անց ես կենում, Նորքցի երեխէքն էլ իշանոնց վըայ նստած՝ շլապկէն գլխներին հատոզը բարձած՝ բազար են գալիս. մեր Աբջի տղէն էլ որ Մարուք տղի դռանը նօքար[6] ա, էն օրը մի լաւ շլապկայ գլխին՝ ուռած փքուած էկաւ դէսն անց կացաւ. ես էլ հէնց խմացայ, թէ դու էլ Աբջի տղէն ես։

— Ընչի՞, միտդ չի՞, տէրտէ՛ր, մէջ մտաւ տանուտէրը. էն տարին որ մի երկար մովրով կար. մի օր ձին նստած՝ մտնում ա մեր գեղը։ Ես Ուռուցումն անց եմ կենում, ի՛նչ տեսնեմ, որ աշխարհքը հաւաքուած ա գլխաբաց ու մէջ տեղն էլ մի շլապկաւոր ա երևում ձիու վըայ նստած. մի գոռոցի ձէն էլ սաղ Ուռուցը վեր ա կալել։ Դու մի՛ ասիլ, մեր խեղճ Ջևտիագլուխ Սարօն ա. վեր են կոխել քամակին բարակ բարդու ձխպռաններ ա, որ փչըում են, ի՞նչ ա, թէ Մովրովն անց կենալուս չէ ճանաչել ու գլուխը չի վեր կալել նա էլ կամենել ա ու խեղճ Սարօյին էդ օրը քցել։ Ինքան տուին, որ մարդն էլ տեղիցը չէր կարողանում նստիլ, երեսի վըայ վեր էր ընկնում։ — Շան որդի՛ք, ձեր հէրն անիծա՛ծ, գոռում էր մովրովը, ըստուց յեաը վայ էն մարդին, որ մի օրէն ճամփից շլապկի ծէրը տեսնի ու ոտի վըայ չչորացայ. էլ հարցնիլ չէ ուզել, թէ ո՛վ ա, ո՛վ չի, իմացած կացէ՛ք, որ շլապկէն ձեր Աստուածն ա։

— Չա՛ես Աստծու,[7] շատ դրուստն[8] ա ասել, պաշտպանեց Մարգարը, ի՞նչ հարկ է որ շլապկին պտի պատիւ տանք, մենք թէ որ շլապկի պատիւը չիմանանք, երկու աչքով պտի քօռանանք, բաս հիմի ու Գողթանի օրովը մին ես հանդիպո՞ւմ։

1 Երեխայ։ 2 Ցարմար է։ 3 Մանուկ։ 4 Աստիճանաւոր։ 5 Ցտաւայ։ 6 Պատուաւոր։ 7 Աստուած վկայ։ 8 Ուղիղ։

— Օրհնեալ լինիս, այ որդի՛, ո՞վ ա ասում, թէ հիմի լաւ չէ, հանա դու ինձ ասա՛, ինչդ չես տեսնո՞ւմ, որ խալխումից էլ հալ չմնաց, եղը վեր են կացնում, տակիցը հորթ ուզում, գօդով մարդկանցը կռուացնում են, որ մէջ տեղը իրանք մոծակի պէս ծծեն՝ արնաքամ անեն. էլ ոչ գիւան կայ՝ ոչ դատաստան, ոչ իրաւունք կայ՝ ոչ արդարութիւն. վերջին ժէհտարիցը [1] բռնած՝ ընչանք ինքը մովսովը՝ ձեռը դէմ սրած ուզում են: Ախար ո՞րտեղից տան, մի մեր գեղի հալը [2] հարցրու՝ կը սարսափես՝ որ լսես. տուն կայ, որ պարտքի տակի թաղուած չըլնի. ի՞նչ են անում, կերածները՝ պաս օրերը՝ ցամաք հաց ա, ուտիսին՝ մի կտոր աղուէսի չոր պանիր, հազածներն էլ՝ որ մի թելը քաշես, ինն հարիւր կարկատան վեր կընկնի. ախա՛ր թէ որ էս կռռ ու բէգառը չըլնի, ը՞նչի համար պտի պարտքի տակ ճխլուէին: Առաջ ով որ մի թումանի [3] պարտք էր ունենում, քունը չէր տանում, ընչանք մի եղը, եա մի կով չէր ծախում, իր հոգին թափում. հիմի գիտես քանի թումաններ են էն անտէր սանտակ մէջ գրուում. ի՞նչ եղը, ի՞նչ տուն ու տեղ, ի՞նչ մուլք [4], որդին էլ որ ծախի՝ պրծնում չըկայ. լսկի չգիտեմ, թէ սրա վերջն ո՞ւր պտի հասնի, սրա ծէրն ո՞ւր պտի կորուի, երկնային տէրն ինքը լաս ու ճար անի:

— Խօսք վախտը չէ, տէր հայր, դու ինձ լսի՛, կառարելո՞ւ ես գործակալի հրամանը, թէ հէնց հիմիկուց ձին նատիմ յետ դառնամ ու ձեր մեղքը ձեր շլե՞նքը, գնացէ՛ք, ոնց կուզէք, խօսքի տակից դուրս եկէ՛ք:

— Աստուած օրհնեսցէ՛, Մարգար աղա՛յ, ես Յունան մարգարէն հօ չեմ, որ իմանամ, թէ էս թղթի կտորի միջին ի՞նչ ա խզբզած, կա՛ց մեր տիրացուն գայ՝ տեսնենք՝ յետոյ կը խօսինք. կամ թէ չէ, կըլնի որ դու էս գրի զօրութիւնին եթուկ ես [5], ասա՛ էլի, քեզ հաւատում չե՞մ:

— Ա՛յ, տիրացուն եկաւ, հիմի թող գիրը խօսի. գլխով ցոյց տուեց Մարգարը տուն մտնող պատանուն:

Տիրացուն տէրտէրի հրամանով սկսաւ կարդալ:

— «Հրամայն Աշտարակ գէղջ տէր Յովհաննէսին:

«Որ իմացած կենաս համաձայն, հայդարարութեայնդ ես գլխիդ

1 Ջիւպան: 2 Դրութիւն: 3 Հին թումանը երեք մանէթ էր: 4 Կալուածք: 5 Ցեղեակ ես:

«պատվիրեալ էինք: պակել զ Հէղինառ Թէչանեան ընդ պարան Ազաջա-
«ձի որթի Սմբաթին: Հէտ կոյս ընդ կուսի, համաձայն օրինած, և
«կանոնայ առաքելական և կայսերական օրինած չէք գործելդ կամ
«զ Հասութիւն: Վասնորոյ հրամայենք ի տանալ գրութեանս պատ-
«կալոյծ արնել զնոցա. վասն զի ի պատճառս աղայ Մարքարի եա-
«սավուլի մովսովի յրամանն այսպես է խնթրելով ի մէնք որպես բա-
«րեգամ: և քաջ սիրելի, վասնորոյ և զհրամանքն: Կատարեսցիս,
«զպտակին ոչ առասցիս, ըստ ծէսի հայաստայնեայց սուրբ և առա-
«քելական եկեղեցւոյ սրբոյ կաթուլիգէ էչմիածնի, ամէն:

«Գործակալ սարդարաբատու: և կարբու մհալի
«որ է գավառի եօթանասուն ու մէկ գիւղի
«Թադէոս վարդապետ:»

Տիրացուն բարձր բարձր կարդում էր վերոգրեալ երևելի հրամանը, իսկ տէրտէրն ու տանուտէրը բերանները բաց՝ մեկ էին տալիս և զարմացմամբ գլխները ծանր ծանր շարժում: Մարգարի համար՝ էլ մի՛ հարցնիլ, ուրախութիւնից ոտքերը գետնիցը կտրուել էին:

— Ջա՛ն ջա՛ն, ղալամիդ [1] ծէրը պաչեմ, հրէ լեզու ա՛յ, քըչ-քչան աղբիւր ա՞, բացականչութիւններ էր անում մեր հերոս եա-սավուլը. ընդուր են ասել սուր լեզուն օձը ծակիցը կը հանի է, մենք ըսկի մարդ չենք ելել, էշ կերել ենք, էշ մենծացել, մենք ի՞նչ խարար պտի տանինք էս աշխարհքիցը:

Ի՛հա՛րկէ, որդի՛, ի՛հարկէ, հաստատում էր փառաւորեալ տէր Յովհաննէսը, թէ որ գործակալ Հայրսուրբն էդպէս լսնասուն չըլնէր՝ էլ ընչէ՞ էդ փառքին կարժանացնէին. սակ վանքատէրը նրա պէս գիտունը չկայ, Աստուած փառոց պահի իրան:

— Հօ հասկացա՞ր, տէրտէ՛ր, ինչ-ա գրել գործակալը, հեգ-նաբար հարցրեց տիրացուն:

Հասկացայ, որդի՛, հասկացայ, բաս էլ ընչէ՞ տէրտէր եմ, որ էդ երկու խօսքն էլ գլխի չընկնեմ. համա դու էլ որ մի անգամ պատմես, աւելի լաւ կըլինի:

— Ես ոչինչ չհասկացայ, շատ խրթին ա գրած:

— Դու դեռ ջահել ես, որդի՛, էդ տեսակ խրթին գրուածները դժար կը մանին քո բէկինը [2]. մեր գործակալը հրամայել ա

1 Գրիչ: 2 Տեղապատակ:

որ Աղաջանի տղեն ու իր նշանածը՝ չունքի որ կոյս են՝ պատահա-
լոյծ առնել այսինքն թէ պսակը լոյս առնել, ասքի թէ ուղել ա
ասել, որ պսակը մի քիչ յետացրու, որ լեսը լաւ բացուի, ընչանք
որ ես էլ ասում ա, իմ բարեկամ մովսոմին էլ՝ Մարգար տղեն առա-
ջուց պրկեցինք ու մենք էլ էս ա քամակիցը կը գանք կը հանենք:
Ի հարկէ, արժանաւոր աղայ մարդ ա մեր Խէչանը, մեր մհալումը
մարդ չըլնի, որ նրան պարապ չըլնի. բա էնպէս մարդին որ չպատա-
ուեն մովսոմն ու գործակալը, ինձ ու քեզ հօ չի՞ն պատուիլ:
Շատ լաւ կըլնի ի՞նչ, հաղորդ առանց էն էլ պսակը յետացար, մի
քիչ էլ կը կենանք, հէնց հիմի որտեղ որ ա՝ կըգան, ու մի լաւ
քէֆ կանենք:

— Հէնց էդ ա, որ գլխի ես ընկել աէրսէր, ծիծաղալով
ասաց սիրացուն, դու ինձանից լաւ ես հասկացել:

— Ի՞նչ էք ասում, ՚ի սեր Աստծու, մի լաւ կարդացէք, էդ-
պէս բան չկայ գրած, լեղապատառ խօսքը կարեց Մարգարը, գոր-
ծակալ հայր սուրբը հրամայել ա, որ ինքն էլ ու մովսոմն էլ ու-
զում են, որ պսակը քանդուի, մենծ չհասութիւն կայ մէջը, ինձ
էլ հէնց ըտուր համար են ղրկել:

— Ո՞նց թէ պսակը քանդուի, քեզ ո՞վ ասեց, թէ չհասու-
թիւն կայ, հաս ու չհասը Ջակոբը ես չի՞մ, երկուսն էլ օխտը պորո-
ը գիտեմ, նշանի պահպանիչը սրանից տասը տասնուհինգ
տարի յառաջ ես եմ ասել բարեկենդանին. ոնց որ Մասիսի ու
Ալագեազի մէջը տղայ ու աղջիկ կը հասնի, ընէնց էլ նրանց մէջ մի
մտաը չհասութիւն չկայ: Թէ ուրիշ բան գիտես, Մարգար ջա՛ն,
ասա. դու որ կաս՝ եռասաղաղ Մարգարն ես, ես որ կամ՝ մենծ աէր
Յովհաննէան եմ. դու ոչ գիրը գիտես, ոչ գրի զօրութիւնը, համա
ես ամէն բան հասկանում եմ, սաղ Ս. յամառութիւնը ջրի պէս գիտեմ,
օխտը ես, եանղլիշ ես, լաւ չես գլխի ընկել. քեզ ղրկել են, որ գաս
տեղ պատրաստես, որ իրանք էլ գան. ընէնց չի՞, տանուտէր Սի-
մոն, դու ի՞նչ ես ասում. էլի ես ու գուն ինք սրանց մէջը խելք
ու քեռանալե[1] աէրը, սրանք ջահել ջուհուլ են, իլլաքի թէ էս—
իմ ադաշ[2] սիրացուն, գովեցինք՝ կով գառաս. երեխութիւնից օ-
ղորմածիկ դերձիկ Սահմանը մեռաս սրան կարդացնել տալով, սա
բակի մի մարդ չդառաս:

1 Խելք: 2 Անուանակից:

— Ի՞նչ ես ասում, աէր հայր, էս հրամանդ գլուխն էլ
չի հասկացել թէ ի՞նչ ա ուզում ասի:

— Ո՞վ, Թադէոս վարդապետը՞:

— Ի՞նչ անեմ թէ վարդապետ ա:

— Վա՜յ հողը մեր տան կաերը կենայ, որ դեռ ձուից դուս
չէք եկել աէրսէր վարդապետի էլ էք հաւատում, ընէնց չի՞, տա-
նուտէ՛ր, ղրկի՞ չեմ ասո՞ւմ, Մարգար Ջան:

— Էդ գլասլ կենայ[1], աէրսէր ջա՛ն, հիմի պսակը խանգա-
նում ե՞ս, համբերութիւնից դուրս եկաւ Մարգարը, թէ չէ ինձ
հասաւուլ Մարգար կասեն, էս ա վեր կը կենամ, աչքերս կը չռեմ,
հարսանքաւորին չոլ ե չոլ կը քցեմ, ժամուժն էլ որ ըլնի՝ դուս
կանեմ:

— Դու ինձ ասա, ղրկի՞ ես հրամանք առո՞ւմ, որ մեր գոր-
ծակալն ու մովսոմը չեն ուզում պսակել:

— Տօ բա սուտ եմ ասո՞ւմ:

— Գէ որ նրանք կամենում են, մենք ի՞նչ ենք, քանի՞ գլուխ
ենք. ասում ա՝ աչքը բարձրանայ՝ բարձրանայ, ունքից վե-
րև չի կարող գնալ գէ որ գործակալն ասում ա չհաս կայ՝ էն ա
կայ. ա ո ա ջ ն ո ր դ ն ե ս ե մ, բ ա կ լ է ն խ ա չ ա ծ ե մ ց ա-
ն ո ւ մ. տեսնո՞ւմ ես, համաձայն կայսերական և առաքելական օրի-
նաց՝ նա մեր ամենքիցը շատ գիտի, դեռ մովսոմն էլ վրադիր. դու
ի՞նչ ես ասում, տանուտէր Սիմոն:

Տանուտէրն ուսերը վեր քաշեց և հատաւուլ Մարգարի երեսին
նայեց:

— Ի՞նչ էլաւ ձեզ, աէրսէր, տանուտէր, միաեանց քամակից տուն
ընկան գլխներն ու ժամհարը, օրը միձնեց, կերակրները փչացան,
հարսն ու փեսէն վաղուց երթիկի տակին պատրաստ կանգած են,
որ ձեռ ձեռի տաք:

— Ես իմ մովսոմն խօսքից դուրս չեմ կարող գալ, վճռեց
տանուտէրը:

— Գործակալն էլ իմ մովսոմն ա, հաստատեց աէրսէրը:

— Գնացէ՛ք, ասեցէ՛ք, որ պսակը մնայ, խաբար ղրկեցին
հարսանիքաւորները:

— Ես էլ գնամ Սաքոյին աչքալիս տանիմ, կամաց մրթմրթաց

1 Մի կողմը կենայ:

Մարդարն ու տեղեցը վեր կացաւ. էս օրուան անելիքն արինք, էդ-
դուցուանն էլ կը տեսնենք, բանը բան շանց կըտայ։

— Էս առաջի օրն ա այ՛, որ եասաւլուղ դայ գեղն ու ա-
ռանց կուշտ փորով հայց ուտելու ու մի կէս լիտր դինուց պրպեց
իրան ոտի քրեհ տանելու՝ գեղեցը դուս գնայ, ասայ տանուտէրը
տէրտէրին, եասաւլուղ Մարդարի գնալուց յետոյ։

Գ.

ԱՅՂԸ ԳԵՕՂՆ ԵՒ ՍԵՒ ՋՈՒՐԸ

Էջմիածնից մօտ երեք ժամաչափ դէպի արևմտահիւսիս գտնուում է մի լիճ, որին ժողովուրդը Այղը անունն է տալիս։

Այղը գեօլից շատ մօտ, թաւ եղէգնուտների և ճահիճների միջից յառաջանում է այն պատմական գետը, որ կոչուում էր Հրազդան, իսկ այժմ Սեւ ջուր։ Այղը լիճն և գետը միանում են բաժանողը մի երկու երեք հարիւր քայլաչափ մերկ տափարակ է։ Մերկ եմ ասում, որովհետև ինչպէս գետի՝ նոյնպէս և լճի եղերքը ծածկուած են խիտ եղէգներով, որտեղից տարին մի անգամ մերձակայ գիւղերը շինում են խրեհանց համար փսխաթ, կամ խսիրներ, իսկ այդ տափարակի վերայ բացի բարակ սեզից ոչինչ չես դանիլ։

Թէ լիճն և թէ գետն ունին տեղացիների աչքում մեծ նշանակութիւն։ Գետի եղերքի եղէգնուտները նուիրական են ամեն հայ քրիստոնէի համար. որովհետև այս տեղ, ասում են, խոզացած արածում էր մեր քրիստոնէութեան հիմնադիրը՝ Հուժիու Տրդատը. այս տեղից նա մրթմրթալով վազեց, մեր Լուսաւորիչ պապի առաջին գլուխը քարշ ձգած կանգնեց և նրա օգնութեան շնորհիւ կրկին մարդկային կերպարանք առացաւ՝ մի ականջով միայն Սեւ ջրի գլխի արածող կենդանու յիշատակը չմոռանալով։ Մինչև այսօր էլ որսորդները Սեւ ջրի գլխին խոզ սպանելով՝ միմեանց ասում են. — Ի՞նչ կընէր հայ քրիստոնէի հալը, թէ որ մեզ պէս մի որսորդ սպանած ընէր մեր խոզացած Տրդատ Թագաւորին։ Միւսն էլ պատասխանում է. — ասում են, ինքը Տրդատ Թագաւորը զղջած ա էլել իր խոզութիւնից, որսորդ տեսնելուն

պէս զատակ[1] եկել առաջներին մեռն ա եկել, որ բալքի մեռն սպա-
նեն, վերջնագայ իր չարչարանքներից, համա Աստու հրամանով նեա
ու անեղի լարը կտրուել ա ու Տրդատը սաղ ա մնացել։

Այղը գեօլի վերայ հնագոյն առասպելներն աւելի շատ են։ Մինչև յայսօր էլ ես անտարբերութեամբ չեմ կարողանում յիշել Այղը գեօլի անունը, որ անձս չքաւոնի։

Երբէք չեմ կարող մոռանալ, ինչպէս իմ հանգուցեալ հայրը վսեմ և ազդու բառերով պատմեց ինձ Այղը գեօլի բոլոր պատմութիւնները, որը որ ձիու վերայ ինձ իւր թարքն առած՝ գնում էինք Սև ջրի գլուխը մովլովից ինձ համար արձակման վկայական ստանալու, որով գնամ՝ ուսում առնիմ։

— Գիտես, որդի՛, որ մենք մօտանում ենք Այղը գեօլին, տե՛ս հրէ էն քարափի տակին ա, մի քիչ էլ ներքև գնանք՝ կերևայ։ Այղը գեօլը հասարակ ջուր չէ, շարունակեց լուսահոգին. նրա ջուրը չի գնում, միշտ կանգնած ա, ինա անտակ ա, մարդ չի կարող նրա մէջը մտնել։ Էն սհաթը կուլ կըտան հրեղէն կենդանիքը։ Ուրիշ ջրերի միջինը ձկներ ու գորտեր են, համա Այղը գեօլի միջին սրանց ոչ մինը չես դանիլ. հրեղէն ձիանք, սիպտակ հրեղէն գոմէշներ, մարդագաճուկն ու շատ ուրիշ գազաններ են լիքը Այղը գեօլում։ Էդ հրեղէն ձիանց ցեղից ա, շարունակեց Հայրս, Քեօռ օղլուի ղոաթը[2]. որ թևաւոր է եղել։ Այս բանը, իբր թէ, տեսել է խառատ[3] Մուրատը։ Նա տասը տասն և հինգ փայտէ ուղտեր շինած՝ իրար քամակից կապած՝ սանձը ձեռին քաշելով՝ Կողբից աղէ եղել բերելուս. յանկարծ դիմացից տեսնում է Քեօռօղլուին իւր կորիճներով և երկիւղից քանդում վայր թափում գեանին իւր ուղտերն և դարձնում մի կոյտ փայտ ու ինքը մտնում Այղը գեօլի հեղեղների մէջը։

Քեօռօղլին՝ որ նկատած է լինում ուղտերի շարքն և հիմա գտնում է փայտացած, շատ զարմանում է այս հնարագէտ վարպետի վերայ. ուր որ լինի, հրամայում է իւր քաջերին, պռոտել այն մարդուն և իւր առաջին կանգնացնել։ Խուզարկուները քաջ գիտելով, որ մարդը թագկացած կը լինի եղէգնուտների մէջ, իջնում են այն տեղ, ձիանքն արօտի թողնում և սկսում որոնել։ Ամբողջ օրը

---

1 Դիտմամբ։ 2 Ղոաթն էր այն առասպելական նժոյգ ձին, որով Քեօռօղլին քաջութեան անուն է տարել։ 3 Հիւսն։

3694-48

երբ որ Քեօռօղլին ղուր ժամանակ է կորցնում, վարպետը մի ասեղ է դառնում ու կորչում, հրամայում է ձայն տալ Լեկ ինքը երդուում է իւր սրովը, որ եթէ փայտէ ուղտերի տէրը դուրս գայ ինքնայօժար, նա նրան ոչ միայն չի պատժիլ, այլ և կը վարձատրի. ապա Լեկ ոչ, երեք շաբաթ շրջապատած Ա.յղը գեօլը՝ քաղցած պիտի սպանի իրան:

Նոյն ահա դուրս է գալիս Մուրատը դողալով և գլուխ տալիս Քեօռօղլուին:

— Քո ձեռագործն է այդ ուղտերը, հարցնում է Քեօռօղլին:

— Շրաեվէք, դևսիդ ղուրբա՛ն:

— Ընչի՞ Լեկ կացար:

— Քո անունից աշխարհքն է սարսափում, և ուղեցն ասեմ, հիմա էլ չէի դուրս գալ եթէ քեզ աւետիք տալու առիթը չունենայի: Մուրատը պատմում է Քեօռօղլուին, որ ինքն ախոնատես էր, երբ նրա մտաքի ձին արածում էր լճի ափումը, մի հրեղէն սպիտակ այգը[1] ձի դուս եկաւ ջրի միջից, Թռաւ նրա մտաքի վերայ ու կրկին ջրի տակը մտաւ:

— Ըրեմն դու ազատ ես, սարքի՛ր քո ուղտերդ, բարձիր բեռներդ և ճանապարհ ընկի՛ր:

Մուրատն սարսաւ Քեօռօղլուի ընծային, կարգի բերեց իւր ձեռագործը, բարձեց ագին և գնաց:

Քեօռօղլուի հրամանաւ և պատիւ այն այգը ձիու, որը տասն և մէկ ամսից յետոյ պարգևեց իրան նրա սիրելիան Ղաֆթին՝ այդ լճէն այն օրուանից կոչուում է Ա.յղը գեօլ:

— Բաս էդ Ա.յղը գեօլի ջուրը ո՞ր տեղից ա գալիս, ո՞ւր ա գնում, հարցրի հօրս:

— Ա.սում են, որ ջուրը գալիս ա Արագած սարի կատարումից եղած լճից. էդ բանն իմացել է մի հովիւ: Նա այծի քամակից ձըգում է իւր գաւազանը, որ ընկնում է Արագածի լճի մէջը: Մինչև մօտ է գալիս հովիւը, տեսնում է, որ իւր գաւազանը ջրի երեսին չի: Ա.յս երևոյթը նրան կարծիքի տակ է ձգում. մանաւանդ երբ նա Արագածի սառոյտներով ոչխարներն արածացնելուս, գլուխը գետնին է գնում մի փոքր հանգստանալու, միշտ ջրի քըչ-քըոց է լսում: Մի շաբաթից յետոյ պիպուաճով նոյն հովիւն իւր ոչխարները դաշտն իջեցնելուս Ա.յղը գեօլի մէջ տեսել է իւր փայտը: Հովուի կասկածն աւելի սաստկանում է, նա մտածում է, որ Արագածի գլխի լճի և Ա.յղը գեօլի մէջ յարաբերութիւն կայ, անպատ-

1 Որձ:

ճառ ջուրը Արագածից գետնի տակովը հոսում է ներքև և դուրս-նում է Ա.յղը գեօլը. դրա համար հովիւը մի ջուալ[1] դարման շալակում է, բարձրանում Արագածի կատարը և լճի մէջ լցնում. երկու օրից իւր դարմանի հետքը Ա.յղը գեօլումն է գտնում:

— Բաս էդ ո՞նց ա, որ ջուրը միշտ կանոնած ճիտա ա մի պատիկ լճի մէջ ու դուս չի գնում, հարցրի ես հօրս:

— Ա.սում են, պատասխանեց նա. Ղկլեաշէ օրով Նբևանու վերջին Հիսէյնին խան Սարդարն ուզեցաւ Ա.յղը գեօլը խառնել Սև ջրի հետ: Երեք հետ իրան երազ եկաւ, որ էդ գեօլի ջուրն անիծուած ա, դա գնացիան ջրի հետ չպտի խառնուի, ասմարդին էդ ջրի համը չպտի տեսնի, Սարդարն անկայ չարեց ու Ա.յղը գեօլի ու Սև ջրի մէջ տեղ Թմբան վըայ մի առու փորեց: Վերջի օրը հէնց որ մի պատիկ Թուրը էր ճնացել, որ ջուրը գնար, ին էլ էն տեսան, որ գեօլի երեսը կրակ դառաւ, միջիցը ահագին գաղաններ կրակի հետ դուրս Թռչկոտացին, քիչ էր ճնացել, որ ամէնքին էլ կուլ էլին տալիս, Թէ որ գլուխ չառնէին չկորչէին: Ինքը Սարդարը հետուումը կանոնած՝ էս բաներն իր աչքովը տեսել ա ու էլ յետ առուն լցնել տուել:

Եւ արդարև, հետաքրքիր այցելուն այսօր էս կրնկատի լիճը և Մեծամօրին բաժանող սափարակի միջտեղը մի հին առուի հետքեր:

Ահա այսպիսի առասպելների հետ է կապուած Ա.յղը գեօլի պատմութիւնը. սակայն հետաքրքրականն այն է, որ մի ձահճալից լիճ է նա, որը սափարակի տակից անպատճառ կապ ունի Մեծամօրի գետի հետ:

Սովորաբար գետերը յառաջ են գալիս և կապուում մանր աղբիւրակներից և վտակներից, իսկ Մեծամօրին մի բացառութիւն է. ամբողջ գետն այդ փոքրիկ տեղն շամբուտ ճահիճներից է բղխում և յառաջ գնում դէպի Երասխը: Պէտք է նկատել ուրեմն, որ ժողովրդական առասպելը զուրկ չէ մտածմունքից. կարող է այն էս լինել, որ Մեծամօրիի և Ա.յղը գեօլի ջրերը Արագածի զանազան բարձրաւանդակներից են, որ գետնի տակով իջնում և Ա.յղը գեօլումը լոյս են տեսնում, կրկին գետնի տակը մտնում ու փոքր ինչ հեռի Մեծամօրի գետը յառաջ բերում:

1 Տոպրակ, մաղաթ:

Դ.

ՄԻԿԻՏԱՆ ՍԱՒՕՆ

Սև ջրի գլխին՝ այսօր էլ, կարծեմ, դեռ կարելի է նկատել մի երկու աւերակների հետքեր, որոնք փոքր ժամանակ հնախոյզ ճանապարհորդին կանգ առնել կը տան և մտածմանց մէջ կը ձգեն։

Այդ երկու աւերակներից հիւսիսային կողմը գտնուածն այն ժամանակ[1] է, որ մի երկու տարի քաշում էր դէպի իւրեան բազմաթիւ ժողովուրդ Սարգարապատու և կարբու կոչուած դաւառները՝ արդարութիւն և իրաւունք խնդրելու։ Ուզում եմ ասել, թէ այս աւերակի տեղը մի քանի տարի յառաջ մեծ շինութիւն էր։ Այս տեղ էր կենում այդ դաւառի կառավարիչը, կամ ռամկական բառով մելքումը՝ իւր օգնականներով, գրագրներով և ոստիկանական բոլոր պաշտօնեաներով. այս տեղ էր և նորա դատարանը։

Այս մեծ շինութեան դիմացը՝ ներսից ոչ շատ հեռու՝ Սև ջրին աւելի մօտիկ եղէգնուտներին կից էր միւս աւերակի տեղը՝ կառավարչի ամարաթի դիւանատունը, կամ միկիտանխանէն։

Մելքովի ամարաթից ոչ պակաս կարեւոր էր այս դիւանատունը։ Այսպիսի մի ժողովատեղին հեռի լինելով գիւղից և բնակութիւնից, հարկաւ պէտք է ունենար մի տեղ, ուր եկաւոր բազմութիւնն իջևանէր, կերակրուէր և պատապարուէր։ Այսպիսի հիւրանոցներ ամէն մեծ ճանապարհների վերայ գտնուում են։

Մելքովի ամարաթի շինուածքն այնքան հետաքրքիր չէ մեղ համար. մի լայն պարսպաւոր բակ է այն, մի կողմը կարգով բաւականին միայարկ սենեակներ շինած՝ ուր զետեղուում էին ինքը դաւառապետը, իւր իրաւարանը և օգնականները. փոքր ինչ հեռու մի քանի մանր մունր սենեակները զրագրների բնակարաններն էին, քառակի կողմը դռնի էր, ուր կապուում էին ձիանքն և կենում էին սաորին պաշտօնատարքը՝ եասաւուլ, մհեռար, կօղակներ և այլն։ Դռին կպած էր բանտը երեք չորս մանր և մութ սենեակներով։

Դիւանատունն ունէր նոյնպէս մի լայն պարսպապատ բակ, որի մէջ կային մի քանի տներ. դոմը, մարագը, մառանը, հաւաբունը և այլն, ինչը դիւանատունը շինուած էր այդ բակի արևելեան կողմը ճիշդ ամարաթի դիմացը։ Երկու մուտք ունէր նա, մինը ուղղակի դրսից, որ էր հասարակաց դուռը, իսկ միւսը՝ բակի միջից։ Այս կողմից մտնում էին հեռու տեղերից եկած խնդրատուները, կապելով իւրեանց ձիանքը բակի մէջ, կամ դոմումը։

Դրսից եթէ ներս մտնէիր դիւանատունը, ուղղակի դիմացը շինուած էր դիւնավաճառի սառնարանեղէն, շղթապատած տախտակեայ վանդակով՝ ինչը միկիտանն ևս մէջ տեղը կանգնած։ Արևելեան կողմը բացուում էր մի դուռը, որ տեղից միմեանց միջով կարելի էր մտնել երկու ուրիշ սենեակների մէջ։ Սոքա էին եկաւորների իջևանը, կամ հիւրատունը. դիւնավաճառի քառակի պատի վերայ ևս կար մի փոքրիկ դռնակ, որի նշանակութիւնն օտարականների համար մի հանելուկ էր դարձել. միկիտաններն իրանք ասում էին, թէ այդ իւրեանց ամենակարևոր մթերքների պահելու տեղն ու իւրեանց ննջարանն է։ Այս դռնակի ներսը խորհրդաւոր էր մնում այն պատճառով, որ նորա քառակի կողմի պատի վերայ կար մի ուրիշ դուռն ահագին ժանգոտ կողպէքով փակուած։ Այդ մուտքը տանում էր ուղղղ դէպի եղէգնուտների խորքը։ Զարմանալին այս է, որ ուրիշ տեղից այդ դռանը մօտենալ անհնարին էր. եղէգնուտի շարունակութիւնը մինչև այդ յարկի պատն էր հասնում. իսկ այս դռանը մօտեցող նեղ անցքի մուտքը շատ հեռու էր։ Եթէ հետաքրքիր մարդը կամենար տեսնել այդ ժանգոտ կողպէքը և եղէգները ձղելով արևելեան կողմից, որպէս և էյէ, ներս սողար, կը տեսնէր, որ այդ նեղ անցքի վերայ ձիանց ոտնատեղի են երևում, հետևակ մարդու հետք հազիւ է նշմարելի։

Ուրիշն հասարակ մահկանացուի համար թէ դիւնեան միջից և թէ դրսից այդ տան ներսն անմատչելի էր. սակայն եղել են փոքրաթիւ արժանաւորներ, որոնք կարողացել են նկարագրել մեզ այդ խորհրդաւոր ծածկի ներքին կողմը։ Ասում են, որ երկու մութ սենեակներ էին պարունակում միմեանց մէջ. դրանցից մինը գոմ էր խոր խոր մուրներով, իսկ միւսը մի դասարկ սենեակ՝ չորս հինգ հատ անթափանցիկ պատուհաններով։ Բայց թէ ընչի՛ համար էին պէտք դալիս և ինչպէս էր, որ միկիտանն երբէք դրսից դրուած փականքին չէր մօտենում, իսկ դուռը միշտ բացուում էր, այդ ոչոք չէր հանդգնում հարցնել. դիւնավաճառը թթուած դէմք կառնէր, կամ բոլորովին չէր պատասխանիլ, կամ

1 Պալատ։

թէ կասէր, որ ինքն էլ չգիտէ, թէ ո՛ր ժամանակիցն է այն ժամագոտ կողպէքը և ինչի՞ համար. ինքը մտած օրից այնպէս է գտել։

Ա՛և ջրի գլխի միկիտաններից մէկին միայն մենք ճանաչում ենք և որի հետ մենք բաղդ պիտի ունենանք շուտ շուտ հանդիպելու։ Դա միկիտան Սաքօն է, ընթերցո՛ղ, որի հետ պատիւ կը համարիմ քեզ ծանօթացնել։

Դրա համար մի քանիսն ասում են, թէ քրիստոնեայ է, ոմանք էլ պնդում են, թէ Աշտարակցի է։ Այս վերջիններն հիմնում են իւրեանց խօսքը նրա վերայ, որ պինեվաճառ Սաքօն ունէր Աշտարակումը մի երկու այգի։ Ո՛ր աշխարհ-քիցը կը լինի Սաքօն, թող լինի, մեզ համար ոչ մի է. մենք նրան ճանաչում ենք տասը, տասն երկու տարեկան հասակից, երբ քարշ էր գալիս նա գործատոյների գինեվաճառների դռներին։ Ասում են, որ ոչ մի գինեվաճառ չի կարողացել երկու երեք ամսից աւելի պահել Սաքօյին. մեր գալում [1] լակոտը [2] մօր կոճակ կարող է եղել, աչքի սուրմայ [3] թռչնող. ոչ միայն յաճախորդների գրպաններից անյայտացել են նրա օրով զանազան մանր մունր առարկաները, գինեվաճառի ծոյից կամ գլխաշորի էլ դիշերը քնած ժամանակը թռել վերացել է նրա քսակը, էլ ո՞վ էր գժուել Սաքօյի հետ երկար կեանք վարել։

Թէ ի՞նչպէս եղաւ, ի՞նչպէս չեղաւ, մին էլ Սաքօն դարձաւ Աչքը գետի ամպաթի լճակօր գինեվաճառը։ Շատ չըտեւեց, նա դարեց բոլոր այցելուների և ամպաթի բնակիչների համակրութիւնը, մանաւանդ նորա յարգանքն աւելացաւ, երբ որ ամէնքն իմացան, թէ Սաքօն Մովսովի երկու աչքի լոյսն է։ Ա՛յնու հետև պիւղացւոց պաշտպանն և թանգագին հիւրն էր Սաքօն, ամենագիւղացւոց պաշտպանն և թանգագին հիւրն էր Սաքօն, ամենաերիտասարդների մասերիմն և նոյն իսկ օգնականների սիրելին։ Սաքօյի տասաւոր

— Ամո՛թ ա, ամո՛թ, մեր մէջ էդպէս հաշիւներ չարտի ըլլին, մի երկու մանէթն ի՞նչ ա, որ դրա համար բերան ես բաց անում: Քո տունն էր, եկար, անուշ արիր ու գնացիր:

Մեր Կարոյի գոյնը պաղի ծեփ դարձաւ. նա կարծում էր, թէ երկու ապտակ հազիւ կը լինի, մանէթների անուն լսեց:

— Չէ, Սաքօ ջա՛ն, ես էգ թաւուր [1] բաները շատ չեմ սիրում, ասում ա հէսաբ դինար դինար, բաղշիշ թումանն թումանն [2]. դու էլ մուֆտաա [3] հօ չե՞ս գտել փող ես տուել դու էլ մի քանի սև փողի համար ես գլուխդ չոր քարին դրել էլի՛ ախպէր ենք, ինչ որ հասնելու ա՝ ասա՛:

Շատ չեմ ու չուում անելուց յետոյ, վերջապէս հնչում է վրձռական խօսքը. — երեք մանէթ ու կէս:

Թուքը կուլ տալով՝ ձեռը ջէրը տարաւ մեր նախշէին ու յետ արեց իւր հատարակ կտաւէ քսակի բերանի կապը: Նա տասը մանէթ պարտք էր արել մի էնչէին գործի համար, Սև ջրի գլուխն էկել. վերջին երկու մանէթն էլ Սաքոյին տուեց ու խնդրեց, որ գնայ թէ չէ, միացածը առաջին եկողի հետ ղրկի:

— Կարո ցաւը տանի, թէ կուզ ըսկի [4] մի ղրկիլ, կամ թէ ունեցած ժամանակդ ղրկի, քեզ վրա կորած հօ չի՛, Հանգստացնում է նրան Սաքօն ու ճանապարհ ձգում: Նա լաւ գիտէր, որ նախըրէնն էլ չի համարձակուիլ իւր մի կոպէկին ուտել, մանաւանդ, որ իրեն հանելիքի քառապատիկ կամ հնգապատիկն արդէն ստացել է. բացի դրանից կողմնակի ճանապարհով նախրչու տասը մանէթի մեծ մասն էլ իւր գրպանն է մտել ում ի՞նչ տուել է նախրչին, Սաքոյի ձեռքովն է անց կացել:

Ես չգիտեմ Սաքոյի նախորդ գինեվաճառներն էլ ասյն և մի անունն ու խելքն ունէի՞ն, թէ ոչ: Հաւանական է, որ ոչ. ես կարծեմ Սաքոյի իրան հանճարն էր այդպէս հանրահռչակ արել: Թթու է թան չի, ամէն մարդի բան չի. ո՞վ էր կարող Սաքոյի պէս վստահ գործ բռնել. ո՞ւմ առաջին մուլտովի դուռն այնպէս բաց կը լինէր, ինչպէս մեր Սաքոյի: Տեսէ՛ք, թէ մեր միկիտանն ի՞նչպէս է շարունակում իր տեսակցութիւնները մուլտովի հետ:

Մութը գետինն առաւ, ոտքը խաղաղուեց, ամէն մարդ մնաւ

1 Ստյպիսի: 2 Հաշիւը կոպէկ կոպէկ, պարզիը թումանն թումանն: 3 Ջրի: 4 Երբէք:

իւր սենեակը: Սաքօն յանձնեց գինեվաճառը իւր սպասաւորին և գնաց դէպի մուլտովի ամարաթը: Նա ուղիղ ճանապարհովը չէ գնում: Նա անց կացաւ պատի տակն և շուտ շուտ խշշոտալով իրան ձգեց մուլտովի նախասենեակը: Նրա համար առաջուց իմաց տալ չկայ. եասաւլուքն իրաւունք չունի արգելել նրան: Սաքոյի ներս մտնելուց յետոյ նա պարտաւոր է թողուլ նրան նախասենեակում և դուրս գալ դուռը հսկել, որ օտար մարդ չգայ: Բաւական է, որ մուլտովը տանն է: Ներսից դուռը փակած էլ լինի, Սաքօն ունի իւր բացելու ձևը. խկոյն դուռը նրա առաջին կը բացուի: Մուլտովի քնած ժամանակն էլ Սաքօն կարող է ուղղակի մտնել ննջարանն և զարթեցնել. այդ կը նշանակէ, որ մի անյետաձգելի գործ կայ:

— Տղա՛յք. ո՛վ կայ այդ տեղ, ձայն է տալիս մուլտովն եասաւլուքին և նորից խաղաթուղթ պասուիրում՝ որ ոչ ոքի չընդունեն:

Մտնում է Սաքօն մուլտովի մօտ, կանգնում դռան տակին և գլուխ տալիս՝ ձեռքերը կրծքին դրած: Նա գլուխը չի բարձրացնում, մինչև մուլտովը չը հարցնի: — Հը՛, ի՞նչ կայ:

— Կարո սաղութիւնը [1]:

— Ա՛սա՛ տեսնեմ:

Նոթարիւնք, ընթերցո՛ղ, որ ես ու դուն էլ կախարդական գլխարկ հագած՝ անտեսանելի լսելու զօրութիւն ունինք և լուռ ու մունջ մի անկիւնումը կանգնած լսում ենք. ուրիշն ականջ դի՛ր:

Սաքօն ուշացրեց մուլտովի պատասխանը:

— Հը՛, ձայնը բարձրացրեց մուլտովը, ի՞նչ ես պռօշներդ կէս գաղ կախ քցում, բերանիդդ հօ քրեհ [2] չե՞ն ուզում, խօսի՛ էլի՛. ի՞նչ կայ, ի՞նչ չկայ:

Ը՜. . . ը՜. . . ը՜, ոչինչ, էնպէս մեծ գործ չկայ, մտայ քո սաղութիւնը հարցնեմ:

Լա՛ւ, ես գիտեմ, թէ իմ սաղութիւնը քեզ համար ի՞նչ աժի, ասա՛ մոքինդ, արդաչիք [3] են եկել:

— Հրամեցի՛ք, աղայ ջա՛ն:

— Ո՞րանի՞ հոգի են, ի՞նչ են ուզում, չաղ [4] են, թէ լղար [5]:

— Երեք ախպէր են, էնդիրը մի հատարակ բան ա, համա մէջը նիւթ կայ. դրանք ուզում են բաժանուիլ, մէջները համաձայնու-

1 Ողջութիւնը: 2 Վարձ. 3 Խնդրատու՞ք: 4 Պարարտ: 5 Վտիտ:

Թիւն չկայ. մենճ ախպէրը մենճահարկ ա ուզում, պռակնոցը չէն տալիս, հիմի եկել են, որ դու բաժանես։

— Ընչի՞ իրանց ատուաէրը չի վերջացրել։

— Ջի՞ որ ես քեզ խնդրեցի, որ քո կողմից տանուտէրներին պահ հրամայեմ, որ եզալի գործերը չհամարձակուին իրանք վերջացնել։

— Ոլքան միաքս է, այդ իրաւունքն ես քեզ չեմ տուել։

— Լ՛հ, ազայ, դու էլ շատ բանի քամակից ես ընկնում, ամէն բան հօ մանահէսաբ տալով չպահ՞ հրամայես, մենք էլ մարդ ենք, խոտ հօ չե՞նք ապածել, պահ հասկանանք ու էլ պլխապատանք չտանք քեզ. ես եմ քո կողմից հրամայել։

— Հրամանաթուղթ հօ չե՞ս ղրկել։

— Գժուե՞լ եմ, լ՛նչ ա. մէկին իր էստէղ էլած վախան եմ պատուիրել, մէկելին եասավուլի բերնով եմ ասպասարկել։

— Աման՛ն, Սաքօ՛, դու մեր պլխին մի փորձանք չբերես։

— Թող իմ ջանին դայ, թէ որ սրանից քեզ մի վնաս հասնելու ըլե. ո՞վ կայ մեր մհալումը, որ բան հասկացող ըլե, ես ձեռիցը մի բան դայ, անասունը քեզ օրինակ. քո խօսքը մհալե մէջ թագաւորի խօսքից վեր ա. դու ես մեր տէրը, մեր գասաւորը, մեր կեանքի ու մահի վճիռ տուողը. թուղթն էլ ա քո ձեռին՝ պալամն էլ[1], լ՛նչ կամեցար՝ կամեցար. ասում ա. ղոր ինչ պլեցի՝ պրծեցի, ո՞վ ա քո յառաջը բռնողը, ուզես քօթիկի[2] մէջ կը փթայնես, ուզես Սիբիր կը ղրկես։

— Ա՛յ ազայ, շատ վատահ ես խօսում, Սաքօ՛, Երևանումը որ իմացան, գիտես ի՞նչ կանեն, մեզ հողից հողի կը կորցնեն։

— Լ՛հ, ազա՛յ, հէնց իմանաս ինձ յայտնի չե, որ նրանք էլ չեն կարող քո մի մազին դիպչել. ո՛վ իր աչքը քօռ կուզե, իր հացին քացով կը տայ. թէ որ քեզանից աւելի խէր տուողը դըտնեն, թող քո տէրը ղրկեն. ի՞նչ են ուզում անկուշանները, մրջմի քարվանի պէս եասավուլը Երևանայ ճամփիցը պակսում չի բեռները լիքն յառաջ արած. էս ի՞նչա՝ տիկրով Աշտարակու դինի արաղ, Նիգմարդայ լոխ պէս ցորեն, Աբարանու արդար քեահրիբարի պէս կովե եղ, Հայթաղու խտակ դղած ապրշմի պէս բամբակ, Մօլլադուլանայ հատիկ հատիկ հրնտրած բրինձ, Ալերդլուի մեղրի պէս

1 Գրիչ։ 2 Փայտի կոճղ տանջանաց գործիք։

շերբաթաի ձէթ, Ղարինի կարմիր լոնճորի պէս գլուխ սոխ, ընչանք քալեշ սոխն էլ մեր մհալեցին ա Երևանու բոլոր էնոճախիների քունջ ու պուշնախը լցուում, էլ ի՞նչ Աստծու կրակ են ուզում. շաքար չայն էլ որ մեր խալեյը հանն էլ չի տեսել մեր մհալեցին ա դնում. էս մի բանն էլ (Սաքօն բուէթ և յուշյամատը միմեանց քսելով հասկացրեց որ փողի համար է ասում) էս մի բանն էլ շարթի էս գլխին դու գնում ես, շարթի էն գլխին հետդ տանում ես. ես իմ Աստուածը, ես որ նրանց տեղակ ըլեմ, քեզ սակ չեմ, թէ աչքիդ վերևն ունք կայ։

— Տօ՛, ընչի՞ ուրեմն իմ նախորդին փոխեցին, ժպտաց մովլովը։

— Մարդ ինչ կանի, ազա՛յ, իր գլխին կանի. մարդս ըաէնց ա, հէնց որ ոտին տեղ արեց, գլուխն էլ կամենց կամենց նեքսև խըրկեց, իրան ջլես[1] մոռանում ա. քեզանից առաջ մովլովը քանի նոր էր, ղրկում էր ու իր տեղը հաստատ էր. քիչ քիչ ոտն առաջ դրեց, հէնց խմացաւ, թէ իրանից մեծը չկայ. նրանց հակառակ էր գընում. մի երկու անգամ գրեցին ջելավը[2] քաշեցին, համա չէ, տեսան որ կապը կորել ա. մին էլ էն տեսանք, որ ըհը՛, մի բարի լսի հրամանքդ ըստեղ կանենաձ նրա ոտը սլքացրիր. ես կասեմ, որ շատ լաւ էլաւ, իր հախն[3] էր. ասում ա օձի գլուխը որ կը ցաւի, կերթայ ճամփի մէջ տեղը վեր կընկնի։ Ա՛յ, լ՛նչ կասեմ քեզ, գիտես որ մարդս մարդով ա, գիտես որ Երևան նատողների աչքն էլ մըհալի վրայ ա, դու էլ մհալի կառավարողն ես, միշտ ղրկում ես։

— Դու հէնց գիտես, Սաքօ՛, թէ ինձ էժան նստեց էս աե՞ղը։

— Ո՞նց կըլե, ազա՛յ ջա՛ն, առ ու տուրն ախպէր են, ընչանք ասես ոչ առնել՝ էլ չես. հէնց էդ ա, որ ես մեր հին մովլովին ղընդամիշ եմ անում[4], էն տնաքանդը գոգով փող էր տուել էս տեղին ու համ փողնցն ընկաւ, համ տեղիցը։

— Ընդա՞լ ի՞նչ քար քցեր խեղճն իր գլխին, էդ անասունածներն ինչ քան էլ ղրկում ես, բառականանում չեն ու փիս ուզուտրի նման ձեռքիդը միշտ գէմն են անում։ Դու հէնց գիտե՛ս, Սաքօ՛, որ իմ վերկալածի կէսն էլ ա ինձ մնում ա՞. դու ոչ մեռնիս, չարէքն էլ որ մնայ, շատ շնորհակալ եմ։ Անունը կայ որ ոսկի եմ ստանում, հաւատացնում եմ, որ մի կոպէկ իմ քիսէն չի մտնում. գնում եմ Երևան սատրապրում ստանալու համար և գուս գալիս. գեռ մի

1 Բոլորովին։ 2 Սանձը։ 3 Արժէր։ 4 Միզապրել։

բան էլ իմ ջելիցն եմ գնում: Եհ, ո՞ր միտն ասեմ, Սաքօ՛, դժա՛ր ա, դժա՛ր, մեղ էլ մեղադրելու չի, որ կաշառք ենք վերցնում: Հա՛, լաւ միտս եկաւ, լսի՛ր քեզ մի բան պատմեմ: Երեք տարի յառաջ Ախալցխի էն երեսին մովըով էի. մին էլ մի գիր եմ առանում, որ ինձ հալալաթ[1] կանչում են Երևան: Շտապում եմ մութը գետինն առնելուս հասնում ու ուղղակի գնում նաչալնիկի մօտ: — Բարով ես եկել, քաղցրութիւնով ձեռս բռնում է նաչալնիկը: Ես զարմանում եմ, առաջին անգամն էր, որ նրա երեսին ծիծաղ եմ տեսնում: — Գիտես ընչի՞ եմ կանչել քեզ, հրամայում է նա. Փառնաւուսի մօտ զաղաթների կացարան պտի շինուի, տէրութիւնից հինգ հազար մանէթ ա նշանակած, փողերն եկել են, պիտի առանաս ու գնաս շինել տաս: Գո արևը, Սաքօ՛, ուրախութիւնից չէի իմանում ինչ անեմ: — Աչքի՞ս վրայ, քո մեծութիւնն ասեցի, պատրաստ եմ քո հրամանը կատարել:

— Ուրեմն վեր կա՛ր թուղթն և մի ստացական գրի, որ ինձանից հինգ հազար մանէթ ստացար և ահա՛ փողը, վեր կա՛ր գրնա՛, երեք չորս ամսից յետոյ աները պատրաստ լինեն:

— Ընչանք ես թուղթը ձեռքս կառնէի, նա իր չաքմաձէն[2] բաց արեց ու մի ծալք փող հանեց, ձեռիս բռնեց, ապատում է, որ գրեմ ու ինձ տայ. էլ չեմ գիտում, թէ ո՞նց եմ գրում, երկու րոպէում թուղթը պատրաստ էր:

— Ես գլուխս կը տամ, թէ նա բոլոր փողը քեզ տուած լլի, ձէջ լինկաւ Սաքօն. ես էլ որ լլէի, մենծ մտան ինձ կը պահէի, քիչը կը տայի:

— Հէնց էդպէս էլ արեց. մին էլ ջանս գող էլաւ, երբ որ էն ահագին ծալքի երեսից հազար մանէթ համրարեց ինձ տուեց, ճնացած չորս հազարն արևէ էրեց[3] էլ չիտ գրեց իր դուխին[4] ու կողպեց: Ա՛յ, ասում է, էս հազարը տար, երբ որ կը պրծնի, էլի արի տացիր, բոլոր փողը հետդ մի տանիլ, ճանապարհին կը կորցնես:

— Մի տամիա կաց, ասում եմ, քո մեծութիւնը, երեխայ հօ չե՞մ, որ կորցնեմ:

— Էհ, ի՞նչ դժուարութիւնով ես բանը հասկանում, աչքով անելով ժպտաց երեսս նաչալնիկը, դե՛ տար էդ հազար մանէթը,

1 Շտապաւ: 2 Արկղ: 3 Ապահով 4 Արկղ:

ոնց կուզես՝ տունը շինիր վերջացրո՛ւ, մի տեսնենք, թէ ամեն մէկիս էդքան հասնո՞ւմ ա. գիտե՞ս քանի աչքեր կան էդ փողի վրայ:

— Ուրեմն տէղն եկած միջոցն ինձ կը պաշտպանե՞ս, ասում եմ, քո մեծութիւնը, թէ որ հարց ու խնդիր լլի, թէ որ մհալը դանգատ տայ, թէ ես իրանց բէգարն աւելցնում եմ, միշակ, փայտ և ուրիշ շինութեան համար նիւթեր եմ պահանջում:

— Ո՞նց թէ չեմ պաշտպանիլ, թէ որ մենք մէկս մէկու չըպաշտպանենք, երկու շաբթի մէջը մեր պոչը դուրս կը գայ ու ամենքս միասին կը կորչենք. մի վախիլ, դնայ քէֆդ քօք պահիր[1], դռանս առաջի մէյդանումն[2] էլ չեմ թողալ կանգնին, զաղախներով հետ կածեմ, բաս որ մհալը չը շինի իր զարաւուլների[3] ու զաղախների կացարանները, ես ու դուն հօ չե՞նք շինելու, ոնց ա նրանց հօրը պատրաստական:

— Շատ շնորհակալ եմ, քո մեծութիւնը, Աստուած քեզ երկար կեանք տայ, ասեցի ու հազարը հանով — հարկևորով ծալեցի, ջէբս[4] դրի ու գլուխս տուի, դուրս եկայ:

— Դէ ընչի՞ չէիր գլուխս տալ, աղայ ջա՛ն, մինակ էն հազարովը հօ չէիր բաւականանալ, ախար աները շինելուս միակների, մնասալի[5] մէջ էլ քեզ քիչ օգուտ չէր ճնալ:

— Օ՛, Սաքօ՛, քեզ ոչ ով չի կարող խաբել, ինչքան գեանի երեսին ես, երկու էնքան էլ գեանի տակին ես, ի հարկէ առանց էդ չէր լլելն քիչ միչ էլ ընտեղից եկաւ. յիսուն մշակ մի գեղի վրայ քցելու փոխանակ երկու հարիւր հրամայեցինք ու քսան ու հինգով անց կացրինք, մի քանի մանէթ էլ մեր ջէբը քցեցինք և այլն:

— Գիտեմ, ասաց Սաքօն ժպտալով, մի երկու երեք էնքան էլ էդ տեղերիցը կը դար:

— Չա՛, մի քիչ աւելի կամ պակաս:

— Էդ բաներն ինձ մի՛ սովրացնիլ, գլխիդ մատա՛ղ. ես շատ լաւ գիտեմ, թէ ընչի՞ կանց կենար: Ըտոնք թողանք, մենք մեր հասօրուայ բանը խօսենք:

— Ղո՛րթ, դու բանի ես եկել, Սաքօ՛, շարունակի տեսնենք:

— Էլ ի՞նչ շարունակեմ, երեք ախպօրն էլ ջոկ ջոկ թափ եմ

1 Ուրախ կաց: 2 Հրապարակ: 3 Պահապանների: 4 Դրպան: 5 Շինութեան պիտոյք:

տուել, մենծ ախպէրն իր մենծահարկը քեզ ա տալիս, թէ որ պըտակներին մի լաւ խրատես, մենծի պատիւը ձանաչացնես. պտակներն էլ մենծահարկը քեզ տալուց յետոյ՝ մենծ ախպօր լիզուն կարճացնելու համար մի բան էլ վրադիր են տալիս։

— Ընդանց հող ու գետինն ինձ պէտք չի, դու փող ասա, փո՛ղ։

— Փող կը լինի, բա հող հօ չի ըլնիլ. դու գուման չունես, որ եղներդ քցես մէջը վարես, ասում ա՝ էշը մատաղ չի ըլնիլ լաշակինը մատաղ կըլնի, վէճը նադդ կը շինենք ու փող կառնենք։

— Խօսքը շատ տուողինն ա։

— Ի հարկ է։

— Հիմի ի՞նչ պտի անենք։

— Ո՛չի՛նչ, գլխիդ ճառնիմ, հէնց որ քո մօտ կը դան, իրենի վրայ էլ կը բարկանաս, որ ամէն գարտակ բանի համար քեզ գլխացաւանք են տալիս, կը հրամայես ծ ա կը կոխել, երկու օր կը ձգնէն, յետոյ ես միջնորդ կընկնեմ, կը բաշխես. մենծին կը հրամայես պտակներին չգընել[1], պտակներին էլ կը պատուիրես մենծի պատիւը պահել, ինձ էլ կը կանչես, կը յանձնես, որ ինչպէս խելքս կըբուտ ա, դրանց բաւիշացնեմ[2]. ի հարկ է դրանից յետոյ աջամբուլը իր ոտովն եկած կըլնի։

— Շատ զալում[3] ա էս Սաքօն, թէ որ սրա պէտները չըլնէին, ի՞նչ պտի ըլնէր մեր գլուխ, մենք քաղցած կը գկոտայինք, ո՞վ էր կարող ամէն մի գեղացու հետ երկար մատահաթներ[4] անելով մի քանի կոպէկ պոկել. ախար մի ռոճկով մարդ կապրի՞. տարեկան շատ հինգ հարիւր մանէթ ա՝ որ բսկի Երևանու մենծամենծներվի գործերին կանգնած էտաւոլնիերին չի հերիք՝ թէ որ էն էլ ատատանք, մոտծում էր ինքն իրան մովսովը Սաքոյի հետանալուց յետոյ. բայց թէ ինքը Սաքօն ինչպէս վարուեց այս գործի վերաբերութեամբ, հետևեալ գլուխը թող բացատրի,

---

1 Զրկել: 2 Հաշտեցնել: 3 Ճարպիկ 4 Խորհրդակցութիւն:

Ե.

Ծ Ա Կ Ը

Մեզ յայտնի է, որ մովսովի բակի մէջ գոմին կապած էր բանտը: Երևում է բանտի գոռան փոքրութիւնից է, որ կոչվում էր Ծակ: Ներս մտի՛ր այդ ծակիցը և լաւ դիտի՛ր նրա ներսի կողմը:

Մի մութն և խոնաւ նախասենեակի մէջ երեք մանր դռնակներ են բացուում. որ մէկի դուռն էլ բանաս՝ մի գաղշահոտութիւն է դիպչում քթիդ՝ սառն և բարակ քամու հետ միասին: Երեք սենեակների ներսն էլ միատեսակ է. իսկ կահ կարասիքը միևնոյնից փոքր ինչ զանազան. ամէնքի մէջն էլ փռուած է մի անկիւնում մի մի բոլբոնած հին եղէգնեայ փսխաթ. իսկ պատերի վերայ մէկի մէջ հասած բևեռների վերայ ամրացած են շղթաներ և ծայրերին ձիանց ոտքը ձգելու յարմար փականք, որին բխով անուն են տալիս. միւսում նոյնպէս շղթայով պնդացրած է մի հասած կոճղ, որ երկու կողմից միևնոյն հետ միանում և բաժանուում են մի գլխի պօրութիւնով. այս էլ ժողովրդի բառով քօթուկ անուն է կրում. երրորդ տեղում մի պինդ ոլորած հասած պարան է կապած: Մի մի հնապատեան պռունգները կոտրտուած ջրի փարչ էլ դրած են փսխաթի մօտ, հետն էլ մի սևացած կաւեայ քերեզան:

Անտեղեակ այցելուն կը մոլորուի և չի կարող ճանաչել այս մութը տան և իւր միջի կահ կարասիքի նշանակութիւնը, կամ թէ յիշեալ չորչարանաց գործիքներից կը գուշակի բանտ լինելը. իսկ բաղդի հարուածից պինդուածով այսպէս ընկնողը սարսափեցնում է, թէ սա է այն նշանաւոր ծակը, որի անունն ամէն մի գեղացու սարսափեցնում է:

Եթէ մեր նման մտնելուս այս սենեակներից մէկի մէջ մարդ չգտանք, այդ չի նշանակում, թէ միւսներն էլ նոյնպէս դատարկ են:

Յանցանքի համաձայն պատիժն է լինում. կը տեսնես մէկ սենեկի մէջ մի անկիւնում կուշ եկած մինը, որից ոտք ու ձեռքն ազատ են. միւսի մէջ մի թշուառը՝ մի կուռը բխովի մէջ կոշտած՝ միւսը թոյլ կախ ընկած. երրորդում՝ գետնի վերայ ընկողմնած մի աւելի ողորմելին, ոտքի մէկը կոճղի մէջ ամրացրած՝ պարանով էլ ձեռքերը միջքին կապած:

Ահա մեր ջրի գլխի բանտի կամ ծակի պարզ նկարագրութիւնը:

Մենք վերը մոռացանք ասել, որ քանի մի տարի հազիւ կար մովսովի կացարանը մեւ ջրի գլուխը տեղափոխելը, առաջ այդ տեղ կօզակները կացարան էր. իսկ թէ ի՞նչ բանի համար են դործ դրել յառաջ այդ ծակերը, մեզ յայտնի չէ։

Մովսովի մօտից Սաքօյի հեռանալուց երկու օր յետոյ, երեկոյեան, այս ծակերից մէկի մէջ մտաւ մեր Սաքօն։

— Խարի բիկուն ձեզ, ա՛յ ազէք, էս ի՞նչ խաթի [1] մէջ ընկաք դուք։

— Ա՛խ, Սաքօ ջա՛ն, ո՞րտեղ ես, դու էլ մեզ մոռացար, քանի՞ հետ քառակիզդ եասավուլ ենք դրկել, անձախ անձախ եկար։

— Ի՞նչ անես, ախպէ՛ր, էս շան ազայ մովսովի ահու մարդ կարում ա ոտը փոխի՛լ. թէ որ իմանայ, թոզս քամուն կը տայ. սատիկ հրամայել ա, որ դուստաղների [2] մօտ օտար մարդ չմտնի։ Էլի օղորմի եասավուլների հօրը, սիրաս չի դիմանում, աղանչաք եմ արել. թէ որ ինձ ուզող ըլի բռնուածներիցը՝ քշերը տնց ըլի, ինձ նեքսեւ բերեն. ի՞նչ անես, ախպէ՛ր. գլուխը քարը, թէ օրական մի երկու լման գինի ու արագ մուֆտայ [3] եասավուլների փորը կը մտնի, մարդի խղճմտանք հօ հանգիստ կըլնի։ ախար չէ՞ ես էլ քաշել եմ, գիտեմ թէ ի՞նչքան դժար ա էս ծակի մէջ մնալը։ Ես էլ որ տեսնում էի չգնամ խեղճ դուստաղներին, խեղճերի հալը չհարցնեմ, սաղ տարով բռնուած կը մնան, ու ոչ ով ասող էլ չի ըլնիլ, թէ էսօր ես մեռել թէ էգուց։ Էր՛, էս երկուսդ էք ըստե՞ղ, էդ ո՞նց էլաւ, որ երեքիդ էլ բռնեց, բաս ո՞ւր ա ձեր մենծ ախպերը։

— Պտի որ մէնակ ա բռնել. ըսկի բան հասկացա՛նք, թէ ի՛նչ էլաւ, մին էլ տեսանք, որ մի մին շահ սիլլասի [4] երեսներիս հասաւ ու եասավուլները պարանով ձեռներս մէջքներիս չարքանդեցին [5] ու առաջ արած բերին կոխեցին մեզ երկուսիս էս ծակը, մեր մենծ ախպօրն էլ դիմացի ծակը։

— Կանի՛, ախպէ՛ր, կանի՛, շատ անաստուած անխղճմտանքն ա. համա էս էլ ձեզ ասեմ, որ կռճոնահաչ [6] ա տալիս։

— Ի սէ՛ր Աստծու, մեզ էս ծակիցը հանի՛, ինչ կուզե, իրա նով մեւ ծովն ըլե։ Քեզ մնաղ, Սաքօ ջա՛ն, եարաբ մեր ձիանն ի՞նչ էլան, լաւ ես մտիկ տալի՞ս, թէ չէ։

1 Փորձանք 2 Բանտարկեալներ։ 3 Ջրի։ 4 Խիստ ապտակ։ 5 Կապտոտել։ 6 Կաշառահաչ տալ, այսինքն կաշառի համար զանազան պատրուակներ ի գործ դնել։

— Ամօթ չի՞, ըսէնց բան կասե՞ն, դիտէք, որ աչքիս լսի պէս կը պահեմ ձեր ապրանքը. հէնց որ եասավուլը խաբար բերեց, որ ձեզ բռնեցին, էն սհաթը ձեր ձիանը քաշել տուի իմ ձիու կշտին կապեցի ու օրական խոտ ու գարմանը պակաս չի։ Էդ ոչինչ, տղէք ջա՛ն, ըտուր բանը խէր ա, մի էս ասեցէ՛ք. չէ՞ որ դուք աստուա՛ր էիք, թէ ինչ որ ձեր մենծ ախպօրը մենծահարկ կը հանի, իրան՝ մովսովին կը տաք, թաք ըլի ձեր կողմը պահի, բաս էդ ի՞նչ բան չասեցի՞ք։

— Տօ՛, էդ տնաքանդն ըսկի խօսացրի՞ց, որ մենք էլ բերանները բաց անենք, մի երկու երեք խօսք կըլլացրեց ու բռնատեց։

— Շա՛տ հարամկերն ա՛ շա՛տ, դեռ ըսէնց մովսով չի եկել։

— Սաքօ ջա՛ն, մեր ձեռն ա քո փէշը [1], մեզ մի ձար արա՛։

— Ախպէ՛ր, ես ու իմ Աստուածը, սիրաս կտոր կտոր էլաւ, երբ ձեր բռնուելը լսեցի. ուզեցայ առանց ձեր կանչելու գնամ ոտներն ընկնիմ, աղանչաք անեմ, համա չէ՛ք իմանում ի՞նչ մարդ ա, խօսք հասկացնիլ չի ըլնում. քու ի՞նչ բանն ա, ասում ա, խառնուռում ես, դատաւորն ես ե՞մ, թէ դու, մի ասող ըլի, թէ ա՛յ անաքանդ, ո՞նց թէ ինչ բանն ա. մի արի՛ կէս սհաթ էս աղուէսի բնումը նստի, յետոյ խոսցի խալխի հալն է։ ի՛նչ լաւ որ քօմակչին [2] մի բարի քրիստոնեայ մարդ ա, նրան երեսիս փարդայ [3] եմ շինում, նրա ձեռովը բան հասկացնում։

— Դո՛ւ դիտես, Սաքօ ջա՛ն, օխտը սպասդ դրախտումը կըծկվլան, թէ որ մեզ էս ծակիցն ազատես։

— Իլլաճ [4] չկայ, ընչանք բերանը մի կտոր եմ [5] չբցենք. մունքիւն [6] չի ըլնիլ։

— Ախպէ՛ր, դու մեր վէքիլը [7], գնա, ինչ որ սիրտդ ուզում ա՝ տուր, թէ կուզ մենծահարկը չի, մի բան էլ մեզ հանելիքիցը տուր։

— Սրանը փողն ա, փո՛ղը, ընչանք նապդը [8] համբարես ո՛չ կը մեռնի ու չի անիլ։

— Յաւն էդ ա, որ մեր մօտին փող չկայ, երկու շահի չափի

1 Ձեզ ենք ապաւինել։ 2 Օգնական; 3 Վարագոյր։ 4 Ձար։ 5 Ոտեվիկ։ 6 Ձար։ 7 Երաշխաւոր։ 8 Աձեռն։

խարջլըվ[1] հօ եօլայ չի գնալ. բայ թողալ տո՛ւր, գնանք գեղնյը ղըկինք։

— Չա՛, բա՛, բա՛, մաքովդ չանցկացնես։

— Դու քեզանից տո՛ւր, Սաքօ ջա՛ն, հօ գիտես, որ մեր աչքը մեր դառանն ա[2], գնանք թէ չէ, կը բերինք։

— Ես ձեզ աստուամ չիմ, համա որ չունիմ, հօ գիտէք որ ջանս չեմ խնայիլ։

— Սաքօ ջա՛ն, վերև Աստուած՝ ներքև դու, թէ որ դու մեզ օգնութիւն չհանիս, էլ ո՛վ ունինք էս անվերի վերի[3] խոզանտոցումը։

— Սըրբ Գէորգի դլխաքարը վկայ, որ չկայ. խո՛ր, որ ըլի աչքըս եմ կոխո՛ւմ, շահով[4] մի բան չի, պարտք էք ուզում, ողորմութիւն հօ չի։

— Բաս ո՞նց անենք։

— Ես էլ եմ մնացել մըղորուած։

Մեր Սաքօն ձեռքը ձակատին դրեց ու սկսեց երկար մտածել։

— Մի բան միտս ընկաւ, տղէք ջան, վերջապէս ասաց Սաքօն, կացէք առաջ գնամ մի ծեծուն անեմ[5], բերանը չափեմ, տեսնեմ ի՞նչքան ա ուզում. հէնց անենք, որ ձեր գործն էլ միանգամ վերջանայ պրծնի։ Ցետոյ կը դամ դիլբանդի մօտ, պոի որ նա փոշ ունենայ, նրանից կուզեմ, ձեր անուամովը սատապ կը շինենք, ինքս էլ վէքիլ կըլնիմ ձեր տեղակ, վերջացնենք, տանենք, աչքը կոխենք։

— Է՛, Սաքօ ջա՛ն, քեզ մատաղ, դու դիտես։

— Է՛ամա էլի լաւ կըլնի ձեր մտքինն իմանալ. ի՞նչքան կարող էք տալ։

— Դո՛ւ դիտես, Սաքօ ջա՛ն, ալլահվէքիլ[6], ոնց որ քու սիրտը կուզի։

— Չէ, դէ ես ո՞նց անեմ, ձեր քիսի[7] գօրութիւնը ձեզ ա յայտնի։

— Ի՞նչ ես կարծում, ի՞նչքան ա հէրիք։

— Վալլահ[8] չգիտեմ, էնպէս անկշռումն ա, որ քչով ի՞րը ա զարուլ կենում, հէրիք չի, որ ինքը խուզում պրծնում ա,

1 Ձեռաց մսխելիք։ 2 կարօտութիւն չունինք։ 3 վայրի։ 4 Տոկոսով։ 5 Արծարծեմ։ 6 Բարեկեցաբար։ 7 Քսակ։ 8 Աստուած վկայ։

հրամայում ա քօմակչուն, դիլբանդին, դրագրներին ու եասավուլը ներսին էլ ջոկ ջոկ բաժին տալ։

— Դէ ասա՛ ուրթ լինը թուման անձախ տեսնի էլի։

— Է՛հ, ի՞նչ էք ասում, բերանս էլ չեմ կարող բաց անել էդքանով ըսկի քօմակչու համար էլ չի բաւական կենալ։

— Վա՛յ, մեր տունը քանդըլու, մեր երեխեքանց բերնի թիքէն կտրելու միտք հօ չունի։

— Էդ ա՛ի, դրա տունը քանդում՛. քանդից էս մհալն ու թողից, սանդն էլ ա իր ձեռին՝ պօպօքն էլ. ո՞ւմից ա վախենում. ասում են սրա կնիկը նաչալնիկի հետ ու մօտիկ ազգական ա՝ թէ ձանանչն ա, ամիսներով Սրևան ա ըլնում. մենձի հետ՝ ոնց որ ես ու դուն, խօսքները միևա։

— Վա՛յ, վա՛յ վա՛յ. դէ ասա ռահաթը[1] քանդուելու ա էլի։

— Տօ բաս նոր էք խմանո՞ւմ, համա է՛հ, ի՞նչ ենք ջուրը լցրել սանդն ու ծեծում, ասում ա՝ օձի սևին էլ նալաթ[2], սիպտակին էլ. էս շունն էլ էն շանից, երկուսն էլ մի տանիցը։

— Բաս ո՞նց անենք, Սաքօ ջա՛ն։

— Դէ մի ձեր կատակն խօսքը չխմացայ, որ էն ու դեօրայ[3] ես էլ իմ բանը բռնեմ։

— Ախպէր, գնա՛ ընչանք տատուհինդ թուման խարջի, ուր բերանը կուզես՝ գլխի՛ր, որտեղից կարող ես՝ ձարիր. ինչքան շահ կուզես տուր՝ մեր աչքի լիսը կըլնիս։

— Դէ լա՛ւ, թէ որ ինչպէս ըլի բանը եօլա տանենք, ձեր միտքն ի՞նչ ա, ասում էք որ ձեր ախպօրը չէք ուզում մենձահարկ տալ էլի։

— Ջա՛նեմ, ախպէրն էլ մոռացանք, մեր գլուխն էլ. թէ մենք իմանայինք, որ դատաստան ըսկնից պոի ըլնէր, մենք մեր օխտը պտրաք կանիձէինք, մեր ձէնը մեր տանիցը դուս չէինք քցիլ. եա թէ չէ, ո՞վ ա իմացել որ բաժանքի մէջ մովրով խառնուի։ Ընչանք օրս լսել ու տեսել ենք, որ մեր գեղումը մեր գլուխը տատուտէրն ու իշխաններըը մի քանի շահի, եա մի գլուխ շաքար կերել բանը պըրծացրել են։

— Էլ ընչի՞ էկաք լսատեղ։

— Լա՛ւ չէինք ուզում գալ էս ծակի դուռը, համա տատու-

1 Հպատակ, ժողովուրդ։ 2 Անէծք։ 3 Ըստ այնմ։

աէրն եաԽէն [1] ձղելով դէսը ղրկեց։ Էս մովըովը հրամայել ա, ասում ա, որ ըստուց յէտը. ամէն բան ինքը պտի վճռի, ես ձեր գործը չեմ կարող կարիլ։ Հոգի ունիմ տալացուկ, խեղճ մեր մենծ ախպէրը հէնց որ իմացաւ, այ սևբերեաներ, ասեց, եկէք կորչինք մեր երեսի ջրովը, ոնց որ ըլնի, անտավարի մեր օճաղումը վերջացնենք ու գառաւորի դուռը չերթանք։ Մենք էլ ուզում էինք լսել հետա տանուտէրը չէթողեց. բանն ինձ չպտի հասցնէիք, ասեց, էլ հիմի չեմ կարող ձեզ թողալ պտի գնաք մովըովի դուռը, նա ինքը հրամայել ա, որ ամէն գանգատաւորի իր դուռը ղրկեմ. հալբաթ ընտուր համար, որ կաշառք ուտի, ընէնց չի՞, Սաքօ ջա՛ն։

— Աչկեարայ [2] ա էլի՛։

— Ըստուած սևելի բէթարիցը [3] թաղի՛։

— Բաս ասում էք ձեր մտքինն էն ա, որ ձեր ախպօրը մենծահարկ չտաք էլի՛, դուք ասում էք, որ առանց էն էլ ձեզ ղըպնել ա, ձեր հօր գառած փողը տակովն ա արել ու ոչինչ չի շանց տուել էլի՛, ես ու իմ Աստուածը, տեղն ա, որ մի չոփ սևելի չտաք, որ աչքը կոխի. շատ լաւ էք միտք արել, ինչ որ նրան մենծահարկ կը հանեի, չնեղոց դիլեղոց արէք, Թող ղուրպ ու ղուշն [4] ուտեն, Թող մովըովի փորը մանի, Թաք էդ Թաւուր մարդի հախիցը գաք։

— Ը՞հա, Սաքօ ջա՛ն, գնա քօմմա էլ ում կուզես տո՛ւր, Թաք մեզ էս տեղից հանի՛ր. Թէ մի երկու քշեր էլ ճռանք, էս նամ [5] գեանին կը քամոտուինք։

— Դուք միտիա կայէք, մի սհաթ չի քաշիլ, ձեզ ըստեղանց կը հանեմ, Թող ձեր մենծ ախպէրն ամիսներով փթի. անկո՛ւշա, անատուա՛ծ, չի էլ ամանչում. ասա՛ ի՞նչ պտի տանիս էս աշխարհքիցը, որ էս խեղճ մարդկանցը գլխում ես. սրանք էլ էն հօր որդիքը չի՞ն, քեզ հալալ ա, սրանց հարամ։

— Չէ, չէ, Սաքօ ջա՛ն, մենք փոշմանել ենք, նա էլ մեր ախպէրն ա, մեզ հերու Թիւն ա արել, հէնց արա՛, որ մեր չերիցը ոչինչ չդնայ, մեր խարջածը նրա քիսիցը դուս գայ ու իրան էլ բաց Թողալ տո՛ւր։

— Ը՛յ հալալ մարդիկ, ամո՞Թ ձեր ախպօրը, որ ձեզ հետ

1 Օձիք։ 2 Ցայտնի է։ 3 ՎատԹարիցը։ 4 Գայլերն ու Թռչունները։ 5 Խոնաւ։

ըսէնց ա վարուել, ես որ ընկեի ձեր տեղակ, վերջի կոր հացս կըտայի, Թաք էդ Թաւուր անխղճմտանք ախպօրն էլ պրծնում չըլնէր։ Է՛հ, ոչինչ, չունքի ձեր սիրտը ձեր ախպօր համար ցաւում ա, նրա համար էլ պտի խնդրած՝ որ պրծացնեն։

— Հա՞, քեզ մատաղ, հա՞։

— Բաս դուք միամիտ կայէք, որ տեղ որ ա, ես յետ եմ դառնում, բալքի [1] մի քանի շահի ճարեմ, ում ռեխը [2] քցելու ա քցեմ, ասաց Սաքօն և դուրս գնաց։

— Հիմի էլ մնանենք էս ծակը, տեսնենք սրանի՛ց ի՛նչ ենք պոկում, ասեց Սաքօն ու բանակի դուռն երկու եղբօր երեսին ծածկեց։ Դիմացի ծակի դուռը բաց արեց նա և տուն մտաւ։

Մի աղօտ ձիԹի ճրագ ծխում էր պատումը ցցած տախտակի վերայ. — ըստեղ մարդ չկա՞յ, աչքս էլ լաւ չի տեսնում, բաս ո՞ր ծակումն ա խեղճ մարդը, խարխափելով յառաջ եկաւ Սաքօն։

— Ա՛մեցէ՛ք, Սաքօ ջա՛ն, մի նուաղ ձայն պատասխանեց նրբան անկիւնից։

— Խե՛ղճ բէչարայ [3], միայ [4] քեզ ըստեղ հասցրին քո փուչ կենդանի ախպէրներքը, կարեկցաբար ասաց Սաքօն, դէ հիմիկ արի լաւութիւն արա՛, եԹիմ [5] պահի՝ մենծացրու. հա՛ ախպէ՛ր, աշխարհքումն էհտիպար [6] ասած բանը չի ճռացել. փչանան լաւ չի՞ էդ պէս ախպէրները՝ Թէ Աստուած արդարադատ ա, ո՞նց չպտի քո հացը նրանց աչքերը բռնի. ա՛յ ժամանակ, մարդ էլ իրան հերու Թիւն անող ախպօրն էս օրին կը հասցնի։

Մի քանի այսպիսի խօսքերով նախատպատրաստեց Սաքօն մեր բանտարկեալ մեծ եղբօրը։

— Ինչ էլաւ՝ էլա՛ւ, գլուխը քարը, Թող իմ պատճն Աստուած իմանայ, ասում ա՝ լաւութիւն արա՛ քցիր ջուրը, ձուկը որ չիմանայ՝ Աստուած հօ կիմանայ. համա, Սաքօ ջա՛ն, մի ձար տե՛ս, մենք կը մեռնինք էս տեղ, մեր երեխէքը կըմնան անտէր։

— Ես ի՞նչ կարամ անել, ախպէ՛ր, հօ գիտե՛ս, որ ջանս չեմ խնայիլ ձեր համար. Թէ առաջուայ մովըովի վախտը կըլնէր, էհի էլ Թողալ, որ իր երեսն էլա տեսնէիք, համա մի հէնց օձը կծածին ենք ուստա եկել [7], որ հետը խօսուում չի։ Ես չէ՝ որ իր

1 Գուցէ։ 2 Բերան։ 3 Թշուառ։ 4 Միթէ։ 5 Որբ։ 6 Երախտիք։ 7 Հանդիպել։

դժոխքի բաժին հերը պատահն ուսին քաշ տալով դայ, ընչանք պըլ-
լկի ոչ, բան չի շինիլ։

— Ի՞նչ ունենք, ախպէ՛ր, որ ի՞նչ տանք, դնա, ասա, Թող
մեր փչանալու պողնելրիցն լինչ որ ինձ մենճահարկ ա հասնելու՝ առ-
նի՝ իրանով Սև Ծովը, Թաք մեղ լստեղից ազատի։

— Է՛հ, խօսքդ ափսոս չի խարջուր ես. նիսիէն մեր մովըովի
համար հա էլած՝ հա չէլած. էս օր տո՛ւր, էս օ՛ր, էս օրուայ շա-
հին էգուցուայ մանէթից նրա համար հաղար փառքով լաւ ա։

Ակսաւ նոյնպէս Սաքօն բացատրել նէրկայ գաւառապետի ան-
ատուածութիւնը, կաշառակերութիւնը, գաւառը տակն ու վերայ
անելը և այլն։ Ի վերջոյ սրա տալիք փողի քանակութիւնն էլ ու-
զածի չափ նշանակեց, խոստացաւ պարտք առնել ծառայողների
մէկիցն և դուրս եկաւ։

— Է՛լի տպրեցիր, միկիտան Սաքօ՛, քո բանն աչ ա, ով կուզի
Թող հաչայ, ուրախ բացականչութիւններով գնում էր Սաքօն պէ-
պի իւր գիւղատունը։

— Եկէ՛ք, ա՛յ Նիկօլայ մանէթներ, ես ձեր չանին մեռնիմ,
եկէ՛ք. կէս սհաթ չի քաշի՛ ձեզանից մի քանիսը կըմտնէք մեր
հասսաբէյին[1] մովըովի ու կովի պէս քօմակչու ջէլը, որ ձուտեր
հանէք, էլի մեր չաքմաջէն[2] լցուէք. մէկէնդից էլ յետ կը գաք ըս-
տեղ տաք տաք կը պարկէք, կը քրանէք. Սաքօն ձեզ հեշտութիւ-
նով բայ չի Թողալ, ես ձեր կոլտղին մատա՛ղ։

Խօսեց Սաքօն փողերի հետ ու բաւականին սպիտակ ալծաթեայ
ամբողջ մանէթներ առաւ ու գնաց դրացիներից մէկի մօտ։

Կէս ժամից Սաքօն բանակից դուրս եկաւ, երկու Թուղթ ձե-
ռին բռնած՝ գնում էր պէպի իւր խանութը։

— Կը բերե՛ն ու չանները էլ դուս կըգայ, շինքներն էլ
օխտը գալ կ'երկարի, ասաց նա. հիմի անելիք ախպերացից հո-
գիքն էս Թղթի միջին իմ ջերումն ա. խեղճերը հէնց գիտեն, Թէ
էս ա, էս բոլոր փողերն էլ գնացին մովըովի ջէրը, — ո՞նց էէ, գոդդ
դէմ արա՛։

---

1 Հասատղեղ։ 2 Դրամարկղ։

ՄԻ ԿՏՈՐ ՀԱՅ

Աբեզակը ճաշուայ տեղը նոր հասած կը լինէր, որ եասավուլ Մարգարն իջաւ Ա.յրը գեղի ամարաթի[1] բակումը, ձին կապեց ու մտաւ եասավուլխանէն[2]։

— Հը՛, Մարգա՛ր, ո՞ր տեղից ես գալիս, ո՞ւր էր ղրկել քեզ աղէն, հայցրին մի երկու եասավուլներ։

— Մհաչն էլ գնացել Թուղթ էի տարել։ Աղէն արշաչիքանցն[3] ընդունել պրծել ա՞։

— Ն՞ր, ճաշ էլ կերել ու քնել ա։

— Դո՞ւք։

— Մենք էլ նոր առաւոտները լսատեցինք։

— Գնամ տեսնեմ Սաքօյի մօտ պատշներիս կպցնելու բան
կը գտնե՞մ։

— Տօ՛, դու գեղերիցն ես գալիս ու քաղցած ե՞ս, ես տատամ
որ դու հիմի չորս հինգ գեղում չօրեամիշ չէս էլել[4] ու խուրջինդ
էլ պատահար լցուած չի՞։

— Ա.տուած վկայ, գեռ անաժուռ[5] եմ, Թէ կուզէք վեր
կացէք խուրջինս տեսէք. ըսկի կարացի, որ մի տեղ մի ջուր խմե-
լու համար էլ ա բանս ըլի՞մ. հէնց պատուէրներ տուեց, որ Քանս
դող ընկաւ, մռիկ տուր, ասում ա, Թէ որ արևը ճաշ չի հասած
բառեղ չըընես, կաշկղ կը քերթեմ, դու էս օր ինձ շատ պէտք ես։
Ձեզ մատա՛ղ, Թէ որ Հարցնի, ասեցէք՝ դու նոր ղըւխդ վեր ղը-
բած կըընէիր, որ սա տուն մտաւ. սպանեցի՛ խեղճ ձիուս, սպա-
նեցի՛, Թէ ինձ չէք տատում՝ գնացէք խեղճ Գիլիբօզես տեսէք,
քափ ու քրտինքի միջին կորել ա։ Բա ըսկի բան չկայ ուտելո՞ւ, որ
մին էլ Սաքօյի կուշտը չերթամ։

— Փշրուենք չի ճնացել, վեր կաց, շուտ գնա Սաքօյի մօտ, Թէ
չէ նա էլ կիրակիները կը պրծնի, յետոյ գնա ծոխանքը լկի՛։

---

1 Պալատ։ 2 Եասավուլների բնակարանը։ 3 Խնդրատուներին։
4 Լափել։ 5 Անօթի։

— Լաւ շո՛ւտ, ա՛յ տղայ, բարով եկար, ասաց Սաքօն Մարգարին գինետուն մտնելուս. հը՛, տղայ ե՞ս, թէ աղջիկ։

— Սաքի ես իմ օրուճն ի՞րը եմ աղջիկ էլել։ Ամա՛ն, Սաքօ ջա՛ն, կամանց խօսանք, էս կոլքերի օթախներուճն ոչով չըլնի ուլի։

— Է՜հ, հէր օխնա՛ծ, ի՞նչ ես դարդ անուճ, էդ քնջնի վեր թափած անլեզու հայվան[1] ղաղախներից հօ երկիւղ չկայ, էս օթախուճն էլ մի քանի ախմախ գեղացիք են, որ ինձ տո՛ւր՝ քեզ տամ[2]։ Դէ հլա նստի՛, նստի՛, տեսնենք ի՞նչ արիր, բերաններս պոռի եղոտե՞նք թէ չէ։

— Սաքօ ջա՛ն, գնա՛ որ գնա՛, բանի կէսը գլուխս ա եկել։

— Պռակը խափանեցի՛ր։

— Տղի պէս։

— Ախրի՛ս, բաս որ քեզ ասում էի, թէ գլուխս կը դայ. հիմի իմ բաղն մօտի Խէչանի բաղն ի՞նն ա հօ։

— Դրան էլ կասկած կայ. էնքան ըլլի աղջկին իմ ձանդը քցես, ընչի՞ չեմ տալ. Զալաբու հատոլն ա, դու էլ կի՛ր, ես էլ. քիսից ի՞նչ ա գնում, վըհն քրանել ե՞մ, թէ պապիս մէջքն ընտել ա երկուտակուել քընգի տալով։

— Ես քեզ որ ասում էի, թէ մովըովի ու դորձակալի մի մասը թղթերը ժամից էլ յիտա կը գարձնե՞ն։

— Էդ ամէնը լաւ, Սաքօ ջա՛ն, ասենք դու մովըովին էլ խաբեցիր ու դորձակալին էլ, պապակը խափանելու հրամաններն առար. էս օրէն էգուց՝ որ բանը բացուի, չէ՞ որ մենք սիբիրական կըլնենք։

— Գնա՛, վախլո՛ւկ մուկը, ի՞նչ պոռի ըլնի, քո հրամանաթղթերը չինովի հօ չէի՞ն. դու մի եասավուլ մարդ ես. քո դորձը քո աղի հրամանները կատարելն ա, քեզ ի՞նչ։

— Լա՛ւ, էգուց որ քննութիւն ընկի, որ մէջը չհաս — մհաս չի էլել էս հօ մենք հողի հետ կը հաւասարուե՛նք։

— Տօ՛ ձէնդ կտրի՛, երեխա՛յ, էդպէս բաներն են Սաքօյի ձեռովն անցկացնի՛ը. քչեցը մի քսան երեսուն անմեղ մարդիկ Մահմատ — Հասանի, Փօլատի, Ահմատի ու ուրիշ գողերի գլխաւորների տեղակ տարաղաջու[3] ծէրն եմ հանել տուել եա Սիբիրուճն

1 Անասուն։ 2 Ոչինչ չեն հասկանում. 3 կախաղան։

էս օր էլ վըթուռ են. էդ գարդակ բանիցը պոռի վախենայի՞։ Դու դնա՛ անկածդ գինջ քեզ համար տեղդ նստի, ես քեզ կասեմ, թէ ո՞ր օրն ի՞նչ պոռի անել։ Էս իմ քամակի գռնակիցը մի նեքսեւ մոր՛, մի քանի եափուճջուռ կոլոլուածներ կան՝ մի նրանց տե՛ս, նրանք սաղ ըլլին, աչքդ դեռ թերթած չըլնիս՝ աղջկանը թաղքիդ դրած տեսնիս. դէ՛, դու կուզես վերկաց քաշռվի՛ր. սրանց հետ խօսալ եմ ուզում, հաղիր լաւ վախտն ա, ոչով չկայ, արզաչիքն էլ գնացելեն. էս ղաղախներին էլ ցանեմ, ուսդ անեմ, էդ ա քօռացել են՝ էնքան լակել են. ամէն մինը երեք թաս խմել ա նիսիա.[1] ասենք, պրանց վըռայ առնելիք ունենամ, կորած տեղ չի. խեղճերն ինչ ստանում են, իմ դալան[2] են կոխում, հերիք չի, գեղերից ձանգները քցած-նեըն էլ ինձ են բերում։ Տեսնո՞ւմ ես էն պոզաւորը՝ որ կախած ա. երկու սհաթ չկայ՝ էն ծուռը քնթանին՝ քո կողմը նստածը թուրքի սուրուի[3] միջնցը թռցրել էր, կոխել զահլուի[4] մէջը. կէս չարէք տակառուի ջուր[5] տուի, ձեռիցն առայ, միս արի՛ ու մի չաբէք միս էլ իր վըռայ նիսիա գրեցի։

— Ասենք, քո ձեռիցն ամեն բան գալիս ա, Սաքօ ջա՛ն, հա-մա ախպէ՛ր, դու մի օր քեզ էլ՝ մեզ էլ փորձանքի մէջ կը քցես։ Տօ՛, ո՞նց չես վախենում էդ մարդակը աւազակներին օրով ցերեկով դուքանումդ պահում ես. Մահմատ — Հասանի գլխի համար հազար մանէթներ ա խոստացած՝ դու բոկի բանի տեղ չես քցում. մովըովը որ իմանայ՝ քեզ ի՞նչ կանի։

— Տօ ձէնդ կտրի՛, ա՛յ ախմախ, բա մովըովը չի կանչել սրանց, ի՞ս եմ բերել տուել. էգուց առաւօտ կըլսես, որ Թալինի ճամփին իրիք օսմանցուի բեղերգեան[6] են թալանել. դու ինձ ո՞նց գիտես, դեռ մարդիկը Ղարսիցը դուրս չէին եկել, որ ես Հոան առայ, բուսնը պահիլ տուի[7]. մովըովին ասեցի, սրանց կանչեց ու զրկում ա. բոստեղ նստել են, որ մուրթը գետինն առնի թէ չէ՝ ճամփու ընկնին։

— Ա՛յ տղայ, Սաքո՛, զորթ ես զարմանում եմ, դու որ-տեղից ես անց կենում էդ տան քամակը, որ սրանց համար դուռը բաց անես. չորս կողմից զահիլն ամաո ձմեռ կանեաճ ա. մի օր ես երկու սհաթ չարչարուելով՝ երեսս արինլաւիկ անելով՝ անձախ մը-

1 Ապառիկ։ 2 Օրամարկղ։ 3 Հօտ։ 4 Ներգնաւ։ 5 Արագ։ 6 Վաճառական։ 7 Բուսուն պահել կնշանակէ զարան մանել։

տայ. լսել էի, որ էն կողմիցը մի դուռը կայ ժանգոտ կողպեքը վըրէն ու չէի տեսել։

— Ո՛վ ա անց կենում, խաչակնքում եմ թէ չէ կողպեքն իրան իրան բացուում ա։

— Թէ Աստուած կը սիրես՝ հանաք մի՛ անիլ, աւա՛, հօ պիտե՞ս իմ բերնիցը խօսք չի դուս գալ։

— Էն կողպեքն անբաղնեք ա բացուում, պոի հանդն[1] իմանալ։

— Բաս էդ աւազակները ո՞ր տեղից դիտեն։

Սրինը մէկելին շանց ա տուել ու էն պլեխին լսէնց եկել լսէնց գնում ա։

— Բաս մովըովն էլ գիտի էդ բանը՞։

— Ըռանց էն կըլնի՞ը։

— Հիմի էս սհաթս ո՞վ կան լստեղ։

— Ինքը Մահմատ — Հասանը մի քանի արէնակերների հետ։

— Ղօչա՛ղ ես, ղօչա՛ղ, Սաքօ՛, համա, ա՛յ տղայ, մենք էլ մատներս լպստելու ե՞նք, թէ չէ։

— Բաս առանց էն հօ չի ըլնիլ իշի միակ հօ չի՞նք, որ տաբին տան երկու ամիս խոզերի հետ հատեղ դահլի քօք[2] ենք կըռծում. դու դարդ մի՛ անիլ, ամէն մարդ իրանու դեօրայ[3] կ'ստանայ։

— Դու միշտ լսէնց ես ասում, Սաքօ ջա՛ն, համա գիտե՞ս, որ անցեալ շաբթի եասալի[4] ապրանքիցը մեզ եասավուլներիս շատ քիչ բաժին հասաւ. մենք չարչարուում ենք, դու ես մէջ տեղը լիդ տալես։

— Թչնամու խօսք ա, Մարգար ջա՛ն, ես էլ հիմի էնքան օգուտ չունիմ. առաջուան մովըովի վախտ էլած խէրի կէսը հիմի չի ճնացել. էդ ընդուց էր, որ նա խատ[5] մարդ էր Ռուսէթիցը նոր եկած. ոնց ուզում էինք՝ մեր միջին շինում էինք։ Համա սա քսան տարի ա մհալները վեր ա կոխել ուտում, սրանից ի՞նչ խէր պոի տեսնինք։ Մենք լսել ենք, որ մովըովը Թալանածը գողի հետ հաւասար կէս պոի անի ու իր կիսիցն իր ձեռ ու ոտի՛ն էլ բաժին պոի տայ. սա խեղճ գողերիցը հալալ կէսը վերցնում ա, նրանց կիսիցն էլ հրամայում ա, որ ուրիշների բաժինն էլ հանեն։

1 Հնարք։ 2 Արմատ։ 3 Ըստ իւր չափու։ 4 Առանց մաքսի գողութեամբ բերած ապրանք։ 5 Անփորձ։

Մի նէքսէ մոի խեղճ Մահմատ — Հասանին հարցրո՛ւ, արիւն արտասունք ա թափում մեր էս մովըովի ձեռիցը. համա ի՞նչ անի, ձեռին ձար ունի՞, պոի տայ։

— Էդ հօ ասինք լսէնց ա, համա խոստովանում՛, Սաքօ ջա՛ն, որ դու մովըովից էլ շատ բաժին ես վերցնում. առաջ առաջ քեզ մօտ են գալիս, էլած էլածը հետդ կխառամ, նոր տանում ես մովըովի մօտ։ Էլ ի՞նչ ես կարմրում, ուսիից թաքուն ա՝ ինձանից հօ ծածուկ չի՞։

— Ես զարմանում եմ քեզ վրայ, Մարգար ջա՛ն, բա՝ ամէնից աւելի ո՞ւմ չարչարանքն ա շատ. թէ որ սրանց հիմի լստեղ բռնեն, ո՞վ պոի պատասխան տայ, մովըովն էլ, քօմակչին էլ ու ամէնքդ էլ փէշերդ թափ կը տաք, ձեռներդ սինը կը քսէք, ղռաղումը[1] կը կանենէք, ես պոի կրակի միջին ճնամ։ Էդ էլ յիա թողանք. շաբաթներով սրանք իմ մօտ հինդ տասը ձիաւորով ապրում են, լինէ ո՞վ ա մի սև փող տալիս. բաս իմ փողը ցանովի ա՞։

— Ո՞ւմ կշտին ես տրձինք անում, Սաքօ ջա՛ն, տօ լօթի[2], լո՛, լո՛, քրդի տղեն էլ լո՛ լո՛, Սև ջրի գլխին դու հօ խաղինէ՛ք ես կապել էս երկու տարում. էս քան տարին եասավուլ եմ, քեզ պէս միկիտան չեմ տեսել գիտե՞ս քանի մովըով, քօմակչի ու միրզէք եմ փոխել. ասինք թէ որ օղորմածիկ կնիկս մեռած չըլնէր, ես էլ հիմի լստեղ չէի ըլնիլ լակի ղարում չէր լսի փայը։

— Դրա համար էլ էնքան ծեծեցիր, փէտի տակին սպասնեցիր։

— Դէ լա՛ւ, հին դարմանը քամուն չեն տալ, հին դարդերս մի՛ նորոգիլ։

— Դէ սուս կա՛ց, դէ ձէնդ կտրի՛, որ մենք իրար հասկանում ենք, խմացի՛, որ իմ սըրտիս[3] բացուելու պէս՝ դու կորած ես։

— Տօ ախպէ՛ր, գիժ հօ չի՞նք, որ իրար սըրտ բաց անենք։ Աստուած տայ էնքան հարստանաս, ինչքան քո սիրտը կուզի. ես իմ հոգի՛ն, դու որ չըլնիս՝ ես որ տասը տարի էլ կենամ, մի սև փողի տէր չեմ դառնալ, համա հիմի տեսնո՞ւմ ես՝ մատդ պտըտեցիր՝ ուզում ես ինձ նոր ջահէլացնիլ, աղափ աղջկայ մարդ շինել։

— Որ վերջը մի կտոր հացի տէր ըլնիս։

1 Մէկ կողմը։ 2 Սրիկայ։ 3 Գաղտնիք։

— Որ դու էլ մի ուրիշ բաղ ճանգը քցես։

— Որ երկուսս էլ հայ ունենանք։ Հա՜յ, հա՜յ, մի կտոր հա՜յ. ինչ կանես ալա՛, խափե՛, քանդե՛, պլըկե՛, գուբե՛, սպանե՛, թաք մի կտոր հայ ունենաս . . . աշխարհ.քիս առաջին մարդիկը բըռնած՝ ընչանք վերջն մշակը մի կտոր հայի համար են աշխատում. ուրիշին որ տեսած չըլնես՝ եասամուլ ես, տասը մոլբով ես փոխել, ըսկի մինն էլել ա՞, որ գայ ու խալխին չգուբե, մհալե տունը չըքանդե, մհալը փորը չկոխի — ընչի՞ համար — հայի՝ մի կտոր հայի։

— Դե Սէրգի՛ս, մի մին տաքսան էլ նիսխա տա՛ւր, խմենք գնանք, ասային ուսներէն, կօզակները, որոնք ոտքի վերայ հազիւ էին կանգնում, պէտք է գնանք տահմանապըտիսը պահենք, թէ չէ կանդրատնոպ [1] կը փախցնեն անդիտան մուսուլմաննները։

— Հերի՛ք ա հերի՛ք, բո թելով գուբս ձգեց կօզակներին մեր Սաքօն, առանց էն էլ երեկուանից ձեր վերայ փող կայ. թէ մէկ էլ խօսեցել էք, թուանքներդ կը լըլեմ, մոլբովն մօտ կը տանիմ։

Խեղճ կօզակները որպէս և իցէ գուբս եկան գինետանից ու մի քանի քայլ հեռու եղէգների տակ փայր ընկան ձիւնի վերայ։

— Դէ՛ հիմի դու վեր կաց գնա՛, ասեց Սաքօն Մարգարին, քանի ոչով չի եկել, ես մնում էս մեր աղէքանց մօտ, քո գործի համար էլ մի խօսամ։

Լ։

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ, ԿԱՄ ԲԱՇԻՔԵԱՐԹՄԱՅ [2]

Սրանից երեսուն կամ քառասուն տարի յառաջ, բուն բարեկենդանի վերջին շաբաթը Աշտարակու քուչէ քանցումն անց կենալ չէր լինիլ։ Ամէն տեղ ուրախութիւն, ամէն տեղ սէր ու խնճոյք, ամէն բարձր կտոր սեղան փռել բայ անելը հասարակ բան էր. էլ ջահել ու ահել [3] չկար, էլ երիտասարդ ու միրքաւոր չէիր ջոկիլ,

1 Արգելեալ ապրանք։ 2 Բաշխեաբթմայ կամ բէշիքօրթմայ պարսկերէն բառ է և կընշանակէ օրօրոցից աղայ և աղջիկ նշանել։ 3 Ծեր։

բոլորը միասին ջահէլացել [5] կայտառացել էին. պապիս պէս պատուելի իշխանները կալերումը լախտի [1] էին խաղում ու հասա կասէ գոտկից ոլորած լախտն էնպէս էին փռռացնում, իրար միջքի կպցնում, որ միջքի ղօլն [2] էր վեր կենում։ Տէրտէրն էլ վերարկուն ծալած մի կողմը դրած՝ կապի ծլըփան [3] փէշերը կոկիկ հաւաքած՝ գօտիկը խրած՝ էնպէս էր ծուռ ծուռ լինում [4] ճժի [5] բոլորքովը, որ կասես, թէ սա իրան կեանքումը միշտ ըմբշամարտ է եղել, միմիայն լախտը որ միջքախառն ուսապլխին հասնում էր, պդում էր, որ էսպէս բան իր օրումը չէ տեսել։ — Դէ օրհնա՛ծ, մի քիչ էլ կարգիս խնայեցէ՛ք, կամաց տուէ՛ք էհ, ասում էր մեր տէր հայրն ու էլ յետ Թռչկոտում ճժի չորս կողմը, աշխատելով լախտը բռնողի ձեռքիցը խլելու։

— Ոչինչ, տէրտէր ջա՛ն, էսօր մուրախաս [6] ա, բարիկենդան օրեր ա, խել քներս կորել ա, պատասխանում էին մեր իշխաններն ու իրանց խաղի հետ ընկնում։

Էսպէս իրարանցում, էսպէս հարայ հրոց [7], թէ ուրիշ ժամանակ լինէր, ամէնքը կը կարծէին, թէ գիւղը կոխեցին, աւար տուին, մօտակայ գիւղերից անգամ գուցէ օգնութիւն կը գային. բայց հիմա ամբողջ Արագածոտեան գաւառն է այդպէս, ի՞նչ պէտք է արած։

— Դէ՛ հերիք ջարդուեցինք ծեծուելով, լաւ ալեր աղցան էլանք [8], մի քիչ էլ վեգ խաղանք, ով տարուի՝ ճնի տեղակ երկու դաւ [9] գինի բերի։

Սկսում էին այնուհետև մեր մազով միրքով իշխանները վեգը ձեռքերի մէջ պտտեցնել և ճժի մէջ շարած ընկոյզներին աչքել։

— Ա՜յ դիտի, էրնէ՛կ էր էն օրը, որ մենք ջահէլ էինք. միտս ա գալիս, ես էի ամէնքից լաւ խաղացողը, պարծենում էին ամէն մէկը, քանի տարի կըլնի վեգի սակէն [10] ձեռս չեմ առել. ի հարկէ որ ջահէլները մեզ կը տանին ու մեր քնջնի կարասի ծեփը կը պոկուի. պա՛հ, պա՛հ, պա՛հ, ձեզ ղուրբա՛ն, ի՞նչ գինի

1 Կտաւեայ գօտիից պինդ ոլորած պարան՝ զարկելու համար։ 2 Շերտ։ 3 Այնութիւնից շարժուել ու ձայն հանել։ 4 Ոստոստում։ 5 Բոլորակ գիծ, որ քաշում են երեխաքն և չորս կողմովը պտոյտ գալիս, կամ ընկոյզ են չարում մէջը և վեգ խաղում։ 6 Արձակուրդ։ 7 Գոռիւն գոչիւն։ 8 Փշրտուեցինք։ 9 Կաւէ շիշ։ 10 Այն վեգը, որով միւսներին կամ ընկոյզին խփում են։

ունիմ, քաղցրութիւնից կծպծաւմ ա՝ կծպծո՛ւմ, պռօշներդ իրար կը կպչին. չէ՛, ախպէ՛ր, ես պաի տարուիմ. թէ որ էս օր մեր ներքի յիքու գինու համը չտեսնիմ, ձեզ էլ չհանգչեմ՝ ես կը մեռնիմ, էլ ո՛ր օրի համար եմ պահել։

— Տօ դէ վէդր քցում ես քցի՛, քանի խօսես ու քո քացախի պէս գինին գովես. քո ինադու[1] ես պտի տարուիմ, որ մեր մենծ յիքու գինու համը բերնումդ ընչանք մահդ թողամ. սրան տե՛ս էհ, ես կը թողամ, որ դու պարծենաս. էս սհաթը ասոր կարուսի ճեփ կը պակեմ՝ մինը միւսը լաւ։ Աւսում էր երկրորդն ու վէդը ձգում, դիտուքեամբ փըռա անց կացնում[2]։

— Տօ՛, ցիմնաշ[3] գէվօ՛, ես տեանում չեմ, որ դու գաստի[4] ես փըռա գալիս. որ մեռնիս, համ պօպօքները[5] կը տանիմ, համ էլ միւ տեղակ չորս դաւ գինի կը բերեմ. գերեզմանս հօ չպտի լըցնեմ. Աստուած էնքան տուել ա, փառք Իրան, որ ձոահարտ ա։ Աւսում էր երրորդն ու վէդը շպրտում։

— Չօ՛յ, հօ՛յ, պարծեցողին ես միշտ բաէնց տեսայ, ծափ էին տալիս միւսներն ու Թռչկոտում, երբ սա չէր կարողանում ճիշտ խփել։

— Տօ դէ հէրիք ա, միրքներիցդ ամանչեցէ՛ք, էն երեսնեքանցիցն էլա ղենեցէ՛ք[6], որ աղբուխը կապել են ձողու ծէրը բայդաղ[7] շինել ու Քեասոնց բարձր կաերը եալա՛ են կանչում. գնանք մենք էլ մի քիչ բօղաղներս Թայց անենք. Փարբու խանը հիմի կը գայ. մեր Ղուկօն էլէս երկ օր ա գնացել ա, ո՛վ գիտայ հիմի էչքիաճին կըբնի, Թէ Յուշական, եա Փարբի։

— Ը՛յ տղայ, մարգարէի որդի էիր, հրէս Փարբու խանի աղուէան[8] եկաւ։

Մինն էլ էն տեսար, գլուխը երկար պողատար Թաղիքի գտակը անցկացրած՝ ոչխարի գզգզուած մորթին բուրդը դէպի դուրս միջքին կապած՝ երեսն ալիւրոտ մի տղայ՝ մի ահագին աԹարոց[9] ձեռքին սիւն տալով՝ եկաւ, խոր գլուխ տուեց մեր իշխաններին։

— Հը՛, ի՞նչ մարդ ես, ո՞վ ես, ո՞ր աշխարհքի քամին ա քեզ պարսել մեր գեղը քցել, հարցնում է մի ծերունի։

1 Խմբէժ քո։ 2 Սխալուում։ 3 Ծաղրածու։ 4 Դիտամբ։ 5 Ընկոյզ։ 6 Ամաչել։ 7 Դրօշակ։ 8 Աղուէս կոչում են հարսանեաց կամ մի ուրախութեան համբաւ արերին։ 9 Կրակ խառնելու փայտ։

— Ա՛րդ անեմ[1] Աշտարակու էլ ու հասարակութիւնին, որ մեր Փարբու տէրը՝ ղօչաղների ղօչաղ Եղգեար խանը՝ իր նազիր — վէզիրով[2], իր նօքար — փէքեառով[3]՝ հինդ հարիր մարդով գալիս ա ձեր սուփրէն շէն անելու, մեր բարեկամութիւնը հաստատ պահելու։ Նրա հրամանն ա, որ սաղ գեղով, իշխաններով դուրս գաք նրա առաջը։

— Ա՞ր գլխի՝ մեր աչքի վրայ տեղ ունի ձեր խանը, մենք վաղուց նրա համար տեղ ենք պատրաստել տանուտէրի այվանի[4] կաերը. սուփրէն չաղ, գաթայ — հալվէն գլբիվլի[5] պէս, հազար մարդով էլ որ գայ, մեզանից ոչինչ չի պակսիլ։ Ադա՛, այ պատկնե՛ր, Թէ՛զ, Փարբու աղուէսին մի խալա՛թ, հրամայում էր մի իշխան։

Էս խօսքի հետ մօտիկ տանից մի շար ալանի[6] բերում ձգում էին մեր պատգամաւորների վրայ, քամակին էլ մի քանի լախտ կպցընելով՝ ճանապարհ գնում։

— Էլ ի՞նչ էք ուշանում, այ խալխը, գնանք էլի, հիմի կը գայ մեր Եղգեարը։

Գնում էին այնուհետև մեր իշխաններն և իրանց համար վազից փռուած սուփրի չորս կողմովը շարուում. դափ ու զուռնէն էլ գրանց պռչկոցը կպած էր, ուր երթային, հետները տանում էին։

— Ա՛յ տղայ, Ղազա՛ր, տանք Փարբեցի Եղգեարն էլ լաւ խանութիւն ա անում, համա մեր Ղուկօյի պէս չի ըլնիլ։

— Գիմ ես, ի՞նչ ես, Փարբին մեզ կը հասնի, որ նրանց խանը մերին հասնի։ Մեր Ղուկօն որ կայ՝ իստակ խան ա. որ գալիս չի մէջ տեղը ձգուում իշի վրայ նստած ու հրամաններ տալիս, ես աչքերին մոխիկ տալով՝ մոռանում եմ, որ մասխարութիւն ա անում, էն սրտհաթը միտքս են գալիս Երևանու հին խաները։

— Նա իլլաքի որ փալախայ ա պտնել տալի՛ս։

— Դու ասա ո՞նց չի ծիծաղում։

— Տանուտէ՛ր, դու ուտել — խմելու հայումն[7] ես, էլ բսկի չես ասում, Թէ Փարբու խանի խալաթն[8] ի՞նչ պտի ըլնի։

— Դո՛ւք քէֆ արէ՛ք, ես վաղուց պատրաստել եմ։

— Եալա՛, գոռում են քուչէքում, եալա՛ լսում է ամէն

1 Խնդիր անեմ։ 2 Նախարարներով։ 3 Սատրապեալք 4 Վերնայարկ։ 5 Անչափ։ 6 Չորացրած դեղձ։ 7 Հոգսումն ես։ 8 Պարգևը։

կրներից ու ամէն տեղից դիմաւորում են Փարբու խանին, որ Գրչի-խէչի կողմից՝ երևեցաւ։

— Ա՛յ, հայ, հայ, էս ի՞նչ շատուր են, ասաղ գեղը հեսը բերում ա տնաշէն եղդեարը։

Մխայն մեր տանուտէրն, իշխաններն ու տէրտէրը, որ տանուտէրի կտերը քէֆ են անում, նրանք չեն յառաջ դնալ, ինքը խանը պէտք է գայ և նրանց սեղանի վերայ գանի։

Ուռած ուռած բազմած է մեր Փարբեցի Եղդեարը իշի վերայ՝ պոչը ձեռքին բռնած՝ երեսը դէպի յետ՝ մի երկար դերեհատաի [1] ձի-պոտ էլ միւս ձեռին իրրև չերուխ [2] դնչին դէմ արած. նրա գլխին դրած է մի գզգզած պարսից խանի երկար գաակ՝ վրան հին փալաս-ներ փաթաթած. նրա երեսը քսած է աթարով վառուող տան օճառ-քի մուր, նրա վիզը ձգած է զանազան ոսկրների կտորներից շարք. հագած ունի նա մի պատառոտուն, ծլանքները հազար տեղից քարշ ընկած պարսկի արխալղահին. նրա կուրծքը բաց է, նոյնպէս մրով սևացրած՝ կողքին էլ մի երկար փայտէ սուր կախած։ Երկու երիտա-սարդ՝ նոյնպէս այլանդակ հագնուած՝ քաշում են իշի սանձը. եր-կուսն էլ քամակիցը մի մի մեծ գաւազանի ծայրերը սրած՝ բզում են իշին. դափ ու զուռնէն առաջին ածելով՝ քաշում է այդ հան-դէսը դէպի տանուտէրի կտուրը, իսկ խուռն ամբոխը միշտ եալա՛ է կանչում։

Եւ ահա խանն իշի վերայ նստած՝ մտաւ տանուտէրի բակը։

— Զո՛ւ, չո՛ւ, չօ՛շ, չօ՛շ, գնա՛, ա՛յ սատկած էշ, ինչ ես նազ անում, էս պատիւը խանին ա, քունը հօ չի՞, ասում են բզողներն ու խեղճ իշին վեր հատում ու սոխում, որ տանուտէրի տան-դուխաներիցը բարձրանայ։ Բայց ձար կայ, էշը կարո՞ղ է այդ անել։

— Դէ՛, վէզի՛ր, նազի՛ր, յառաջ եկէ՛ք, հրամայում է ընդ-հանուր կառավարիչը, որ միշտ մէկ կողմից միւսն է վազում և եալ-լա՛ կանչել տալիս, կամ ճանապարհ բաց անում, ի՞նչ էք սպասում, բարձրացրէ՛ք խանի մեհրաթաւալը [3]։

Ծիծաղ՝ որ էս տեղ տես, ամէն կողմից վեր են կաչնում անլե-զու անասունին՝ իւր վերայ բազմած խանի հետ միասին՝ ուսերքի վերայ և երնում տանուտխանութիւնը. եալլա՛, գոռում է բազմու-թիւ-

1 Ծառ է։ 2 Ծխաքար։ 3 Եշը։

նը. իսկ վերևիցը ալևրը շաղ են տալիս խանի և իշի գլխին։ Փո-շին ողջ բակը բռնում է, բոլորը ալևրոտուում են, ում երեսին կամ գլխո՛ւն էլ որ քիչ է թափուում, ինքն իւր ընկերի միջքից վերցնում՝ քսում է իւր երեսը. իսկ մեր խանի համար՝ էլ մի՛ հարց-նիլ, երևակայի՛ր մրի ու ալևրի մէջ կոլոլուած մի գունդ մի՛ս։

— Գլո՛ւխս, գլո՛ւխս տուէ՛ք, Աշտարակու իշխանն ե՛ր, մեր ո-ղորմած խանին, կարգադրում է ընդհանուր կառավարիչը։

Վեր են կենում բոլորը սեղանի վրայից և իրանց տեղը կանգ-նած՝ խոնարհութեամբ գլուխ իջեցնում։ Վա՛յ նրան, ով մի փոքր ուշ գլուխը կռացրեց, աչքով է անում խանն իւր կառավարչին և բարակ ձիպոտը կպչում է այդ յանդուգն մարդին։

— Ֆալախա՛յ, հրամայում է խանը. քաշեցէ՛ք տանուտէրին մէյդան [1]։

Տասը քսան այլանդակ հագնուած երիտասարդներ մօտենում են տանուտէրին, պարկացնում ու ոտները Ֆալախի մէջ ոլորում։

— Հարցրո՛ւ դրան, հրամայում է խանն իւր նազերին, դա քանի՞ գլխանի էր, որ մեր հրամանը չկատարեց, մեղ շան տեղը չը դրեց, մեր յառաջը չեկաւ։

— Թոդուխթիւն կանես, խանն ապրած կենա՛յ, խնդրում է տանուտէրը պարկած տեղից. ես քո մեծութիւնի համար պատ-րաստութիւն էի տեսնում ըստեղ իմ իշխանութիւն. տեսնո՞ւմ ես. հրամանոցդ համար սուփրէն բաց արած ա, վարդի շարբաթը [2] շահ-քեասու [3] մէջ լիքը հաւկը դրած. ավրուշը [4] ձորու ծերին կախ արած, որ հրամայես թէ չէ՝ խորովենք անուշ անես. քո ընծէդ էլ՝ լաւ մռիկ տո՛ւր, ոտները կապած գառը ըստեղ պատրաստ, երը որ ուզես՝ վրաւի դլխին յառաջդ կը բերենք։

— Ա՛ֆարի՛մ, ա՛ֆարի՛մ [5], տանուտէ՛ր. տղէ՛ք, բայց թոդէ՛ք դրան։

Ա՛ռնում է խակոյն մեր տանուտէրը գաւաթով լիքը քացախն և խոնարհութեամբ մատուցանում խանին։

Շատ լաւ էլ դիտի բարձրապատիւ խանը, որ շարբաթ կոչ-ուածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ թուղդ քացախ, բայց ոչինչ դէմք չցոյց տալով՝ առնում է ձեռքը և մօտեցնում բերանին։

1 Հրապարակ։ 2 Նկատար։ 3 Մեծ գաւաթ։ 4 Որս։ 5 Կեցցես։

— Օհա՛յ, ի՞նչ լաւ էր շինած, սիրտս հովացաւ, շատ ծա-
րաւ էի։

— Ա՛յ տղայ, հորսը մօս բերի՛ք, հրամայում է տանուտէրը։

Վերցնում են ջահէլները ձորու ծայրին կախած սպանած
ագռաւն և յառաջ բերում։

— Ֆարրա՛շ, հրամայում է խանը, վեր կա՛լ էս կաքաւը, երբ
որ մեր երկիրը կերթանք, փլաւի գլխին տապակած յառաջս կը-
բերես։

— Ըստեղ բե՛ր էդ գառը, անօրինում է տանուտէրը։

Մօտ են բերում ոտները կապած տէփրի [1] մէջ դրած ևս կա-
տուն և համեցէք անում խանին։

— Ա՛յ անպիտաննե՛ր, ձեր գառը կատու դառա՞ւ. շո՛ւտ,
շո՛ւտ կապոտեցէ՛ք Աշտարակու բոլոր իշխաններին, քօթակի միջին
պտի փքացնեմ, ընչանք որ խելքները գլուխը գայ, էլ յետո կա-
տուն ոչխար շինեն, հրամայում է խանը։ Բայց նորա այս հրամանն
էլ չէ կատարուում, որովհետև իսկոյն միւս կողմից յառաջ է բեր-
ուում մի մեծ և պարարտ որձ ոչխար և դիւղի կողմից ընծայուում
խանին։

— Շատ ընորհակալ եմ Աշտարակ գեղի մեծ ու պատկից, ի-
րանց պատիւն իմ աչքի՝ իմ գլխի վրայ. համա ըստեղ կայ մի Խէ-
չանենց Խէչան, նրա համար ինձ խաբար ա հասել, որ շատ վատ
մարդ ա, որ օրական նրա տանը հինգ աղքատ կշտանալու տեղակ՝
տասն ա կշտանում, որ շաբաթ կիրակի ժամ գնալու փոխարէն, ի-
րիկուն առաւօտ ժամից յետ չէ ընկնում. էդ մարդին ես պտի
պատժեմ, թէ որ դա ձեր միջին ա, էս ահաթս գայ իմ առաջին
չոքի։ Հը՛, շո՛ւտ, ո՞ւր ա էն մարդը, տանուտէ՛ր, ձեռաց ըստեղ
տեղծի՛ր։

Մօտ է գալիս այնուհետև Խէչանի ընծան՝ մի լիսր թունդ
արաղ։

— Էս արաղը ղրկել ա, խանն ապրած կենա՛յ, քո մեծու-
թիւնի համար Խէչանը, որ անուշ անես. ինքն էլ հէնց հիմի քո
ղուլլուղին [2] կը գանուի։

— Գլուխ տո՛ւր, գլուխ տո՛ւր, իրեք հետ գլուխ տո՛ւր խա-

1 Փայտեայ բոլորակ ափսէ։ 2 Ծառայութիւնին։

նին, Խէչան ապա՛յ, ձայն է տալիս Ֆարրաշը, և խեղճ Խէչանը կա-
տարում է իւր պարտքը։

— Զոքի՛ր, հրամայում է արհամարհական հայեացքով խա-
նը՝ դլուխը բարձր բռնած՝ աչքերը դէպի երկինք դարձրած՝ գերե-
զմանի հերսուխը դնչին։

Նաղերը քաշում է Խէչանի կռնիցը, չոքացնում իշի առաջին։
Բաւականին միջոց լռութիւնից յետոյ բարեհաճում է խօսել խա-
նը. — ես միաք ունէի, Խէչան ապա՛յ, շատ խիստ պատժել քեզ,
համա քո ընծէն իմ աչքերը կապեց. վեր կա՛յ, արի՛ ձեռս պաչի՛ր
ու ապատ ես։

Խեղճ Խէչանն այդ էլ կատարեց։

Այնուհետև մի քանի իշխանների, որոնցից մի մի պարգև
պոկելու յոյս ունի խանը, փալախայ է դնել տալիս, մինչև անգամ
մի քանի ձիպոտ էլ լափել է տալիս՝ ի հարկ է շատ կամաց՝ և ըս-
տանում՝ որից գինի, որից բրինձ, միւսից իւղ, երրորդից ձու,
հաւ և այլն, և դրանցով ներում նորա, բայց միշտ ձեռքը համ-
բուրել տալով։

— Մնացէք բարո՛վ, վերջապէս ասում է խանն և ուղում
յետ դառնալ իւր հանդիսականներով, բայց ի՞նչ կարելի է։ Մին-
չև հիմա արածները կատակ էր, հիմի սկսում է ուղիղ հիւրա-
սիրութիւնը։ Խանի հետ բոլոր եկողները պիտի վայելեն Աշտա-
րակցոց՝ սեղանիցը և լամեն՝ երկու գիւղին միաբանութիւն և յա-
րատեւութիւն ցանկանալով, և ապա նոյն և մի կերպիւ եալլա կան-
չելով՝ իշին բարձրացրած՝ ձանապարհ ընկնին դէպի մի ուրիշ մեր-
ձակայ գիւղ։

— Ա՛յ տղէք, երեք օր ա մեր Ղուկօն խան գառած՝ գնացել
ա գեղերը, լակի խաբար ունի՞ք, թէ չէ, ո՞ւր մնաց, հետն էլ
խելի [1] ջահէլ — ջուհուլներ կան, հարցրեց տանուտէրը Փարբե-
ցոց գնալուց յետոյ։

— Ղուկօն երեկ էջմիածումն էր, պատասխանեց մի երիտա-
սարդ, շատ քէֆ շանց տուեց, կոտրեց ամէնքին ու թողեց ծի-
ծաղացնելով. էջմիածնի դռանը ֆարշի [2] վրայ աթոռ էր դնել
տուել, վրէն բազմել, էշն էլ մի վարդապետի էր բռնել տուել. մի
քանի եպիսկոպոսներ կապոտեց. իր համար շատ ընծէք առնելուց

1 Բաւականին։ 2 Սալայատակ։

յետը, հրամայում էր թուանքչոնցն էլ բան բաշխել. մեր ուղեքանդը յետ էր կանչացրել՝ թուանքչոնցն էր նայելը — վէղերը շինել, դուք, ասում ա, սովոր էք տէրտէր վարդապետի կապելու։

— Էս որ ասում եմ Ղուկօն պօչաղ ա՞, էս բրդաբերան ջամաղակեր [1] փարբեցոնց պէս չէ՞. ախար Աշտարակցի ա, մեզ ո՞վ կը հանի, պարծեցաւ մէկը։

— Յետոյ ի՞նչ փէշքեաշներ էլին տալիս վարդապետներըը։

— Թօփերով ղումթնիք ու շամու ալաջէք էր առնում, որիցը մի երեսսրբիչ, մէկէլնոց չախու. մեի միջքնցն էլ մի լաւ շալ գօտիկ յետ արեց։

— Ապրի՛ ինքը, նրանց հախն ա, տարին տասնևերկու ամիս նրանք են ուրիշից մուճաա ուտում, թող մի օր էլ իրանք տան։

— Թամաշէն ինչմիածնումը Ղուկոյի գալուց յառաջ էր, տաճկաստէր, ասաց երիտասարդը, պտի տեսնէիք, թէ էն մենծ մենծ սիպտակ միրքաւոր եպիսկոպոսներն ու վարդապետները ո՞նց էլին փէշերը քշտել աթըմայ խաղում ֆարշի վրայ. գոռգոռոցն ընէնք գեղն էր գնում, ձնթօփով հէնց էլին իրար գլխի կպցնում, որ վեղարը թռչում էր, ու թէ որ լսէիք ի՞նչ պեռա պեռա [2] լօսքեր էլին ասում, որ ես ամանչումեմ։

— Ոչի՛նչ, բարիկենգան օլեր ա, նրանց խելքն էլ կորել ա, էս քանի օրս աբեղաթողա։

— Եալլա՛, ձայն ձայնի տուին Փարբեցոց գնալուց յետոյ մանր երեխայքը՝ Աշտարակու ուսումնարանի աշակերտներն և բարձրացան իրանց թաշկինակէ գլօշակովը մեր իշխանների մօտ։

— Ա՛յ գուք բարով հազար բարի՛, մեր յոյս ու ումետնե՛ր, մեր գեղի ճրագնե՛ր, մի քանի տարուց յետը մեր տեղը բռնողնե՛ր, գոռացին ամէն կողմից մեր իշխանները։

Իշխանների հետ սեղանի վերայ նստած էր գիւղական վարժապետը։ Ա՛յս բարեկենգանի վերջին երկու շարաթը նա արձակել էր ուսումնարանը։ Երեխայքը բերին իւրեանց հետ մի տէփրով լիքը միրգ, մէջ տեղը մի փոքրիկ բաժակ լիքը դինի, բաժակի մէջ

1 Իւրաքանչիւր գիւղ իւր աւելորդ արհամարհական անունն ունի։ փարբեցոց կոչում են բրդաբերան ջամաղակեր։ 2 Անվայել։

մի վէդ պէչու կանդնացրած՝ մի պինդ ոլորած լախտ էլ մրգի վերայ դրած, վայր դրին իւրեանց վարժապետի առաջին։

— Ցնծա՛ [1], խալֆա՛յ [2], ասաց մի հասարակ աշակերտ։

— Դէ ցնծա՛, վարժապե՛տ, ծիծաղելով կրկնեցրին իշխանները, սաղ սարին իրաւունքը քո ձեռին էր, հիմի սրանցն ա, ինչքան որ դու սրանց ծեծել ես, էս օր սրանք պտի տեղակը քեզանից հանեն։

Վարժապետը գլուխթեամբ ուշացրեց պատասխանը։

— Մեր աղէք, էլ ընչի՞ էք սպասում, անօրինեց նոյն հասարակ աշակերտն և իրանցից մինը լախտը ձեռքն առաւ, անց կացաւ վարժապետի ուսի կողմը և բարձր բռնեց։

— Դէ ցնծա՛, խալֆա՛յ, թէ չէ հասաւ միջքիդ, ասաց նա և կամաց խփեց վարժապետին։

— Պի՛նդ, պինդ կպցրո՛ւ, ապրի՛, իմ աղէն, խրախուսեց տանուտէրը։ Վարժապետը ձեռքը գրպանը տարաւ, հանեց մի քանի մանր արծաթի դրամներ և ձգեց բաժակի մէջ։

— Զէ՛, էդքանով մենք քո հօրն օղորմի չենք տալ, գլուխը պտըտեց լախտը բռնողը, ցնծուա՛մ եա՛ ցնծա՛, թէ չէ մեռաս ա, թէ քանի հետ իմ մէջքս դու դադել ես։

— Չալաթի մէջքը քոր ա գալիս, ասաց համարձակ երեխային։

Վարժապետը մի քանի դրամներ էլ աւելացրեց։

Դէ գնացէ՛ք, մի գառն առէք, ձեզ համար բարեկենդան արէ՛ք, մնիկ տուէ՛ք, որ շար տղէք չմնանեն ձեր մէջը, շատ անհամութիւններ չանէ՛ք, խելօք կացէ՛ք. թէ որ կարողացայ, ես էլ կը գամ կը տեսնեմ, գնացէ՛ք, երեխայք, էդ մէրդն էլ ղրկեցէ՛ք մեր տունը։

— Աստուած կեանք տայ, շատ շնորհակալ ենք, ասացին երեխայքն և պարձան դէպի իշխաններն ու գոռացին. — ձեզ էլ շնհաւոր բարեկենդա՛ն, ամէն տարի էս վախտը հասնիք, մեր գլխիցը ոչ պակսիք։

— Ը՛հ, գլխովդ պտիտ գնամ է՛յ, Կարօ ջա՛ն, քեռալշ բալա ջա՛ն [3], ուրախանում էր մինը իւր որդու վերայ։

— Մաղօխս ձէնը զանգակի նման զնգզնգում ա, էսքան երեխէքանց մէջից ջոկնում ա, պարծենում էր մինն իւր որդու վերայ։

— Մի տաղ ասա՛, քեզ մատաղ, Սմբատ ջա՛ն, բարով մեն-

1 Շնորհ ա՛ր։ 2 Խալֆայ կոչում են վարժապետին։ 3 Ընտիր...

ծանաս, իմ աչքիս սև ու սիպտակը՝ քեզ մի ընէնց աղջիկ ուզեմ, որ սաղ մհալի բերանը բաց մնայ, ասաց Ծվիկենց Աղաջանը:

Երեխան լռեց ու աչքը ձգել էր իւր վարժապետի երեսին:

— Ա՛սա՛, հրամայեց վարժապետն և Սմբատն երգեց:

Մի խոր հոգոց դուրս թռաւ էս ուրախութեան ժամանակը խէչանենց Խէչոյի սրտից և սրտասուքներն իրանց իրանց գլուխը գլուխ երեսովը ցած եկան, երբ Սմբատը տապն տունը վերջացրեց:

— Ապրի՛ս, բալէս՛, Աստուած քեզ քո հօրը բաշխի, ուրիշների հետ մի սրտալից օրհնութիւն էլ տուեց Խէչոյը, արի՛ մի քեզ պաչեմ:

Երեխան մօտ գնաց և Խէչոյ ափօր[1] ձեռը համբուրեց:

Երկար ժամանակ Խէչոյը գրկել երեխային, չէր կարողանում թողնել:

— Փա՛ռք Իրան, ի՞նչ անէնք, հառաչեց վերջապէս Խէչոյը, քեզ մատա՛ղ, Աղաջան ջա՛ն, սիրտդ մնայ ոչ, յանկարծ լսուեցի, երբ որ երեխիդ ձէնը լսեցի. վնասիշ չանէք[2], ախպէր, դժար ա. քէֆներդ էլ փուղ արի[3]. ի՞նչ կըլնէր հորսից իրեքն իրան բաժին վերցնէր Աստուած՝ Սմբատիս էլա թողէր մեզ մխիթարանք:

— Թէ Աստուած կը սիրես, Խէչա՛ն, սիրտդ խարաբ մի՛ անիլ[4], մեզանից ո՞վ չի կսիժ տեսել. էլի Աստծուն փառք տո՛ւր, որ քո մինուճար աղջիկդ էս օր ծաղկի փնջի նման հոտ ա տալիս: Տղէն ու աղջիկը՝ երկուսն էլ դաւակներ են, տղէն ո՞րն ա, լաւ աղջիկն օխտը տղի համ[5] կը տայ: Աստծով Հեղնարդ կը մենծանայ, մի լաւ մարդի կը տաս, փեսէդ քեզ որդուց հաղար անգամ լաւ պատիւ կրտայ ծերութեանդ ժամանակը, կրկնեցրեն այս ու այն կողմից Խէչոյին:

— Աղաջան ջա՛ն, մի մուրաղ[6] անց կացաւ սրտովս, արի՛ էս ազիզ օրն էսքան խալխի միջին մուրազս ջուր մի՛ կտրացնիլ:

Աչքիս վրայ, Սմբատիս էլ որ ուզես, քեզ փէշքա՛շ, հասուղը մարդ չի՛:

Դէ որ բաէնց ա, կառավարի՛չ, խնդրում եմ թաւերը լցնել տաս:

---

1 Հայրիկիս 2 Մի մեղադրէք 3 Փչացրի 4 Մի փչացնիլ 5 Ձաշակ 6 Ուզած

— Մի մին թաս գինի՛, լիքը լիքը, հրամայեց կառավարիչն և բաժակները լցուեցան:

— Ձեզ ղուրբա՛ն, գինի ածողնե՛ր, ոչովի մէջ չտաք, ամէնքին էլ լիքը լիքը խմացրե՛ք, թող իմ խաթեր էս մի նեղութիւնը քաշեն:

— Մեր աչքի վրայ, Խէչա՛ն, դու տաք ինչ որ ուզում ես, թէ կուզես՝ գաւերով կը դարդակենք, ապահովացրին ամէնքը:

— Ասեցէ՛ք, Աստուած հնհաւոր անի, կարգադրեց Խէչանը, ով սաղ՝ ով մեռած. Աղաջանի հետ մենք սրտով մանկուց ախպէր ենք, էս օր էլ խնամի եմ ուզում դառնալ. դառնուկ Սմբատին ես իմ լիս ու ճրագ Հեղնարի հետ բաշխ ե ա թ մ ա յ եմ անում. էս օրուանից մի երեխայ չունիմ՝ երկուսն են. բարով մենծանան, իրանց թաղ ու պատկին արժանանան, մենք էլ Աղաջանի հետ երկու հալխուրներս մեր պատասների կուռը բռնած՝ սրանց բաղդաւորութիւնը տեսնենք՝ յետոյ հողը մտնենք. Աղաջան ջա՛ն, ղայիլ[1] ես, դրուսան ասա, քո հօրն օղորմի՛:

Վա՛հ, բա ղայիլ չէ՞մ, Խէչան ջա՛ն, խնամի Խէչա՛ն, մարդ իր աչքը քօռ կուզի՞, սրանից աւելի էլ ի՞նչ բաղդաւորութիւն:

— Աստուած հնհաւոր անի՛, բարեկամաց աչքը լիս ըլի՛, բարով մենք էլ հարսանիքն ուտենք, ձայն ձայնի տուին բազմականները. Աստուած ձեր բարեկամութիւնը հաստատ պահի. տէրտէր, վառոց կնա՛ս, շուտ պահպանիչն ասա՛

Ամէնքը ոտքի կանգնեցան, լռութիւնը տիրեց և պահպանիչով նշանն օրհնուեց. երեխայքն էլ վարժապետի հրամանովը տաղով հաստատեցին այս նշանադրութիւնը:

— Ա՛յ պատիկներ, ծիծաղելով ասաց տանուտէրն երեխաներին, դուք որ բոհնց քէֆի մէջ է՛ք, բաս բոկի ձեր քուերանց ու մերերի համար էլ հոգս քաշո՞ւմ է՛ք, թէ նրանք ի՞նչ բանի են:

— Աքի բարեկենդանին ո՞վ ա առանց քէֆի մնում, պատասխանեց մի աւելի համարձակը, սաքի ձեզ յայնի չէ՞, որ մեր մերերը հիմի մի քանի այվաններում հաւաքատուած՝ ձուածեղն ու հարվէն, հաւի միսն ու գաթէն առաջներին խոշի խոշի[2] են խաղում: Նանս ինձ իմ բաժինը տուեց, ղրկեց հընկերներիս կուշտը՝ քուերս կռնատակը մի կապոց դրեց, ղրկեց ազատ աղջկերանց մէջն ու ինքն

---

1 Համաձայն. 2 Հանդանակութեամբ խնճոյքներ անել:

էլ մի մեծ բօղչայ[1] կապեց, վեր կալաւ գնաց Ագվենց այվանումը քէֆ անելու։

— Ադրի՛ք, բալե՛ք[2] ջա՛ն, վերջապէս ատոց տանուտէրը, ա-ոո՛ք էս մի մին թիքայ հալուխ ու գաթի կտորները, բերաննիրդ քաղցրացրէ՛ք ու գնացէ՛ք ձեր զօվդն[3] արէ՛ք։

Երեխայքն երգելով ու խաղալ կանչելով յետ դարձան։

Ընտցից յետոյ նոյն հանդիսով այցելութիւն արին մեր իշխաններին մի քանի գիւղերի խաներ և զանազան ուրախ խմբեր։

Ամբողջ բարեկենդանի շաբաթը ոչ միայն Աշտարակումը՝ բոլոր հայ գիւղերումն այս մի և նոյն ուրախութիւններն էին կատարուում։

Ը.

ՈՒԼԱՏԻՏԻԿ[4]

Տան և չորս կամ տան և հինգ տարի այս նշանաւոր բարեկենդանից յետոյ՝ բուն բարեկենդան կիւրակի օրը կրկին աշխարհքն իրան մոռացել էր, քէֆն էր միայն մէջ տեղը ամէնքի ուշադրութեան առարկան դարձել։

Աշտարակու ջահէլներն էլ մոիկ չէն տալիս ծնկնահար նըստած ձիւնին, գեղեցիկ հագնուած՝ կանգնած են Ագվենց կալամբ՝ ձիանց վերայ. նրանց զէնքի և հագուստների ոսկի ծոպերի փայլմունքը միասած ձիւնի պէծելի հետ, աչք են ծակում։ Օտարականը չի հաւատալ, թէ սրանք մի և նոյն տղայքն և ձիանքն են, որ յառաջ պատահում են մեծ ճանապարհներին՝ ցընցոտիների մէջ կոլորուած՝ մի ափսին փալան էլ մի հասարակ ձիու վրայ դրած՝ մրգեղէնի, գինու, կամ ալրաղն բնօր վրէն գնում են քաղաք ծախելու։

---

1 Կապոց։ 2 Երեխայք։ 3 Խնճոյք։ 4 Ուլտիմատիկ մի բլուր է Աշտարակու մօտ։

— Էհ, ի՞նչ պտի տանինք էս աշխարհքիցը, աշխարհքիս մարն աշխարհքումը պտի մնայ, թէ կուզ ջանդ էլ քանդի, մի լաւութիւն ու լաւ կեանք քաշելը կը մնայ մարդիս, հերիք ա, մեռանք աշխատելով էս բարիկենդանին էլա մի քիչ ուրախանանք։

Այս խօսքերով երիտասարդները ոգևորուած՝ ոչինչ չէին խնայել լուրեանց հագուստը, զարդարանքն և ուրախութիւնը կատարեալ անելու համար։ Դեռ աքլորականչին ամէն մարդ շուտ վեր է կացել քորել մաքրել իւր ձին, գալի տուել և սպասում լուսաբացին, որ թամքը դնի վերան և քամակը թռչի. հրացաններն ու միւս պէնքերը վաղուց հաւի եղ քսած՝ պատի վրան քաշ են արած. էլ կարծիք չկայ ուրեմն, որ առաւօտեան ժամից յետոյ մեր անհամբերները մի քանի թիքայ խորովածի հետ քուֆթի[1] գունդը լուլի մէջ փշրել թունդրի մօտ, սպիտակ լաւաշ հացով վայելել են ու խնդրել լուրեանց ծնողներին, որ շատ չուշանան։

— Գնա՛, որդի՛, հէնց էս ա մի երկու թաս էլ խմեմ, բերանս օղողեմ, տեղեցս վեր եմ կենում։ տանուտէրի օգումը պտի հատաքունէք, որ ընտեղից դպա ձեզ դանք։

Ոչ միայն մեր երիտասարդների համբերութիւնը հատաւ, կարծես ձիանքն էլ շտապում են մի ժամ յառաջ ցոյց տալ իրանց շնորհքը։ կանգնած տեղն երբ են հանդստանում. Արաբստանի նժոյգի նման առաջի ոտքերով ալնպէս դաբը են հատանում ու քանդ անում, որ գետինը դրմդրմբում է, սառած՝ պնդացած ձիւնի կտորներն ւօթը կազ ծլունդ ծլունդ են լինում, խրխնջոցի ձայնը, ինչպէս ասած է, օվսը սարի քամակն է հանում. և ընչե՞ պէտք է չհանի, Աշտարակու երիտասարդն իրան կը զկի, ձի առնելու և նրան զարմանելու համար ոչինչ չի խնայիլ։

— Տօ՛, ասում են Ղափանցոնց Կարօն մի թազայ ձի ա առել, որ ատոնցի հետ ծուլծուլ ա ըլնում, տեսել ե՞ս. հարցնում են իրար։

— Ընչե՞ չի առնիլ աշխատողն ինքը՝ փչացնողն ինքը, էդ ընչէ՞ն ա, որ ես ու դուն լաւ ձի կունենանք, նա չի ունենալ։ Էդ որ քո սիրտը փառասիրութիւմ ա, երբ որ իրիկները տանում ես ձորումը, ես առուումը խտակ լուանում, պոչը քիրաչի[2] կապում, վրէն թռչում ու խաղացնելով տուն գալիս, որ սիրուն աղջկները վրէն թռչում ու խաղացնելով տուն գալիս, որ սիրուն աղջկները

---

1 Ծեծած մսով կերակուր է։ 2 Կոկիկ։

դռների սողնակներիցը քեզ վըայ հայիլ մայիլ ըլնեն[1], բա Կարօն էլ քեզ պես ջահել չի՞։

Ալյոսիսի եռանդեամբ և լաւ գնով առած ձիանքն են, որ անսովոր աչքը բեռի տակին չի կարող դուշել որ երեսում են փալանի տակին ինչպես մի յետ ընկած եաբու[2]. բայց Աշտարակու երիտասարդի աչքը չի խաբուում. նա այլապես չի ուզում իւր ձիուն առնուանել, եթէ ոչ «քեահլյանս»[3]։

Մեր տղայքը խումբ խումբ եղած՝ իւրեանց այս օրուան առնելու գործի վերայ են գաղտում, թէ ի՛նչպես Ուտիս տատին պտի քէֆով տանին ընչանք Ուլտոխիկու կոնդը[4] ճանապարհ դնեն, իսկ Մեծ պաս պապին համեցէք անեն. ամէն մարդ իւր գէնքը, ձին ու ջերիդն[5] է գոռում և իւր կռան գօրութիւնը չհաւատացողին մի ժամից յետոյ Ուլտոխիկի Թմլանը ցոյց տալ սպառնում։

Մի ուրիշ խումբ էլ մի փոքր հեռու քաշուած՝ հետևեալ խօսակցութիւնն է անում շատ ծածուկ։

— Վա՛յ թէ չգայ ու մեր խորհուրդը քամին տանի։

— Չէ՛, անպատճառ կը գայ, որ իրիկունը գնայ իր նշանածի մօտ փքուի։

— Ես նրան փքուիլ կըտամ, թող մի Ուլտոխիկի դուշն ընկնինք։

— Տղէ՛ք, հէնց այդ, որ ուրիշները ֆահմեն ոչ[6], թէ աղքովն էր. սաքի թէ ուրիշն խփելուս, նրան դիպաւ Ջերիդը։

— Էդ նամարդութիւն[7] ա, որ ամէնքդ հընկերանաք, մինն աչքէդ. թէ ղօչաղ էք՝ աշկեաղայ հետը մէյդան դուս եկէք, ով աւելի շնորհք ունի, նա թող առնի։

— Ընա հօ՛րն օղորմի, հերիք չի, որ սաղ մհալի ազափների[8] աչքը ջուր ա կորացրել, Խէչանի ծովի պես հարսուրթիւնի տէրն ա դառել, հիմի էլ չէիր ուզիլ՝ որ գլխներիս նստացնինք։

— Ա՛րպի զամանն[9] էր ու ինքն էլ, ես իմ Աստուածը, արժան ա։

— Տօ՛, թէ էն հարսուրթիւնը չէր ըլել, ոչ ով նրան էրնէկ

---

1 Ջմայլին։ 2 Հաստարակ բեռնակիր ձի։ 3 Նժոյգ։ 4 Բլուր։ 5 Ձիարշաւի ժամանակ ձեռքին բռնած հաստ փայտը, որ միմեանց վրայ արձակում են։ 6 Ընկատեն։ 7 Տմարդութիւն։ 8 Ամուրեաց։ 9 Բաղդն էր։

չէր տալ. ասինք, տարածը մի հուրի փարին[1] չի, հաւա ախար ընչի՞ պտի էնքան մլքերն ու փողը նրա ձանդն ընկնի էլ։

— Դէ Խէչանը ինքն էլ չէր իմանում, թէ իր օղորմածիկ ախպէրը պտի իրան էնքան հարստութիւնի տէր շինի ու մի օր վեր ընկնի մեռնի, թէ չէ Սմբատի պես տղեն ընչի՞ աղջիկ կտար. նրա աղջիկն ո՞վ չէր ուզիլ դեռ նշանած ա՝ էս օրս քանի՞ գլուխ պատուհներ կան, թէ ո՛ր նշանած չըընէր հօ՝ էլ մի՛ ասիլ։

— Աքի դրուսան ասեմ, մինն էլ ես եմ էն աղջկայ ուզողը, էդուց էլ օր էլ խնամիաս պտի ըլկինք, հաւա ես ուրախութիւնով կուզէի Խէչանի քուեր աղջկանը, թէ որ իր կարողութիւնի կէսն ինձ տալու ըլէր։

— Փէշդ պինդ բռնի, չվեր թափի, Հերիքնազի պես սիրուն թէ որ մի քիչ մուլք ունենար, էլ ո՞վ կը հարցնէր, հիմի մի քշեր գուռը կոխած տարած կըլնէր։

— Ըմօթ ա ամո՛թ, գուք կնիկ էք ուզո՞ւմ, թէ փող։

— Ը՛հ, ախմա՛խ, փորս կը ծակի՞, որ էն էլ ըլնի, էն էլ։

— Ախակ՛ը, թող Հերնարին ինձ տան, ես Խէչանի մլքերի տէրը գառնամ, թող աւելի դէշ ըլնէր, թէկուզ մի աչքն էլ քօռ։ Համա հիմի փառք Աստծու, ի՞նչն ա պակաս, ինչ անենք թէ իր հօրաքուր աղջկայ պէս սիրուն չէ, մի պակասութիւն հօ չունի՞, ըսկի մի լաւսաք, որ սաղ մհալումը Սմբատի պես բաղդաւոր տղայ չկայ, տեսնո՞ւմ ես քանի հարսնացուներ ու աղէքանց որդկերանց բերանն ա ցլսե՛լ էլ ուրիշների հետ ի՞նչ բան ունինք, մինն էլ մենք. աչքներս չի վերցնում, վազե ազուէսի պես դունչներս չի հանում, ասում ենք թթու ա, ատամներս կառնի, նախանձու էս օր ընչե՞ր ենք միաք անում։ Նկէ՛ք, ձեռք քաշենք, Աստուած իրան գամաթ անի, ի՞նչ անենք, թէ Սմբատը մեր պես հարուստ հօր որդի չէ, խոստովանուեցէ՛ք, որ մեր գեղե աղէքանց աչքն ա։

— Տղէ՛ք, ես ձեզ խօսք եմ տալիս, որ Սմբատն էն աղջկանն արժան չի ըլնիլ։ Ի հարկ է ես մի բան գիտեմ, որ Հերնարն աչքով աչք չունի վրէն մտիկ տալու։

— Տեսնում չե՞ր, որ մուխթը գեաւինը կոխելու պես դու ես մղմղալով Խէչանի դռնովը նեքսե պրծնում։

— Հերնարն ըսկի երկու խօսք չի խօսում հետը, ընչանքի վերջը Հերիքնազի հետ են դունչ դնչի առած[2] ձաւար անում[3]։

---

1 Ցաւէրժահարսն։ 2 Ունչ ընչի։ 3 Վայրախօսութիւն։

— Բաս չէիր ուզել, որ նշանածի հետ դուրչ դնչի տար. դէ նշանած տղէն հէնց բուէնց ա, չէ՞ս լսել որ ասած ա՝ քենին մհաս նայ ա արել[1], եարօղը տես ա էրթում. էնթաւուր քենու ջանին մեռնիմ, ես Սմբաթի տեղակ ըլնիմ, գլուխս նրա ծնկնիցը վեր չեմ ունիլ Թող հէնց նշանածս աչքերը պլատակին արած՝ մոիկ տայ։

— Տղէք, դուք կը տեսնիք, թէ ո՞վ կը տանի Հէղնարին։

— Տօ՛, դէ ձէնդ կտրի՛, լօբբաղ[2], Աբշա՛կ, դու էլ քանի՞ փչես, ի՞նչ անենք, թէ խէչանենց հարևան էք ու դրիչակ[3] ունիք. ո՞վ գիտայ՝ մի մին գող կատուի պէս աչքդ ծակովը նրա վրէն ես քցում, նա էլ յանկարծ քեզ վրայ ա մոիկ տալի, դրանով սրտիդ յոյս ես դնում, թէ Հէղնարն իր նշանածին չի սիրում, քեզ վրայ աչք ունի։

— Կը տեսնենք, էդ յետոյ բան ա, մենք հլա էս օր Սբմ բաթի դուրչ ու պռունդն արնոտած՝ չանա — մանէն կապած՝ ղրկենք իր նշանածի մօտ, Թող գնայ սիրուն Հերիքնազի ձեռքովն իր եա բէքը[4] կապոտիլ տայ, էդ վերջի բանն ա։

— Ես ասում եմ, էդ մի՛ անէք, վա՛յ թէ մեր փորած փոսի մէջը մենք ընկնինք, վա՛յ թէ Սմբաթը մեր քինթ ու պռունդը փշրի ու սևերես յետ դարձնի. էս առաջի օրը չէ՞ հո նրա հետ ջերիդ խաղալը, չէ՞ որ շատ ենք տեսել։

— Լէ ա էհ, հէնց դրա համար մենք էլ թաքուն ենք անում, թէ չէ մենք չգիտե՞նք, որ նա ամէնքիցս էլ զօրաղ ա։

— Ես հիմիկուց ձեզ ասում եմ, որ ես ոչ ձի կը խաղամ, ոչ կը խառնուիմ։

— Բաս կերթաս կը մտանես էլի՛։

— Չէ՛, հեռուումը կը կանեմ, ձեր նամարդութիւնին մոիկ կը տամ։

— Լա՛ւ, դու իրան բան մի՛ ասիլ, վերջը մեզ նամարդ կանչի՛։

Եթէ լաւ դիտելու լինէինք, այս դաւաճանող խումբն ամէն բանով զանազանուում էր միւս հետացածներից՝ ամէն բանից խոսուում էր, որ սրանք բոլորն ունևորներ էին, որոնք անպատուու-

1 Պատրաստակ է բռնել։ 2 Պարծենկոտ։ 3 Երկու պատկից դրացիների միջին պատումը մի փոքրիկ ծակ էր դրիչակը, որ տեղից միմիանց ճրագ կամ բաժին կըտային։ Այժմ էլ չկայ։ 4 Վէրքերը։

թիւն համարելով իրենց համար աղքատ — ուղքուտի տղայոց հետ կանգնելը, բաժանուել նրանցից՝ մի կողմն էին հաւաքուել։

— Ո՞նչ են էդ ամբարտաւանները մեզանից ջոկնուել հեռու կանգնել. Թքեմ դրանց հարստութիւնի վրայ, սաքի որ փողատէր են, մեզ ի՞նչ, ո՞ւմից են աւելի, որ լայտղ չեն անում[1] մեր միջին կանգնել. ասայ չէքաւորներից մէկն իւր մօտ եղողներին։

— Չէ՞ս իմանում, նրանք հէնց գիտեն, Թէ փող չունեցողին Աստուած չի ստեղծել։

— Դրանց գլխի ճոթռուռ՛ցը, մենծ մենծ որ բզդում են, էդուց չդնան Ծվիկենց Ազաջանի տղի ձեռիցն իր նշանածին խլեն։

— Ասում են դրանք ամէնքն էլ խէչանի մօտ մարդ են ղրկել, աղջիկն ուզել ու քնթով են ճնացել, խէչանը գունովն էլ չի նեքսև թողել։

— Բաս չէ՛ ու խէչանը պտի Սմբաթի մի մազը փոխէր դրանց դլխի հետ։

— Ախսոս չէ՞ Սմբաթը, նրա սիրտն ո՞վ ունի, ըսկի մի օր նրա բերնիցը մի պարծենկոտ խօսք լսել էք, որ ինքը խէչանի պէս մարդի փեսէն ա, խէչանի մալ ու դոլվաթը պտի վայելի։

— Տօ՛, նրան ո՞վ կը հասնի, տեսնում չէք ինչքան խոնարհ սիրտ ունի, նրա կշռին ազքատի տղէն էդ ուռած փքուածներիցը հազար փառքով լաւ պատիւ ունի։

— Գիտէք, տղէք, ի՞նչ կայ, մօտեցաւ դրանց մի երիտասարդ, որ աւելի մօտ էր կանգնած հարուստների խմբին. իմ անկարդով ընկաւ, որ էդ մեր քարոզն ընկնելու[2] հարուստները միտք կաջովս ընկաւ, որ էդ մեր քարոզն ընկնելու[2] հարուստները միտք ունէին էս օր Սմբաթին ջերիդով եարալու անել[3], որ իր նշանածի ու քենու մօտ խայտառակ անեն։ Սմբաթը որ գայ, իմաց տանք իրան, Թող օյտղ կենայ[4], նրանց հետ ձի չը խաղայ։

— Հազիր որ մենք բուռուն պահենք[5], Սմբաթի քամակիցն ընկնողի կռանն աչքենք, ջերիդը ձեռիցը վեր քցենք։

— Լա՛ւ, էդ էլ լաւ ասեցիր։

Ա՛յ, Սմբաթը գալիս ա, տեսէք ո՞նց ա հագնուած, ո՛վ կասի, Թէ սա էլ իր համար մի քանի շահու տէր ա, ևս Թէ չէ էս օրէն

1 Արժան չեն տեսնում։ 2 Գոռոզ։ 3 Վիրաւորել։ 4 Զգոյշ։ 5 Դաբան մտնենք։

օրս Խէչանենց Խէչանի փեսէն ա. ես կուռս կը կարեմ, թէ որ նա դուղ մեզ մօտ չգայ։

— Խարի լիս, տղէք ջա՛ն, մօտ եկաւ Սմբատը ձիու վերայ նստած՝ դէպի չքաւոր դասը, ընհատոր բարիկենգա՛ն. շատ տարիներ ըսէնց իրար հետ ուրախութիւն անենք։ Ադա՛, փչած ակե՛ր[1] դուք ի՞նչ էք ջոկնուելը, վերի էձի պէս հեռու կանեղը, ամօթ ա՛, ամո՛թ, մօտ եկէ՛ք, խառնուեցէ՛ք էս կարիճներին, որ աեղ որ ա՝ մեր իշխանները կը գան, թող նրանք էլա՛ չտեսնեն ձեր գոռոզութիւնը, ասաց Սմբատը հարուստներին։

— Չէ, հէնց ընէնց հաւաքուել խորհուրդ էինք անում, թէ ուտիսին ո՞նց ճամփու քցենք։

— Աքի սրանք դրա համար չեն հաւաքուիլ։

— Պատրաստուեցէ՛ք, թուանքներդ վերի ոտը քաշեցէ՛ք, ձէն տուեց մի երիտասարդ։

— Եալա՛, ձայն ձայնի տուին ամէնքն և հրացանների միաւորագ արձակուելու ձայնը լռեցրեց մեր իշխանների առաջնյին եկող գափ ու գուռնին։

Ծառի տալով, պարելով ուրախ ու գուարթ եկան մեր իշխաններն ու կանգնեցան Ագռենց կալումը. գաւերով գինին դրանց առաջին քաշուում էր. մի կողմից լընում, միւս կողմից հազար օրհնութիւններով դարսակուում էին։

— Ըմէն բան ղրկա՞ծ ա Ուլաստիկի գլուխը, որ մեր ջահէլները մի լաւ քէֆ անեն, հարցրեց տանուտէրին մի ծերունի։

— Խուրջիններդը լիքը լիքը առաջուց ղրկել եմ. ձեղ տեսնե՛մ, ջահէլնե՛ր, մի լաւ ուրախութիւն արէ՛ք։

— Է՛հ, դրանց ի՞նչ էրնէկ կը տամ, դրանց տարիքումն էնպէս քէֆեր ենք արել մենք, որ սրանից յետոյ իրանց օխտը պորան էլ չի կարող անիլ, գնացի՛ր ն մեր օրերը, էն օրուան սէր ու սոհբաթն[2] էլ չկայ։

— Ըպրի՛ն իմ տղէքը, անօրինեց տանուտէրը. Ուտիս տատին լաւ ճամփու դրէ՛ք, տարէ՛ք ընչանք Ուլաստիկու կոնդի գլուխը, բնաեղ մի լաւ վերջին քէֆ շանց տուէ՛ք, բայց թո՛ղէ՛ք գնայ իր արևի ձէնն ածի[3] պատակեր Թուրքերի միջին, մին էլ ով սաղ՝ ով մեռած ընչանք Զատիկ. Մենծ պաս պապին էլ համեցէ՛ք արէ՛ք, թող գայ էդուց առաւօտ ոսներն երթկներիցը քաշանի։

1 Գոռոզներ։ 2 Ուրախութիւն։ 3 Իր գլխի հոգսը քաշի։

— Էն ա հա՛, Մենծ պաս պապը հիմի Ուլաստիկի գլխին հատած գոմշի կաշուց տրեխները հագել, տրեխչուաններն ա կապում, համա մեր Ուտիս տատը գզգզտուած, ոտները բոբիկ՝ գլուխ ա առնում՝ պապի ձեռքից փախչում, որ գնայ Թուրքերի տներումը տափ կենայ։ Խե՛ղճ Ուտիս, ի՞նչ պապի գանի քաղցած Թուրքերի մօտ, մի կտոր չորթան էլ չկայ, որ բերանին քսի. ճարը կտրած՝ ինքն էլ պապի պաս պահի։

— Ոչինչ, մի օր էլ պապի տրեխները կը ծակուին։

— Դէ գնացէ՛ք, գնացէ՛ք, Աստուած ձեզ հետ. համա մեր տղէ՛ք, առաջ կտրուկ տրէ՛ք, ով որ ձեղանից թէկ բարձրանայ Ուլաստիկի գլուխը, նա ապափ պղջկերանց սիրեկանը կըլնի, ասաց տանուտէրը։

— Ե՛ս կը բարձրանամ, է՛ս ամէնքից շուտ կը քշեմ իմ ձին, է՛ս ձինը կը ճղեմ, մի քանի ձայներ իմիասին բարձրացան։

— Հրէ՛ հա՛, Ուլաստիկի գլխին մեր տղէքը բայդաղը[1] տընկել էն, եկէ՛ք մի երկու գլուխ էս Թամբան վրայ ձի քշենք, ու կարդով կանգնենք իրար հետ, ձիանոնց գլուխը բաց Թողանք, տեսնենք ո՛վ կըլնի էս երկու օրուան պղջկերանց բերնի խօսելիքը, տընօրինեց պապափեշէն[2] Սմբատը։

— Դէ առաջուց դու ձիուդ գլուխը բաց Թո՛ղ, ես էլ քամակիցդ գալիս եմ, Սմբա՛տ, ասաց նրան Արշակը, ջերիդից վախեցի՛, մինչան չԹողայ վրէդ, էս իրիկուն նշանածիդ մօտ տանչես ո՛չ։

— Ա՛մեցէ՛ք, ասաց Սմբատն ու ձիու գլուխը բաց Թողեց։

Դեռ երկու քայլ նա չէր հեռացել, մի քանի ջերիդ այս և այն կողմից բարձրացան, որ իջնեն նրա գլխին. բայց մեր դաւաճանները պարմացած ճնային՝ երբ իւրեանց ջերիդները տեղ չհասան, առաջներին վէր Թափուեցին ու իւրեանց կռները ցաւեցան։

— Թո՛ւ էր, աղազատէ՛ք[3], նամարդութիւնը լաւ չէ, ջերիդ խաղալ ուզողը, Թող մէյդան դուս գայ, խօսքն Արշակինն էր, որ Սմբատի քամակիցը քշեց, ջերիդը քցեց, համա նրա խելքի բանը չէր Սմբատի պէս տղի վրէն նշան Թողալը. էդ որ ձեր մտքումն ա՝ մեր կրնդի տակին ա, մի մին դուս եկէ՛ք մէյդան, դեռ առաջ մեզ հետ՝ յետոյ Սմբատի. ասացին նախապատրաստուած երիտասարդներն և դաւաճանների լեզուները կապուեցան։ Նոքա ամօթից ոչինչ չասացին։

1 Դրօշակ։ 2 Ամուրիների գլխաւոր։ 3 Ազատանի՛ք։

— Հիմի գո՛ւ գնա, ես եմ գալիս, ձայն տուեց Սմբատն Արշակին, երբ որ ձիու մանգղելը [2] հասան ու Արշակի ջերիփը կիսաճանապարհին վայր ընկաւ, առանց Սմբատին պիպչելու։

Արշակը մկան նման կուչ եկած՝ յետ քշեց իւր ձին։ Տասը քայլ չէր հեռացել նա, որ Սմբատի ջերիփը կպաւ նրա միջքին ու գլխի վերայ ձիւնի մէջ գետին փռեց։ Ձին փախս ընկաւ, Արշակի մի ոտքն ասպանդակի մէջ իւր հետ քարշ տուեց։

— Օգնեցէ՛ք, օգնեցէ՛ք, հիմի ձորը կը քցի, գոռացին ամէնքն և մեծ դժուարութեամբ ձիուն կանգնացրին, Արշակին ազատեցին, որ ուշագնաց՝ երեսը բոլոր արիւնոտուել էր. բարեբաղդաբար գետինը կէս գազ ձիւնով ծածկուած էր, ապա թէ ոչ, քարերի մէջ գլուխը կը փշրուէր։

Ամէնքից յառաջ վերայ հասաւ Սմբատը, դրկեց Արշակին և ձիւնով երեսը սրսրեց. նրա սիրտը կտոր կտոր էր լինում, որ իւր ձեռքովն այս դէպքը պատահեցաւ։ Ընկերներից մի քանիսը կորաւ գլուխ լռել էին, ոմանք ուրախացած՝ արդարութեան վճարքն էին համարում։

Ալերջապէս Արշակն ուշքի եկաւ, վէրքերը կապեցին, ձիու վերայ դրին և բարձրացան Ուլաթիրիկ։

— Ձեզ եմ թողում մէյդանը, ապէ՛ք ջան, ասաց Սմբատը, ես Արշակի հետ կամաց կը բարձրանամ, դուք քշեցէ՛ք, առաջկարուկ արէ՛ք։

— Որ բանից ա, մենք էլ չենք քշել հրաժարութեան ամէնքն և ծանր ծանր բարձրացան բլրի գլուխը։

Մի մեծ սեղան ամենայն բարիքով լի սպասում էր մեր կըռիճ՛եերին բլրի գլխին։

Երեկոյ էր, որ ապայքը յետ գարձան հրացաններ արձակելով և երգեր ասելով Ուլաթիրիկի գլխից։ Նրանք գոան իշխաններին և ծերերին էլի Ազգենց կալումը, ուր նոքա վոքր ժամանակ յառաջ եկել սպասում էին՝ ամբողջ օրը տանուտէրի վերի կտերը ուրախութիւն անելուց յետոյ։

Երիտասարդները շնորհաւորեցին իշխաններին մեծ պասը և ամէն մարդ գնաց իւր տունը։

---

1 Ձիու փախսը դադարած տեղը։

Թ.

ԽԷՉԱՆԵՆՑ ԽԷՉԱՆ

Հայաստանի մի տեսակ գիւղացի հարուստների տիպն էլ կենդանութիւն է խէչանենց խէչանի մէջ։ Ընդհանրապէս գիւղացիք չեն սիրում խառնուել հասարակական գործերում. ամէն մարդ իւր անձնական հոգսի, իւր տան ցաւի հետն է, իւր երեխեքանց ապրուստը ճարելն է նրա մտածմունքը։ Այդ ասելով չի կարելի խլել գիւղացուց իւր մերձաւորներին օգնելու յատկութիւնը։ Մեր խօսքը գիւղական կառավարչական գործի համար է, որի համար ինքն իրան յառաջ է գալիս մի ուրիշ դասակարգ։

Հին ժամանակները սպիտակամօրուս պատուելի ծերունիներն էին այս մարդիկը, որոնք իրենց գլխին ունենալով մի աւելի խելացի՝ տանուտէրի աջակցութեամբ իւրեանց անձը գիւղի օգտի համար շատ անգամ դնում էին։ Վերջերումս այս նահապետական ազնիւ սովորութիւնը փոխուեց. ծերունիների թուի հետ նոցա յարգն էլ պակասեց, նոցա տեղը բռնեցին հարուստ և խարդախ անչափահաս շողոքորթները. ծերունիներին բաժին մնաց իւրեանց ցուփն ու եկեղեցին. նոքա ցաւելով մոխիկ էին տալիս գիւղի անկարգ դրութեան վերայ և մի առածով իւրեանց վեշտը յայտնում էին. վաշ քեզ քաղաք, թագաւորդ մանուկ ա պատել, ասում էին նրանք ու գլուխները շարժում։

Խէչանենց Խէչանը, թէ իւր երիտասարդութեան և թէ ծերութեան ժամանակը չի խառնուել գիւղամէջ։ Քանի նորա եղբայրը կենդանի էր ու ինքն էլ առոյգ և ուժեղ, նա միայն իւր անձին դործերն էր կառավարում, իւր այգիները, անդերն էր մշակում։ իսկ եղբայրն իւրեանց բերքը Սևան, Գիւմրի և Փամբակ տանել ծախելու և շահայնելու հոգսերումն էր։

Այսպիսով նրանց պապական հարստութիւնն օր օրի վերայ աւելանում էր։

Մի բան եղանակը, որով կարելի է ասել, թէ Խէչանը գիւղական գործերի մէջ խառնուում էր՝ այն էր, որ նրա դուռն ամէնքի համար բաց էր. ձիանապարհորդներ, որ գիշերն Աշտարակումը մնալու համար ծանօթ չունէին, ազգականներ՝ որ մի ղրպալ տաք կերակուր

էին կերել, Խէյանի դուռը շատ լաւ ճանաչում էին։ Սրանք Աստուածոյ հիւրերն են։ Պաշտօնապէս եկած մարդիկ, որոնց գալուցը տանուտէրն և մի քանի իւր համակից յառաջաւոր իշխանները մի օր առաջ էին կարող տեսնել, նոյնպէս Խէյանի դռանն էին վայր բերուում։ ապա թէ ոչ, թող ներէր Խէյանը, նշանաւոր աստիճանաւորին, կամ օգուտի դուռը բաց անող ծառայողին Խէյանի քուէն էլ էին տանիլ, ո՞ւր մնաց տանը հիւր տալ։ Էդպիսի մարդկանց առնուով ինքը տանուտէրը մի քանի մարդկանց մտանակցութեամբ գիւղից բաւական շահ ունի ստանալու։

Երեցփոխի տանն իջեցնելու հիւրը նոյնպէս Խէյանի տանն էր պատռպատուում։ Մի գործակալ, մի վարդապետ, մի ժողովարար քըր-տըստանցի տէրտէր, որոնք երեցփոխի հիւրերն են, սրանց էս սովորաբար ժամկոչը Խէյանի առունն էր առաջնորդում։

— Ա՛յ Խէյան, ասում ա՝ խէրը տեսնի Հէրապետը, ջառմէն քաշի Կարապետը, կրկնում էին նրան շատ անգամ գիւղացիք, թէ որ մեր մուրթավելու[1] տանը վէր եկող զօնաղներին դու պոի պատիւ տաս, տանդ պահես ու ճամփու գնես, էլ ընչի՞ չես ուզում մուրթավելի գառնալ։ էլ ի՞նչ ա ծնում անելու։

— Չէ՛, ախպէր, ձեր հօրն օղորմի, ինձանից ձեռք քաշեցէ՛ք, ես էդպէս զալմաղալ բաների հետ գլուխ չունիմ, ասած ա՝ Խաչը խաչապաշտին խոռով կը կնայ, ես Սև քարի ապրանքից վախում եմ. մարդ ենք, ես ի՞նչ գիտեմ, բալքի սխալմունքով գանձանակի կամ մոմի փողերը մի սև գրօշ խառնուեց իմ ջիբի սև փողերի հետ ու խարջեցի, էհ՞ որ իմ հալալը կը հարամուի, իմ տունը կը քանդուի. ես ի՞նչ պոի պատասխան տամ իմ Աստուն, չէ՛, չէ՛, չէ՛։ ես ձեզանից կը խնդրեմ, որ ինձ Թողաք խղճմտանքս հանգիստ մի կողմ հալալ հաց ուտեմ։ Վնաս չունի, ո՛ւմ կուզէ՛ք, ո՛ւմ արժան կը տեսնէ՛ք, մուրթավելի շինեցէ՛ք, ու նրա տանը վէր գալու Աստծու զօնաղներին իմ դուռը ղրկեցէ՛ք։

— Լաւ կըթի կով ենք ունեցել, երբեմն խօսում էին առանձնապէս միմեանց հետ տանուտէրն ու իւր սրտամէտ օգնականները, եղալի թիքեքը մեզ ենք պահում, անխէրները Խէյանի դուռն ենք տանում, պէտք եկած վախտն էլ նրա տանիցը գաւերով դինի սրտաղ ենք ուզում, ու մեր օգտին գեղի ծախսի մէջը գնում։

1 Երեցփոխի։

Տան էդքան ամէն օր տարէ՛ք, թէ կուզէ՛ք, ասում էր տանուտէրին Խէյանը, թաք ըլի ինձ գիւղի գործերի մէջը մի խառնէ՛ք, փառք Աստծու, մի կտոր հաց ա ուտում, ընչի՞ չպահի հընկեր հարեւանի հետ կիսենք։

Ուր Խէյանը շատ ուրախ էր, որ իրան տանուտէր կամ երեցփոխ չէին դնում, նա յօժարութեամբ տալիս էր ամէն ուզած, որ իրան չէին արգելում իւր սիրելի պարապմունքից — իւր տներն ու մզքերը կառավարելուց։

Աւրակի օրերը միայն Խէյանի հագին մաշիկ կը տեսնէիր. էն օրերը արեւները ոտներին, մի սպիտակ հնամաշ Զարքեազի չուխայ հագած՝ կամ տանն էր գործում, կամ թէ բանուորների հետ այգումն ու անդումը։

Ամէն պատճառով գիւղացիք ծաղրածութեամբ նրան երեսին ժլատ էին կոչում։

— Ա՛յ տնաքանդ, դու չե՞ս տեսնում, ընչանք իրիկուն արեւ տակին գլուխդ ապրուս փաթաթած՝ խոտ ես խորոմում, երեխէքդ հօ գլուխդ կոխել չե՞ն, ո՞ւմ պոի թողաս, երկու ախպերով մի երեխայ ունիք, Ծվիկենց Աղաջանի տղէն մատով գերեզմանդ հօ չալըմի՞ փորի, որ խնայում ես մշակի փող տաս ու ինքդ հանգիստ գերդաստիջին ձեռնդդ ջիբդ դրած մնաս գաս։ Դու՝ հօ դո՛ւ՝ ախպէրդ էլ քշեր ցերեկ չօլերիցը տուն չէ գալիս. աաքի ի՞նչ կըլնի, որ ձեր դռանը ձեր մասիլը[1] սաղայնէք ու նեղութիւն չքաշէ՛ք. կէս ծաղր՝ կէս շնաակ ասում էին Խէյանին իւր ընկերակիցները։

— Չէ ախպէր, ամէն մարդի խելք իր գլխին ա, պատասխանում էր նա։

Խէյանը սիրում էր նոյնպէս լաւ ուտելը. ամառը այնքան չէ, բայց ձմեռն անխափան առաւօտեան ժամից դուրս գալուց յետոյ, որ մի նախաճաշիկ չանէր մի կէտայ արաղով ու մի երկու դաստի գինով, նրա օրն օր չէր։ Ուախս օրերն աւելի ուրախ էր լինում նրա սիրտը, ժամից յետոյ միան առնում էր, տուն բերում ու իւր ձեռքով խորոված կոտորում, չամիչ անում ու կրակի վերայ ժժաժաչնում։

Մի քանի պորտաբոյծ պարոններ իրար աչքով անելով ցոյց էին տալիս Խէյանին ու մի փոքր ժամանակից յետոյ գալիս դռանը

1 Բերք։

կանգնում ու ձայն տալիս. Խէյա՛ն, այ Խէյա՛ն, դուս արի, բան ունք ասում։

— Զօռ ու ցա՛ւ էք ասում, ուրախ ուրախ գոռում էր ներսից Խէյանը, ես ձեր փորացաւանքը չդիտե՞մ, խորովածի հոտը ընկնելի պէս պնչներիդ ա դիպել։ դէ եկէք լափեցէք էլի։ Ադա՛, այ մեռածներ, ի՛նչ լաւ եկաք, մեր երեխէն (եղբօր համար էր ասում) ըստեղ չէ, մինակ էլ էս անտէրի թիքէն բօղաղովս կուլ չի պնում։ Ես արմանում եմ, մի փարայ[2] մարդկանց վրայ, որ կարողանում են մէնակ հաց ուտել։

Ո՛ր օրն էլ խորովածի պատրաստ ժամանակը պրսկիցը ձայն տուող չը լինէր, ինքը Խէյանը շամփուրը կրակին կը թողէր, դուրս կերթար ու քուչով անցնողին ներս քարշ կը տար, իրան սեղանակից կանէր, մանաւանդ՝ եթէ օտարական տեսնէր, էլ ձեռք չէր քաշիլ։

— Իմ ախպէրս տարին 12 ամիս օտարների դռներին ա, սրանց կերածն էլ նրա բաժինն ըլի։

Ահա էր Խէյանի համոզմունքը։

Շատ չքաշեց սակայն, Խէյանի ուրախութիւնը արտութեան փոխուեց։

Մի ձմեռ Աբարանումը՝ Ափնագիւղի ձորումը նրա եղբայրը բքարգել ընկաւ, ոտները ցրտատար եղած՝ երեք օրից տուն հասաւ, անկողնին մնաւ և մի քանի օրից յետոյ աչքերն յաւիտեան փակեց։

Ահա տարաբաղդութիւնը Խէյանին շատ կոտրեց, մանաւանդ երբ մի երկու ամսից էլ մեռաւ նրա կինը, բոլորովին ծերացաւ և փոքր ինքն էլ յուսահատութիւնից մեռնում էր։

Նրա տան կառավարողը մնաց իւր այրի քոյրը, որ վաղուց չքաւորութեան պատճառաւ իւր միակ հերիքնազ աղջկայ հետ Խէյանի մօտ էր բնակուում։

Երկու տարի Խէյանը եղբօր համար սուգ պահելուց յետոյ կրկին իւր անցեալին գործերին կացաւ և փոքր առ փոքր առաջուան ուրախ բնութիւնն ստացաւ, մանաւանդ երբ իւր և քրոջ հասած կակիղ աղջիկները տասն երկու կամ տասն երեք տարեկան հասակը մտան, նա բոլորովին մոռացաւ իւր վշտերը։

Թէպէտ Խէյանի եղբօր կենդանութեան ժամանակն էս նրա

2 Տեսակ։

հարստութեան համբաւը ամէն տեղ տարածուած էր, բայց և այնպէս օտարների աչքը նրա դռանը չէր, ուրիշների շահասիրութիւնը դրդռելու տեղիք չկար. նրա միակ ժառանգ աղջիկը պէտ փոքր էր, իսկ ժառանգութեան կէսն եղբօրն էր պատկանում։

Հայց եղբօր մահից յետոյ՝ երբ Խէյանը մնաց միակ տէրը իւր մեծ կարողութեան և նրա աղջիկն իւր տարիքին հասած նրա ժառանգն էր, շատերի ուշադրութիւնը Խէյանի հարստութեան վրայ դարձաւ։

Թէպէտ հեղնարը նշանած էր, թէպէտ նա շատ գեղեցիկ չէր, ամէնքը խոստովանում էին, որ հերիքնազը շատ սիրուն, համեստ ու անարատ է հեղնարից, բայց ով հասած տղայ ունէր, Խէյանի աղջկան իւր տանը հարս տեսնել էր ցանկանում։ Ոչ ոք էլ չէր ուզում միաք բերել, թէ Խէյանն ու Ծվինկնց Աղաջանն օրինաւոր բարեկամութիւն են անում. թէ Խէյանի տրտմութեան միջոցներն Աղաջանն էր նրա մուրքն իրանի պէս հոգ տանողը, թէ Սմբատը բաշխաբար մայ արած օրից դէսը հարազատ որդու նման Խէյանի տանն ընդունած էր և երկու փոքրիկ աղջիկներն այլապէս չէին ճանաչում Սմբատին, եթէ ոչ ինչպէս իրանց եղբայրը։

— Անքուն ցեց ա, Խէյանի հարստութիւնը, մտածում էր ամէն մի նշանակութիւն ունեցող հայր, էլ ի՞նչ կարծիք, որ Խէյանն ի՛նչ ունեցած չունեցածն աղջկանն ա, թէ որ դրան ձեռք չդցեմ, անկեղբութիւն ա, իմ տղէն Ծվինկնց Աղաջանի որդուցն ընչո՞ւ ա պակաս։

Ջինդ կորի, անպէտք լակո՛տ, բարկանում էին այսպիսի հայրերն իւրեանց որդուց վերայ, երբ որ վերջիններս համարձակուում էին հակառակիլ իւրեանց հօր նպատակին, չհաւանելով Խէյանի աղջկայ գեղեցկութեանն և իւրեանց մօր ձեռքով հասկացնում էին իւրեանց ցանկութիւնը հերիքնազին ուզելու. ի՞նչ սիրունութիւն, ձինն էլ սիրուն, որ ոսի տակի կղչորուո՛ւմ ա, սիրունութիւնն էս օր կայ՝ էգուց ոչ, դու տաս էն մալ ու գովլաթը քունը դառնայ, որ միջին լեղ տաս, կնկայ սիրուն ու գէշը ո՞րն ա, քո մէրը որ սիրուն էր, տեսնում չե՞մ, որ մենք պակաս մարդ ու կնիկ ենք։ Գժուել ես, ի՞նչ ա, ա՛յ ոլդի, խելքդ հայի հե՞տ ես կորցրել Խէյանի քուեր աղջկանից քեզ ի՞նչ խէր ու խաշու, իր աղջիկն ուզի, որ դու էլ քո օխտը պորան էլ քեզանից յետը վայելէք։

Ոչ միայն Աշտարակցիք էին աչքը անկել Խէյանի աղջկայ վրայ,

երկու երեք Հարևան գաւառների Հարցասաններն էլ ասոմիները սրած՝ միաք էին անում Խէչանի աղջիկն ուզել:

Այս ձայները միշտ Խէչանի ականջն էին լինկնում, բայց նա ժպտում և գլուխը պարապում էր:

Յ.

Բ Ե Ր Ա Ն Փ Ա Կ Է Ք

Լուն բարեկենդանի կիւրակէ երեկոյին, ինչպէս ասացինք, Աշտարակցիք վերջ դրին Ազգինց կալուծն ամբողջ երկու շաբաթուան զժուխիւններին, ամէնքը միաեանց բարի գիշեր ասելով, ուրախ զաւիկ ցանկալով՝ մնան իւրեանց իւրաքանչիւր յարկի տակն՝ իւրանց ընտանեաց հետ մեծ պասին դիմաւորելու:

Գիւղումը լռութիւնը տիրեց, վերջացաւ այն կեղտխառնը, բոլորովին մի հասարակ երեկոյի նմանութիւն առաւ օրը, կարծես թէ, այս գիւղի մէջ երկու շարունակ շաբաթ ոչինչ արտաքոյ կարգի բան չէր պատահել: Այս արտաքուստ էր. մանր ամէն մարդի տունը և բոլորովին ուրիշ տեսարան կը տեսնես:

Տան նախանգամը կամ ծերունին շուրջ առած իւր բոլոր գերդաստանը, շարունել է քուրսու [1] տակը բերան փակէք անելու:

Այստեղ ահա նահապետական սուրբ աւանդութիւնը պարզ արտահայտւում է, տան նահապետն իւր լիաղօր իրաւունքի մէջն է. ամէնքը նրա աչքին են նայում, նրանից ակնածում են: Իսկ մեր պապը, կամ ափսոս քաղցրութիւնն և սէրն երեսին՝ չէ թէ այս անցեալ երկու շաբաթուան նման աղաղակներով ու հարայ — հրոցներով է դիմաւորում պասին, քաւ լիցի՛, նա համեստ և զուարճալի բարոյական առակներով, յիսուն օրուայ հիւր եկող մեծ պասի վերայ խօսելով, այս բարեկենդանի ուրախութիւններից գժութիւն համարելով՝ գովում է պասը:

1 Մի ցածր սեղան է, որ թոնիրը իջնելուց յետոյ դնում են թոնրի վերայ, կապերտներով ծածկում և ոտքերը տակը դրած նստում են:

Մեր ծերունին սրտանց ուրախ է, նա ոչ մի օր իւր տրս կողմն այսպէս հաւաքուած չի տեսել իւր ընտանիքին և մերձաւորներին. այսօր նա միայն իւր փոքրիկ գերդաստանի հետ չէ սեղան նստել. նա բաղմել է այն սեղանի գլխին, որի շուրս կողմն իւր մերձաւոր ազգականներն են շարուած:

Բաժանուած փոքր կլոպայներ, հօր եղբօր որդիք, ամուսնացած աղջիկները իւրեանց այրերի և զաւակների հետ՝ բոլորը՝ բոլորը հաւաքուում են իւրեանց ազգապետ ծերունու մօտ՝ նրա օրհնութիւնն առնելով, նրա հետ միասին բերան փակէք անելու:

Ծերունու տանը ոչինչ նոր պատրաստութիւն չի տեսնելու, ամէն եկող գերդաստան իւր հետ բերում է բարեկենդանից մնացորդ ուտելիքներն և մի գաւ գինի ու խառնում նրանց տան եղածի հետ: Այս երեկոյ օջալ [1] չալիտի վառուի, պապոնց օջաղիցը միայն ծուխ պիտի բարձրանայ, էն էլ բերան փակէք ի ձուաձեղն անելու համար:

— Աղջկէք, երեխէք, հէնց որ կերթաք պապոնց, կամ մենծ ափսոնենց տունը, ամենքդ էլ դնացէք պապի ձեռը պաչեցէք ու ասեցէք. — շնհաւոր բարեկենդա՛ն:

Ի՜նչ ուրախութեամբ սերնդի նահապետը դրկում է իւր սիրելիներին և աչքերն երկինք բարձրացնելով՝ օրհնում վերին նախախնամութիւնն և աղօթում, որ արժանացնի իրան մի նրան բուռը հողին:

— Պապի ջա՛ն, հէքթէ [2] ասե՞ս:

— Դէ մի պաչ տո՛ւր:

Երեխէն թուշը դէմ արեց, պապը միան ու կատուի առակը պատմեց:

— Պապի ջա՛ն, ինձ համար էլ ասա՛:

— Դեռ կա՛ց, էս մինը Թօգօրիս համար եմ ասում:

— Պապի ջա՛ն, բա ինձ համա՞ր:

— Դեռ էս լսի՛, աղուէսի ու հաւերի հէքեաթն էլ քեզ համար եմ պատրաստել:

— Պապի ջա՛ն, բաս ինձ համա՛ր, ապատ բարձրանում է մի երեք չորս տարեկան մանուկ — մեծ աղջկայ աղէն պապի ծնկան վերայ ու մրքի թելերի հետ խաղում:

1 Վառարան: 2 Առակ:

Յանկարծ բերանը մօտեցնում է նրան պապն և առաջներով բռնում սիրուն տղայի փափկիկ կուռքը։

Ամենքը ծիծաղում և ուրախանում են։

— Իմ կո՛ւռն էլ, իմ կո՛ւռն էլ, պապի ջա՛ն, իմ կուռն էլ կծի՛։

— Չէ, քո կուռքը պահի, ոչխարներ պոի չլինեմ կռանդ վըայ։

Էլի երեխայից կչկըջը առնը բռնում է։

Ամեներն էլ կամաց կամաց մանակից են լինում այս անմեղ զուարճութիւններին։

Ռաւական միջոց անց կացաւ և առակը մոռացուեցաւ։

— Վա՜յ, հէքաթը կիսատ մնաց, աղուէսը կը խռովի։

— Հա՛, հա՛, պապի ջա՛ն, հէքաթն ասա՛, հէքաթը։

— Ո՛ր տեղ մնաց, մտիցս ընկաւ։

— Ը՜, ը՜, ը՜, վա՛յ, մոռացայ։

— Դէ՛, մոքամոլըմնե՛ր, ասենք՝ ես եմ հալխուրել, դուք ընչի՞ պոի մոռանայիք, ամո՞թ քեզ Մուկո՛ւչ, էս քո հէքաթն էր, ով մոռանար՝ դու պոի մոքումդ պահէիր։

— Էլ յետ գլխի՛ցը՝ պապի ջա՛ն, էլ յետ գլխի՛ցը։

— Գլուխն էլ մոքիցս թռաւ, ընչանք հերթով մի մին պաշ չտաք, միաս չի գալ. ով շուտ թուշը դէմ կանի, նրա համար կասեմ։

Ամենից յետ խփելով երեխայքն ուրախ ուրախ պապի գիրկն ու շալակն ելան և աշխատում են երեսները շուտ մօտեցնել նորա բերանին։

— Էլ չեմ ասում, համբուրելուց յետոյ հրաժարուում է պապը, սոված փորս վեց-վեց ա անում[1]. դէ գնացէ՛ք, տատին ասեցէ՛ք, թող հացը քաշէ, մի քիչ փորներս լցնենք, հացից յետը շատ բան ունեմ պատմելու։

— Չէ՛, չէ՛, սուտ ես ասում, էս օր բարեկենդան էր, սաղ օրը կերել ես, մենք էլ սոված չենք, ա՛յ, ջերմուն գաթի կտոր ունեմ, իշտահ չկայ որ ուտեմ, կուզե՞ս, քեզ տամ։

— Չէ՛, ես հայց ուտիլ եմ ուզում, կիրակրները կը մնան, էդուց դէն կածենք, ըներին կը տանք։

1 Խիստ քաղցած եմ։

— Տատի ջա՛ն, դէ դու էլ թէզ ասա՛, նոր կերակուր հօ չե՞ս եփելու, էլ ի՞նչես յետացնում։ փոքրիկ շրթունքներն ուռեցնելով՝ քաշքշում են տանտիկնոջ փէշերը մեր գառնուկները, պապը սովաած ա. ի՞նչ անկուշան ա, սաղ բարեկենդանին միալար[1] նի ա տալի[2] ու դեռ ասում ա, թէ թափանիս[3] մի դիհը դարպակ ա։

— Էլ քունչ ու պուճախ մի՛ ընկնէ՛ք, ինչ ունիք չունիք բերէ՛ք, մէջ տեղ լցրէ՛ք ու դուք էլ նստոտեցէ՛ք, էս իրիկուն մի հալալ հաց ուտենք, բերա՛ն փակէ՛ք անենք, էլ ո՛վ սաղ՝ ո՛վ մեռած, հրամայեց պապն և ամենքը միասին շարուեցան։

— Ա՛յ պառաւ, դու հէնց նամի՛, կէս երեսդ մեր դիհն ըլի, կէսն էլ հարսներին, դու երկու ախոռանի ես, ծաղրածութիւն է անում պապն իւր կնոջ հետ։

Տղայ-մարդկանց քամակին շարուում են հարս ու աղջիկները և երեսները միս կողմը դարձրած՝ քամակները դէպի այր մարդիկը ընթրում են։

— Ա՛յ կնիկ, էսքան բանը որ մեր առաջն ես լցրել, էդ ջահել-ջուհուլեն ի՞նչ ա մնացել, հոգայ պապը։

— Տօ՛, ձար կտրածի մա՛րդ, ըսաել էնքան թափած ա, որ մի շաբաթ էլ բարեկենդան ըլէր, հասնիլ չէր, մի տե՛ս, քանի՛ տնուոր ենք, ամեն տանից էլ եկել ա, հլա ասես էսքանը բերում էիք՝ թէ ի՞նչ։

Սկսում են նոյնպէս սեղանի վերայ կարճ կարճ ծիծաղաշարժ ասացուացքները։

— Դուք էլ հօ պոտի հարսներ չէ՛ք, յանդիմանում է պապը այր մարդկանցը, մենակ ես հօ չպոտի խօսամ, ի՞նչ էք բերաններիդ հուպ տուել, հալբաթ մի մին բան էլ դուք կխմնաք, ասեցէ՛ք էլի՛։

Ուրախութիւնն ընդհանրանում է, մուրախաս ա, պապը հրամանն տուեց, ամենքն ինչ սրախօսութիւն գիտեն, գործ են դնում։

Հարսներն էլ փառ փառ ծիծաղում են։

— Դէ՛, ով խաղ գիտի՝ պահի ոչ։

Ամեն մարդ իւր ընորհքը բանացրեց։

— Ա՛յ կնիկ, դէ՛ վեր կաց օձախդ կպցրու, բերանփակէ՛քի

1 Անդադար։ 2 Ներս է լցնում 3 Սատանայ։

ձուաձեղն արա՛, հացը վեր քաղինք, էս երեխէքը մի քիչ ուրախութիւն անեն։

Տանտիկինը մէջ տեղ բերաց մի հատ ձուաձեղ, ամէն մարդ մի մին թիքայ վերցրեց, բերանը դրեց, ծծի երեխեքանց պռօշներին էլ որդեսէր մայրերը քսեցին և պապը մի երկար օրհնութիւն ու քարոզ սկսեց։

— Տարուան մէջը շատ ուրախ օրեր են գալիս գնում, սկսեց պապը մի թաս գինի ձեռքին բռնած. զատիկ, ջրօրհնէք, հինգ նաւակատիք, ես ի՞նչ գիտեմ, ո՞ր մինն ասեմ, մենք էդ օրերումն էլ ուրախանում ենք, համա ձմեռուայ տան բան ու գործի թեթև վախտի համար մեր օղորմածիկ պապերը սարքել են բարեկենդանը, որ ամէն աշխատանք թողնանք, քէֆի հետ ընկնենք։ Ի՛նչ գժութիւններ արինք, ի՛նչ կերանք, ի՛նչ խմեցինք, վերջացաւ պրծաւ, 50 օր մենծ պաս ա գալիս, ինչքան որ պարապ օրեր ենք անցկացրել, պտի էս օխտը շաբթի մէջ տեղակը հանենք։ Էգուց էլ օր աշխատանքի օրերը դուս կը գան, պտի ամէն մարդ իր Աստծու անունը տայ, գլուխը քաշ՝ իր աշխատանքին կենայ, որ Աստուած էլ նրա ձակատի քրտինքն օրհնի, նրա վար ու ցանքին, նրա հանդ ու հանդաստանին, նրա յիքանոնցը լիութիւն, առատութիւն տայ։ Էս իրիկուն ձուով բերաններս փակեցինք, ընչանք զատիկ շաբաթ իրիկունը, մին էլ ո՛վ ապրի, թող տեսնի, կարմիր ձուով բերանբացէք անենք։ Աստուած ըսէնց ուրախ սրտով՝ ցամաք աչքով զատկին արժանացնի ամէն հայ-քրիստոնէի, նրանց սաղալիցն էլ ձեզ, իմ որդի՛քս, ձեր երեխեքանցով, ձեր օղլուշաղով. մօտ եկէ՛ք, բաղէ՛քս, ամէնքիդ էլ պաչեմ, բարով դուք էլ իմ տարսը դառնաք, շատ շատ տարիներ ըսէնց ուրախ սուփրայ բաց անէք, փեսեքանց, թոռների, ծոռների տէր դառնաք, ձեր երեխեքանց կնսրմիրը կապէք։ Ա՛յ հարսներ, ա՛յ աղջկէ՛ք, շատ ապրիք, հնազանդ ըլլիք, դուք էլ պառաւիք ու իմ պառաւի պէս ձանդլաճուտերով հացի նստիք, բարով սև օրեր չտեսնիք, ձեր սև օրերն էս օրուայ պէս ըլլին, ինձ ու իմ պառաւին էլ ձեր ձեռովը հողը դնէք, ձեր մի բուռը հողին արժանանանք, երկնային Թագաւորիցն էլ խնդրել եմ անարժան բանովս, որ մեզ իր արքայութիւնին արժանացնի, ամէն։

Ընթերիր ամէնքը վեր կացան, պապի ու տատի ձեռքը համբուրեցին, սրանք էլ նրանց երեսները պաչեցին և սեղանը հաւաքուեցաւ։

— Ա՛յ կնիկ, դէ գնա՛ մի քիչ պօպօքից մօպօքից բեր, երեխեքանց առաջն ածա՛, մի քիչ էլ վեգ խաղան ու գնան իրանց տները, հրամայեց պապը։

Մի ուրախութիւն էլ նոր սկսաւ, մի կողմը վեգ են քցում տղայքը, միւս կողմը թօլօլանգի են խաղում հարս ու աղջիկները. աւելի հասակաւորներն էլ հաւաքուել են պապի մօտ և զուարճանում նորա համով հանաքների վերայ։

Խէչանենց Խէչանն էլ իւր տան նահապետն ու գլուխն էր. նա շատ ախորժ բերան փակեց արեց. նրա քոյրը շատ ստիպեց նրան չկոտրել երեխեքանց սիրտը, բայց նա լսել անգամ չուզեց։

— Ի՞նչ կըլներ, որ հիմի իմ ախպերս ու հընկերս կենդանի ընկնէին ու մենք էլ մի ուրախ պաս բռնէինք, պնդում էր նա քրոջ խօսքերի դէմ։

— Աստծով երբ որ հեղնարին կը պսակենք, Սմբատը քեզ ախպերութիւն էլ կանի, որդիութիւն էլ։

Խէչանի տրամութիւնը փոքր ինչ փարատուեցաւ, երբ որ Սըմբատը տուն մտաւ, ձեռքը համբուրեց։

ԺԱ.

ԱՆՄԵՂ ՄԱՆԿՈՒԹԻՆ

Անթէ ազգականութեան մէջ կայ մի ամուր կապ, որ մարդկանցն իրարու մօտեցնում, իրարու ուրախութեանն ու տրտմութեանը մասնակից է անում, այդ քաղցրութիւնն աւելի զգալի է հասարակ ժողովրդի մէջ, քան բարձր դասակարգի, գիւղականաց մէջ առաւել՝ քան թէ քաղաքացիների։

Գիւղացին իւր անձնական գործի հետ միասին պարտականութիւն է զգում իւր ազգականի կարիքին հասնել, իւր մերձաւորի ուրախութեան ու տրտմութեան ժամանակը նրա զգացմունքներին բաժանորդ լինել։

Նա ուրախ է, երբ իւր հեռու մօտիկ բարեկամի տանը մի բերքաղութիւն է պատահել, մի հարսանիք, մի ծնունդ, նա ամե-

նայն սրտով շնորհակալութիւն է անուր, երբ նրան աւետիք են տալիս :

— Աչքդ լո՛յս, քեռուդ աղջկանը նշանել են, կամ թէ խնամուդ կինը տղայ է ծնել :

— Աչքալուսով կենա՛ս, պատասխանում է նա քեզ, բարով ձեր ազիզ սիրեկաններին էլ ուրախութիւնը :

Այսպէս էլ իմացիր և արտմութեան ժամանակը :

Սէր, քաղցրութիւն, մօտիկ յարաբերութիւն, շարունակ միմեանց տուն գնալ ու գալ, կէս գիշերի՝ մէջ գիշերի բարեկամի կասկածին հասնել. — այս գեղեցիկ յատկութիւններով կը հիանայ Հայաստանի գիւղերը մտնող մէկը. մանաւանդ եթէ նա ծանօթ չեղած գիւղական պարզութեանը՝ մտած քաղաքի շինծու կենցաղավարութեամբ, դիպուածով ընկնի նա վերոյիշեալ երանաւէտ կեանքի մէջ : Մխանգամայն կըղմայլի այնպիսի անձը տեսնելով այնքան ջերմ սէր և անխարդախ բարեկամութիւն : — Այո, կասի նա, ոլքա՛ն մեծ զանազանութիւն, ո՛րչափ նախանձելի վիճակ, ո՛ւր գիւղացու անկեղծ բարեկամութիւն, ո՛ւր մեր քաղաքացիներիս քաղաքավարական կեղծ կանոնների վերայ հիմնուած առ երեսս ունեցած մարդահաճոյութիւն :

Մերձաւորների ու բարեկամների յարաբերութեանց վերայ խօսելով՝ մենք չպէտք է խլենք գիւղացուց բոլոր իւր նմաններին ցոյց տուած համակրական զգացմունքը. մի տեղ նա ասում է. — մօտիկ հարևանը լաւ է հեռու բարեկամից, միւս տեղ. — յառաջ մերը, յետոյ մերոնցը: Այս երկու առածը միմեանց չեն ճշտասում, սրանցով գիւղացին թէ հարևանին է սիրում և թէ ազգականին. մանաւանդ եթէ նրա բարեկամութիւնը նոր է, նոր խնամութիւն են կապել իւրեանց մէջ :

— Խնամի ջա՛ն, ուրախ գիմաւորում է նա իւր նոր ազգականին, բարեկամացանք՝ բարեբարացանք :

Այդ օրից նրանք միմեանց տան անդամներն են :

Խէչանենց Խէչանի և Ծվիկենց Աղաջանի մէջ երեխաներին բաշխեք եաբթմայ արած օրից մի առուր բարեկամութիւն հաստատուեցաւ, նրանց անները, համարեա, միացան, մի դրգռալ տաք ու հովը բաժանում էին իրար հետ :

Բաւական չէ, որ երկու սիրով խնամիքը ամբողջ օրերով հանդիպեա, միասին էին լինում, Սմբատը գիշերներն էլ իրանց տանը չէր քնում :

Ինչպէս առ հասարակ գիւղական սովորութիւնն է, Սմբատը ձմեռներն ուսումնարան էր գնում, ամառներն այգին, կամ արտը, այդ միջոցումը նա չէր էլ հարցնիլ, թէ իրանց տաշտիցն է հարկաւոր հաց վերցնել գրպանը դնե՞լ, թէ Խէչանենց : Երկու դուռն էլ բաց էր իւր համար, երկու տունն էլ իրանն էր, շատ անգամ նա մոռանում էլ էր, թէ ո՛ւմ տղէն է : Հնձնարի ու Հերիքնազի մէջ նա ոչինչ զանազանութիւն չէր գտնում, երկուսն էլ իւր քոյրերն էին, Խէչանն էլ իւր հօր եղբայրը : Ահա այսպէս էր պատասխանում նա հարցնողին : Նա ոչ բաշխք եաբթմի նշանակութիւնն էր հասկանում և ոչ նշանածութիւնը. նա պարզ, անմեղ երեխայ էր և նոյն անմեղութեամբը շարունակում էր իւր երթևեկութիւնը, մինչև որ տարիները մի օր նրա թևերից բռնած՝ յետ քաշեցին :

Այս մի և նոյն դրութեան մէջն էին և երկու մատաղատուն աղջիկները. քանի փոքր էին, նրանք միմեանց այլապէս չէին ճանաչում, եթէ ոչ հարազատ քոյրեր. եթէ հարցնելու լինէիր. — եղբայրը ունի՞ք, — այո՛, կը պատասխանէին, Սմբատը մեր եղբայրն է : Երեխայական անմեղ խաղեր, Սմբատի հետ քաշել, քաշքշուիլ, ծեծել, ծեծուիլ, միմեանց դէմ շըթունք ուռեցնել, մի քանի րոպէ խռովել, էլ յետ միմեանց գիրկն ընկնել հաշտուիլ. — ահա այսպէս էին երեք երեխաների յարաբերութիւնները :

Երկու աղջիկները, համարեա թէ, հասակակից էին, իսկ Սմբատը բաւն երեք կամ չորս տարով մեծ էր նրանցից, և այդ էր պատճառը, որ աղջիկները միմեանց հետ վէճ ունեցած ժամանակը, շատ անգամ, իրանց դատաւոր էին կարգում Սմբատին :

— Սմբատ ջա՛ն, իմ գիհը պահի՛, փաթաթուում, համբուրում էր Հեղնարը :

— Սմբատ ջա՛ն, սուտ ա ասում, իմ կուանը կա՛ց, գիրկն էր ընկնում և թուշը, կամ աչքերը տալի պուօշներին դէմ տալիս Հերիքնազը :

— Երկուսդ էլ սուտ էք ասում, կորէ՛ք, գնացէ՛ք, յետ էր խփում Սմբատը, բայց այդ ժամանակ նա էլ երեխաների ձեռքից չէր պրծնում. վրան էին թափուում, վայր ձգում և այնքան չարչարում, երեսն և գլուխը պաչպչում, կուրծքին նստում, մինչև որ նա երկուսին էլ ձշմարտացնում էր :

Խէչանի կինն, ինչպէս յայտնի է, վաղուց մեռած էր, երկու երեխաներին միահաւասար մայրութիւն էր անում Խէչանի քոյր

Մարիամը։ Երեկոյեան երբ նա անկողինը փռում էր, երկու աղջիկները ու Սմբատը պարզապէս հանուում էին և Սմբատին մէջ առած՝ խաղում, մինչև որ քունը նրանց աչքերը փակում էր։

— Ձեր ջանին մեռնի՛մ, անմեղ հրեշտակնե՛ր, ասում էր Մարիամն ու իր շորերն էլ հանում, երեքին կարգով համբուրում, նրանց կողքը մանում, մի պակաս-պատառ «Հայր մեր» ասում, երեք երեխաներին էլ խաչակնքում ու աչքերը փակում էր։ Խէչանն էլ իրան պարտականութիւն էր համարում անկողնին չմտած՝ երեխաներին համբուրել ու այնպէս պարկել։

— Փառք շատ ըլնի՜, Աստուա՛ծ, ձեռքերն երկինք էր բարձրացնում նա, ո՛վ կը կարծէր, թէ օր ծերութեան դու ինձ էս մխիթարութիւնը պտի տաս։

Ինչ բան չէր խանգարում երեխաների պարզ միտքը, սէրն էր թագաւորած նրանց մէջ, քանի նրանք մանկութեան տարիների մէջն էին։

Գիւղի ուսման ընթացքը շատ երկարատև չի. մի երկու երեք ամեռ երեխայքը կը յաձախեն մի տիրացուի կամ տէրտէրի մօտ՝ մի ուրթ կանոն Սաղմոս կամ Կտակարան ձեռքերին՝ ու մարտը դուրս գալուն պէս կրկին կը ծալեն, տան խոր անկիւններից մէկում հանգիստ կը տան ու կերթան իրանց ծնողներին պէտք գալու գործերում։ Վերջն՝ երբ մի քանի տարի շարունակ տէրտէրի բակումը փալախի մէջ մանելուց ու ապտակներ ուտելուց յետոյ փոքր ինչ խղճդից իմացան, կամ ինչպէս իրանք ասում են, իրանց հօր նիսիէն[1] գրել կարողացան, նրանց ուսումը լրացաւ, փիլոսոփայ դառան՝ պրծան. տէրտէր հօ չպտի՞ դառնան, շատ կարգացողը կը գժուի։

Ահա մեր Սմբատն էլ իր ուսման ընթացքն աւարտեց. նա այժմ ոչ թէ միայն իր հօր նիսիէքն է գրում ու կարդում, տերն ընկած ժամանակն ուրիշների համար բարովագիր կամ սանատել էլ է գրում. նա ուրեմն քեաթուբ եղաւ[2]։

Ահա նա մտաւ տասն և վեց տարին։

— Պա՛յ, մի օր ասայ նրան մի ներքին ձայն, ո՞ւր ես գնում դէպի Խէչանի տունը, այդ ձերը չէ, քո աներանց տունն է։

1 Պատճէն։ 2 Գիտութեան ընթացքն աւարտեց։

Եւ նա կանգ առաւ. նա իւր մէջ մի փոփոխութիւն զգաց, նրա երեսը կարմրեց, տաքացաւ։

Նա իւր շուրջը նայեց ու հեռուից մի գիւղացի տեսաւ։ Էլ չկանգնեց Սմբատը, յետ դարձաւ ու մինչև իւրանց այգին մին վազեց։

— Ամո՛թ ա, ի՞նչ կասեն, թէ օրով ցերեկով նշանածի կուշան ա գնում, մտածեց նա։

Էհ, ինչ կուզեն ասեն, ի՞նչ անենք, թէ նշանածս ա, ես հօ գէլ չե՞մ, որ իրան ուտեմ, դեռ նշանածս պատիկ ա, դեռ երթալն ամօթ չի։

Այսպէս խելքը փչեց պատանեկութեան մէջ նոր ոտ դրած Սմբատի և նա կրկին քայլերն ուղղեց դէպի Խէչանի տունը։ Գնաց, բայց վա՛յ էն գնալուն՝ ինչ նա գնաց, գողի պէս կուչ ու ձիգ անելով, ծուռն և յետ ընկած փողոցներով, իւր ատուերիցը վեր թըռչելով, որպէս և իցէ բակը ներս ընկաւ։ Նրա բազդիցը Մարիամն այդ միջոցումը պարապած էր տնային գործով, չնկատեց Սմբատի այլայլումը, Խէչանն էլ տանը չէր, ապա թէ ոչ կարելի էր կարծել, որ Սմբատն այսօր մի արգելուած բան է գործել։

Երկու աղջիկներն, ի՛ հարկ է, չէին կարող Սմբատի շփոթմունքը տեսնել, նրանք ըստ սովորականին էլի փաթաթուեցան, էլի համբուրեցին, էլի ուսերիքիցը ճոլոշակ ընկան[1], բայց Սմբատը միշտ աշխատում էր դուրս ընկնել նրանց գրկիցը։ Մին ուզում էր, որ նրանց վէր կոխի, տակը դնի, մազերը գզգզե, ծեծի ու ծեծուի նրանցից, խռովի, գլուխը պատին դէմ տայ՝ կանգնի, մինչև որ իւր ամէն օրուան խաղը ընկերներն իրան քարշ տան, պաչեն, պաչուին ու հաշտուին, ուզում էր առաջուայ պէս վարուի նրանց հետ, բայց չէր կարողանում, կարծես մինը ձեռքիցը բռնած՝ յետ էր քաշում։

Մինչև այսօր նա իւր մէջ ծանր ու թեթև չէր արել, համեմատել թէ երկու աղջիկներից ո՞րն աւելի դեղեցիկ է, դուրեկան է, երկուսն էլ նրա համար մէկ էին, երկուսն էլ իւր քոյրերն էին, նա դեղեցկութեան վերայ ոչ դաղափար և ոչ հասկացողութիւն ունէր։ Թէպէտ Հեղնարը Հերիքնազից փոքր աւելի չար էր, դրա համար էլ ինքը շատ անգամ Հերիքնազի դիհն էր կենում և Հեղնարի

1 կախուեցան։

նարին ատում, մինչև որ Հեղնարը գալիս լաց էր լինում, աղաչում, փաթաթուում, որ Սմբատն ու Հերիքնազը իր հետ բարիշեն ու խաղան, բայց այդ ի՞նչ ջնաս. դրա վերայ ո՞վ էր մտածել:

Այսօր առաջին օրն էր, որ Սմբատը գլուխը յանկարծ բարձրացրեց, երկու աղջկայ վերայ ևս աչք դարձրեց ու իր մէջն ասաց. — Հերիքնազը սիրուն է:

— Հերիքնազը սիրուն է, մտածեց նա, ու մի խոր հոգոց քաշեց և դուրս գնաց:

Աղջիկները վազեցին քամակիցը, կանչեցին, լաց եղան, բայց նա յետ չդարձաւ. նա գնում էր և ինքն իրեն մտածում. — Հեղնարն իմ նշանածն ա, հարս Հերիքնազը սիրուն ա:

— Ընչի՞ էլ առաջուայ պէս Սմբատը մեզ հետ խաղ չի անում, հարցրին մի անգամ երեխայքը Մարիամին:

— Ընաուր որ հիմի նա մենծացել ա, ամօթ ա նրան խաղալը:

— Ընչի՞ էլ շուտ շուտ չի գալիս, եկած վախտն էլ ինչքան ա-ղանչաք ենք անում, քշերը մեզ մօտ չի քնում:

— Ախա՛ր[1] ամօթ ա, ո՞նց կըլնի նշանածը նշանածի կշտին քնի, Սմբատը Հեղնարի նշանածն ա:

— Չէ՞ որ դու ասում էիր, թէ ախպէրներս ա:

— Ընչանք հիմի ախպէր էր, հիմի նշանած ա:

— Իմ էլ նշանածն ա, հարցրեց Հերիքնազը:

— Չէ, քու փէսէն ա:

— Չե՛մ, ը՜, թող ինձ էլ նշանած ըլնի:

— Ախպէր որ ինձ էլ փեսայ ըլնի՞:

— Չէ, երկուսիս էլ համ փեսայ ըլնի, համ նշանած, որ խառվենք ոչ:

— Ախէ՛, գլխից ուաղ էլէք[2], էդ ո՞նց կ ըլնի. Սմբատը Հեղնարի նշանածն ա, Հերիքնազը փեսէն:

— Կանի[3] չա՛ն, փեսէն ա լո՛ւ, թէ նշանածը:

— Երկուսն էլ մին են:

— Լա՛ւ ա՝ որ երկուսն էլ մին են, թէ չէ մենք չէինք ու-զել, որ մենիս փեսէն ըլնէր, մէկէլիս նշանածը:

— Հօքիր[4] չա՛ն, Սմբատն երբ որ մեր տունն ա գալիս, էլ ինձ հետ չի խաղում, խօսում. հէնց միալար[5] Հերիքնազի հետ ա

1 Ոչ ապաքէն: 2 Հեռացէք: 3 Մայրիկ: 4 Հօրաքոյր: 5 Անընդհատ:

հանաքներ[1] անում, գանգատուեց մի անգամ Հեղնարը Մարիամին:

— Օրէնքն ըտէնց ա, ասինք, Սմբատը քեզ համար ա գալիս, համա քենու հետ պտի խօսի, նշանածի հետ շատ խօսալն ամօթ ա. Հերիքնազը քենին ա՝ դու նշանածը:

— Թէ որ ըտենց ա, թող Հերիքնազն ըլնի նշանածը՝ ես քենին. ես ուզում եմ, որ ինձ հետ էլ խօսի ու խաղայ, ևս թէ չէ մի օր ես ըլնիմ նշանածը՝ մի օր Հերիքնազը:

— Ընդեղ բալէ՛ք[2], մորքումն ասում էր Մարիամն ու երեսը շուռ տալիս, հեռանում:

— Ախչի՛, հրե[3] նշանածդ եկաւ, ասայ մի օր Հերիքնազը Հեղնարին:

Հեղնարի ջանը մի սառուցե ընկաւ, նա կատմրեց, տաքացաու ներս վախաւ:

Ինս տաբ ինելն էլին՝ սրանք էլ մտել էին տաս և հորս տարին:

Մինչև այսօր աղջիկներից ոչ մէկը չէր մտածել իւր անցեալի կամ ապագայի վերայ, երկու քոյր էին իւրեանք, իւրեանց Հայրը Խէչանն էր, մայրը Մարգարիտը:

— Ընչի՞ ես քեռուս՝[4] քեռի եմ կանչում, Հեղնարն ասում[5]:

— Ընդուր որ նա իմ ախպէրն ա, քու քեռին կըլնի. Համա Հեղնարի հէրն ա:

— Հապա ես հէր չունե՞մ:

— Չէ, դու երթիմ[6] ես, պատասխանեց Մարիամն իւր աղջկանն ու էլ չկարողացաւ դիմանալ, աչքերից թափելով հեռացաւ:

— Ես երթի՞մ եմ, էս մեր տունը չի՞, մտածեց Հերիքնազն ու փուշը թողից[7]:

— Ընչի՞ ես քեզ հօքիր եմ կանչում, Հերիքնազը նանի:

— Ընդուր որ ես քո հօր քերն եմ, Հերիքնազն ասեր:

— Հա էս ձեր տունը չի՞, դուք մեր տանն էք կենո՞մ:

— Չա՛, հոգուց հանեց Մարիամը:

— Հապա իմ մէրն ո՞ր ա:

— Աստուած տարու:

— Հեղնարն աչքերը լցրեց ու հեռացաւ:

1 Կատակ: 2 Որդեակք: 3 Ընհատնիկ: 4 Մօրեղբայր: 5 Հայրիկ: 6 Որբ: 7 Տրամեցաւ:

ԺԲ.

ՃԼՈՐԹԻ

Մեծի պահոց երկուշաբթի առաւօտը ծէգնելահան ամէն պառաւ տանտիկին տեղւոյը շուտ կը վերկենայ, տան միւս անդամներին կը զարթնացնի, տղայ մարդկանցը ժամ կը ղրկի, կնիկ արմատներին էլ կը հրամայի պղնձկարգը ցած բերել, պաստահան կանի, ուախի հոտը միջից կը կորի ու իստակ իստակ լուացած տեղերը կը շարի։

— Ախչկէք, մի սոխ ու օխտը բմբուլ բերէք, կը հրամայի տանտիկինը, և սոխի վերայ եօթը փետուր կարգաւ կը շարի սայլե անիւի ճաղերի նման ու իւր ձեռքովը կը տանի տան երիվարքից կը կախի։

Եօթը փետուրը պահոց եօթը շաբաթն է. ամէն կիւրակէ մի մի փետուր պիտի քաշեն սոխի վրայից. վերջին փետուրն էլ ծաղկազարդին կը հանեն և կը նշանակի, որ պասը վերջին է հասել, զատկի հոտը փչում է, կարմիր ձուն ներկելու օրերն են։

— Այ խիզա՛ն,[1] աչքներդ երիկին քցեցէ՛ք, կը հրամայի տանտիկինը սոխը կախելուց յետոյ, ընհատո՛ր մենծ պաս, բարով հասնինք զատիկը՝ ուրախ սրտո՛վ, ցամաք աչքո՛վ, պապին ընհատուենք ցէ՛ք, տեսէ՛ք՝ թևաւորուած ոտները կախ արեց մեր երիկովը, ծանր ծանր նստեց, բարով պապի բմբուլները պոկելով տկըրացնինք, ումբրը[2] լորի պոչ չինինք[3], հետ ածինք գնայ քարափների տակին տափ կենայ։

Այս օրը Հայաստանցու համար շատ մեծ և նշանաւոր օր է. նոքա զատկից պակաս ուրախութեամբ չեն պիտանաւորում մեծ պասին, նոքա այսօր պ ա տ շ ն հ ա ւ ո ր է ք ունին։

Առաւօտեան ժամումը «Ուսացարուք սրբեցարուքը» լսելուց յետոյ՝ ամէնքը տնէ-տուն կընդնեն և միմեանց համբոյրները տալով՝ կը շնորհաւորեն մեծ պասը։

Նորափեսայք էլ որոնք այս ձմեռ պսակուել էին, այսօր շատ մեծ գործի վերայ են։

---

1 Ընհատնիք։ 2 Կնանքը։ 3 Լորի պոչ չինել նշանակում է կարճացնել, յայտնի է, որ լորը պոչ չունի։

Սրանցից միևը՝ Սաթուժենց Սահակն այսօր առած իւր խաչեղբօրն ու փեսեղբօրը, իւր նորափեսայութեան հանդերձը հագած՝ մի գաւ գինի և մի ափսեով չոր միրգ փեսեղբօր ձեռքը տուած՝ գնաց իւր աներանց տունը՝ նրանց պասը շնորհաւորելու։

Սաթուժենց տանն այսօր մեծ հարկինքս[1] է, նորահարսի համար պէտք է այսօր պատուայ բաժին գար իւր մօր ու բոլոր բարեկամների տներից. այսօր նորահարսը պիտի հաւաքէր իւր բոլոր ընկերուհիներին և նրանց հետ պաս բռնէր։

Առաւօտ ձեռքն ու զգեստի կուրծքը համբուրելուց յետոյ մեր նորափեսայ Սահակը նստեց իւր ընկերներով քուրսու վերի կողմը։

— Այ կնիկ, էլ մի յետացնիլ, իրեք սհաթ մի ծռծռացնիլ[2], ասօրինց Սահակի աները, ես գիտեմ, էս օր խեղճ փեսին քաշ պտի տաս քո բարեկամների դռներին, էնքան ազգ ու ընտանիք ունիս, որ Մոշնու նախրիցը շատ են[3], ընչանք իրիկուն անճախ կը պրծնեն խեղճ տղէքը, բեր սրանց խալաթը[4]։

Սահակի զգեստը բերեց մի մի գոյգ Խորասանու նաշխուն ջորաբ, գլխց ալիզ հիւրերի առաջը, իսկ փեսային՝ գիւլբի հետ մի բաղդադի աղլուխ էլ վիզը փաթաթեց ու թուշը պաչեց։

— Դէ հրամայի՛, խնամի՛, խօսեցաւ փեսեղբայրը, տեսնինք քանի՞ տուն ենք պասընհատորէք գնալու. էս օր մենք քո ձորտերն ենք, քարափուն էլ որ քցես, ըսելու ենք։

— Հարո՞վ դու էլ էս օրին արժանանաս, բալէ՛ս, օրհնեց նրբան Սահակի զգեստը, դէ՛ ես մի մին ասեմ, դու համբարի՛. այ, լաւ միաներդ պահեցէ՛ք, ձեզ մատաղ, մոռանաք ոչ, էլ մեր ազգականների ձեռքից պրծնիլ չեմ, կասեն Շողակաթը լայաղ չտեսաւ[5] իր փեսին մեր տունը ղրկելու։

— Տօ՛, դու ուրախ կա՛ց, խնամի ջա՛ն, քանի կարաս՝ շարի՛, կուզես Շուխոնց դ ե մ ի ց ը բռնեմ, գնամ ղ ր ի Ակոփի տանը գուս գամ. ընչի՞ չպտի գնանք, փորներս կը ծակի՞, պատու պտի ստանք, պատուհաս հօ չպտի՞ քաշինք, ասինք, փէսէդ իր խալաթն ամէն տեղ կառնի. հալբաթ մի քանի ատամասէրների աչքն էլ մեր վրայ կը քաղցրանայ։

---

1 Հացկերոյթ, 2 Զգճգիլ, 3 Մոզնին մի փոքրիկ գիւղ է Ալաւարակու մօտ։ 4 Պարգև, 5 Արժան չտեսաւ.

Պառաւն սկսաւ համարել մատները ծալելով. Էս բերդաթաղու-
մը՝ Շուխանց Աբմասը, Ջնդլենց Ջմրութը, Սայադենց Ջաւահիրը,
Քուրդ – Մանուկենց Նաղութը, ընտղից յիսո դաս առուծ ափսէն՝
Ջաղենց Նարգիզը, Մելոմենց Էլիզիֆարը, Վարսաննց Սալբին, մնձես
պուճուր քուչէն՝ Բօշենց Ոսկին, Դափանցոնց Ջառնշանը, Թումա-
նենց Սիմիկարը, անցկենաս Սրբ Մայրամի թաղը՝ Մկրտի Վարթերը,
Ճուղուրան Մարօն՝ . . .

— Դէ լա՛ւ, դէ լա՛ւ, էլ պլուխդ ցաւացնիլ մի, խօսքը կըտ-
րեց փեսեղբայրը, ձեր ազգ ու ընտանոնց մենծիցը բառնած ընչանք
օրօրոցի երեխէն ևփած որ ըլնի՝ խաչուն կը ճանանչեմ, թէ որ մինը
հնայ՝ ինձանից ուղի:

— Դէ Աստուած ձեզ հետ, ողէք ջա՛ն, աշխատեցէ՛ք շուտ
վերջացնել, կնիկ արմատի խօսքին շատ ականջ մի կախէք, մի քա-
նիսն էլ լոք տուէք [1], սրան որ հարցնելու ըլնէք՝ Լուսակերենց տունն
էլ կըզըկի, որտեղ խելքներդ կը փչի՝ մտէք, որտեղ ոչ՝ անկաջն քա-
մակը քցեցէ՛ք, խաւնուեցաւ Սահակի աները:

— Ը՜հ, տուտա ասում, ձեզ մատակ. փեսայ ջա՛ն, դու սը-
բան լսես ոչ, ամէն տեղ էլ գնացէ՛ք, թէ չէ ես էլ պլծնիլ չեմ,
երկու գաղ քինթ կախ կը քցեն:

— Դու միամիտ կա՛ց, նանի ջա՛ն, աչքիս վրայ, էս օր ա-
փսոսին չենք լսիլ էս օր իրաւունքը քուն ա, միամտացրեց փեսէն:

— Ա՛յ ողայ, մոլոց ընկաւ, թէ, երեխա քէֆը [2] հարց-
նեմ, քօռանայ Թադուհուս նանի աչքերը, քանի՛ վախտ ա տեսել
չեմ:

Պառաւն աղջկանը միաքը բերեց և աչքերիցը թափեց:

— Ը՛հ, աղջկանդ համար ի՞նչ ես հոգս անում, լռնամի ջա՛ն,
կատակ արեց փեսեղբայրը, էլ դուք ըստուց յիսար նրա աչքուն
ի՞նչ կը գաք, ուրախ տեղ նրան ա տալիս, տաք տեղ ա գտել, մո-
րաղ ձկան նման քշերն ընչանք լիս էս քո քեռալաշ [3] փեսիդ ծո-
ցումը խըզըտում ա [4]:

— Գնացէ՛ք, գնացէ՛ք, ա՛յ անամօթ, պլուկն ամաչելով քարշ
ձգեց պառաւը, բայց՝ դու էլ քո խըզըտանին արժանի ըլնիս:

— Ա՛մէն, ամէն, Աստուած բերանիցդ լսի, ասաց փեսեղ-

1 Քայլերը լայն դնելով անցնել. 2 Որպիսութիւնը. 3 Կարիճ. 4 Խը-
զըտում.

բայրն ու մեր տղայքը գնացին խնամոնց բոլոր բարեկամների պատը
ընորհաւորելու:

Ամէն տեղ էլ նորափեսան ու խաչելբայրը մի մին դոյդ ջորաբ
տանում էին, իսկ փեսեղբայրը մի քանի տան միայն արժանացաւ
պարգևի:

Սահակն իւր աներանց բոլոր բարեկամների անները մանգալուց
յետոյ՝ սկսաւ իւրեանց ապգականներին էլ տեսութիւն գնալ. բայց
էլ պարգևի թոզ չսպասեն. այդ պատիւը միայն նոր խնամոնց մնա
կը տեսնէին:

— Շատ ուշացանք, մի երկու երեք տուն էլ գնայ, ոնց որ
ըլլի պրծնենք ու տուն գնանք, ողէք, հատատաս ձըրթին վերջացած
կըլլի, մեղ կըլըլին սպասում, անօրինաց նորափեսայն:

Ինչպէս ասացինք, այսօր Սահակենց տանը մեծ հանդէս կար,
բաւականին տղափ աղջկէք ու ջահել հարսներ հրաւիրուած էին:
Սրանց միջին չէիր գտնել միայն այս տարուայ պսակուածներին,
այսպիսիների բոլորի աներուն էլ ձըրթի կար: Սրանք այսօր իրանց
տանից դուրս չէն գալ:

Հացատան երիկի փայտիցը կապել են մի պարան և ամէնքը
հերթով ձըրթի են ընկնում: Ամուսնացածների ընկնելու ժամա-
նակը ոչինչ հետաքրքիր բան չկայ. մի քանի անգամ ձըրթու մէջ
նստած՝ կը ձօձեն ու կիջնեն: Տեսարանն աղափ աղջիկների ձօձելու
ժամանակն է. սրանք էլ պիտի աւարտեն, որ վերջումը նորափեսէն
ընորհաւորելու տեղերից վերապատնայ ու իւր նորահարսի հետ ձը-
րթի ընկնի:

— Ախկէ՛ք, հարսները պրծան. հիմի դուք սկսեցէ՛ք, շո՛ւտ,
որ տեղ որ ա՝ փեսէն տուն կընկնի, անօրինաց սանահիկինը:

Երկու օրիորդ աւելի վատահնելիցը՝ մի մի ձիպոտ ձեռքներին
կանգնել են ձըրթու այս և այն կողմը: Մի ուրիշ աղջիկ էլ քա-
մակիցը յատաջ է հրում պարանի վերայ նստողին և սա օդումը
ձօձում է:

— Ընչանաձիպ անուն ի՞նչ ա, խփում են ձիպոտով ձօձողին
ու հարցնում:

— Ամա՞ն, ամա՞ն, ամա՞ն:

— Որ կարուի՛ս՝ պաի ասես, ձիպոտը վրեդ կը կոտրեմ:

Մինչև որ ձօձողը որ և իցէ ազափ տղայի անուն չտայ, նրան
կը խփեն:

Ձըրթու տաք ժամանակն է, նորափեսի գալը մոտ է, աղջ-

կէրքը շաապում են շուտ ճրագի ընկնել ու պրծնել, որ չըլնի թէ տղէքանց մօտ նշանածի անուն ասել սիպտուին ու խայտառակուին։

Ամէնքը ուրախ են։

Այդ միջոցը ոչ ոք չնկատեց, որ տան մուրճն անկիւններից մէկում երկու աղջիկ երես երեսի նստած՝ ձեռքերը կզակներին դէմ առած՝ կամաց քչփչում են։

— Ախչի՛, ամօթ ա, հերիք լաց ընես, աչքերդ կարմիր տակ են դառել, լա՛՝ որ ամէն մարդ իր քէֆի հոգսումն ա, մեզ միաք բերող չկայ, քեզ մատա՛ղ, թէ ինձ սիրում ես, աչքերդ սրբի՛, հիմի էն անզգամ Զանազանն ամէնքին էլ կը պրծացնի ու փէսը ձեռին կը դայ գլխներիս ցից կըլնի, հօ փախչել չե՞նք կարող, կարգ ա, պոի ճրագի ընկնենք. էս օր էս մարդկանց տանն ուրախութիւն ա, հօ մենք սրանց քէֆը հարամ չե՞նք կարող անել։

— Զէ՛, ես կը մեռնեմ ու Սմբատի անուամը չեմ տալ, ախար սրտիցս պոի բզխի, որ չի ըլնում, ի՞նչ անեմ, ո՛ր կլաին ընկնեմ, դու հէնց միշտ մեղադրում ես ու զօռ անում, որ սիրեմ, շատ էլ լաւ տղայ ա, որ կպչում չի՛, որ չե՛մ սիրում։

— Ախչի՛, քանի՞ ասես, բառեղ դրա վախտը չի, դեռ մի աչքդ սրբի՛ ու պատրաստուի. թէ կուզես ըսկի Սմբատի անուամն էլ քիրդ սրբի՛ ու պատրաստուի. թէ կուզես ըսկի Սմբատի անուամն էլ մի տալ, որ կը հարցնեն՝ ասա — Կիրակոս, պրծանք՝ գնա՛ց։

Էդ դու կարող ես՝ որ ազատ ես, համա ես ի՛նչ քարը քցեմ դլխիս, իրեք տարեկան անլեզու երեխայ եմ էլել, որ իմ հէրս դլուխս կապէլ ա, սև բարիկենդան ըլնէր էս օրն իրանց դլխին, ինձ էլ իմ ախպօրանց ծոցը դրած պրծած ըլնէր, որ իր քէֆի համար մի մառը երեխէքանց դլուխը կապէր ոչ. եարա՛ր էս ի՞նչ անօրէն սովորոյթ ա, ծծի երեխին էլ բաշիք ետրթմայ կանե՞ն։

— Դէ ուրիշը հօ չի արել Հեղնար Ջա՛ն, քո հէրը քեզ վըրայ իրաւունք ունէր, հիմի օ՛ր ապջիկն ա իր սրտի ուզածին դըներում։

— Էդ ա է՛, որ տատալի[1] պէս անկաջներիցս բռնած՝ ուր ուզում են՝ տալիս են, ապջկերանց սրտին էլ հարցնե՛ն։

— Բազդաւոր կըլնին ամէնքն էլ, թէ որ քո նշանածի պէս տղէ թուշ ըլնէին[2], ասենք՝ դու ես, որ քո բազդին քացով տաս լես ես։

— Շատ լաւ ես ասում, Հերիքնազ Ջա՛ն, համա որ սիրում չեմ։

1. Անասունի։ 2. Դիմաւորէին։

— Լա՛ւ, լա՛ւ. հէ՛րիք ա, Հեղնար Ջա՛ն, դարդերդ էս տեղ աշլայ անելու[1] տեղը չի. ինձ յայտնի ա, թէ ընչի՛ չես սիրում, գիտենամ՝ թէ դու նրա մէջն ի՞նչ ես տեսնում, մի իմանանք տեսնենք, թէ Արշակը քեզ ա սիրո՞ւմ, թէ քո հարստութիւնը։

— Ամո՞ն, ոտիդ տակին մեռնի՛մ, Արշակի համար էդ խօսքերը մի՛ ասիլ, նրա մի ղունգը հարիր Սմբատ աժի, նա օրթումն կրակն ա ընկնում, որ մի շապկանց էլ հէրս կուտս բունի երան տայ՝ ուրախութիւնով ինձ կառնի։

— Դէ լա՛ւ, լա՛ւ, աչքերդ սրբի. վայ կիրանամ, տեսա՞ր ինչ արինք, էնքան նստեցինք, որ նորափեսէն տուն եկաւ. հիմի ի՞նչ պոի անես. գլխովդ պոիս գնա՛մ, Հեղնար Ջա՛ն, մեզ թողք չանես, ուզես չուզես՝ պոի Սմբատի անուամը տաս, ինքն ա փէսախպերը, դլխավերևդ կաննած պոի ըլնի, հօ կարալ չե՞ս խալխի միջին տղի անուամը կոտրիլ։

— Ինձ որ մորթեն, ճրագի չեմ ընկնիլ։

— Էդ ըլելու բան չի, հրե՛ անզգամ Զանազանը մեզ տեսաւ, երևուամ ա փուչ կենդանին զաատի[2] չէր մեզ կանչում, ընչանք Սմբատի գալը։

— Ելէկէք, Հեղնա՛ր, Հերիքնա՛զ, գրողի մաիցն ընկնիք դուք, ծիծաղելով յառաջ եկաւ Զանազանը, վեր կացէ՛ք, եկէք ճրագի ընկէ՛ք, դուք էք մնացել, հարս ու փեսէն պոի ընկնին, հաց պըռի քաշեն։

— Ես որ մեռնիմ, ճրագի ընկնողը չեմ։

— Զանազան Ջա՛ն, քեզ մատաղ, մեզ ազատի՛, ասաց Հերիքնազը։

— Որ կարուիք, ձեռք քաշողը չեմ, սրանց տե՛ս, չեն ուզում տղէքանց մօտ ճրագի ընկնել, հազիր Հեղնարի նշանածն էլ փեսախպերն ա, ինքն էլ բառեղ ա, նշանածի անուամն ասիլ տամ, որ սրտին օխտը թիզ եղ կանի։

— Զանազա՛ն, Զանազա՛ն, դէ էլ ո՞վ մնաց, բեր պրծացրո՛ւ, ձայն տուեց տանտիկինը, ամէն տեղից էլ խօնչէքն[3] եկել են, հաց պոի քաշենք։

1 Ծայռանելու։ 2 Դիտմամբ։ 3 Փայտեայ երկար ափսէ, Բայց խօնչայ գալ կամ բերել նշանակում է այդ ափսէներով կերակրեցէն կամ մըրգեղէն ընծայ ատանալ։

— Էս ա պրծել եմ, մնացել են Հեղնարն ու Հերիքնազը, սրանք ամանչում են, չեն ուզում ընկնել։

— Վա՛յ ես թուք ընկնիմ, պաս երկուշաբթի օրն աղաչ աղաչ ջիկը որ ձլորթի չընկնի, նրա բազդը կը կապուի, ակէ՛ք, բալէ՛ք, ես բոլը չանգռելով մօտեցաւ Նորափեսի մայրը, կարգ ա, մի՛ ամանեք, չէ՛ք, շուտ արէ՛ք, հաց պաի քաշուի, խալխը սոված կոտորուեցին։

— Գնա՛նք, ձար չկայ, ասաց Հերիքնազն ու Հեղնարին, հառմարեա, քարշ տալով մօտ բերեց ու ինքը ձլորթու պարանի վերայ նստեց։

— Նշանածիդ անունն ի՞նչ ա, ծխլտոտով խփեց Զանազանը։

— Մուկուչ։

— Քանի՞ տարեկան ա, ո՞ր թաղումն ա կենում։

— Քսան տարեկան, Սրբ Մայրամի թաղումը, ասաց ու պըրծաւ Հերիքնազը։

— Հը՜, հը՜, հը՜, ծիծաղեցրին ամէնքը, Խումբօղլունց Մուկուչը կըընի։

— Դէ՛ պրծի՛, Հեղնա՛ր, էլ նազ ու դուզ[1] չի հարկաւոր, նստի՛ պարանի վերայ։

Հեղնարը գլուխը կրծքի մէջն է կոխել և ոչինչ չի պատասխանում։

— Շո՛ւտ, շո՛ւտ, աղջի՛կս, դու էլ հօ նշանածիդ անունը նոր չպաի՞ միտք անես, Աստուած գլխիդ սաղ պահի, թաղաւորի պէս Սմբատը կողքիդ կանանած ա, ով նոր պաի նշանուի, դու մի մտան երեխայ էիր, որ էդ բազդին ախրացել ես, քաջալերում էր ամուսնիկը։

— Լա՛ւ, ամանչիլ մի՛, Հեղնա՛ր, յառաջ եկաւ Նորափեսան, Սմբատի երեսը կը ծածկենք, որ չտեսնի։

Խաչերպայրն իւր գլխարկը դրեց Սմբատի երեսին։

— Ախէ՛, թուք էլնիք, դէ՛ ընկիր ու պրծի՛ր, Հեղնարի առանջումը փափաց Հերիքնազը, հօ ձեռ քաշողը չի՛ն։

Հեղնարն անզգայաբար նստեց ձլորթու պարանի վերայ. մի աղջիկ քամակիցը հրեց։

— Նշանածիդ անունն ի՞նչ ա, վեշերին խփեց Զանազանը։

— Սմբատ. հազիւ լսելի ձայնիւ պատասխանեց Հեղնարը։

1 Նազ անել։

— Բարձր ասա՛, չի՛նք լսում, խփում է Զանազանը։

— Սմբա՛տ, մեքենաբար ձայնը բարձրացրեց Հեղնարը։

Բարձրացաւ ընդհանուր ծիծաղ։

— Քանի՞ տարեկան ա, ո՞ր թաղումն ա կենում, էս սհաթս էնէն ո՞ւր ա, շուտ ասա՛, թէ չէ ձիպոտը միջ-քիդ փշրուում եմ, շո՛ւտ, կաշիդ հանեցի՛ր։

Հեղնարը լուռ էր։

— Ախէ՛, դէ ասա ու պրծի, քանի՞ տանջուիս, խրախուսեց Հերիքնազը։

— Քսա՛ն տարեկան ա, Փիլումենց քուչո՛ւմն ա կենում, էս սհաթս էտեղ կանանած՝ իր նշանածին մոիկ ա տալիս ուրախանում, յուսահատաբար ձայնը բարձրացրեց Հեղնարը։

— Ապրի՛ս, ապրի՛ս, ղօրանա՛ս, քրքջալով ծիծաղեցան ամէն կողմից ու Սմբատի ականջը Նորափեսան քաշեց։

— Ախին էլ էս արժան, Սմբա՛տ, ասաց խաչերպայրը։

— Ուր իմ բազդն ա, պարծեցաւ Սմբատն և աչքերը Հերիքնազի երեսին ձգելով՝ խոր հառաչեց։

— Տեսնո՞ւք, մրմռաց Հեղնարն և իջաւ ձլորթուց. իսկ այս բառը միայն լսեց Հերիքնազն և Հեղնարի կռնից բռնած՝ քաշուեց նախկին անկիւնը։

Ըփսո՜ս, մենք վերջումը Հերիքնազի երեսին չնայեցանք, ապա թէ ոչ կը նկատէինք այն փոփոխութիւնը, որ եղաւ նրա վերայ Սմբատի աչքը պարզնելուց յետոյ. գլուխը կորացրեց Հերիքնազն և ձեռքն երեսին դրած՝ իւր ճակտիը սաստիկ կծեց ու Հեղնարին քաշեց։ Փոփոխութիւնն տրտիական էր, Հերիքնազն իւր բնական դիրքն ստացաւ։ Եթէ չեմ սխալուում, ոչ Հեղնարն և ոչ ինքը Սմբատը նոյնպէս չնկատեցին Հերիքնազի այլայլմունքը։

— Դէ էլ մի՛ ամանչիլ, մօտ արի՛, ձայն էր տալիս Նորափեսայ Սահակը ձլորթու մէջ փառաւոր բազմած։

Ջանազանը քարշ էր տալիս կարմիր քօղը ծածկած մէկ հարսի դէպի ձլորթին. վերջինս թէպէտ յետ յետ էր ընկնում, բայց երեսուր էր, որ մի ոտքը թոյլ էր. մօտ էր գալիս։ Վերջապէս Ջանազանը նրան գօտուց գրկեց, Սահակի կողքին պարանի վերայ նստացրեց, մի սիրունիկ փոքրիկ երկու տարեկան տղայ էլ մեր առմէթաճի դոզին նստացրեց. աղջիկները քամակներից հրեցին ու ձլորթին սկսաւ ճօճել։

Տանջականները սկսեցին ծիծաղել, իսկ ամուսնիկները մէջքը

տան սիւնին թիւնկնած՝ մոխիկ էր տալիս օդի մէջ ճօճողներին և ասում. — բարո՜վ եկող տարի էս վախտ ըտէնց մի սիրուն տղաճուտ[1] էլ դուք ունենաք, ձեր ջանի՜ն մեռնեմ:

Ճլորթու մէջը նորափեսան և նորահարսն էին, իսկ այս մանուկը տուած էր նրանց դիրկը, որ անդրանիկը տղայ ծնի:

— Դէ պրծի՛, դէ շո՛ւտ, ճիպոտը Զանազանի ձեռքին առած՝ մօտ եկաւ Սմբատը նորափեսին, պրծի՛ թէ չէ մէջդ դադղըրիկ ածեցի:

Նորահարսն ուզում էր վայր իջնել փախչել, բայց մեր երեսը պատռած Սահակը ձեռքը ձգեց իւր խեղճ հարսի վզովն ու երեսը համբուրեց:

Ղափ աղջկէքը կարմրատակած պատերի տակը քաշուեցան, ջահել ամուսնացածներն իրանց մէջին ծիծաղեցին միմեանց նայելով, խաչեղբայրն ու փեսեղբայրն էլ դոռացին— անո՛շ:

— Աեանքներդ խո՛շ, պատասխանեց նորափեսէն և ճլորթուցն իջաւ:

Սեղանը քաշեցին ու ամէնքն էլ կարգով շարուեցան: Ուրիշ օրեր մեր աղջկէքն ու հարսները տղայ մարդկանց երեսն էլ տեսնելով կամաչէն, թող թէ միասին ճաշէն, իսկ այսօր անպատճառ դրանց սեղանակից պիտի լինէին նորափեսան իւր խաչեղբօր և փեսեղբօր հետ:

Սեղանի վերայ մօտ եկաւ պատուց տօլմայ, էորացրած կանաչ պոլոճիկի բորանի, դղմի էիր, կարմիր լաջաճ պոլոճիկ, շիրբաղաի ձիթով տապակած աղցան, զաբ՝ չամչով ու քաղցրեղէնով շինած փլաւ և ալիւրի մէջ տապակած բոխ: Ընդ ամէնն եօթը տեսակ կերակուր:

Ընծանօթն էլ կարող էր նկատել, որ այս ուտելիքները զանազան տեսակ են եփուած: Այս այն պատճառաւ էր, որ այսօրուան կերակուրները՝ բոլորն եկած էին նոր խնամիների տներիցը, ուր տունը որ այսօր նորափեսան շնորհաւորէք էր գնացել, մի մի խօնջայ՝ եօթը տեսակ կերակրով՝ ուղարկել էին նորահարսին բաժին, հետն էլ մի մի գաւ թերմուն[2], իսկ նորափեսէն իւր կողմից հրաւիրել էր իւր անիրօջ կողմից նոր խնամացածների ջահելներին նորահարսի հետ պատ բռնելու:

---

1 Տղայ զաւակ, 2 Գինով և մեղրով կամ քաղցրով եփած ըմպելիք:

Ղղջկնկերի պատճառաւ մեր սեղանակից պարոններն այսօր գինի չխմեցին, թերմունով միայն բաւականացան:

— Ախչի, դէ հայ էլ ա կէր, ի՞նչ ես խզռնուել[1], փըսփսում էր Հերիքնազը Հեղնարի ականջումը, սաղ օրը բերանդ նըշխարքի կտոր չի մտել:

— Զօռ ու ցաւ ուտեմ, հիմի էլ պտի զօռ անեն, թէ Սմբատի կուռն ընկի՛, եալլի խաղա:

Պտի խաղաս, կամ չպտի գայիր, կամ եկել ես՝ կարգը չպտի կոտրես, դու ըստեղ վիրի արտի ցորեն չես:

Ընկի միտս չէր, որ սրանց փեսախաչերը Սմբատն ա, դու էլ լկուեցիր, բան չասեցիր, թէ չէ զաստահիւանդ[2] կը տայի, տանը վէր կընգնէի:

— Ւմ էլ միտս չէր:

— Գիտեմ, Հերիքնազ ջա՛ն, ինչ կայ, ես ուզում եմ, որ Սմբատին էս օր մի տեսակ հասկացնեմ, որ ինձանից ձեռը լուանայ. էս հօ մարդ խաբել չի, էս Աստուած խաբել ա, մի մարդի չես սիրում ու նրան ումուտով ես անում, որ իր կնիկը պտի դառնաս. ուզում եմ եալլու մէջը կուռն ընկնեմ ու կամանց իրան ասեմ, որ իր կորածը մեզանում չկայ:

— Վա՛յ քօռանամ ես, գժուել ես ինչ ա, դու քո հօր անումը աշխարհքի միջին մի մաղը մեղրի հետ կը հաւասարես, ու էդ տղի էլ գլուխը կը կարես:

— Ւես ի՞նչ անեմ, խի՞ չի իր ոտն իր կարպետին մեկնում, իր չափը ճանանչում, իր երեսի ջրովը հեռանում, ի՞նչ անեմ թէ հէրս բաշիբաշ թամայ ա արել, երեխայ վախտն էգպես բաներ հանաքուց շատ կը խօսան. սաքի ինքը գիտի ոչ, որ ես ո՞ր տեղ՝ ինքը ո՞ր տեղ, իմ հէրը, մեր հարստութիւնը ո՞ր տեղ՝ իր հէրն ու իրանց անումը ո՛ր տեղ. ինքը չի տեսնում, որ իմ հօր դռանն իրանից լաւ նօքարներ[3] կան, չի տեսնում, որ ես ո՛նց եմ հետը վարուում, երբ որ մեր տունն ա գալիս. ի՞նչ անեմ, դու ես բեռնս փակում, թէ չէ ես վաղուց շեմքը շանց տուած կընկնէի:

— Ա՛հա Հեղնար, էլի դու երեխութիւններն սկսեցիր, Սմբատի կոխած հողն ափսոս ա, որ մեր գեղի բոլոր տղէքի երեսին քսեն, դու մի հաց պտի ուտես, միևն էլ մատաղ տաս, որ Աստուած քեզ. էդ բաղդին տիրացրել ա, համա հիմի տեղը չէ, լաւն էն ա՝ սուս

---

1 Լռել, 2 Սուտ հիւանդ, 3 Ծառաներ:

կենանք: Իմ խնդիրքս միևնակ էս ա, որ դու քեզ էս օր լավ պահես, հէնց որ Սմբատը կը գայ, կուդի կուգնի բռնել եալլու խաղալու, հանգիստ ձեռդ իրան տուր ու խաղա՛:

— Ասել ա, թէ Աբշակին իմ սրտից հանելմ էլի՛:

— Չէ՛ մատաղ, չէ՛, ըտուր ժամանակը չէ, դու էտոնք քեզ լաւ պահի՛:

— Ալը մեռնիմ ու խօսքս կը կատարեմ, քո սիրած Սմբատի վրայ կը տաքացնեմ, մաքուռն ասաց Հերիքնազը, թէ կուզ ինձ կեանք նստի:

— Հերնարը հետս եալլի պտի խաղայ թէ չէ, մտածեց Սրմբաթը Հերիքնազին հացից յետոյ:

— Իրնէ՛կ տամ դու էդ կասկածները չունենաս, Սմբատ ջա՛ն. խի՞ չի խաղալ:

— Ա՛խ, Հերիքնա՛զ, դու իմացա՞ր, որ ձըրթու մէջն ինձ մոլթեց, էլի դու նրա դիհը պահում ես, էլի ասում ես, թէ ինձ սիրում ա:

— Թէ որ սիրէր ոչ, ընէնց համարձակ բարձր բարձր, տեղն ու տեղը անուամ կասէր:

— Տեսար ոչ ի՞նչ ձէնով ու սրտով էր ասում, ասենք ուրիշները ոչինչ չհասկացան, ես հո երեսի ոանդը տեսայ, բարկութիւնից կապրտել էր:

— Ոչինչ, Սմբատ ջա՛ն, թէ ինձ սիրում ես, իմ խաթեր չըտեսնելու պտի դնես:

— Գնեմ սիրում ե՞մ, ասայ Սմբատն ու գլուխը կախ քցեց:

Տեսնես, խոստմունքդ միտդ բեր, աչքերն ոլորեց Հերիքնազն և ցուցամատը շարժեց Սմբատի վերայ:

— Էդ երջանիկ տղայ, ասայ խաչերդայրը նորահարսին, մեր Սմբատին տե՛ս, մի կուռը հարուստ նշանածն ա քցել, մէկել կուռը հրեշտակի պես քենուն ու եալլի Թուրում:

Ժ.Գ.

ՀԵՂ. ՆԱՐՆ ՈՒ ՀԵՐԻՔՆԱԶԸ, ԿԱՄ ԳՈՂ՝ ՍԻՐՏԸ ԴՈՂ.

Գիւղական կեանքի պատկեր նկարագրելու համար շատ պայմաններ են հարկաւոր: Այդ մարզկանցը ոչինչ աշխատութիւն չի

պէտք. բաւական է, եթէ երկու երկք տարի ապրելով ու և է գիւղում մարդ ծանօթանայ նրանց վերաբերմունքին, նրանց տարեկան գործերի հետ: Այսքանով հետաքրքիր բանասէրը կարող է իւր նպատակի մի մասին հասնել, մանաւանդ եթէ ինքը տեղացի է, բնիկ է, ոչինչ արգելքների չի հանդիպիլ:

Մեծ դժուարութիւնները՝ չասեմ անկարելութիւնն ամէն մի քայլափոխում շուարեցնում է գիւղացու միւս կիսի հետ մօտիկ ծանօթանալ ուզողին: Կանանց բնաւորութիւնը ճիշդ պատկերացնելու համար պէտք է կին ծնած լինել, կին սնած՝ կին մեծացած:

Պատճառները շատ պարզ են, հայ քաղաքացի կինը մեզ համար մի անմատչելի անձնաւորութիւն է իւր ծածկուած բնաւորութեամբն և փակուած կեանքովը, ո՛չ միայն գիւղացի կինը, որի և այլ մարդու մէջ մի չնչին պարիսպ կայ:

Աղջիկը որ կայ, անկարել ձմերուկ է, ասում է առածը, իսկ ես կասեմ՝ այլ մարդու համար գեղեցիկ սեռը ոչ միայն անկարել ձմերուկ է, — նա մի երևակայական աշխարհի բնակիչ է: Մենք թողունք ամուսինները, որոնք բնական և Աստուածային օրէնքով պարտաւորուած են մինչև մահ անբաժան լինել: Եթէ մի փոքր խոր քննենք, մեր եղբակացութիւնը մինչև ամուսնական առագաստն էլ կը թափանցի: Շատ յետ ընկած գիւղերի մէջ կինն իւր մարդու համար քանի մի տարի նոյն անկարել ձմերուկն է:

Այսպիսի երևոյթներն այժմ արդարև հազուագիւտ են, բայց երկք չորս տասնեակ տարիներ սրանից յառաջ այնպիսի իրողութիւններ են կատարուել, այնպիսի գործողութիւններ են պատմուում ականատես ծերունիներից և պառաւներից, որ մեզ միանգամայն անհաւատալի է թուում: Կինը մինչև որդի ծնելը իրաւունք չի ունեցել իւր մարդու հետ խօսել. անդրանիկ զաւակի առաջին ձիչը պատառել է իւր մօր լեզուի կապանքն, և այդ մի կողը ընչաւորուած միայն իրաւունք է տուել իւր ծնողին սրտի ուրախութիւնն իւր լեզուով արտայայտելու իւր թանգագին կիսին՝ իւր սիրելի ամուսնոյն, և այն՝ հեռի ամէն աչքերից՝ ամէն ներկայութիւնից:

Թողունք՝ որ տան արական սեռի անդամները մինչև մահը չեն լսած եղել իւրեանց հարևոր հարս ու աղջիկների ձայնը, չեն իմացել՝ ունի՞ն նոքա Աստուածային պարգևներից մինը — խօսելու ընդունակութիւնը, պարզ ասել՝ համր են նոքա՞, թէ խօսուն, թողունք այս ամէնն և ասենք, որ այդ թշուառ արարածներն Աստուծոյ լոյսին էլ երկար տարիներով զրկուած են եղել, եօթը երկար

տարիներ նրանց երեսից չի վեր կացել անթափանցիկ կարմիր մառախլայ քողը, որ կրել են նրանք հարսնութեան առաջին օրը, արեգակի կենատու լոյսը չի լուսաւորել նրանց հրաշագեղ դէմքը։

Որ ըստ օրէ, պիղծք թևթևացել է այդ անհաւատալի, բայց իրօք ճշմարիտ սովորութիւնը, բայց կարելի չէ ասել, թէ բոլորովին անհետացել է. նա կայ, միայն ինչպէս ասացի, թևթև չափով և ձևակերպուած։

Նոյն հարսներն են երեսը ծածկած՝ միայն բարակ քողով և ոչ այնքան երկար տարիներ, նոյն չհնազանդութիւնն է՝ սակայն սկզբնական տգրների, չափահաս տղաների և օտարականների դէմ, մի խօսքով նոյն գերութիւնն է, որ ասել է, թէ մեր կինը էլի նոյն անկըրպել ձմերուկն է։

Իրողութիւնն այսպէս լինելուց յետոյ, խօսք չկայ, որ մեծամեծ դժուարութիւնների և ինչպէս ասացի անկարելիութիւնների պէտք է հանդիպի աղջկանց և ջահել հարսների կեանքը ճշդապէս նկարագրել ցանկացողը։

Մի բան միայն կարող է հեշտացնել սակաւ մտաւորների համար այդ կէտը։ Պէտք է ծնած՝ մեծացած և մանկութիւնից փոքր ինչ կրթուած լինել գիւղի մէջ, որպէս զի մանկական սուր յիշողութեան մէջ տպաւորուածը մարդ կարողանայ ժամանակին արտայայտելու, կամ թէ ամենից լաւագոյնն պէտք է գործ դնել։

Հարկաւոր է գրաւել մի մեծաւոր ազգական ժրագլուխ կնոջ համակրութիւնը, որոշեալ տան օրերից մէկում տիպել նրան, հրաւիրել իւր մօտ գիւղի բոլոր ջահէլներին՝ աղախ աղջիկներին և հարսներին և դարան մտած՝ դիտել նրանց բոլոր շարժողութիւնները։

Եթէ ընթերցողի ուշադրութիւնը դրաւելու շնորհքին արժանացել է իւր խօսակիցը, ապա խնդրում է բարեհաճել մնալ իւր հետ մի այդպիսի հրաւէրքի ժամանակ, դիցուք, էլի մեծի պահոցը, փետրուարի 13-ին Տեառնընդառաջի նախատօնակը երեկոյին մի մուխը յարկի տակ, ուր իւր քթին պէտք է դիպչէին իւղի, բուխի, բազկաթանի, զաւուրմի[1] և զանազան բոնուացքների ու թըթունների աքաղներից[2] ու կարասներից բարձրացած անուշահոտ բուրմունքը։

---

1 Աղած միս, 2 փոքրիկ կարաս։

Այո՛, իմ քեռուս աղջիկ սիրելի Նանօն ուրժանացրել է ինձ ու քեզ այս բարեբաղդութեանը։ Նա այդ օրը պատճառ ունէր իմ խնդիրը յարգելու. նրա տղէն այդ տարին էր պսակուել, նա իւր որդուս դրնդէզն[1] էր կատարելու։

Նրանց կոերը նախապէս պատրաստուած էր դրնդէզը, որին մի խոտի վրան կարելի է կոչել։ Մի քանի փայտեր միմեանց դէմ տնկուած են վեղարաձև և վրէն չոր խոտով ծածկած։

Մէր Նանօյի տղայ Աղօն այդ երեկոյին Աշտարակու բոլոր նոթաբեռանների հետ եկեղեցումն է. այսօր ժամն էլ դուրսն են ասում։ Եկեղեցու բակումը մի ահագին դրնդէզ է շինած, որի շրջակայքը նորափեսայքը մի մի մոմ բռնած՝ բոլորուած են։ Երբ «Ի բ ր խ ո տ ո ս փ ա ռ ա ց Թ ա գ ա ւ ո ր ն» երգեցին, տէրտէրն առաջինը մօտեցաւ դրնդէզին և վառեց. մօտեցան նորա հետ և բոլոր փեսաներն ու խոտը վառեցին։ Հուրը բորբոքուեց և ժամատրների ջերմեռանդութիւնը կրկնապատկուեց։

Ժամից յետոյ նորափեսայքը նոյն մոմերը ձեռքին առանց հանգցնելու իւրեանց խաչեղբօր ու փեսեղբօր հետ եկան բարձրացան իւրեանց կոուրներն և երեք ծունր կրկնելուց, ու իրանց է յայտնի, թէ ի՞նչ մուրազ անելուց յետոյ վառեցին իւրեանց դըրընդէզները։

Նորահարսներին առաջուց չարսաւատրուած կանգնացրել էին կոերը. դրնդէզը կպցնելու պէս ամէն փեսայ բռնեց իւր սիրելի հարսի կուռն և երեք անգամ վառուած կրակի գլխովը պտոյտ եկաւ։ Այդ քառանքակոխ չըընելու համար է։

Մանր երեխայքն էլ, որոնք կտրները լցուած՝ առաւօտները սըրած՝ փոխինձ ուտելու էին սպասում, նրանք էլ անվախ թռչկոտում էին բոցավառ կրակի գլխովը։

Մի հիանալի տեսարան էր ներկայացնում այդ երեկոյ մեր գիւղը մօտիկ հանդիսատեսին. երկինքը շատ պատնել է, լոյսը միևնոյն հորիզոնն է խփել ու խառնուել երեկոյեան վերջնալոյսի հետ, իսկ այդ մի և նոյն բանը մի զարհուրելի պատկեր է հեռուից դիտողի անծանօթին. այլապէս չի կարելի երևակայել, եթէ ոչ մի ահագին հրդեհ ամբողջ գիւղը բռնած. չի հարկէ այս երկիւղը մի քանի

---

1 Դրնդէզ, կարծեմ, պէտք է լինի Տեառնընդառաջ բառի աղաւաղումն։

րոպէ միայն կը տևէր։ Խոտը բունկուեց ու իջաւ առանց մեծ ծուխ պատճառելու։

Հրդեհը հանդչելուց յետոյ մեր Նանօն ցած տարաւ նորահարսին և վեր բերեց տեփերի[1] մէջ փոխինձը[2] քաղցրով շաղախած և գոնդ գոնդ բաժանեց։

Այս փոխինձը, որ բոված կամ աղանձած ցորենի երկանքով աղացած ալիւր է, տարին երկու անգամ անխափան պէտք է շաղախուի. — Սուրբ Սարգսի պահոց ութբաթի երեկոյին և այս դրնդէղի օրը։ Այն օրն առանձնապէս աղջիկների համար են շինում, գիշերը շաղախած թողում, որ Սուրբ Սարգիսը գայ իւր ձիովը վրայովին անցկենայ, իսկ այսօր դրնդէղի այցելուների համար է։

Նանօն վերջացրեց այս ծէսը, ձեռաց ընթրիք տուեց արական սեռի հիւրերին և ճանապարհ դրեց։

Ըսպարէզը հիմա մեր սիրուհիներինն է։ Ուրեմն ականջներդ սրի՛ր ու աչքերդ չորս բաց արա՛, սիրելի՛ ընթերցող, դուն ձեղքը բաւական է նպատակիդ հասնելու։

Լաւ դիտի՛ր, մի՛ վախիլ, դրսից քեզ տեսնող չկայ, ոչ ոքի մտքով չի անցնում, թէ հիւրասէր տան տիրուհին իւր սեռի դէմ այդպէս աննկարելի դաւաճանութիւն կանի, վատահ եղիր, որ դու այդտեղ տեսնում ես ոչ միայն Աշտարակու բոլոր սիրուհիների միացեալ արտաքին գեղեցկութիւնը, — դու մանակից ես լինում նոյնպէս և նոցա նուիրական գաղտնիքներին, նոցա սրտի մինչև խորքն ես թափանցում։ Մեր Նանօն երևելի քաղաքագէտ է, նա այնպէս յարմարացրել, այնպէս պարապացրել ու այնպիսի խօսքեր է ասել, որ մեր ամօթխած աղջիկներն անպիտութեամբ ինձ ու քեզ իրանց խոստովանահայրն են շինել։ Բայց ոչ ես եմ մեղանչում նոցա խոստովանքը պատմելով և ոչ դու լսելով, — ոչ Նանօն և ոչ մեր սիրուհիներն այդ ուխտը մեղանից չեն առել։

Եթէ Աշտարակու աղջիկների, չասենք բոլորը, գոնէ մեծ մասն այստեղ են, ի՞նչ կարծիք, որ մեր մի ժամանակուան Թոթովախօս անմեղութեան տիպար քնքուշիկներն, իսկ այսօրուան օրիորդութեան անմեղութեան տիպար քնքուշիկներն, հասակի մէջ մտած Հէղնարն ու Հերիքնազն էլ այստեղ կը լինին. նրանք ո՞ւմից են պակաս, մանաւանդ որ Խէչանենց Խէչանի տանիցն

1 Տեփուր՝ փայտէ բոլորակ մեծ ափսէ։ 2 Բոված ցորենի ալիւրից քաղցր հեղուկով շաղախած խորխոր։

են և սրանցից մինն էլ նշանած է։ Նշանած աղջիկը պէտք է այդպիսի տեղերը անպատճառ հրաւիրուի, թէ կուզ բարեկամ ևս չլինի։ Գիւղի մէջ ամէնքը միմեանց ծանօթ են, շատերն էլ այդուկամ տան մօտիկ հարևան են։

Նանօյենց հացատունը լիքը ղժվժում են[1], պատի հարսների գլխի ոսկիներն ու ազատ աղջիկների վզերի շարքերն աչք են խըտրեցնում, բայց՝ի հարկէ այդ մեղ չէ արգելում լաւ դիտելու, ուր ուզում ենք։ Նանօն այս երեկոյ իմ խնդրանօք մի երկու ձրագուէ մոմեր սովորականից աւել պիտի բանացնի. մոմակալներ թէպէտ ինքն երկուսից աւել չունէր, բայց չորս հատ էլ ուրիշներից փոխ ուղեց. տան չորս սիւներում խփած ձրագթաթների վերայ էլ ձիթի ձրագներ է դրել տունը շատ լուսաւոր է։

Մենք թողունք Հէղնարին ու Հերիքնազին երկու առանձին խմբեակների մէջ կատակներ անեն, մտնենք մի ուրիշ աւելի խոհական խմբի մէջ, ուր ջահէլ հարսներն են՝ ժողոված և կամաց կամաց իրար հետ խօսում են։

Սրանց բերանները պինդ փակող քնթկալը հիմա կզակների տակն է ընկած, ապա թէ ոչ իւրեանց ցածր խօսելու պատճառաւ մենք անձեռնհաս պէտք է լինէինք լսելու։ Լաւ նայի՛ր, ընթերցո՛ղ, սրանց քիթ ու բերանին, սրանց ծնօտներին, մենք այսպէս յաջող դէպք էլ չենք ունենալ։ Եթէ մինչև մեր վերջին օրն էլ սրանց հետ կեանք անցկացնենք՝, մի յարկի տակ ապրենք, կանացի գեղեցկութեան դլխաւոր մասի ներքին կէսը մենք չենք կարող տեսնել, ուրիշ ժամանակ մենք միայն գուցէ բաղդ կունենանք զմայլել սրանց կրակոտ աչքերի ու վառվռուն թշերի կիսի վերայ։ Ճակատը, յօնքերը շղարշի տակ են ծածկուած, իսկ քթի կիսից վայր այն անիծեալ քնթկալն է։ Երկու երեք տարուան հարսների քնթկալը գոնէ մի բաւականին բարակ սպիտակ շղարշէ, որտեղից, թէպէտ մեծ դժուարութեամբ, սակայն և այնպէս օրն անց է կենում, իսկ թշուառ նորահարսների քնթկալի վերայ իբրև զարդ աւելացրած է և մի ուրիշ տաղնեղործ ծածկոց, որին չալ օշմաղ անուն են տալիս։

Տե՛ս, ուրեմն, ի՞նչ սիրուն գծագրութիւն, ի՞նչ փոքրիկ բերան, ի՞նչ բոլորակ ծնօտ, ի՞նչ հրեշտակային պայծառ դէմք.

1 Խլրտում.

լա՛ւ նկատի՛ր, շատ անհնարին բացառութեամբ Աշտարակու կանացի սեռն ընդհանրապէս գեղեցիկ է։ Այս յիւնճանիից չեմ ասում, հայրենասիրական մնապարծութիւն չեմ անում. — մի հասարակուած ճշմարտութիւն է այս, որ նրևանու նահանգումն Աշտարակու օդը[1] ամէն տեղերից սիրուն ևն։ Աշտարակից յետոյ նշանաւոր են մի քանի ուրիշ գիւղեր. Քանաքեռ, Վաղարշապատ, Ցօղական և այլն։

Լսի՛ր ուրեմն մեր սիրուհիների գատողութիւնը, մեր նախածանօթ Հեղնարի և Հերիքնազի վերայ։

— Ախէ՛, ընդհարւ ևն ասել Աստուած ամէն բանով մարդի կորցնիլ չի, ամէն չնորհք եւ մի մարդի չի տալ, Հեղնարը ո՞րտեղ, Հերիքնազը ո՞րտեղ։

— Ի՞նչ բանի համար ես ասում, Մաթան ջա՛ն։

— Վա՛խ խի՛,[2] բա ըսկի տեսնում չե՞ս, Հեղնարը ոչ մի սիրուն պատկեր ունի, ոչ մի օրինաւոր խօսք ու զրից. հէնց խմնասա մրղէզ[3] էծ ըլի, ունքերը բարակ, աչքերը չաղ ու պսակի պսակիկ, թերթերանուքներդը դեղին, պինչ ու բերանը մենծ, չանին[4] երկար, շլինքը կարճ, դօշը նեքսե ընկած, մատներդը ցախի պես չոր չոր, բոյը բարդու պես լողլոդ[5], ես ի՞նչ գիտեմ, ո՞ր մինն ասեմ. մի կարմիր թշեր էլա չունի Աստու տուածից, որ մարդը պաչի ուրախանայ։

— Հողեմ գլուխդ, ախչի՛, դու ջլիս[6] խեղճին հողի հետ հաւասարեցիր, Հեղնարն իմ աչքումն էդքան դէշ չի։

— Լա՛, թող մի քիչ էլ քո ասածն ըլի, համա նկնկան[7] բնութիւնին ի՞նչ կասես, մենծասրտութիւնի՞ն ինչ կասես, տրամբուիլ կտոր կտոր ըլիլ, քարափնեղիցը վեր ընկնելուն[8] ի՞նչ խօսք ունիս, որ քինթը կէս գազ վերև ա բռնում, ոչովի հետ արժան չի տեսնում խօսելու, բերան էլ որ բաց արեց, մի լաղար[9] էլ չուս նի, որ մարդի բան հասկացնի. խ՛եղճ Սմբատ, ափսոս չի՞, էնպէս տղի կնիկը պիտ դառնայ սա։

— Ախէ՛, դու բաղդն ասա՝ բաղդը՛, խօսքը բա՛ղդն ա. էդ որ ըտենց ամէն բանով փնովում ես[10] հա՛, տեսնում չեմ, որ ինձ

1 Ընտանիք գերդաստան, գլխաւորապէս կանանց համար է ասում։ 2 Ընչի՞։ 3 Շիկագոյն։ 4 Ծնօտ։ 5 Անճոռնի բարձրացած։ 6 Բոլորովին։ 7։ Ոխակալ։ 8 Գոռոզանալ։ 9 Վայելչախօսութիւն։ 10 Պարսաւել։

ու քեզ համար, կամ իմ ու քու քուրը համար ըտենց գլուխ պատռոնդներ էլել են, ես կա՞ն։

— Տ՛օ, քեզ մատաղ, էդ Խէչանի դոլվաթներա, նրա անհատնում հարստութիւնն ա, որ էգուց Սմբատին պիտ մնայ, ըտուր համար են իրար գլուխ պատռում, թէ չէ Հեղնարի ընչի՞ն են կարօտ։

— Ը՛հ, կարեմ ես էդ ազամի աղէքանց աչքերը, մարդի կը նիկին էլ պտի կնիկ ըլի, թքած էն փողի ու հարստութիւնի վրայ, որ Հեղնարի պէս աղջիկը պտի բերի, ես որ տղայ ըլնէի, սաղ Աշտարակին էլ որ վռէն տայիս, Հեղնարին չէի առնիլ. Ջրառա՛ջ Սմբատ, ո՞նց պտի համերկի. էն հրեշտակի պէս տղի երեսը վեր կը բերի, դրա լեզուին ո՞վ կը դիմանայ։

— Բաս Հերիքնազը ո՞նց ա դիմանում։

— Ձէ՛, ախչի՛, ես Հերիքնազին հարցրել եմ. ասում ա Հեղնարի հէնց չըրթվրթոցն[1] ա, թէ չէ սիրտը շատ բարի ա. օրթում կրակն էր ընկնում Հերիքնազը, որ էսքան տարէն աղջիկ ևն, մի տան մենծացել ևն, մի տեղում քնել ևն, դեռ մի օր Հեղնարիցը չէի լսել թէ քամին դպա քեզ ըլի. ղրթա ա, ասում ա, մի քիչ իրա վրայ մենծ կարծիք ունի, համա էդ էլ չի ընկիլ, որ չունեցայ, ինքը հարստի աղջիկ ա, իր հօր ունեցած չունեցածի տերը։ Էս օրէն օրս նշանած ա, ասում ա, համա էլի ուզողները դուռը կոտրատում ևն. դրա սիրտը ես ճանաչում եմ, մարդի գնայ թէ չէ, ամէն բան կը մոռանայ, էդ քամինները գլխիցը դուս կը գան։

— Բաւական ջա՛ն, էդ Հերիքնազի բարեսրտութիւնն ա ասում. դու ի՞նչ գիտես, էդ Աստու քաղցր խնամքին ա, որ Խէչանի տանը էդ աղջիկը բհամա ևկել[2], թէ որ Հերիքնազը չըընէր, Հեղնարը կապուտիլ չէր. արմայքի բան ա, էսքան հօ բամբասում ենք Հեղնարին, համա տե՛ս, թէ մի օր Հերիքնազի խօսքիցը դուս գալի՞ա. մենք դռնէդուռը հարեւան ենք, ամէն օր ջրի գնալիս, եա քուչէն սրբելիս իրար տեսնում ենք. քանի Հերիքնազը դուս չի ևկել Հեղնարը հետներս ձէն էլ չի տալիս, բարի լիս, բարի առաւօտ էլ չի անում, համա հէնց նա երեւայ թէ չէ, մեղը ու կարագ ա դառնում, ասում, լսում, ծիծաղում։

— Ախէ՛, ասում են էդ ծակծկոտուելուն Սմբատին չի սիրում, Շունհետաձոզենց Ալշակի հետ ա իրանց դրիջակովը[3] սի-

1 Մեծախօսութիւն։ 2 Ցառաջ է ևկել։ 3 Երկու հարեան տների պատի մէջ մի փոքրիկ ծակ։

լե բիլե [1] անում. ասում են, սաքի էն աներևս Արշակն էլ գնում տղէքանց միջին պարծենում ա, որ Հերինարին ինքը պոի առնի:

— Զէ՛, սուտ կըլնի, հաչացող Թագվին [2] հորս չի կարող առնիլ հորս անողը տազ կանի, ասկնահան իր բանը կը շինի, Արշակը թէ որ առնելու միաք ունենայ, մենծ մենծ բրթբրթալ չի [3]:

— Սաքի Արշակը հօ չի՞ մնակ դրա ուզողը, օրը հարիր խընամխօս ա գալիս, գարթնէ [4] մեր գեղեցը, ասում են տաղ մհալը դրան ուզում են, ընչանք մենծաւորներն էլ են գլուխ բարձրացրել:

— Էհ, քանի՞ ասէ՛ք, էն ա ամէնքն էլ հացահաչ են տալիս էլի՛:

— Համա ի՞նչ կանես, որ Սմբատն էս բանում բաղդաւոր ա, ասում են, Խէչանն ըսկի գլուխը տակը չի տալիս, ամէնին էլ դուռն ա շանց տալիս:

— Փառքիդ մեռնիմ Աստուա՛ծ, հացն ընչե՞ր չի անում, ո՞վ էր լսած, որ մենծաւորը գեղըցու աղջիկ ուզի:

— Ախչի՛, ես մի բան լսեցի, ասում են Սմբատը Հերինարինն աւելի ա սիրում Հերինարիցը:

— Ամա՛ն, ա՛յ կնանի՛ք, ինչ բան ասէ՛ք դուք կը հնարէ՛ք, ձեր լեզուի տակիցն ո՞վ կը պրծնի, ի՞նչ կայ՝ որ քենուն սիրի ու նրա հետ խօսի, ժամանակ անցկացնի, քենին ո՞րն ա՝ քիրը ո՞րը. բաս հօ գնալ չե՞ն աներեսի պէս գլուխը գնել նշանածի ծնկանն ու նստիլ, եա թէ չէ, էդ թաւուր [5] երեսը պատռած փեսէն ի՞նչ տուն թողալու ա:

— Ախչի՛, թէ մեռոնը կը սիրէ՛ք, դէնը մոխիկ տուէ՛ք, փա՛ռք քեզ Աստուած. մի Հերինարի սիրունութիւնը տեսէ՛ք, ո՞նց ա ծիծաղալուս պռօշները յեթ բացուում: ես որ ազափ տղայ ըլէի էս մառանումը տափ կացած՝ էս սահաթը դուս կը պրծնէի, կը կպչէի էն սիպտակ շալմաղ պռօշներիցն, էնքան կը ծծէի, որ արիւնը դուս կը գար [6]:

— Ի՞նչ շունն ես, ըտուր համար են պռօշներդ հատատալը ու կարմրել մարդդ ամէն քշեր, ասա՛, էդ ծլինն [1] ա բերում գըլուխդ էլի՛:

— Քո դլխի տրաքոցը, քո վէշլին ծուռը դնելու ա, ո՛վ գիտայ քո բօղաղովը կուշ չի գնալ:

— Ա՛յ անամօթներ, ի՛նչ լաւ որ ազափ աղջկէքը մեղանից հեռու են, չեն լսում:

— Հանաքը դէնը կենայ, Աննման ջա՛ն, Հերինարի պէս սիրուն աղջիկ չկայ մեր գեղումը, մոխիկ տո՛ւր նրա պայծառ երեսին, սիպտակ ու կարմիր թշերին, կասես, թուշուշուրիկ լօդ դեղձն ըլի, աչքերը հէնց իմանաս մի մին փխալայ [2] են, ճրագի պէս վառուում են, աչքերի սև սև պտուղներըն նետ ու անեղի պէս մոխիկ տուող սրտի մէջ են թաղուում, թամաշ արա՛ [3] պինչը, բերանը, պռօշները, կզակը, ո՞նց մին մնի մօտ սազում են. հէնց իմանաս մի նախշած պատկեր ըլի. շլինքը տե՛ս, ո՞նց ա բռնում, կասես էն սիպտակ երկարաշլինք ձկնակուռլի ղուշն [4] ըլի, որ ձմեռները մեր ձորումն երևում ա, դօ՛շը, դօշը մոխիկ տո՛ւր, ջուխտակ շամամներ են մին մնի մօտ դրա՞ծ, թէ գարնան գետնապտունկն, որ հողը բարձրացրել, ուզում են գլուխները հանեն ու ուտողի բերնումն ընչանք մահը համը թողան: Վա՛յ կրեմ ձեր գլուխն, ազափ տղէ՛ք, աչքներիդ պիպիկը [5] տրաքի, թէ որ սրան տեսնիլք ոչ: Ա՜խ, Աստուած փլատն ո՞ւմն ա տալիս, իշտահն ո՞ւմ. ընչի՞ ես տղայ չեմ, էն էլ ազափ տղայ:

— Ա՛յ քիր, էդ սիրունութիւնը թո՛ղ, էս օր կայ՝ էդուց ոչ դու Հերինարի բնութիւնն ասա՛, էն քաղցր, անուշ լեզուն, էն շողմքոր [6] խօսքերն ասա՛, էն բարի սիրտն ասա՛, որ մեր ազափ աղջկերանց մէջ ոչ մնումը չես գտնիլ: Թէ սուտ եմ խօսում, աչքս հանեցէ՛ք, տեսէ՛ք ո՞նց ա գլխին հասաքել ու էնքան աղջիկներին իրանով արել. ես վարսս կը կտրեմ, թէ որ մի պետռ խօսք դրա բերանիցը դուս ըլի գալիս. անկաչ դրէ՛ք, առանց ջանի ոչովի հետ չի խօսում, լսեցէ՛ք, պատմում ա, թէ հերու ծպկապարդին ծաղր կամօրը ո՞նց են գովել:

— Բաս չէ՛, ու էս մի թօբռուն [7] աղջկերանց պէս երեսի ա-բուռը [8] վէր եկած կըլնի, անկաչ դրէ՛ք, ազափ տղէքանց վըրայ են

---

1 Քաղցրախօսութիւն: 2 Բարակ որսկան շուն: 3 Բարձրախօսութիւն անել: 4 Բացի: 5 Այդպէս:

6 Թող ների մեզ մեր համեստ խորհրդատուն, մենք աւելի կարևոր գործ ունինք կատարելու, որքան և անհրաժեշտ լիներ իւր առաջարկութիւնը, մենք մեր դարանիցը դուրս չէինք կարող գալ:

1 Խաղ: 2 Գաւաթ: 3 Նայիր: 4 Թռչուն: 5 Բիբ: 6 Հաճոյախօս: 7 Խումբ: 8 Պատկառանք:

խօսում։ Փչանա՛ս դու, Նոյեմզա՛ր, լսեցի՛ք ախչէ, ինչ ասեց, ես կուզէի, ասում ա, էս սհաթս ժամումը Շաժուամենց Սոլոյի հետ դլուխ գլխի տուած՝ պակուռում ըլէի, թէ կուզ մի շաբթից յետը մեռնէի էլ, սրտումս մի մխալի չափ դարդ չէը մնալ։ Դէ՛ հիմի ձեզ եմ հարցնում, Հերիքնազն իր բերանից "էդպէս լօսք բաց կը թողա՞յ։

— Տօ նա հոգի ա՛, հոգի՛։

— Տնարարութիւնին էլ լօսք չկայ, մօրը չի թողում, որ տեղեցը ժաժ դայ. լհատկիմին ամէնքիցը շուտ ոտի վրայ հալեր ա, տաբթը, աթարը[1] կը բերէ, թուռնդրի ըղթին կը կիսէ, ջուրը կը բերի պղնձէները կը լցնի, նոր մօրն ու հերնարին ձէն կը տայ. մէրը վեր կը կենայ, թուռնդիրը կրակ կը քցի. շատ անգամ կոփն էլ ինքն ա կթռում։

— Դէ ասա՛ Հերնարը սաղ օրը պարապ-սարապ անց ա կացնում էլի։

— Պոի ասած՝ որ Հերնարն էլ չի սիրում պարապ քաշ գալը, համա Հերիքնազն ո՞մ ա բան հասյնում։

— Ախչի, բաս Հերիքնազի հընկերսիրութիւնը չե՞ս ասում, նրա հետ մի անգամ խօսողը նրա արևովն օրթում կուտի, օխտը քիր ու ախպօր համ ա տալիս, էդ հերը լիս կորածի աղջկիկը։

— Թող Ծվիկենց Սմբատի մխիթարանքն էլ էդ ըլի, որ ղրա պէս քենի ունի, ինչ որ նշանածը համ չը տայ, նա քենուցը կը հանի։

— Համա ես որ Սմբատի տեղակ ըլէի, ոտով գլխով հէնց քենուս իրան կառնէի ու Հերիքնազին քենի կը չինէի։

— Զէ, բալա՛մ, Սմբատն էդ տղէն չի, նա իր հօր խօսքը գետինը չի քցիլ։

— Տօ՛, աչքիս լի՛սը, ընչի՞ կը քցի, Սմբատը չի, իր օխտը պապն էլ էդ բազդաւորութիւնին չէին ջահիլ[2], չորս ոտով գա-լու հորն ա ընկել, էդքան հայ ու դղվաթ կը ընի՞, որ մուֆ-տա[3] իր ձեռը պոի գայ, ի՞նչ անենք, թէ նշանածը մի քիչ գէշ ա, ես իր ասածի ա, ես կասեմ էգուց էլ օր էդ բնութիւններն կը թողայ։

— Հոգուդ մեղք ես անում, թէ կուզ որ Խէչանն օրուան հայերն մուրացկան էլ ըլէը, Սմբատը նրա աղջկանը կառնէր, ընդուր որ իր հէրը բա շէք ա արթմայ ա արել։

— Բաս ասա՛, մարդը ոտով գլխով բազդաւոր ա, համ լաւ կնիկ, համ բօլ հայ, հէնց դրա համար ա ասած. որտեղ հայ, ընտող կայ։

— Հերիք ա, բալա՛մ, Նանօն մօտ ա գալիս, խօսքը փոխենք, Աստուած Հերիքնազին էլ մի ջհման[1] տղի ուստ բերի, էդ հալալ կաթնակերը մի շէն օճախ ընկնի։

— Վա՛յ, խիզա՛ն, ի՞նչ էք բուլշլիճ[2] արել ու իրար եախիից[3] ձաւար հաւաքւում[4], տուն մտաւ Նանօն, մի քիչ էլ ջանդ ի՛ւլուս ու խաղեր ասեցէ՛ք ուրախացէ՛ք, ի՞նչ անենք թէ մենճ պաս ա. ձեզ ընդուր համար չեմ հաւաքել, որ փոխրինձս ուտէ՛ք ու քչվչաք. ո՞ւմնից էք ամանչում, ազափ տղէքը հօ մեր մտաւանումը տափ չէն կացել ու դռան ճղղքից ձեզ վրայ մոիկ տալիս։

Մեր Նանօն դէպի դուռը նայեց, լինճ աչքով արեց ու ծիծաղեց։

Երկար կը լիներ պատմել, թէ ի՞նչ քաղցր երգեր սկսեցին մեր սիրուհիները, ի՛նչ ներդաշնակ ձայներ ունէին, ի՛նչպէս պար բռնեցին ու երգելով պարեցին, ի՛նչ անարդական ոտանաւորներ էին երգում դէպի տղայքը և ի՛նչպէս իւրեանց մէջ ուրախանում էին, որ ոչ մի ազափ տղայ իրանց լսող չկայ, ապա թէ ոչ իւրեանց լեզուն բունը կը մտներ ու տղէքանց ատամներին կամաչէին պատասխանել։

— Վա՛յ ջահէլներ, մեր տունը գող ա մտել, մեր մտաւանիցը մի ջահէլ սիրուն ազափ տղի ընչի ձէն եմ լսում. եկէ՛ք մի ճրագ վերցնենք, տուն մտնենք, տեսնենք հօ ղըրթ ձեր բուսունը պահող չի՞ հել բատեղ։ Ատաց Նանօն ու ճրագը վերցրեց դէպի մտաւանի դուռը եկաւ։

— Ախաս ու աղջկներից աւելի ես սիրթնեցայ. ցնդե՞լ էք, մտածեցի՛ք, այս կինը, ուզում է ինձ էլ իւր պարկեշտ հիւրերին էլ խայտառակել։ Բերանս հուպ տուի, որ շունչս դուրս չդայ ու ոտքիս բթերի վրայ անց կացայ աքաղների կողմը, մի անկիւն էի պատռում մտնելու, այն էլ իմ տարաբաղդութիւնից չկար։

Անպիտան Նանօն դուռն անգամ բռնեց և ձևացրեց, իբր թէ

1 Բակոր։ 2 Հանդիպիլ։ 3 Ձրի։

1 Նազելի։ 2 Բոլորակ։ 3 Օձիքից։ 4 Միմեանց քամքաւում,

բանուր է։ Սակայն ինչպէս ազատ շնչեցի ես, երբ քիթ բարձրացնելով ծաղրեց ինձ և դարձաւ դէպի ինձանից աւելի գունատուած ու շփոթուած սիրուհները։— Յի՜, յի՜, յի՜, հեղնեց նա, չէ՞ք ա՜մանչո՞ւմ որ աւատուր էք, երևուր ա դուք իմ ըստեղ չեղած ժա՜մանակը ազափ տղէքանց սրտին դուր եկող խօսքեր էք ասել, որ հիմի ըստնց լերդապատուռ էլաք, ընտուր են ասել, որ գո՞ղ սիրտը դո՞ղ։

— Զօ՛ռ քեզ, Նանո՛, ասացի մտքումս, չօ՛ռ, քո առածն աւելի ինձ վերայ յարմարեց, ես կէս մին եղայ այստեղ։

ԺԴ.

ՇՈՐՇՈՓ Ա ԴԻՊԵԼ, ԷՆ ԷԼ ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂԻ ՇՈՐՇՈՓ։

— Զէ՛, ես էլ չեմ կարող համբերել, էս իշի նահատակութիւն ա, ես սաղ Աշտարակաւ միջին խօսելու առարկայ եմ դառել, որ քուչումն անցեմ կենում, իմ անուշին եմ լսում, մարդիկն էլ ինձ խեղճ են գալիս, ես ո՞նց ընչանք օրս տարել եմ, Աստուած մի՛ ա՜րասցէ, որ էս բանը դրուստ դուս գայ, թէ չէ ես առաջ նրան կ՛սպանեմ, յետոյ ինձ. հանաք մասխարութիւն չի՛, դանակն ոսկոռին որ հասաւ, հօրս խօսքն էլ բանատեղ չեմ քցիլ, ես էլ երեխայ չեմ, մարդ պտի մի քիչ էլ առ ու թասիբ[1] ունենայ. ամէն կողմից լսում եմ, — հացի համար ա խեղդուած տալ անում[2], թէ չէ ընչանք օրս ո՞նց չտեսաւ, հօ Արշակը սուտ չի ասում. էդ ընչեցն ա, որ օրը մթնում ա թէ չէ, մնում ա անօրանց տունը՝ ընչանք կէս գիշեր դուս չի գալիս ու մի հետ էլա վերայ չհասաւ։ Ի՞նչ։ — Ո՞նց թէ հացի համար, ո՞նց թէ խէչանի դովլաթին եմ խեղդուած, ո՞նց թէ վերայ հասայ ու տալ արի։ Էն էլ ո՞վ. ե՞ս, ես ուրիշի դատած փողի վերայ աչք ունենամ, մահն աւելի լաւ չի՛։ — Զէ՛, չէ՛, շատ սխալուում են ինձ վերայ խօսողները, ես շատ ուրախ կըլնէի, թէ որ խէչանը վերջի աղքատը դառնար, մի կտոր հացի կարօտ մնար ու ես օրական մի քանի սէր փող իմ ձակատի դառը քրտնքով աշխատէի, տուն բերէի ու իրան էլ պահէի իր աղջկանն էլ. ա՜խ, երանի չէ՞ր, Աստուած խորհուրդս կատարէր, ես խալխին շանց տայի, որ ես հացահաչ տուողների ոչ մէկի հրնկերը չեմ, աշխարհքին յայտնի անէի, որ Սմբատն իր հօր խօսքը իր գլխից հազար փառքով շատ կը պատուի, իր հօրը աւերես չէ թողալ...։ Էս շատ լաւ, էն թուք ու նախատինքն ի՞նչ անեմ, որ մի մէնծաւոսի մինը, որ ոչ կռնումն ուժ ունի, ոչ գլխուսը խելք, ամէն տեղ նստում ա ու իմ նշանածի վերայ խօսում, ամէնքի մօտ պարծենում ա, թէ իմ նշանածն ինձանից շատ իրան ա սիրում, թէ ինքը դրի չակի ծակովն ամէն քշեր նրա հետ մասլահաթներ[1] ա անում. . . օ՛, օ՛, օ՛, գլուխս պտտուում ա, ես էս թուք ու մուրը կուլ չեմ կարող տալ, արինն աչքերս կոխել ա, մի մին բառնայք ա՛ նրանց ջանը, հէնց էս քշեր բանը քութահ կանեմ[2]. ե՞ս. . . ե՞ս. . . ե՞ս. . . ։ Եւ չկարաց շարունակել Սմբատը, կանգնեց խէչանենց քուչումն ու գլուխը մի պատի դէմ տուեց, երեխի նման լաց եղաւ։

Նրա բաղդից երեկոյ էր, ամէն մարդ իւր յարկի տակն էր մտել, փողոցները դատարկ էին, ոչ ոք չնկատեց նրան։ Մի երկու տեղ նշանաւոր անկիւններում եափունջիներում փաթաթուած քանի մի ջահէլներ միայն դունչ դնչի տուած՝ շատ կամաց փսփսում էին ու սրա նրա աղջկայ վերայ դատողութիւն տալիս. սրանք էլ այդպէս աննշան բաների համար չէին պարապած՝ սրանք հետաքրքրութիւնով իւրեանց սիրելի անկիւնը չէին թողնիլ։

Գլուխը կրկին բարձրացրեց մեր Սմբատը, աչքերը սրբեց, մի քանի քայլ էլ արեց և Խէչանենց դռան առաջին կանգնեց։

— Կամ էս իրիկո՛ւն, կամ ոչ մի ժամանա՛կ, մտածեց նա. ի՞նչ լաւ՝ որ դուռը կողպած ա, թէ չէ ներս մտնելուս կիմանային, պատովը կը բարձրանամ, տեսնենք մի բան շենում եմ, թէ ո՛չ։

Նա մօտեցաւ պատին ու ոտքը պատի խոռոչների մէկի մէջ դրեց։

— Զէ՛, էս էլ մի մարդութիւն չի, գողնովն ուրիշի տունը մտնել, խալխի սրտն[3] իմանալ, լաւն էն ա՝ էս օր էլ թողամ։

Նա ոտքը ցած դրեց ու յետ դարձաւ։

---

1 Պատիւ, 2 Լուռւմ,

1 Ջրոյց, 2 կը վերջացնեմ, 3 Գաղտնիք.

— Է՛հ, ի՞նչ եմ ասում, սրանից էլ յոլամար օր, տարին երեք անգամ չէ ընկնում, որ իմ աներես ես վախտ տուն եկած չընկնի, հազիր իմ բազդիցը հերս նրան Վրիկնոհացի պահեց. հենց իմանաս Աստուած նրան տուն տուեց[1], որ ինձ զրկեց վրանց տունը, որ երեխեքը մինակ չմնան:

...— Ա՛խ, երանի թէ մենք իրար ոտտ եկած[2] չընկնէինք ու ես հիմի էս ցաւերից ազատ կըլնէի, շաբաթանակից Սմբատը, կամ թէ չէ կնպէս բան ըլնէր, որ ընդմանք պահուըլը օրս սրանց պըտռվը նորը նեռս չմնանէի ու էն օրը քօռեքօռ[3] գայի Հերնարի կռուը բռնէի, աչքերս խուփ պռակ գնայի ու հօրս ասէի — իմ մեղքը քոզ չլինքը, խեր ու շառաչ քեզ. ա՞խ ի՞նչ լաւ բան կըլնէր:... Է՛հ, ի՞նչ եմ գլխիցս դուս տալիս, ես օ՞նց կարամ Հերիքնազին մի օր չտեսնել էն իմ ազիզ քենուն, ես նրա հոգուն մատաղ գնամ: Ո՛հ,. երնէ՞կ էն աղլին, որ մի օր Հերիքնազի կռնիցը բռնած՝ մի զարդակ չտակով դուրս պռի քաշի էն հրեշտակին. ես ուրախութիւնով Աէյանի հարսութիւնն էլ Հերնարի վրայ կըտայի, թէ որ հնարք ըլէր նշանածներս փոխելու: Վա՜յ ինձ, վա՜յ իմ հոգուն, փչուի՛ ինձ պէս փեսէն, որ քենու վրայ աչք ունենայ, էն էլ Հերիքնազի պէս քենու: Համա ի՞նչ անեմ, որ չի ըլնում, ես ընչո՞վ մեզաւոր եմ, որ փըռըր ասանը Թոռած[4] ոսպախաշուն են դրել առաջս, թէ կեր, որ բոզազոս կուշ չի գնում: Ես ի՞նչ անեմ, որ սիրում եմ. ո՞վ կըլնի էն մարդը, որ Հերիքնազին տեսնի ու չսիրի: Հա՜, շատ լաւ եմ հասկանում, որ էն հրեշտակն էլ ինձ ա սիրում, համա սրտամբ պահում ա, նա էլ ինձ պէս խեղդուած ա, նա էլ չի ուզիլ, որ իր քենու խօսքը գետինը ընկնի: Չէ՛, նրա սիրտը բարի ա, բարի՛, նա ինձպէս անպիտան չէ, որ եփած կերակրի վրայ առաջ ջուր ածի, նա կը մեռնի ու իր քեռու աղջկայ ձամփին քար չի քցիլ. համա Աստուած ջո՛ն, եարաբ Հերիքնազն էլ Շուշհետաճոզենց Թոռի չաւ արած[4] խօսքերը լսի՛լ ա. եարաբ թէ որ դուստ ա՝ ինչ որ ասում են, Հերիքնազը խարար չի՞, բաս նա մի օր վրայ չհասա՞:

— Դէ՛հ էլ յետայնիլ չի պէտք, աներես չդայ հօտի, վճռեց նա վերջապէս և պատը վեր եկաւ:

Հանդարտ քայլերով դիմեց Սմբատը դէպի երթիկը, ներս

1 Ներշնչեց: 2 Հանդիպած: 3 Կոյրկուրացու: 4 Հրաւառարակած:

նայեց և գոռաւ ձրնգը հանդըգրած: Պարկից երթիկի մօտ, ականջը ներս քաշ արեց և լսողութիւնը լարեց: Ծուռը լռութիւն էր:

Ա՞մ թէ ինձ, մտածեց նա, խելագիրը ձրատն ածըրել հանդիսաւ իրանց համար քնած են, իմ մեքօվն ի՞նչ չարութիւններ են անցկենում, էլօղլուի[2] ասած խօսքերն ես չուանի եմ ղրել[2] ու խալխի մեղքն ընկնում:

Նոյն դիտողութեամբ վերինյատ պարկած տեղից և կամացա վերադառնալ: Երկու, երեք քայլ հազիւ էր արել նա, որ ոտքերը դողդղին ու տեղը ծնկները ծալուեցան, կարծես թէ մեռուելու ունայ: Նրա ականջը փսփսոցի ձայն ընկաւ. մի ջընջիւն էր լսում նա և չէր իմանում՝ ո՞ր կողմից, բայց երեւում էր, թէ շատ մօտիկից, խօսքերը պարզ հասկացաւում էին: Ծիշտութեան թարձր ամպոտ միջնութիւնն էր միայն առաւօտեան աչքից փախցնում: Մի երկու ոտք յառաջ գնայ Սմբատն ու ականջը սրեց:

— Չէ՛, այս կողմից չէ գալիս, ձայնը նուազեց: Դէպի աջ դարձաւ՝ էլի ոչինչ չկայ. դէպի ձախ՝ նոյնպէս:

— Է՛հ, միտքս պղտորեց, ես վախտ ո՞ւմ ցանն ա կորել կըսրընկրին քաշ գալ զուր հոգուս մեղք եմ անում:

Նա յանկարծ թափահարուեցաւ, անձը փշաքաղուեցաւ, նա կանգնեց՝ փնթփնթաց. — ի՞նչ, ես պատի տակին ըլի՞ն... չէ՛, էպէս բան չէ կարող պատահիլ, ինձ ասեցին, որ գրէջակի ծամփն են սիրահարութիւն անում, կուրն ի՞նչ բան ունէն: Փաքր էլի մտածեց.— որ իրար տեսնի մօտիկնա՞ն... չէ՛, չէ՛, յիմար յիմար բաներ են գլխովս անցկենում:

Մտածում էր Սմբատն ու մեքենայաբար ոտքերը դէպի Թէյանենց ու Շուշհետաճոզենց կողը միջի պատը փոխում: Երկու հարեւանների կատը այդ ցածր պատն էր բաժանում:

Նրանք կանգ առաւ նա. այժմ երևակայութիւն չէր, նա պարզ քչփչիւնը լսեց. նա այժմ մթան մէջ պատի այս և այն կողմից երկու գլուխ է տեսնում: Շուշհետաճոզենց կողմի մարդը պատը բարձրացաւ, այս կողմն իջաւ: Սմբատը լսեց համբոյրի ձայն:

Զգիտեմ դիտմամբ Սմբատը նստաւ տեղն ու տեղը, թէ ոտքերն արդելեցին յառաջ գնալ, բայց նա լսեց հետագայ խօսակցութիւնը:

1 Ծառերի: 2 Հաւատացել եմ:

— Անջա՛խ մի անջա՛խ[1] մենք կարողացանք էս բաց երկնքի տակին իրար տեսնել, անջա՛խ մի տարուց յետո իմ կռնկերս քո միջքովդ փաթաթեցի, մեռանք էն անտեր դրիջակի ծակովը քուֆթի[2] քարի ու պղնձի ոլքերի[3] վրայ նիհնելով ու ցած գալով, մի հալալ պռոշտի էլա չկարողացանք անել:

— Կամանց խոսի՛, ոչ ով չլսի:

— Է՛հ, ի՞նչ ես ասում, Հերինար Ջա՛ն, էս վախտ ո՞վ կը-գայ ըստեղ. քո անխելք նշանածը մեր բազդին, ասում ես, իրի-կունս հօրդ խաթեր իրանց տանն ա մնացել չի եկել, Հերիքնազն էլ շորերը հանել թէչ ա ընկել, հօրաքիրդ էլ ճրագն անցրել ա ու անշորահան ըլել գլուխը պատին տուել խոմփացնում, որ հէրդ գալուս գնայ գուռը բաց անի. մենք հիմի ըստեղ ոնց որ մեր տանն ենք, վախենալու ի՞նչ ունինք:

— Հիմի ինձ ընչի՞ զօռ արիր, կտուրը կանչեցիր, մին չէ՞ր, դրիջակի ծակովն իրար հետ խոսում էինք:

— Չէ՛, Հերինար Ջա՛ն, պաի օրհնաւոր խոսանք էդուց էլ օր մենք ձեր տունը լենամհօս ենք ղրկելու, հէրդ որ չասայ, ի՞նչ պաի անես դու, ասում ես էս աշունք ձեր հարսանիքն ա, գնալու ե՞ս, թէ ոչ:

— Ո՞նց չգնամ, հօրս խոսքիցը ո՞նց դուս գամ. լաւ էլ դիտեմ, որ Սմբատն իմ կիսին էլ չի արժան, ոչ նրա հէրն ա իմ հօր հընկերը, ոչ նրանց տունն ու տեղը մերին կը հասնի, հաւս հօրս բնութիւնը լաւ գիտեմ, մի անգամ որ խօսքը տուեց՝ պրծաւ, գըլուխն յետ կը դնի ու իր ասածը կանի. նա Սմբատին աչքի լսի պէս սիրում ա, աշխարհ.քի հետ նրան չի փոխիլ էլ ես ի՞նչ կը համաքաձակում պռօշս պռօշիս տալ:

— Դու պարզն իրան ասա՛, որ սրտով ինձ ես սիրում, դու Սմբատին կնիկ չես կարող դառնալ, դու կը մեռնիս՝ թէ որ քեզ ինձ չտան:

— Ո՛ւն՝ որ ես իմ հօրս երես չեմ ըլելու մէկ էլ՝ որ թէ կուզ ասեմ՝ ի՞նչ գուս կը գայ, ղուր իմ տեղը կը թեթևացնեմ, մի մրսխալն չափ հօրս չեմ կարող կոտրիլ իր կեանքումն էլ հետս չի խոսալ:

1 Հազիւ հազ: 2 Մսով կերակուր է, որ քարի վրայ կըծեծեն: 3 Կաթսայի քամակի կողմը:

— Թէ որ հէրդ Սմբատին շատ սիրում ա, Թող Հերիքնազին իրան տայ, նա էլ օտար չի, իր քուեր տղջկն ա:

— Ա՛խ, ես Հերիքնազի ջանին մեռնե՛մ. նա ինձ համար մօրից էլ քուրիցէլ շատ լաւ ա, նա սաղ մհալի մէջ Սմբատից աւելի ոչ մի տղի չի հաւանում, նա ո՞նց կը թողայ որ ես քեզ վրայ միտք ունենամ:

— Թէ որ էդքան հաւանում ա, խի՞ չի ինքն առնում:

— Շատ էլ որ մտքումն ունենայ, նա իմ խաթեր գլուխը կտպանի ու էդ չի անիլ:

— Ասում են նշանածդ էլ նրան աւելի ա սիրում:

— Նշանածս մեղաւոր չի, ես եմ փիսը[1], քանի քեզ հետ տեսնուել եմ՝ էն օրուանից դէսը ես նրա երեսին մի քաղցր աչք չեմ քցել. ախար նա հօ ամէներով նշանած չի, երեխութիւնից միասին ենք մեծացել: Մի քանի հետ խեղճը հարցրել ա ինձ, թէ ընչի՞ առաջուան պէս էլ իրա հետ չեմ խոսում, թէ դու ձեր տանը պատասխան կը տայիր՝ ես էլ էնպէս: Միամիտ Հերիքնազը հէնց գիտի, թէ ամանչում եմ նշանածիս հետ խոսալը, Սմբատին սըրտաւորում ա, էլ չի իմանում, թէ քու աչքերի ականաթն[2] ընկած օրից դէսը Սմբատին էլ եմ մոռացել ու իմ գլուխն էլ: Էն Աստուածաբը Սմբատն էլ ի՞նչ անի, տեսնում ա, որ իրան մոռում չեմ, Հերիքնազին հետ ա նստում վեր կենում. ես շատ ուրախ եմ, էլնէկ չէր երկար միջը սէր մտնէր ու նրանք իրանց մուրազին հասնէին, մեր ճամփէն էլ բացուէր. հոգի ունիմ տալացո՛ւկ, Սմբատը Հերիքնազին արժան ա, նրա սիրտը բարի ա:

— Բաս հիմի ո՞նց անենք:

— Ես խարար չեմ, թէ հօրս կարացիք բան հասկացնել, գիտես որ ուրախ կըլնեմ, թէ չէ, շլինքս ծռած պաի խոնարհեմ:

— Տօ՛, ես մեռել եմ, Հերինար Ջա՛ն, որ քեզ ուրիշն ձանգը քցեմ, գիտես քեզ ո՞նց եմ սիրում:

— Է՛ա՛, լաւ միտս եկաւ, Արշակ Ջա՛ն, մի օր Հերիքնազի հետ խօսք բացուեց, նա ասեց որ իմ ուզողները հօրս կարողութիւնի համար են մեր դռները ջարդում. ես էլ միտք եմ անում, որ ըսենց ա՛յ հէնց մինը դո՛ւ. չէ՞ք տեսնո՞ւմ, որ Հերիքնազն ինձանից հազար փառքով սիրուն ա, ընչի՞ չէ՞ք նրա քամակից ընկնում. հիմի թէ

1 Վատ: 2 Որոգայթ:

որ դու եւ երկտես պատճառդ ես ու ինձ որոնում չես սիրում, ձո որ ես ինչ ասում եմ ինձ մի՛շտ որ այդ ս կասկածով ես նայում, ասածիդ ոչ մի բան չես հավատում, ոչ էլ ինձ ես վստահում, ոչ էլ ինձ հետ ես ուզում խոսել, ոչ էլ ինձ հետ ես ուզում ապրել, ոչ էլ ինձ հետ ես ուզում մեռնել։ Ես ինչ անեմ, որ քեզ համոզեմ, որ ես ինչ ասում եմ, ճշմարիտ է, որ ես ինչ անում եմ, ճշմարիտ է, որ ես ինչ եմ, ճշմարիտ եմ։ Ես ինչ անեմ, որ դու ինձ հավատաս, որ ես ինչ ասում եմ, ճշմարիտ է, որ ես ինչ անում եմ, ճշմարիտ է, որ ես ինչ եմ, ճշմարիտ եմ։

— Իր ոչինչ։ Միայն ինձ մեղք չգործես, իմ սիրելի՛ Տիրամայր Աստուածածին, ասաց Նիշանը ձեռքերը դէպի երկինք պարզելով։ Ես ինչ որ ըրի, ինձ համար չըրի, այլ քեզ համար ըրի, որ դու ինձ հետ ապրիս, ինձ հետ մեռնիս, ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ինչ որ ըրի, ինձ համար չըրի, այլ քեզ համար ըրի, որ դու ինձ հետ ապրիս, ինձ հետ մեռնիս, ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։

— Ի՞նչ ուզես, որ ընեմ քեզ համար, որ դու ինձ հետ ապրիս, ինչ որ ես ուզեմ որ ընես, ինչ որ ես ուզեմ որ ըլլամ քեզ համար, որ դու ինձ հետ ապրիս։ Ես, չէ՞, ես ուզեմ որ դու ինձ հետ ապրիս։ Ես ուզեմ որ դու ինձ հետ ապրիս։ Ես ուզեմ որ դու ինձ հետ ապրիս։

— Ես ուզեմ, որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։

— Ես ուզեմ, որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։

— Ես ուզեմ, որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։

— Ես ուզեմ, որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։

— Ես ուզեմ, որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։

— Ես ուզեմ, որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։

— Ես ուզեմ, որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։

— Ես ուզեմ, որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։

— Ես ուզեմ, որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։

— Ես ուզեմ, որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։

— Ես ուզեմ, որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։ Ես ուզեմ որ դուն ինձ հետ ապրիս, որ ինձ հետ մեռնիս, որ ինձ հետ յաւիտենական կեանքի մէջ ապրիս։

Բայց դեռ օրինաւորապէս մօտ չէր քաշել՝ պատի միւս երեսից Թրխկոցի ձայնի հետ չսխմախի տուին ու կայծերն օդումը խաղում էին։

— Վա՜յ գլխիս, սատանայ ա, թոյլ ձայնով ասաց Հէղնարն ու իրանց սանդխաներովը ներքև վազեց։

— Սատանա՜յ, շշկլուաճ կրկնեց Արշակն ու ոտքերը դողացին, էլ ոչ մի քայլ չկարողացաւ անել։

— Է՛ա՛, սատանա՜յ, պատասխանեց հրացանի կայծեր շաղ տալով երևոյթն և պատը լոք տուեց, անցաւ Արշակի մօտ ու երկու ձեռքով գլուխը բռնեց, վեր բարձրացրեց։

Արշակն երկիւղից ոչինչ չէր տեսնում և չէր էլ հասկանում։

— Փեղ եմ ասում, ա՛յ դղում, լաւ մոխիկ տո՛ւր ինձ, երեսիդ խաչ հանի՛, բերանդ մի կտոր հող քցի՛, քո գլուխը ջնջուեց. ի՞նչ սատանայ՝ ի՞նչ բան, դու քո հոգեհաւի ձեռին ես, էս սհաթս գլուխդ ծնկներիս միջին ճխլում եմ, մի քթիդ արինդ շներին լակացնում։ ո՞ւմ հետ ես խաղ անում, անխելք աղջկերանց մօտ ո՞ւմ դէմն ես պարծենում, ո՞ւմ նշանածին ես քո մուռատա[1] պուօշնեղովդ քո կեղտոտ շնչովդ ապականում, երկի՛նք ու գետի՛նք, դժո՛խք ու սատանե՛ք քեզ հիմի իմ ճանդիլը չեն կարող պրծացնիլ դնա՛ սատկի՛, քո աչերդ հէրն էլ անիծած։

Մեր սարսափելն սուտերը, որին մենք արդէն ճանաչեցինք, այս խօսքերից յետոյ՝ երկու ձեռքով Արշակի գլխիցը բռնած՝ բարձրացրեց բոլոր մարմնով և ուզեցաւ խփել պատովը, և եթէ մի ձեռք նրա քամակիցը չէր բռնել յետ քաշել, մեր Արշակը մինչև հիմի եօթը պատան մաշած կը լինէր։

— Սմբա՛տ, արենպարտ մի՛ բլնիլ։

Այս ձայնը սլաքի նման թափանցեց մեր կատաղած հերոսի մինչև ամենանուրբ ջիղերն և նա սարսեց։

Ինչպէս եռացող ջրի վերայ յանկարծ սառը ջուր լցնես, այնպէս նստաւ մեր նախանձայոյզ փեսացուի փուքը։

Նա վայր դրեց իւր որսին գետնի վերայ և աչքերն յետ դարձրեց։

Ոչ ոք չկար։

Մի քանի քայլ իւր շրջակայքը մեն եկաւ։ Ոչ ոք չկար։

1 Անսուրբ։

— Այս էր, նրա ձէնն էր, հէնց իմանաս ինձ էլ պիտակ, նա իմ հոդու մէջը խօսաց. նա չի ուզում ես ձեռներս սրա արնի մէջ թաթախեմ, թո՛ղ գնայ ապրի՝ ինչքան իր հօր սիրաը կուզէ։

Շուարածի նման նա եկաւ Արշակի մօտ և ձեռք տուեց։ Արշակը մի քանի անկապ ու անհասկանալի բառեր արտասանում, երևում էր որ նրա լեզուն երկիւղից կպել էր։

— Արշա՛կ, Արշա՛կ, մեղմ և քաղցր ձայնով կանչեց նա, վեր կա՛ց, վեր կաց գնա տուն, ամէն բան անց կացաւ, ոչինչ չկայ։

— Այս մեղայ Աստծու, ես գլուխս քարը տուի, էլ չեմ անիլ թոթովում էր Արշակն ու Սմբատի ձեռքերը համբուրում։

— Գնա՛, գնա՛ ու էլ ուրիշի ապրանքին աչք չունենաս։ Հասմա թէ որ էլի կը յիմարանաս, չամամախի պէծերը միտդ բե՛ր։

Այդ օրուանից Շուն-Հաւատծողինց տանն Արշակի ներկայութեամբն էլ չամամախի չէին կարող տալ, նրա լեզուն խառնուում էր, նրա ուշքը գնում էր, նա կանչում էր.

— Սատանի բերնիցը կրակ ա թափո՜ւմ, ես գլուխս քարը տուի՛։

— Շորշոփ ա դիպել վճռեց Նահրիարցի գրոց աէր-Յարութիւնը Սողոմոնին բանալով և ոամ[1] ձգելով, բայց դրան պրծացնին անկարելի ա, շորշո՛փ ա դիպել, էն էլ դևերի թագաւոր՝ Բհհզեբուզի շորշո՛փը[2]։

ԺԱ.

ՁՈՒԱՁԵՂԻ ԽԱԹԵՐ ԹԱԻԻ ԿՈԹԸ ԿԸ ՊԱՁԵՆ

Ա՛յ, ո՞ւր ես փախչում ցնորուածի պէս։

Ըայս խօսքերով մինը բռնեց Սմբատի թեւն, երբ նա Արշակին իր ձեռքով բարձրացրեց, ներքև տարաւ նրանց բանին և ինքը կըրկին վեր եկաւ աներանց կոտրը, կամեցաւ իջնել իւր եղած պատիցն և հեռանալ։

1 Վեց հազարեակի հաշիւները տեսնելով։ 2 Շորշոփ դիպչել նշանակում է մի երևոյթից վախենալ և նրա վատթար հետևանքին ենթարկուել։

Սմբատը շատ շտապով էր բարձրանում, գժուար թէ երկու մարդ կարողանային նրան յետ պահել, բայց մի ձեռքի թոյլ բռնուածք տեղնուտեղը կանգնացրեց նրան։

— Ո՞ւր ես վախչում։

— Է՛ա՛, բաս դո՞ւ էիր։

— Ես էի։

— Բաս քո ձեռովդ են էսքան բաներն անց կենում։

— Դու էլ հասատո՞ւմ ես, մաքովդ ա՞նց ես անց կայնում, հոգուդ մեղք չէ՞ս անում։

— Բաս էս ի՞նչ բան ա, էս ի՞նչ խաղ ա, որ ինձ հետ ա-նում էք, ես ձեր խաղատո՞ղն եմ, ես երեխա՞յ եմ. բաս ես աշխարհքի երեսին ո՞ւր եմ սաղ մանդալս, ի՞նչ երեսով ուրիշներին մտիկ եմ տալիս, ձեզ ի՞նչ եմ արել, որ ինձ խեղճ չէք գալիս, ձեզ ի՞նչ եմ արել, ի՞նչ ձեսս եմ տուել։ . .

— Սմբատը չկարողացաւ շարունակել, երեսի նման արտասուքն իրան խեղդեց, խօսքը կոկորդումը կիսատ մնաց, գլուխը կըռացրել էր և հառաչում։ Նրա կրծքի ելևէջը մէի մէջ կարելի էր նշմարել։

— Սմբատ ջա՛ն, արէքդ մատա՛ղ։

— Չէ՛, էլ ինձ քաղցր խօսքեր մի ասիլ, սրանից յետը ես սաղ աշխարհքի մասխարէն[1] եմ, ես էլ մարդի կարգում չեմ, շան պես քացով տուր տանիցը դուս քցի՛, աղքատի տղէն հարուստի աղջկայ ոտի հողին էլ չի արժան, մի կտոր էր հայ ողորմութիւն դուս ղրկեցէ՛ք, երբ որ կը գամ շլինքս կը ծռեմ՝ ձեր դռանը մուրացկանութիւն կանեմ։ Ի՞նչ եմ ասում, հացն ափսոս չէ՞, դուռն երեսիս հետ արէ՛ք։

Սմբատը շարունակ լալիս էր։

— Սմբատ ջա՛ն, անկաջ դի՛ր, ես ամէն բան տեսայ, ես քեզանից աւելի եմ գժուած ու կատաղած, ես է՛լ յառաջ բանիցս խաբար չէի, մի քանի օր է, որ դիպուածով տեսայ ու ամէն հնարքով աշխատում էի քիչ քիչ յետ կայնել։

— Ի՞նչպէս, դու յառաջ ոչինչ տեղեկութիւն չունէի՞ր, բաս դու զարաւուլ չէի՞ր քաշում[2], որ սիրականներին ոչ ոք խափանի ոչ։

1 Ծաղրելիքն։ 2 Պահապան չէիր կացէլ։

Ամե՛ն քեզ, Սմբա՛տ, ես յոյս չունէի, որ դու էդ վատ կասկածը կոնենաս ինձ վրայ, ամե՛ն քեզ, որ ընչանք օրս իմ սիրտը չճանաչեցիր, ամե՛ն, հազար ամե՛ն քեզ։

— Բան ասում ես դու էլ բէկաթար[1] էիր, դու էլ նեղացել ես պրանց սիրահարութիւնների վրայ, դու էլ դու էլ։ . .

— Է՛ա՛, քեզ մատա՛ղ, քո ազիզ արեը վկայ։

— Բա՛ս, ես գնամ քարափովը վէր ընկնեմ ու պլծնեմ էլի։

Չէ՛, անուամիզ մեռնի՛մ, չէ՛։

— Հերիքնազ ջա՛ն, դլուխս լաս չէ, ես կը գժուիմ, ասաց մեր ողբումելին և փարեցաւ իւր քենուն, որ մէծնումը կառչնած դիտելուս է եղել։

Ինչպէս պատմեց Հերիքնազը Սմբատին, ինքը երկու երեք շաբաթ յառաջ դիպուածով տեսել ու լսել էր պրի ջադի խօսակցութիւնը, թէպէտ լոյս էր ընկել, բայց չէր ուզեցել մի անգամից յուսահատեցնել Հեղնարին. լաւ էր համարել աստիճանաբար խօսք հասկացնել. իսկ այս գիտէր՝ դեռ քնած չի լինում, երբ Հեղնարը վէր է նում անկողնից, շորերը մէծնումը հագնում ու դուրս գնում՝ ձրագը հանգչելուց յետոյ։ Իւր սիրան էլ կասկած է մանում, ինքն էլ նոյնն է անում և հետևում Հեղնարին. նա հասնում է նոյն ժամուն, երբ երկու սիրահարներն առաջին անգամը պատահում են միմեանց. նա նոյն րոպէին նկատել է Սմբատին, որ փոքր ժամանակ դեռևին նստելուց յետոյ, կամաց քաշուում է դէպի պատը, բարձրանում ցածր պատի միւս երեսն և այնտեղից դիտում, վերջապէս նա տեսել է սորա չախմախի տպը, լսել վճռական խօսքերն և իւր քնքուշիկ ու ազդու ձայնովը յետ է պահել սրան մորթասպանութիւնից. այո՛, նա սկզբից մինչև վերջը ներկայ է եղել և թէպէտ մէծնումը, բայց ամէն բան տեսել։

— Հերիքնազ ջա՛ն, գրկեց Սմբատն ապջկանն ու ձակատը համբուրեց։

Ոչինչ ընդդիմութիւն չարեց Հերիքնազը, նա պինդ կպաւ Սմբատի գրկին ու մի քանի վայրկեան այդ դրութեան մէջ լռութեամբ տեղիք տուեց նրա գրկախառնութեանը։

Նա՛ասկան է, ասաց վերջապէս աղջիկը, դէ՛ հիմի սիրտդ հանգստացրո՛ւ, էս բոլոր անց կացածները մոռացի՛, ջահել աղջիկ

1 Անտեղեակ։

ա, հեռու չի միտք սրել, խորհուրդ ա, էդ Թաւուր բաներ շատ կը պատահին, փառք Աստծու, որ ինքդ անկաջովդ լսեցիր, թէ դրանք առաջին անգամն ա, որ մին մեզ մօտ եկան, դրանց տեղը դրի՞ջ կանչ ա էլել, որ ինչպէս իմացար, մեր քնելուց յետոյ վեր են կացել ու իրար հետ քչփչացել. մի վախիլ, Սմբատ ջա՛ն, իմ շլընքերին Թո՛ղ դրան ձամփու բերելը, ես սկսել եմ խրատիլը, Հերնարը քեզ ընչնց կնիկ գառնայ, որ դու ինքդ էլ արմանաս:

— Հերիքնազ ջա՛ն, էդ բանը մի՛ ասիլ Խէչանի աղջկին ինձ համար ըստուց յետը պաս էլաւ, ես ուրիշի խորհից[1] աղջիկ չեմ կարող հանել ու իմ գիրկն առնել, նա ոնց որ մի իժ օձ կը փաթաթուի իմ շլնքովը:

— Թէ որ լսէնց ա, դու ո՞նց չամանչեցիր ինձ գօշնի[2] կըպցընել, չէ՞ որ մի մարդ էլ Թէ ինձ էնչնց հանգիպի, մի վերջապ պոի կարծի, Թէ որ մի օր ինձ ուրիշի կնիկ գառած տեսնի:

— Զէ՛, քեզ իմ գրկիցս ոչ ով չի կարող իլել, Թող Խէչանն ում կուզի իր աղջկանը տայ, Աստուած իրան հետ, ես քո ձեռիցը բռնած՝ պոի դուս քաշեմ էս տանիցը, ըստուց յետը դու ինն ես:

— Սմբա՛տ:

— Սմբատի կնիկը Թուլցան, նա այժմ միայն բաց Թողից իւր երջանկութիւնն իւր գրկից:

— Էս վերջինն ըլլի, որ քեզանից էդ խօսքը լսում եմ, հրամայական ձայնով ասաց Հերիքնազը. լմացած կա՛ց, որ Թէ դու Հեղնարի յիմարութիւնի խաթեր ոտդ մեր տանիցը կարես, էլ հուրն յաւիտենական իմ երեսը չե՛ս տեսնիլ, Հէնց կանեմ, որ մեր քուչովն էլ չես կարող անց կենալ, մաքուդ լաւ պահի՛ր՝ ինչ որ ասում եմ, մեռած էլ ըլեմ՝ գերեզմանիս վրայ գալու իրաւունք չեմ տալիս քեզ:

— Բան ի՞նչ կը հրամայես, որ անեմ, լալով Հարցրեց մեր ցաւալի եղբայրը, կուզի՞ս որ անկեսի պէս գնամ ինձ չսիրող աղջկանը շլնքս ծռած ողորմութիւնի պէս առնեմ, ախար որ էն մարդն ինձ չի սիրում, ես ընչի՞ եմ նրա մեզքն ընկնում, մեր մէջն ի՞նչ մարդ ու կնկութիւն, ի՞նչ սէր կըլնի. ես էս իրիկուայ անց կացածները իմ մաքիցը ո՞նց պոի ջնջեմ, չէ՞ որ ամէն սհաթ պոի խեղճ կնկայ երեսովը տամ:

1 Գրկից, 2 կրծքիդ:

— Երեսովը տուած վախտն էս էլ ասա՛, որ դու էլ իրան չես սիրիլ, որ դու էլ ինձ ես փաթաթուել ու պաչել. ես էլ Թէ կը պսակուիմ, իմ մարդին կասեմ, որ նա էլ իմ երեսովը տայ, որ ուրիշի շունչն ինձ ա դիպել:

— Հերիքնազ ջա՛ն, ինձ զնամի շմի՛ անիլ[1], ես ի՞նչ անեմ, ո՞ր սարերն ընկնեմ, ո՞ր ջօլերը, ո՞ր ձորերը, ո՞ր գետերը, որ քեզ սիրուիմ. հա՛, ես Հեղնարին չեմ սիրում, նրա համար նշանածայութ շատ կան, Աբշակին ես էլ չեմ ուզիլ որ տան, նա մի գարգակ տըղայ ա, լաւ լաւ ուզողներն իրար գլուխ են ձղում, Թող գնայ մեի հետ բաղդատութի, համա Թող քեզ ինձանից չհանեն: Վաղո՛ւց, վաղո՛ւց մաքումս դրել էի քեզ իմ սրտիս փափագն ասեմ, լընդուս չէր պտրտում, էս անտէր երեսը մոխ ա, չէր բռնում, համա մի՞Թէ դու իմ աչքերիցս չէիր հասկանում: Խեղճ արի՛ ինձ, Հերիքնազ ջա՛ն, չէ մի՛ ասիլ ինձ մի՛ կրակիլ, ես քեզ սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ եմ, որ սպանես էլ սիրո՛ւմ եմ:

— Ընօրէ՛ն, անխղճմտա՛նք, գոնե ա՛ մի՛ ասիլ բաս ես սիրա չունիմ, ինձ մեր չի ծնել, քարից եմ բհամ եկել[2], ես մարդ չեմ՝ Թէ մի մատը երեխայ եմ. էդ ընչի՞ն ա, որ դու սեր կուտենաս՝ ուրիշը չէ: Լսի՛ր, Սմբա՛տ, ընչանք օրս քեզ ոչինչ չեմ շանց տուել, ոչինչ չեմ ասել ու հիմի ասում եմ. չե՛մ ասում ընդհանր հասարդ, որ սրտիդ յոյս դնես, — չէ՛, ասում եմ, որ մաքիցդ էդ բանը հանես. իմացի՛ր, Սմբա՛տ, իմ մեղաւոր չափ դու չես սիրում ինձ, ինչքան որ ես քեզ. էն օրը՝ որ քեզ չեմ տեսնում, իմ օրը սև ա ընդում, աչքս ջուր ա կտրում՝ ընչանք դու մեր շնմբուին անց ես կենում, համա դու քո Աստուածը՝ մի օրից մի օր իմ երեսիցս մի բան հասկացո՛ղ ես. — չէ՝ իմի էլ չէիր իմանալ, Թէ որ բանն էս տեղը չէր հասել, խօսքը տեղը չէր եկել: Սմբա՛տ, ես քեզ սիրում եմ, ու էս սէրը պոի սրտումն Թաղեմ, ինձ հետ գերեզման տանեմ:

— Ի՛նչ դու ասում ես, որ ինձ սիրո՞ւմ ես:

— Հա՛, Սմբա՛տ, սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ եմ իմ գլխիցս շատ և հէնց էդ սէրի անուամբն էլ օրՀնում եմ տալիս քեզ. խօսք առ՛ր ինձ, ընչանք մահներս իրար սիրենք. սիրենք ինչպէս երեխայութիւնից ընչանք օրս սէրը հասկացել ենք, ոնց որ քենուն ու փեսին կը վայելէ, առելին ասեմ, ոնց որ քիր ու ախպօր մէջ սէր կըլնի:

1 Մի՛ մեղադրիր 2 Գայթել:

— Հերիքնազ ջա՛ն, էդ խօսքն ինձանից մի՛ առնիլ։

— Ջէ՛, Սմբատ ջա՛ն, թէ ինձ սիրում ես, մոռացի՛ր ինչ որ լսեցիր ու տեսար, մի օր Հեղնարի երեսովը չտաս։ Ես էլ խօսք եմ տալիս, որ նրան մատով շանց տալու կնիկ շինեմ քեզ համար; նա բարի աղջիկ ա, նա ինքն էս բանումը մեղաւոր չի, ես ու դուն ըլլինք նրա տեղակ, աւելի վատթարը կանէինք, մի կողմից էդ լզօտուած տղէն ա գլխահան անում, մէկ էլ կողմիցը մեր Աստու ծրիցն էլած աղջկէքն են խեղճ ինն քամի տալիս ու կեղծաւորութիւնով գովասանքներ անելով՝ կռնատակերը ձեռուկներ դընում, ի՞նչ ա՝ թէ խելքը փչին որը իր տեղօր, որն իր տախտօր, մէկելն իր քեռու տղի վրայ սիրտը տաքացնին, ինն էլ ի՞նչ ես կարծում, ընչի՞ համար։

— Նրա փող ու հարստութիւնի։

— Է՛ա՛, շատ լաւ հասկացար, բաս էլ մի մեղադրիլ։

Դէ՛ ես էլ հէնց էդ եմ ասում, որ թող Խէչոն իր աղջկանը մի հարուստ տղի տայ ու քո կուռն էլ դար դարդակ բռնի ինձ տայ։

— Քօռն ի՞նչ կուզէր, երկու աչք, համա որ էդ ըլնելու բան չի, ի՞նչ պտի անենք, անխելքութիւն չի ձեռներս չհատած տեղը կուռ մէկնե՞նք. իմ վերջին և առաջին խօսքս էս ա, որ ոչ դու քո հօրը հակառակես, ոչ Հեղնարը։ Առաջու անում մտէք, ձեր ձակատի գրուածքին դէմ մի՛ կենաք, Աստուած էլածն օրհնի։

— Ախար ես քեզանից ո՞նց ձեռը վերցնեմ, լաւն էն չի՞ էս սհաթս հրամայես գնամ ջուրն ընկնեմ խեղդուեմ ու էն աղջկայ անբաղդութիւնի պատճառ չըլնեմ։

Սմբատը գլուխը դէմ տուեց պատին։

— Ա՜խ, ընչի՞ ես էս սհաթս չեմ մեռնում, ընչի՞ ոտս չկոտրուեց բաշիբոզուքի[1] օրը, ես տանուտէրի կարիցը չվէր ընկայ ու բանհոգի[1] չէլայ. ընչի՞ մեր երեխայ ժամանակը չմեռայ պալպ սրտով, երբ որ աշխարհքիցս ոչինչ խաբարութիւն չունէինք ու իրեքըս մի տեղ ընչանք իրիկուն անհոգս ալիրմաղու[2] պէս ժիքանոնցումը

1 Անհոգի։ 2 Թիթեռնիկ։

մի ծաղկից մեկելն կուշտ հինը վազում, մի թփից մեկելն տակին հինը տալ կենում։ Ասում եմ, ընչի՞ էն խոտերի միջին օձն իմ ոտս չկծեց ու ինձ չսպանեց, որ ես օրը չհասնէի։

Հերիքնազը փոքր միջոց ոչինչ չպատասխանեց. նա մոռածում էր։

— Ինձ մտիկ արա՛, Սմբատի կռնիցը քաշեց աղջիկը, փաթաթուր՛ը ինձ, գրկի՛, պաչի՛ իմ աչքերը։

Երկար հրամաններ չէր պէտք, Սմբատը այնպէս սիրեց սիրուն Հերիքնազին իւր կրծքի մէջ, որ մէջքը ծալուեց. երկար ժամանակ նորա աչքերիցը չէր պակուում։

— Էլի՛, էլի՛, պի՛նդ, պի՛նդ հուպ տո՛ւր, Սմբատ ջա՛ն. . . հիմի էլ ձակատս պաչի՛ր։

Ձեզ եմ հարցնում, կը կատարէ՞ր թէ ոչ։

— Դէ հիմի հերի՛ք ա, հիմի իմացա՛ր, որ ես էլ քեզ եմ սիրում, բայց իմ քեռու խօսքն իմ գլխից աւելի ա ինձ համար. յոյս ունիմ, որ իմ խաթեր քեզ համար էլ աւելի կըլնի։ Խօսք տո՛ւր ինձ, Սմբատ ջա՛ն, որ մեր սէրը մեր մէջը մեռցնենք, մեր սրտի խոր քնջնուքը թաղենք, թող ինայ էն յետ ընկած տեղը մինչև մեր մահը անհանգչելի. չէ՛, չեմ ուզում որ բոլորովին անցնի վերջանայ, թող ծխայ՝ բայց չվառուի, թող ծխայ, որ միշտ մտաքներս բերի մեր տուած խօսքը, մտքներս բերի՝ թէ մենք էդ սէրը փոխել ենք ուրիշ աւելի սուրբ սէրի վրայ, փեսի ու քնոջ, քէր ու ախպօր սէրի վրայ։

— Հերիքնազ ջա՛ն։

— Է՛ա՛, դու չես կարողանում քեզ զսպել, քո սրտիդ կրակը չես կարողանում հանդցնել իրաւունք ունես, զօռի բան չի, քանի քո սիրածն աչքիդ առաջին կենդանի մարդ ա գալիս, քանի որ դու նշանածիդդ աւելի նրա հետ պտի տեսնուես, ասես, լսես, սիրող թափ տաս, ես էլ եմ հասկանում, որ դժար բան եմ ուզում քեզանից. համա դրա դէմն ես պիտեմ, դրա համար շատ բան չի հարկաւոր, էգուց առաւօտ կերթաս առուի թումբը, Բագալենց բակի[1] դլուխը, ծակ քարի կշտին կը կանգնես ու ներքեւ մտիկ կը տաս։ Դի-

1 Պարտէզ։

տես ի՞նչ կը դանես քարափի տակի անդնդումը. — դու կը տեսնես նրան, որի պատճառովը դու հօրդ խօսքը չպոի կատարես, դու կը տեսնես մեծ Թիքէն անկաղը մնացած մի լոշ[1] արնի մէջ շաղախուած ու քո խաթեր իր ջահել ջիւան[2] արևը մթնցրած։

— Ի՞նչ։

— Հա՛, եղուց էլ հերիքնապդ չի ըլնիլ ու նրանից յետը՝ քո քէֆը, կուզես՝ ա՛ռ Հեղնարին, կուզես՝ ոչ. էլ իմ աչքերս չեն տեսնիլ, իմ խղճմտանքս էլ ինձ չի տանջիլ, որ իմ խաթեր իմ հօրից աւելի սիրելի քեռին օր ծերութեան դարդահ պոի ըլնի՝ թէ իր տուած խօսքը չկատարուեց։ Ես ա իմ վերջին խօսքը, Սմբա՛տ, էլ ուրիշ ասելիք չունիմ, հիմի գնա՛, տէրը քեզ հետ։

Յետ խփեց Հերիքնազն իր մօտից Սմբատին ու ինքը վերադարձաւ շտապով սանդուխներից իջնելու։

— Ինչո՞ւ եմ տալիս, Հերիքնազ ջա՛ն, քո քաղցր անունը վըկայ, խո՛ւք եմ տալիս, որ ինչ քո կամքն ա, էն անեմ. քանակիցը վազեց փէշերը ձգեց Սմբատն ու յետ քաշուեց, խո՛ւք եմ տալիս, որ ամէն տեսած ու լսածներս հէնց էս օհանեակը մոռանամ, որ Հերիանների սիրեմ, սիրեմ՝ քո՛ սիրու խաթեր։

— Իմը իմ ապիղ փեսէն ես, իմ քաղցր սիրեկան ախպէրն ես, գարձաւ Հերիքնազն ու Սմբատի ձակատին մի սրտանց համբոյր դրոշմեց։

---

1 Դիակ։ 2 Նորատի։

Ժ.Զ.

ԴՐԻՋԱԿ

Նահապետական պարզ սովորութիւններն օր քան օր հետանում են, բարեկամութիւն, հարևանութիւն սուրբ բառերն իրանց նշանակութիւնը միմիայն քաղաքավարութեան ձևերի մէջ են պահում, էլ չկայ այն ընտանեկան կապը, որ օտարներին միմեանց հետ մի տան պէս պահում էր. խոր գիւղերումը, որպէս և իցէ, այժմ կը տեսնես նախկին քաղցրութեան ստուերը, իսկ քաղաքներումն ու մեծամեծ գիւղերումը՝ երբէք։ Մի անմխիթար ապագայ է գուշակում մեզ այս բանը։

Սրանից քսան կամ քսան ու հինգ տարի յառաջ, իմ լաւ միաքս է, մեր գիւղերումն երկու ղրացի մի տան պէս էին ապրում միառած ունէին, որը պատգամի նման ընդունուած էր ամենքից։ «Փոխը օխտը տուն ա պահել» Այս առածի սուրբ նշանակութիւնն ամենքին լաւ յայտնի էր, պատէ պատ հարևաններն եղբօր նման միմեանց կարիքին հասնում էին։ Ինչպէս այսօր, ես յիշում եմ դրիջակը, որ բացած էր մեր և մեր պատկից ղրացի Աղատենց պատի մէջ։ Այս մի փոքրիկ թափանցիկ պատուհան էր՝ երկու հարևանների միջնապատումը շինած։ Ոչ վարագոյրն էր ծածկում այդ պատուհանն և ոչինչ պղպել արգելք խափան էր լինում ակատես լինել միմեանց տան դադտնիքին, մի բարոյական կզացմունք էր, որ հաստ պատի նման փականք էր դնում դրիջակի վերայ, այն է՝ ամէն մարդ սուրբ պարտականութիւն էր համարում դրիջակը գործ դնել կարևոր ժամանակը. ձրագ ուզել միմեանցից, կերակրի բաժին տալ իրարու, քաղցր զրոյցներ անել պարապ միջոցներում, մէկս մէկի նեղութիւնին օգնութիւն հասնել։ Ահա ինչ էր դրիջակի նշանակութիւնը։ Ընդ հակառակն՝ աններելի յանցանք էր, եթէ մինը չար դիտաւորութեամբ ձգտէր իւր դրիջակից դրացու տան գադտնիքն իմանալ. եթէ որպէս և իցէ դիպուածով նա տեղեկանար դրիջակովը իւր հարևանի տան որ և իցէ ընտանեկան խորհրդին, նա պատրաստ էր իւր լեզուն բնիցը պոկ տալ, քան թէ մեղանչել դրացութեան սուրբ պարտականութեան դէմ։

Ա յսչափ մեծ էր այն նուիրական փոքրիկ պատուհանի սրբու-
թիւնը մեր պարզ և առաքինի պապերի համար։

— Ուրիք ջա՛ն, ամա՛ն, ձեզ մատա՛ղ, առանց պատը ծե-
ծելու դրիջակովը չմոխիկ տաք։ ո՛վ գիտի, ի՛նչ բանի կեն, զգուշա-
նում էր մեզ ամէն ժամանակ իմ լուսահոգի մայրս։

Մի կողմից էլ ուրքան այս դրիջակները շինուած էին փոխա-
դարձ օգնութեան նպատակաւ և կամ դուզէ, պարսկական բռնա-
կալութիւնից ազատուելու մտքով, այդ պատուհաններն էին պատ-
ճառը, որ յանկարծ լսում էիր, թէ Կիրակոսն իւր ազջկանը տուել
է Մարկոսի տղին, այսինքն իւր դրիջակակից Հարութեանի որդուն։
Երկու սիրով հարեան տանտիկին մայրերն աղատ միջոցները ժա-
մերով ծնօտները դէմ էին տալիս դրիջակի քարին և քաղցր ղօղանջ-
իր մէջ խորասուզուում, ուր և առանց իւրեանց ամուսինների ու
որդւոց համաձայնութեանը խնամի էին դառնում։

Շատ յաճախ էլ պատահում էր, որ այս դրիջակներըը դի-
շերներն անխօս վկայ էին լինում երկու ձեռների այս և այն կող-
մից միմեանց մէջ սխմուած ճնալուն, կամ ժամերով երկու շրթունք-
ների իրարու պինդ կպած լինելուն։

Երկու հարեան տներից մանչիսական զօրութիւնը դրիջակի
պատուհանովը երկու զոյգ աչքեր իրար քաշելով, մինչև այստեղն
էր հասնում և որդեսէր ծնող մայրերը մարդկանցից թագուն
լսելով իւրեանց սիրելի զաւակների պարզ խոստովանութիւնը, իւ-
րեանց համաձայնութիւնն էլ վերան աւելացնելով՝ շատ հեշտու-
թեամբ առնում էին տան դլխի հաճութիւնը. մին էլ էն տեսար, որ
ախչի Սառան, Հերնար, Գասպար, Վարդան, քիքիր, Հօքիր, ափեր
մտերմական բառերը, որոնցով կոչում էին իրարու, փոխուեցան խը-
նամի ընդհանուր խօսքի։

Ահա այս դրիջակն էր մեղաւոր, որ մի օր Հերիքնազին
սաստիկ վախացրեց։

Թէչանենց Թէչանի տանը վաղուց ամէնքը քնած էին, Մարիամը
տնային ծանր աշխատանքից յոգնած՝ տեղը մտնելն ու խռմփոցը
բարձրացնելը մին արեց, ինքը Թէչանն ամէնքիցը շուտ էր իւր սի-
րելի անկիւնում հանգստանում, Հերնարն էլ Հերիքնազի հետ մի
անկողնում միմեանց դրկել քնել էին ու բաւականին գիշեր էր անց-
կացել։

Ի՞նչն էր ուրեմն պատճառը, որ յանկարծ մեր Հերիքնազին

զարթնացրեց՝ չգիտենք. այսքանը միայն յայտնի է, որ նա իւր
կողքը դատարկ գտաւ։

Սկզբումը նա շատ չմտածեց, բայց մինչ սպասում էր, թէ
ահա Հերնարը կրկին իւր կողքը կը մտնի, պարզ մի շշնչիւն լսեց,
ուր իւր անունն էլ մի քանի անգամ կրկնուեց։ Ներիւղը պատեց
աղջկանը, ի՞նչ նորանշան երևոյթ էր, գողե՞ր են մտել տունը, կամ
թէ ինքը Հերնարը միաբանած մեկի հետ փախչո՞ւմ է, մի դաւա-
ճանութիւն կայ։ — Նա անկարացաւ հասկանալ։ Ձայն տայ ար-
դեօք, թէ մի փոքր էլ համբերի, — չկարողացաւ վճռել. սառը
քրտինքը ծածկեց նրա անձը։ Որպէս և իցէ նա հանեց գլխաստա-
կից իւր մինթանէն[1], գլուխն անց կացրեց ու տեղի մէջ մի քանի
վայրկեան մնաց նստած։ Երևի թէ շշունչ պատճառողները չլսեցին
Հերիքնազի շարժուածքը, անընդհատ քչփչոցը շարունակում էր։

Հերիքնազը լարեց իւր լսողութիւնն և պարզ կարողացաւ եր-
կու ձայնից մեկը ճանաչել։ Էլ կասկած չկար, Հերնարն էր մեկը,
բայց ո՞ւմ հետ և ընչի՞ համար։ Ա յսքան միայն հասկացաւ Հերիք-
նազը, որ ձայները գալիս էին դրիջակի մօտից։

— Հա՞, հողն իմ գլխին, ա՛յ ցլին[2], ինչ կը լինի, թող լինի,
մտածեց Հերնարն ու փոլտող, համարեա, յառաջ եկաւ ու այն-
քան մօտեցաւ ձայնին, որ իւր ձեռքը դիպաւ Հերնարի հագուստին։

Թէ ի՞նչ լսեց, ի՞նչ սիրահարական ձեռնաշարժութիւններ
եղան նրա առաջին, մենք աւելորդ ենք համարում մի առ մի պատ-
մել. մեզանից ամէն մին թող յիշի իւր պատանեկութիւնը, եթէ
նա մտել է խոհականութեան տարիքի մէջ, իսկ պատանիների հա-
մար՝ բոլորովին անտեղի եմ կարծում կրկնել. դեռ ես բերանս չբա-
ցած՝ իրանք ինձանից աւելի լաւ թարգման կը լինին երկու քչփչող-
ների խօսքերին, եթէ ասենք, որ Հերիքնազը պարզ լսացաւ, որ
իւրեանց հարեանի տղին՝ Շուշհետաճողենց Արշակը դրիջակի
սրբութեան դէմ դաւաճանել է և գողացել մի գլուխը կապած[3] աղջ-
կայ սիրտ, ինչպէս որ Հերնարն էր։ Ի հարկէ, ոչ ոք այնքան չէր
մեղադրիլ երկու պատանիներին էս, եթէ սրանցից մինն՝ ինչ-
պէս մեզ յայտնի է, նշանած չը լինէր, անկասկած մի քանի օրից
յետոյ երկու տունը խնամի կը դառնային. բայց բանն այս է, որ Հեր-
նարն էլ իւր գլխի տէրը չէր ու ինքն ևնթարկուել էր Արշակի աչ-
քերի ազդեցութեանը։

---

1 Շրջազգեստ։ 2 Թաղ։ 3 Նշանած։

Յիշէց Հերիքնազը, որ սկզբումն Արշակը շատ անգամ իւր կողքն էլ մի քանի տարօրինակ հայեացքներ էր արձակում, որից ինքը փախս տուեց, սակայն շատ դղջաց խեղճը, որ այնքան հեռատես չի դանուել, որ Հեղնարին էլս զգուշացներ Արշակի խարդախ և գրաւիչ աչքերից։ Երբէք թոյլ չէր տուել իրան Հերիքնազը մտածել, թէ մի բաշիբոզուկ արած աղջիկ կարող կը լինի այդ աստիճան թոյլ և անհաստատ գտնուիլ, որ ոտքի տակ տայ հօր կամքը, օրիորդական համեստութիւնը, օտարների աստւելման ու ենթարկուած ուրիշների աչքերին։

Ընդարձ Սմբատն ամէն բանով գոված էր, ամէն բանով շնորհալի, աշխատասէր և քաղցրալեզու, շատ ուժեղ և բարեկազմ, խարտեաշ և գանգրահեր, բայց մի յատկութեամբ Արշակը ոչ միայն Սմբատից՝ գիւղի բոլոր երիտասարդներից էլս գերազանցուում էր։ Այդ նրա թովիչ ու գրաւիչ աչքերն էին։ Երբ որ նա իւր հաստ յօնքերը ցած էր թողում և աչքերը՝ սևեռում մէկի վերայ, մանաւանդ եթէ սիրաշալախ լինէր նրա նայուածքը, ամէն բան պըրծա՛ւ՝ ամէն գոռոզ ու անընկճելի սիրտ պէտք է խոնարհէր նրա յաղթանակի առաջին։ Մեծ հաստատակամութիւն պէտք էր, որ դիմադրէր։

— Արշակի աչք ու ո՛ւնքն իմը պտի ըլնի, Սմբատի՝ բոյը, բուսաթն[1] ու մկկել ընորհքները, ցանկանում էին գիւղի բոլոր երիտասարդները՝ Բաղդադիցն էլ հուրի փարիներին[3] քամակիցս քըցած՝ ընչանք ըստեղ քաշ կը տայի։

Այս գիտելով, Հերիքնազը դառապարտում էր ինքն իրան՝ պատի տակին կանգնած տեղը, երբ լսում էր սիրոյ թևերի վերայ նըստած երևակայական աշխարհքի մէջ երկու կեանք վայելողների խօսքերը։ Նրա բարկութեանը չափ չկինայ, կանգնած տեղը դողայ, երբ նոցա համբոյրի ձայնն առաւ։

Սկզբումը նա կարծեց, թէ նոր է սկսել սրանց սիրահարութիւնները, բայց հիմա էլ կասկած չկինայ, պարզ լսեց, որ մօտ մի տարի է՝ ամէն գիշեր սրանք բոլորի քնելուց յետոյ՝ դրիջակի տակ ժամեր են անց կացնում։

— Ի՞նչ անեմ, լիս ընկնե՞մ, թէ չիմանալու տամ ու կամանց կամանց Հեղնարին խօսք հասկացնեմ ու էս չար ճամփից յետ դարձնեմ, մտածեց նա և վերջինն ընտրեց։

Մի և նոյն ձևով փորսող յետ դարձաւ Հերիքնազն իւր անկողինն և պինդ հաղալով՝ Հեղնարի անունը տուեց։

Սիրա ի թունդ, ափալ-թափալ[1] Հեղնարն իրան ձգեց անկողնին։

— Հեղնա՛ր, Հեղնա՛ր, կրկնեց Հերիքնազն և շարժեց ընկերուհուն։

Ի՞նչ կայ, Հերիքնազ ջա՛ն, պատասխանեց կցկտուր Հեղնարը։

— Մի վատ երազ տեսայ, վրայ բերեց Հերիքնազը, սաքի թէ դու արէն ծոզն էիր ընկել, քանի ուզում էիր լեզ տալով ազատուիլ, մեր Հարևանենց Արշակը կուռդ քաշում էր աւելի խորն ու խեղդել ուզում։ Մենք յոյսներս կտրած՝ գլխներիս վեր էինք հատում, համա կռները քշտած՝ էն դհիյը Սմբատն յառաջ եկաւ, ընչանք կէսը ջուրն ընկաւ ու Արշակին մի սիլլա[2] տուեց, յետ քցեց, քեզ ծտի պէս ձեռների վրայ առաւ, ազատեց. դեռ ջրի ափը չէիր դուս եկել որ վեր թռայ, տեսայ տեղումն եմ։

Հեղնարի սիրտն սկսաւ աւելի բարձր ու ցածր անել, նա լըջմտաբար հաւատաց Հերիքնազին։

Մի քանի անգամ վճռեց Հեղնարը պատմել յանցանքն իւր ընկերուհուդն, մի քանի անգամ սկսեց և էլի չկարողացաւ շարունակել։

— Լա՛ւ, լա՛ւ, Հերիք ա, ես ամէն բան գիտեմ, Հեղնա՛ր, ընդհատեց Հերիքնազը. դու էն բանն ես անում, որ մի օր հօրդ ծնկները պտի քուչի մէջ տեղը ծալուին, ինքը վեր ընկնի, հոգին տայ, ո՞վ ա լսել, ա՛յ ձար, կտրած՝ էդպէս բան։ աղջկին երեխութիւնից նշանած ըլի, հերը գլխին կանգնած ունենայ ու էնքան երեսի մառնը վեր բերի, որ ուրիշի տղի հետ սէր անի. ի՞նչ կանես, ա՛յ հոդը մեր գլխին, թէ որ էգուց նշանածդ իմանայ ու յետ կանչի, ի՞նչ կանես, թէ որ էդ պարծենկոտ տղէն էգուց աշխարհքովը մին անի[3]. դու հէնց դիտես, թէ դա սրտով ա քեզ սիրո՞ւմ, դա քո կարողութիւնի համար ա քեզ գերի դառել։

— Արևիդ մեռնի՛մ, Հերիքնազ ջա՛ն, էդ խօսքերն Արշակի համար մի՛ ասիլ, նա ինձ համար գլուխը մահի կը տայ, նա ինձ

1 Հասակն և տեսքը։ 2 Ցաւէրժահարաներին։

1 Ի քթթել ական։ 2 Ապտակ։ 3 Հռչակի։

սրտով ա սիրում, ես էլ իրան եմ սիրում, Սմբատն ինձ արժան չի, ես քնած մոլորածի կնիկ դառնալու չեմ. իմ հօր հարստութիւնի տէրն ես եմ, ես կուզեմ, որ իմ մարդը գեղամիջումը մի անուամ ուներայ, ինձ էլ խանում ասեն, մեր դռանն էլ մենծաւորներ վեր գան, վայ ինձ, Աստծանից թագուն չի, քեզանից պահել եմ, մի տարի ա, որ Արշակի հետ ամէն քշեր դրիջակի ծակովը մեր սիրտն իրար բաց ենք անում։

Այս դիշեր երկու աղջիկները, համարեա, անքուն լուսացրին, ոչ մինն և ոչ միւսը իրարու տեղիք չտուին, Հեղնարը պնդում էր, որ կամ Արշակը՝ կամ ոչ ոք, իսկ Հերիքնազը Սմբատի արժանաւորութիւններն էր բարձրացնում ու Արշակին պարսաւում։

— Ի՞նչ երեսով ես մտիկ տալիս Սմբատին, երբ որ խեղճը միամիտ գալիս ա մեր տունը՝ էն յոյսով, որ իր նշանածին տեսնի։

— Ինց որ քօռ գրող ու մահին. սաքի գու ո՞նց չես գլխի ընկնում, որ ես աչքով աչք չունիմ նրան մտիկ տալու, սաքի ինքն էլ ո՞նց չի հասկանում, որ մի տարուց աւել ա, որ ես հետը մի խօսք չեմ խօսել, աներեսի պէս գալիս ա քեզ մօտ նստում՝ նրբատում ու վեր կենում հեռանում։

— Ըմ՞թ քեզ, Հեղնար, ո՞վ մոքումն անց կը կացներ, թէ ուրիշնի սիրելու համար ես նշանածիդ հետ սառը վարուում, մի քանի հետ խեղճ տղէն ինձ հարցրել ա, ես էլ Հոդն իմ գլխին միամտացրել եմ իրան, որ դու էլ վաղուան երեխէն չես, որ ուսերը վեր էիր բերում, հիմի ամէն բան հասկանում ես, հիմի ամանչում ես նշանածիդ հետ խօսալը։

— Հերիքնազ ջա՛ն, շա՞տ ես հաւանում դու Սմբատին։

— Ա՛յ քօռանամ, մեր մհալումը նրա նման էլ ո՞վ կայ, ծակ բերանը նրա գովքն ա անում, աշխարհքը նրա բարի սիրտն ու ղօչաղութիւնն[1] ա առակ չենել ասում, ես ի՞նչ եմ, որ խալխից ջոկնում եմ, ես հօ ամէնքից աւելի եմ ճանանչում։

— Թէ որ էդքան խելքամաղ ես էլել, ընչի՞ չես դու առնում նրան, հազիր ինձ էլ միանգամից կազատես իմ աչքի գրողիցը։

Հերիքնազը սարսափեց ու պինդ փաթաթուեց Հեղնարին, նրա մոքումը նոր բան ծագեց, մինչև այսօր այդ բանի վերայ երբէք չէր մոածել. իրա՛ւ է, նա սիրում էր Սմբատին ամենայն սըր-

1 Քաջութիւն։

տէ, բայց իբրև աղջօր, իբրև իւր սիրելի քեռու աղջկայ ապագայ ամուսնոյ. այսօր նա ինքը քենի էր և քենին Հայաստանի մէջ հարստատ քրոջ հետ մի կարգումն է կանգնած, մի զանազանութեամբ միայն, որ քենու վստահութիւնն աւելի մեծ է քրոջից։

Քոյրն աղջօրը, բնական է, կը սիրի, բայց նորա մօտ աւելի համարձակ չի լինիլ։ Մեր աղբայրները կարծում են, թէ քոյրերի պարտականութիւնն է իւրեանց գլխովը փարիլ, իւրեանց համար տաչորուիլ գլուխը մահու տալ, աղջօր անունովը խանդաղատիլ, բայց իւրեանց կողմից բաւական է, որ եղբայր են, դրանով վերջացաւ փոխադարձ պարտականութիւնը, էլ գդուանք, էլ քաղցր վարուղութիւն, էլ ուրախ հայեացք, մի անուշ խօսք՝ երբէ՛ք, երբէ՛ք, դրանք եղբօր կողմից աւելորդ են։ «Քոյրն ասում է եղբայր ունիմ, եղբայրն ասում է քոյր չունիմ», ձայն է տալիս հասարակաց առածը. և եղբայրները կարծում են, թէ ամենայն իրաւամբ է յօրինած այս նախադասութիւնը։ Փեսան այդպէս չէ, մանաւանդ՝ նորափեսան, և առաւել՝ նորանշան փեսան։ Նա ընդհակառակն իւր սրտի բոլոր քնքշութիւնները, որ պէտք է գործ դնէր նշանածի համար, անխնայաբար սփռում է իւր քենու առաջին, նրա գոգն է լցնում իւր բերած քաղցրեղէնները, նրա հետ մի անկիւնում կուչ եկած՝ կտուց կտցի է տալիս ու մինչև գիշերուան կէսը քչփչում։

Փեսան ու քենին ոչ ոքից չեն ամաչում, տան գլխաւորները տեսնում և ուրախանում են, երբեմն էլ կատակով կրկնում. — այ խելօքներ, — շատ մի՛ սիրել՝ ատել կայ, շատ մի՛ ատի՛ սիրել կայ, — բայց ոչ մինը սոցանից չի ամաչում պատասխանելը.—իմ փեսան ինձ համար գլխիցս առաւել է, կամ թէ՝ ո՛վ ինձ պէս քենի ունենայ՝ թող պարծենայ, համ կը սիրեմ, համ ամէնքի կշտին էլ խօսքս բարձր կըլնի։

Իրաւունք ունի նորափեսան պարծենալու, նշանուեցաւ թէ չէ, առաջինը քենին էր, որ հեշտացրեց իւր մուտքը նշանածի երեսը տեսնելու։ Շատ անգամ տղայի մտքովը դեռ չի անց կացած լինում, կամ չի վստահացած լինում դեռ ևս զրքանչենց գնալու վերայ մտածելու, որ իրեն դիմաւորում է մի երեխայ և յայտնում քիքիրի[1], դու հասկացիր, քենու զարմացքը, որ ինքը փեսան արժան չի տեսնում նրան տեսութիւն գալ։

1 Քուրիկի։

Մեզ յայտնի է, որ իգական սեռը բերան բանալու իրաւունք չունի, որ նոցա լեզուները փակուած են, որ կէս դարու չափ սրանից յառաջ ամուսինը տարիներով չի խօսացել իւր կնոջ հետ, բայց զարմանալի է, որ փեսան բացառութիւն է։

Առաջին անգամը մեր ամօթխած քենին — օրիորդ՝ թէ տիկին, այդ մի և նոյն է, բայց գլխաւորապէս օրիորդը, դիմաւորում է նորափեսային, բռնում նրա ձեռքը, սխմում իւր ձեռքի մէջ, ողջունում նրան և մինչև ականջները կարմրատակած փեսային քարշ տալիս դէպի տուն։

Մինչև այսօր էլ կան այնպիսի խստասիրտ և հնամոլ հայրեր, որ ոչինչ բանով չեն ցանկանում իւրեանց փեսաներին մինչև պսակի օրն իւրեանց դուռը ոտք ներս դնել տալ, բայց եթէ այդ տանը կայ մի քենի, հայրիկը թէ կուզէ երկինքը թռչէ, նրա կամքը չպէտք է կատարուի, փեսան մուտք կը գտնի իւր զրքանչի տունը։

— Էս իրիկուն ես մեր դրսի պատի դլխին [1]կանանաճ կը ընկնիմ, ապսպարում է քենին իւր սիրելի նոր փեսային, մութը որ լաւ գեհինն առնի, դու արի պատուվը բանձրացի՛, մի վախիլ, ես կուռդ կը բռնեմ, չեմ թողալ վէր ընկնիս, կամ թէ՝ դրսի դռան բանիքը մէջը կը թողամ, ձեռդ սողնակովը [1] կոխի՛, մատդ կոտրտի [2] տակը տո՛ւր, հեշտ կը բացուի. ես մեր չարդախի [3] փէտերի տակին քեզ կսպասեմ։

Մի քանի օր ժամերով տուն չի մտնիլ մեր քենին, ձեռը ձրգած փեսայի չռփայի [4] օձիքին՝ նորա հետ քաղցր զրոյցներ է անում, ի հարկէ իւր քրոջ վերայ։ Տանն ամէնքը գիտեն այս բանն և չեմանալ են ձևացնում։ Հայրն և ես մի օր նկատում է աղջկայ շատ բունաւոր բացակայութիւնը, գլխի է ընկնում, բարկանում է կնոջ վերայ ու վերջն ինքն էլ համոզուում է, որ ջահել տղայ է, հարկաւոր չի սիրտը կոտրել, աշխարհքի համար ադաթ [5] չի՝ իրանց համար բէդաթ [6]։ Այս խօսքերը միտքը բերելով՝ ձեռքը թափ է տալիս ափսուն ու — գլխներդ քարն, ինչ ուզում էք արէք, ասում ու լռում է։

Այս մի դատարկ խօսքին էլին մնում։ զրքանչին ինքը դուրս է գալիս, աղջկանը ձայն տալիս, որ էդ դող կատուին, այսինքն փե-

1 Բանալու ծակը։ 2 Փայտեայ փականքի միջի մանր առարմները։ 3 Սրահ։ 4 Վերնազգեստ։ 5 Օրէնք։ 6 Ապօրինաւորութիւն։

սային ներս բերի։ Քնքուշիկ փեսաէր քենին քարշ տալով անց է կացնում մեր ամաչկոտ նորափեսային այն նուիրական շէմքովը, ուր այժմ մի սիրտ բաբախում է։

Ո՛չ պակաս սրտատրոփ՝ պաղ քրտինքը ջանն առած՝ գլխակոր՝ կարմրատակած՝ մտնում է մեր նորափեսան, կամ լաւ ևս է ասել կուրօրէն հետևում է իւր քենուն և դիմում դէպի տան վերին անկիւնն, ուր յօնքերը կախ՝ կնձռած երեսով նստած է աներն, և նորահարսի նման համբուրում նորա ձեռքը։

— Կարո՛ղ ես եկել, նոյնպէս յօնքերը չբարձրացնելով՝ ասում է անողոք աներն և լռում։

Դէ հիմի էլ նա՛ի կուրծքը պաչէ, ներկայացնում է մեր ճարպիկ քենին, սա էլ իմ մենծ ախպօր կնիկն ա՝ քո խանմբաջին [1]։ Բոլորին ներկայացնում է նա, բացի մէկից և այն մէկն՝ ամէնքիս էլ յայտնի է, որ ինչպէս ասած է, մկան ծակը հազար թումանով է առել, ծալքի վարագուրի տակն է մտել, կամ միւս սենեկում հօր գլխավերևն երեսը պատին տուած՝ պպզած [2] է ու չի համարձակուում գլուխը բարձրացնել։ Քանի հայրիկն արթուն է, նա իւր դարանիցը չպէտք է դուրս գայ, իսկ հայրն այդ 'ի հարկէ լաւ գիտէ, շուտ անկողինը բանալ է տալիս, պարկում ու գլուխը վերմակի տակն արած՝ լուռ կենում։ Անուհետև՝ ողջ մէկ է, ափսուն քնա՞ծ է, թէ աչքերը պլստրակին արած՝ մի արանքիցը նապաստակի նման դիտում է, թէ ի՛նչպէս իւր անպիտան փոքր աղջիկը քարշ է տալիս նշանած աղջկանն և քամակին մխնում նստացնում, և յետոյ՝ փոքր առ փոքր յառաջ քարշելով՝ ծիծաղելով ասում.— դէ լա՛ւ, ամանչիլ մի՛, չեմ ուզում՝ ջէբս քցի՛, մօտ արի՛, ես մեր թագայ [3] խնամոնց տղին ձեռը տուր։

— Տօ՛, տնաշէնի տղա՛յ, դու էլ սրանից աւելի հարկաւորն ես, բերանիցդ հօ՛ քրեհ չէ՞ն ուզում, կուռդ բան ուզովի հօ չէ՞, մկնի՛ իրան, բարով տու՛ր,, հարց ու բարով արա քո աներանց մենծ աղջկանը, քաջալերում է քենին փեսային։

— Կարո՛վ, շատ կամաց, աչքերը գետնին ձգած՝, ձեռքերը դողալով՝ սիրտը վեր ու նիստ անելով՝, ձգում է մեր փեսան իւր ձեռքը։ Աներես քենին երկուսի ձեռքն էլ մօտեցնում է իրարու և պինդ սխմում։

1 Խանում քոյրը։ 2 Կքել։ 3 Նոր։

— Դէ՛ ահա, հը՛, Աստուած տայ ընէնց պինդ կպչէ, որ էլ պոկ չգայ։

Ուրբան և լինի՝ տղէն պնդերես է, այսչափը հերիք եղ, այնպէս է ձգում խեղճ աղջկայ կուռը, որ փոքր է մնում պրկուի, թէ որ նա կամաւ մօտ չգայ։ Ի՞նչ պէտք է անել, ականջ հնազանդում է, յառաջ է գալիս, չընդդիմանալով իւր ձեռքին ժամերով տրորուիլ իւր ապագայ թաղ ու պսակի ձեռքի մէջ։ Բայց թող այդքանով բաւականանայ մեր պարոնը, թող ուրիշ ոչինչ չսպասի, իւր նշանածի ձայնին լինքն արժանանալու չէ, թէկուզ հինգ տարի էլ նշանուածծ մնան. այսչափս կրօնաւորաց բաւ է։

Ու փեսան բաւական է սրանով, նա ուրախ է, որ ամէն երեկոյ զրքանչէնց տունը գալուս, կարող է իւր ձեռքի մէջ ունենալ նշանածի ձեռքն և մի անկիւնում նստած՝ իւր սիրեկանի ու քենու հետ ասել, խօսել, ծիծաղել, հանաքներ անել, իւր խօսքերին քենուցը պատասխան առնել։ Քենին նշանածի բերանն է։ Եւ այս նուիրական էակը, այս քնքոյշ արարածը, փեսայի և նշանածի միջնորդը՝ քենին է, քենին՝ նորափեսայի նոր քոյրը, որին իւր բարեսրտութիւնի համար փեսան քրօջից աւելի է սիրում, սիրում է սուրբ սիրով, սիրում է առանց մի չար միտումի, սիրում է ինչպէս կը սիրէ քոյրն իւր եղբօրը, մայրն իւր աղջկան և այլն։ Նոյն և մի համակրութիւնն էլ, նոյն և մի փոխադարձ սէրն էլ այս պարզ՝ անմեղութեան տիպար քենին է տածում իւր մէջ՝ ի սէր իւր հարազատ քրօջ դէպի նորա նշանածը։ Ոչ նոցա մտքովը մի օրից մի օր խղճի ընդդէմ բան կանչի և ոչ մենք իրաւունք ունինք բամբասելու։

Քենին ու քոյրն՝ երկուսն էլ մէկ են, փեսան եղբօրից ոչ ոք չի ջոկել. օրիորդն իրաւունք ունի կուժն ուսին ջրի ճանապարհին մի քանի րոպէ կանգնել ու քաղցր և հեզահամբոյր դէմքով փսփսալ մի երիտասարդի հետ և առնէն մի գիւղացի սրբապղծութիւն կը համարի մի չար խորհուրդ մտքովն անց կացնել. — քենի ու փեսայ են — կասեն ու կերթան իւրեանց դործին։ Այո՛, քենի ու փեսայ են, նշանածներ հօ չե՞ն, որ իրար շուաք տեսնելուս մինը հարսը՝ միւսը հիւսիս փախչի։

Այս սուրբ և նահապետական սովորութեան դէմ օրինակ չէ եղել, որ մէկը դատաճանի, էլ ի՞նչ զարմանք ուրեմն, որ մեր Հերիքնազն էլ կը հետևէր. ի՞նչ կայ, որ Հեղնարն իւր քեռու աղջկին է և ոչ քոյրը, նոքա երեխայութիւնից միմեանց մօտ են մեծացել և

հարազատ քրօջ պէս իրար սիրում են, ուրեմն Սմբատը Հերիքնազի փեսան է, իսկ փեսան սուրբ է մինչև մի քանի սերնդի համար և։ Չհատութիւնը մեր մէջ ոչ միայն օրէնքով է արգելեալ, նա մահացու մեղք է և ժողովրդի հայրենի սովորութեան համաձայն։

Հայոց ողջախոհութիւնը մինչև եօթը պորտն է ջոկել իսկ մինչև այդ սահմանը, բոլոր բարեկամներն իւրեանց ազգականների համար սուրբ և պաշտելի են եղել։

Չգիտեմ, օտարների ազդեցութիւնի՞ն էր, թէ ժամանակի պահանջն էր, որ մի քանի տարուց հետէ մեր նախնեաց այդ սուրբ աւանդութեան պատը խրամատուել է, առաջուան նման էլ շատ չեն հարցնում, ազգակցական յարաբերութիւններն էլ այնքան պինդ չեն, երեք չորս պորտից մարդիկը միմեանցից օտարանում են և ձգտում՝ լանջական կապով կրկին միանալու։

Մեր շահասէր սուրբ հայրերին էլ այդքանն էր պէտք, ի հարկէ սակաւ բացառութեամբ, կանոնագիրքը ձեռքներին, իւրեանց խղճին է մնում այս չհաս հասարել՝ միւսը հաս։ Վերջումն, ի հարկէ ամէնքն էլ հասնում են, երբ որ լնաբուռն աշխատասիրութիւնը գրպանը կամ խուցն է մտնում։ Իսկ այդ սիմոնականութիւնն, այդ կաշառակերութիւնը սակաւ գայթակղութեան պատճառ չի դարձել, հոգևորականութեան վարկն և յարգը ստորացնելու սակաւ առիթ չէ եղել։ Ժողովուրդն այսպէս է, ինքը կը տայ կաշառը, ինքն էլ կը դատապարտի առնողին։

— Է՛ա, դրուստ եմ ասում, Հերիքնազ ջա՛ն, կրկնեց Հեղնարը, թէ որ Սմբատին դու լսէիր սիրում ես, դրանից աւելի լաւութիւն չես անիլ ինձ, թէ որ նրա սիրտը քեզ քաշես, քեզ վրայ տաքացնես ու ինձ ազատես։

— Քօռանա՜մ ու կրքանա՜մ, օխտը տակ երկինքը փուլ կը գա՛յ, ինձ տակովը կանի՛, թէ որ էդ բանն ես միտք անեմ։

— Չէ՛, Հերիքնազ ջա՛ն, ոտիդ տակին ղուրբան գնամ, ինձ ազատի՛, Սմբատը թէկուզ երկնքից էլ վէր եկած լլէ ոաներն ամպոտ՝ ինձ պէտքը չի, իմ բերնի օրբութիւնն ա, ես նրան չեմ կարող սիրել։

Շատ դժուար էր Հերիքնազի դրութիւնը, նա իւր ամենաս սրբոտովը թոյլ չէր տալ իրեն իւր քեռու հացին նենգութեամբ նայել քեռու փեսայի սիրտը գողանալ, բայց մի և նոյն ժամանակն իւր կամքի հակառակ Հեղնարի առած խօսքերը մտքիցը չէին դուրս գա-

լես։ Նա երկմիտ չէր Սմբատի լաւ յատկութիւնների մասին, նա կասկած չուներ նոյնպէս Սմբատի իւր վերայ ունեցած քաղցր ակնարկութեան համար, նա տեսնում էր, որ Սմբատը արտամեայ է լինում Հեղնարից՝ կոպիտ վարմունքից, երբեմն էլ անբաւականութիւնն իրան յայտնում էր, բայց այս նրան տեղիք չէր տալիս սրբութեան դէմ մեղանչել։ Իրան վերայ էր երկու կողմից միջնորդի դեր խաղալու պարտականութիւնը, երկու նշանածների սառած սէրը վերանորոգելու պարտքը, բայց մի կողմից ինքը շատ անգամ ականատես էր լինում իւր ընկերուհու դրիջակից Արշակի հետ իւր կոչմանը հակառակելուն և միւս կողմից չէր կարողանում բոլորովին յետ պահել Հեղնարին այդ տղայից։

Իւր ծանր և խոհեմ բնաւորութեամբ ու քաղցր լեզուով, արդարև, մի քանի օր ներգործում էր Հեղնարի վերայ, խօսք էր առնում, որ յետ կ'կենայ Արշակից, բայց էլի փոքր միջոցից յետոյ ականջին էր ընկնում դրիջակի մօտի քէֆերը։

Շատ անգամ կամեցաւ Հերիքնազն իւր մօրն ու քեռուն յայտնել բանի էութիւնը, բայց միշտ ինքն իրան յաղթում էր։

— Չէ, թող ոչով չիմանայ, ես եմ մեղաւորը, ես չհասկացրի Հեղնարին Արշակի չար միտքը, հիմի էլ թող ես էնքան տանջուեմ, որ կարողանամ յետ դարձնել նրան էդ չար ճամփից ու իր նշանածի վերայ սիրտը տաքացնեմ։

Որչափ և այս խօսքերով Հերիքնազն ինքն իրեն քաջալերում էր, բայց մի բան իւր սրտումը ծխում էր, նա օրըստ օրէ հալուում ու մաշուում էր։

— Ա՜խ Հեղնար, քեզ ի՞նչ ասեմ, որ դու սատանէն իմ մտքումս ծնացիր, ես կրակն իմ սիրտս քցեցիր, որ մի օր պտի ինձ էրի ու փոթոթի, մտքումն յանդիմանում էր նա Հեղնարին, բայց շատ անգամ ակամայ քաղցր էր թուում իրան անձամբ խօսք բացանել գիշերները նրա հետ։

— Հեղնա՛ր, դու ո՞նց չամանչեցիր, էն խօսքն ինձ ասեցիր։

— Հա՛, Հերիքնազ ջա՛ն, հիմի էլ եմ ասում, ինձ մի մենծ բեռի՛ց կը պրծացնես, քիրութիւն, մէրութիւն արած կըլնես, թէ որ դու Սմբատի սիրտը քեզ քաշես. ի՞նչ, ես սուտ չեմ ասում, Սմբատը լաւ տղայ ա, երկուսդ էլ մին մեի արժանի էք, համա մենք իրար չենք գալ, ձեր բնութիւնները մանկուց իրար բռնում էին։

— Ա՛մէն ա, ամէ՛ն, Հեղնա՛ր, էն օրը մահ ըլնի, որ քիրը

քուռը նշանածի վրայ սիրտ ունենայ, քուռը բաղդին խէթ աչքով մտիկ տայ։

Արդյապէս միշտ հաճելի էր Հերիքնազին Սմբատի և իւր մերձաւորութեան համար Հեղնարից խօսքեր լսելը, բայց միշտ աշխատում էր ջնջել անհետացնել իւր սրտից այդ սէրը, որ քանի գնում՝ աճում և արմատները խոր էր տարածում։

Բայց նա պահեց, պահեց հաստատակամութեամբ, յաղթեց այդ յորդավազ հեղեղի հոսանքին, մինչև որ մի քանի շաբաթից յետոյ էլ չկարողացաւ դիմանալ, լաւ համարեց ձշմարիտը խոստովանել Սմբատին և թէ իւր կիրքը զսպել, թէ Սմբատին իւր նշանածիցը չսառեցնել, խոստանալով Հեղնարին էլ համոզել։ Այդ միջոցը ընթերցողին քաջ յայտնի է, եթէ նա չի մոռացել վերոգրեալ գլուխներում պատմածները։

Ահն խորհրդաւոր գիշերի համար եմ ասում, երբ Արշակին շորշոփ դիպաւ, երբ նախանձայոյզ Սմբատը մի ակնթարթ ծնաց պիտի ջախջախէր իւր ախոյեանի գլուխը և վերջապէս երբ աղաւնիշ հրեշտակը փրկեց Արշակի կեանքը։

Այո՛, ընթերցո՛ղ, հիմա կարծեմ քեզ յայտնի եղաւ, որ Սաթունենց տան ձլորթու ժամանակը պատահածն էլ օրանից յետոյ էր, քեզ համար հիմի պարզուեցաւ, թէ ի՛նչ էր նշանակում այն օրուան Սմբատի շփոթմունքը, Հերիքնազի իւր ձկոյթը կծելն և հաշտարարի ու միսիթարչի դեր կատարելը։

Ահն գիշերուան անցքից և տուած խոստմունքից յետոյ Սըմբատն էլ իւր խօսքին հաստատ կացաւ. նա նոյնպէս սովորաբար յաճախում էր Խէչանենց տունն և աշխատում իրան աւելի ուրախ ցոյց տալ։ Իսկ միամիտ Հեղնարն երբէք մտքովն էլ չանց կացրեց, թէ հրահանի կայծեր ցայտող սատանան մարմնաւորուած՝ ամէն օր Ֆահրատի փշի պէս իւր առաջին ցցուած է, իւր չսիրած նշանածն է։

Իսկ կայծերի զօրութիւնն այնքան ազդու եղաւ, որ այնուհետև երկու սիրականները յաւիտեան չհամարձակուեցան միմեանց երեսին նայել, մանաւանդ երբ գիւղումը հռչակուեցաւ՝ թէ Շուն-Հետաճողենց Արշակն երկու երեք շաբաթը մի անգամ դիւահարուում, բերանը փրփրակալում, վայր է ընկնում՝ մինչև Մոլնուց սուրբ Գէորգի ձկոյթը մէջը թաթախած ջուր են բերում, խմացնում, նոր ուշքի է գալիս։

Այդ օրից Հեղնարը մի սառնութիւն զգաց դէպի Արշակն և

խոստացաւ Հերիքնազին՝ աշխատել իւր նշանածին սիրել։ — Ւհ՛ի՞նչ անեմ, յաւելացնում էր նա երբեմն, պոռ ճակատիս գրուածքին հնազանդիմ, համա էդ զօռով արջին կալ լծելու պէս բան ա։

ԺԱ։

Թ Ա Ի Զ Ի

Զմեռուան պղտոր օրերն անցնում են, մեծ պասը բերում է իւր հետ Աբրահամեան աշխարհի համար ջերմ և պայծառ արեգակը, ձիւնները հալչում՝ առուներ են կազմում, գետերը բարձրանում են, գետինը կակղում կանաչում է, հաղար տեսակ բուսեղէն ներկ ու բանջարեղէնների հետ գուրս են գալիս գիւղայցոց աշխատանքի քաղցր և կարևոր օրերը։ Երկրագործն իւր գութանն է սարքում և մաճը բռնած՝ դաշտը հերկում, այգեպործն իւր բահն ու հոտոյն է սրում և այգին մշակում, թաղած տեղերը Զազարոսի յարութիւնը տալիս մեռած խաղողի բարուկներին և հոտոյն առնում, աւելորդ մասնելը կտրատում։ Գիւղացի կանանց գործն էլ շատացաւ, առաւօտագէմ շուտ հաւաք-տեղակ են անում և մշակողների համար ճաշ կերակուր պատրաստում, ջահել հարսների ու աղջիկների հետ ուղարկում հանդը կամ այգին, հարսներին էլ պատուիրում են, որ հայր վէր դնեն, իրանք աղցան քաղեն իրիկուան բանուորների համար։ Պառաւ կանայք ու անդործ ծերունիքն էլ ուրախացել են, ժամերն երկարացել են, օրն երեք անգամ փայտը սիւն տալով ժամ են գնում, տէրտէրը քաշելով գուրս գալիս և տէրտէրների ու իշխանների հետ քաղցր զրոյցներ անելով՝ տուն դառնում, արևկող տեղերումը նստում ու Աստուծոյ բարիքը, արևի տաքութիւնը վայելում։ Սրեափոխանն էլ զատկան պատրաստութեան հետ է։ Անցեալ կիւրակէ տէրտէրը քարոզից։

— Օրհնեա՛լ ժողովուրդ, աղբրի նման բղխում էր տէր Հօր բերանից այս ապդու լուսքերը, գիտէք՝ որ մեր պապենական նախնեաց սովորութիւնն ա, զատկի կիրակի առաւօտեան հայ քրիստո-

նէն պոռ ծէզելահան ախտառի [1] մնով բերան բաց անի. շաբաթ իրիկունը նապաստիկ ենք ըլում, մանղէն չենք ուտում, էն քրիստոնէն որ ախտառով չմանաւորուի, սաղ տարին իրաւունք չունի մի հատ տեսնելու։ Ախտառի եղը որ կայ, հայ քրիստոնէի նշանն ա, մենք էլ հօ, փառք Աստծու, հայ-քրիստոնեայ ենք. մէնակ մենք չենք, աշխարհիս մէջ տասներկու խաչապաշտ կան, բոլորն էլ հայ քրիստոնեայ են։ Դէ՛ որ էսպէս ա, ժամից յետոյ դուանը հաւաքուեցէ՛ք, երեցփոխի հետ երկու մարդ ջոկեցէ՛ք, որ նրանք ախտառի համար փող հաւաքեն զատկին մասնակցելու համար։ Աստուածձէր քիսի բերանը բաց պահի, որդի՛ք, լիաբուռը տուէ՛ք, մի՛ խնայէ՛ք, էլի ձեր վրայ պոռի բաժանուի, աղքատ — ուղքուտ պոռի ուտեն, թէ որ մի բան էլ փողեցն՝ եա կաշուցը կը ծեայ, էն էլ եկեղեցու, տէրտէրի բաժին կերթայ, էլի վարձքը ձերը կըլնի։ Օրհնեալ էք և օրհնեալ եղերուք ա՛մէն։

Ա՛ռ Թէչանը, ինչպէս ասացինք, թէպէտ ամէն բանից փախչում էր, բայց իւր մէջ նա ուխտ էր արել, որ ամէն տարի ախտառի փող հաւաքողներից մինը ինքն պէտք է լինէր։ Այս տարի էլ իւր պաշտօնը շատ արիւթեամբ կատարում էր։

Տանուտէրի և իշխանների գործերն էլ շատացել էն այս մեծ պասին։ Պարունք է, գալնան հարկահանութեան օրերն են. աղքատի սև օրը դուրս եկաւ։

Մի կողմից դաշտն իւր մշակութիւնն է պահանջում, միւս կողմից տանուտէրը կանգնացրել է իւր գղեին գիւղի մօտ, արգելում է տան գլխաւորներին աշխատանքի գնալու, ստիպում է, որ յետ մընան գործից՝ թաւջի [2] անելու. գործը շատ ստիպողական է, տանուտէրը դիր է ստացել, երկու օրից Ախտառ պոռ գայ խարջ [3] հաւաքելու։

— Գնացէ՛ք, ինչ կուզէք արէ՛ք, ես մէն մենակ մարդ եմ, գործիս շատութիւնից ձեռս բերանս չի հասնում, ես ի՞նչ կարող եմ անել, ինչ կուզէք կը տամ, թաք ինձ ազատ թողէ՛ք, խնդրում են ամէն մինը և գլխները հեռացնում թաւջի անելուց, ու աշխատում գնալ իրանց գործին։

— Ձէ՛, գլուխդ քարը, թէ յիդիդ էլ կը չորանայ, գութանդ էլ կը սատկոտին պաշտումը, կշտամբում է տանուտէրը

---

1 Զատկուան մատաղ։ 2 Սկզբնահաշիւ։ (Բիւջէտ։) 3 Հարկ։

խեղճ գիւղացիներին, խարջ պտի հաւաքուի, թաւջի պտի ըլնի, ամէնքդ էլ որ գնաք, էլ ո՞վ գեղի ցաւը կը քաշի, հարիր կտոր հօ չե՞մ ըլնիլ։

— Թէ ձեզանում մի փորացաւանք չկայ, ընչի՞ չէք կիրակի օրը քցում Թաւջին, հասարակութիւնը տանը կը լինի, ամէն մարդ էլ կիմանայ, թէ ի՞նչ էք անում, պատասխանում են մի քանիսը։

— Կիրակի շատ ուշ ա, էգուց էլ օր հասավուլ կը գայ։

— Գնացէ՛ք, այ անաքանդնե՛ր, գեղի արիւնը ծծողնե՛ր, գընացէ՛ք, ինչքան կուզէք, գրեցէ՛ք, երեխէս կը ծախեմ կը տամ, ես էսօր գործից չեա՛ւ չեմ կարող ընկնել, սաքի որ խալխը տանն էլան, ձեր անկուշտ բողազից[1] մենք բանք կարանք խլի՞ը գնացէք, ախպէ՛ր, ես իմ կողմանէ խօսք եմ տալիս, որ ոչ տաք խօսամ՝ ոչ հով, էսօրուան մի օրս հալալ Թուման աժի լինէ համար, աստւմ են ամէն մինը և գլխները Թափ տալով հեռանում։

— Ա՛յ, տեսէ՛ք, էս օրէն էգուց էլ տանուտէրի ու լիխանների վրայ ծակ ու ծուկերում մենծ մենծ բրբրթաք ոչ, չասէք թէ Թաւջին հասարակութիւնից Թաքուն են անում ու գեղի վրայ մենծ մենծ ծախսեր բարձում, արդարացնում է իւր գլուխը տանուտէրն և լիակատար իրաւունքն իւր ձեռքն առած՝ գլխին հաւաքում իւր մի քանի համախ լիխաններին և բազմում եկեղեցու պարտիզումը, կամ մի արևկող տեղ ու Թաւջի անում։

— Դէ, տանուտէր, դու քո արած ծախսն ասա, ձայն է տալիս Թաւջի անողներից մինը, տեսնենք թէ աշնանից ընչանք էս օր քո քիսից գեղի համար ինչքա՞ն ես մտնել։

Տանուտէրը հաշուում է.

— Եասավուլ Մարգարին երկու շաբաթ տանս պահեցի, երբ որ եկել էր ղարաուլ հանելու, օրական նրա վրայ ջոկ խարջ եմ արել մի մին մանէթ. էս կանի 16 մանէթ. հիմի սրա վրայ էլ աւելացրու նրա տուած նեղութիւնները՝ մեր անհանգստութիւնը. էս ձեր խղճմտանքին եմ Թողում։

— Շատ իրաւունք ունի տանուտէրը, Թէ որ եասավուլը տանը չըլնէր, կնիկը կարող էր դռները փակել իր հարևանի տունը գնալ, համա ջնեղի համար կերակուր պտի եփուի, տաք ու հով պտի անուի, ես ինչ գիտեմ՝ հազար ու մին ղալմաղալ[2]. ես իմ խղճմտանքով կասեմ, որ էդ չարչարանքը 20 մանէթ պտի հաշուել, դուք ի՞նչ կասէք, այ էլլիկ, մեր տանուտէրը մեղք չի՞, բարեբաձայն վճռում է մի հանդիսական։

— Դեռ քիչ ա, դեռ շատ քիչ ա, ձայն են տալիս ամէն կողմից։

Տիրացուն որ քարի վրայ պպզել[1] մի Թերթ Թուղթ երկայնութիւնից միջի վրայ ծալել, ճնկանն է դրել ու մի պղնձէ երկաԹակոթ պարսկական Թանաքաման էլ մէջքին խրած, փետուրեայ դրիչը ձեռքին սպասում էր ծախքը գրել, դրիչը մօտեցրեց ԹըղԹին։

— Ա՛յ, տիրացո՛ւ, ձեռքը բռնում է մի ճշմարտախօսը, որին մենք ծաքուլ անուն տանք, Թէ որ ինձ կը հարցնէք, եասավուլ Մարգարի համար տանուտէրը մի քօռ սև փող էլ չի խարջել իր քիսից. իմ միտս ա, որ գեղերն օրական տասը քսան ճուտ էր կալնում սրա նրա տանից, գաւերով դինի էր ուղում, շուշէքանցով սրաղ. մի օր աչքովս տեսայ, որ բրինձն էլ վեչը լցրած՝ Մէլումենց տանից տանում էր. ես իմ երեխեքանց կարմիր աւետվն օրԹում կուտեմ, որ եասավուլ Մարգարի գեղումն էլած վախտը տանուտէրն իր օղլուշաղովն էլ նրա սայիցն[2] էլին ապրում, ցախն ի՞նչ ա, հասարակ ցախը, էն էլ շալակներով խալխի չիքանոցիցն էր կրել տալիս, ի՞նչ ա՝ Թէ Մարգարի համար կերակուր պտի եփուի։ Ղորդ չի՞, Թօռթօս, դարձաւ իւր մօտ նստողներից մէկին. մի օր՝ որ գեղերը հինգ ճուտ ձեռին ունէր, մինն էլ ուզեցաւ Դուռնց պառաւի Թխպի տակիցը բռնել, պառաւն ուշունց տալով մօտ եկաւ, ես ի՞նչ ասեցի։

— Իմ միտս չի, մրմրթաց Թօռթօսը։

— Տօ՛, կեղծաւո՛ր, ես չասեցի՞, Թէ Մարգարը մի մարդ ա, դու հինգ ճուտ ձեռիդ ունես, հերիք չի՞, որ խեղճ պառաւի էլած էլած ութ ճուտիկը մինն էլ բռնում ես։

— Միտս չի ասում եմ, ուրիշը կըլնի էլել։

— Տօ՛, անասնուած, դու չէիր, որ կողքիս բրթեցիր, Թէ էդ ո՛ւր ես ասում, մի էս հարցրու, Թէ եասավուլ Մարգարն էս քսան օրուան մէջ տանուտէրի հացի պռունգը մի օր պոկե՞լ ա, աներեսի պէս օրը մինի տանը ղօնագ են տալիս։

— Չէ՛, ես չեմ ասել։

— Չքուի՛ս ու չորանա՛ս։

---

1 Կոկորդից։ 2 Աղաղակ։

1 Կքել։ 2 Շնորհք։

— Զէնդ կորի՛, քեզ ճշմարտախօս ո՞վ դրեց, աղաղակ են բարձրացնում ամէն կողմից, համեշայ դու պոկ կոտրած քթաղի պէս մէջ ընկնե՞ս, մէան նման կարասը հոտացնե՞ս, քեզանից ի՞նչ պոկ դնայ, որ վատամարդի ես ուզում դառնալ, 400 տան վըայ ամէնքին մի մին սհաբզաան[1] էլ չի ընկնիլ, քո բաժինը ես կը տամ, թաք դու սուս կա՛ց։

— Զէ, ախպէ՛ր, ես իմ հոգին ալացնիլ չեմ, ընդհակառակը իմ ըստեղ նստած, որ ամէն բանը հալալութիւնով դասեմ։

— Ա՛հը կա՛ց, կորի՛ գեանի տակը, քամակիցդ համեղքաւոր հօ չղրկեցինք, բարկացաւ տանուտէրը, ես էլ որ սուս եմ կենում, դուք էլ ջլես գլխիս էք նստում, նհախ չէի ձեր գեղի հոգսն էլ քաշում, եասավուլին էլ ուտացնում ու խմացնում։

— Ես էլ էդ եմ ասում, բաս էլ ո՞ւր ես եասավուլի անուսմովը գեղը վըայ ծախս դնում, դու ինքդ քո բերանովդ ասեցիր, որ քո տանը նրա համար խարջ չունիս։

— Շատ լաւ ա անում, որ ծախս ա քցում, չուզողի աչքն էլ ա հանում, թէ կուզես կորի գեղամիջին քունջ ու պուճախում փախա՛, ամէնքին էլ հասկացրո՛ւ, որ եասավլի համար աւելորդ ծախս են դրել. մին դու բան դուս կը տանիս, մին էլ քեզ պէս անխելքները, ճղճղացին տանուտէրի համամիտները։

— Ախպէր՛, ուզեցի ոչ, հօրս խերին ըլնի, հէնց իմանանք մի քանի մանէթ ջնրիցս վէր ընկաւ կորաւ, վերաբերուած ասում է տանուտէրը, հետն էլ իւր համախոհներին ակնածոյց անում խեղճ Յաքուլին։

— Ո՞նց թէ չուզեցիր, թէ որ քո ապած ծախսերը մէջ չը գնենք, ասել ա թէ իմ տուած հինգ լիտր արաղն ու կէս կարաս գինին ջուր կը կարուի էլի։

— Ի՞նչ գինի ապա՛ղ, Սէփո՛, մէջ մտաւ կրկին Յաքուլը։

— Ընչքերդ չորս բաց ապա՛, ծղրտաց Սէփօն, կաղանդին մովրովին ու քօմակչուն գնացած գինի արաղն իմ կարասից ու տիկից էր։

— Փչի հա՛, լեզուիդ տակին ոսկոր չկայ, որ ծակի, ասո՛, ես չէի տանողը՞, մի հարցրու տանուտէրին ու գղրին տեսնենք ո՞ւմ

1 30 կոպէկ

երեսը կը սևանայ. չէ՞ որ Անթանենց կարասից ես եմ չափել, ձիուս բարձել ու տարել։

— Ղորթ ա, մովլովի համար Անթանենցից էր, համա միրզէքանց ու ձեռ ու ոտի համար Սէփօյին առայ ու քեզանից յետը ղրկեցի, պաշտպան հանդիսացաւ տանուտէրը։

— Իմ տունը քանդուի՛, թէ էդ օրն ինձանից աւելի Սև ջրի գլուխն Աշտարակի ոտ դրած ըլնի, երդուեց Յաքուբը։

— Դու խաբար չես, Յաքո՛ւբ, օրթում կրակը մի ընկնիլ, թէ ինչ չես հաւատում, դընդին հարցրո՛ւ. ընենց չի՞, դընդիր, գնացել ա՞, թէ ոչ։

Տօ բաս չի գնացիլ։

— Ո՞վ գնաց, պնդեց Յաքուբը։

— Ես ի՞նչ գիտեմ, ոնց միան ա, օրական տասը մարդ հա կերթայ՝ հա կը գայ։

Յաքուբը դառն ծիծաղ բռնեց, իսկ Սէփոն և իւր կողմնակիցքը կատաղեցան. — մասխարայ ունիս՝ գլխիդ տո՛ւր, տանուտէրը սուտ չի ասում, խուլ անկաջովդ լսեցիր, որ գղրին էլ վկայեց։

— Ի հարկէ ասած ա՝ տանտրունջ վըայ լես վէր էկաւ, ո՞վ տեսաւ — գղրիը. հոգուց հանեց Յաքուբը։

— Օրը ճաշ գաւաւ, տանուտէր, ի՞նչ ես ամէն գարդակ խօսակի տտածը չուանի գնում, գոչեցին այս և այն կողմից, գու քո արած ծախսերն ասա՝ պրծի, էս խալխն էլ իրանցու գեօրայ գեղերին տանելիք ունին՝ պոկ գրուի, թէ որ ամէն մի խօսքի համար սրա պէս մարդիկը մէջ ընկնին, երկու շաբաթ կանց կենայ՝ թաւջի չի գլուխ գալ։

— Գրի՛, տիրացու, տնօրինենց տանուտէրը, քսանուհինգ մանէթ ձիու քրհի համար տուել մովլովի կուշտը գնալ գալու համար։

— Իմ հօր գերեզմանը վկայ, որ գու միշտ կուռի ձիով ես գնացել եկել, գեռ Երևանու բաղարը քո տան համար առուտուրի էլ խալխի ձիովն ես գնացել, գեռ քո հանդի խուրձն ու ժիքանոնց խոտն ու ցախն էլ կուռի ձիով ես կրել, էլի խառնուեց մեր Յաքուբը։

— Ըհ իշխաններ, շեղակ ա խօսում էս մարդը՞։

— Զէ՛, չէ՛, գլխիցը գուս ա տալիս, գու քո օրումդ կուռի ձի չես նստել, քրհ ես տուել։

— Տիրացո՛ւ, գու նշանակի 25 մանէթը.

— Էլ ի՞նչ ունիս, տանուտէ՛ր, էս գրուեցաւ։

Տանուտէրը շարեց մի քանի ուրիշ ծախքեր, որոց ամէնքին

էլ հակառակում էր Յաքուբը, բայց նրան լսող չկար, տիրացուն դրում ու դրում էր։

— Մի հաշուի՛, տես իմ ապած ծախսն ի՞նչքան էլաւ, վերջապէս ասաց տանուտէրը։

— 225 մանէթ։

— Ես ու իմ խղճմտանքը՝ որ շատ քիչ ա գցում, 300-ի էլ կը հանի, թէ որ մի քիչ Աստուածգ ուրանաս, շողոքորթում էին իւր խորհրդական ազանները։

— Խե՛ղճ ապքաո ժողովուրդ, էս ամէնը քո ջանիցը պտի դուս քաշեն ու մարսեն, խոր հառաչեց Յաքուբը։

— Հիմի, տանուտէր ջա՛ն, էլլեկից[1] տարածներդ ասա, որ գեղի հաշուումն առնել ես։

Տանուտէրը գրպանիցը հանեց մի երկար ծալած թղթի կտոր և կարդաց։

— Արդարաբաշտ առուն հանելու մշակի մասին մովրովին տուած կաշառքի համար Մաթոսից առայ 200 մանէթ, Թաթոսից՝ 216 մանէթ, Սէփոից՝ 300 մանէթ, սրանց ամէնքին էլ ջոկ ջոկ սանադներ[2] եմ տուել գեղի անուամբը, հիմի վադէն[3] ա, պտի վերամէջ գնենք ու տանք. շահն էլ տասին երկսով պտի հաշուենք։

— Էդքան կաշառքն ընչի՞ տուիք ձեզնից գլուխ։

— Ո՞նց թէ ընչի՛ տուինք, միտդ չի՞, որ օրական 150 մշակ էին ուզում մի ամիս ժամանակի առուի վրայ բանելու։

— Յետո՞յ, չտուի՞ք։

— Էդքան չտուինք, 10, 20 մարդ գնաց՝ վերջացաւ։

— Ա՛յ մարդիկ, աստուածներդ միաներդ բերի՛ք, յետոյ՝ որ օրական ոչ թէ 150, 15 մարդ էին ուզում մեր գեղից, մին էլ՝ որ ոչ թէ մի ամիս, 15 օր էր գրած հրամանումը և մէկ էլ՝ որ հաշիարինք, բոլորն էն ժամանակի գներովը բռնեց 250 մանէթի մշակ, իսկ դու հինգ վեց հարիր մանէթի ծախս շանց տուիր էս մի բանի մէջ։

— Դու գրի՛ տիրացո՛ւ, ի՞նչ ես դուննդ ցցել սրան մորիկ տալիս, տանուտէրը հո սուտ չի՞ ասում, տաքի մեզ էս մովրովի բնութիւնը յայտնի չի՞, որ քնած վախտն էլ ձեռը բաց ա քնում, թէ ինչ ա, բան գնեն մէջը, թէ մարդ կըլնիս, ամէն փուչ բանի

1 Համայնքից, 2 Մուրհակ: 3 Ժամանակ:

համար կաշառք չես տալ, տես թէ քո գեղի գլուխն ի՞նչ կը գայ։

— Ես ու իմ Աստուածն ըտենց ա, արդարանում էր տանուտէրը, ճինգեանայ[1] ուզուզորի նման աչքը տուն մնողի ջերին ա. մհալի հարուստների անուամն էլ հէնց լաւ սերտել ա, որ էլ խարիլ չես կարող. մի օր ինձ ասում ա՝ — ձեր խէչանենց խէչանն ա հաւրո՞ւստ, թէ Խստմը. ես էլ պատասխան տուի, թէ մովրովն ապրած կենայ, գեղըցու հարուստը ո՞րն ա, դասը քրանքով մի կտոր հաց ունց ըլում ա՝ աշխատում ենք ամէնքս էլ։ Համա երևում ա, որ հաւատաց ոչ, գլուխը պտրտեց ու ծիծաղաց։

— Հէլա լաւ, որ մեր Սաքօն մովրովի կշտին ա, գեղի դիմը պահում ա, թէ չէ մենք կոռ ու բէգեառի տակից գլուխ չէինք բարձրացնիլ կցեց տանուտէրի կողմնակիցներից մինը։

— Հա՛, շատ հասկացկէք, ընդդիմացաւ Յաքուբը, գառը գիլլեն պահ տուածի պէս ա, Սաքօն ազուկի պէս սաղ մհալի արինն ա ծծում։

— Էլ ի՞նչ ունիս, տանուտէր։

— Արտալի շերտանանէքը մհրելու[2] եկող մենծաւորի համար կաշառքի փող վերցրի Մուրատից սպասք 200 մանէթ, Բարսեղն էլ տուեց մի կարաս արաղ։

— Էդ բանում գեղն ի՞նչ պատահան էր, մի քանի մարդիկ իրանց համար արաղ էին գցում, գիւմրուկ[3] չէին տալիս, ձեռը ուզեցան խարջել տակ գնեն, քանի հետ գրեցին՝ անկաջ չարիք, եկան մհրեցին։ Ուզում էին՝ որ արաղ քաշեն օգուտ տեսնեն, իրանք էլ թող ճարը տեսնեն, գեղին դրանից ի՞նչ օգուտ ձեռս, որ էդ ծախսն էլ գեղամէջ էք գնում, էլի մէջ ընկաւ Յաքուբը։

— Ո՞նց թէ գեղին ի՞նչ օգուտ, ձայն ձայնի տուին մի քանիսը, որ արաղ քաշողներն էին, բաս էս ոչի՞նչ, որ մովրովի կամ մենծաւորի արաղ ուզած սհաթը ակերը լցուում ղրկուում էին։

— Գեղի ի՞նչ հոգսն ա, որ չի ղրկում։

— Ախպէր, քանի՞ դլխանի ենք, որ չղրկենք, մեր մովրովն ա, հօ օտար չի, էս օր ուզածը չենք տալ՝ էգուց ընէնց կոռ կը գցի մեր վրայ, որ տակին կը ձկունք։

— Տիրացո՛ւ, դու գրի՛ր, անկաջ մի՛ անիլ։

Տանուտէրն ցոյց տուած ծախքերին, եթէ ուշադիր լինէինք,

1 Բօշայ: 2 Կնքելու: 3 Մաքս:

բոլորը կոտի, բէդևտաւի ու գաւառական աստվածանաւորներին տուած կաշառքների պատրուակաւ էր, և այն՝ վերցրած իւր համամիտներից մուրհակով կամ առանց մուրհակի։ Այս բոլոր աւելորդ փողերը գիւղի հարկի հետ միացնում են, ժողովրդից ժողովում և մի քանի մարդով բաժանում։

— Տանուտէր, ինչպէս դուս ա գալիս՝ քո արած ծախսերդ բոլոր էս նստող մի քանի մարդկանցիցն ա, բաս գեղումն էլ ուրիշ ոչ ով ոչինչ չի տուել, հարցրեց Յաքուբը։

— Խալխի հօրն ողորմի, շատ մենծ բան ա, որ ամէն մէնը մի մին լեռը գինի արաղ տուած ըլլին, մէջքներին քար ա ընկել, էն էլ հէնց իմանանք, թէ մեր քաշած էսքան նեղութիւնի տեղակ մեզ պատիւ էք տուել, ասացին միասին տանուտէրն ու իշխաննելը։

— Յաքո՛ւբ, գիտես ի՞նչ կայ, վերջապէս աչքերն ոլորեց տանուտէրը, թէ որ դու ամէն մի գարդակ բանի վրայ էսքան գրէ խայտառակ պտի տան՝ լաւն էն ա, էս սհաթս վեր կենաս՝ քաշուիս երեսիդ ջրովը, հէր օրհնած, էլ թողում չես, որ մարդ բիւրան բաց անի, ագռաւի պէս գլխներիս տնկուած դուս ես, էլ չես ասում, թէ սուս կենանք, էգուց բոլաղներիս կ'էրքեն։

Գլխներդ քար՛ը, ձեռքը թափ տուեց Յաքուբը, Աստուած էլ գիտի, որ ես իմ քիսի գարդումը չեմ, ոնց որ ըլլի մեր ջուրը ջրամանիցը կը հանենք, իսպառ անձայր ապրանների համար ա, որ թունդրէրն ածես՝ շորահոտ չի վեր ըլել ու դուք խղճմտանքներիդ դուռը պինդ կողպած՝ էգուց գլխներին սև պտի բերէք։ Թէ որ շատ սրտերիդ գիպչում ա, ես էլ խէյանենց խէյանի պէս խոսք կը տամ, որ գլուխս քաշ քցեմ, ինչ ուզէք տամ ու գնացէք էն վախտը պղտոր ջրի մէջ թօռ քցեցէք, թարթնէրդ[1] ձկնով կըլցուի։

— Ախպէր, թագաւորական խարջը հօ բաշխիլ չի՞ն, թէ որ ռահաթը չի խարջ տայ, բաս էս աշխարհքն ո՞ւմնով ա կառավարուելու։

— Էդ ա, որ թագաւորական խարջը ձեր հաւաքած փողերի չարէքն էլ չկայ, հալալ աղբատին մի քանի օև փող անջամ կընդ նի, համա դուք էնքան պղտեր էք աւելացրել, որ ինձ պէս ասունն էլ դժարանում ա տալը։

— Ախպէր, Աստուած վկայ, մեղ էլ էնքան չի հաճում,

1 Ձկան որոգայթ գետերի մէջ շինած։

երդուեց տանուտէրը, նաչալնիկի տանիցը բռնած՝ խազինի[1] ծառայողներն էլ մէջ բերելով՝ ընչանք մովլովի վերջին մհտաբը[2] 1000 ծակ կայ կալնելու։ Նրևանայ բազարումն էլ չեմ կարողանում ապատ մանգալ, վախտում եմ, որ զռվլուզի[3] մարդկանցից մէկն ու մէկը կը տեսնի ու վրէս կը նեղանայ, որ քաղաք եմ եկել ու իրանց տեսութիւն չեմ գնացել։ Լացդ կը գայ, Յաքո՛ւբ, որ հետս գաս՝ խարջը տանենք խազինէն տանք, դուս մի տե՛ս, թէ էն ասիգնացու[4] թղթերը ո՞նց են չորս աչքով մորիկ տալիս, մի ունկն են ուզում գրատնել, որ եախա—մսխէքս Թօփ անեն, մեզ խաթի մէջ քցեն, Աստուած ոչ անի, որ մի թուղթ ղալը[5] դուս գայ, թէկուզ մի մանեթանոց ըլլի, էլ պրծնում չկայ. տունս էլ որ ծախեմ՝ վրէն դընեմ, էլի բերդումը պտի վճեմ, դէ հիմի ասա, հնչտա՞, ես եմ էն թղթերը տպել, ես ձանանչում եմ։ Ձարս կտրած՝ պտի դեռ առաջ գնամ խազնադարին[6] ու փող համբարողին տուաջուց տեսնեմ, յետոյ խարջը տանեմ թաֆթիլ տամ.[7] ախար էս ընչո՞վ կըլնի, ես հօ չեմ կարող եմ քիսիցը տալ։

— Ո՞վ ա բան ասում, կոտրուեց իվերջոյ մեր ձշմարտախօս Յաքուբը, համա զօռ անելս էս ա, որ բանը խրճմտանքով անէք, ես տեսնում եմ, որ աղքատը շատ ա զընուում։[8]

Տօ՛, ընչի՞դ ա պէտքն, Յաքուբ, կողքին հրեց կեղծաւորներից մինը, ընչի՞ ես վատամարդի դառնում, ըսէնց եկել ա՝, ըսէնց պտի գնայ։

— Դէ՛, հիմի հաշիւ արէք, բոլոր ծախքերը գրելուց յետոյ ձայն տուեց տանուտէրը, տեսնինք՝ թէ տան գլուխս քանի՞ մանէթ խարջ ա բռնում։

Մի ահագին գումար կազմուեցաւ, քառապատիկ աւելի բան ալքունական հարկիցը։

Նոյն տանուտէրի համախոհները նշանակուեցան հարկաժողովներ և երեք բաժանմունքի վրայ նշանակելին որոշել ժողովուրդը՝ մեծ կալուածատէրը, միջակ և աւորին դասակարգ։

Թէև հարկաժողովներն առաջին կարգին էին պատկանում, ուրեմն և աւելի պէտք է վճարէին, սակայն նոքա ոչինչ չտուին։ Ժողովը ցրուեցաւ։

1 Գանձարան։ 2 Ձիապան։ 3 Վառայութեան։ 4 Թղթադրամ։ 5 կեղծ։ 6 Գանձապետ։ 7 Ցանձնել։ 8 Հարստահարուում։

— Մեր տղայ, էլի մէջ քներս տաքացաւ, իւր համախոհներից մէկի ականջումը փսփսաց Մաթոսներից մինը, մարդագլուխ մեզ 50 մանէթից աւել կը հանի։

— Չամա էդ անիծած տանուտէրը թագուն մեզանից շատ ա կերել։

— Լ՚ Հ, գլուխը քարը, աւելի թէքէն ոնց փոյն ա ծակել, տաքի դրուատը որ ասինք, մենք էլ նրանից թագուն քիչ չենք պուճախներումը չալափուռ արել։[1]

ԺԸ.

ԵԱՍԱՎՈՒԻ.

Երևանու երկիրը պարսից իշխանութեան տակից իսպառ ազատուելուց յետոյ՝ վարչական ձևի կողմանէ զանազան փոփոխութեանց ենթարկուեցաւ. սկզբներումն աւելի պարսկականին մօտ՝ բայց վերջերումը մի հատուկ վարչութիւն կազմուեցաւ։ Երևանը նահանգական քաղաք կոչուեցաւ, նահանգապետ, գաւառապետներ և գաւառակապետներ նշանակուեցան և այդպէս տևեց՝ մինչև Հաշտարար Առեաննեաի հաստատութիւնը։

Վիճակագրութեանս մէջ կատարուած անցքերը լինում են գաւառակապետների միջոցները, որ պարսկական ընդհանուր բառով մովբով էին կոչում և որ ինքնին ունէին իւրեանց առանձին Առեաններ՝ օգնականներով, գրագրներով և ստորին պաշտօնեաներով, որոնց եաւսավուլ անուն են տալիս։

Թողած մովբովի միւս ծառայակիցքը, անտեղի չեմ համարում ես մի հայեացք ձգել եաւսավուլների կազմակերպութեան վերայ։ Ամէնքից աւելի այս ստորին ոստիկանական պատասխանները ծանօթ ու մերձ են ժողովրդի կեանքին և սրանցով է այն մօտ յարաբերութիւնը, որ ունի գաւառապետն իւր վիճակի ամէն դասակարգի հետ։

Որոնենք եաւսավուլի բունը և նորա մանենք։

— Մեր տղայ, էլի մէջ քներս տաքացաւ, իւր համախոհներից մէկի ականջումը փսփսաց Մաթոսներից մինը, մարդագլուխ մեզ 50 մանէթից աւել կը հանի։

— Չամա էդ անիծած տանուտէրը թագուն մեզանից շատ ա կերել։

— Լ՚ Հ, գլուխը քարը, աւելի թէքէն ոնց փոյն ա ծակել, տաքի դրուատը որ ասինք, մենք էլ նրանից թագուն քիչ չենք պուճախներումը չալափուռ արել։[1]

---

1 Զրկոզութիւն անկով քսակը լցնել։

Ա.հա գաւառակապետի բնակարանի մօտ, լայն բակի մէջ մի մեծ ու երկար ծածկի տակ մուրքներ են շինած, ուր կարգաւ մի քանի ձիանք կապուած են։ Նոյն գոմի վերի անկիւնումը՝ մի առանձին բաժանման մէջ՝ մի սենեկանման մասը կայ, ուր պատերի վերայ եափունջիք են կախուած։ Բարձրացրո՛ւ այս եափունջիներից որը կամենաս և ահա փայլում, շողշողում է հրահանի վերայ յօրինած պարսկական արծաթեայ օղերով հրացանը։ Սկու նոյնանման ատրճանակ, մի իւղման, մի դէլը քակող դործիք՝ վառօդամանի ու զնդակամանի հետ զարդարում են հրացանի բոլորքը։

Պատերի տակերին, համարեա, միշտ կը գտնես թիկնած երկու կամ երեք հուժկու մարդիկ՝ արխալղների թևերը վերև ծալած և կոնակը մինչև արմունկները բաց։

Ա.հա սրանք են եաւսավուլները։ Սրանց թիւը երբեմն մինչև տասի է հասնում։

Սրանց պաշտօնն է մովբովի իրաւարանից դուրս արձակած բոլոր հրամանները տեղը հասցնել և՝ ի կատար ածելու հսկել, հարկ, կռու ու բէզգեաո ժողովելուս օգնել տանուտէրներին և գաւառական բոլոր ստորին ոստիկանական պաշտօնները կատարել։

Հաւատարմութեան և ուշեմութեան մասին սրանց կարելի է նմանեցնել որսկան շներին։ Ոլքան էլ նոր մարդ լինի գաւառակապետը, նրանք ճշդապէս կատարում են նորա կամքը։

Սրանք այնքան սուր են մարդաճանաչութեան մէջ, որ առաջին օրումն իսկ գուշակում են նոր գաւառակապետի բռնելիք ընթացքը, այդ պատճառաւ եաւսավուլի և իւր տիրոջ մէջ սկզբի օրից մի սերտ համակրական յարաբերութիւն է կապուում. այդ է պատճառը, որ ամէն եաւսավուլ քանի մի ուրիշ պաշտօնակալներ է փոխում։ Ոչ մի նոր գաւառակապետի հաշիւ չէ ձեռքից թողուլ այդ մարդկանցը, որոնք գաւառի ամէն ծակ ու ծուկը գիտեն, ճանաչում են ամէն մի անձնաւորութիւն և վերջին գիւղի շներն ու կատուներն անգամ համարած ունին։

Հետաքրքիր է եաւսավուլի ամէն մի քայլափոխը դիտելը. իւր ձիու կողքին գոմի մէջ նա թիկնած է ինչպէս Պարսից խանն իւր թաւիշեայ բարձի վերայ. իւր մեծաւորի առաջին պատասխանութեան մէջը նա շան նման զալար է գալիս և ամենայն նուաստութեամբ գլուխը յետ է գնում նորա հրամանը գետինը չձգել։ Ձանապարհի վերայ եաւսավուլն իրան ամբողջ գաւառի տէրն է համարում։

Եասավուլները ընտրուում են առ հասարակ տեղացիներից՝ գըլխաւորապէս Պարսիկներից: Եթէ մահմետական կրօնի հիմնական կանոններին համաձայն մուսուլմանը պէտք է խորշի քրիստոնէից, եասավուլներն ուրեմն սուրբ մարգարէի օրինակատար չեն. նրանց համար Հայ, Թուրք չկայ, նրանք ամէնքն էլ ընկերներ են, դլխարկը վերցրած ժամանակը կարելի է ճանաչել Հային ու Թուրքին. դլխի մէջ տեղից աճեցած կոտրն և ականջների վրայից կախուած մազերի փունջները պարսկական դլխի նշաններն են. իսկ ահագին ոչխարենին կէս փութի բուրդ վըզին մինչև ականջը խոր քաշած, հասա, ստուար և երկայն ընչանցքները ականջներս երկու անդամ փաթոյթ տուած, ահագին դէմքը վիթխարի հասակի հետ՝ շատ ծանօթ աչքերի միայն կարող են պարզել եասավուլի Հայ կամ Թուրք լինելը:

Ընդանց խորութեան երկու հակառակ կրօնի որդիքն ուտում են մի և նոյն ամանից և խմում են նոյն գաւաթից. քրիստոնէին սրբագործող, իսկ մահմետականին պղծող հեղուկն էլ միակերպ սիրելի է եասավուլի համար, Թուրքը Հայից պակաս չի կոնձում գիւղերումն և կառավը տաքացրած՝ իւր քաջագործութիւնները բանացնում: Հայի հաց, խոզի միս, Թուրքի պանիր, սրբի դէմն մորթած մատաղ, որոնք երկու ազգութեանց միջոյ կամ մէկելին գարշելի են, եասավուլի համար հարցնել չկայ:

Եւ ահա պատրաստ է եասավուլն իւր պաշտօնը կատարելու: Իւր ահրոջ մի ընչին հրամանը դուրս եկաւ և եասավուլը Թուրաձիու քամակն ու երկու վայրկենի մէջ աներևութացաւ. մի մտրակ ձիու փորատակովը քաշեց և նրա ձին կրակի նման Թռչում է մեծ ճանապարհի միջովը: Վայ այն գիւղին, ուր պիտում է մեր եասավուլը և առաւել վայ այն գիւղականներին, որոց պատահում է նա ճանապարհի վերայ:

Էյ, ո՞ր գիւղացի ես, ո՞ւր ես գնում, մի սատն ու Հպարտ ամնարկ դէպի ճանապարհորդը դարձնելով, հարցնում է մեր եասավուլ աղին՝ ձիու թամբի մէջ ծուռը նստած: Վայ, ասում եմ, խեղճ գիւղացուն, եթէ սխալմամբ գոակը մոռացաւ հանելը, կամ ուշացրեց խնարկհարաբար գլուխ իջեցնելը: Ցոցաց մտրակն օդի մէջ և պատատուեց խղճալոյ կիսամերկ մարմնոյն, մանաւանդ եթէ նա յանդգնած լինի չշտապել ճանապարհից դուրս գալ և եասավուլին լայն ուղին Թողուլ:

— Տօ խլանկա՛չ, քեզ չեմ հարցնում ո՞րտեղից ես. ի՞նչ ես դունչդ ծռել մարիկ տալիս, խօսի էլի, հետաքրքրուեցար երկրորդ և երրորդ մտրակը:

Սև ու մռութը կոխեց մեր անպորպի աչքերը, մինչև նա քաթափուեց, լեղուն հանած աղաչանք պաղատանք արեց, մտրակը մի քանի անգամ իւր պաշտօնը կատարեց:

— Ագա՛, յիմար, ի՞նչ ես ծռմռատուում, քեզ հարցնում եմ ո՞րտեղից ես, ո՞ւր ես կորչում, ասա՛ ու պրծի՛ էլի, տեսնում ես՝ հետդ մարդ ա խօսում, արժան չէ՞ս համարում պատասխան տալ:

— Գլխիդ մեռնիմ, աղա՛յ, հաղիւ արտասանում է մորուսած գիւղացին, այս ինչ տեղեցի եմ, այն ինչ գիւղն եմ գընում:

— Բաս որ լսէնց ա, էս սհաթս չէտ գաս, գնա ձեր գիւղը, ձեր ատնուտէրին ասա, եասավուլ Ղահրամանը հրամայեց, որ չորս լիտր լաւ բրինձ ղրկես մեր տունը, հալ հալա՛թ ասա Թող էդուց հասցնի, գինը կը տամ, հասկացա՞ր:

Լիմի Թէ քաջ է մեր ճանապարհորդը, Թող յանդգնի բացասել, բաշ ուստա[1] չասել և կամ խոստանայ վերադարձին նրա հրամանը տեղ հասցնել, ըստ որում իւրեանց գիւղը շատ հեռու է ճնացել իսկ գնալիք տեղն արդէն մօտ է: Բայց նա խելքը հացի հետ չի կերել, իւր կաշուցը ձեռք չի քաշել, այլ փորձն Եթէ իւր հետ առաջինն է պատահում, իւր ընկեր հարեւանների շատերի գլխին է եկել և ինքը լսել, կամ տեսել է: — Աչքիս վերայ, ասելով, ձեռքը սրտին՝ գլուխ է իջեցնում և իւր բաղդն անիծելով վերադառնում:

Ասես՝ հա՛, վայն եկել է քեզ տարել Թէ որ չես յետ դարձել: գոռոզաբար մտրակն օդի մէջ ցնցում է մեր եասավուլն և ձիուն կրկնում, բոլորովին վստահ եղած՝ որ նրա երեխայքը վաղը, կամ միւս օրը բրնձով փլաւ կուտեն, իսկ խոստացած վճարքը նոյն րոպէին մոռացման տուեց:

Մի փոքր յառաջ գնաց մեր եասավուլն և յանկարծ մի ուրախ ժպիտ փայլեց նրա երեսին:

— Եղալե Թիքա՛յ, ծռիլով դուրս Թողեց այս խօսքն իւր բերանից, վսեմ դիրք առաւ ձիու վերայ ու շտապացրեց իւր երիվարը:

---

1 Գլխիս վերայ:

Դիմացիցը մի փոքրիկ կարաւան է գալիս, օտար գաւառի մարդիկ են. մեր եասավուլն ուղիղ դէպի նրանց աշտանակից իւր ձին։

— Բարև՛ ձեզ, փոքր ինչ քաղցր դէմք առած՝ ասաց նա դէպի կարաւանը գառնալով, Աստուած բարի ճանապարհ տայ, ո՞ր տեղից էք, ո՞ւր էք գնում։

Փամբակիցն ենք, գնում ենք Կողբ աղ բերելու։

— Շատ լա՛ւ, շատ լա՛ւ, բարի ընկեր, բայց դուք իմանո՞ւմ էք, որ օտար գաւառի մարդն իրաւունք չունի առանց բիլէթի իր մշահալեցը դուրս գալ դուք, ի հարկ է, կը գիտենաք էս սաստիկ հրամանն ու բիլէթ էլ կունենաք։

— Չէ, աղա՛յ, ի՞նչ բիլէթ, Փամբակն ու Կարբու ժհալը հարեւաններ են, մենք պապենական հա՛ եկել, հա՛ գնացել ենք. լակի Ղզլբաշն օրումն էլ մեզանից բիլէթ չէին հարցնում, հիմի հօ՛ փառք Աստծու, չիմս [1] էլ մի էլլեկ ենք։

— Հանաք էք անում։

— Չէ, ղորթ ենք ասում։

— Ո՞նց թէ անբիլէթ էք, բաս էլ մեզ ո՞ւր են ածլուղ [2] տալիս պահում, որ ամէն փախստական կարողանայ արձակ համարձակ կապը կտրած մհալե մհալ ընկնել։ Դէ՛հ, յօնքերը կիճեռում է մեր եասավուլը, յետ դարձրէ՛ք ձեր ձիանքը, գնանք էս մօտիկ գեղը, բոլորիդ անուն էլ պէտք է գրուի, կունենդ կապուտին ու ղըրկուիք ձեր մովլովին, դուք փախստականներ էք, ապի գնացողը ձեր պէս չի ընկել։

— Աղայ ջա՛ն, քեզ մնատ՞ղ, մենք Հայ քրիստոնեայ ենք, մենք փախստական չենք, երեք օր ա Ճամփայ ենք գալիս, ոչ ովի մի շառ [3] չենք արել, էս ա Կողբին մօտացել ենք, Թող մեր Ճամփէն գնանք, մի մին բեռն աղ տանենք, մեր քեասիբութիւնին անենք [4]։

— Շատ մի՛ խօսաք, գոռում է մեր Ղահրամանն ու ձիանոնց ղլուխը յետ դարձնում իւր հրաշագործ մտրակովը։

— Աղայ ջա՛ն, չգիտէինք, էս մինը բաշխի՛, միւս անգամ առանց բիլէթի չենք գալ։

— Տօ՛, ի՞նչ անհասկացողներն էք, երկ օր ա բերանս հացի կտոր չի մտել, ոտքս օրղանդուից ցած չի եկել Թէ որ ես ձեզ բաց Թողամ, էլ ո՞ւր եմ ըստեղցանք մնդ գալիս։

1 Բոլորս։ 2 Ուռճիկ։ 3 Վնաս։ 4 Մեր կարիքը հոգանք։

— Աղայ ջան, չսեռնելու դիր, մենք քո ոտի ջաֆէն [1] կը քաշենք։

— Դուք ի՞նչքան պտի տաք ինձ, որ ես իմ Թագաւորին խային [2] մտիկ տամ, ձեզ բաց Թողամ. էգուց էլ օր էլ բանն իմացուի, գլուխս գնդանի [3] մէջ մտնի։

— Աղայ ջա՛ն, շատին քչէն, մի մին բան կը հաւաքենք, քո սիրտը կը շահենք, աչքի տակով անց կացրո՛ւ, գնա քո գործին, Աստուած բանդ յաջողի։

— Ելատ գիտէք ի՞նչ գժուար բան ա պատասխան տալը։

— Ո՛չի՛նչ, մեր խաթեր պտի եօլայ տանես։

— Է՛հ, ի՞նչ անեմ, խեղճ եմ գալիս, դուք էլ քիւլֆաթի [4] տէր էք, եկել էք ըստեղ հասել, յետ գարձնել չի ընկիլ, գնացէ՛ք ձեր ճամփէն. Փամբակեցւոց փողերը գլպանը գնելով՝ ճանապարհ գրեց։ Բայց մտիկ տուէ՛ք, տղէ՛ք, նախազգուշացրեց նա, բան է, եթէ ուրիշ եասավուլներ ձեր առաջը կտրելու լինեն, ասեցէ՛ք, որ Ղարս բէգը մեզ իզին [5] տուեց, Թէ որ հարցնեն Թէ բան տուիք, ասեցէ՛ք՝ մի Թեթեւ ծառայութիւն արինք. էն ժամանակն էլ ձեզ նեղութիւն չեն տալ։

— Աստուած կեանք, աղա՛յ։

— Յիմարնե՛ր, աղօթք արէք չպատահին, Թէ չէ մինչեւ դըլըպանները բերանը կրկին չբանաք, ճանգերիցը չէք պրծնիլ, փընթփընթայ ինքնաբաւական Ղահրամանն ու ձիուն կրկնեց։

Արժան է տեսնել եասավուլին մովլովի, կամ պիտք, մի հապարակ աստիճանաւորի հետ գնացած ժամանակը. այն աւիւծն այժմ հեզ գառն է գարձել. ամենայն խոնարհութեամբ նստած է նա իւր ձիու վերայ և բաւականին տեղ յետ ընկած է գալիս. ոչինչ բան նա չի տեսնում, ոչինչ գոռոզ միտք նրա մէջը չի անց կենում. նա կատարեալ ծառայ է և մի հոգսով միայն զբաղուած է. ականջները սրած՝ ամէն րոպէ սպասում է իւր տիրոջ հրամանին։

— Եասավո՛ւլը յանկարծ գուրս է թռչում այս խօսքն աստիճանաւորի բերանից։

— Բալի [6] աղա՛յ, պատասխանեցին և մնա գալը մէկ է լինում,

1 Ջարչարանքը։ 2 Նշանգ աչքով։ 3 Վտանգի։ 4 Դերդաստանի։ 5 Արձակուրդ։ 6 Հրամայեցէք։

բայց միշտ ձիու սանձը պինդ քաշելով, որ մի դուցէ իւր տիրոջից յառաջ անցնի։

— Այ՛լ ես, չե՞ս տեսնում, որ դիմացիկը մարդիկ են գալիս, քո պաշտօնդ մոռացե՞լ ես, միաքդ ո՞ր տեղ է։

Երի՛ք է, եասավուլը հասկացաւ ու ձիու կողքին այնպէս կրնկեց, որ խեղճ կենդանին երկուատակուեցաւ։

— Շո՛ւտ, շո՛ւտ ձանապարհիցը դուրս եկէ՛ք, աչքեր չունի՛ք, չէ՞ք տեսնում, որ աղէն գալիս է, աջ ու ձախ մարդահաւ անելով՝ շփոթը ձգում է ճանապարհորդների մէջը, շո՛ւտ գոտկ հանեցէ՛ք, գլուխ տուէ՛ք։

Ուռած փքուած քշում է աղէն իւր ձին ճանապարհի մէջ տեղովն առանց մի սառն ոտքուռնի անգամ արժանացնելու իրեն մինչև գետին գլուխ իջեցնող դիւղացիներին։

Այդպէս ճշդութեամբ կատարեց եասավուլն իւր պաշտօնն և կըրկին իւր նախկին խոնարհ դիրքն և տեղը բռնեց։

Ընդունելի է ինձ համար յիշողութեանս մէջ տպաւորուած, մանկութեանս օրերում կատարուած մի դէպք։ Այս մի իրողութիւնը պատմելով՝ կարող կը լինեմ եասավուլների ճիշդ պատկերը նկարագրել հետաքրքիր բանասէրին։

Աշունքն էր, Աշտարակու այգինների քաղը վերջանալու վերայ էր, պիւղումը երևում են միայն կենդ ու կունդ ծերունիք, երբեմն երբեմն փողոցներումը ձիուն դա՛հ տալով դուրս են գալիս քաղցու կրողներ, որոնք լեքչերի[1], կամ արջառների անկարել տիերի մէջ լցրած պճպճան եռացող քաղցուն՝ բարձած ձիանց շալակին, տուն են բերում կարասների մէջ ամանելու։ Շուտ շուտ լեքչի բերանին ցըցած փայտը հանել խրելով՝ քաղցուակիրները տիի միջից օդը դուրս են թողնում, որ սիկը չպատռուի։ Ես՝ ուէթ կամ ինն տարեկան մի մանուկ՝ ձմեռուան կախանի համար ժողոված պահոնի խաղողը մի փոքրիկ կթոցի մէջ ածած՝ ուսիս դրած՝ բերում էի տուն փըռելու, որ մի երկու օրից այգեկութը վերջանալուց յետոյ կախենք։ Այդ միայն իմ ժողովածն էր, ապա թէ ոչ երկու ձիաբեռն այդպիսի պահոնի խաղող վաղուց տանը փռուած էր։

Ընաջին անգամը ոչինչ գլխի չընկայ, երբ որ տեսայ իմ առջևովս մի քանի մարդիկ այս և այն կողմն էին փախչում։ Բայց յե-

1 Արջառի առանց կպրել տիկ, որով միայն քաղցու են կրում։

տոյ սարսափս բռնեց, երբ — ամա՞ն, ապա՛յ, գլխիդ մատաղ՝ կակծալի խօսքերն ականջս ընկան։

Մէկել ի՞նչ տեսնեմ, մի եասավուլ անողոքմտաբար ծեծում է մտրակով մի գիւղացու, որ պինդ բռնած ունի իւր ձիու սանձիցը և չի տալիս եասավուլին։

— Ա՛մա՞ն, քո տունը քանդուի՛, իմ տունը քանդուեց, մըղկոտալով ծուռայ գիւղացին, աչքս դուրս եկաւ։

Մի բայ դուռը կար այդ փողոցումը, ես ինձ այնքան չկորցրի, որ դողալով ներս ձգեցի բակն և դուռը վրէս ծածկեցի, փակը քաշեցի ու դռան ճեղքովը դուրս նայեցայ։

Արիւնը վազելով յած իջաւ գիւղացու երեսովն և նա գլխիվայր գետնին պարկեց, նոյնպէս ձիու սանձը պինդ բռնած։

— Թէկուզ քօռանաս էլ հոգս չէ, թէ դու սատկած՝ թէ ինչ՝ ղըվլըզի[1] մարդի համար մին ա, երկու աքացի էլ գլխին իջեցնելով՝ բայ թողեց եասավուլն ընկած մարդուն և յարձակուեց խոտորափողոցիկ քաղցուն բարձած դուրս եկող ձիու սանձը պինդ բռնեց։

— Շուտ վեր քցի՛ բեռդ էս պատի տակին, հրամայեց նա ծործորակը քերող ձիատիրոջը, ձին հարկաւոր ա, լեկա[2] ա եկել պատի նատի Իլանչալան գնայ։

— Ես ճամփի մէջ տեղը օ՞նց կըլլի եփ եկող քաղցուն վեր քցել քաշուելով պատասխանեց խեղճը, համ էլ կոռի հերթն իմը չի, ես մեկել օրն եկայ կոռատեղից։

— Ըսում եմ ձէնդ կարի՛, մի երկու անգրելի հայհոյանք թափելով գոչեց եասավուլը, դու էլ չդառար էդ աներես շան տղէն, որ քօռացաս ու ձիու նօխտէն[3] ձեռիդ չթողեց, հերիք ա հետներդ խաղ անեմ, ա՛յ, հիմի ինքն իրան վեր կընկնի բեռդ։

Այս ասելն ու պաշոյնը հանել տիի մէջ ցցելը մին եղաւ։

Քաղցուի հակն իսկոյն դատարկուեց, միւսն էլ հաւասարակշռութիւնը կորցրեց, վայր գլորուեց ձիու միջքից ու պատառուեց։

Ղըրմիզի գիւղացին մոռանալով, որ մի կարաս գինին հողի հետ խառնուեց, ընկաւ եասավուլի ոտքերն ու աղաչում էր, որ խըլեն իրան, ձին յետ տայ։

— Տունս կը քանդուի՜, էլած չէլածն երիք բեռն էր, մինը դու-

1 Ծառայութեան միջին։ 2 Բժիշկ։ 3 Երեսաժակը։

թափեցիր, երկուսն էլ տաքարի[1] մէջն ա, կը մնայ կը քացախի, երեխեքանցս տարէն ապրուստը ջլիս կը կտրուի, Թող գնամ էն երկու բեռը բերեմ կարասներն ածեմ, իմ ձեռովը ձիս թամքեմ, լեկուին տանեմ տեղ հասցնեմ ու յետ դամ, լեզուն հանած պատրաստում էր խեղճ մարդը:

— Վո հօրն օղորմի, հէքիմը գիւղումը մնայ, թէ դու քաղցու պէտ բերես, շատ մի քանիսի դարդն էր, թէ քո լակոտներդ քաղցած կը կոտորուին:

— Ախար իմ հերթը չի՛, էս ի՞նչ անաստուածութիւն ա, վերջապէս յուսահատ ձին ձեռքից թողեց ողբումելին և վեզը ծռած՝ մնաց եասավուլի քամակիցը նայելով, որ ձին քաշելով այս խօսքերը պատասխանից ու գնաց:

— Էդ իմ բանը չի՛, գնա՛ ձեր տանուտէրին ասա՝ Թող խրատուի ու միւս անգամ հերթի ձին գեղիցը դուս չթողայ:

Եասավուլը հեռանալուց յետոյ արիւնուտ շաղախուած պնդերեսը վեր կացաւ և փնթփնթալով գնաց. մորակի ծայրը դիպել էր յօնքին և պատառել, որ երէկ փոքր էլ ցած առնէր՝ անպատճառ սա էլ զրկուած կը լինէր իւր աչքից՝ ինչպէս միւսն իւր մի կարաս գինուց և ձիուց:

— Գլուխ քարը, թէ ունքս պատռուեց, հլա ձիս ձեռիցս չթողի, թէ չէ սաղ տարին ապրուստից պտի զրկուէինք, ասաց նա ու գնաց. իսկ ես կամաց դուռը բացի ու շունչս մէր տանն առայ:

ԺԹ.

ԳԱՐՆԱՆ ՀԱՐԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

Գարնան նախահաշիւը կազմելուց երկու օր յետոյ Արարատեան գաւառի ամէն գիւղերումն էլ մի և նոյն տեսարաններն են ներկայանում, ինչ որ մեր պատմութեան թիւը պահանջում է Աշտարակում տեսածներսասել:

---

4 Հնձանի մէջ չինած գինու հօրը:

Լուսաբացին ամէն մարդ վեր է կենում իւր օրուան բանացնելիք մշակների հոգսը քաշելու, բայց փողոց դուրս գալուն պէս կամ շտապաւ տուն է ընկնում, իւր երկրագործական գործիքը վերցնում և այդին կամ դաշտը փախչում, կամ թէ նեղ սոխակներովը մի կերպ դուրսն առնում հեռանում է: Գիւղումը սիրուն է խորին լռութիւն, երթևեկը կտրուում է և մի քանի մարդիկ միայն այս ու այն տեղ երևում են, հեռուը վերցրած կամ մի հասարնչացք բարձր եասավուլ, սպիտակ Ձերքեսի չուխան հագին, մտրակը ձեռքին և կամ մի դաշտալ նոյնպէս մտրակով:

Ահա եասավուլը վսեմ քայլերով փողոցէ փողոց է ընկել ու իւր հետ գնացող գզբի ցոյց տուած դառնն աչքացիով խփում և անվախ բակն է մտնում:

— Էյ, ո՞վ կայ այս տանը, ձ՛իչ է բարձրացնում նա:

Մի քանի անգամ հայհոյանքներ թափելուց յետոյ՝ ներսի սենեկների մէկի դռնից՝ ի վերջոյ դողդողալով երևում է քիթ ու բերանը պլինդ փակած մի պառաւ, կամ միջահասակ կին, փէշերն էլ մի փոքրիկ երեխայ փաթաթուած:

— Ո՞ւր է էս տան տղամարդը, թուրքերէն կամ հայերէն բարկանում է՞ այն ահարկու պարոնը:

— Տանը չի՛, անլսելի պատասխան է տանում, գնացել ա էջմիածին կամ Երևան, պարաք անի, բերի խարջը տայ:

— Ընչանք օրս ո՞րտեղ էր, ընչի՞ պտի նոր միաք անէր իր խարջի համար, գոչում է եասավուլ աղէն և յետ հրելով խեղճ կնոջը, ներս մանում տուն և ձեռք ընկած անօթը յափշտակում, որ գլխաւորապէս լինում է կերակրի կաթսայ:

Մէջի հեղուկը տարածուեցաւ տան մէջն և եասավուլի հոգան էլ չեղաւ. նա տուեց պղինձը գզբին և թռնթռալով դուրս եկաւ:

— Թէ որ ամէն մնի զռռնովը[1] պար գալու ըլնինք՝ վեց ամիս խարջը չի հաւաքուիլ, արդարանում է նա իւր առաջնորդող հարկահաւաքների և գզբի առաջին. ա՛յ, էս պղինձը կը ծախենք, խարջը կը վերցնենք, Թող անկոխ տաներդ մնայ ծուծորակը քոխելով:

— Մարդպար աղ՛այ, լինէ բաշխիր, խնայի՛ էդ ողբումելի օրբեւէրուն[2], իր հէթիմներին[3] անջախ[4] ա կառավարում, չգիտեմ

---

1 Նուագ բան. 2 Այրի 3 Որբերին: 4 Հապճ:

ո՛ր անաստուածը դրա վրայ խարջ ա դրել, ի՞նչ ունի՝ որ ինչ տայ, խնդրում էր մի ծերունի մի բակի դռան մօտ եասավուլլին, երբ որ վերջինս բանջքով յետ էր խփում մի կնոջ և կամենում պղինձը դղրի ձեռքը տուած՝ դուրս էր գալիս, իսկ կինը ցած ձայնով արտասուքն աչքերին յառաջ էր վազում ու աղաչելով շտապում փամփաթուիլ եասավուլի ծնկները:

— Գո խաթեր համար[1] յետ եմ տալիս, աղայ Խէչա՛ն, պատառ կառանօք յարգեց եասավուլը Խէչանենց Խէչանի խնդրին և դղրին յառաջ արած՝ գնաց ուրիշ տուն մտնելու:

Այրի կնոջ աղիողորմ լացն և վերջումը հազարաւոր օրհնութիւնները, որ անխնայ տալիս էր նա իւր պղինձը թափողին, Խէչանի սիրտը վերաւորեց՛ն:

— Որքան մարդ չէ ուզում գեղամիջի խառնուիլ, ասաց նա ինքն իրան, չէ ըլնում, էապէս բանները մարդի սիրտը կոտր կոտր են անում:

Այս խօսքերով նա գնաց դէպի տանուտէրի դուռը, հանեց իւր գրպանից երկու մանէթ և ձգեց դէպի տանուտէրը:

— Առէ՛ք, աչքներդ կոխեցէ՛ք խեղճ Եղսանի խարջը:

— Տօ՛, ձեր տունը չքանդուի, էս ի՞նչ ազազանք ա, որ քցել էք էս գեղը, բաս դուք ձեր խղճմտանքիցը վախենում չէ՞ք. թէ որ վերջին դառն ապքաթից էլ խարջ էք առնում, բաս էլ ընչի՞ էք ամէն մարդի վրայ էսքան մինճ փող հաշուում, կէս տարուայ մէջ գեղը հօ էդքան ծախս չարի՞ց. թէ որ ձեր անկուշտ փորը չի մրտնում էսքան փողը, ո՞ւր ա գնում: Լաւ չէք անում, տանուտէ՛ր, ասում ա՝ «գեղ կաննի, գերան կը կոտրի,» էգուց էլը դանակն ոսկորին կը հասցնէք, դատաւորը կխմնայ ու էն ժամանակը ձեզ հոգուով մարմնով պրծնում չկայ:

— Լ՛ո՛հ, ժպտայ տանուտէրն անտարբերութեամբ փողը վերցնելով, դու միայն կաս յիրուսաղէմ, էլ չես գիտում, թէ ազուէսը մեր մարագումը ձուա[2] ա հանել, վաղն առաջի պէս, մեր թաղու[3] հզօրութիւնից[4] ա. թէ որ դատաւորի մատը խառը չըլնէր, մենք քանի՛ գլխանի էինք, որ էս բաներն անէինք:

Խեղճ Խէչանը զարմացաւ, որ տանուտէրը ոչինչ դժուարութիւն չցոյց տուեց փողը վերցնելուն. նա կոշմնակի լաւ էր, որ

1 Ի պատիւ քո: 2 Ձագ: 3 Բարակ չուն: 4 Հեզութիւնից:

մովսէսները կաշառք են ուտում, բայց այս աստիճանի լինելը չէր իմանում:

— Մի՞թէ թագաւորական խարջից էլ մանաւորում են, հարցրեց Խէչանը տանուտէրին, խարջը գողանալ կըլնի՞:

— Ո՛վ ա ասում թէ գողանում են. ա՛յ նատի ասեմ քեզ, դատաւորը մեզ ա պահում, մենք նրան. ինչքան էլ որ մովսէսը խամ[1] մարդ ըլնի, իր գալուցն երկու օր յետը իմանում ա իր չուղնէրիցը[2], թէ մհալն ամէն մի գեղը դաւթարի[3] քանի՛ տուն ա, նաֆարի[4] քանի՛: Ի հարկ է, մեր պարաքն ա, երբ որ նոր դատաւոր գայ, բոլոր տանուտէրներս մեր իշխաններով պիտի գնանք գալը ընհաւորինք, ճանանչենք. էն էլ գիտես, որ դարտակ փէսին, ասած ա, շուն չի հաչալ, մեր ըռևսին[5] ո՛վ մոխիկ կը տայ, թէ որ տկլոր գնանք ընտեղ ցցուինք. ամէն գեղից Աստծու տուածիցը բեռն ենք կապում ու գնում. — բարով հաղար բարի ես եկե՛լ, աղա՛յ, քո աքչը մեր մհալի վրայ քաղցր ըլի՛, ոտդ խէրով ըլի՛, պայիմ պաղիմի[6] ըլնես. էս թաւուբ[7] մի քանի խօսքեր խարջում ենք. նա էլ իր կողմից դլուխը տմբացնում ա ու մի երկար քարոզ սկսում:

— Ապի թէ ի՞նչ:

— Լա՛ւ: Ի հարկէ ինձանից յառաջ շատ մովսէսներ էք փոխել, առաջինը ես չեմ, վերջինն էլ չեմ ըլնելու, մենք ջուրն ենք՝ դուք կարմունջը, մենք գնացական ենք, դուք մնացական, համա իմացած կացէք, որ ես ուրիշների պէս չեմ. ինձանից առաջ եղածները ո՛նց են են վարուել, ի՞նչ են արել՝ ես միտք էլ չունիմ քննել իմանալ, ամէն մարդ իր խելքի տէրն ա. ես էս օրուանից իմ բնութիւնս ձեզ հասկացնեմ, ես կաշառք ասած բանն իմ դրռնովը տուն չեմ թողալ. ես շատ բարկացող մարդ եմ, կաշառքի առնում տուղին փէսի տակին կը մաշեցնեմ, հէրս էլ որ մեզաւոր ըլնի՝ հուրն յաւիտենական կը կորցնեմ, որդիս էլ ըլնի՝ Սիբիրումը կը փթացնեմ. բայց արդար մարդի դատաստանը դանակի պէս կը կտրեմ. հինգ օր չի քաշել կը տեսնէք, էնպէս պտի անեմ, 10 տարեկան երեխէն ոսկին գլխին դրած՝ գեղէ գեղ իմ մհալի մէջը կարողանայ մանգալ. գողերի ու աւազակների իզ ու թողը[9] պտի

1 Անծանօթ: 2: Լրտեսներից: 3 Մատեանի հաշուով, ցուցակով: 4 Շնչի՝ անհատի հաշուով: 5 Բերան: 6 Երկարատև: 7 Այսպիսի: 8 Որպէս թէ: 9 Հետքը:

կարեմ. վայն եկել ա էն մարդին տալել, որ մոքումը դնի փողի ու կաշառքի ձեռով իր գործը յառաջ տանել: Էս խոսքերը ձեզ ընդուր եմ ասում, որ դուք ձեր գեղերի տանուտէրներն ու իշխաններն էք, էս օր գեղն տեղակ ըտեղ կաննաճ էք, գնացէք իմ բնուԹիւնս ձեր ժողովրդին հասկացրէք:

— Դէ, էլ ի՞նչ ես ուզում, դրանից էլ լաւ խոսքե՞ր:

— Համբերի՛, շատ մի՛ վռազել[1], Խէչո՛ն:

— Դէ՛ գնացէ՛ք, ասում ա, տանուտէրնե՛ր, շատ շնորհակալ եմ, որ եկել էք ինձ տեսուԹիւն:

— Նաս էն տարած փէշքեաշներն[2] ի՞նչ արիք:

— Էն իրան կարգին վաղուց մառանումը դարդակուեց, ընդուր համար խոսք էլ չի ըլնում, գնա դու անկաջ դի՛ր:

— Էլ ի՞նչ մնաց:

— Ա՛յ, ի՛նչ: Երկու երեք ոտք գնա փոխած չինք ըլնում, մին էլ եասավուլը քամահներից հասում ա, ԹԷ աղէն հլրամայեց, որ տանուտէրներն առանց իրան տեսնելու չգնան: Էդ ի հարկ է առանց էն էլ գիտէինք ու սպասում էինք: Կէս սհաթից մեզ մի մին ներս ա կանչում ու սկսում նոր Թամահները[3], նոր հարց ու փորձերը: Սաղ ըլլի Միկիտան Սաքօն, պատասխանն առաջուց մեր բերանը դրել ա:

— Գեղդ քանի՛ տուն ա, հարուստ ի՞ն ԹԷ աղքատ, հարուտներն ո՞վ են, տարեկան ի՞նչքան ապրիւնք էք վերցնում, ինչքա՞ն հարկ էք տալիս, Թագաւորական խարջից սաւահի ի՛նչքան աւելի Թաւջի էք անում, նրանից օ՛ւմ ու օ՛ւմ համար էք բաժին հանում, գեղացիք հասկացող մարդիկ ի՞ն, ԹԷ կոպիտ ու անտաշներ, ի՞նչքան գիր գիտեցողներ կան, ձեր մօտիկ գեղերի հետ ի՞նչ փԹած մռացուած վէճեր կամ բաժանելու հանդեր ունիք, ես ի՞նչ գիտեմ, քանի՛ էս տեսակ հարցմունքներ մին մնի հաւիից շատում ա:

— Ցետոյ դուք ի՞նչ էք պատասխան տալիս:

— Հիմի ԹԷ ղօշաղ[4] ես, Խէչո՛ն, ջոկ ջոկ ամէն բանը մի՛ պատմիլ. գնա դու բերանդ բաց չես արել, ինքն ա էլ յետ քեզանից շուտ ամէն բանի հաշիւը տալիս. մենք էլ ի՛նչ անենք, տերն ու տեղը ամէն բան կարգին հասկացնում ենք:

1 Մի չտապիլ. 2 Ընծայ. 3 Պատուէր. 4 Քաջ.

— Դէ՛ հիմի գնա՛, ասում ա, քո խելքի կարածի պէս դեղը կառավարի՛, կէս սհաթ յառաջ՝ որ ես էն խոսքերը ձեզ ասեցի, կարգ էր՝ պտի խօսէի, բոլորի մօտ չի կարելի սրտինդ պատրաստ ասելը բայց իմացի՛, որ մուլտին էլ ձեր պէս մարդ ա՝ ուտիլ ա ուզում, մրսիլ տաքանալ ունի՝ հագուստ ա պէտք, մեզանից բարձր էլ մարդիկ կան՝ նրանց էլ մտիկ տալ ա պէտք. իմացած կաց, որ գեղի պարտքն ա իր դատաւորի տան տարեկան ապրուստը պղկել, նրա քիսի խարջլը[1] չպակասացնել, որ նա էլ կարողանայ իր մենճերի սրտը շահիլ. մենճ բան չի, ռահաթի սրտը լէն կը լնի, որ տեղ իրան հանանելու երկու մանէԹը կը տայ, երկու երեքն էլ աւելի կը տալ, առանց էն էլ ամէն գեղ Թագաւորական դաւԹարի[2] հաշուով քիչ ա բռնած, որ մէկել ծախսերը միջևցը դուս գայ. էդ բանն էդպէս եկել ա, էդպէս էլ պտի գնայ, դուք չկարծէք, որ ձեր դատաւորը չը գիտի, ԹԷ ամէն գեղ քանի՛ տուն Թաքցրած ունի խաղնիցը[3]:

— Ազար անգամ կանգնի ու ասա՛, գլխիդ մատա՛ղ, ըղԹի ես ասում, գեղ ա, չի ըլնիլը որ մի քանի տներ աւելի չտեսնեայ, համ գրանցից շատը աղքատ՝ օրէն հային մուրթական են, էդ ընդուր համար են պահում, որ էն աղքատների խարջն էլ ունևորների ընկնիքը քցեն: Ցես, ԹԷ ո՞նց ա ծիծաղում. տօ՛ — գնա՛, լաւ մա՛րդ, ասում ա, գնա գործիդ կաց, գեղի վերջն աղքատն էլ կարող ա տարեկան մի երկու մանէԹ ձարել էդ օրէնք ա, պտի ասիլ համա էս էլ կայ, որ դուք էլ պտի ձեզ համար էլ՝ մեզ համար էլ միաք անէք. ես անխղճմտանք մարդ չեմ, ես չեմ ասիլ, որ խարջից աւելացածը բոլորն ինձ բերէք ու դուք համը մի՛ տեսնէք, էնպէս արէք, որ համ դուք կուշտ ընէք՝ համ մենք:

— Դէ՛, ասա ինքն ա սողվայնում գողուԹիւնն էլի:

— Նաս էլ ո՞ր ես ինձ կրակը գնում էրում, Խէչո՛ն, բաս էլ ո՞նց չի նեղացնենք աղքատին, էլ ո՞նց եասավուլ չը բերեմ:

— ԹԷ Աստուած կը սիրես, էն անսիրտ եասավուլների անունը մի՛ տալ, իլլաքի ԹԷ[4] էս գաղան Մարգարը, աչքիս պէՀը չտեսել տուեց, երբ որ էն խեղճ կնգայ աղանչաքը լսեցի, համա եասավուլի համար՝ ոնց որ խաղ ու պար:

— Դեռ էլի ոտդ ցխոտ անես, Մարգարի երեսը քսես, էլի

1 Ծախսելիք. 2 Մատենագրացուցակի. 3 Գանձարանից. 4 Մանաւանդ.

մէջների լաւը դա ա, էլի ինչքան ըլլի՝ Հայ-քրիստոնեայ ա, բաս թէ որ էն անօրէն Թուրքերին տեսնես, էա զազախների արածները լըսես, ի՞նչ կանես։

Տանուտէրի ու Խէչանի խօսակցութիւնն ընդհատուեց քուչի միւս ծայրից գոռալով երեսն արիւնլուիկ եղած մի բօբիկ տղայի դէպի նրանց վազելովը։

— Վա՜յ երեխէքս, վա՜յ գլուխս, վա՜յ մէջքս, ձեզ մատա՛ղ, էս ի՞նչ Աստծու պատիժ ա, աղաղակումէր տղան, օգնեցէ՛ք, զազախը մտաւ տունս, հարբած էր, էլ չեմ հասկանում ի՞նչ էր ուզում, ղամչու [1] տակը քցեց երեխէքանցս, դաղդըղրիկն ածեց, ինձ էլ էս օրը քցեց։

Նրա գլխից արիւնը թաւխուում էր, նա հանեց իւր վզայի մէտակ արխալուղն և մէջքը ցոյց տուեց, լեղակի նման կապտացած էր։

— Ա՛յ անաքանդ, եասավուլը հերիք չէր, ղազախ էլ էիք բերո՞ւմ, ասաց Խէչանը տանուտէրին։

— Ղազախին ես չեմ բերիլ տուել, պատասխանեց տանուտէրը, նա եկել, հինգ ձի էր ուզում, դուասաղներ [2] պտի տանի Աբարանից մովլովի կուշտը։

— Էս անաքանդի տղեն ձի էլ հօ չունի՛, սրա տունն ընչի՞ էիք ղրկել։

— Ձիանքը վաղուց եմ ճամփու քցել, ինքը ղազախը լակել էր [3]. գլուխն պատուիրեցի որ մի քիչ ընթռկացնի [4] ու ճամփու քցի, երեսում ա քնել չի ու վեր ա կացել աներն ընկել։

— Հիմի էս նաչար [5] տղի համար ի՞նչ պտի անես։

— Ոչինչ, ձեռներիցս ի՞նչ կը գայ, մովլովի համար ղազախի ձիու անպէտք դռնապը [6] մեր գեղիցը շատ թանգ ա։

— Ձեր գլխին մեռնի՛մ, ոչինչ չեմ ուզում, միայն թէ եկէք տանիցս դուս հանեցէք էն անաստուած անհաւատին, յուսահատած խնդրեց տղայն։

— Էլ ի՞նչ ես նստել, դէ, վեր կաց գնա՛, տանուտէր, ո՛վ գիտայ՝ խեղճի տունը հիմի ի՞նչ օրն ա քցել։

Ես ոչինչ չեմ կարող հասկացնել, ա՛յ, եասավուլ Մարգարը

1 Մտրակ։ 2 Բանտարկեալներ։ 3 Խմել, հարբել էր։ 4 Գնացնի։ 5 Խեղճ։ 6 Սմբակը։

գալիս ա, սրան տանենք, սա խօսք կը հասկացնի, ցոյց տուեց տաճնուտէրը մօտեցող եասավուլին։

— Շատ լաւ կըլնի, Խէչան աղա՛յ, ընդունեց Մարգարը Խէչանի խնդիրը, ես էս սհաթս քո խաթեր ղազախին գեղիցը դուս կը հանեմ, բայց ընտեղից էլ գնանք ձեր տանը մի երկու թաս գինի խմենք, ասում են քեզ լաւ գինի ունիս։

— Հերիքնազ Ջան, էն ի՞նչ այլակերպ մարդ ա եասավուլը, հէնց որ հացը տէփերով տարայ առաջները դրի ու աչքս նրա աչքին ընկաւ, ինց որ գլուխն ու մահը տեսնէի, ես էդ մարդից վախում եմ, դըրա ձեռովը մեր տան գլխին մի փորձանք կը գայ, ասաց Հէղնարը հօր հրամանաւը շերտանէն [1] հաց տանելուց յետոյ։

— Ը՛հ, դրանց սևին էլ նալաթ [2] սիպտակին էլ եարաթ դրանցում լաւերը կա՞ն, ամէնքն էլ մահը տանելու բաներ են, պատասխանեց Հերիքնազը։

Այդ օրից Հէղնարը քանի եասավուլ Մարգարի անունը լսում էր, սիրտը դողում էր։

Ի.

ԳՐԱԳԻՐ ՀԵՐՈՍԸ

Տարէց տարի Խէչանի հարստութիւնն աւելանում էր. 50 Թուականների Արևելեան պատերազմի տաք ժամանակն էր. Աշտարակցոնց ապրանքը գետնին չէր ճնում. ինչքան քացախած գինի ու ջուր խառնած արաղ կուզես՝ տար Դիմբրի՝ բանակի մէջը, կէս օր չի քաշիլ՝ տկերդ կը դարտակես կը վերադառնաս։ Խէչանը թէպէտ չարվադարութիւն [3] չէր անում, բայց իւր գեանն էլ այն գրնովն էր ծախում, որ կարճ միջոցում մեծ օգուտ ստացաւ. նա ի՞նչ կարիք ունէր օր ծերութեան չօլէ չօլ ընկնիլ, Աշտարակի

1 Գինետուն, մառան։ 2 Անէծք։ 3 Ձիապանութիւն։

ջահելներն իրանք գնալու պաղաչում էին նրան, ասում նրա ապրանքը, շուտ փող շինում ու միւս շաբաթ գնում, թէ նրան վճարում, թէ իրանք էլ օգուտ քաղում։

Ամեր աղէտք, ծաղը անելով՝ Աբարանաւ բլուրի մէջ ձիւնը ձըղելով՝ կամ ամառուան տօթին գլխարկով երեսների քրտինքը սրբելով՝ խէշանի գլխի արտաղը ձիանց վերայ բարձած՝ կառակներ էին անում Աշտարակի երիտասարդները, հիմի խէշաններց խէշանի ոանեւրը քարսուռ տակին ցրտատար էլան, կամ ուռի ծառերի շուաքում մի քնած ժամանակը գլխին արևը խփեց։

— Բաս ձեռներդը տեսնես՝ ի՛նչպէս են կուցումել՝ կուչ եկել թամընդրի տակին նստած՝ խորովածի շամփուրը քաշելուս։

Եւ մեր ուրախ պատանիքն իրենց բարձր ծիծաղով և քաղցրաձայն երգերով վերև էին բարձրանում։

Երևանու նահանգն այս տարի մեծ նեղութեան մէջ էր, շիրակու գաւառը զօրքը լցուած էր, արիւնահեղ պատերազմը ուուս և Թուրք տէրութեանց մէջ օրական հազարաւոր զոհեր էր անում, թնդանօթների ճայթիւնները մի քանի րոպէի մէջ հարիւրներով մինուճար մօր աչքի սև ու սպիտակները էին խաւարացնում. բանակների մէջ պատերազմին էր իւր հունձն անում՝ գաւառներում տաժանելի ու դժուարակիր կոռ ու բեդառն էին հասարակութեանն առանց սրի ու մահացուցիչ գործիքների սպանում։

Ո՛չ այնքան օրինաւոր և ուղիղ ճանապարհաւ եղած պահանջներն էին այսքան նեղութեանց պատճառը, որքան ստորին և երկրորդակարգ պաշտօնատարների անկանոն գործողութիւնները։ Գոյն ի՛նչ կուզէ՝ մութ գիշեր. այդ խաւարտիների օրերը դուրս էին եկել. ամէն մի նոր պահանջի ժամանակը նոր միջոց էր բացուում իւրեանց շահասէր նպատակներին հասնելու։ Օրինակի համար. բուն բանակիցը անօրէնութիւններ է լինում առատ վարձատրութեամբ պատերազմական անօթներ և պաշարներ տեղափոխելու մի կէսից միւս կէսը։ Անկարծիք, գիւղացի ժողովրդի համար այս եկամտի աղբիւր էր, մի հարստութեան գուռն էր։ Ամենայն արագութեամբ շրջաբերական հրամանը տարածուում է գաւառապահներին՝ ի կատար ածելու. ուշացնելու ժամանակ չէ, հանգամանքը համբերել չի տալիս։

— Էլի՛ եկաւ, էլի՛ նոր աղբիւր, թնդում է ուրախութիւնից պատուելի պաշտօնատարների սիրտը։ Հինգ րոպէի մէջ նոր գործակատարութեան ծրագիրը պատրաստ է, հրամանատիզիերը գըր-

ուում են բոլոր գիւղական տանուտէրներին և մի երկու շաբաթ, մի եռամսեայ և մի դիւանատան գրագիր Թռչում են դէպի օգուտի դուռը։ «Ուր դէշն էդ անդր ժողովեսցին արծուիք», պատրաստում է ժողովրդի բերանում այս գրաբառ առածը, իսկ իւրանից՝ այդ ռամիկ ու տգէտ ժողովրդից աւելի իւրալի դէշ, կամ լաշ ո՛րտեղ կը լինի։

Դեռ տեղ չհասած՝ մեր ախոյեաններն էլ իւրեանց գործողութեանց ծրագիրն են կազմում. գրագիրը մի երկու անգամ կարդում է իւր տարած հրամաններից մէկն և գլուխը պտրտում։

— Հէր օրհնածն էլ տեղ թողել է՞, որ մարդ իւր գլուխը միաք բերի. վերջապէս ասում է նա իւր քառակից եկող եասաւուլին, էս առաջին գիւղը որ պիտի մտնինք, ընդ ամէնը չիսուն տուն է՝ վաթսուն սայլ ուզել, տնաբանդի գիւղումը բոլորը քսան սայլ հազիւ լինի, 30 լուծք եզը չի լինիլ, իրանք էլ քաղցած ճաշին են քընում, հազիւ մովրովի ուզածը վճարին, էլ մենք ի՞նչ տեղից կաթողնք օգուտիլ։

— Դու քէֆիդ կա՛յ[1], աղայ Մ իրզա՛յ[2], դու քանի կարող ես՝ թթու դէմք բռնիր ու ինձ վրայ բարկացիր, դեռ թէ կուզես՝ հասարակութիւնը հաւաքուած տեղը՝ մի երկու ապտակ էլ երեսիս կպցրու, ջնաս չունի, ձու չեմ որ փխլուիմ, ժպտալով և հեզութեամբ պատասխանում է եասաւուլը։

— Դրանով ի՞նչ յառաջ կը գայես։

— Էն՝ որ մեր ձեռքին ա՝ էս օր հրամանը գլուխ բերե՞լ թէ մի շաբաթի մէջ կատարելը։

— Է՛ա՛, գլխի ընկայ։

— Ի հարկէ, մեր հին արհեստ ա, տեսնո՞ւմ ես էս պաշտօնները, սրանց էլ հո գիտես՝ թէ ի՛նչ վախտ եմ պէտք ածելու։

— Կը տեսնենք էլի՛։

— Վա՛յ գլխիս, էլի եկան, յիսո նայից տանուտէրը դէպի գիւղն ափը և ձեռքով գլխին խփեց։

— Սաքի ուրախ չես, ժպտաց գլխերը։

— Է՛հ, խաչխուճի[3] էլ հալ չմնայ,

---

1 Ուրախ կայ։ 2 Գրագիր։ 3 Ժողովրդի մէջ։

Մ՚եր հրամանաբերները ձիանքը լցրած՝ կրակի նման գիւղի մէջ մտան։ Ոչ միայն գիւղական ահեղ շների հաչոցն ու յարձակմունքը չեն կարողանում փոքր ինչ սանձել նրանց կատաղի արշաւանքը, քուչաներում խաղացող բոկոտն ու մերկ երեխայքն էլ նոցա աչքին ձանձ՚ ու մժեղ են թուում։ Առանց աջ ու ձախ նայելու՝ թթռած ու խոժոռ դէմքով դէպի տանուտէրի դուռն են քշում նրանք իւրեանց ձիանքը։

— Փախէ՛ք, փախէ՛ք, երեխէ՛ք, փախէ՛ք, ձիանոնց ոտների տակին կը ձիլուիք, գոռում են հեռուից երեխատէրերին ու իւրեանք ծակերը մտնում թագչում։

Անհնգէս կարծես, թէ այս գիւղում մի հատակաւոր մարդ չըկայ, բացի գղջից ու տանուտէրից, որ շլինքները ծռած՝ դրանց են սպասում։

Գոտակը հանած՝ վազեցին տանուտէրն ու գղջրը դէպի տուա-ջին քշող ձիւաւոր գրագիրն ու մինը ձիու սանձը բռնեց՝ միւսն ապտակը։

Մի ոտը դեռ ասպանդակի մէջ՝ խօսեց մեր աղին։

— Շուտ արա՛, տանուտէ՛ր, կանգնելու ժամանակ չէ, 60 սայլ պէտք է պատրաստես՝ ամէն մինը երեք լծով ու ձանապարհ դնես այսօր իսկ՝ Ալէքսանդրօպոլ՝ պատերազմի դաշտը, այն տեղից գնդակ-ներ պիտի բարձնն, ուղարկեն Կարսայ տակը։

— Փլեխիդ մեռնի՛մ, մեր գեղումը հիմի երկու սէլ չես դտնիլ, էլած չէլածը 15 կոտրատուած սէլերը են, էն էլ շատը Գիւմրի փոշ-թաթի[1] ալիր են տարել, երկքն էլ դնացել են քօմակչու[2] օղլու-շաղը[3] Երևանիցը բերելու։

— Կատարկ գատարկ ի՞նչ ես պլեխիդ դուրս տալիս, ձեզ որ ճնայ՝ թագաւորական սալդատը[4] կռիւ չպատի անի, որ ձեզ նեղու-թիւն չդայ։

— Աղայ ջա՛ն, քո գլուխը վկայ, գեղումը մի սէլ չկայ։

— Քեզ սէլ կը չինեմ՝ կը լծեմ, յիմա՛ր, ինձ հետ հանաք ես անում։ կանչի՛ էս սհաթս ձեր գեղի կոտրուած խալխին, տես-նեմ քանի՞ գլխանի էք, որ թագաւորական հրամանը գեասինն էք ուզում քցել։

— Աղայ ջա՛ն, գեղումն էլ օրինաւոր մարդիկ չկան, ջահել-

---

1 Ճռուզդ։ 2 Օդնականի, 3 Գերդաստան։ 4 Զինուոր։

ներն ամէնքն էլ սէլերի հետ կոռատեղն են, հալիւոր անկեաններն էլ՝ որը իրանց հանդերումն են, որոնք էլ ըսկի ոչինչ բանի պէտքա-կան չեն, աներումը հաւեր են քշում։ Գեղի հալը[1] որ իմանաս՝ լացդ կը գայ. վարուցանքներս ճնայել ա, գեռ մի բուռը ցորեն չենք հողի մէջ շաղ տուել, յանաճներս էլ չորացել կծղել են հըն-ձողի խաթեր, տաշտներումն հացի փշրունք չկայ, հէնց տուն կայ, որ էս օր գուռն երեսին հետ արած՝ ոչ ով չունի, որ իրան մի սառը ջուր տայ։

— Ո՞նչ ես գլուխ տանում, քեզանից ո՞վ ա հաշիւ պահան-ջում, քեզ ասում են սայլեր պատրաստի՛ր, կուզես՝ գետնի տակիցը հանիր տա՛ր, էդ քո բանն է։ Ծօ՛, ի՞նչ ես դուննչդ ցցել, երեսիս մռիկ տալիս, շան տղայ, հասավո՛ւլ, մտաբցաւ դրագիր աղէն եա-սավուլնն ու մի ապտակ խփեց, քո պաշտօնդ չե՞ս ճանաչում, շո՛ւտ էս բոպէիս տունը մի մարդ էստեղ ստեղծե՛ս։

— Գլխիդ մեռնե՛մ, մենք քո ղուլն[2] ենք, դու պտի հրաման-չես, որ մենք կատարենք, խոնարհաբար պատասխանեց եասա-վուլը։

— Հրամայում եմ, շո՛ւտ, գաղախներին էլ հետդ վեր ա՛ռ։

— Ի՞նչ ես կանչել, յիմար անասո՛ւն, հասա եասավուլի մարակը գղջի ուսագլխին, առաջ ընկի՛ր, տես քանի՞ մարդ եմ հա-ւաքներիցը գուս քաշում, գաղախնե՛ր, քամակից ընկէ՛ք։

Ինչպէս մի քանի շներ, որ աղուէսի քամակից ընկած հալա-ծում են ու մըրտուած կենդանին օրհասը մօտ կարծելով՝ իւր ոտ-քերին է ապաւինում ու փախչում, այդպէս եասավուլի առաջին վա-զելով՝ տունէ տուն է մտնում գղջի Վիքօն։

— Լալի ի՞նչ ես ասում տանուտէ՛ր, տալու ես սայլերը, թէ ոչ, հարցնում է իւր մարդկանց հեռանալուց յետոյ գրագիրը, թիկ-նելով տանուտէրի սեղանին մօտ մի փոքր քաղցր դէմք բռնած։

— Աղայ ջա՛ն, սուտ չեմ ասում, գեղումը ոչ մի սէլ չկայ։

— Ուրեմն ի՞նչ պէտք է անենք։

— Քեզ լաւ յայտնի ա, ժողովով պատասխանեց տանուտէրը, համա Աստուած վկայ, տնաքանդի ժողովրդի մէջ էլ հալ չկայ, ըն-չանք բօզաղները պարտքի տակ թաղուած են։

---

1 Դրութիւն։ 2 Ծառայ։

— Ոչինչ, որեղ հարիւր մանէթ պարապ կայ՝ տասն է կա-րելի է աւելացնել։

— Ով ա բան ասում, համա էլ վերցնելու տեղ չմնայ։ Աստուած տաղ պահի Աշտարակցի Խէչանենց Խէչանին, թէ որ նա չըլնէր, էս տարի տաղ մհալը հողի հետ կը հաւասարուէր, Աստուած նրա օջաղը չէն պահի, գեղ չկայ, որին նա ձեռը մկնտած չըլնի. ընէնց խղճմտանքով ա վարուում, որ ամէնքն էլ շնորհակալ են, ուրիշը որ ըլնէր՝ միին մին շահ կառնէր, համա նա շահի հա-մար բան էլ չի ասում, ինչքան մեր սիրան ուզում ա՝ վըճին ինք դնում, նա էլ ոչ մի խօսք չի ասում։

— Էլ ի՞նչ էք ուզում, Աստուած ձերն էլ տուել ա, Աշխա-րակը հեռու չի։

— Էլ երեսաւոր չի մնայել։

— Շատ խօսիլ չի հարկաւոր, դու էլ գիտես, որ մեր երեսը քեզ էլ օգուտ է, հիմի ժողովուրդը կը հաւաքուին, ես քեզ վըայ կը բարկանամ, որ մինչև իրիկուն սայլերը պատրաստ լինեն, դու էլ մի քիչ դէմ ընկիր ու յետոյ՝ երը որ կը տեսնես, որ շատ եմ նե-ղանում, խալխին դուռը հաւաքի, խորհուրդ արէք, որ ես ձեզ երեք օր ժամանակ տամ, յետոյ կը գնաք մովըովի մօտ, էնտեղ էլ մի տեսակ կը վերջացնէք։

— Աղայ ջա՛ն, լաւ ես հրամանք անում, համա ռահաթի միջքի իլիկը[1] կորուել ա։

— Ի՞նչ պատ անես ամբողջ աշխարհքի համար է, մէյն քեզ համար հօ չէ։

— Հա՛, ի հարկէ, ասում ա «էլենան զարա գիւն բայրամ դիր»[2]։

— Փառք Աստծու, որ դու ես ասում։

— Համա, աղայ ջա՛ն, ի՞նչ ես կարծում, քեզ որ, ինչպէս ըլնի, շնորհակալ անենք, մովըովին ի՛նչքանով եօլայ կը տանի[3]։

— Գնա լիմն տաս, տեսնեմ ինչքան պատ տաք, մովըովինն էլ ես կասեմ։

— Հինգ մանէթով անց կացրու։

— Ի՞նչ։

1 Որնաչար։ 2 Համայնքի հետ միասին՝ ան օրն էլ զատիկ է։ 3 Կըբաւականանայ։

— Գլխիդ մեռնի՛մ, էլ բերան մի՛ բաց անիլ Աստուա՛ծ, ե-կի՛ր, գնա՛ր, ծո՛վ, յամա՛ք՝ խալխումը չըն չմնայ, էլ վաղինը չի. ես կռիւը պրծնի անց կենայ՝ էն վախտը չանես քեզ մատաղ կը-տամ։

— Տօ՛, ես հնձի ժամանակը որ մանգաղներս բթացնենք, ձեռներս խաչենք, տանը նստենք, էգուց երաշտ եղած վախտն ի՞նչ պտի աշխատենք։

— Շատ լաւ ես ասում, ալա՛յ, համա մեր գեղն համար չի ասած, հարուստ գեղեր շատ կան, ամէն տեղից էլ իրան ու գեօ-ղայ[1] կատանաք, Աստուած բարաքաթ[2] տայ, դու ինձ լսիր, հինգ մանէթով եօլայ տար[3]։

— Դէ լա՛ւ, քո խաթեր տասը մանէթով վերջացրո՛ւ, մի ե-կու մանէթ էլ հասավուլի ու զաղախների աչքը կոխի, մովըովին էլ ես կը գրեմ, որ խնայի, քիչ բանով ինքն էլ ձեր վըրայ էս կոռը վերցնի։

Թող սրանք իրանց խուրհուրդն անեն, մենք հեռևինք հա-սավուլ Մարգարին իր զազախներով։

— Ո՞ւր են էս քանդուածի տէրերը, ճշում է հասավուլը բա-կումը կանգնած գըլի վերայ, կաշկ կը քերթեմ, թէ որ էս սհաթս դուս չես բերել։

— Ես ի՞նչ անեմ, որ ասում են տանը չի, ո՛վ գիտայ՝ ո՛ր արան ա գնացել բարձրաձայն պատասխանում է գլխին ու աչքով ունքով դէպի տան դուռը ցոյց տալիս։

— Հետս արի՛, զազախ, ասում է հասավուլն և տան դուռը բաց անում։

— Ես ձեզ ամէնքիդ էլ կապանեմ, թէ որ չասէք, թէ ո՞ւր է տանտէրը, յատաջ է վազում զազախը դէպի վերի անկիւնը, ուր ջահել կանայք ու աղջիկներն երեսները դէպի պատը դարձրած՝ գը-լուխները կախել են։ Փոքրիկ երեխայքը, որոնք շշկլուած մոխիկ էին տալիս այս տեսարանին՝ լացի ձայնը տունը ձգեցին ու

— Ա՛յ Նանի ջան վախում եմ, վա՛յ Նանի ջան, սա մեզ կուտի։

Զազախը մի կնոջ ուսից բռնեց, յատաջ քաշեց։

1 Ըստ իւր չափու։ 2 Լիութիւն։ 3 Վերջացրու։

Երեխայքը՝ որ փոքր լինչ լուռ էին, կրկին իրանց նուագատրաններն սկսեցին։

Նեղ ամբխած կինը գլուխը կրծքին է սեղմել ու անկաօս ղաղախի քամակիցը գալիս։

— Ախար մարդ ոնը ա, սրանց ձեռիցը հօ պրծնիլ չինը, արդարանում է գլխերը, Մարգար աղէն էլ շատ խնդրեց ղաղախին, որ տուն չմտնի՝ չէլաւ, սրանց հօ իմանում ես, լեզու չգիտեն, բան հասկացնիլ չի ըլնում։

Կինը ուսերը վեր է քաշում և նշանացի դէպի անդը կամ այգին ցոյց տալիս։

— Սուտ ես ասում, հէնց հիմի ես տեսայ, որ գեղումն էր, գնո մի երեխի էլ մեր ձիանոց ոսի տակից փախցրեց, խօսեցաւ եասավօլը, ի զուր ո՛ւր ա Թախ կենում, ղաղախին հրամայած ա, որ ամէն ծակ ու ծուկ մտնի, Թէ խելք ունի՝ Թող դուս գայ, մոլԹելու հօ չե՞ն, սէլեր ենք ուղում, Թէ որ չի ունենում՝ չի տալ։

Դողդողալով, աչքերը արորելով ներսի սենեկիցը, կամ քԹոցի տակից դուրս է գալիս տան գլուխն և հեռուստմը կանգնում։

Եասավօլն աչքով անելովը ղաղախի մարակը մի քանի անգամ խեղճի միջքին պար եկաւ և շլինքը ծռած իր հոգեհանների առաջն ընկած՝ գնաց նա դէպի տանուտէրի տունը։

— Աղայ Մարգա՛ր, քո որդու արևի մատա՛ղ, ասում է մի ուրիշը միւս տեղում, ինձ էս մի հոգևոր անասուածի ձեռիցն ազատ, ինձ տանուտէրի դուռը մի տանիլ էս էլ քո ոսի քրեհը։

Եասավօլը մանեթը գրպանը դրեց և ղաղախին առաւ ուրիշ բակ մտաւ։

Մի ժամից յետոյ գիւղացիք տանուտէրի դուռը լցուած՝ ձայներն երկինքն էին հասցրել։

Ամենքից աւելի լսում էր տանուտէրի դռուին գոչիւնը, որ զանազան անյիշելի օրհնաբանութիւններով գլուղ հիմնարկողն և մինչև էս օր շարունակողների հոգուց խնկարկութիւնն էր անում։

— Թէկուզ ձիձղա՛, Թէկուզ միջիցդ երկու կտոր եղնի՛ր, որ չունինք՝ ի՞նչ պաի տանք, մենք գեղով, էլլիկով կերթանք Ենրևան, նաչալնիկի ոտները կընկնենք, որ մեզ մի վերկութիւն անի, էսքան ղահր ու արբաբ[1] կընի՞, երեխէքն էլ ծախենք՝ տակիցը չենք

1 Ծանրութիւն և նեղութիւն։

կարող դուրս գալ, յուսահատուած՝ յանդգնում էին տանուտէրի դէմը մի քանիսը։

— Ուր կուզէք՝ գնացէք, էս կռուի վախտը ձեր դնչին մտող չի ընիլ, համոզեց վերջապէս տանուտէրը, օղորմի էս մարդի հօրը, 15 մանէթով կակղացրել եմ, տանք իրան, վեր կենայ կորչի գնայ ուրիշ գեղեր, ընչանք մենք մի երկու իշխանով գնանք մովբովի ոտներն ընկնենք, մի բանով խաթրն առնենք, չորս հինդ սէլով անց կացնել տանք, գնանք Զօբանքեարի Թուրքերիցը քրեհ ենք ղրկենք, ընչանք տեսնենք մեր գլուխն ի՞նչ ա գալիս։

Մեր գրագիր հերոսն իւր խոստման համաձայն մովբովին մի միջնորդութեան գիր գրեց, 10 մանէթը ծոցը դրեց ու ճանապարհ ընկաւ, ամենևին չմտածելով, Թէ տանուտէրի քսակի մէջն էլ հինդ մանէթ մնաւ կամ իւր եասավօլը միայն երկուսով բաւականացաւ, Թէ իրանից ծածուկ մի քանիսն էլ տները մտն գալուս էր իւր ծոցը դրել։ Ամենքից զուրկ միամիտ ղաղախների եղան, որ մի երկու գաւաթ գինով և մի երկու ապաստի ծխախոտի փողով մինչև երկինք գոհ եղան։

Ամէն տեղ էլ գրագիր ազէն բարեսրտութեամբ կարեկից գըտնուեցաւ ժողովրդի գժուարութիւններին և ամէն տեղից էլ միւսանց քամակից տանուտէրները մի երկու իշխաններով մովբովի քաղցր ներողամտութեանն արժանացան։

Խօսք չկայ, որ պաշտօնապէս հրամայուած սայլերի քանակութիւնն ամբողջապէս գնաց իւր վերայ դրած պարտականութիւնը կատարելու, իսկ միջտեղը մովբովին իւր հաւատարիմ պաշտօնակալներով այսպիսի յաջող հանգամանքներից չմոռացաւ օգուտ քաղելը. նա ոչ միայն, ինչպէս տեսանք, աւելորդ սայլեր էր բարդում և վերջը իջնում պատշաճաւոր թուին, նա և ոչ մի կոպէկ սայլերի համար դուրս ուած վարձի փողերը իւրեանց տէրերին չցոյց տուեց։

— Լ՛ա, սրանով ի՞նչ ծանրութիւն է գալիս գիւղացւոց վերայ, ասում էր մի անգամ մովբովը միկիտան Սաքօյին, ամէն մի գիւղի վերայ տասը սայլ աւելի հաշուելով՝ գիւղին մի զգալի ջնաս չի հասնիլ, իւրաքանչիւր տան վերայ մի աննշան գումար կը հասնի, իսկ այդ մանր արծաթներդ միասին հաւաքուած՝ կարող են մի քանի մարդի պէտք գալ։

— Եա մանաւանդ՝ որ դու դրանով իշխանութիւնի հրամանն

էլ գնանին չես թողում, դլխիդ ղուրբա՛ն, վերայ բերից Սաքօն, նըլ-
լանց ուզածը քո մհալիցը 150 սէլ էր՝ Թամամ[1] գնաց, նրանց
ի՞նչ, թէ դու ո՛ր գեղից ի՞նչքան սառցար, կամ իրանց տուած
քրհի փողերը դու տէրերին բաժանեցի՞ր՝ թէ ոչ՝ էդ տանու բան
ա, քո տան գործը քեզ ամենքից լաւ ա յայտնի:

— Գիտեմ, Սաքօ՛, թէ դու ընչի՛ես մեր ապածը հաւանում,
էն տանուտէրները, որ մեզ մօտ են գալիս, աւաջ քեզ մօտ են իջ-
նում, դու էլ մէջ տեղը շահում ես:

— Դէ՛, սաղ աշխարհքն լռէնց ա, ադայ Ջա՛ն, մարդս մարդ-
ով ա, մի ձեռը ծափ չի տալ, ամենքս էլ մի կտոր հացի համար
ենք աշխատում, ես էլ քո ապիցը[2] մի կտոր հաց եմ ուտում՝ քեզ
օրհնում:

— Ինձ զարմացնում է, Սաքօ՛, ահաթը, նա միշտ լաց է լինում,
միշտ գանգատում է, որ աղքատ է, ու էլի մի փորը սեխմած ժամա-
նակը փողը գոգերով է թափում. էս ո՞ր տեղից է:

— Սաղ ըլի Աշտարակցի Խէչանենց Խէչանի քիսէն, ամհատ-
նում ծով ա, ուզողին էլ չէ՛ չկայ:

— Լաւ Թիքայ է, ա՛յ դա, Սաքօ՛, ո՞նց անենք, որ էդ մար-
դին մեր ձանգը ձգենք:

— Շատ հեշտ ա, ադայ Ջա՛ն, պետ մի քիչ համբերի, իմ
աչքի վրայ, պատահանեց Սաքօն և նրա վերայ մի փոփոխութիւն
եղաւ ու պռօշները կրծեց:

— Ոչի՛նչ, դու ուշ չի, փնթփնթայ նա իր մէջ:

— Ի՞նչ մոլորուեցիր, նկատեց մովսէսը Սաքոյի շփոթմունքը,
երևում է շատ ժժուալ բան է Խէչանին մեր որոգայթի մէջ ձգելը,
դրա վրայ ես մտածում:

— Համբերութիւնը կեանք ա, դլխիդ մատա՛ղ, երբ որ օրը
կը գայ բարին հեռո՝ ես քեզ կասեմ:

— Բաս էս ցորենների գործը լաւ չափ ու ձև արա՛, յետոյ
արի ինձ ասի՛:

— Յիմար Սաքօ՛, տեսար ի՞նչ եմ ձեռից թողել խելքս ըն-
չանք էս օր ո՛ր տեղ էր, հացը ո՛ր տեղ ա էլել, ես ի՞նչ տեղեր եմ
քաշ գալիս, ես ընչի՞ պտի նոր զարթնեմ, հլա օղորմի մովսովի

1 Ամբողջապէս: 2 Քո չնորհիւ:

հօրը, որ խօսք բաց արեց, թէ չէ էնքան ուրախացաւ հացիցը պտի գըրկ-
ուէի ու իմ մատը տանէի իմ աչքը հանէի: Համա ոչինչ, դեռ ուշ
չէ, դեռ ընչանք յիքանիքը չքաղնէն, Խէչանն իր աղջկանը պսակիլ
չէ, ընչանք էն օրը շատ բան կարելի ա կատարել. մի հէնց հաց
ձանգս քցեմ, որ ոչ հատնի ոչ պակսի: Դեռ ես էս ցորենների գոր-
ծը ձեռից չէթողամ, էս էլ պակաս Թիքայ[1] էլ է, նեղբօսի շան պէս
բերաններիս մսի կտորը վէր չէքցնէք ու շուաքի քամակիցն ընկ-
նենք: Վնաս չունի, ադայ Խէչա՛ն, դու էս մի երկու ամիսն էլ դինջ
նստի, աշունքը աղջկանդ Սմբատին տալու պատրաստութիւնը քաշի,
մենք կը տեսնենք, թէ ո՛վ կաշխատի՝ ո՛վ կուտի: Ոնց որ գիտեմ,
որ երկու ձեռքիս վրայ տասը մատ կայ, ընենց էլ հաստատ հաւա-
տացած եմ, որ Խէչանի աղջկին էս իմ տասը մատներիս մէջ աղու-
նիկի պէս հուպ տուած ա: Թէ տարէն պլխին մի չաղլիկ ադայ էլ
կը բերի, ընդուց յետը ես գիտեմ, թէ մեր գէշ նշանածի գլուխը
ո՞նց եմ աղը դնում ու մի ուրիշ սիրուն, լեսիկ, ազափ աղջիկ առ-
նում: Ջան Սաքօ՛, էլի՛ ապրեցիր, Հարուստ կինայ տէր էլ դառար:

Այս խօսքերը ծամելով մովսովի մօտից դուրս եկած՝ գնաց նա
դէպի իր գիւնետունը:

ԻԸ.

ՅՈՐԵՆ

Վերոյիշեալ անցքի միւս առաւօտը միհիտան Սաքօն մեծ գոր-
ծերի մէջ էր. նա իր գիւնետունը յանձնեց իր սպասաւորին մի
քանի պատուէրներով և ինքը նստեց ձիու վերայ:

Նա հասել էր գեղին Զերքեսի չուխայ ու փէշերը չուխի գըր-
պաններովը հանել: Նա մհալն[2] էր գնում մի պարսիկ եասավուլ
քամակը քցած:

— Մենք մեր բանը լաւ ենք տանում, ինչքան կուզեն՝ նա-
խանձու տրաքին, մտածում էր նա ճանապարհին. շատ անգամ էի
մհալը դուս եկել, բայց հիմիկուան պէս ոչ մինը խէրով[3] չի էլել.
շատ լա՛ւ ա, ես իմ Աստուածը, ես կը գնամ ժողովուրդը կը պատ-

1 Պատառ: 2 Գաւառ: 3 Օգուտով:

բաստեմ, ինքը մովսոցին էգուց կը գայ գործը կսկսի։ Ուրիշ մհալ-ներ թէ որ մեր պէս հեշտ գլուխ բերեն ու մէջն էլ մեր չափ շահ-ուին, թող պարծենան. վերջը յայտնի կըլնի, վերջն ա գովվելի. ա-սում ա՝ խուփը գլորուել ա, կճուճը գտել. ղորթ որ ես ու մեր հի-միկուան մովսոցին իրար շատ լաւ ենք բռնում, էնպէս անում ենք, որ թուրքի ասածի պէս՝ նա չիշ եանան՝ նա քեաբաբ. (ոչ շամփուրն պրուի, ոչ խորովածը) ոչ իրան վնաս բլնի, ոչ ես գլխում, ոչ էլ վերևից եկած հրամաններն երեսի վրայ մնան։

— Ա՛յ Սաքօ, էս ո՞ւր ենք էլնի ոտնաւորուել, հարցրեց ճա-նապարհին եասավուլ Մահմատը։

— Ո՞ր ընչի՞դ ա պէտք, ուր որ կերթամ՝ հետս պրի, վը-նաս չես տեսնիլ։

— Ես գիտեմ, որ քո աչքն իմ վրայ քաղցր է, շողոքորթեց գարսիկն իւր ազգային բուն բնաւորութեամբ։

— Շա՛տ լաւ էլաւ, մտածում էր Սաքօն ինքն իրան, մովսովի հետ լաւ միաք արինք, առաջ Աշտարակից սկսենք, Աշտարակը մը-հալի աչքն ա, թէ որ նրանք ղաբուլ կացան[1], ուրիշ գեղերը ձէն ու ծպտուն չեն կարող հանիլ։

Այս երեկոյ Աշտարակումը տանուտէրի տանը Սաքօյի հետ շատ երկար նստած էին մի քանի պորտաբոյծ, ուրիշների հայեին սովոր դիւղական իշխաններ։ Բաւական միջոց նրանք փսփսում էին Սաքօյի հետ, երևում էր, որ ամենքն էլ նրա գալուցը շատ գոհ էին։ Նրանք միմեանցից չէին թագցնում իւրեանց սրտի զգացմունքը. պարզ կա-րելի էր նկատել, որ Սաքօյի հետ սրանք նոյն յարաբերութեան մէջ չէին, ինչ որ ուրիշ գիւղերի իշխանները, սրանց վարմունքը շատ մտերմական էր։

— Ի՞նչպէս է մեր սկսուածքը, հարցրեց մովսովը միս օրը Սաքօյին առանձին, երբ ինքը մի քանի ձիաւորներով իջաւ տանու-տէրի տանն և գտաւ Աշտարակու բոլոր իշխաններին իրան սպասե-լուս։

— Ոնց որ քո սիրտը կուզի, գլխիդ մատա՛ղ։

— Քանի՞ խալվար[2] են համաձայնում տալը։

— Երեսուն խալվար, ինչքան դու ինքդ հրամանք արիր։ Աշ-

1 Համաձայնեցան։ 2 Երևանի խալվարը 30 փութ է, կամ 100 լի-տրը՝ ամեն մի վիտրը 12 ֆունտ հաշուելով։

տարակիցը սրանից աւելի էլ հարկաւոր չէ, աղայ ջա՛ն, սրանք վար ու-ցանքի աէր չեն, սրանցը գինին ու արաղն ա, որ քո բաժինը լինաւուռը հանում են. սրանց վրայ էդ 30 խալվարն էլ նրա համար քցեցինք, որ մհալն իմանայ, թէ Աշտարակը տուել ա, իրանք էլ ոտի չը-կանենեն։

— Ֆո ասելովդ ուրեմն սրանցից մենք ոչինչ ակնկալութիւն չպէտք է ունենանք։

— Անպատճա՛ռ. Աշտարակցիք էն մարդիկը չեն, որ իրանց պարտականութիւնը չճանաչեն, ինց որ դու հրամայել էիր, ես 100 խալվարիցը սկսեցի, 30-ի վրայ կանգնեցի։

— Յետոյ ի՞նչքան է մեր հաշոյթը։

— Դու գիտես, գլխիդ մեռնի՛մ, որ Աշտարակցիք աղայ մար-դիկ են, իրանց հանձնելիք ցորենի գնիցը մի կապիկ չէին ուզում վերցնել, համա ես ասեցի՝ չէ՛, աղէն ձեզ լաւ ա ճանաչում, էդ-քան էլ ձեզ չի զլկիլ, տասը խալվարի գնումն իմ խաթեր եօլայ կը տանի. մնացածն էլ ձեր քրեհի[1] մէջը գործ դրէք։

— Ուրեմն 450 մանէթից 150-ը մեզ ա հասնում։

— Հրամեցի՛ք, 50-ն էլ միջի մարդկանցը՝ մնացածն էլ քրեհի վրայ կը դնեն։

Մի ժամից յետոյ Աշտարակու ամբողջ հասարակութիւնը տա-նուտէրի դռանը հաւաքուած՝ սպասում էր մովսովի դուրս գալուն։ Մովսովի պատուիրանքին համաձայն ոչ ոչ չի պակասել։

Մի վայրկենի մէջ բոլոր գլխարկները վեր կացան և լռու-թիւնը տիրեց։

Մովսովը տանուտէրի պատշգամբից հետևեալ ազդու ատենա-բանութիւնն սկսաւ։

Սիրելի Աշտարակեցի՛ք։

«Ըքա՛ն ուրախ եմ, որ ես այսօր իմ գաւառի մէջ ունիմ մի այսպիսի ժողովուրդ, ինչպէս որ դուք էք, որ իմ ասածներս կարող էք մի առ մի հասկանալ. հասկացող որդին հօր աջու աչքն է. մով-սովը որ կայ՝ իւր գաւառի հայրն է, ուրեմն դուք էլ իմ երկու աչ-քերիս լոյսն էք։

Այսօր ես ամեն տեղ, ամեն մովսովների մօտ պարծենում եմ և տեղն ընկած ժամանակն էլ ամենքի վերևն եմ նստում, որովհետև

1 Բեռակրի վարձ։

ձեր մովրովին եմ։ Առաջին անգամն երբ էս գաւառն ինձ տուին, ես շատ տխրութեամբ յանձն առայ, բայց զարմացայ՝ երբ տեսայ, որ բոլոր գաւառների մովրովիները նախանձեցին իմ փառքի վերայ. վերջն իմացայ, որ արդարև նախանձելու տեղիք են ունեցել. ես իմ գաւառիս մէջ Աշտարակ եմ ունեցել, որ հարկը պահանջած միջոցն իմ երեսը պէտք է պարզեցնի։

Մինչև այսօր ես առիթ չեմ ունեցել մի այսպիսի գործի հասնել ձեզ դիմել և ահա այսօր եկել է ժամանակը, որ դուք իմ մեծաւորների, իմ նահանգիկների մօտ ինձ սևերես չթողաք։ Դուք գիտէք, որ հիմի ի՛նչպիսի օրեր են, մեր երկիրն արիւնը տանում է. Օսմանցին ուզում է, որ մեզ իւր ձեռքի տակն առնի, մեզ բոլորիս թուրքացնի, մեր հոգին գժոխքի բաժին անի. բայց մեր քաջ գինուորները Ղարսի մօտ կուրծքները դէմ են տուել, Օսմանցու քիթ ու պռունդն են փշրում. նրանք պատրաստ են իրանց արիւնը թափել ու անհաւատներին մեր աշխարհքը ոտք չդնել տալ։

Դուք տեսնում էք, որ ձեր ապահովութեան համար շատ մեծ մեծ իշխաններ ու զօրապետներ իւրեանց տուն ու տեղը, իւրեանց երեխէքանցն Աստուծոյ յուսով թողել, եկել ձեզ համար թուր են քաշում։ Հիմի իմացէք, սիրելի՛ք, որ ձեզ համար իւրեանց գլուխը չխնայողներն այսօր քաղցած են. նրանց համար պատրաստած հացը բաւական չեղաւ. նրանք իրանց տեղը շատ անթիւ ու անհամար հայ ունին, բայց ձանապարհի հեռաւորութեան պատճառաւ դժուար է բերելը։ Եւ մանաւանդ ի՞նչ կարիք կար բերելու. մենք միթէ պարտական չենք մեր կեանքը նրանց համար մատաղ տալու, միթէ մի կտոր հաց պէտք է նրանցից խնայենք։ Ի հարկէ կասէք ո՛չ, այնպէս չէ՞»։

— Ի հարկէ, գլխիդ մատա՛ղ, չպտի խնայենք, ձայն տուեց միաբերան հասարակութիւնը։

— Երբ որ խորհուրդ եղաւ, շարունակեց առենախօսը, թէ ո՞ր գաւառներիցը հայ խնդրեն, ո՛րը թողան, ո՛րն է շատ ոտքի տակի, ամէնքը միաձայն վճռեցին, որ Շօրագեալը և Սարդարաբադու գաւառները շատ նեղութեանց մէջ են, պատերազմը շատ մօտ է, շատ էլ կողոպտուում են, պէտք է այլ գաւառներից ոչինչ չպահանջել։ Ես տեղիցս կանգնեցի և ասացի. — ո՛չ, ես իմ ժողովրդին շատ լաւ եմ ճանաչում, նրանք իւրեանց փրկիչ գինուորների համար ուրախութեամբ երեխաների բերանից հացը կառնեն և կը տան. ես իմ գաւառի պատասխանատուն եմ, ես գիտեմ, որ նրանք ինձ խիստ

կը մեղադրեն, եթէ իմանան, որ այս բարի գործին ես իրանց մասնակից չեմ արել։ Ասացէք ինձ, լաւ եմ արե՞լ, թէ վատ։

— Շատ լա՛ւ, շատ լա՛ւ ես արել գլխիդ մատա՛ղ։

— Այս խօսքերն ասելուս դուք էիք իմ աչքիս առաջին, իմ յոյսս Աշտարակ գիւղն էր, որ ինքն առաջինն օրինակ կը դառնայ էս բարի գործքին և ինչպէս տեսնում էք, առաջին անգամը ձեզ մօտ եմ եկել, գեռ իմ գաւառի մէջ այս բանը ոչ ոք չի իմանում։

Ես շատ լաւ գիտեմ, որ դուք վարուցանքս չունիք, հողագործութիւն չէք անում, ձերը գինին ու արաղն է, ձեր տարեկան հացն էլ փողով էք առնում, բայց վստահ եմ, որ դուք ոչինչ չէք ասիլ ու կը տաք։

Հետ չեմ խնդրում ձեղանից, թէ որ համեմատաբար առնելու լինինք՝ Աշտարակ գիւղի մեծութեան համաձայն՝ մի քանի հարիւր խալվարներ պէտք է պահանջէինք, բայց ոչ չունեցած տեղիցը շատ վերցնելը մեղք է, ձեղանից այնքան ուզում եմ, որ ամէն տան վերայ տասը լիտր հաղիւ հասնի, ընդ ամէնն 30 խալվար է Աշտարակի վճարելիքը. կարծեմ շատ չնչին բան է, այնպէս չէ՞։

— Հրամեցէ՛ք, գլխիդ մատա՛ղ։

— Պարելի է, շատերը կը կարծեն, թէ այս ցորենը ձրի են պահանջում ձեղանից. — այդպէս չէ։ Այն ձեր համար գլուխները յետ դրած իշխանները ձեզ շատ են սիրում, նրանք չեն ցանկանալ, որ ամէն բանով դուք միասուիք, նրանց մէջ մի մարդասէր փոքրաթիւ[1] կայ, որ ձեռքը ջերն է տանում ու իր քսակիցն ամէն մի խալվարի համար 15 մանէթ ձեզ պարգև տալիս, որ գոնէ քրեհի փողը դուրս գայ. որովհետև նրանք լաւ գիտեն, որ հիմի ցորենի խալվարն աժի 65 մանէթ և Էտեղից մինչև Ախալցխայ էլ ուր որ պէտք է ձեր ամասուններին բարձէք ու տանիք, քրեհն էլ կաժի 20 — 25 մանէթ։

Այհա, սիրելի՛ք, էսպէս բարի մարդիկ կան ձեր հոգսը քաշողներ. դուք էլ ձեր կողմից նրանց պատիւը պահեցէ՛ք ու առանց ուշացնելու, որտեղից դիտէք՝ ձարեցէ՛ք 30 խալվար ցորեն, բարձեցէ՛ք ձեր ձիանցը, կամ սայլեր վարձեցէ՛ք, ուղարկեցէ՛ք Ախալցխայ, հնոտեղ ամբարումը[2] պահ տուէ՛ք, ապահովագիրը բերէ՛ք ինձ հացըբէ՛ք։

---

1 Կապալառու։ 2 Շտեմարան։

Մովրովլի գնալուց մի երկու ժամ յետոյ, երկու ղազախ և մի հասավուլ փողոցներն ու անկիւնները ընկած՝ անխնայ ծեծելով՝ ամէնքին քշում էին դէպի Կարմրաւոր եկեղեցւոյ պատի տակը, ուր տանուտէրն իւր համախոհներով սպասում էր թաւջի անելու և ամէն տան վրայ ըստ կարողութեան ցորեն բարդելու։

Երկին աղքատների պղնձները մէջ տեղ եկան, թէպէտ մէս կողմից պէտք է խոստովանել, որ Աշտարակումն իսկական աղքատներ շատ սակաւ կային, մանաւանդ այդ տարին։ Ով մի հատ բեռի ձի ունէր, նրանով իւր տունը կառավարում էր, իսկ հարուստները գինի արաղ ծախելով՝ լաւ կարողութիւն էին շինել։

Այդ էր պատճառը, որ Խէչանենց Խէչոն այս տարի աւելի օտար գիւղացիներին էր պէտք գալիս, քան թէ Աշտարակեցւոց։

Միխիտան Սաքօն՝ երեկուան իւր խորհրդակիցների և տանուտէրի հետ միացած 300 մանէթը հաւատար բաժին անելուց յետոյ՝ իրան հասնելիքն ստացաւ և մովրովլին Աշտարակ թողած՝ իւր հասավուլի հետ գնաց առաջնակարգ պարսկական «Պատի» կոչեցեալ գիւղն՝ իւր քարոզչութեան պաշտօնը կատարելու։

Մովրովլն Աշտարակումն իւր գործը վերջացրեց և իւր գնացքն ուղղեց նոյնպէս դէպի Պատի գիւղն, ուր էր միխիտան Սաքօն։

— Տղէք, լաւնց չէր, որ մովրովը քարոզից, ասայ մեր ծանօթ Յաքուշը մի երկարն. ես երեկ Դիւմրի էի՝ իմացայ։ Ռահաթին փոդրաթչու խաթեր են նեղացնում։ Կոխը չսկսած՝ նա փոդրաթին էժան վեր ա կալել, հիմի հայը թանգացել ա, չի կարողանում հասցնիլ պտի տուն ու տեղը ծախի ու տայ։ Դոգերով փող ա վեր ածել, որ տեղ հարկն էր ու խեղճ խալխի շինքին էս բեռը դրել թէ չէ տէրութիւնն իր ռահաթին ըսկնց նեղութիւն կը տաք։ Յոթնի խալվարը 65 մանէթ ըլի, 25 էլ քրեհը, մհալին կը խեղդի՞ թէ 15 մանէթով քո ձիուն բարձի, 6 — 7 օրէն ճամփայ տար, կամ թէ չէ էն փոդրաթչու աչքերն ուռել էին մեզ համար, որ իր քիսիյը խալվարին 15 մանէթ ողորմութիւն անէր։

— Գլխներդ քարն, Յաքո՛ւշ, սուս կաց, քո հօրն օղորմի, ամէն բանում քանդուել ենք, էս էլ նրանցից մինն ըլի, Աստուած իրանց պատիժը տայ, պատասխանեցին լսողներն ու հեռացան։

ԻԲ.

ՅՈՐԵՆԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ, ԿԱՄ ՄԱՇԱԴԻ[1] ՌԱՄԱԶԱՆԸ

Աբագած լեռան արևելահարաւային թմբի վերայ է գտնուում Պատի գիւղը՝ Աշտարակից մի ժամաչափ հեռաւորութեամբ։

Այս գիւղն իւր անուան համեմատ և նշանակութիւն ունի։ 17 տուն մերկ ու քաղցած Սէվդլօս կոչեցեալ պարսիկներ են սորա բնակիչները։

Պատի գիւղն իւր սակաւ հողովը շատ ցած գտնուելով ջրից, հազիւ տարեկան հաց է բաշխում իւր ծոյլ և անգործ բնակիչներին։ Մէկ, կամ ամենաշատն երկու նիհար եզն է բաղդի այս խորթ որդուց հարստութիւնը, իսկ կերածները՝ գարեխառն կամ կորկախառն ձաթ։ Մի մխիթարութիւն ունին Պատի գիւղի բնակիչները. նոքա շատ առատութեամբ միրգ են վայելում։

Աբագածի լեռնագաշտի ստորոտի վերայ են երևելի այգեշատ Աշտարակ, Յօշական, Փարբի և այլն գիւղերը։ Շնորհիւ այդ այգիների Պատի գիւղացիք շատ յաջողաձեռնութեամբ լցնում են ամէն գիշեր իւրեանց տներն ամենատեսակ անուշահամ պտուղներով առանց մի կոպէկ վճարելու։ Նրանց հոգը չէ, եթէ երբեմն կը բռնըուին ու կը բանտարկուին. գիտեն՝ որ էլի կազատուին և իւրեանց գործը կը շարունակեն։

Երիշ աշխատանքի կերպ, ուրիշ տեսակ կենաց եղանակ անծանօթ է մեր այս քաղցրալեզու հարևաններին։

Ես այնչափ չեմ էլ մեղադրում նոցա, ի՞նչ անեն խեղճերը, ինչո՞վ կառավարուին, կթան չունին՝ որ կաթ ու մածնով լհանան, աւելորդ հաց չունին՝ որ ծախեն և իւրեանց անհրաժեշտ պիտոյքների վերայ գործ դնեն. մշակական աշխատանքի սովոր չեն, որ նրանով իւրեանց ապրուստը հոգան. գարերով արմատակալած սովորութիւնն իրանց թոյլ չի տալիս այդ անելու. նրանք ի նախնեաց աւանդաբար ընտելացել են հարստահարութեամբ իւրեանց դրացի Հայերի ճակատի դառն քրտինքը վայելելու, իսկ հիմա՝ երբ պարսկական բռնակալութեան շրջանն անցել է, էլ չեն կարողանում հաշտուիլ արդար վաստակով հաց աշխատելու կերպի հետ։

---

1 Մաշադ ուխտ գնացած պարսիկ։

Նոցա ամենասիրելի պարապմունքը դողըթիւնն և բազէները ձեռքներին թռչնորսութեամբ ձորերումն ու լեռներումը քարշ գալն է։

Շատ տեղերում բոլոր ոտնաւոր անասունների տեղը բռնում են քանի մի նիհար հաւեր, որոնք նոյնպէս իւրեանց տէրերին կերակուր չեն լինում։ Երբ դողըթիւնը չի յաջողում, խեղճ Սէվդլուն սրտանց մի ա՜խ է քաշում ու միւս առաւօտը մի հաւի ոտներ կապում, կախում իւր քթոցիցը ու շալակած գալիս իւր ծանօթ այգետէր Աշտարակեցու կամ Փարբեցու տունն և մատուցանում նրան իւր ընծան. այն ժամանակ նա հաստատ գիտէ, որ իւր ետհագին քթոցը գլխէ գլուխ կը լցուի խնձորով, խաղողով, դեղձով և այլն։

Մեր գովաբանած Պստի գիւղումը շատ անգամ հաւեր էլ չես գտնիլ, աւելորդ հայցահատիկներ չեն ճնում, որ հաւերին տան. ցորենի տականքը քան թէ հաւի կուտ անեն, իւրեանց երեխաներին լաւ կուտ կը դառնայ։

Մի քանի օրուայ մէջ Պստի գիւղացիք իւրեանց տարեկան աշխատանաց բերքը՝ ցորենը կասում լցնում են իւրեանց դռներին, կամ գիւղի ափներում փորած հորերի մէջ, երեսը հողով ծածկում և իւրեանց սիրելի արհեստի հետ ընկնում։

Առ հասարակ շատ գիւղերում այսպէս է. ցորենի ամբար նոքա չունին, ցորենը պահում են գետնում բաց օդի մէջ։ Նոքա փորում են փափուկ գետինն երկու գազաչափ խորութեամբ, հորի տակին և կողքերին գարման են փռում, ցորենը մէջը լցնում և հողով ծածկում։ Այդ գետնի մէջ տարիներով մնում է ցորենը, ոչ փթում և ոչ ծլում է *։

Մի բան միայն խիստ զարմանալի է. օրինակ չի եղել, որ այդ բաց երկնքի տակ անխնամ թողած ցորենը գողանան։

Մի վատ յատկութիւն միայն ունին այս Սէվդլուները. իրա-

---

* Գետնի տակին գարմանով պատած հորի մէջ ցորենը ապրում է մինչև երեսուն տարի և իւր յատկութիւնը կամ արժանաւորութիւնը չի կորցնում։

Մի այդպիսի փաստ սրանից տասը տարի յառաջ պատահեցաւ Ծաղկոց ձորի գիւղերից մէկի մէջ. լաւ չեմ յիշում Մաքրավանք, թէ Դմանչէն գիւղումն էր։

Այդ տեղի բնակիչները գաղթականներ են։ 40 տարի յառաջ, նոր գաղթած տարիներից մէկում, մի մարդ մեռնելուս կտակում է իւր որդ-

րու դէմ գաւաճանութիւն, հարևան հարևանին մատնել, սովորական է նոցա մէջ։ Լինում են և այնպիսիները, որոնք իւրեանց գիւղի գաղտնիքն ամենաչնչին ակնկալութեամբ յայտնում են։

Ամէն գիւղում միևնոյն Սաքօն ունէր իւր լուտեսները, ուրեմն Պստի գիւղումն էլ անպատճառ կունենար։

Սաքօն դեռ նոր էր իջել քեօխվէ դռանը, որ Պստի գիւղացի մաշադի Ռամազանը ոտներն ու կռաջները մինչև ծնկները բաց՝ եկաւ Սաքօյի առաջին կանգնեց և մինչև գետինը խոր գլուխ իջեցրեց։

— Բարո՛վ, մաշադի։

— Բարո՛վ, աղայ Սաքօ՛, մեր գլխի՛, մեր աչքի՛ վրայ։

— Ի՞նչպէս է առողջութիւնդ, երեխայքդ, ընտանիքդ։

— Է՛հ, աղայ Սաքօ՛, շատ թանգութիւն է, կորեկի ձաթ էլ չենք գտնում, որ երեխայից բերանը քցենք։

— Ուրեմն գիւղումը ծախու ցորեն չի գտնուի՞լ։

— Հանաք ես անո՞ւմ, աղայ Սաքօ՛, հաւիկ էլ չես գտնիլ։

— Հապա ի՞նչպէս անենք, մովրովի մօտ ես քեզ գովեցով չափն անց եմ կացրել, հէնց հիմի ինքն էլ կը գայ. զօրքի համար ցորեն է հարկաւոր, ամէն գիւղի վերայ իւրեանց կառողութեան համեմատ ձգած է. ձեր գիւղինն էլ չորս խալվար են ուզում, ո՞ր տեղից պէտք է ձարէք։

Ռամազանը մտածութեան մէջ ընկաւ։

— Թէ որ տեղը գիտես՝ ասա՛, հիմի է քո պէտք գալու օրը, մովրովի աչքի լոյսը կը դառնաս։

— Չորս խալվար չէ՝ բայց երկու կը ձարուի. կէս խալվար Մահմատ-Վալու հորումը, 25 լիտր Քեալբալայ Նաղու, կէս խալվար Լալ-Ղուրբանի, մնացածն էլ՝ հինգ տասը լորով կը հաւաքուի։

ւոց, որ մի հոր ցորեն կայ թաղած։ Մահը վերայ է հասնում և մեռնողի լեզուին կապ է դնում հորի տեղը յայտնելու։

Ժառանգներն երկու երեք տարի՝ իզուր որոնում են գետնի մէջ, ցորենը չեն գտնում։

Տասը տարի սրանից յառաջ այդ ընտանիքը նոր տան հիմք փորելուս գտնում են մի հոր լիքը ցորեն բոլորովին անարատ և մաքուր և շատ զարմանում են։

Ծերունիներից մինը յիշում է երեսուն տարի յառաջ մեռնող մարդու խօսքերը. այդպիսով ապացուցուում է, որ 30 տարի յառաջ կորած հորն է այս։

— Եղնիը ինչքան կան։

— 12 հատ կան, բայց երեք չորսը միայն գիւղումն են, մնացողը Երևանից քրեհ են տարել Գիւմրի։

— Այդ ցորնատէրերից ո՞րն իր կամքովը կը ծախի։

— Ոչ մինը. իրանց երեխայից ապրուստն է, թէ որ այն էլ ծախեն, բերանները քամուն պէտք է բռնեն. բայց թէ որ մովըով աղէն կամենում է, նրանց ո՞վ է մոիկ տալիս։

— Ի՞նչ տեղ է պահած։

— Գիւղի ափերումը՝ հորերի մէջ. եթէ կուզես՝ քանի ոչ ոք չկայ, գնանք ես քեզ ցոյց տամ։

— Չէ, երբ որ իւրեանց յօժար կամքովը չեն տալ, ես մովըովին առաջուց կը սովորցնեմ, որ հրամայի հորերը ցոյց տալ. եթէ չանեն, մովըովը աչքը քեզ վերայ կը լինի, դու իրը թէ առաջուց քեզնուքեզը հեռանում ես՝ մովըովն էլ քո քամակիցը ժողովրդի հետ կը գայ, որ տեղ դու կը կանգնես, գլուխդ կը քերես, եասավուլները կը փորեն։

Սաքօն Ռամազանին մի մանէթ ընծայեց։

— Քեօխվայ[1], ասաց Սաքօն տանուտէրին, քո ժողովրդին կանչէ, խրատի, որ առանց հակառակութեան չորս խալվար ցորեն պատրաստեն զօրքի համար. պէտք է ձեր եզներովը տանէք Ախալցխայ յանձնէք։ Ես եկել եմ, որ առաջուց իմաց տամ ձեզ, հիմի մովըովը կը գայ ու երկար չի մնալ այստեղ։

— Գնէիդ մատա՛ղ, Սաքօ աղա՛յ, չորս լիտր ցորեն չկայ մեր գիւղումը, ոչ թէ չորս խալվար։

— Խելք ունեա՛ մի՛ չքիլ, թէ չէ բերդումը կը փթիք. մի՛ վախէք, ձրի չեն ուզում, խալվարին 15 մանէթ ողորմութիւն է դուրս եկել, որ հասարակութիւնը շատ չնեղանայ։

Մի փոքր դիմադրելուց յետոյ տանուտէրը խոստացաւ Սաքօյի համար քանի հատ ուղարկել, միայն թէ մովըովի բարկութիւնից իւրեան ազատի, ինքն էլ իւր ժողովրդի հետ միասին սպասեց մովըովի գալստեանը։

Մովըովի քարոզն այստեղ այնքան երկար չեղաւ. մի խիստ հրաման էր, որ արձակեց նա ու ոտքերը գետին զարկեց, մանաւանդ երբ Սաքօյից իմացաւ, որ սրանց ոչինչ բանով չի կարելի կոտրել։

1 Տանուտէր։

— Պարկացրէք առաջաւոր իշխաններին, հրամայեց մովըովն և մի փառաւոր ռօզգի[1] ծեծեց մի քանիսին։

— Ես գիւղը կրակ կը տամ, հատերի կուտն էլ կը կտրեմ, ցոյց տուէք ինձ ձեր հորերը, դոչումէր մովըովը։

— Ըղայ ջա՛ն, ոտքերիդ մատա՛ղ, մենք հորեր չունինք, բոլոր հորերն էս տարի դատարկ են, եթէ չես հաւատում՝ համեցէք աչքովդ տե՛ս։

Մովըովն աչքը դէպի Ռամազանը դարձրած՝ գնում էր տանուտէրի առաջնորդութեամբ։

Մի քանի հորեր արդարև դատարկ էին։

— Նասավո՛ւլ, հրամայեց վերջապէս մովըովը, փորեցէ՛ք էս մարդի կանգնած տեղը։ Նա իւր ձեռքովը յետ խփեց Ռամազանին և մի ապտակ էլ տուեց։

— Ի՞նչ ես առաջիս ցցուել կանգնել, շո՛ւն դու, բարկացաւ մովըովն Ռամազանի վերայ, որը գլուխը քերելով՝ մի կողմը քաշուեց։

Եասավուլներն առաջուց պատրաստած բահերով սկսեցին փափուկ գետինը փորել։

Եզան նման բառաչելով՝ ռօզգի ծեծուածներից մինը՝ Լալ—Ղուրբանը յառաջ վազեց և ընկաւ փորած տեղի վերայ։

— Առաջ ինձ բահով սպանեցէ՛ք, յետոյ երեխէքանցս բերանի ապրուստը կտրեցէ՛ք, գոռում էր Լալ-Ղուրբանը։

Վարշ տուէ՛ք, յետ ձգեցէ՛ք, բարկացած հրամայում էր մովըովն և եասավուլ ու զազաս խեղճին երեսի վերայ թրևում, հեռացնում էին հորի բերանից։ Բայց ողորմելի մարդը կրկին դուրս էր ընկնում նոցա ձեռքիցը և պարկում հորի վերայ։

Այս միջոցին հեռուումը կանգնած մանր երեխաների միջից երկուսն անվարտիկ, ոտաբոբիկ, մէջքների վերայ մի մին գրչահին ձգած՝ 10, 12 տարեկան հասակում՝ յառաջ վազեցին ճչալով և բազմութեան մէջը պատռելով՝ տարածուեցին հորի վերայ՝ իւրեանց հօր հետ մրսին։

— Սառկացրէ՛ք այդ շան լակոտներին, ծղրտաց մովըովն ու չկարողանալով համբերել՝ ինքը մօտեցաւ և փոքրիկ մանուկներին մի մի աքացի տուեց, իւր ձեռքովը քաշեց, յետ ձգեց։

1 Ռօզգի այն պատիժն է, որ մարդուն երեսի վերայ տարածում են գետնին, յետոյը բաց անում և բարակ մահակներով ծեծում։

— Ուզի՛, հրամայեց նա և խեղճ Ղուրբանին այնքան ծեծեցին, որ շարժուելու կարողութիւնից զրկուեցաւ։

— Բաւակա՛ն է, հրամայեց գէթասիրա մովսովը։ Անչնչացած մարդին եասավուլները մի կողմը ձգեցին, հողը բաց արին և անարգել ջուաները լցրին։

— Չերի՛ք է, գէթաց մովսովն և զարմանի մէջ մնացած հորի տակին եղած 10 լորաչափ ցորենը թողին Ալի-Ղուրբանի երեխայից տարեկան մնուկդ։

Մովսովը վեհանձնաբար հանեց գրպանից եօթը մանէթ փող, կէս խալվարի համար և տուեց տանուտէրին՝ Ղուրբանի ցորնի գինը։

Դրանից յետոյ բոլոր ցորենով լեցը հորերի վերայ մաշադի Ռամազանի գլուխը քոր եկաւ և ցորենը հորերի միջից ջուաների մէջ փոխադրուեցաւ։

Ի հարկէ այժմ էլ դիմադրութիւններ չեղան, Ալի—Ղուրբանի գասը հերիք էր միւսներին խելքի բերելու։ Ցորնատէրերը բաւականացան հեռուումը գլխիկոր կանգնելով. մի երկու ծերունի մոլեռանդներն էլ յիշելով իւրեանց կորցրած երջանիկ օրերը, չկարողացան աչքով տեսնել, քաշուեցին իւրեանց տներն, երեսների վերայ վայր ընկան և գլխներին ծեծեցին։

— Աղայ, գլխովդ պտոյտ գնամ, գոնէ ալաֆի՛ր մեր գիւղը տեղ հասցնելու ծանրութիւնից, խնդրեց տանուտէրը։

— Ես երեսպաշտութիւն չեմ սիրում, ինձ համար բոլոր գաւառը հաւասար է, պէտք է տանիք և ապահովագիր բերէք. եթէ բեռնակիր անասուններ չունիք, ինքներդ շալակով տարէ՛ք. սպրտաոը ձեր համար արիւն է թափում, դուք էլ նրա համար մի փոքր չարչարանք կրեցէ՛ք, վճռեց մովսովն և ոտքը դրեց ձիու ասպանդակին։

— Շնորհակալ եմ, ասաց նա ցած ձայնով ասպանդակը բռնող թուրքին, քո արած ծառայութիւնը չեմ մոռանալ քեզ աչքիս տակին կունենամ, Սաքօն քո հաւատարմութիւնդ լինձ պատմեց։

— Աստուած կեանք տա՛յ, ապայ ջա՛ն, ամէն ժամանակ պատրաստ եմ քո զուլլուղին գանուելու [1], պատասխանեց մաշադի Ռամազանն և մինչև գեաւրնը խոր գլուխ տուեց։

— Ապրի՛ Սաքօն, մնածում էր ճանապարհին մովսովը. թէ որ նրա խելացի անօրէնութիւնները չը լինէին, ես չէի հաւատալ թէ

1 Ջեզ ծառայելու։

այս թանգութեան տարին հնարաւոր լինէր Պստի գիւղի պէս աղքատ տեղից ցորեն ստանալ։

— Իմ բանը մովսովեցին յաջողակ է գնում, Պստի գիւղացին էլի՛ իմ բաժինը դուրս եկաւ, 20 հատն էլ լաւ բան էր. բայց մովսովը ոչինչ չկարողացաւ դուրս տանել, մնածում էր Սաքօն մովսովից յառաջ Պստի գիւղից ձի նստած՝ դէպի Կարբի գիւղը գնալու ժամանակը, ուր պէտք է նախապատրաստէր մովսովի գալուստն և ցորենի վճարքը։

Ամի գիւղում Սաքօն ամբողջ չմնաց, ում բան հասաւ, կամ ոչ՝ նա իրն ստացաւ. առանց ոտքի քրեհի ոչ մի տեղից դուրս չգնաց։

Սաքօյի գործ դրած խելացի հնարքի շնորհիւ այս տարի շատ ընտանիք երեխայից ձեռքերը բռնած՝ ողորմութիւն սկսան հաւաքել։

Հետևանքն այն եղաւ, որ մեր հարևան Պարսիկները գլգռուեցան և իւրեանց վրէժը յայտնապէս մովսովից ու Սաքօյից չկարողանալով հանել՝ ձեռք առան ասպատակութիւն. գիշերները յարձակուում էին հայ գիւղերի վերայ, ցորեկները ճանապարհներին ու դաշտերում Հայերին ոչխարի նման մորթում էին։

ԻԳ.

ՊՍՏԻԿ Ա ՈՒ ՃՍՏԻԿ Ա

Մենք չենք մոռացել այն խօսակցութիւնը, որ դիպուածով յառաջ եկաւ մովսովի և Սաքօյի մէջ։ Ընթերցողը լաւ յիշում է, թէ ի՞նչպէս կապուեցաւ Խէչանենց Խէչանի անունը գաւառից պահանջած սայլերի հետ և ի՞նչ առաջարկեց մովսովը Սաքօյին։

— Լաւ Թիքայ [1] է Խէչանը։

Ահա այն երկու բառերը, որ Սաքօյին շփոթեցին։ Մինչև էս օր ի՞նչպէս նրա մտքումն այդ բանը չէր ծագել։ Ահա՛ ի՞նչ էր նրա պաօշները կոծելը, ի՞նչ էր նրա շփոթմունքը։

— Ո՛չինչ, գեռ երկու ամիս էլ ժամանակ կայ, գեռ ուշ չէ, յուսադրեց Սաքօն ինքն իրեն։

1 Պատառ։

Եւ արդարև, ներկայ ցուրտերուն գործը յետաձգել չէր կարելի, միջից դուրս գալու արդիւնքն ակնյայտնի էր: Սաքոյի բազդիցը բուն մովսովը[1] պատերազմի դաշտն էր գնացել, իսկ նրա տեղը նշանակած էր իւր օգնականը: Այս մարդն այնպէս գործերին լաւ ծանօթ չէր, հարստանալու էլ մեծ ցանկութիւն ունէր, ուստի և Սաքօն իրեն համար լաւ մեքենայ էր: Նախկին մովսովի ժամանակը Սաքոյի ասողը փոքր մնայ պիտի խաւարէր. նա ոչ կաշառակեր էր և ոչ ժողովրդի բնութեանն անծանօթ: Սաքոյի բազդիցն և ժողովրդի տարաբաղդութիւնից էր, որ նա գնայ: Ձմռարիան ասած՝ աւելի շուտով ղրկեցին նրան, քան թէ ինքը գնայ: Նաչալնիկն երբ որ յայտնեց այդ ժողովրդասէր և անշահամոլ մովսովին ցորեն հաւաքելու գործը, նա բացէ ի բաց ցոյց տուեց, որ դաւառի այս նեղութեան ժամանակը մեծ ոճրագործութիւն կը լինի նոր հարկ բարդել ժողովրդի վերայ, և թէ ինքը հրաժարուում է այդպիսի մի պատանքը կատարելուց: Նաչալնիկն ի հարկէ ոչինչ չասեց, միայն աչքերն ոլորեց և այդքանը բաւական էր մեր արդարասէր մովսովին հասկանալու համար, թէ այսուհետև անհնար էր իրան գաւառ կառավարելը. լաւ համարեց գլուխ առնել ու քաշուել պատերազմը:

Վերջապէս այժմ միջոցը Սաքոյինն էր և դեպքը ձեռքից թողնել յիմարութիւն կը լինէր:

Սաքօն մանեկաւ ամբողջ գաւառը: Նրա սրի երկու կողմն էլ կորում էր, ցորենները նրան լաւ վեր քաշեցին, ոչ միայն Սարգսրաբադու գաւառումը՝ ամբողջ Երևանայ նահանգումը նրան չճանաչողներն էլ անունը տալիս էին՝ որը զարմացմամբ, որը շնորհակալութիւնով և որը հայհոյանքով ու անէծքով:

Սաքօն իւր այս ձանձրացուցիչ գործունէութեան մէջ միշտ արծարծում էր իւր մտքումը Խէչանենց Խէչոյի փեսայութեան խնդիրն և միշտ ինքն իրան մեղադրում էր:

— Ա՜խ, ինչպէս ուշ գլխի ընկայ, յիմար Սաքօ, Խէչանենց Խէչոյին ես նո՞ր էի ճանաչում, նրա կարողութիւնի չափը ես նո՞ր գիտէի. ընչի՞ պիտի էս տեղը հասցնէի, որ հիմի դժուարութիւն քաշեմ ու մոլորուիմ: Ծվիկենց Աղաջանի տղէն էգուց էլօր դատած մալի տէր պիտի դառնայ, իսկ ես տանից տեղից զրկուած՝ սրա նրա աչք ու ունքին մտիկ տալով, տնքանդութիւնով, գող ու աւազակների ընկեր դառնալով

---

2 Պետրոս Մատաթեանցը:

խալխի մեղքը պտի վեր կանեմ, թէ ի՞նչ ա՝ մի կտոր հաց պտի աշխատեմ, էն էլ կէսն արիւն: Ծօ՛, հաղիր պատրաստ հացը մեր դռանը՝ եփած կերակուրն առաջիս՝ էլ ընչի՞ եմ քացի տուել դէն քցել. էս խելք չի՝ տիրոջը պատիժ ա՞:

Երկու բան միայն երբեմն կասկածի տակ էին ձգում Սաքոյին: Աշխարհակուռն եղած ժամանակը նա լսել էր, որ Խէչանի աղջկանը, շատերն ուզել էին ու նա չէր տուել, ամէնքի յոյսն էլ կտրելու համար Խէչանը մօտիկ օրերս հանդիսով նշան էր դրել Սմբատի հետ: Մէկ էլ իմացել էր, իբրև թէ Շուն Հետաճողենց Արշակն իւր առաջ ժամանակն ամէն տեղ պարծենալուս է եղել, թէ մի ամբողջ տարի Խէչանի աղջկին իրան էր սիրում: Շատ անգամ այս բանի վերայ ժամերով մտածում էր Սաքօն. նա ոչքան և շահասէր, բայց ասիական նախանձաւորութիւնը ցեցի պէս սիրտն ուտում էր:

— Է՛հ, ձեռը թափ տուեց մի օր, չոր ցեխը մարդի փէշին չի կպչիլ, ցնորուած Արշակի խօսքերն ո՞վ կշեռքի մէջ կը դնի. նեռըն ա էնպէս աղջկանը, որ սաղ մհալի չափ հարստութիւն պտի բերի իր հետ, մէկ էլ որ ես հօ Խէչանի աղջկանը չե՛մ առնում, նրա մալ ու գովլաթը պտի ըլնի իմ կնիկը. աղջիկը թէկուզ քօռ ու քաչալ էլ ըլնի, թէկուզ ինձ չսիրի էլ, նրա կեանքը ընչանք երեխայ բերիլն ա. ընդհուպ յետոյ բարի՞ ձանապարհ, թէ իր կամքովը չգնայ՝ ղրկեն իմ շինքին:

Շունչքացել էր, աշխարհակեցիք իւրեանց այգիների գործերից պրծել էին, ամէնքն ըստ կարողութեան հարստացել էին, հարսանիքների օրերը մօտեցել էին, ազափ տղայոց արիւնը եռալ էր սկսել, որդեսէր մայրերի տուած յոյսերը նրանց կողքերումը նստել էին. գիտէին մեր պատանեակները, թէ որքան և հայրերը ցանկութիւն չունենան իրենց պսակելու, էս ձմեռ անց կացնելու չեն, քանի որ նաներն իրանք ուզում են իրենց ազիզ բալէք անց թագ ու պսակին արժանանալու, ուրեմն ինչպէս լինի, այս քանի օրս խնամիացուների օրերը դուրս կը գան:

Այս ամէնը լաւ գիտէր միկիտան Սաքօն և նա ուզեցաւ ժամանակից օգուտ քաղել:

— Ո՞նչ անեմ, ո՞նց սկսեմ, գիմացէ գիմաց իրան Խէչանին գնամ, երեսէ երես աղջիկն ուզե՞մ՝ չի ըլնիլ, վա՛յ թէ խրտնացնենք,

ունքը շինելու տեղ՝ աչքն էլ հանենք. ախար ի՞նչ կասի, թէ ո՞ր երեսով դու գալիս ես իմ նշանած աղջկանն ուզում. ուրիշն ձեռքով էլ, ասած ա՝ փուշ բռնի։

Շատ ծանր ու թեթեւ արեց Սաքօն, շատ գիշերներ գլուխը կռացրած նստեց իւր գինետան ներսի սենեկուհին և մոքի հետ ընկաւ՝ ոչ մի վճռական ելք չկարողացաւ տալ. որ կողմը դարձնում էր, գործն իւր հակառակ էր երևում։

Մեզ լաւ յայտնի է, որ գիւղացին մեծ հաւատ է ընծայում նախապաշարմունքին, մեր Սաքօն թէպէտ բացառութիւն էր կազմում, բայց այս անգամ նա էլ թերահաւատացաւ։

— Ես լաւ նշան չի, յուսահատուեցաւ նա, մի ունկը չեմ գտնում, որ բռնուիմ. որ կողմը քաշում ես՝ կորուում ա. ես Սաքօն ըլիմ ու էսքան վախտ մոլորուիմ, դեռ ի՛նչ լաւ, որ իմ գործի համար ա. ի՞նչ կը ընէր իմ հալը [1], թէ որ մովլովը մի խորհուրդ հարցնէր, ու ես էսպէս երկար ժամանակ կմկմայի [2], չկարողանայի պատասխանել։ Չէ, սիրտս մի բան ա զգում, հէնց իմանաս քիթս քարին պտի առնի, սառած պտի մնամ։

Անհանգիստ էր Սաքօյի դրութիւնը. մի անգամ այնպէս քարշեց երկու ձեռքով իւր գլխի մազերը, որ փոքր մնաց ցնորուում էր։

Հաստատ քայլերով մի քանի անգամ սենեկի մէջ մեն եկաւ նա ու յանկարծ կանգ առաւ, յուցամատը ճակատին խփեց ու ասաց.

— Էլ ո՞ր օրի համար եմ պահել, ամէնքիցը հօ փող չպտի՞ առնենք, էս մինն էլ առանց փողի ընկի, էս մեի փողն էլ իմ քիսեցը դուս գայ։ Հէնց հիմի Խէչանի անուսովը մեզալ գրել կը տամ ու էգուց կերթամ Աշտարակ. ո՞վ դեղին պօլիմպրեալ, քո պսպղալուն մատաղ, քո զօրութիւնը շանց տալու օրերն եկել հ՛ն, պ ա տ ի՛ կ ես ու ճ ա տ ի՛ կ ես։

1 Դրութիւն։ 2 կակազել։

ԻԴ.

Մ ե դ ա լ

— Է՛ր, էլի նոր մարդի՞կ։

— Է՛րամանքե՛ղ, գլխիդ մատաղ, դեռ ո՞ւր ես, դեռ մհալի կէսը սիրտ չի անում. մեռնում եմ տանուտէրներին ասելով, որ սրանից վեռաս չի հասնիլ, ձեր առաջաւոր իշխանների պատիւը չի վէր ընկնիլ, ղըկեցէ՛ք ում ձեռը ջէբն ա հասնում, անկաջ չեն անում, չեն ուզում, որ վերջի հասարակ մարդիկը մ ե դ ա լ կախ տան, իրանց հետ ձգուին։ Վերջապէս խօսքս կտրուկ էլաւ, դեռ շատերը պտի գան, հիմի մի հինգ հատ եկել են, պտի գրուին, պօլիմպրեալները բերել եմ, հաւեցէ՛ք։

Եւ Սաքօն մովլովի առաջը դրեց հինգ հատ պօլիմպերեալ։

— Քեզ քանի՛ անգամ ասել եմ, որ պօլիմպերեալի թիւը միտդ պահես, բարկացաւ մովլովը, քեզ ասում եմ, որ միայն 184 . . . Թուականիդը վեր կալ, ի՞նչ ես գլխացաւանք տալիս, հօ գիտես, որ էն տարուայ կտրածն ամէնքի վրայ ծանր է, ոսկի է, հօ պղինձ ու երկաթ չի՞։

— Շատ լաւ ես հրամայում, աղայ ջա՛ն, արդարանում էր միկիտան Սաքօն, համա բոլորը տես ու ճանաչէ մարդիկ են, քանի հետ ասում եմ՝ չի ընդուում, ադամչաք են անում, երեսիցս կախ են ընէնում, ես էլ խաթրներիցը [1] չեմ կարենում անց կենալ. կպչում են հախէս [2], որ փոխեմ, հօ գիտես, ես էլ ոսկի չեմ կտրում, մի քանի հատ ունէի՝ քեզ տուի, քո չարը տանի՞ն, ջանս էլ չեմ խնայիլ քեզ համար, գլուխս քո ուղուին [3] յիւռ եմ դրել, բայց հիմի որ չկայ՝ ի՞նչ անեմ։

— Հաս ի՞նչպէս պէտք է լինի։

— Էդ շատ հեշտ բան ա, քո մօտ հիմի պօլիմպրեալներ շատ կան, դրանք ինձ տո՛ւր, ես կը տանեմ ինձ մօտ կը պահեմ, մեզալ

1 Պատիւներից, 2 Օձիք, 3 Բաղդատութեան համար։

գրուելու համար ակողներիցն իրանց ոսկին կառնեմ, սրանց հետ կը փոխեմ ու թող էլի բերեն քեզ տան. ամէն մէկի վրայ էլ մի քանի կապէկ աւելի փոխելու համար կը վերցնեմ, էն խուրդէն էլ կը բերեմ՝ քեզ կը տամ:

— Ա՜յ թէ դու շատ առնես, ինձ՝ քիչ տա՛ս:

— Է՛հ, աղա՛յ, դու Սաքոյիդ դեռ չես ճանանչում, հօ դիտե՛ս, որ ամէն մի պօլիմպերեալը երկու շահուց աւել գլուխ չի ուզենալ, թափաւորը [1] շատ քիչա. քո խաթեր ես մի մին սապ աբասի [2] էս օհաթը քեզ աւել կը տամ, թող մէջ տեղն իմ երկու սապ շահին կորչի, օտարի հօ չեմ տալիս, քո արևին փոխ ըլի՜:

Սաքօն տատցաւ մովրովից հարիւրի չափ պօլիմպերեալ 184... թուականի՝ գնացական գնիցը մի ապասի աւելի հաշուելով և թըղթադրամով վճարեց մովրովին:

— Հիմի ես էն մարդկանցը չետ կը տամ իրանց ոսկիքն, աղայ ջա՛ն, կասեմ, որ դու հրամայել ես, որ ամէն մարդ իր ձեռովը տուն բերի. պատուիրի՛ որ մէկ մէկ ներս մտնին ու երբ որ էդ ոսկիքը կը դնեն առաջդ, բարկացիր դէմներովը տուր, չետ դարձրու, թող գան ինձ մօտ, ես կը տեսնեմ:

Գիտէք ի՞նչ կայ, տղէք ջա՛ն, ասաց Սաքօն իւր խանութումն անհամբեր սպասող պօլիմպերեալների առերեսին, ձալ ու իլլաճ չէլաս, վեր չի կալնում, թէ որ 184 . . . թուինը չըլնի, ասում ա՝ անկարելի ա. հիմի ձեր փողերն չետ եմ բերել, թէ կուզէք՝ դուք ինքներդ տարէք տուէք:

— Մենք էն թուինը որ տեղից ճարենք, մենք հօ չի՞նք կարողը:

— Թէ կուզէք՝ ինձ մօտ կայ, ես չատուկ դրա համար ներեան եմ գնացել, ինին կէս մանէթ աւել տուել, թէ կը կամենաք համեցէք, ձեզանից մի կապէկ օգուտ ինձ հարամ ըլի, ոնց որ ինձ վրայ նատել ա, տամ՝ տարէք տուէք իրան. որ տեղ մի պօլիմպրեալը կը գնայ, թող կէս մանէթ էլ վըրէն աւելի. երթայ:

Մեդալաւոր պարոնները մեծ ուրախութեամբ համաձայնեցան իսկ Սաքօն ձեռաց մովրովից ստացած ամէն մի ոսկուց 30 կոպէկ աշխատեց: Միայն այդքանը չէր, չատաջուց Սաքօն ստացել էր սբանցից օգնականի, գրագրների, եասավուլների անուանով մի քանի

1 Ջանազանութիւն՝ 2. 20 կոպէկ արծ.

մանէթներ էս, որոնց կէսը միայն սովորաբար ըստ պատշաճին հասցնում էր, իսկ միւս կէսը նոյնպէս իւր դրամարկղն մէջն էր մտնում:

Ա՛յնուհետև ամէն ոք իւր ձեռքով Սաքոյի հետ փոխում էր պօլիմպերեալն և անձամբ մատուցանում մովրովին ու անունը գրել տալիս, բայց միշտ Սաքոյի նախապէս ներկայացնելովը:

Մենք դեռ չբացատրեցինք, թէ այս ի՞նչ մեդալներ և պօլիմպերեալներ են:

Ա՛րևելեան պատերազմը վերջացաւ, այդ նշանաւոր արիւնհեղութեան յիշատակի համար տէրութիւնը դուրս տուեց այն փոքրիկ պղնձեայ կարմիր մեդալը, որի վերայ Սալմոսի մի տան հետ պատերազմն սկսող և վերջացնող Ինքնակալաց անուններն է դրոշմած. այդ փոքրիկ յիշատակարանը պատերազմին մասնակցող բոլոր անհատները պէտք է կրէին իւրեանց կրծքին իբրև անմոռաց նշան անձնանուիրութեան:

Ընդհանուր շրջաբերականով յայտնուեցաւ բոլոր գաւառապետներին նշանակել իւրեանց տեսչութեան ներքոյ եղած գաւառների մէջ պատերազմին մասնակցողների անուններն և ըստ քանակութեան թուոյն մեդալ տանալ: Միայն պատերազմումն արիւն թափելը էր համարուում մասնակցելը. ով ինչ և իցէ գործում պէտք է եկել պատերազմի միջոցը, վայելելու էր այդ արտօնութիւնը:

Մի քանի գաւառապետներ մատը կծեցին և իւրեանց գործունէութեան շրջանն ընդլայնեցին: Այս խմորը շատ ջուր կը վերցնէր, ո՛վ ասես՝ կարող էր մասնակցած համարուիլ: Մէկը զինուորաց պաշարը կարող էր իւր գրաստովը բերած լինել, միւսը յորեն կ'աղալ ջրաղացումը, երրորդը՝ գինի, արաղ ծախած կըլինէր բանակումը, մի ուրիշն եղները կամ ձիանքը քրդերի ու ասպատակող թուրքերի ձանդն ընկած կըլինէին պատերազմական դաշտից տուն դառնալուս և այլն և այլն. հազար ու մէկ պատճառներ դըժուար չէր հնարել, և ահա՛ ամէն ոք մասնակից այդ մեծ գործին և մեդալ կրելու արժանացաւ: Հարց ու խնդիր անողն ո՛վ է, իշխանութեան ներկայացուցիչն ինքը գաւառապետն է, իւր վկայականն է այդ առանձնաշնորհութեանն արժանանալու իրաւունք տըւողը:

Մի քանի գաւառապետներ փոքրով չգաւակացան, մեծ գին նշանակեցին մեդալի համար, ուստի և վերջումը հասկացան իւրեանց արած մեծ սխալմունքը, իսկ մեր հեռատես մովրովը Սա-

քօյի խորին քաղաքականութեան շնորհիւն իւր գործը լաւ բռնեց և տարաւ։ Մի պօլիմպերեալը մեծ բան չէ, ամէն մի նախորդ էլ կարող է ճարել։ Սաքօն իւր բերանացի շրջաբերականը տարածեց մեր գաւառի բոլոր գիւղերը, թէ ո՛վ մի պօլիմպերեալ կը բերի, նա մեդալ կստանայ։

Մեդա՛լ, փոքր բան չէ, կրծքին կախելու նշան ա, ամէն գիւղացու այս բանը շատ լաւ յայտնի է, թէ նշանաւորին ոչ ոք իրաւունք չունի ծեծելու, նրանից ոչ միայն մարմնական պատիժն է բարձուում, ինքը մովլովին էլ իրաւունք չունի մի մատը բարձրացնել նորա վերայ. շատ անգամ գիւղացիք ականատես են եղել երբ մովլովին ուզեցել է մի խաչաւորի, մի աւազակ նշանաւորի ապտակ խըփել, բայց չի համարձակուել ձեռք բարձրացնելու, բաւականացել է միայն բանտարկելով։ Ուրեմն մեր նոր մեդալն էլ, նոցա հասկացողութեամբ, այդ իրաւունքների տէրն է։

Ամէնքի սրտումն էլ յուսոյ կայծեր սկսան արծարծուիլ, մեդալ ճարելը հեշտացել է, պատուոյ ճանապարհը հարթուել է. մի պօլիմպերեալ գոնէ պարտքով՝ խարջով, ո՛ր տեղից և ի՞նչպէս եղաւ, մովլովին տուիր, անունդ գրուեց՝, պրծաւ. մի երկու շաբաթից՝ ամենաշատը մի ամսից մեդալը լանջդ կը զարդարէ, և այնուհետև դու ազնուական ես, իւզբաշի[1] ես, բէդ[2] ես։

Թէպէտ պատերազմի պատճառաւ Երևանայ նահանգումը ոսկին շատացել էր, բայց գինը բարձր էր, Թղթադրամն իւր յարգը փոքր ինչ կորցրել էր։ Հիմա ոսկի ասած բանը սև աղուէսի պէս հազուագիւտ և թանգագին դարձաւ. ունեցողը մէկն իւր համար յետ դրեց և միւսներից օգտիլ մտածեց. մի պօլիմպերեալը մինչև մովլովին հասցնելն և անունը գրել տալը ձագեր էր հանում, մինչև տասը մանէթի էր հասնում, մանաւանդ թոռներ էլ ունենում էր, երբ յանկարծ այդ նուիրական գիղին մեծաղը նպատակին չէր համապատասխանում։

Շատերը մովլովի գոհանն էին իմանում, որ 184 . . . անիծեալ Թուականին է չնորհաբաշխ և գօրաւորը։ Ճարահատեալ՝ մի երկու մանէթ էլ նոր աւելացնելով՝ Սաքօյից առնում էին մովլովի քսակից դուրս եկած պօլիմպերեալն և կրկին իրան տանում, անուններըը նշանակել տալիս և ապայ մովլովի քաղցր ակնարկութեանն և յուսադրութեանն արժանացած՝ սրտի ուրախութեամբ

1 Հարիւրապետ։ 2 Ազնուական։

վերադառնում տուն, աչքը կթած սպասելով օրուանն և ժամուն, երբ տանուտէրը հրամանաթուղթն և մեդալը ձեռքին՝ գիւղի առաջաւորների հետ կը գայ իւր ոտքն և իւր ձեռովը կը կախի կրծքիցը։

Ո՛ղի դժուար և ցաւալի չէին թուում այն մի քանի աւերտրտ մանէթները, որոնք Սաքօյի ձեռքով, իբր թէ, մտել էին միւս պաշտօնականների ծոցը, ոչ ոք չէր էլ յանկանում մտքովն անց կացնել, թէ աղնիւ ու բարեկամասէր Սաքօն օգուտ քաղած կը լինի այդ դէպքից։

Այո՛, լինում էին երբեմն փոքր ոտտունջ յայտնողներ, թէ Սաքօն չպէտք է դաւաճաներ հաւատարիմ և սրտակից բարեկամութեանն և այնքան թանդ չպէտք է առներ պօլիմպերեալը փոխելու համար, բայց դրանք էլ վերջը յիշելով Սաքօյի ջերմեռանդ աշխատութիւնները և սրտաուշ եղբայրական միջնորդութիւնը, նրա մօր կաթի նման հաւասար էին անում այն չնչին կոպէկները։

Այս երջանիկներից մի յանդուգն միայն ուզեցաւ ընդհանուրի կարծիք բացատրութիւն լինել։ Դա Աշտարակցի Շահազիզեան — Կամսարականների սերնդից մէկն էր, որ իւր ծագման վերայ մեծ համարում ունենալով՝ այլապէս չէր ուզում կոչուիլ, եթէ ոչ իւր անունը մօտ իւր հօր անունը աւելացնելուց յետոյ՝ Շահազիզեան — Կամսարական Աշտարակեցի բառերն էլ հետը կըցնելով։ Մենք նորա երկար անուանակոչութիւնը մի փոքր կարճացնենք և վերակոչենք նրան միայն Կամսարական — Աշտարակեցի։

Նարիւր անգամ Սաքօն իրրև մօտիկ բարեկամի համոզեց մեր Կամսարական — Աշտարակեցուն, որ իւր էժանագին պօլիմպերեալովը չներկայանայ մովլովին. բարեկամութիւնից խեղդուելով՝ նա խոստացաւ մինչև անգամ ուրիշներից մի երկու շահի էլ պակասով տալ 184 . . . թուականի պօլիմպերեալը, տան անգամ հասկացրեց, որ մինչև մովլովի ոտ ու ձեռին բաժին չտայ, անկարելի է մեդալի յոյս ունենալը՝ անհնար եղաւ. Կամսարական — Աշտարակեցին, ինչպէս ասած է, սատանի ձին էր հեծել, իրաւացի էր. երևի իւր վերայ մեծ վստահութիւն ունէր, առանց ներկայանալու, համարձակ ներս մտաւ մովլովի մօտ ու գլուխ տուեց։

— Բարե՛, Կամսարական — Աշտարակեցի՛, անշան ժպիտով խօսեցաւ մովլովը, ի՞նչ ղուլլուղ[1]։

1 Ի՞նչ խնդիր ունիս։

— Ֆո ողջութիւնն, աղայ, մեդալի համար եմ եկել, իմ անուն էլ գրի, ես ումնից եմ պակաս։

Նա դրեց սեղանի վերայ իւր պօլիմպերեալը։

— Ի՞նչ էք մարդի ձանձրութիւն տալիս, խոժոռուեցաւ մովրովը, մի՞թէ մինչև հիմա չիմացաք, որ 184 . . . թուականին է հարկաւոր։

— Աղայ ջա՛ն, ինձ ուրիշն ոսքի մի՛ տանիլ, ես քո Կամաբական — Աշտարակեցին եմ, անց կացրու, չկար, չճարեցի, թէ չէ ինձ համար մին էր։

— Շատ գլուխ մի՛ ցաւացնիլ, չճարեցիր ու մեդալ էլ մի՛ քաշ անիլ, որ տեղից եկել ես, այն տեղ գնա՛, ես քո զըոյցաբնկերը չեմ։

Կամնարականիս պօլիմպերեալը Փառաց[1] դռան տակը։

— Ա՞ր կա՛լ դուրս կորի՛, էլ իմ երեսը չհամարձակիս գալ մեծախօսութիւնը տեսէք, քո Կամնարակա՞ն-Աշտարակեցի՞ն եմ, չնորհք է համարում ինձ, եթէ ես արժանացրել եմ իւր տանը մի քանի անգամ իջնել. ա՛յ մեծ բան, ինձ տուն կը պակասե՛ր։

Կամնարական-Աշտարակեցիս իւր լուսոյ նման փայլուն գլուխը քերելով, վերցրեց շեմքի մօտ ընկած պօլիմպերեալն ու փընթփնթալով և մաքուռն սպառնալիքներ տալով՝ դուրս գնաց։

Իսկ տոհմական աղնուականս ներս չեկաւ, Սաքօն փոխեց նորա պօլիմպերեալը, բայց այժմ ոչ երկու շահի պակասով, ընդ հակառակն մի ապտակ աւելով, ըստ որում ինչպէս ինքը երդմամբ հաւատացնում էր՝ իւր վերջինն ուրիշի էր տուել իսկ այս մեկը նրա պէս ազնիւ բարեկամի սիրոյն եասավուլիցը ձարեց աւելի թանգ գնով, այսինքն Կամնարականին իւր գինետանը թողեց, դուրս գնաց, մի գրպանից հանեց՝ միւս գրպանի մէջ դրեց և բերեց։

— Ա՞նաս չունի՛, գլուխը շարժում էր Կամնարական-Աշտարակեցին՝ երկու մանէթ էլ միւս ծառայողների համար ցնծալով, դեռ ես մեդալն ստանամ պրծնիմ, յետոյ գրա ղուլլուշն իմ աչքի վրայ. թող չպարծենայ, թէ ինքը մովրով ա, ոահաթն իրան ոչինչ չի կարող անել. մրջնին էլ պատիկ ա, համա ասում են ասլանի անկաջն ա մանում, էնքան գլխի վրայ պտիտ պտիտ անել տալիս խեղճ գազանին, որ ղչմայնում, — վեր ա քցում։ Ջաստիկ շաբաթ օրը թէ անկաջը լուն կծի, թող իմանայ որ ես եմ։

1 Փառաւ։

— Ոչի՛նչ, Կամնարակա՛ն ջան, ճանապարհ դրեց նրան Սաքօն, մենճաւոր ա՝ կը բարկանայ էլ կը սիրի էլ քէֆի վատ վախտն ես հանդիպել. ես քեզ յառաջուց ասեցի, որ մի քանի շահու համար էն մարդի սիրտը չցաւացնես, բայց էլ նոր ո՞րտեղ, ինչ էլաւ՝ էլաւ, գնա՛ քո գործին, ես հէնց հիմի պօլիմպերեալդ կը տանեմ իրան կը տամ ու անուշդ դրել կը տամ։

Սաքօն ճանապարհ դրեց Կամնարական — Աշտարակեցուն ու երկու պօլիմպերեալ վերցրեց մովրովի մօտ տարաւ։

— Էս Կամնարականի պօլիմպերեալն, աղայ ջա՛ն, մի քանի շահու համար էնպէս մարդի սիրտը չպտի կոտրէիր, նա քեզ շատ ա պէտք եկել։

— Թող կորչի՛ մեծախօսը, հէնց իմանաս հօր եղբօրս որդին լինէր, այնպէս էր վատսոհ հետս վարուում։

— Էդ թողնենք, անց կացած բանին էլ օգուտ չկայ, թէ որ ես նրա սիրտը չառնէի՝ նրանից մեզ վնաս կը դար, խոհական նայուածքով վճռեց Սաքօն, նրա անունը դրի։

— Ասենք՝ ոչինչ չէր դալ, բայց քո խաթեր համար։

— Էս մինն էլ Խէչանենց Խէչանի մեդալն գինը, ժպտաց Սաքօն։

— Էֆո՛, վերջապէս ընկա՛ւ, հապա ասում էին որ նա փառասէր մարդ չի՛։

— Դու դրի՛, աղայ ջա՛ն, դու նշանակի, դեռ դրա համար մենք յետոյ կը տեսնենք։

— Ինքն է եկե՞լ։

— Ո՛չ, ես ինձանից եմ տալիս, բայց դու էլ շատ մի՛ քրքրիլ միայն մի գիր տուր Աշտարակու տանուտէրի վրայ, սաքի թէ, դու ինքդ լսել էիր Խէչանենց Խէչանի կռուի վախտին արած լաւութիւնները, քեզնուքեզն արժան տեսար նրա համար մեդալ դրել։ Էդ գիրն ա ինձ էս սհաթս ամենից հարկաւորը, ես պտի իրիկունս Աշտարակ գնեմ։

Սաքօն առաւ այս վկայականը, ծալեց, գրպանը դրեց և ձին նստաւ.

Այս գիշեր նա Աշտարակումն էր։

ԻՆ.

ԱՐԵԻՐ ՎԱՏ ՏԵՂՆ ԷՐ ՄԷՐ ՄՏԵԼ

Աշունքն անց կացաւ, ժողովուրդն իւր աշնանային հարկը վճարելումն այնքան չծանրացաւ, ամէն ոք իւր բերքի մի մասը ծախեց, իւր օրինաւոր հարկը վճարեց և իւր տան պակաս պռատը կարգի բերեց, եասավուլներն ու ղազախներն այս անգամ շատ չնեղացան մարդ ծեծելով, եղած տեղից ամէն մարդ օգուտ կստանար, յետին աղքատն էլ մի երկու բուռը սերմն է գետին ձգում և Աբրահեան աշխարհի բարերար ու առատաբաշխ հողն շնորհիւ իւր տարեկան ապրուստը վերցնում։ Դժուարութիւնը գարունն է, որ ամէն պաշար վերջանալու վերայ է լինում, ժողովուրդը գատարկաձեռն է, երկրագործութեան անհրաժեշտ ծախքերի հետ խառնուում է գարնան հարկն և այնքան ճնշումների պատճառ դառնում։

Այս աշունքն ամէնքը լի էին, պատերազմը վերջացել էր, հասարակ գիւղացին կոռ ու բեգհառից թեթևացել էր, տարին առատ էր, ամէնի ամբարն, ամէնի կարասն ու քունջ ու պուճախը լիքն էր. այդ պատճառաւ շատ հարսանիքներ էին լինում։ Մինչև խեղջը միաք կանէր, յանկարծ լսում էիր, որ դիժը տղին պսակել էր։

Այսպէս էլ պատահեցաւ մեր Խէչանի հետ։

Նա միաք ունէր ամէնքից շուտ իր աղջկանն ամուսնացնել, սակայն այսօր վաղը ձգելով՝ ձմեռուան Ուէթօրէից արաղուլին[1] հասցրեց։

Մի կողմից, այնպէս կարծես, թէ այդ մեր Սաքոյի գործին գալիս էր, հանգամանքները, կարծես, նրան օգնում էին, իւր նպատակին հասնելու համար միջոցներն երկարանում էին, բայց իրականապէս այդպէս չէր դուրս գալիս, հէնց իմանաս Սաքոյի մաստակն, ինչպէս ասած է, ցեխն էր ընկել չէր յաջողում։

Եթէ այդ դժբաղդ դէպքը մի ուրիշին պատահած լինէր, ամէն մարդ կարող էր այնպիսի անձի դրութիւնը հասկանալ, բայց Սաքոյի վերայ շատ դժուար էր նկատելը, շատ խորամանկ աչք պէտք է լինէր, որ կարողանար Սաքոյի անախորժ և տխուր հայեացքից

1 Խիստ ցուրտ։

բան գուշակել։ Բայց և այնպէս մի բան բոլորի աչքից չէր փախչում, որ ամբողջ աշունքն ու ձմեռը Սաքոյի մի ոտն Աշտարակ էր՝ միւսն իւր միկիտանկանայումը։

— Էս ի՞նչա պատահել քեզ, այ Սաքո՛, էս տարի Աշտարակ շուտ շուտ ես գնում, ջրի ձամփայ ես շինել, հարցնում էին շատերն ու բաւականանում նրա տուած կարճ պատասխանով։

— Ա՛յնչ, տնային հանգամանքներս են։

Բայց այս տնային հանգամանքները շատ բաղմաճիւղ էին, պրանք շատ գիշերներ մեր քարասիրտ Սաքոյին լացացրել են։ Այնպիսի գիշերներ են եղել այս աշնանը, որ մեր Սաքօն բաց աչքով լուսացրել է, երբեմն մի տեղ ձեռքը ծնօտին ժամերով նստելով և երբեմն աշխատանքի մէջ։

— Երկուսի՛ց մէկը, կամ ես Սաքօն չեմ, կամ պէտք ա ասածս անեմ. եթէ իմանամ, որ Թուրն երեսիս պտի խաղացնեն, ես յետ դառնողը չեմ, հանաք մասխարութիւն չի, դեռ ընչանք օրս իմ օգտին ոչ ով չի եկել, հիմի մի հասարակ հալիւոր պտի ինձ յաղթի՞։ տեսնե՛նք։ Էս ես՝ էս դու, ա՛յ Խէչանենց Խէչան, ես մոքումս դրել եմ քո մէքերին տէր դառնամ, դու ուզում ես Ծվիկենց Սմբատին Թողալ. ո՛վ տանի՝ պարծենայ։

Հը՛, սրան տե՛ս, մեդալն էլ չէիր ուզում, ո՛նց կամաւորութեիր. ախար ընչի՞ չպտի համաձայնէիր, ուրիշներն իրար գլուխ են պատռում, դու հանգիստ հարկևոր քո տանդ նստած՝ իրան ոտովը դռւռդ եկաւ. համա շատ յետ եկածն էր անիծա՞ծը, հոգիս հանեց՝ էնքան չարչարեց։

Ա՛յնչ, հալա՛լա, Սաքոյի չարչարանքը նրան էժան չի նստիլ, մի երկու երեք օր չերթիցս պօլիմպրեալ բաց Թողալով, համ երկուսը տեղակը ծոցս դրի, համ էլ Խէչանի աղջկայ հետ նրա մուլք ու դովլաթն էլ վըէն կառնենք. ասենք մի քիչ սիրուն չէ, բայց ո՛վ ա հարցնում՝ կուսուի, հարստութիւնը գեշին կը սիրունացնի, լալին լեզու կը տայ, չոլախին ջուխտ ոտք, քօռին էլ երկու սուր աչքեր։ Աասենք մի քիչ դժար ա ձեռք ընկնում, համա մի բան որ հեշտ ձարուի, էն բանի ղադրն[1] ո՛վ կիմանայ, ոսկին որ հեշտ աշխատելու ընչեր, էսքան նրա համար ո՛վ գլուխ կը պատռեր, ո՛վ էսպէս կատուածայներ ու կը սիրէր՝ ոնց որ մեր մովրովին ու ես։

1 Արժէք։

Այս յուսադրութիւններովը Սաքօն ոդի առած՝ տանուտէր բոլոր արգելքները. նա այն հասարակ մահկանացուներից չէր, որ կիսաճանապարհին վհատէր։

Առաջին անգամը Սաքօն չէր կարծում, թէ Խէչանն այն ասածնան կը դիմադրէր։ Ինչպէս մեղ յայտնի է, նա մեդալի ներկայացրեց Խէչանին. ոչ թէ մի դատարկ խօսք էր բաւականացել այդ ներկայացման համար, այլ գուտ ոսկի էր տուել, 184... թուի սիբեկան պօլիմպրեա՛լ։ Խուփը գլորուել էր, կճուճը գտել, մովրովին ու Սաքօն լաւ էին միմեանց հանդիպել, Սաքօն շատ լաւ գիտէր, որ իւր աղէն իր հարազատ հօրից էլ կաշառք կը վերցնի, իր որդուն էլ աչք չի պահիլ կը մեռնի ու առանց փողի ոչինչ չի անիլ, էդ պատճառաւ էլ մի պօլիմպրեալի գլխիցը վճռից անց կենալ։ Դրա համար Սաքօն չէր ցաւում, նա փոխարէնը Խէչանից ստանալու յոյս էլ չունէր, նա կամեցաւ, որ էդ մի պօլիմպրեալովը սրտի ցանկութիւնին հասնիլ։ Բայց հէնց այդ բանում էլ խոփը քարին առաւ։ Երկու օր ինքն ու տանուտէրը մեծ աշխատելով՝ հազիւ կարողացան կոտրել էն անկոտրում Խէչանին, որ համաձայնի մեդալ ստանալ։

Առանք այսօր նա մեդալը չառաւ ու կրծքից չկախեց, դեռ ներկայացումն էր գնում, դեռ յայտնի չէր, թէ ո՛րը պիտի բաժանուէր, բայց հարկաւոր էր, որ Խէչանը մի դատարկ ընորհակալութիւն յայտներ, մի խօսքն ի՞նչ է, որ նա կողքը դեռինը չէր տալիս ու չէր ասում։

— Չէ՛, չէ՛ ու չէ՛, ձեզ ո՞վ խնդրեց ինձ համար մեդալ դրել տայիք, ես որ ուզենայի, մի պօլիմպրեալ կը գտնէի դրա համար։

Հազար անգամ կաց ու ասա՝ թէ մովրովը քաղցր աչք է ունեցել քեզ վերայ, նա ինքն առանց խնդրանաց դրել է նա հաւատալ անգամ չէր ուզում, մանաւանդ երբ իմացաւ, թէ Սաքօն է միջնորդել սաստիկ գայրացաւ, իսկ երբ միամիտ տանուտէրն իւր կողմից բերանից դուրս թողեց, թէ Սաքօն իւր գրպանից պօլիմպերեալ է մսխել՝ բոլորովին կատաղեց. ներս մտաւ տուն, հանեց երկու պօլիմպերեալ և քաղաքավարութիւնը մոռացած՝ ձգեց Սաքօյի առաջը։

— Ես ոչ ովի ողորմութիւնին կարօտ չեմ, գլխներովդ դիպչէի ձեր արծաթը։

Վերջապէս Խէչանն այլևս չկամեցաւ ընդունել մեդալն ա-

ռաջարկութիւնը, եթէ ոչ երկու պօլիմպերեալ մէկի փոխարէն վերցնելուց յետոյ։

Մեզ այնպէս է թուում, թէ այդ Սաքօյի սրտի ուզած բանն էր, բայց ոչ շատ ախանձութեամբ վերցրեց և գրպանը գրեց նա։

Արևը վատ տեղն էր մեր մտել, էն Սաքօն, որի առաջին ոչինչ փակ դուռը չկար, որ երբէք խօսքի տակ չէր մնացել, հիմի սոսկալի էր լեզուն բունը գնել և Խէչանի պէս մարդուն գոնէ առ ժամանակ տեղիք տալ։

Ի.Օ.

ԱՆԾԱՋՈՂ ԽՆԱՄԽՕՍ

Ա՛յ Խէչան, ասաց այս անցքից մի քանի օր յետոյ տանուտէրը, քեզ մի բան պիտ ասեմ, համա բարկանաս ոչ։

— Ի՞նչ կայ բարկանալու, ես գիտեմ, որ կամ աղներդ կըլնի պակաս, կամ մանչերդ, էլ ի՞նչ անօգուտ տեղ փող տալու բան կայ, որ ձեր քիսին շահ էլ բերիլ իմ շլինքը կըլնէք քցում, ասա՛ տեսնեմ,

— Չէ՛, Խէչա՛ն, անկաղ դի՛ր, դու ե՛րբ պիտ աղջկանդ պըսակես։

— Ի՞նչ կայ, էս մի քանի օրս միտք ունմ, չըլնի՞ թէ պատրաստութիւն ես ուզում տեսնել տանուտէ՛ր, ախար խաչախպէր ես, Աղաջանենց[2] հետ դուք ախար խաչքաւոր[1] է.ք. գիտես, Սիմոն, շատ, Թանթանկ[3] մի՛ սաղքիլը քանի կարաս՝ պակաս բռնի՛։

— Է՛հ, էդպէս բաներն ամօթ ա, Խէչա՛ն, ի՞նչ ծախս պտի անենք, պապենական ինչ որ տեսել ենք, էլի էն ձամփովը պտի գընանք. էդ ոչինչ ես ուրիշ բան էի ասում։

— Ա՛սա՛ տեսնեմ։

— Չի ըլնի՞լ Խէչա՛ն, որ միտքդ փոխես։ Ընչանք օրս, հո

---

1 Խաչքաւոր կը նշանակի երկուստեք կնքահայրներ, որոնք փոխադարձաբար միմեանց կնքահայրն են։ 2 Մեծ հանդէս։

դիտես, 100 մարդ քո աղջկին ուզել ա, ես միջնորդութիւն չեմ արել. հա՛ Աստծու Սմբատն օրինաւոր տղայ ա, համա էսօր՝ երբ մի աւելի արժանաւորն ա լես ընկել, ես իմ աղջկայ բաղդաւորու-թիւնի պէս քո մինուճարին էլ բարի կը կամենայի: Արի՛, Խէչա՛ն, ինձ անկաջ դի՛ր, խօսքդ յետ տո՛ւր, աղջկանդ ձեռաց էս մի քանի օրս պահենք մեր Սաքօյի վրայ:

— Ի՞նչ Սաքօ:

— Սաքի չիմացա՞ր, մեր միկիտան Սաքօյի:

— Ւ՞նչ:

— Նրա թրի երկու դիհն էլ կտրում ա, էսօր մեր մհալումը նրա պէս յաջողակ տղայ չկայ՝ խօսքով, անուշով, փողով ու երեսաւեղով. դու դիտես, որ գղջից բռնած ընչանք մովլովը, նրա ձեռի տակին ենք, մովլովի հետ՝ ոնց որ ես ու դուն. ախպօր պէս հետն ախպէր ա. էն թաւուր տղէն, որ քո փեսէն ըլի, էս օր դու մհալումն ամէնի վրայ երկար լեզու կունենաս: Ես իմ Աստուա՛ծը, արի դու երեխիդ բաղդին քացով մի՛ տալ: Աստուած իր հօրը բաշխի՛, Սմբատին էլ ես փնովում[1] չեմ, համա ճրագի առաջին չախմախի չեն տալ. Աստուած քեզ բաշխի՝ քո աղջկանիցը սիրտն ունես տանդ, քուերդ աղջկին էլ տուր Սմբատին, էլի քո որդին կըլնի: Արի՛, Խէչա՛ն, գոգիդ քարը վէր ածա[2], ինձ լսի՛, ես կող շաբաթ երկու հարսանիքն էլ մի օր անենք, վերջացնենք: Չ'ը, ի՞նչ ես սուս կացել, տեսնում եմ, որ միտքդ տարտղան[3] ա, կամքի գալու պէս ես, ձեռդ տո՛ւր, աս էս մատանիքը, Աստուած շընորհաւոր անի՛, ասենք, ու ծէրին կապ տանք, հաղիր ինքը Սաքօն էլ գեղումն ա. իրիկունս էլ իրան կը բերեմ ձեռդ կը պահի:

Խէչանը լուռ էր:

— Մ՚տիցս ընկաւ, շարունակեց տանուտէրը, ես Սաքօյի խօսքովը չեմ քեզ մօտ եկել խնամիօս, երեկ ես Սև Ջրի գլխին էի, ինքը մովլովն յատուկ ինձ կանչեց, պատուիրեց, քեզ էլ շատ շատ բարով արեց, ասում էր՝ ես յոյս[4] ունիմ, որ Խէչանն իմ խօսքիցը դուրս չի գալ, ինքն էլ ուզում ա խաչախպէր կանենք: Սրանից աւելի, Խէչա՛ն, էլ ի՞նչ բաղդ ես ուզում. ասում ա՝ ես գառն գեաղաք՝ ես գօռն (կամ ոսկի պէտք է ունենաս, կամ ոյժ). դու պրանով երկուսն էլ ունենում ես. Աստծու տուածիցը՝ մի կտոր հալ հաց ունիս՝ էդ քո գառը, մովլովին էլ քեզ գօռ՝ քեզ թիւ ու թիկունք:

Խէչանը պատասխան չտուեց:

— Հա՛, ասում ա անասուած տեղը կա՛ց, անարխայ[1] տեղը մի կենալ. չըլնի՞ թէ դու քո փողովը գառահ[2] ըլնիս, միտք անես, թէ քեզ ոչ ով բան չի կարող անել. մի՞քդ ա Զանգիբասարու մըհալի մովլովի օյինը[3], որ բերեց իր մհալի հարուստներից մին գըլուխը. անուշին էլ մոռացել եմ, էն՝ որ մի լաւ քեահլան[4] Աբաբատանու ձի ունէր. մովլովին ուզեց էդ ձին՝ նա չտուեց. վերջն ի՞նչ եկաւ գլուխը: Աղես ասղայ անեմ, որ դու ես[5], մի օր էլ դրա տունը կարեցին, ինչ ունէր՝ չունէր, սրբեցին տարան ու քեահլան ձիու եալ[6] ու պոչն[7] էլ տակիցը խուզեցին, չինեցին նոր ցինած քուռակ: Գնալու վախտն էլ իրան պարզ աչքերայ ասեցին, թէ էս մովլովի ինադն[8] ա, որ քեզանից հանում ենք, թէ որ չես աւաատում, կուզես էգուց գնա մովլովի հաւաքած ձիանոց մաղերի միջին քո քեահլանի մազերը ջոկի՛:

Ախար հօ միտքդ ա, Խէչա՛ն, մի տարի ամէն մհալումն էլ ջելերումն արածող ձիանոց եալ ու պոչը խուզում էին ու երկար ժամանակ չիմացուեցաւ, թէ էդ ի՞նչ գիանք[9] էր. մին էլ էն լեհ-ցինք, որ մովլովներն ամէն գեղերում տանուտէրներին թագուն հըրամայ էին տուել, որ ինչ կուզին՝ անեն, ձիու մազ հաւաքին: Է՛, ո՞վ էր գժուել իր ձին խուզէ, մովլովին տայ. երեխէն գիտայ, որ ձիու շէնք ու շնորհքը եալ ու պոչն ա, խուզեցիր՝ նրա գինը կէս փող, համա էդ տարին երեք չորս մհալի ձիանքը բոլորը պոչիկայան: Վերջը հօ իմացուեցաւ, թէ ընչի՞ համար էր: Դու մի ասիլ հեքիմների[10] պատմելով ձիու մազով շինած գօշակը[11] ջանի[12] համար տաղտամութիւն[13] ա. մեր նաչալնիկին էս բանն իմանում ա ու պրում մովլովներին, թէ կուզէք տալի ծակիցը հանեցէ՛ք, ինձ համար ձիու մազ ճարեցէք: Խեղճ մովլովներն էլ ի՞նչ անեն, ձեռ ու ոտ են ընկնում, ումնից ուզում են՝ մխուր չեն գալիս,[14] էրանք էլ էս խելքն են բանացնում, թաքուն մարդիկ են քցում, խուզել տալիս: Ի՞նչ պտի անէիր, ախպէր, տանուտէրին էիր գանգատ անում՝ ասում էր՝ գնացէք մովլովին ասեցէ՛ք. մովլովն էլ

1 Պարսաւել: 2 Համոզուիր: 3 Երկմիտ ես:

1 Անօգնական: 2 Վատահ: 3 Խաղ, հնարք: 4 Ընծոյգ: 5 Ցայտնի լինի յարգութեանդ: 6 Բաշ: 7 Ագի: 8 Վրէժ: 9 Հնարք: 10 Բժշկաց: 11 Մահիճ: 12 Անձի: 13 առողջութիւն: 14 Ժխտել, բացասել:

վաղն սաղն էր քօքում [1], գողդ գտի՛, դիւանն անեմ, ըտուր միաքը տմէն մարդ հասկանում ա, — սաքի թէ ասում ա՝ դէհ՝, թէզով քանի շաշ տա մարդ թևքել չեմ [2], դլուխդ առ կորի. խալխի ձարն էլ կտրում էր՝, սուս էին կենում։

— Իմ երկու ձին էլ խուղեցին, վերջապէս կամաց ասաց Խէչանը։

— Ողորմի՛ քո հօրը, ո՞ւմից գանգատ անէիր. թուրքն անիծած՝ խօսքն օրհնաց. թուրքավար ասած ա, թէ գեղը գժուելուց՝ մօլլէն ա հարցնում, մօլլէն որ գժուի՝ ո՞ւմ պտի հարցնենք. հիմի մերն ա, մովլովը որ ընէնց էր ասում, մենք ի՞նչ անէինք, էլ ո՞ւմ գուռը ջարդէինք։ Ասենք մովլովներն իրանք էլ մեղաւոր չէին. չգիտեմ՝ ո՞ր մհալն մովլովը, քիչ մնաց, էգ դարտակ բանի համար տեղիցը սլքուում էր. նաչալնիկը նրա վրայ երեք փութ մազ ա քցած էլել, խեղճն երկու վեթից աւելն չի կարողացել ճարել. դրա վրայ նեղացել ա, սաստիկ բարկացել, տանիցը դուրս արել ու քամակիցն էլ մարդ ա ղըրկել, որ խնդիր տայ, հետանայ։ Ի՛նչ մուննաթ չէք [3], ի՛նչ աղաչանքներ, վերջը՝ վերջը դրան մի լաւ կպում պլոկում ա, սաղ տալէն աշխատածը ձեռիցն առնում, հուփ-հուրիան [4], գառը դարձակ յետ գրկում իր մհալն ու բայ թողում ժողովրդի ջանին։ Հիմի լսեցիր, Խէչա՛ն, որ բղե դլխին բռնց քով տալ չի ընկիլ, երբ որ խօսքը վերևիցն ա, դու էլ պտի լսես։

— Պլծա՛ր։

— Շատ շատ օրինակներ կարող եմ բերիլ, որ մովլովին չլսողը վերջը փոշմանել ա [5], համա խօսքս երկարում ա։ Մի՞տ ա մհկհլ տարին Փարբու տանուտէրի բանը։ Երկու երեք տարի էր՝ տանուտէր էր, իր տեղը ծանր նստած՝ իր պաշտօնին էր։ Շատ լա՛ւ, ասենք թէ ինքը տանուտէր նստելուս մովլովին փող տուել ա, համա էսքանը միաք չի արեց, թէ նոր մովլով ա փոխուել, ինձանից խեր չի տեսել, ըսկի որ չընկնի՝ նոր տարի ա գալիս, զաաիկ՝ ջօրհնէք ա գալիս, մի հարիւր մանէթ փող կապեմ, տանեմ իրան տամ՝ ձէնը կտրի։ Իրանից ի՞նչ պտի գնար, ասում ա՝ ինչ որ գնում ա՝ բաղէցն ա գնում, բաղմանչուցն ի՞նչ ա գնում. շէն

1 Նախկին նուագարանն էր հնչեցնում, այսինքն՝ սովորական խօսքերն էր ասում։ 2 Քանի չեմ պատժել։ 3 Մի՞նորգներ։ 4 Վերջին կտոր հացից գրկած, մերկացրած։ 5 Զղջացել։

կենայ Փարբի գեղը, մի քանի կոռ աւելն հաշիւ կը քցեր՝ համ էն փողը դուս կը գար, համ էլ իր ոտի քրտինքն կը մնար։ Չէ՛, մեր աղայ խելօք տանուտէրը ծանրագոգոթի իր տեղը նստեց. ինչքան մենք իրան քարոզեցինք՝ իլլած [1] չէլաւ, մովլովին էլ իր մարդկանց բերանովը հասկացրեց՝ անկաջի քամակը քցեց։ Մին էլ, ջանմ սա՛ն [2], մովլո՛վ, արի՛ Փարբի նստի ու տանուտէր փոխելու հրամանը տո՛ւր։ Նոր ոտին ձեռին ընկի՛, նոր պոչին դլխին արա՛, էլ ի՞նչ կո՛դտես. փող ունես՝ մէջ տեղ արի։ Է՛, դու ինձ ասա՛, Խէչա՛ն, էն նեղ ժամանակը ո՞ր տեղից պտի փող ճարէր, առաջուայ իրաւունքը ձեռին պտի ունենար, որ քարի տակիցը հանէր. ընչանք մեր տանուտէրը փող գտաւ, մովլովին իր կողմից երկու ուրիշ տանուտէրացուք մէջ տեղ հանեց։

— Վերջը՞։

— Վերջն էն, որ գեղն երեք կտոր արեց. մի մասը հնին էր ուզում, ճնացած երկուսն էլ մհկհլներին։ Ղօչաղ [3] մովլովին էլ ամէն մհկհլին 300-ական մանէթն առաւ, երեքին էլ խօսք տուեց. մին էլ էն լսեցինք, որ Փարբու պէս մի բուռը գեղն երեք տանուտէր ունի։ Աշխարհքը ճնաց ղարմացած, թէ էս ի՞նչպէս կարելի ա, համա երկու շաբթից յետոյ՝ ամէնքն էլ գլխի ընկան։ Դու մի՛ ասիլ մովլովին ընէնց ա սարքում, որ էդ երեք թայֆէն [4] էլ գալիս խընդիր են տալիս, թէ գեղը ձեռաց գնում ա, տանուտէրների մէջը համաձայնութիւն չի ընում, Աստծու սէրը, մովլովը խնամք անի իրանց, էլ յետ երեք տանուտէրից մնին թողայ։ Կրկին լսեցինք, որ էն երեք խեղճ հներին էլ հանել ա, մի ուրիշն դրել ու 400 մանէթ էլ էս նորիցն առել։ Բանն ընէնց դուս եկաւ, որ էս նոր ընտրուածն էլ անհասկացողն մնին ա ընում, երեք չորս ամիից յետոյ դրան էլ գեղացոնց խնդրքովը դուս ա քցում ու էլի յառաջուան մեր խելօքին գնում ու 300 մանէթ էլ նոր առնում։ Դրուստ [5] դրա համար ա ասած՝ թէ Էրմանի վէրմազ դօշկուզի, եւ յետը թօփուզի՝ վէրաբ օթուզի. (Հայը ինքը չի վճարիլ, գաւազանի հարուածները կուտի ու 9-ի փոխարէն 30 կը վճարի)։

Լսի՛մ լսեցիր, Խէչա՛ն, որ մենձի ասածը պտի կատարինք, թէ չէ գլխներս կը ցաւի. դու էլ ինձ լսի՛ր, մովլովի աչքը վրէդ մի՛ ծռիլ. Սաքոյին փեսայ շինի, Աստուած էլածն օրհնի։

1 Ձար։ 2 Կեցցէ։ 3 Քաջ։ 4 Կուսակցութիւն։ 5 Ճիշդ։

— Լշ բան մնաց։

— Լշ ոչի՛նչ։

— Դէ հիմի դու ինձ լսի՛ր, վեր կաց գնա քո Սաքոյին ասա՝ համով հարկաւորով [1] որտեղից եկել ա՝ դէնը գնայ, օխտը քօռ աղջիկ ունենամ՝ մինն իրան չեմ տալ։ Դրա համա՞ր էր մեզալն թուղթըն ձին համար բերել. հէնց իմացաւ, թէ երկու ոսկին որ իրան տուի, էն ա իր սրտին էլ սին էլաւ. երբ որ ես մեզալ քաշ անեմ, թող էն օրն էլ ինքը պարծենայ՝ թէ ինձ ողորմութիւն արեց, ինձ համար մեզալ բերել տուեց. ես էն ոսկիքը գլխից ռազ անելու [2] համար իրան սևցրի [3], հիմի հասկացա՞ր, տանուտէրը Սիմո՛ն։

— Հասկացա՛յ, համա լաւ չես անում, Խէչա՛ն, մեղքը քո շլինքը։

— Հիմի ուրիշ բան լսի՛ր, էս ա Ութօրէքը վերջանում ա, հինգ վեց օրից խաչախպէր ես, Սաքոյին բան չասես. մի իրիկուն հարսանիքը կնստացնենք, մկ էլ օրն ամէնի հաչոցն էլ իմ տանից կը վերանայ. հիմի՛ բարով եկա՛ր։

Թաք ըտէնց ըլլի, խեղճ ա էն աղջիկը, ծակ բերանը նրա վրա խօսայ։

— Ա՛մէն կխօցը յետ դառնալը նամարդութիւն ա՛, [4] ոչի՛նչ, ուրիշ հնարք գործ կը դնենք, տատմէրն յոյս ա տալիս, վըճռեց Սաքօն տանուտէրից Խէչանի բացատրութիւնը լսելուց յետոյ և ձին հեծաւ ու դէպի Սև Ջրի գլուխը։

ԻԶ.

ՏԱՏՄՕՐՈՐԴԻՆ

Մի քանի օր Սաքօն մնածեց հանգիստ տալ իւր երերեալ և տատանեալ մտքին. տանուտէրը խաբել էր, որ Խէչանի ասելով նա էլ էս տարի իր աղջկանը պսակելու չի, ուրեմն շտապելու կարիք չկար։

---

1 Ճարպանօք։ 2 Հեռացնելու։ 3 Գլխովը տուի։ 4 Տմարդութիւն։

Այս ապահով դրութեան մէջ նա մի շաբաթի չափ, համբերեա՛, մոռացաւ Աշտարակը, Խէչանին, իւր հարստութիւնն և այլն։

Մի երեկոյ՝ մովսովի մօտ եղած ժամանակը, յանկարծ խօսքը կրկին Խէչանի վերայ եկաւ, մովսոյին յիշեց Սաքոյի խոստումնքը, զարմացաւ նրա թոյլ շարժուելու վերայ, նախատեց, որ Խէչանին թակարդ ձգելու տուած խօսքից յետոյ՝ ահա երկու ամիս է անցել, մեզալն էլ ներկայացրեց, բայց այնու ամենայնիւ ոչինչ օգուտ դեռ չի դուրս եկել։

— Շատին համբերել ես՝ քչին էլ համբերի, գլխիդ մատա՛ղ, Սաքօդ էն ջանավարը [1] չի, որ բան մոռանայ, կամ որսը ձեռիցը բաց թողայ, ինպէս գիտեցիր, որ Խէչանը ճանգերիդ միչին հուպ տուած ունիս։

Ընդամէնը մի քանի խօսքերով Սաքօն ցանեց մովսովին ու շտապեց դուրս գալ։ Մի ահագին գաւառի կառավարիչը չկարողացաւ հասկանալ, որ իր սիրելին իրան խաբում, արածացնում էր։

Արէս ժամ չէր անցել, որ Սաքօն սրտատրոփ, մեռելի գոյն առած, աչքերն արեւնակալած, շփոթութեան մէջ կրկին ընկաւ մովսովի մօտ։

— Աղայ ջա՛ն, գլխիդ մատա՛ղ, օգնի՛։

— Ի՞նչ կայ։

— Ես կէս սհաթ յառաջ քարոզում էի, որ համբերես, բայց բանն ուրիշ տեսակ ա էլել, թէ էս երկ՛օրը Խէչանին հաւի ճուտի պէս մեր ձեռումը կարացինք բռնել՝ շատ լա՛ւ, թէ չէ՝ դրի [2] պէս դուս կը թռչի ու մեր աշխատանքը ջուրը կերթայ։

Ի՞նչ ես ասում, ո՞ւմ ձեռիցն ա դուս թռչելու՝ իմ։

— Չա՛, գլխիդ մատա՛ղ, հա՛, քո՛ մի սաղ մհալե տիրոնջ։

— Ի՞նչպէս։

— Երկար հարցմունքաններ մի՛ անիլ, որ ասում եմ՝ դու էլ աւատա, իմացի՛, որ Սաքօն մի տականի [3] չի, դու էս սհաթս մի բարովագիր գրի՛ էջմիածին մեր մհալե գործակալ վարդապետին, խնդրի՛, որ ինչ կուզե անի, միայն թէ աշտարակցի Խէչանենց Խէչանի աղջկայ պսակը քանդի. քո կողմից մի հրաման էլ Աշտարակու տանուտէրին գրի, որ բան ա՝ եթէ վարդապետը քո խնդիրը չկատարեց, հա թէ որ տէրտէրը չո՛ւզենայ գործակալի հրամանին

---

1 Դաղան։ 2 Թռչունի։ 3 Միամիտ։

լսելու, ամուսներն եկեղեցու դուռը փակի ու չթողայ պսակելու։

— Չեմ հասկանում, Սաքո՛, ի՞նչ ես ասում։

— Վարդապետին դրի՛, որ դու լսել ես, թէ էս գործի մէջն արնի բան կայ, մարդասպանութիւնի նշաններ են երևացել ու դու միտք ունես, լաւ քննել իմանալ, յետոյ գործին ձեռը տալ։

— Ի՞նչ ես ասում, նկատում եմ, որ դու խելքիդ չես։

— Գրի՛, որ էս բաներն իր մէջ թաքուն խոստովանքի պէս պահի ու իր կողմանէ հրամանի մէջը դրի տէրտէրին, թէ ինքը լսել ա, որ Խէչանի աղջկայ պսակի մէջ չհաստութիւն կայ՝ պրա հա մար ա ասպելում։

— Պարզ խօսի՛ր, այ տղայ, Սաքո՛։

— Գրի՛, որ սաքի դու էլ քո կողմից նրանց չհաստութիւնը լսել ես ու իրան գործակալին յայտնում ես, համ էլ դու չես ցանկանում, որ էս պսակը գլուխ գայ։

— Ի՞նչ եղաւ քեզ, Սաքո՛, այդ գլուխդ ասա՛, որ քեզ տեսնում եմ, մի փոքր հանգստացիր, կարգով ասելիքդ պատմիր, որ ես էլ բան հասկանամ։

— Ո՞նց էրկար ըլնի, աղայ ջա՛ն, ինձ երկար հարց ու փորձ մի անիլ, ինչ որ իմդրեցի՝ շուտ գրի՛ ու ինձ տո՛ւր, ասում եմ, որ թէ էս երկ՛օրս Խէչանին չբռնեցինք, մեր բանը շատ վատ կերթայ, հիմի էլ խօսացնելու վախտը չի. ես հէնց հիմի կերթամ էջմիածին, ինչ որ պէտքն ա՝ կանեմ, մեր առաջին գործն էս պտի ըլնի՛, շո՛ւտ, սհաթ կորցնելու ժամանակը չի։

Սաքօն էրկեց մովսովի առաջին ու ծունկը համբուրեց և այս քարտէրտ մարդու աչքերին արտասուքի կաթիլներ երևեցան։

— Ա՜խ կա՛յ, վեր կա՛յ, հրամայեց մովսովը, իսկոյն խընդրածներդ կատանաս։

— Դի՛է, ընչանք քո գրիլ պրծնելն ես էտեղ կըլնեմ, ասաց Սաքօն ու դուրս ընկաւ։

— Մովսովը մի քանի անգամ ուսերը վեր քաշեց ու Սաքոյի ապիկութեան տակ ոչինչ երկար մտածել չուզեց. — երևի մի վատանգ կայ, որ ուզում է Սաքօն յառաջն առնել։ Այս խօսքերով նա կանչեց գրագրին ու հրամայեցրեց թէլեգրի։

Ինչպէս վերն ասացինք, կէս ժամ այս գործողութիւնից յառաջ Սաքօն շատ հանգիստ սրտով խաբից մովսովին՝ Խէչանին թակարդ ձգելու վերաբերութեամբ։

Նա խորամանկ ժպիտով դառնում էր ինքնաբաւական դէպի իւր գիւղատունն և ճանապարհին ծիծաղում մովսովի դիւրահաւատութեան վերայ։

— Ո՞նց չէ, գոզդ գէմ արա՛, թէ ես Խէչանի աղջիկը կատնե՞մ՝ դու շատ խէր գուս կը տանիս. մենծ բան էր, որ մովսով ես. քեզ պէս մի քանիսին ենք տեսել, թէ մի քիչ էլ շատ կը խօսաս՝ ատաճներիդ կծիկը բաց կանեմ, մէջը կը խճճուիս ու էլ չես կարող դուս գալ։ Բայց թէ որ Աստուած գլխիս կը խռովի, Սաքօ Սաքօ չի ըլնիլ մաքիս պրածը գլուխ չեմ կարող բերի՛լ, էն վախտը շլինաք ծառած՝ փչշկոց ձողըակ կըլնեմ, երկուսս մին կը ընենք, մեր աղայ Խէչանի բօղազին[1] հէնց հուպ կը տանք, որ աչքերը գագաթը կը թռչին։

Այս խօսքերով նա տաքը ներս գրեց գիւղատունն և նրա տասնչորս տարեկան որդին՝ ընչպէս գեանից՝ բուռնաւ աշտարակի տատմոր տղեն։

Այս տատմէր, կամ մանկաբարձ կոչուածը տղայմարդի նման մի միջահասակ կին էր Աշտարակումը։ Իւր այրիանալուց յետոյ մանկաբարձութեան մէջ գործնականապէս վարժուել էր և ամէն տուռն իւր համար բացուել էր։ Նա չէր նմանում իւր համահասակ ներին, ոչ ոքի մօտ նրա սև կատեայ քնթկալը քթի ծայրին չէր դնել՝ ընչպէս առհասարակ կանացի ամբիտածութեան նշանն է. իւր կնքահօր մօտ ևս բարձր ձայնով էր խօսում և փոքր խոզերի մէջ այնպիսի խեղկատակ բաներ էր գործ ածում, որ ծերունիներին և պատկառելի անձանց դժուանքն էր գալիս, իսկ պատանիների և թևերևամիտների ծիծաղը շարժում։ Նուռով տատմէրն իւր շրջակայքը ժողովեց դիւրաշրջիկ երիտասարդներին և նրանց հաճոյքներն ի գլուխ բերելու էր ծառայում։ Ես չեմ ասում, թէ Աշտարակումն այդ ասպնական բարոյականութիւնը խանգարեալ դրութեան մէջ էր. մեծ մասամբ տատմէրը պտրպտում էր ազատ տղայք ու ազատ աղջկներ սիրահարեցնելով և նոցանից միմեանց մէջ խօսքեր տանել բերելով՝ քան թէ սրբութեան դէմ մեղանչելով. թեպէտ ըստ առածին «նրուսաղեմ էլ առանց շների չէր»։

Մի քանի տան խաղաղութիւնն այդ անպիտան տատմեր չընորհիւ վրդովուեցաւ, նրա արուեստն ակնյայտնի խմացուեցաւ և նա պարկեշտասէր աշտարակցիների տներումն դժուարին երևեցաւ։

Ընդհուպեւ տատմէրը լեզուապարութեամբ էր պարապում՝ սի-

---

1 Կոկորդ։

ըևլե բարեկամների մէջ ատելութիւն էր սերմանում, միմեանց դէմ կռուացնում էր, լաւեսութիւն էր անում և ուրիշների տան գալստեան դուռս խլում։

Սոյն իսկ կնոջը վարձել էր Սաքօն, լաւ էր կարդել Խէչանի տան վերայ՝ Հեղնարի սիրտն իւր վերայ տաքացնել և Սմբատին ատել տալու պատուէրներ էր տուել մեծ մեծ պարգևներ խոստանալով։

Ահա այս կնոջ որդին էր, որ գիւնեատանը գիմաւորեց Սաքօյին։

— Ի՞նչ կայ, խէ՛ր ըլե էս վախտ էսպէս անժամանակ։

— Մէրս ասում էր՝ գլուխդ էդ տեղ թրջե՛ էս տեղ վեր արա՛, էս երիկուն Խէչանի ալջկայ հարսանիքը նստում ա, էգուց պտի պսակուի։

— Ի՞նչ ես ասում, զալմայաւ Սաքօն, Խէչանն էս տարի ալջկանը պսակելու միաք չունի։

— Չէ՛, աղայ ջա՛ն, Թագաւորը Մոլնի գնաց, ես դէմն եկայ։

— Նաս նո՞ր էք իմաց տալիս, գոչեց Սաքօն կատաղաբար։

— Ա՛ւ ով չէր իմանում, տաշտապրէք էլ չեն արել, Հարսանեքի մացուն էլ առանց գափ ա գուռնի են մորթել։

— Գնա՛, կորի՛ գժոխքի տակը, բարկացաւ Սաքօն և առանց աղայի վերայ ուշք գարձնելու՝ դուրս ընկաւ ու վազեց մովլովի մօտ։

Հեռւանքը մեզ յայտնի է՝ Սաքօն մովլովից երկու թըղթերը գրելու խօսքն առած՝ էլ յետ գիւնեատուն վազեց։

— Յետ գա՛ս էս բոպէիս, գնա՛ Աշտարակ, թող ոչ ով չիմանայ, որ դու էս կողմն ես եկել, թէ մի մարդ էս բանի հոտն առնէ ա, ձեր տունը ձեր գլխին կը քանդեմ. մնդը ասա՛ ոնց կուզի անի՝ իրան քցի հարսանքատուն, հարսին բալքի տեսնի, բալքի կարողանայ իմ տասնեակս գլուխ բերել. ինքը գիտի, ասա՛ թող ինչ որ անց կենայ՝ աչքից չվախցնի։ Ահա, առ էս երկու մանէթը, տար մնդը տո՛ւր, թող իրան քնթկալաղին անի։

Այս խօսքերով ձանապարհ դրեց Սաքօն տասմոր որդուն և ինքը լերդապատառ տուն ընկաւ կրկին մովլովի մօտ։

Համարեա թէ յափշտակեց և ոչ հաւեստութեամբ առաւ մովլովի ձեռքից նուիրական թղթերը, թռաւ ձիու քամակը և երեան ուղղեց դէպի Էջմիածին։

ԻԸ.

ԳՈՐԾԱԿԱԼ, ԿԱՄ ԲԱՐԵԿԱՐԳ

Ձիւնն երկիրը պատած էր, գիշերը բաւականին պարզկայ[1] էր, երկնքումն ամպի կտոր չէր երևում, լուսինն իւր բոլոր շնորհքը, կարծես, այս գիշեր կամեցել էր ցոյց տալ նորա փայլը սփռուելով ձնի թերթիկների վերայ, գիշերուան մթութեան մէջն էլ պէծերը մարդու աչքեր խաղում էին, ճանապարհը լաւ կոտրուած էր և լուսնի լուսով պարզ երևում էր. լուսինն ամբողջ աշխարհը բռնել էր, ամէն շունչ կենդանի իւր համար մի ապաստանարան էր գտել՝ մէջը մտել, ոչնինչ շշուկ չէր խանգարում բնութեան մեռելութիւնը։ Քաղցած գայլերն էլ, երևի, իրանց հաւեզ որսի հոտը չէին առել Արարատեան ընդարձակ գաշտի վերայ, որ թողել հեռացել էին Էջմիածնի տափարակի վրայից, միմիայն Սաքօյի ձիու ոտի ձնռուոլիւնն էր, որ պարզկայի շնորհիւ կոտրուած կիթառի նման միանուագ ծորում էր։ Գիւղերին մօտեցած ժամանակն երբեմն այս միակերպութիւնը ընդհատուում էր գիւղական գամփռների ոռնոցներով, որոնք ատելի օրուշի[2] էին հաչում, քան թէ մի որոշ նպատակաւ։

Այս ամէնի վերայ Սաքօն ուշք չէր գարձնում, նա մտքով գործակալի մօտ իւր փաստերն էր յառաջ բերում, իւր խօսելիք ձառն էր պատրաստում. իսկ կրնկներով խեղճ ձիու փէնչոցը ոտքերի ձայնի հետ խառնում։

Բաւական հեռու տեղից լուսնի պարզ լուսով վերջապէս Սաքօյի աչքին ընկաւ Էջմիածնի գմբէթի փայլուն գլուխն և նրա ձեռքն ակամայից հայ — քրիստոնէի սովորութեան ազդեցութեամբն երեսին բարձրացաւ։

— Սուրբ Էջմիածին, քո գօրութիւնն մատաղ, դու էս բանը գլուխ բերե՛ս։

Սաքօն ոչքան և անպարկ ու կամակոր անքանպ, ոչքան և ամէն սրբութիւն ոտքի տակ տուած անխղճի մէկը, ոչքան և համոզմունքը խախտուած, այնու ամենայնիւ նա ապատ չէր նախապա-

---

1 Աստղիկ ցուրտ։ 2 Անդադաստակ։

շարմունքից, նա յաճախ հաղորդութիւն անելուս էլ սրբերի օգնականութիւնն էր խնդրում:

Խուճապին դիշեր էր անցել, որ Սաքօն իջաւ Վաղարշապատի հրապարակում շինած հասարակայ դոմի դռանը, ձին կապեց և իւր քայլերն ուղղեց դէպի Վաղարսապատ, ուր բնակուում էր դործատկալ Հայրսուրբը:

Դռնապանը նոսած դուռն քամակի քարէ նստարանի վերայ, խորթուում էր երազների մէջ. մեծ երկփեղկեան դուռն ի հարկէ վաղուց փակած էր:

Սաքօն մի երկու անդամ բաղխեց դուռը:

— Ո՛վ է, յօրանջելով աչքերը տրորեց դռնապանը:

— Դուռը բաց, մդպի՛, գործակալ Հայրսուրբի մօտ եմ եկել մովսէսից վաղ թուղթ ունիմ տալու:

— Դու ո՞վ ես, եռասաւոր ե՞ս, ի՞նչ ես:

— Ես միհրեան Սաքօն եմ:

— Ախր՛, փնթփնթալով դռնակը յետ քաշեց դռնապանը, շա՛տ կը զարթնացնես:

Սաքօն բարձրացաւ պաշտամունքի վերայ և բաղխեց գործակալի սենեկի դուռը:

Հայդ թէ ի՞նչ գործ ունէր գաւառի գործակալը Վաղարշապատում, ո՞ր է նրա բնակութեան տեղը, ի՞նչ է նրա գործն և յարաբերութիւնը ժողովրդի հետ՝ մենք թողնենք Սաքօյին դուռը բաղխելուս և այդ բանի վերայ փոքր ինչ բացատրութիւն տանք:

Գործակալ կամ բարեկարգ՝ սրա են ամբողջ գաւառի հոգևոր գործերի անմիջական կառավարիչները, սրա են առաջին դուռն, ուստի պէտք է մտաք գանենք դէպի մեր հոգևոր բարձրադոյն իշխանութիւնը. սրա են քահանաներից յետոյ ժողովրդեան հոգևոր ներկայացուցիչները, ժողովրդին առաքինութեան և աստուածպաշտութեան ձանապարհը բերողները, գիւղացոյ հոգևական յաւերին գարման տանողները, նրանց նեղութեանց մէջ միխիթարողները և միևնոյն ժամանակը ժողովրդից հոգևոր իշխանութեանը հասնելիք պատուոյ և ամէն տուրքերին տացողները:

Սրա պրպիտնուէս պաշտօնի մէջ ընդհանրապէս վարդապետներ են նշանակուում և կոչուում են գործակալ, իսկ հեռաւոր տեղերում՝ մարդաձանաչ. Ներսէս Ե. աշտարակեցի Կաթուղիկոսը գեղծում և մարդաձանաչ եպիսկոպոսներ արեց և քահանաներ կարգեց, որոնք կոչուեցան բարեկարգ.

տեղ տեղ էլ բոլորովին աշխարհականների յանձնեց այդ իրաւունքը՝ հոգևոր գործոց վերատեսուչ անուամբ:

Ներսիսի մահից յետոյ դարձեալ նախկին կարգը մտաւ, աշխարհականներն ու քահանայք յետ մղուեցան և դարձեալ վարդապետներն իրենց պաշտօնը ձանաչեցին, թէպէտ ոչ առանց սակաւաման բացառութեան. մի քանի տեղեր քահանայք բարեկարգ մնացին:

Ներկայ Վ.Ի Հայրապետը նոյնպէս քահանաներին վարդապետներից գերազանց: Այս մասի մէջ խոհական մեծ դիտապետայ անօրէնութիւնը յայտնելի են: Փորձը շատ անգամ ցոյց է տուել, որ միշտ քահանայք և աշխարհականք աւելի սակաւ պահանջելովն էլ վարդապետներից շատ արդիւնք են ցոյց տուել:

Էջմիածնի միաբան վարդապետը գործակալութիւն ստանալուն պէս ձիաւորուում էր, մի թուանքչի էր վերցնում իրեն շարունակ ծառայելու և իւր բնակարանը փոխում էր էջմիածնական խցից գաւառի մէջ գանուած մի վանք, իսկ եթէ այդպիսին չկար՝ իւր ընտրած մի գիւղ իւր նախածանօթներից մէկի մօտ, կամ ուղղակի երեսփոխանի տունը:

Այդ տեղերից նա աւելի յարմարութիւն էր ունենում ձիու վերայ նստած՝ շարունակ իւր գաւառի գիւղերն այցելելու, իւր հոգևոր զաւակացն ուրախացնելու:

Այժմն մի գիւղ գալուն պէս՝ երեցփոխը քահանաներով և մի քանի իշխաններով դիմաւորում էր գործակալ Հայրսուրբին, ընդունում նրան և իւր տանն իջեցնում:

Հայրսուրբը քննում էր բոլոր հոգևոր գործերը, ժողովում արդիւնքները, ուղարկում ուր հարկն էր և մի քանի օր մեծ պատիւներ ստանալուց յետոյ ուղևորուում դէպի մի ուրիշ գիւղ:

Այս ի հարկէ աւելի ամառներն է պատահում, ձմեռն ընդհանրապէս Հայրսուրբն իւր կայսրանումն է և գործ ունեցողները նրա մօտ են գնում:

Մեծ են գործակալ Հայրսուրբների պարտաւորութիւնները, դժուար է և սրանց դրութիւնը: Իբրև վարդապետ, հոգևոր հայր, նոքա պէտք է ժողովրդին ոչ թէ նեղութիւն պատճառեն, այլ և տեղն ընկած միջոցը ձեռքից եկածին չափ իւրեանց կողմից օգնութիւն հասնին: Բայց իբրև գործակալ, իբրև հոգևոր շահերի պաշտպան՝ նոքա պիտի նեղացնեն ժողովրդին, ստիպեն շատ արդիւնքներ տալ, աշխատին վանքական եկամուտները շատացնել:

Ահա այն դժուար դրութիւնը, որի մէջ կաշկանդուած է մեր հայրսուրբը: Բայց տարաբաղդաբար պէտք է պարզ խօսենք, որ շատ հաղիւ կը գտնուի այնպիսի բերեխիղճ գործակալ, որ իւր երկու պարտաւորութիւնն ևս յիշելով, աշխատի իւր հեղահամբոյր բնաւորութեամբ, իւր ազգու քարոզներովն, իւր անչահասէր յատկութիւնովը, մի խօսքով իւր կեանքի օրինակովը հեշտացնել, անզգալի անել իրեն յանձնած հօտի ծանրութիւնը:

Այո՛, ժողովուրդը ճնշուած է, ինչպէս տեսնում ենք, մովրոմների հարստահարութեանց ներքոյ, շատ անգամ զանազան դրժբաղդ դէպքերի՝ երաշտութիւնների, մարախի և այլ ձախորդ պատահարների պատճառաւ. նա իւր գերդաստանն անգամ դժուարատնում է կառավարել, բայց եթէ գործակալները գիտենային վարուել բարեպաշտ ու ջերմեռանդ Հայ ժողովրդի հետ, վերջիններս իւրեանց բերանից կը կտրէին և իւրեանց հոգևոր հայրը կը տային:

Ցաւօք սրտի պիտի ասեմ, որ վերոգրեալ եղանակաւ սակաւ է գործ տեսնուում. գործակալն երևում է դաւառումն իբրև մի երկրորդ մովրով. իւր հետ ունենալով թուանքչին՝ շատ տեղ նրան եասավուլի փոխարէն է գործ դնում: պաղլ, պսակահարկ, հոգեբաժին և այլ ամենայն վանքական հասանելիք շատ գիւղերում գործակալն առնում է կրկնապատիկը. մանաւանդ պսակահարկ և հոգեբաժին պահանջելուս շատ նեղացնում է խեղճ ռամկին:

Ես ականատես եմ եղել մի երկու հայրսուրբների, որոնք արտասուք են կաթեցրել թշուառ գիւղացու աչքերից. հազար անգամ ողբմելիքն երդուել են իւրեանց սուրբ կարգովը, որ էլ աւելի չունեն՝ ինչքան բերել են, բայց հայրսուրբը չի հաւատացել, լսել անգամ չի կամեցել, բարկացել և դուրս է վռնտել:

— Գնա, ո՛ր տեղից կուզես ճարիր, բեր աթոռահարկը տո՛ւր և յետոյ պսակիդ հրամանը կամ ննջեցեալդ եօթը կատարելու իրաւունքն ստացիր. եթէ իմ ուզած փողը չես բերիլ, որդիդ, կամ եղբայրդ կը մնայ անպսակ և ննջեցեալդ կը զկուռի դրախտից: Մեծ բան է, թէ պարտքի տակ ես ընկել. որտեղ 100 մանէթ պարտք կայ՝ թող 10-ն էլ աւելի լինի:

Ահա գործակալ հայրսուրբի պատասխանը, ահա իսկ և իսկ այն խօսքերը, որ գրագիր հերոսը մեխեց գիւղացի տանուտէրի մօտ:

Ի՞նչ անի խեղճ գիւղացին, նրա եղբայրը միթէ թուրք է, որ անպսակ մնայ, իսկ նրա տղեղ ննջեցեալին եօթը չկատարելով դրախտից զրկելը նրա վերայ սարսափ է բերում. գործակալ հայրսուրբի հրամանատարը քահանան իրաւունք չունի ոչ մի մեռելի եօթը կատարել մինչև որ աթոռահարկը վճարելու ապահովագիրը չբերեն: Զա՛նը դուրս գայ, թող աղքատը դնայ որտեղից կուզէ, ճարի, տայ. բայց ո՛ր տեղից ճարի, օտար գիւղ, օտար մարդիկ. նա հինգ մանէթ պարտք արած՝ ծոյն է դրել, մի օրուան ճանապարհը բքի ու ձիւնի պատճառաւ երկու օրն է ոտքով եկել, փոքր մնաց բքից խեղդուում էր և այժմ ի՞նչպէս վերադառնայ գիւղն և գայ:

Ճարը հատած՝ քաշուում է խղճուկը մի կողմը, գլուխը պատին դէմ տալիս և իւր սրտի կսկիծը լացով աշխատում թեթևացնել:

Գործակալ հայրն այս ամէնը տեսնում է, նրա սպասաւորը հեռուից հետևում է գիւղացու գործողութեանցը: Ներք սուրբ հայրը հաւաստիացաւ, որ մարդու մօտ արդարև թագցրած փող չկայ, նա ուղարկում է իւր հաւատարմին՝ իբրև սրտացաւ տեղեկանալ մեր լսկանի վշտերից և կարեկցել նրան:

— Ախպեր, ընչի՞ես լաց ըլում, ո՞վ ա քեզ վերաւորել, մօտեսնում է նրան վարդապետի ծառան:

— Խուրբա՛ն քզվի, իմաՀ[1] էնեմ որ չի լամ, պատասխանում է Աբարանցի ռամիկը, չըմ գինայ[2] դո՞ր[3] կորսուիմ: էկեր ենք խըտ[4] մըր խայրսուբ, ծառայեմ էնոր աջուն, ձ'իժս[5] կարգելու խրամանք կուզենք (կամ հոգեբաժին), եղած չեղած մըր քիսի փարան, մըր քեռսիր տեղով, խինդ մանէթ էր, մկայ տաս մանէթ կուզայ՝ խրատանք չի տայ. ես յո՞ւստ[6] ճարեմ: մըր գեղ չենք, յորթա[7] գըլուխս ի քարէ քար տինք[8], գանէինք, իդա[9] տեղ լէ մըզվի ոչ բռնեկամ, ոչ ճանանչ ունենք, իդա ձուն ձմռան, իդա բօրեազին[10] ես կըրնամ մկկ լէ գառնալ մըր գեղ ու գալ, սըր կարաբե լէ գինա, օր փշուրմը[11] մացաւ[12], բուք մըզվի խեղդեր:

— Որ գեղեցն ես:

— Աստուածընկալու[13] ենք, խուրբա՛ն, մըր վանք քո մուրտան[14] ի տայ:

— Գիտես, ախպե՛ր, գթած անճանօթը, սիրտս ցաւեց քեզ համար, ուզում եմ քեզ օգնեմ, թէ որ դու հայրսուրբին կը խնդ-

---

1 Ինչպէս: 2 Չգիտեմ: 3 Ո՞ւր: 4 Մօտս: 5 Որդիս: 6 Ուսո՞ւմ: 7 Որ: 8 Տայի: 9 Այս: 10 Բուք: 11 փոքր ինչ: 12 Մնաց: 13 Աստուածընկալ մի վանք է Աբարանումը, որի անունով և մօտի գիւղն է կոչուում: 14 Մուրազ, խնդրուածք:

րես, որ նա գրի ձեր տէրտէրին, թէ ընչանք քեզանից հինգ մանէթ չառնի, քո հարկը չկատարի. ես քեզ հինգ մանէթ պարտք կը տամ, տար գործակալին տուր, հրամանդ առ, գնա՛. խեղճ ե՛ս, ղարիբ ե՛ս: Ես քեզ էս լաւութիւնը կանեմ, դու էլ ինձ համար եղից՝ պանրից՝ հաւից՝ ինչ կուզես փէշքեաշ [1] ղրկի փողի հետ:

— Օտացդ [2] մեռնիմ, աղա՛յ, յէսիր [3] կը թափես, վըր իմ ջուխտ աչուէ [4] թո [5] էղնի, դու ղմըր բան եօլայ տար, մընք լէ յօրթա գացինք մըր գեղ, իմալ էղնի, ձարենք գքո փարէն, տէրտրոջն ի տանք, խեթ լէ խլինք նուգի [6] եղ, երկու խիտ [7] պանիր քըզի փէշքէշ. համա դու գքու անուամ մըզի բախշա՛, յօր իմանանք թէ վըր [8] կուշտ խրկենք:

— Ա՛նաս չունի, դու ղրկի հայրսուրբի անուամվը, ինձ կըհանի:

— Աղէկ [9], խուրբա՛ն արևուդ:

Գիւղացին տասը մանէթը գործակալին տուեց, հրամանն ստացաւ, բայց մի ուրիշ թղթի վերայ գրած էր, որ մինչև այս գրաբերից հինգ մանէթ փող, հինգ նուգի եղ, երկու լիտր պանիր չըստանայ՝ հարկը չկատարի. ստացած րոպէին էլ իրան հասցնի:

Մենք ի հարկէ իմացանք բանի որպիսութիւնը, Աբարանցու անճանօթ բարերարը՝ վարդապետի ծառան իւր տիրոջից հինգ մանէթ ստացաւ ու գուրս գնաց, իւր անունովը գիւղացուն պարտք տուեց, իւղ ու պանիրն էլ տոկոսիք ստանալով:

Ահա իսկ և իսկ մովսովի և Սաքօյի մէջ կատարուած ոսկիներ փոխելու նկարագիրը չէ՞, ընթերցո՛ղ, քեզ եմ հարցնում: Հայր գործակալն ինչո՞վ է զանազանուում մի շահամոլ մովսովից:

Գուցէ կը կարծէք, որ այդ բոլոր ստացած հասոյթներն և աթոռահարկը գործակալը ճշդութեամբ տեղ է հասցնում: Քաւ լիցի՛, շատ կը սխալուիք: Էջմիածնապատկան պտղի կոչեցեալ տուրքի քանակութիւնը որոշուած է, իսկ մեր հայրսուրբը կրկնապատիկն է ստացել. աթոռահարկին իւր ազատ կամքին է թողած՝ ստանալ իւրաքանչիւր մարդուց ըստ կարողութեան առանց ճ՛նշելու և նեղութիւն պատճառելու: Եւ որպէսզի ոճիր կամ գողութիւն չը գործուի, պատուիրած է գործակալներին տէրտէրների անունով

1 Պարգև, 2 Ոտքերիդ, 3 Գերի, 4 Աչքերս 5 Թող, 6 Ջաի է, 7 Լիտրը, 8 Որ, 9 Լաւ.

տուած պատկի կամ եօթը կատարելու հրամանագրերի մէջ նշանակել ստացած աթոռահարկի որքանութիւնը:

Գործակալն իսկութեամբ կատարում է այդ կէտը. բայց ի՛նչպէս. — փոխանակ ստացած տասը մանէթի՝ նա պատուիրում է իւր գրագրին երեք մանէթ նշանակել:

Ծիծաղելի էր մի անգրագէտ գործակալի արարքը. գիւղացու մօտ իւր գողութիւնը ծածկելու համար նա սկսում էր երգելով ասել այրուբենը. ո՛ր գրի վերայ կանգնեց ու այն տառը մի քանի անգամ կրկնեց, այդ ասել էր, թէ այսքան մանէթ նշանակիր:

Ատուածոյ տուածից ոչ մեր քահանայքը կարդալ գիտեն, որ տուած փողի քանակութիւնն իմանան և ոչ գիւղացին կը համարձակուի գանգատել: Տէրտէրը հաշիւ բրդդելով՝ գտնում է իրեն կարևոր տողերը. «Հրամայեմք ձեզ պատակել կամ կատարել զեօթնոյ:

Մենք մեր գործակալի գիտութեան չափը վաղուց տեսանք՝ Թէչանի աղջկայ պսակն արգելելու համար գրած հրամանագրերի մէջ, և եթէ ինքը գործակալն այսպէս՝ աւելորդ է երևակայել, թէ սրանց ձեռնադրել տուած քահանայքն ի՞նչ կը լինին:

Ամեն յիսուն տնաչափ գիւղում երկու երեք քահանայք կան. սրանց ամենքի ուսումն էլ, համարեա՛, հաւասար է. քանի մի տարի տէրտէրի մօտ ութ կանոն Սաղմոս, Կտակարան, Ժամագիրք ու Շարական քըքրելուց յետոյ, նրանք անգիր սովորում են եկեղեցական պաշտօնատարութիւնքը. այնուհետև ո՛վ շատ տուեց գործակալին, նա շուտ է տէրտէր դառնում, պարապ տեղ, կամ պահանջ կայ թէ ոչ, հարցնել պէտք չէ:

Շատ անգամ, երբ գործակալը տեսնում է, որ քահանայացուաց սղութիւն է, ինքն է հարց ու խնդիր լինում և ո՛ր գիւղի մէջ գտնում է այբո-բեն գիտեցող մէկին, կոչում է իւր մօտ, յայտնում է նրան, որ ինքը լսել է նորա բարի համբաւը, նորա օրինակելի վարք ու բարքն և ցանկանում է քահանայացնել:

Այնուհետև սիրացուն պարտքի տակ է ընկնում, գործակալ հայրսուրբին է բերում, որ սա էլ իւր կողմից ուր հարկն է, հոգայ իւր գործն և բանն իւր կարգաւն առաջ է գնում:

Մի քանի ժամանակից յետոյ մենք այդ տգէտ մարդու ձեռքը համբուրում ենք:

Ինչ կարող հոգիներս սևել և ասել, որ գործակալն իւր վերցրածները բոլորն ինքն է ուտում. ո՛չ, մեղք է սուտ խօսելը.

նա իւր կողմից տարին մի քանի անգամ կոնսիստոր և Սինօդ է գը-նում, անգամներին տեսնում և իւր տեղն ամրացրած՝ վերադառ-նում: Ա.յդ պատճառաւ էլ նրա միջնորդութիւնքն առանց բացա-ռութեան կատարուում են, այդ պատճառաւ էլ ամէն ոք գիտէ, որ դործակալի վերայ տուած բողոքներն անուշադիր են մնում:

Խօսելով դործակալ Հայրսուրբի դործողութիւնների մասին, մի քանի խօսք էլ բարեկարգ քահանաների համար աւելորդ չէր լինել ասելը:

Ինչպէս վերն ասացինք, սոքա աւելի բարեխղճաբար էին կա-տարում իւրեանց պաշտօնը, բայց և նոցա մէջ եղել են այնպիսի-ները, որոնց տեսնելով, դիւղացին ափսոսելով յիշել է նոցա նա-խորդներին, իսկ նոցա կարդող բարձր իշխանութիւնը վերջը շատ զղջացել է իւր ընտրութեան մէջ:

Մէկ բարեկարգի համար աւանդութիւնը պատմում է, որ չը-բաւականանալով ժողովրդին դռփելով ու ժապաւինեալ մատեաններ մէջ պակաս եկամուտ նշանակելով, հնաբքներ է որոնելուս լինում մատենի մէջ գտածն էլ տեղ չհասցնելու. մի օր ասում է՝ տունս կրակին, մատեանները տարան, երկրորդ անգամ՝ երեսային յանկարծ մատեանը հացի վառած թոնրի մէջ է ձգել և երրորդ անգամին արդարև բաղդն իրան լեռվին յաջողում է: Յիսուն մանեթաչափ աթոռահարկ ծոյին էջմիածին գնալուս ճանապարհին կողոպտուում է: Գողերը բաւականանում են միայն փողը ձեռքիցն առնելով, իսկ հնարագէտ տէրտէրը խնդրում է, որ իւր հնամաշ հագուստն և ա-ժանագին ձին էլ տանին:

Ա.յդ մերկանդամ դլուխեամբը ատտանայ տէրտէրն իրան ձը-գում է էջմիածնի վանքը և լալով յայտնում, որ 250 մանեթ ա-թոռահարկի հետ իւր ամենապատուական ձին և նոր կարած հա-գուստն էլ աւազակները տարել են: Իւր ճարտար լեզուովը նա կա-րողանում է 250 մանեթ շահուխլ աթոռահարկից, մի պատուական ձի ատանալ վանքապատական ձիանցից և մէկի փոխարէն հինգ վեց հատ վերարկու այս և այն վարդապետից դուրս կորզել, դեռ, ա-սում են, հանդերձատանիցը չայոդեցնում է մի թաւիշեայ եպիս-կոպոսական վերարկու ևս իւր տիրուհու համար քեամիբացու[1] ատանալ:

1 Կանանց վերնազգեստ:

Ա.յժմ, ասում են, այսպիսի չարագործութիւններ շատ սակաւ են լինում:

Ա.հա՛ մի շաբաթ էր, որ գործակալ Հայրսուրբն իւր վիճակից դարձել էր Մայր Ա.թոռն իւր հաւատարմութեան պարտքերը կա-տարելու:

Նա պաշտօն ստացած օրից թողնում է իւր աղքատիկ խուցն իւր համեստ եղբայրակիցներից մէկին ժառանգութիւն և ինքն էջ-միածին եկած ժամանակը, կամ իւր ընկերակիցներից մէկի մօտ իջ-նում և կամ իբրև հիւր՝ Ղազարապատի հիւրանոցի սենեկներում:

Սաքօն լսել էր գործակալի էջմիածին լինելն և այս տեղ եկաւ:

Դուռը երկար բաղխելուց յետոյ՝ վերջապէս բացուեցաւ: Սա-քօն նախ քիթ ու պռունդով և ապա մեծ սիրով ընդունուեցաւ և բաւական միջոց Հայրսուրբի հետ խօսակցելուց յետոյ՝ ստացաւ մեզ յայտնի նշանաւոր հրամանաթուղթն և ձին նստաւ ու շտապեց դէպի Սև ջրի գլուխը:

ԻԹ.

Ե.այն և մի շտապմամբ՝ որ եկել էր Սաքօն էջմիածնից, ամա-պարեց եասավուլխանէն[1]:

Գոմի դուռն, ի հարկէ, փակելու հարկ չկար, վաղն առաջի պէս օձն իւր պորտովը, ղուշն իւր թևովը կը համարձակէի՞ն այդ բակը մտնել, որ Ադամորդին մտնէր չար մտքով: Սաքօյին յայտնի էր ան-կասկած, թէ ո՞ր տեղ է պարկած եասավուլ Մարգարը՝ մեր վաղա-ծանօթը:

Եասավուլն և ընդհանրապէս ստորադրեալ անձինք, որոնք ա-մէն ժամանակ ենթարկուած են աղաների կամայականութեանը, շատ արթուն են: Առաջին գիշերը չէր, որ եասավուլ Մարգարն անժա-մանակ քնահարամ էր լինում: Մի աղօտ ձիթի ճրագ վառուում էր սիւնի վերայ և Մարգարն աչքերը բանալուն պէս ճանաչեց իրեն

1 Եասավուլների կացարանը:

հրող Սաքոյին։ Էլ բերան չկարողացաւ բանալ Մարգարը, որպէս և իջէ շտապաւ հագնուեց և հետևեց իրեն նշանացի անողին։

— Ի՞նչ կայ, ընչի՞ համար ա ալէն էսպէս բէվախտ[1] քեզ ինձ մօտ ղրկել, իրա կշտին հօ եասավուլ կա՛յ քնած. երևում ա շատ թաքուն բան ա, որ ոչ ով չպտի իմանայ հա՞, հարցրեց Մարգարը։

— Լաւ գլխի ընկար, հետս արի անխօս, բայց չէ՛, ես կը-թամ դուքան[2], դու շուտ էս սհաթս ձիդ թամքի, ասպասնէրդ[3] քաշ արա՛, ինձ մօտ արի՛։

Մարգարն ուսկիրը վեր քաշեց և անխօս կատարեց իրեն հրա-մայողի կամքը. եթէ Սաքօն այսպէս խօսում է, անտարակոյս մով-րովի հրամանն է։

— Ձիդ նստի՛ ու առանց ժամանակ կորցնելու, առանց աչ ու ձախ աչք թեքելու էս թղթերը ջէբդ դի՛ր ու կրակի նման թռի Աշտարակ։

— Տամ տանուտէրին. յետո՞յ։

— Էս տեղ երկու թուղթ ա, չէսառնես, մինը ծոդդ դի՛ր, մէկելը գտակածալդ, ծոյինդ տանուտէրինն ա՝ միւսը տէրտէրին պտի հասցնես։

— Է՛հ, պրծա՞նք, վանքի թուանքչէն էլ գառա՛նք, է՛ս էր պակաս։

— Լսի՛ր, հանաք չեմ անում, գործը շատ շտապ ա, քո օ-գուտին ա, գլուխդ էստեղ թրջի՛, Աշտարակ վեր արա՛. էլի կասես թէ Սաքօն ինձ վըայ քաղցր աչք չի քցում. քեզ հէնց մարդ շի-նեմ, որ երազումդ տեսած չընչիս, մտքովդ անց կացած չընչի, դեռ իմ լաւութիւնը դու յետոյ կիմանաս, համա ի՛նչ օգուտ, որ իս-տանում[4] էհտիբար[5] չկայ. էն օրն ինձ մարդատեղ էլ չես քցիլ, չես ասիլ թէ քեզ Աստուած ա ստեղծել։

— Մասխարայ[6] ես քցո՞ւմ, Սաքօ ջա՛ն։

— Ի՞նչ ես խօսում, հանաքի վախտ չի, լուսը նոր ծէգելուս դու պտի քո թղթերը տէրէ ցտեր արած ընչիս, թէ չէ էլ պէտք չեն. էն ժամանակն ես կը գըկուիմ մի պստիկ բաղնց, համա դու դատաստակ-մահկրում[7] յետ կը նստիս մի սիրուն նշանածից ու ան-թիւ անհամբերք մալ ու դովլաթից։

1 Անժամանակ։ 2 խանութ։ 3 Ջէնք։ 4 Ադամորդի։ 5 Երախտագի-տութիւն։ 6 Հեգնում ես։ 7 Ջեռնթափ լինել։

— Սաքօ ջա՛ն, դէ՛ շուտ ասա, քօռ[1] դանակով կիսամորթ արիր ինձ, ես գիտեմ, որ աչքդ ինձ համար ուռել չէր[2]. ասում ա՝ իշխին հարսանիք համեցէք արին, ասեց՝ ի հարկէ ջուր կրեցուս էք տանում, հիմի իմն ա, բայց ի՞նչ անենք, մեր արհեստն ա, պտի գնանք. համա էլ երկարացնել չի ուզիլ, ինչ ասելու ես՝ ասա ու պրծի։

— Ախպերութիւնը վկայ, Մարգար ջա՛ն, խօսքումս սուտ չը կայ, էս գործը քո օգտին ա, քեզ մի հացի տէր եմ շինում, որ ինձ պէս տասը ծառայ ուզենաս՝ դառնդ պահես. չիմանաս, թէ մէջն ինձ շահ չկայ, արտը սուտ ա, էդ Աստուած խաբել ա, սուտն ի հօրէ սատանայ ա, ես էլ իմ բաժինն ունիմ, համա ոնց որ իմը մի կաթիլ ջուր, քոնը՝ մի մենծ կուժ լիքը։ Ի՞նչ անեմ, ախպէ՛ր, ամէն մարդ իր հաշիւն ունի, ինձ համար էն կաթիլը թանգ աժի ուրիշների լիքը կժերիցը. ես միտք արի, որ թող ես իմ սրտի ու-զածին հասնիմ, թող Մարգարն էլ շատի տէրն ըլի. դու էլ օտար հօ չե՞ս, քեզ յայտնի չի՞, որ ես էս տանը քո ղունդը ամէնքի գլ-խի հետ չեմ փոխիլ։

— Շատ շնորհակալ եմ, Սաքօ ջա՛ն, համա էլ ի՞նչ ես ծամ ծըմում, չի ըլնի՞, որ շուտ ասե՞ս։

— Համ պտի ասեմ, համ հարկաւոր պատուէրները պտի տամ, որ մտքիցդ ոչինչ չքցես։

— Դէ՛ ասա էլի։

— Գիտես ի՞նչ կայ, Մարգա՛ր ջա՛ն, աշտարակցի Խէչանենց Խէչանին ո՛վ չի ճանանչում, նրա հարստութիւնի ձէնն ո՛վ չի լսել ընէնց չի՞։

— Ընէ՛նց ա ընէ՛նց, ձիերք[3] մի՛ քցել է։

— Ղդ մարդն իմ նելքի բաղն մօտ մի բաղ ունի, ոչ մէջ տեղը պատ կայ, ոչ մի ջրկած չահրատ[4], ախս ափին, թումբս թմրանն ա կպած, շատ անգամ խառնուռւմ ենք, նա իմ հաւողն ա քաղում, ես նրանը, տարի չընչի՝ որ մեր մէջն անբաւականութիւն չի դուս գայ. թէ հախն ասես, կամ նա պտի ծախի՝ ես առնեմ, կամ ես պտի իրան տամ, ձեռը քաշեմ. բանն էս ա, որ ես իմ մուլքն աչ-քիս լսի պէս սիրում եմ, նա էլ հարուստ մարդ՝ ի՞նչ կարօտու-

1 Բութ։ 2 Աչքը մէկի համար ուռչել նշանակում է սրտացաւ լինել, կարեկցել։ 3 Բարակացաւ 4 Ամման։

թիւն ունի : Քանի հետ մարդ ղրկեցի, էն բաղե չորս գինը խոստացայ տալ, ինքս քեզ յայտնի ա, որ էս տարի Աշտարակ շատ գընալով գալով ծիծաղատեղ եմ դառել ամէնքի մօտ՝ ձար չէլաւ, 100 հնքան էլ որ տաս՝ Խէչանը մօտ չի թողում, վերջն էն տեղը հասաւ, որ կռնիցս բռնեց տանիցը աղքատի պէս դուս քցեց . քեզ մատա՛ղ, Մարգար ջա՛ն, խօսքը քեզ մօտ մնայ, իմ թուք ու մուրն էլ քոնն ա :

— Է՛հ, ամօթ չի՞, Սաքօ ջան, խօսքդ շարունակի՛ :

— Ա՛խաս ի՞նչ. հօ գիտե՞ս, որ Սաքօն իր կաշուումը կենդող չի, էդ խայտառակչութիւնը , էդ անուվկոտրութիւնը կուլ չի կաբող տալ, երկու շաբաթ ա քուն ու դադար չունիմ, ի՞նչ անեմ, ո՞նց անեմ, որ էն բաղն իմ ճանդը քցեմ ու Խէչանիցը մուռը [1] հանեմ:

— Տեսնեմ ի՞նչ ես միտք արել :

— Շատ հնարքներ միտք արի, Մարգար ջա՛ն, համա չէ՛, ոչ մինը խելքուման չը նստեց, ոչ մեկիցը խելքս ջուր չխմեց, քամու պէս եկան անց կացան : Մին էլ յանկարծ դու միտս եկար : Ա՛յ խելօք բան , ասեցի ու գործի քամակիցն ընկայ :

— Ես ի՞նչ կարամ անել:

— Չեմ գիտում, դու իմանում ե՞ս , որ էդ Խէչանը մի սև բուն նշանած աղջիկ ունի :

— Հա՛, ո՞նց չէ , մի օր տեսայ, հայ էլ բերեց մեզ, շատ լաւ տնաղեցի , շատ էլ դիր եկաւ ինձ , համա ինքը հէնց իմանաս ինձանից վախեցաւ:

— Լաւ աղջիկ ա , չէ՞:

— Շատ սիրուն չի , համա լաւն ա :

— Խէչանի էլած չէլածն էդ միևուճար աղջկանն ա , ինքն երեք տարեկան ժամանակից բաշիբաշ թմայ ա արած մի աղքատ տղի հետ, էգուց առաւօտ լեսը բացուելուս պսակուում ա, էլ շատ խօսալու վախտը չի. թէ որ դու խօսք կը տաս՝ որ եթէ ես քեզ համար Խէչանի աղջկին ուզեմ, դու էլ իմ ասած բաղն էժան գնով ինձ ծախես , էս Թղթերը քեզ կը տամ, առ՝ գնա ու պսակը խափանի : Մնացածն իմ շինքին

— Սաքօ ջա՛ն, շատ շնորհակալ եմ, համա Խէչանն ինձ ո՞նց աղջիկ կը տայ, էլնոր իմ ի՞նչ պսակուելու ժամանակն ա, քեզ յայտնի չի՞, կնիկ ու երեխէք եմ թաղել, նոր էս բեղերին [2] կը սազի՞ 20

1 Վբէժ: 2 Ընչացքներին:

տարեկան աղջկայ երեսի դիպչիլ, կամ թէ չէ օրէնքը կը հասցնի՞, էտով հօ էլած հոգուս կտորն էլ կրակի մէջը կը քցեմ, առանց էն էլ թուլը ինք դառել:

— Դո՛ւ գիտես, ախպէ՛ր, չէս ուզում՞ բարով եկար, չետ դառ գնա՛ բանիդ , խօզի գլուխը խալխէն կենալ չի, ես մարդ կգտնեմ ղրկելու, հրէ՛ դահլիճանը քեզանից սիրուն, քեզանից ջահել քեզանից զօրաւոր էլի օր ծերութեան քեզ պէս մի բարեկամ ունենամ, թէ չէ ընչի՞ս էր պէտք:

— Սաքօ ջա՛ն, մովլովը գիտի էս բանը՞:

— Ընենց մարդ ես էլած , տօ՛, դեռ մի էս հարցրու , թէ ես սհաթս ո՞ր տեղից եմ գալիս , դեռ գնա՛ իմ ձին տես, քըրտինքը վըրից ծըծլում ա . ես հէնց հիմի էջմիածին էի, էս գոտկածալը դնելու թուղթը որ կայ՝ գործակալի հրամանն ա տէրտէրի վրայ գրած՝ որ պսակը խափանի, էս մինն էլ մովլովեցն ա տանուտէրի վրայ, որ չթողի պսակելու : Հէնց որ իմ չուղուլն [1] Աշտարակիցը մթնով տուն ընկաւ ու յայտնեց, որ լեսը բացուելուս պսակելու են, մաղերս բիզ բիզ էլան : Վաղեցի մովլովի մօտ, կէս սահաթ լեզուս հանած աղանչաք արի , ընչանք գործակալի վրայ մի բարովագիր առայ. հետն էլ Աշտարակու տանուտէրի վրայ էս հրամանը գրել տուի, ծոցս դրի ու թռայ Թառլանիս [2] քամակը, ինձ քցեցի Ղազարապատը. գնալ գալը չորս սհաթ չի քաշել, թէ կուզես՝ ձեռդ բեր, քրտինքս տես. էլ կասե՞ս թէ Սաքօն քեզ չի սիրում:

— Ֆարազիմ [3] ասում եմ, Սաքօ ջա՛ն, ծախիլս ո՞րն ա, մէկի տեղակ երկու բաղն էլ քեզ ջաբրա [4], թաք [5] դու էդ բանը գլուխ բերես :

— Դէ, որ ըտենց ա , Մարգար ջա՛ն , իմացած կաց, որ քո անուշն էլ դրել եմ տուել գործակալի հրամանի մէջը , որ քո պաշիւն ու լեզուն երկար ըլի, համա բան ա՝ թէ որ կը տեսնես, որ տէրտէրը ոչ գործակալի թղթին ա ուզում անկաջ կախի, ոչ տանուտէրին ա լսում, մոքումը դրել ա անպատճառ պսակի , քե՛զ տեսնեմ, ինչ զօրութիւն ունիս՝ դործ դի՛ր, ղամիշուդ տակը քցիր փեսին էլ, խէչախաօրն էլ, հարսանիքաւորներին էլ ու սալջարդ ա՛ր [6], մի խօսքով տանուտէրն էլ որ նրանց դիհը կը պահի , ըն-

1 Լրտես: 2 Ջինաւ անունն է: 3 Դիցուք: 4 Ընծայ: 5 Միայն թէ: 6 Ծեծիր:

չունքի խէչախպէրն ինքն ա, անկաջ մի՛ անիլը տո՛ւր, ես պատասխան կը տամ։

— Էդ ես գիտեմ, ինձ եասավուլ Մարգար կասեն, ինձ երեխայ ժամանակս շան ծիծ են ուտացրել, ինձանուտ շատ մահմադի[1] չկայ։

— Դէ՛, շատ երկարացնելու ժամանակ չէ՛, ձիդ նատի ու Աստուած հետդ ըլլի. միտդ պահի, որ լեսը չբացուած՝ դու մենճ գործ ունիս կատարելու ու էն էլ՝ քո՛ օգտի համար, մէջը հաց կայ։

— Գործս աչ ա գնում, պսակը վերջանալուս էլ ըլլի, Մարգարը ժամիցը կիսատ դուս կանի, դիտեմ ի՞նչ գաղանն ա, հայ եասավուլների մէջ սրա պէս ոչ մինը չկայ։ Խեղճ ախմա՞խ[2], խօսքերս նադդ[3] ապրանքի տեղ առաւ, միամտաբար հաւատաց, աստմները վէր ա թափել, ղըջօ[4] տեղովը ապախ աղջկայ մարդ ուզեցաւ դառնալ, խէչանի փող ու հարստութիւնի համը[5] բերանը ջրակալացրեց. յիմա՞ր, յիմա՞ր, ի՛նչքան անհասկացող ու երկար չը մտածող մարդիկ կան աշխարհքումս. Սաքօն էս քանի ամիս ա՝ էլ սատանութիւն չմնաց բանացրեց ու դեռ ոչինչ չի արել, սա պտի ձեռաց խէչանի փեսէն դառնայ ու ինձպէս էլ նօքարներ ունենայ։ Շա՛տ լաւ կըլնի, Մարգար ջա՛ն, դու մի պսակը խափանի՛, էն ժամանակը կը տեսնենք։ Ծօծը բարակ[6] Մարգա՛ր, ի՛նչ շուտ խաբուեց, խեղճը չի լսել էն առակը, որ ասում ա՝ անհաւատ բանին մի՛ հաւատալ, ի՛նչ էլ ուրախացաւ, ոտները գետնիցը կըտրուեցին։ Ի՞նչ անի, ոչ ովի մեղադրելու չի, ամէն մարդ էլ հացի ա մանգալի, հացի խնդիր ա։

Երկար ժամանակ լուսնի լուսով դիտում էր Սաքօն Մարգարի քամակից, մինչև որ նա իսպառ հեռացաւ, որից յետոյ վերոգրեալ խօսքերը փնթփնթալով՝ ներս մտաւ իր սենեակն ու հանգիստ քուն մտաւ։

---

1 Իրաւունք, արդարութիւն։ 2 Ցիմար։ 3 Ջուտ։ 4 Ջառամեալ։ 5 Ձաշակ։ 6 Խելապակաս։

Ը.

Մեր վիպասանութեան առաջին գլուխներից ընթերցողին յայտնի է Մարգարի առաքելութեան արդիւնքը, մենք գիտենք, թէ խեղճն ի՛նչ մուրազով, ի՛նչ յոյսերով գնաց, ի՛նչ վանգներից ազատուեցաւ, ի՛նչպէս յաջողեցրեց իւր պաշտօնն առանց ընդդիմութեան և ի՛նչպէս քաղցած փորով աւետիքը Սաքօյին հասցրեց։

Նթէ ոչ ոք չի մոռացել, Սաքօն մի քանի փիլիսոփայութիւններ անելով, ինչպէս ասում են, Մարգարի գլխատակը փափուկ բարձ դրեց և մտաւ իւր ներսի՝ ուրիշների համար անմատչելի սենեակն, ուր մեր ծանօթ Մահմատ — Հասան՝ ահռելի, աշխարհքը սասանեցնող աւազակապետն էր իւր մարդակեր ընկերներով։

Աշխարհքի այսօրուան այցելութեան պատճառը մենք գիտենք. նոքա կոչուած էին մովրովից կողոպտելու Թալին գիւղի մօտով անցնող Տաճկաստանցի վաճառականներին և մովրովի հետ իրանց կողոպուտը բաժանելու, գոնէ Սաքօն այսպէս բացատրեց Մարգարին։

— Մեր տղէ՛ք, իգիթնե՛ր[1], էսքան ժամանակ է մենք եղբայրներ ենք, իրար ճանաչում ենք, խօսք բացեց Սաքօն Պարսիկների հետ, բայց դուք մինչև այսօր առանց ձեր սեպհական օգուտը միջնեը հանելու՝ բացառապէս ինձ ոչինչ բանում պէտք չէք եկել. հիմի հասել է օրը, որ դուք մի փոքր նեղութիւն քաշէք ինձ համար. յոյս ունիմ, որ խնդիրս ուրախութեամբ կը կատարէք։ Իրա՛ւ է, մի քիչ դժուար գործ է, կարելի է արիւն թափելու կարիք էլ պատահի, բայց ձեր պէս քաջերի համար դրանից հեշտ ի՞նչ կայ[2]։

— Աղայ Սաքո՛, պատասխանեց Մահմատ — Հասանը, քեզ պէս հաւատարիմ եղբօր համար ոչ թէ ուրիշի արիւնը՝ մեր էլ ուրախութեամբ մատաղ կը տանք, էնքան լինի, որ տեղին ու գործին ծանօթ լինենք, մի քանի անգամ մեզանից մինը կամ երկուսը գնան աչք ածեն, ամէն դռներն իմանան, որ վերջը մենք քեզ մոտ առթով չմնանք։

— Շատ շնորհակալ եմ ձեր եղբայրութիւնից, բայց էս գործը շատ յետաձգել չի կարելի, այս գիշեր այն վաճառականների հետ հաշիւներդ վերջացրէ՛ք, էգուց գիշեր մի ուղեցոյց պատրաստ կը-

---

1 կարիճներ։ 2 Ինչպէս այս գլխում, նոյնպէս և ամէն տեղ օտար լեզուով խօսակցութիւնները մենք գրել ենք գրական բարբառով։

լինի, նա ձեզ կառաջնորդէ՝ ուր Հարկն է, իսկ մինչև այդ ժամանակը ես ամէն բան կարդի կը բերեմ։

— Ուրեմն դու մեզ հետ չը պէտք է՞ լինիս։

— Ո՛չ, իմ ներկայութիւնս կարող է ձեզ արգելք լինել, օրէնքի առաջնին գործին ուրիշ ձև տալու համար։ Ինձ հարկաւոր է հեռու քաշուիլ բայց ի հարկէ ես մօտիկ տեղում ձեզ սպասելուս կը լինեմ։ Եթէ այսպէս չանենք, ես էլ, դուք էլ ու մեր ընտանիքն էլ կարող ենք կորչել։

— Յետոյ մեզ առաջնորդողն աչքաբացի մի՞կն է, չէ՞ շփոթուիլ ու գործին ձևասիլ գիտէ՞ Էպէս տեղերում քնքոյշ պահած մեծացրածներն իշի նման են, որ գայլին տեսնելուս գլուխ ու վզում են նրա հետ կատակներ անելու։

— Մի՞ամիտ կացէք, ձեզ այնպիսի ընկեր տամ, որ մօր ծիծ կարող լինի, իրաւ է ձեր կիսի չափ այժ, հասկացողութիւն և փորձառութիւն չունի, բայց իւր կեանքի կէսը ճանապարհներ կարելով է պարապել և գ լաւորն այս է, որ մինչև օրս ոչ նկատողութեան է ենթարկուել և ոչ բռնուել է։ Դեռ նորա կողոպտածներն տեղ չեն հասած լինում լուր տալու, նա իւր տանը ամէն բան կարգի դրած և մի կողքին փափուկ բարձի վերայ թիկնած է լինում։ շատ անգամ ինքն է ձիաւորուում իւր կողոպտածներին, իբրև թէ, օգնութիւն հասնելու նպատակաւ։

— Հա՜, կան էդպիսի երջանիկները, ա՜խ քաշեց խեղճ Մահմադ — հասանը և այն՝ իւրեանց կեանքը շռայլութեան և զանազան մոլութեանց մէջ անցնող աստիճանաւորների ու կալուածատէրերի որդիքը. ես դլխաւորապէս դրանց ոխերիմ թշնամին եմ. գիւղացուն, վաճառականին մենք միայն կողոպտում ենք մեր ապրուստը հոգալու համար, որ այրերի ու քարափների ծերպերի մէջ, քաղցած չկոտորուինք, որ մի կտոր ուտելու հայ ունենանք, շատ անգամ պատահում է, որ բոլորովին ապքաո գիւղացիներին օգնում էլ ենք, մեր յափշտակածներիցը բաշխում ենք, իսկ այդ աղաղակը[1] ձեռներս ընկնելուն պէս՝ առաջին գործներս լինում է մաս մաս անել։

— Ընչե՞, մեղք չե՞ն։

— Չէ՛, ալլայ Սաքօ՛, դրանց մէջ այնպէսներն եղել են, որոնց մենք սպանել, սիրտը ճղել ու արիւնը տաք տաք բուռն արել, խըմել ենք, բայց էլի երբէ արդարութեամբ դատելու լինինք, փոքր է։

— Ի՞նչպէս։

— Մի՞թէ քեզ յայտնի չեն այդ բեգզատէքանց[1] արածները, որ էլի հարցնում ես։ Դիտե՞ս որ դրանք պատապում են միայն բազէներ պահելով և որսի շներ քամակները ձգած՝ ձորերի մէջ քարշ են գալիս։ Ոչ աշխատել գիտեն այդ մարդիկն և ոչ մի օրինաւոր գործ ձեռքներիցը գալիս է. նրանք միայն վաճում են իւրեանց հայրենական ժառանգութիւնները և խեղճ գիւղացիների աշխատած՝ արեան քրտինքով վաստակած բերքը տղերկի պէս ծըծում։ Այս անկանոն կեանքի մէջ, ի հարկէ, որչափ հարստութիւն էլ լինի, տարուան մինչև կէսը չէ բաւիլ։ Ի՞նչ պէտք է անեն։ Անկարծիք նապաստակի քամակին ընկած ժամանակը հրացանաձգութեան մէջ էլ վարժուել են այնքան, որքան մի մանուկ, որ մի ոտնաչափ տեղ թռչելով, կարծում է, թէ մի ահագին վէրի գլխով է թռել։

Այդ նշանաւոր քաջասրտութեամբը նոքա տասը հոգի միացած՝ ոտից գլուխ զինավառուում են և թագ կենում խոտորնակի ձանապարհների մօտ գտնուած խոր ձորերում։ Հէնց որ անզէն գիւղացին միամիտ երդելով անցնելուս տեսնում են, յարձակուում են նորա վերայ և մօրթ մերկ ակըռում, և աւարն իրանց ծառաների ձեռքով պատապելուց յետոյ՝ իւրեանք գալիս են արձակ համարձակ մերձակայ քաղաքումը, կամ գիւղումը ման գալիս։

— Էյս ամէնը, պիտի ասես, մեզ միաս չէ տալիս, մեղքն իրենց վիզը, մենք ընչի՞ պէտք է վշտանանք, այնպէս չէ՞, Սաքօ։ Բայց ոչ, մենք ուրիշ ցաւ ունինք, լսի՛ր։

Սովորաբար մի տապատակութիւն պատահած միջոցին իշխանութիւնն այդ պարոններին է հրաւիրում գողերը գտնելու, որովհետև չի կարելի ասել, թէ նաչալնիկները տեղեկութիւն չունենան դրանց աւազակութիւնների մասին։ Դրանք էլ ի՞նչ անեն, որ հաւանելի լինի. — ամէն իրանց արած աւազակութիւնները ինձպէս նշանաւոր մէկի կամ միսի վերայ են բարդում և ոչ միայն իշխանութեան արդար բարկութիւնն են մեր վերայ աւելացնում, այլև մեր գլուխը գնահատել տալով՝ անամօթաբար բացարձակապէս մեծագումար

1 Ագռաւանիք, հեգնական բառ է։

1 Աղնուական։

ղաղախներ ու ձիաւորներ են վերցնում, մեր քամակիցն ընկած մեզ գալիս։

Դիցուք որ մենք աւազակ ենք, մի անգամ դուրս ենք ընկել բայց մի՞թէ մենք մարդիկ չենք, մենք արիւն ու մարմին չունինք, մենք կեանքը գնահատել չգիտենք, հօ չե՞նք կարող երկու երեք հոգւով այդչափ բազմութեան դէմ յանդգնել դուրս գալ։ Սակայն ուաճ ենք լինում շաբաթներով պաշարներս վերջացած ժամանակն անգամ մեր քարանձաւների մէջ տոգորուիլ։ Երբ էլ հնարաւորութիւն չի լինում բնական պահանջին յագթել, արիւններս աչքի տակ առած՝ դուրս ենք գալիս։ Ի՞նչ ես կարծում, Սաքօ ջա՛ն, էդ անպիտաններիցն և ոչ մէկը չի վերաւորուում. հեռուումը կանգնում են ու խեղճ՝ ղաղախներից շատերին՝ մեր գնդականներին զոհ տալիս և՝ ի հարկէ, մեզանից էլ մի երկուսը կեանքը գնում են։

Լա՛ւ է, եթէ բաղդը միշտ յաջողէր մեզ մեր չարաբաստիկ եղբօր դիակն ազատել. շատ անգամ ստիպուած ենք լինում մեր գլուխը միայն մի հնարքով պրծացնելու։ Միւս օրը մին էլ լսում ես, որ այդ մնապարծ նապաստակների գովասանքը բերնէ բերան մանէ գալիս, իսկ մեր արևազուրկ ընկերի, եղբօր, ազգականների, շատ անգամ և որդւոյ դիակը անարգակոծ է լինում ու անպատուում. քանի՛ անգամ աչքովս տեսել եմ դառաչքաշղջիկ սրիկաներին մեր նուիրականութեան երեսին թքելուս և միս ծամելով հեռացել եմ, և այս ամէնն ո՞ւմ չնորհիւ՝ քո գոված աղաղաղէքանց։

— Իրա՛ւ որ շատ դժուար է, ես գիտէի դրանց աւազակ լինելը և գող բռնելու պաշտօնները, բայց այդքան ցածրութիւն և երկչոտութիւն չէի կարող երևակայել դրանց մէջ, տեղն տուեց Սաքօն ոգևորուած Մահմատ — Հասանին։

— Լո՛հ, որ մինն ասեմ, աղայ Սաքօ՛, քեզ լաւ յայտնի է մեր վերջի սև օրը. մտածի՛ր, տե՛ս, թէ ի՞նչ է եռում մեր ամէն մէկի սրտումն, երբ մենք կախաղանի սանդխոի գլխից, վիզներս սապնած օղակի մէջ անցնելու րոպէին՝ աչքներիս են ընկնում այդպիսի գաւաճան, անատուած անխղճմտանքները։

— Ըհ՛ս, բէ՛գ, գլուխը բարձրացրեց ու խօսեց աւազակներից մէկը, որ մինչև հիմի լռել ու իրեն իրաւունք չէր համարում ընդհատել իւր մեծաւորի խօսակցութեան թելը. ա՛հ, բէ՛գ, ասայ սա Մահմադ — Հասանին, միայն նրա՞նք են մեր թշնամիները. ում համար որ սուր ենք քաշում, տեղն եկած միջոցը նրանք են ամենից յառաջ մեզ ուրանում և արդարութեան ձեռքը տալիս։ Ուրիշները թող-

ղած՝, խոստովանք լինի, մեր դաղակից և կողոպուտների մեծ բաժինը վայելող մովսէսները. քանի՞ անգամ իրանք մեզ ղրկել են ասպատակութեան և երբ որ բռնուել ենք, փոխանակ մեզ ազատելու, Սիբիր են քշել տուել կամ կախաղանի վերայ բարձրացրել։

— Հա՛, միտքս է Ահմատը, ասայ Սաքօն։

— Է՛, ի՞նչ հետևանք ունեցան Ահմատի խօսքերը. միտքդ է՞, աղայ, Սաքօ՛, ի՞նչ ասաց։ Խեղճը թոյլտուութիւն խնդրեց երկու խօսք ասել՝ յետոյ խեղդուել։ Ոչ ոք չէր մտածում, թէ ի՞նչ պէտք է խօսէր, ապա թէ ոչ երբ կը թողային։ — Այս տեղ հարկաւոր էր շինել ոչ մէկ, այլ երեք կախաղան, ասայ Ահմատը կախաղանի գլխից, մէջ տեղը՝ մեր մովսէսի համար, աջակողմը՝ իւր օգնականի, իսկ ձախակողմն ինձ համար։ Մենք երեքս ընկեր ենք եղել ամէն յափըշտակութեանց մէջ և դրանք ինձանից շատ աւելի են վերցրել։ Այս էլ իմացէ՛ք, շարունակեց Ահմատը, որ թէպէտ ես շատ մարդասպանութիւններ և յափշտակութիւններ արել եմ, ես արժանի եմ այս պատժին, թէպէտ արդարութիւնն իմ 12 յանցանքներից միայն ինն է հաշուել բայց այս յանցանքի համար, որի մէջ ի զուր տեղը ձգել է ինձ մեր մովսէսը, ես բոլորովին արդար եմ։

Բանն այս է, որ այն երկու պարոնն էլ, որոց վերայ մատնացոյց եղաւ Ահմատը, ներկայ էին պատժելու տեղը և լսում էին, ասայ մի երրորդ աւազակ և նրանք չամաչեցին բարձր բարձր ծիծաղել։

— Ըհմ՛ն, Սաքօ ջա՛ն, սրա խօսեցածը մեր ներկայ մովսէսին չվերաբերիս, մենք նրանից հոգւով շնորհակալ ենք, նա ուրիշների պէս չէ, մէջ մտաւ բազմափորձ Մահմատ — Հասանը։

— Զարմանալի խօսքեր ես ասում, բէ՛գ, մի՞թէ դու ինձ նոր պիտի ճանաչես, իւր հատատարմութիւնը հատատեց Սաքօն։

— Այս ամէնը թողունք և քո գործքի վերայ խօսենք, Սաքօ աղա՛յ, սկսաւ Մահմատ — Հասանը, ո՞վ է այդ անպիտան կալուածատէրը, որ պէտք է մեզ առաջնորդ և ընկեր լինի, գուցէ մենք նրա դէմ հին ոխ ունենանք և յառաջ քան թէ նա իմ աչքին կերևի, իմ քաջ ընկերներիս սրին մատաղ կը լինի։

— Մաշադի Մահմատ — Բաղը բէգը։

— Նաս չունի, նա դեռ երեկուան երեխայն է, նրա սրտումը դեռ օձեր չեն բնակվել, նրա արածները մանկական չարութիւններ են, մենք նրան թոյլ անգամ չենք տալ, որ մօտենայ վտանգի տեղին, այնքան՝ որ մուտքը մեզ ցոյց տայ։ Հիմա մեզ ասա՛, թէ մենք

ո՞ւր պէտք է գնանք և ի՞նչ պիտի անենք, ո՞ւմ պէտք է էն աշխարհքը ղրկենք և ո՞ւմ խնայենք։

— Եթէ կարող էք՝ ոչ մէկի արեան տակը մի՛ մնանէք։ Գործն էլ այս է, որ դուք պէտք է փախչնէք Աշտարակցի Խէչանենց Խէչանի աղջկանը. խնդրեմ մի հատ կապիկի ակնկալութիւն չունենաք և բառականանաք աղջկանը փախչնելով և ինձ հասցնելով։

— Մ՚եր աչքի՛, մեր գլխի՛ վերայ։

— Մ՚ուաքը ձեզ Մահմատ — Բաղըը յոյց կը տայ, իսկ տունը կը լռտեսի մի կին, որը բոլոր անելիքը կասի աղայ Մահմատ — Բաղըին։

— Հիմա այնպէս իմացիր, Սաքօ աղա՛յ, որ աղջիկը կողքիդ նստած ա։

— Ուրեմն այս գիշերուան գործն յաջողութեամբ աւարտուց յետոյ՝ էգուց գիշեր ես յոյս կունենամ իմ սրտի սիրեկանին՝ իմ աղնիւ ախպէր Մահմատ Հասանի գառակիցն ստանալ Երևան՝ Նորգայ ձորակի գլխի պաշտպամբաւոր տան դռան առաջին։ Ես ձեզ կը դիմաւորեմ Աշտարակու կամրջի միւս երեսին, և մենք մինչև Նորգ միասին կերթանք, լաւ կըլինի՞ թէ ոչ։

— Ո՛ղջ աչքի՛ս վերայ։

— Էս օր ձեր ընթրիքն և ճանապարհի պաշարը շուտ պատրաստ կը լինի, մի ժամից կը բերեմ և ինքս կը գնամ այս գործը հոգալու։ Մաշադի Մահմատ — Բաղըը ձեզ կասպասի Աշտարակայ այգիների վերջումը՝ Ցօշականայ առուի վերայ։

Այս խօսքերից մի ժամ յետոյ Սաքօն յիշեցրեց կրկին թուրքերին իւրեանց խոստումն և ձին նստաւ, ճանապարհ դէպի Արագած լեռան ստորոտի գիւղերից մէկը։

ԼԸ.

ԿՈՑՐ ԵՒ ԵՂԲԱՑՐ

— Գնացէ՛ք ասեցէ՛ք՝ պսակը մնայ, ապագալեցին տէրտէրն ու տանուտէրը եասաւլով Մարգարին ճանապարհ դնելուց յետոյ։

Պսակը մնաց, պսակը խափանուեց, շատ հեշտ բան է բերանով ասելը. հարսանիքի կէս ծէսը կատարուած, կոչականները

տունը լիքը, նորահարսնութեան հալաւն օրհնած՝ հագցրած, ձեռք ձեռքի տալու պատրաստ ու պսակը մնա՛յ. այն էլ ո՞ւմ պսակը՝ գառուած մէջ ամենից հարուստ և ամենից պատկառելի մարդոյ միուճար դստեր, մի ահագին հարստութեան օրինաւոր ժառանգի, այն նուիրականութեան, որ բոլոր որդեսէր ծնողների իդեալն էր։ Ամէնքի յոյսն ի դերև եղաւ, ամէնքն էլ ձեռք վերցրին, ամէնքն էլ երանի տուին Ծվիկենց Ազաջանի որդուն, և ահա եկել էր ժամը, երբ պիտի նա տէր դառնար այն մեծ կարողութեան, որի նկարագիրը աստղեակ տարիներ շարունակ աչքի առաջին էր, ահա այդ ամէնը գործակալի մի կտոր թղթով խափանուեցաւ, ցրուեցաւ, քամուն տրուեցաւ այնպիսի մեծ շինուածքն և շուտով նրա փոշին ամբողջ Երևանու նահանգը բռնելու է։

Պսակը խափանուեց, ի՞նչ հեշտ տանելու բան է մի ջերմեռանդ քրիստոնեայ Հայի համար, որի եկեղեցական սրբազան կանոնները պսակն իւր խորհուրդների, իւր հաւատոյ էական մասների կարգումն է դրել որի ազգային նուիրական աւանդութիւնների մէջ պսակը մարդուս կեանքի ամենից երջանիկ օրն է. համարուել և հիմա մի այսպիսի տան մէջ երկու խօսքով հրաման է գալիս, թէ պսակը մնայ։

Ամբողջ տունը, բոլոր հիւրերը, որ նշանակում է ողջ Աշտարակը ջուր մաղուեցան, ուրախութիւնն ընդհանուր տխրութեան և շփոթի փոխուեցաւ. դեռ ի հարկէ առաջին անգամը շատ մութն և անհասկանալի թուեցան այս երկու բօթալից խօսքերը, բայց հետզհետէ նշանակութեան մեծութիւնն և ահաւորութիւնն ամէնքին զգալի եղաւ, ամէնքը քստմնեցան, ամէնքն ափշած ու սառած իրար երեսի նայել սկսան։ Մի քանի րոպէ բոլոր տունը լռութեան մէջ ընկաւ, կարծես ոչ ոք չը լինէր, կարծես հարսանիքատուն չէր, բայց յետոյ ցնորքն անցաւ, իսկութիւնն ահռելի եղաւ և ամէնքն իրար դիպան։

Գուժաւոր լուրը դեռ նորահարսի սենեակը չէր անց կացել, ջահէլները հարսին զարդարած՝ պատրաստ սպասում էին դրսի ձայնին, որ հանեն ձեռք ձեռքի տալու և ահա յանկարծ անհեռատես պառաւներից մէկը գլխին տալով ներս ընկաւ։

— Վա՜յ գլխիս, իմ ախպօր տունը քանդուե՛ց, քանդուի՛ ու քարատակուի՛ գործակալի հօր օջաղը[1]։

---

1 Հնոց, փոխաբերաբար տուն։

Այս ձիչն արձակելով պառաւ Մարիամը՝ Հերիքնազի մայրը նետս ընկաւ ջահէլների սենեակը, գրկեց, կրծքի մէջ սեղմեց խեղճ Հեղնարի գլուխն ու կոծում էր։

— ԸՀ պառաւ, հերիք ա՛, բայց թող էդ անբաղդ երեխին, իր ցաւն իրան բաւական ա, սև կոստանդ[2] կապի դրա բաղդին քար քցողը, սևապսակ ըլի դրա պսակը խափանողը, մօտեցաւ մի ուրիշ կին և ուզեցաւ հեռացնել Մարիամին։

Թշուառ Հեղնարը հիմա հասկացաւ իւր գլխին եկած փորձանքը, նա պարզ իմացաւ, որ իր պսակն արդելուել է և այս բանի վերայ մի երկու րոպէ իւր մտքի մէջ խորասուզուեց։ Մեզ քաջ յայտնի է, որ Հեղնարը սրտով չէր ամուսնանում Սմբատի հետ, հօր կամքից չդուրս գալն և Հերիքնազի շարունակ քարոզները մի քանի յարակից հանգամանքների հետ, նրան ստիպել էին մտնել այդ լծի տակ. մենք չենք մոռացել նրա խօսքերը. «պսի Ճակատիս գրածին հնազանդիմ, համա էդ զօռով արջին կալ լծելու պէս բան ա»։ Ահա դէպքն լինքն իրան այնպէս է բերել, որ Հեղնարն ազատուում է իւր տուած խոստումնքից, ուրեմն պէտք է ուրախ լինէր. իր սրտի ուզածը կատարուում է և ինքը չի մեղաւորը։ Այս էր նորա մտածմանց մէջ ընկնելու պատճառը։

Ինչպէս ասացի, շատ երկարատև չեղաւ Հեղնարի մտածմունքը, ընդ ամէնն երկու րոպէ էր և ի՛նչ մեծ փոփոխութիւն. այն աղջիկը, որ համոզուած էր, թէ ինքը բանութեամբ է ամուսնանում իւր չսիրած մարդու հետ, հիմի բոլորովին նոր մարդ վերածնեցաւ. նա այդ րոպէից սիրեց Սմբատին, սիրեց այնպէս, որ երբէք չի սիրել ոչ ոք նրանից աւելի։ Այնքան մեծ եղաւ այս սէրը, այնքան ահաւոր եղաւ իւր սիրեկանից զրկուելու հարուածը, որ երբ իւր հօրաքոյր Մարիամը կորզեց, դէն ձգեց իւր գլխից հարսնութեան քօղը, ինքն էլ մի սուր ճիչ արձակեց ու թուլացաւ գետին ընկաւ։

Ահա Հեղնարի դրութիւնը։

Դառնանք այժմ այդ սենեկի միւս անկիւնը։ Մի քանի նորատի աղջիկներ ժողոված մի գալկացած օրիորդի գլխի, ջուր են ակսում նորա երեսին և աշխատում են հրահանի պողովատիկը խցկել նորա կցուած ատամների մէջ. երբեմն աղջիկը բանում է իւր թարշամած

1 Նորափեսայութեան նշան։

աչքերը, դարձնում դէպի դուռն տարածուած նորահարսն և կրկին թուլանում, դարձեալ հրահանի բանատեղ լինում։ Թուի թէ ամէնքը տան գլխաւորներից մոռացել էն սրան և միայն ընկերուհիքն էն խնամ տանում։

Մինք, կարծեմ, ճանաչեցինք սրան, սա ողորմելի Հերիքնազն էր։

Մի քանի վայրկեան մէջ զարդարուած նորահարսին մերկացրին և իւր ամենօրեայ զգեստը հագցրին, կամ լաւ և սակս փաթաթեցին մէջը, որովհետև անհնար էր անշուշտ դիակի նման աղջկանը շոր հագցնել։

Մինք միայ չենք բերում և ուրիշ գլխաւոր գործող անձինքներին։

Նորափեսայի բարեկամքը, նրա հայրը որքան և աշխատեցին առնել իւրեանց որդուն և պառնալ, Սմբատն իւր հօրն անգամ չլսեց։

— Գնացէք, ամէնքդ էլ հեռացէք էս տեղից, գոչեց նա, հարսանիքը վերջացաւ, ես ընչանք օրս էս տան փեսէն չէ՛ որդին եմ էլել, էլի էն եմ, ինձ հետ ի՞նչ բան ունիք, էս իմ տունն ա։

Սմբատը մտաւ ներսի սենեակը, նրա աչքին ընկաւ գետնին տարածուած Հեղնարը։ Մօտ վազեց նա, յետ մղեց պառաւներին, գրկեց աղջկանն և համբուրեց մի քանի անգամ նորա ճակատը, որ դուցէ կեանքի մէջ առաջինն էր։

Հակառակեց, ասեցինք Սմբատը իւր ծնողին, որի խօսքից մինչև հիմա չէր դուրս եկել, Եչեանի որդի՛ն համարեց լինքն իրան, նրա տան անդամը, վստահացաւ ներս մտնել այն սենեակը, ուր արական սեռից բացի եղբօրից և ծնողից ոչ ոք իրաւունք ունէր ոտք դնելու, և ի՞նչ էք կարծում նա բոպէական ոգևորութեան զօրութեամբն արեց այս ամէնը։ — Ոչ, նա գոյժը լսելուն պէս ուշքը հաւաքեց, խորհեց, կշռեց և վճռեց։

Հեղնար ջա՜ն, մին և հիմի իմ նշանածս, ըստուց յետը իմ հալալ քիրս Հեղնա՛ր, ձայն տուեց Սմբատը, աչքերդ բաց արա՛, տես՝ ո՞ւմ գրկումն ես, դարդ մի՛ անիլ, ապրէ՛ք քիր ջա՛ն, Աստուած իրանց հետ, մեր թշնամիքը դրանով ճնաս չէն կարող տալ. թէ ընչանք էս օր նշանած ունէիր՝, հիմի Աստուած քեզ ախպեր տուեց. Սմբատն էս օրուանից քո ախպէրն ա, քո ախպէրը, որ իր քուռ պատիւը, ամօթն իր գլխից աւելի կը պահի, աչքերդ բաց արա՛, հոգի ջա՜ն, իմ քիր ջա՜ն։

Այս անգամ Համբուրի հետ Հեղնարն աչքերը բաց արեց և Սմբատի երեսին նայեց։

— Սմբատ ջա՜ն, իմ պահապան հրեշտակը դո՜ւ, ինձանից մի՛ հեռանալ, թոթովեց Հեղնարն և նորից աչքերը փակեց։

Քեզ մօտ եմ, մատաղ, Սմբատն էլ քեզ չի թողալ։

— Հերիքնազա՛ն, ո՞ւր ա Հերիքնազը, աչքերը բացեց Հեղնարը, Սմբատ օ՜ղլ, Հերիքնազին գտի՛ր, նրան ձեռքից մի՛ թողալ, շո՛ւտ վեր դիր ինձ, նրան գտի՛ր, նրան մօտս բե՛ր։

Հերիքնազ. — Սմբատի միտքն եկաւ այս անուշն և սարսեց՝ այն բազուկները, որ մինչև յայժմ այնքան հերոսութեամբ գրկել էին Հեղնարին՝ Թուլացան, մազ մնաց վայր էր ձգում կեանքի բաւրած աղջկանը, բայց այդ իսկ րոպէին՝ հագուստը գրեթէ թաց՝ միացաւ պ անց Հերիքնազն և երկուսին ի միասին գրկախառնեց։

— Ի՞նչ մենծ ուրախութիւն ինձ համար, Սմբատ ջա՜ն, որ ըսէնց քեզ տեսնում եմ, ի՞նչ բաղդաւոր քենի եմ։ Էլ ես դարդ չունիմ, էս օրուան անբաղդութիւնը հիմի ոչինչ ա ինձ համար, սրանից աւելի ի՞նչ եմ ուզում ես, երբ որ տեսնում եմ քեզ իմ սիրեկան քուրը տէր դառած՝ Թագաւորի պէս գլխին կանանած։ Նա՜նի ջա՜ն[1], էլ լաց մի՛ ըլել ա՛յ Թանգագին ջնաղներ[2], խնդրում եմ, գնացէ՛ք հիմի ձեր անելը, մենք հարսանիքը պրծանք, տեսնո՞ւմ էք, մեր փեսէն մեր գրկին ա, Թողէ՛ք մեզ ու հեռացէ՛ք, երբ որ էլի համեցէքաւոր կունենանք՝ ձեզ ամէնքիդ էլ կը կանչենք։

Բոլոր կանայքը չփոթուած՝ չչկլած նայում էին և ոչ ոք չէր շարժուում։

— Բաշխեցէ՛ք համարձակութեանս, շարունակեց Հերիքնազը, ինձ չի վայելել իմ մօր ու մենծերի առաջին ըսէնց խօսալ, համա լեզուս ի՞նչ մեղաւոր ա, սիրտս ա՛ խօսում։ դուք հէնց գիտէք, թէ ես խելքս կորցրել եմ, բայց չէ, Հեղնարիս ու Սմբատիս՝ իմ ազիզ քուռր ու ախպօր արևը վկա՛յ, որ սրտով ուրախացել եմ։ էն վախտը մեր գլխին զահր[3] կը ընկներ, թէ որ Սմբատիս սիրտը կոտրուէր, Թողար ու հեռանար, ի՞նչ ա էլել վա՛ռք Աստծու, մեր չարաքամ ներն էս օր լաւհանեցին հարսանիքը, մի շաբթից յետոյ էլի կանենք։

— Խնամի Աղաջա՛ն, մօտ եկաւ Խէչանը, ի՞նչ ես երեխի պէս աղլուխն[4] աչքերիդ գրել լաց ըլում, հոգս մի՛ քաշել յոյսդ առաջ

1 Մայրիկ։ 2 Հիւրեր։ 3։ Պատուհաս։ 4 Թաշկինակ։

Աստծու՝ նրա ողորմութիւնովն էլ ինձ վրայ դիր, իմ ունեցած կարողութիւնս բոլորը կը մսխեմ ու իմ ուխտը չեմ քանդիլ։ Տեսա՞ր քեալշ[1] որդուդ՝ իմ քաղցր փեսին, — ո՞ւր ա. — նա գնաց իր պարտքը կատարի, գնաց իր նշանածին ու քուրը մխիթարի, տըղամարդը նրա պէս կըընի. մենք հալեւորներս նրանից պտի օրինակ առնենք. դու հէնց էսօր կը տեսնես, որ ես իմ կաշումը կենալ չեմ, ես աշխարհքին շանց կը տամ, թէ Խէչանենց Խէչանը՝ որ ընչանք օրս ոչ մի գործի չի նաւնուել, իր կեանքի մէջ դատաւորի դուռ չի գնացել, կարող ա իր տան պատիւը հաստատ պահել։ Ո՞ւր կորան, ընչի՞ մկան նման գլխներն առան, ծակը մտան տէրտէրն ու տանուտէրը՝ մեր աղայ խէչախպէրը, թէ որ նրանք ինձանից տափ կացան[2], ես իրանց կը գտնեմ, էս անբաղդութիւնի պատճառը կըմանամ, յետոյ կը տեսնենք։

— Ես շատ լաւ գիտեմ, կրակուած խօսում էր Խէչանը, թէ էս բանի հետը[3] ո՞րտեղից ա, նա իմ ձեռքից չի փախչիլ օ՛, օ՛, օ՛, նա շատ մարդի տուն ա քանդել, բայց իմ տունս չէն կը մնայ ու նա իր մուրազին չի հասնիլ։

Այս խօսքերից յետոյ տանուտէրն ու տէրտէրը ներս մտան։

— Բարո՛վ հազար բարի՛, յառաջ գնաց Խէչանը, լա՛ւ, որ գլուխ չառաք, գեղացը փախաք, երեսներիդ փարպայ[4] քաշեցէք, որ էսքան մարդկանց մօտ անպատիւ չըընիք. ա՜ո, քանց թէ գըզին ու ժամհարին էիք ղրկում, դուք չէիք կարող գա՞լ. ոնց որ իմ ուրախութիւնին մասնակից էիք, իմ տխրութիւնին էլ հընկեր կը դառնայիք։

— Ամբերի՛, Խէչա՛ն, որդեա՛կ, Աստուած սրտիդ համբերութիւն տա՛յ, Աստուած մարդիս միշտ փորձում ա, մի օր էլյես ինքը խնամք կանի, մեր սիրտն ա նեղ, թէ չէ Աստծու սիրտը շատ լէն ա ու ողորմութիւնի դարպեահը[5] բաց։

— Ծառայ եմ Աստծուն, տէրտէ՛ր, ես անբաւական չեմ, ես ձեզանից մէնակ էս եմ խնդրում, որ էն հրամանաթղթերն էսքան խալխի միջին կարդաք. տեսնենք ի՞նչ պատճառաւ եփած կրակրի վրայ սառը ջուր լցրին։

Դերձիկ Սահակի որդին, որ արդէն ներկայ էր, կրկին յառաջ կոչուեցաւ, կրկին հրամանաթղթերը կարդաց։

1 կորիճ։ 2 թագեան։ 3 Սկիզբը։ 4 վարագոյր. 5 Դուռը։

Մովսովի հրամանն աւելի հասկանալի աշխարհաբառ էր գըրած. այնտեղ պատուիրած էր տանուտէրին, որ եթէ տէրտէրը չը յարգէ գործակալի հրամանը, ինքը հասավուլի օգնականութեամբն եկեղեցու դուռը փակի և պսակը խափանի։

— Եասավուլ Մարգարի անուամբ գործակալի հրամանի միջին ի՞նչ բան ունի, տիրացո՛ւ, ես չհասկացայ, ինձ մի գլխի քցի՛, հարցրեց Խէչանը վերձիկի տղին։

— Ուղիղն ասեմ, ես էլ չեմ հասկանում, և կարծեմ գրողն ինքն էլ իւր գրածից ոչինչ չի հասկացել. մեր գործակալը հայերէն այնքան գիտէ, որքան ես Ֆարսի լեզուն. բայց որքան և նկատում եմ, կարծեմ ուզեցել է ասել՝ թէ ի պատիւ մովսովի և հասավուլ Մարգարի ես հրամայում եմ պսակը քանդել։

— Սո՛ւտ ա, սո՛ւտ, տանուտէր, կարկատովի՛ ա, թաղայ սիպտակ կարկատան ա՝ հին սև շորի վրայ, քօռ աչքն էլ կը ջոկի. ես շատ լաւ գիտեմ, թէ էս բանի հոտը ո՞րտեղից ա գալիս. ընչից չի՞, տանուտէր Սիմո՛ն, միտ ա մեղալի թուղթը, խնամիսօսութիւնը։

— Խէչան ջա՛ն, իմ որդկերանց արևը վկայ՝ ես բանից խաբար չէի, ախպէր, մարդիս էլմը-ֆելմը[1], ադամորդու սատանութիւնն ո՛վ կիմանայ. ես դրուստն ասեմ, հասավուլ Մարգարի խօսքից էնպէս էր դուս գալիս, որ ինքն ա քօ աղջկին ուզում, մովլոմն էլ սաքի թէ, իր խաթեր գործակալից պսակը քանդելու համան ա խնդրել ու ընչանք իր անուամն էլ հրամանի միջը գրել ա տուել։ Ես էլ դրա համար շատ խնդրեցի, աղանչաք արի, խօսք տուի, որ իր համար սիրան ուզած տեղից աղջիկ ուզեմ, քեզանից էլ մի քանի շահի առնեմ իրան սևցնեմ՝ վերկենայ՝ կորչի. էհլա՛ւ ու չէլա՛ւ. մին էլ սկսեց վրէս բարկանալ, թէ ես մովլովի հրամանը ոտի տակ եմ տալիս։ Ընչանք հաթաթայ[2] էլ տուեց, թէ ժամուն ոտի տակ եմ տալիս։ Ընչանք հաթաթայ[2] էլ տուեց, թէ ժամուն կէս կարգն էլ կատարած ըլնէր, ղամշու տակը կը էլ ըլնէն, կէս կարգն էլ կատարած ըլնէր, ղամշու տակը կը քցեր ամէնքին ու դուս կանէր։ Տէրտէր, դու ըլես քօ անտօնան կարգը, խօսքուն սուտ կայ։

Ա՛չ, իմ կարգը վկայ, իմ պաշտում պատարագը վկայ, իմ օծումը դիտենայ, տանուտէրի խօսքերը՝ ոնց ո՞ր աւետարանի կողքին գրած։ Ես էլ շատ խնդրեցի հասավուլին, շատ էլ դարդ արի, բայց ի՞նչ կանես, որդիս, իշխանութիւն ա, գործակալ ա, կա-

1 Հնարագիտութիւն։ 2 Սպառնալիք։

րա՞ չըսել. էգուց թուանքչին կը գայ, մրուքս չըրեխի[1] մէջ կը քցի ու քաշ տալով կը տանի ծակը կոխի. էն վախտն ի՞նչ կանեմ, որդիս, մի տուն լիքը մանր որբ թոռների տէր եմ, քեզ յայտնի չէ՞, որ նրանց ձանգն ընկնողը հեշտ ու հանգիստ պլ ծնիլ չի։

Խէչանը տէրտէրի խօսքի շարունակութեանն ականջ չկախելով՝ գուրս թռաւ, բայց պերճախօս հայրն ուշք էլ չդարձրեց այդ բանի՛ն, բաւական էր, որ ամէնը լուռ թեամբ լսում էին։ Նա որքան լեզուամբ ճարտարութիւն ունէր, հաստատեց իւր անմեղութիւնը, խօտացնելով իւր իշխանաւորների անողոք և քարասիրտ բնաւորութիւնները։

Ամէն ոք տանուտէրին ու տէրտէրին իրաւունք տուին, տէրտէրին աւելի արդարացրին, հաստատելով՝ որ պատասխանատուութիւնից ազատուիլը նրան աւելի դժուար է և մեծամեծ ծախքերի կարօտ։

Հասարակ գիւղականը շատ լաւ ճանաչում է իւր թէ հոգևոր և թէ մարմնաւոր կառավարիչներին. նրա ցոյց տուած սէրն ու յարգանքը առ հոգևորականութիւնը՝ իւր քրիստոնէական ջերմ զգացմանց արտայայտութիւնն է, իսկ առ մարմնաւորի իշխանութիւնն՝ իւր հպատակութեան պարտքը յօժարակամ կատարելը։ Այս պարտաւորութիւններն առաւել մեծ սիրով և աւելի ուրախ սրտիւ կը կատարէ նա, եթէ երկու կողմից իւր մերձաւոր իշխանաւորների քաղցրը, մարդասիրական, արդար վարմունքն ու հայրական որդեսիրութիւնը տեսնի։ Բայց խոր հառաչանքն երբէք գիւղական ժողովրդի սրտից դարերով չի կորուել։

Այս վշտերն ունկնդրով իւրեանց սրտումը, հարսնեւորներն, ասացի, բոլորն էլ միաբերան արդարացրին տանուտէրին ու տէրտէրին։

Ինձ տուէք էգ հրամանաթղթերը, տէրտէր, տանուտէր, ձեռքը ձգեց Խէչանը դրսից ներս գալով, ընչանք իրիկուն էջմիածնումն էլ՝ Երևանումն էլ բանը կը բացուի. թող տեսնենք ի՞նչ գտան մովլովն ու գործակալ իմ երեխի պսակի միջին, որ խափանեցին։

— Հաշխի՛, Խէչա՛ն ջա՛ն, երեխէս ուզես՝ քեզ վէշքեաշ համա ես իմ տունը եսիր[2] չեմ քցիլ դու գիտես, որ սիրիլական կ՚ընենք, արդարացաւ տանուտէրը ձեռքը բացատարար շարժելով։

1 Բամբակ մաքրելու գործիք։ 2 Գերի։

— Դո՞ւ ինչ ես ասում, տէրտէր, դու հո՛ չես տալիս։

— Ըստուած մի՛ արասցէ, ա՛յ որդի, Պաւլիթ մարգարէն ասում ա իր Գործք առաքելոցի 117 գլխումը, թէ գի ով հակառակ կայ իշխանութեան, խաճուցէ գնա զօձն անապատի։ Գիտե՞ս ինչ ասիլ ա. — ով որ ասում ա՝ իշխանութիւնի հրամանաթուղթն ուրիշի ձեռքը քցի, խաճուցէ՝ էս շատ խրթին գրաբառ ա. էնպէս չի՞, ա՛յ ձուից դեռ գլուխը չհանած՝ գործակալին չհասանող ալրացո՛ւ, ժողովրդի մօտ դերձիկ Ստեփանի որդու գիտութիւնն անհամարհելով՝ ծաղրեց տէրտէրը։

— Լա՛ւ էդպէս է, խաճուցէ շատ թունդ գրաբառ ա, ես չեմ հասկանում, քամահրելով պատասխանեց պատանին։

— Ապրի՛ս, որ պակասութիւնդ ճանաչում ես. հա՛, խաճուցէ ասիլ ա կը կծի նրան անապատի օձը, որ հրէայքը՝ այսինքն Քրիստոսին թշնամի ջհուդները չինել էին պղնձից ու փէտի վրայ քաշ արել Մովսէս մարգարէի հրամանովը. ով որ Քրիստոսին հաւատում էր, ծառայեմ իրան, խաչապաշտ էր դառնում, նրան էդ օձը չէր դիպչում, բայց ով որ կռապաշտ էր մնում, կամ թէ Մահմատին, Ալուն էր հաւատում, նրա երեսին թքելու պէս՝ ուռչում, բազմութիւնի միջին տրաքուում էր։

— Երկար քարոզների ժամանակ չի, տէրտէր, ըտոնք հիմի ղղումս[1] չեն նստում, դու կարճ ասա՛, հրամանը տալիս ե՞ս, թէ չէ, նեղացած հարցրեց Խէչանը։

— Տաթևացին ասել ա՝ ոչ տեսանես գի՞. . . գի՞. . . պը՞. . . տո՞ս։

— Ուր ըտենց ա, իմ ազիզ ղօնաղնե՛րս[2], թողութիւն արէք, ամէնդ ձեր տները գնացէ՛ք, իմ տունը դարդակեցէ՛ք, ես գործ ունիմ։

Ծառան ներս եկաւ և յայտնեց որ ձին արդէն պատրաստ է։

— Ո՛նաք բարո՛վ, ես ձամփայ ունիմ էս օր կարելու, ոնց որ խնդրեցի, գնացէք ձեր բանին, ասաց ու դուրս գնաց Խէչանը։

— Ըստուած սիրողը բռնի՛ դրան, շտապեց տանուտէրը, կերթայ գլուխն աւելի մնձ փորձանքի մէջ կը քցի։

Բարեկամները քամակիցը դուրս վազեցին և ձի նստելու ժամանակն առաջը կտրեցին։

1 Ուղեղ։ 2 Հիւրեր։

Խէչա՛ն, ա՛յ Խէչան, մեր խաթեր դեռ շտապիլ մի՛, դեռ մի քանի օր համբերե՛նք, տեսնենք գլխներս ի՞նչ ա գալիս։

Խէչանը լսել անգամ չէր կամենում, նա ուզում էր որպէս և իցէ այսօր բանը տեղ հասցնել։

— Խէչա՛ն, վերջապէս դուրս եկան տէրտէրն ու տանուտէրը, մի շաբաթ համբերի՛, թէ որ մի տեղից ձէնը դուս չգայ, մենք երկու հրամանն էլ քեզ տանք՝ գնա՛ որտեղ հարկաւորն ա՝ խնդրքով տո՛ւր. մենք էլ գեղ-հաւան՝ տունը մի մարդ վեր կենանք, գանք քո թասիրը քաշենք[1]. էս անպատուութիւնը մենակ քոնը չի, սաղ գեղինն ա, էսօր քեզ արին, էգուց էլ մեզ կանեն. դուք ի՞նչ էք ասում, ա՛յ էլլիկ, համաձայն էք, թէ ոչ։

— Ո՛եր աչքի՛, մեր գլխի՛ վրայ։

— Ա՛յ ախպէր, երկաթը տաք տաք կը ծեծեն, ինձ բանդ մի՛ անէք, թողէք գնամ։

— Չէ՛, Խէչա՛ն, ոտդ ձիու օրղանգուին դրիր թէ չէ, աչքիս վերի կոպը խաղաց, շատ վատ եմ փորձել, արի էսօր սատանի գլուխը տրորի, էդ ձամփիցը յետ կաց, ասաց տանուտէրը։

— Օ՛, օ՛, օ՛, որդի՛, թէ որ էդպէս ա, ես քեզ չեմ թողալ, որ մի ոտն յառաջ դնես, երազահանն Էֆէմերդու գրքի միջին ասում ա՝ «եթէ աջ աչքի վերի կոպի ներքի տատմարն խաղայ, ձախորդութիւն պատահեցի», էս օր էլ լուսնի 13-ն ա, օրն չար է, գրած ա՝ երկրի օրն կատարի։

Ո՛չ, Խէչա՛ն, քեզ հետ մի բեռն աղ ու հաց ենք կերել, ես քեզ չեմ թողալ, որ էն սևագլխների երեսը գնաս. շատ լա՛ ասում մեր տանուտէրը մի շաբթից յետոյ, թէ որ քո երեխի պըսակի հրամանը չեն տալ, գեղը քեզ համար կանանաճ ա, մէջք միջքի կը տաք՝ սարեր շուռ կը տաք. էնպէս չե՞, իմ սիրելի ժողովո՛ւրդ։

— Ըտենց ա, աչքիդ մատա՛ղ, քո կարգը մեզ խռով կենայ, թէ որ մենք Խէչանի համար մի շաբթից յետոյ ընչանք Դաղստան էլ ըլնի՝ չգնանք։

— Ըստուած օրհնեցէ՛, որդի՛ք, ես էլ ձեզ օրհնող կըլնիմ։

— Թող ձեր խօսքն ըլնի՛, ես լա՛ւ գործին հակառակ չեմ կենալ։ Դէ՛հ, խնամի Ալաջա՛ն, ձայն տուեց Խէչանն, ուրախացի՛ր, էս սհաթս մարդ ղրկի, թող պսակաճաշը պատրաստեն, մեր բարե-

1 Քո կողմը պահենք։

կամներովը գնանք մի լաւ ուրախութիւն անենք, հնացողն Աստծու կամքին թողանք, ընչանք օրը գայ՝ բարին հետը։

Աղջանի տանը պսակառաջն սրդին պատրաստ էր, կարգն այն էր, որ պսակից դուրս գան ու նորափեսայենց տանը ճաշեն։ Բոլոր բարեկամներով մինչև երեկոյ մեծ հացկերոյթ արին։

Խէչանի տանը հնացին միայն չորս հոգի՝ Մարիամը, Հեղնարը, Հերիքնազն և ինքը նորափեսայ Սմբատը, որ ոչինչ բանով չհամաձայնեցաւ աղջիկներին թողուլ։

— Հերիքնա՛գ ջա՛ն, էս օր ինձ Աստուած ախպեր տուեց, կրկնում էր յաճախակի Հեղնարը։

— Ա՛յ ախպեր՝ որ իր գլուխը քեզ համար մահի կը տայ, որ աչքը քո աչք ու ունքին պտի ունենայ, կրակի մէջն էլ ղրկես՝ գընայ, քարափոշին էլ քցես՝ վազելով ներքև ընկնի, պատասխանում էր Սմբատը։

— Իդպէս խօսքերով իմ սերտս արին էք կաթացնում, ջիգեարիս[1] մէջ շամփուր էք ցցում, ձեռքը մէկի և միսի բերանին սխմում էր Հերիքնազը, թէ որ դուք էս օր ձեր թշնամիների փորած հորի մէջն ընկաք, ես յոյս ունիմ, որ շատ չի քաշիլ, ձեր ճամփի քար քցողն աչքը դուս կը գայ, դուք ձեր բաղդին կը տիրանաք, ես էլ իմ մուրազին կը հասնեմ։

Սմբատի և Հեղնարի համար ամենաերջանիկ օրն էր այսօր, իսկ Հերիքնազը հոգուով տրտում էր. նա իւր սէրն սպանեց իւր սրտումը, իւր ներքին ձայնին հակառակեց, տարբներով աշխատեց, որ իր քեռու սիրան ուրախացնի, իսկ այսօր մի րոպէի մէջ բոլոր աշխատութիւնը ջուր կորուեցաւ։

Իսկ ի՞նչ էր անում պառաւ Մարիամը՝ — ոչինչ, նա մի անկիւնում նստել՝ առանց արտասուք թափելոյ լալիս էր։

---

1 Լերդ ու թոք։

ԼՐ.

ՄԱՐԴԱՍՊԱՆ ՍՂՋԻԿ

Աշտարակ գիւղի հիւսիսային ափումը՝ Թորոսենց կոչուած կալի մօտ՝ գտնուում էր մի լայն բակ, որի արևելեան կողմումը մի մեծ սրահի տակ կարգով ընկած էին մի հացատուն երեք չորս սենեակներով։

Բակի դուռն ուղիղ բացուում էր կալը վերայ և նայում էր Մողնու թառ անուանուած բարձրաւանդակին, ուր ի հնուց մի քանի գերեզմանների թուում մինչև այսօր էլ կան երեք, թէ չորս խաչարձաններ։

Լուսինն այս գիշեր երեկուան նման շատ չէր փայլում, երկինքն ամպոտ էր, բայց ոչ շատ մթնագիշեր. Աշտարակցիք վաղուց հանգիստ քնոտած էին, ամէն բան խաղաղ էր։

Խաչարձանների քամակին եափունջում կոլոլուած՝ ոտից գլուխ զրահաւորուած՝ հինգ ձիաւոր ապասում էին։

Փոքր միջոցից յետոյ դրանց մօտեցաւ և մի ուրիշ ձիաւոր, նա գիւղի կողմից էր գալիս. մթնումը մենք նրա երեսը չենք տեսնում, բայց նրան ճանաչողը կասէր մեզ, որ նա մի գեռահաս, գեղեցկադէմ, բարձրահասակ Պարսիկ բէգզադայ էր։

— Ժամանա՞կն է, բէգ, հարցրեց նորեկին սպասող ձիաւորներից մէկը, որի հրամայական ձևերից թուի թէ, միւսների վրայ գերազանցութիւն ունէր, կամ նրանց գլխաւորն էր։

— Ա՛յ, աղա՛յ, գեռ շուտ է. թէպէտ փողոցներումը ոչ ոք չըկայ, տատմէր պառաւն էլ ասում էր, որ վեսան այս գիշեր շատ վաղ է գնացել, հայրն և հօրաքոյրը կէս ժամից աւել է քնած են, բայց գեռ երկու աղջիկները արթուն են իւրեանց փոքր սենեկի մէջ։ Տատմօր ասելովն աղջիկները հէնց հիմի իրան ճանապարհ են դրել ու անկողինները փռել։ Շատ խորամանկն է այն տատմէրը Խէչանը տուն չի թողնելուս եղել, բայց ինչ որ եղել մտել է, աղջիկների թոյլ կողմը գտել ու ամէն տեղեկութիւն ինչ որ մեզ կարևոր է, մի առ մի հարցրել։ Մեր փախցնելու աղջիկը պարկած կը լինի այն կողմը, ուր մենք պատը պիտի ծակենք։ Ծակելու տեղը շատ բարակ է, ներսից մի խուլ պատուհան է, որի մէջ այժմ ոչինչ չկայ դրած։ Մի փոքր էլ սպասենք, աղջիկները խոր քնի մէջ մրափնեն և ապա գործ սկսենք, դժուարութիւնի չենք հանդիպիլ այսօր

յորեկով ևս քանդելու տեղը լաւ գտնեցի, մի քար կայ, լինկը տակը տալու պէս դուրս կը գայ և ահա՛ մուտքը բաց է մեզ համար:

Աղջիկները անկողին մտնելուց յետոյ շատ ժամանակ չքնեցին, նրանք իրենց տան գլխին եկած փորձանքի վերայ խոր հառաչանքներ քաշելով, միմեանց մխիթարում էին:

— Հեղնար ջա՛ն, Թրխկոց չես լսո՞ւմ, հէնց իմանաս մեր պատը քամակից քանդում են, փափաց Հերիքնազն իւր ընկերուհուն ականջին:

— Չա՛, Հերիքնազ ջա՛ն, պատը չքանդում են, ես վախո՞ւմ եմ, գողեր կը լինի՞ն:

— Մի վախի, մատա՛ղ, վերկաց միևթանկ[1] չլինէդ քոյի, գնանք քեռուն պարթնացնենք:

— Ոտներս բռնուո՞ւմ են . . . Հերիքնազ ջա՛ն . . ծրնկներս ծալուո՞ւմ են . . . ես չե՞մ կարողանում վեր կենալ . . . հազիւ առաւօտները միմեանց խփելով՝ արտասանեց Հեղնարն այս մի քանի բառն և մնաց տեղումն ընկած:

Մինչ այս՝ մինչ այն՝ Հերիքնազը մթութեան մէջ նշմարեց պատուհանից ներս թափանցած խաւար լուսոյ շառաւիղը, տունը ցրտեց և մի մարդու ներս սողալու շարժմունքի հետ աղջիկը լսեց հետևեալ խօսքերը:

— Գոյշ եղի՛ր, չշփոթուի՛ս, չմոռանաս, որ դու ասացիր, թէ մեր փախցնելու աղջիկը պատի կողմի պարկածն է, չլինի թէ միւսին մօտենաս, յանկարծ գրկիր ու ծակին մօտեցրու, մենք ձեռից կառնենք. տես՝ Թաշկինակդ բերանը կոխելը չմոռանաս, որ ձայն չկարողանայ հանել:

Ո՞նչ աներ Հերիքնազը, նա ուզեցաւ բարձրացնել Հեղնարին, բայց տեսաւ, որ խիստ ծանրացել է, Թոյլ տուեց: Նա իրան չըկորցրեց, նա վեր թռաւ տեղից և առանց ձայն հանելու վազեց դէպի անկիւնը:

Խչէանի տանն ի հնուց անտի մնացել էր մի հառնկիւնի սրածայր խիշա մի հասարակ փայտեայ պատուհի մէջ: Այդ խիշար ջուհարդար[2] էր. չգործածուելուց ժանգոտել և անպէտքացել էր: Տարիների ընթացքում ոչ ոք ուշք չէր դարձրել այդ խշտի վերայ, միայն մի քանի

1 Շրջազգեստ: 2 Ջուհարդարը երկաթի պղնիւ տեսակն է, որով ջուհերը սրա պատճառած վէրքն անբժշկելի է:

շաբաթ յառաջ, դէպուածով Սմբատի հետաքրքրութեանն առարկայ եղաւ այդ հազուագիւտ հնութիւնը և նա շատ դժուարութեամբ պատուհիցը դուրս հանեց: Ափսոսալով մի այսպիսի գէնքի վերայ՝ Սմբատը ջրով սրբեց և իւղեց: Այնուհետև մի քանի անգամ էլ իւղել էր նա խիշտը, որով ժանգի ներգործած տեղերը սև բծեր միայն մնացին, իսկ պատուհի մէջ շատ հեշտութեամբ մրանում ելնում էր:

Հերիքնազը վերցրեց այդ խիշտը և մօտեցաւ պատուհանին, այժմ աղաղակ բառնալն ուշ է, մտածեց նա և առաջին տուն սազայողի ձախ կռնատակիցը ներս խցկեց:

Հերիքնազն՝ այն Թոյլ աղջիկը մոռացել էր այդ րոպէին իւր տեղը, նա այնպէս յաջողակութեամբ կատարեց այդ գործը, որ իւր նպատակին լիովին հասաւ. կարծես Թէ իւր կեանքի մէջ նա միշտ սրի հետ է խաղացել, Թշնամեաց դէմ մի քանի անգամ իւր գլուխն է պաշտպանել և մարդուս մարմնոյ ամենավտանգաւոր ու երկիւղալի մասի հետ քաջ ծանօթ է. կոխեց նա խիշտը ներս մտնողի ձախ կռնատակն և մի երկու անգամ ոլորեց:

— Գնեցէ՛ք, հազիւ ձիչ արձակեց գողը, ես սպանուեցի՛: Նա խռխռոցն ընկաւ, նա էլ ոչ մի խօսք չկարողացաւ խօսել:

— Մաշադի, Մահմատ-Բաղը բէգ, ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեց, դրսիցը ձայն տուին մի անները, բայց պատասխանը՝ Բաղը բէգի խռխռոցը միայն եղաւ: Նորա ընկերները ձեռք տուին նրա ոտքերին և գան մահուան րոպէի գողման մէջ. մի փոքր միջոցից ամէն բան վերջացաւ. նա էլ էր շարժուում:

— Գնեցէ՛ք, գողեր են եկել, ձայն ձգեց Հերիքնազն իւր գործը վերջացնելուց յետոյ և վազեց միւս սենեակը զարթնացրեց քեռուն և մօրը, որոնք քնաթաթախ միայն անկապ բառեր և ճիչ էին արձակում:

— Մի՛ շփոթուիք, ձրագ չվառէ՛ք, նօքարներին[1] զարթնացրէ՛ք, անօրինեց անահ աղջիկն և ինքը կրկին խիշտը ձեռքին դուրս թռաւ իւրենց սենեակը: Նա պատուհանի բացուածքովն այս խօսքերը լսեց:

— Տղէ՛ք, մեզ չյաջողեց, այսուհետև դէմ գնելն աւելորդ է, մեր միտքը գողութիւն, կողոպտել չէ, իզուր տեղը գուցէ մի-

1 Ծառայք:

երկուսի արիւնն էլ կը թափուի, ահա բակի մէջ ծառաներուն ձայնն էլ բարձրացաւ. ոտքերուն տրոփիւններ եմ լսում, հեռանալը խոհեմութիւն է, ձիանքդ նստեցէ՛ք՝ քաշուինք։

— Իսկ այս խեղճի մարմինը կը վայելի՞ այս տեղ ձգել ու երթալ, աղա՛յ, հարցրեց ընկերներից մինը խօսողին։

— Դա մեր ընկերը չէ, դրան ո՞վ խնդրեց յառաջ ընկնել, իրան պաշտօնն էր միայն ձանապարհները մեզ ցոյց տալ, ես քանի անգամ ստիպեցի թոյլ տալ մեզ գործել, ականջ չարեց, ուզեցաւ մեզ զարմացնել իւր քաջութեամբն և ահա պատիժն առաւ։ Դէ՛հ, տղէ՛ք, ձի նստեցէ՛ք, աղաղակը մեծցայաւ։

Այս արդարև՛, Խէչանի գոռիւն գոչիւնը զարթնացրել էր գոմումը քնած ծառաներին, որոնք դուրս գալով բակը՝ օգնութիւն էին կանչում։

— Հիմի ձրագ վառի՛, նանի՛, Աստուած մեզ ազատեց, գողերը փախան, մէնակ մինն իր պատիժն առաւ, ձայն տուեց Հերիքնազին և ներս ընկաւ մօր ձեռքիցը խլեց հրահանի պողովատիկն և ձրագը վառեց։ Մօր ձեռքերը դողում էին։

Սարսափելի էր տեսարանը, Հեղնարը, համարեա՛, անշունչ ընկած է անկողնումը. մի երկայն դիակ էլ տարածուած է պատի մէջ, մարմնոյ կէսը ներսը սենեկի մէջն է՝ գլուխը պատուհանից վայր կախուած, իսկ ոտքերը դուրսը. կողքից բղխած արիւնը սենեկի մէջ լերդացել է.

Հարևանները բոլոր զարթնեցան, փողոցը, կտրները, բաղն և բակը մարդկանցով լցուեցան, դռները բացուեցան և բազմութիւնը տուն թափուեցաւ.

— Մահմատ-բաղը լէ՛զը, մաշադի Մահմատ-Բաղըը, զարմացմամբ ձանաչեցին ամէնքն սպանուած երիտասարդին, ես ի՞նչ բան ա։

— Ես սպանեցի, օրիորդական ամօթխածութեամբ գլուխը կորացրած՝ պատասխանեց Հերիքնազը, դա մէնակ չէր, մի քանի հոգի էին. ոնց որ խօսում էին՝ եկել էին Հեղնարին փախցնելու։

Հերիքնազը պինդ բռնած ունէր ձեռքին եռանկիւնի սրածայր արիւնոտ խիշան և ամէնքին ցոյց էր տալիս։

— Վա՜յ նանի ջան, ես ի՞նչ ա, ձչաց նոր ուշաբերած Հեղնարը, երբ որ ձրագի լուսով տեսաւ պատուհանումը ձգուած դիակն և արիւնը։

Հեղնարը կրկին ուշաթափուեցաւ։

Խեղճ Խէչանն այս տեսարանները չկարողացաւ տանել, սրտաբեկ, ծնկնակոտոր վայր ընկաւ մի տեղ և լաց եղաւ։

— Ախտա՛ իմ Մահմատ-Բա՛ղը, դու չպէտք է սպանուէիր, քեզ գլխահան անողը պէտք է էդ պատժին գար, յաձախ կրկնում էր Խէչանը։

— Ի սէր Աստծու, աղջկանս օգնեցէ՛ք, Հեղնարիս յետ բերէ՛ք, լինձանում ջան չմնա՛յ, էս երկօրն իրար վրայ իմ գլխին պատուհաս ա՛ գալիս, Աստծուն փա՛ռք, ի՞նչ կարամ անիլ, հալբաթ մեղաւոր եմ, կոծում էր Ծերունին։

Հերիքնազն իւր մօր և ուրիշ կանանց հետ թէպէտ ուշաբերին Հեղնարին, բայց նա խիստ թոյլ էր, հարկաւոր էր անկողին դնել նրան։

Այդ միջոցում լերդապատատ տուն ընկաւ Սմբատը. նա շատ ուշ էր իմացել նրանց տունը հեռու էր։

— Լա՛յ ըընելու ժամանակ չէ, Սմբա՛տ ջան, կամաց մրմնջաց Հերիքնազը, արի Հեղնարին գրկի՛, տանենք հայատանը թեք քցենք։

Ամբողջ գիշերը Հեղնարը զառանցում էր [1], յիորքի մէջ էր։ Սմբատն ու Հերիքնազը ոտքերի մօտ էին նստած, իսկ ուժահատ Ծերունի հայրն ու Մարիամը ձեռքները ծնօտին՝ գլխավերևը։

Լաս Մէլիդն [2] էսպէս ճնա՛յ, ոչ ով ձեռը չտայ, տնօրինեց տանուտէրը, տղէ՛ք, ձիաւորուեցէ՛ք, մի երկուսը ձեզանից ինձ հետ գան՝ գնանք մովըովին իմաց տանք, մնացածներն էլ բաժին բաժին էլէ՛ք, ամէն ճամփով էլ գնացէ՛ք գողերի քամակիցը։ Ձեզ մատա՛ղ, ջահէլներ, բան ա՛ թէ որ պատահիք, աշխատեցէ՛ք, ինչպէս ըլի՛ սաղ բռնել. մեզի էլ որ ձեռ քցէ՛ք՝ հերիք ա, թէ չէ, երբ որ տեսաք ձար չկայ, ձեր պլուխը պահ կորչի, տեսաք որ նեղն էք ընկնում՝ գիւլլա [3] բանացրէ՛ք, հօ՛ գիտէ՛ք, ի՛նչ օրերի ենք հասել, մովըովի հրամանն ա, որ գողը գալիս ա քեզ սպանի՝ դու իրան մի՛ սպանիլ, աշխատի սաղ բռնես, հէնց իմանաս գառն ա, կամ թէ չէ՝ նոր ոտն էլած հաւի ձուա։

Այս արկածքը պատահեցաւ Սաքոյի Մահմատ-Հասանի հետ խօսեցած երկրորդ գիշերը։

Միւս օրն առաւօտեան լոյսը նոր բացուում էր, որ մովըովը մի գրագրով, իւր թարգմանովն և մի քանի հասամալներով տանուտէրի հետ Աշտարակ մտաւ։

---

1 Գելը տալ։ 2 Դիակ։ 3 Գնդակ։

— Աղայ ջա՛ն, ինչ կուզե ըլնի, էլ Խէչանին ձեռաց չթողաս, մեղքը բոլոր նրա շլինքը քցի ու կռները կապած հետդ բեր, հազիր ինքն իրան մեր ձանգն ընկաւ, ասաց մովսովին Սաքօն, երբ տանուտէրի բերած համբաւը մտաւ հաղորդելու։

Ընթերցողը ի հարկէ գիտէ, որ Սաքօյին յայտնի էին այս գիշերուան հանգամանքները։ Նա Աշտարակի ձորի կամրջի միւս երեսին սպասում էր Մահմատ-Հասանին և նորա ընկերացը։ Գործի անյաջող ելքը լսելով Մահմատ-Հասանի բերանից, բաժանուեցաւ նրանցից և ծուռեց դէպի Սև ջրի գլուխը։

Լ Գ.

Ա Ր Շ Ա Ր Ա Դ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

— «Բոլոր մեղքը Խէչանի շլինքը քցի՛, կռները կապած հետդ բեր, հազիր ինքն իրան մեր ձանգն ընկաւ»։

Այս տրամադրութեամբը մովսովին Աշտարակ մտաւ։ Որոն իւր ձանգն էր ընկել, բաց թողնելն անխելքութիւն էր։ Սաքօն այս տեղ իւր հաշիւն ունէր, իսկ կարճատես մովսովը չկարողացաւ թափանցել իւր հաւատարմի գաղտնիքների մէջ. կոյր գկուրային նրա տուած կանոններին հետևեց։

Ի՞նչ առաւօտ էր, որ այսօր բացուեցաւ Աշտարակումը, ի՛նչ սարսափելի ու քաոսեցուցիչ տեսարան էր։ Ոչ միայն Աշտարակեցիք՝ նոր ոտքի եղած երեխաներից մինչև ծերերը, մերձակայ գիւղերն ևս հայ ու պարսիկ ամէնքն՝ ամէնքը դէպի Աշտարակ էին վազում։ Վատ համբաւը շուտ տեղ կը հասնի, ասում է առածը, իսկ այս տխուր դէպքից մեծ ի՞նչ վատ համբաւ։ Խէչանի պատը ծակել են, աղջիկն ուզեցել են փախցնել և մի ուրիշ թոյլ ու անզօր աղջիկ՝ մի տկար արարած Մահմատ-Բաղրի նման կորիճ տղամարդին սպանել է։ Երկու տունն էլ նշանաւոր. մինը՝ գաւառի ամէնից հարուստը, միւսը՝ քաջատոհմ Բէգ-ագայ, հօր մինուճար, մի մեծ գիւղի կալուածատէր, մի տան ձրագ. իսկ այդ երկու տներն երկար տարիներ է խօնախայ[1] են իրար հետ, տես ու ճանաչ

1 Ծանօթ, բարեկամ։

են։ Մահմատ-Բաղրը տարուան մեծ մասն Աշտարակ էր անցկացնում և իւր իջևանն էր Խէչանի տունը։

Ահա բուն պատճառը, որ Սաքօն անմիտ երիտասարդին իրեն գործիք ընտրեց։

Մահմատ-Բաղրը դաւաճանեց աղ ու հացի ու բարեկամութեան դէմն և պատիժն առաւ։ Նա պարսիկ էր և օրէնքով հայի հացի պռունգ չպէտք է կոտրէր, իւր ծանօթի տանը պիտի բաւականանար խաշած ձուով հիւրասիրուելով, բայց Մահմատ-Բաղրը նոր երիտասարդ, իւր նմանների պէս չէր պահում այդ կանոնը. Խէչանի տանը նա ուտում էր ինչ որ իւր առաջը բերում էին և ամենափառաւոր կերպիւ վայելում էր Խէչանի գովական պինդն ու արաղը։ Մահմատ-Բաղրը զոհ գնաց Սաքօյի շահերին, իսկ ինքն՝ այսքան թշուառութեանց պատճառը՝ մի կորկի չափ ցաւ չզգաց, չզղջաց իւր չարագործութեան վերայ։ Նա մի բանի համար միայն խիստ ցաւեցաւ. նրա ծրագիրը ոչնչացաւ, ինքը յաւիտեանս զրկուեցաւ Խէչանի հարստութիւնից. նա մի բանի համար միայն երկմտեցաւ և դորա յառաջն առնելն էր իւր ձիգը։ Հանգամանքն այնպէս բերեց, որ կարելի էր հետևեցնել թէ Խէչանը կարող էր գուշակել իւր անբաղդութիւնների բուն պատճառը. առանց Խէչանի ցանկութեան ինքը Սաքօն մեղալի էր ներկայացրել նրան, մի քանի օր յառաջ էլ խնամախօս էր խրկել և ահա այս ամէնից յետ՝ յանկարծ Խէչանի աղջկայ պսակը խափանուում է և տանը մարդասպանութիւն է պատահում։

— Սրա յառաջը պտի առնել, թէ չէ իմ գլուխն էլ զընդանի տակ կը մտնի ու մովսովինն էլ, մտածեց Սաքօն և հնարքը գտաւ։ Երկիւղը մէնակ Խէչանիցն ա, թէ որ նա բռնուի, փակի տակ դրուի, էլ ո՛վ պտի գլուխ ցաւացնի, բանը կը քնի ու կը փթի, համ մենք ապահով կըլինինք, համ էլ մէջը մենծ օգուտ կը քաղենք։

Այս ընթացքովը Սաքօն պատրաստեց մովսովին և Աշտարակ ուղարկեց։

Այստեղ դաւաճանութիւն կայ, բոլորը հնարովի խօսքեր են, ի՞նչ աղջիկ փախցնել ի՞նչ աղջիկ մարդասպան, այս տղամարդի գործ է և հին ատելութեան ու վրէժխնդրութեան հետևանք, գոչեց մովսովը դիակը գննելուց յետոյ. այս պատը գիտութեամբ է քանդած և խեղճ երիտասարդին բռնութեամբ կամ խարէութեամբ ներս է մտցրած, ես իսկոյն յանցաւորը կը գտնեմ և նրա չարագործութեան արժանի պատիժը կըտամ։

Մովսովը Խէչանի սենեկներից մէկում առեան նստեց և ծառաներից սկսաւ հարցմունքի սկիզբը դնել։

Եղելութիւնը ոչ ոք չէր իմանում բացի Հերիքնազեցը, որին մովսովը մօտ անգամ չէր ուզում թողնել։

— Ո՞ր այժդ ու բակիդ զօրութիւնը ի՛նչ է, որ դու այդպիսի երկայն խիշտը կարողանաս ձեռքումդ շարժել և յաջողութեամբ սրտի մէջ ցցել։ Այդ հին փթած հնարքներ են՝ դլխաւոր մարդասպանին աչքից փախցնելու համար, բարկացմամբ խօսում էր մովսովը, կամ թէ պարսիկը հայի աղջկանն ընչի՞ պէտք է փախցներ, ի՞նչ հաշիւ ունէր, քրիստոնեան մահմետականի կին չի կարող դառնալ և ինչպէս դու ինքդ քո բերանով վկայում ես սրա միւս ընկերներն էլ պարսիկ են եղել։

— Ես ինչ որ լսել եմ, ինչ որ արել եմ, էն եմ ասում, սուտ խօսելու կարիք չունիմ, հիմիկեց յետը կամքը քո հրամանոյն ա, պատասխանեց Հերիսան և մովսովի ձեռքով նշան տալու վերայ հեռացաւ։

— Յառաջ արի՛, աղայ Խէչա՛ն, հեգնաբար հրամայեց մովսովը, ի՞նչ ես դլուխդ կախել, սուտ պատմութիւն երեսիդ կիտել, քեզ պէս ծեր աղուէսների շատ եմ հանդիպել, իմ ձեռքից չես կարող փախս տալ։ Ես վաղուց դուշակում էի, որ դու ձինաւորի հագուստով սատանայ պէտք է լինէիր, վաղուց քո հոտը դիտում էի, բայց չէի կարողանում բռնել քեզ, սատանայ էիր և սատանաների ամենից խելացին ու ճարպիկը. գառնազգեստ գայլ դու, գաւառի բարերարն էիր հանդիսանում, առանց ոսկոսի փող էիր պարտք տալիս, աղքատների ու անկարողների հարկերն էիր վճարում, ամէնքի աչքերն էլ հող ու մոխիր էիր փչում ու ռամիկ ժողովրդի գովասանքն ու համակրութիւնը գրաւում։ Նշանակում է՝ որ դու վաղուց մտքումդ դրել էիր էս խեղճ բէգլադայի արևը մթնացնելու և վերջը ժողովրդի միջնորդութիւնովը ու վկայութիւնովը արդարութեան ձեռքից դուրս պրծնելու։ Չէ՛, չէ՛, Խէչա՛ն, քո դիմացիդ մարդը նա չէ, որին դու ջուրը քաշես. լաւն այն է, քանի քեզ շատ չեմ ատիկել, ուրիշ օրինաւոր միջոցներ չեմ ձեռք առել պարզը խոստովանիս ու պրծնիս. էս ամէնը քո արածներն են, քո դողդողացող ձեռքերն են, որ դիշերուան մթութեան մէջ շատ առուդութեամբ բռնել են խշտի դաստակը և ոլորմելի երիտասարդին քո ոխակալութեանդ զոհ արել։

— Լաւ միտք արա՛, աղայ մովսո՛վ, թէ ի՞նչ ես խօսում,

Խէչանենց Խէչանի ազգը պապէ պապ մի ձանձ էլ չի սպանել, մըրջիմը չի կխչորել ու հիմի ես քո ասելովը պաի 20, 30 տարուէն մեր ու Մահմատ-Բաղրենց տան աղ ու հային խայնի[1] մռիկ տալի, ես էդ խեղճի հօր հետ ալոպօր պէս եմ էլել իրան ոլդուս պէս եմ ընդունել, ի՞նչ քէն ունէի դրա դէմը, որ բերում էի իմ տանը սրտիս մուռը հանեմ, էն էլ ի՛մ տանը. թէ որ ես մարդ սպանել ուզէի, ուրիշ տեղ չկա՞ր։ Իմ քուռ աղջիկը եղելութիւնը քեզ տեղն ու տեղը պատմեց ու պրծաւ։ Դու հէնց իմանում ես, թէ ես որ զարթուն ըլնէի, էս անբաղդութիւնն իմ տանը կը պատահէ՞ր, բայց ջահել անփորձ աղջիկ՝ ինչ որ խելքին փչել ա՝ էն ա արել։ Ես չգիտեմ, էս ի՞նչ Աստծու բարկութիւն ա, երկնային թագաւորն իմ ո՞ր մեղքն ա երեսովս տալիս, հալբաթ մեղաւոր եմ, որ 100 տարիքով չլսուած բանն իմ տանը տեսնուեց, երեկ մին ու ձար աղջկանս պսակը ձեռ ձեռի տալու տեղը խափանուեց, էսօր էլ աղջկանս քամակիցն ընկնողներն էս խեղճ ջահել ջիվան բէգի արիւնը մտան ու իրանց մուրազին էլ չկարողացան հասնիլ։

— Լաւ, որ դու ես ասում, թէ Աստուած քո մեղքն ա երեսովդ տալիս, չար մարդը միշտ կը պատժուի, մենք դատաւորներս Աստծու արդար աչքն ենք, որ քեզ պէս չարագործներին պատուհասում ենք։

— Ես շատ լաւ գիտեմ, մովսով աղա՛յ, թէ փորձանքների ծէրն ո՞ւմ տակին ա. գործակալն ի՞նչ իրաւունք ունէր իր տուած հրամանը քանդելու, ի՞նչ էհասութիւն կայ մէջը՝ որ գրում ա, ի՞նչ կապ ունէր եասավուլի, կամ թէ քո անուշն իմ որդու պսակի հետ. քո հրամանն ի՞նչ գործ ունէր եկեղեցական կարգերի մէջը, դու մարմնաւոր դատաւոր ես, հոգևոր դատաւոր հօ չէ՞ս, դրա համար կանսիստոր կայ, Էջմիածին կայ։ Թէ որ երեկ մեր գեղացիք ինձ թողային կաթողիկոսի ու նահանգի մօտ գնալու, հիմի ամէն բան հայելու պէս պարզ կերևար. բայց արևը վատ տեղ մեր մտաւ։ Վնաս չունի դու դեռ քո քննութիւնդ պրծի գնա՛, Էջմիածինը հեռու չի, մնացողն իմ գործն ա։

— Զայնդ կարի՛, չնճե՛ր, դեռ սպառնալիք էլ ես տալիս, ի՞նձ ես ուզում քո չարագործութիւնների մէջ խառնել. դու կարծում ես, որ այսուհետև լոյս արև՞ պիտի տեսնես, որ մարդու երես գնաս,

---

1 Նենգօրէն։

բարկացաւ մովսովն ու տեղեցը վեր թռաւ, մի այնպիսի խիստ ապտակ տուեց խեղճ Խչէանին, որ նա շարժուեց ու վայր ընկաւ։

— Տանուտէր, հրամայեց մովսովը, իսկոյն այստեղ կանչել տուր քահանային, թող բերի իւր հետ գործակալի հրամանը, իսկ դու տո՛ւր իմ գրած հրամանաթուղթը։

Տանուտէրը հանեց ծոցից մովսովի գրածն և տուեց իրեն։

— Ա՛յս մէկ, Խչէան աղա՛յ, քո փաստերից մէկը ոչնչացա՛ւ, հեգնելով պատառոտեց մովսովը իւր գրած գիրը և վառարանի մէջը ձգեց։

— Ա՛յս էլ քեզ երկրո՛րդը՝ սրանից էլ ձեռքերդ լուա՛, գործակալն էլ աղատուեցաւ պատասխանատուութիւնից։ Տէրտէրի հրամանաթուղթն էլ ձեռքիցն առնելով՝ կրակի մէջ ձգեց մովսովը։

— Ա՛յ աղայ, իմ վկան էլ, իմ տէրն էլ Նա ա, պատասխանեց Խչէանը երկինքը մատնացոյց անելով, Նա ամէն բան տեսնում ա։

— Այդ թողանք, Խչէան, շատ ուշ ձեռք առաւ անփորձ մովսովը խորամանգութիւնը, օրէնք է, դատաւորը կ՚սպառնայ էլ կը սիրէ էլ. ես փորձելու համար քո վերայ բարկացայ, ես գիտեմ, որ իմ գաւառումը քեզ նման տառաքինի և բարի մարդ չկայ. արի՛, ձշմարիտը խոստովանիր. խնայած կա՛ց, որ ինչքան և մեղաւոր լինես, ես քեզ բոլորին կարդարացնեմ. ասա՛ ընչի՞ համար այս բանը գործեցիր, ի՞նչ ոխ ունէիր պարսկի դէմ և ի՞նչպէս մտածեցիր այդ հնարքը։

— Աղա՛յ, դու զուր ինձ էդպէս հարցմունքներ մի անիլ, ես ուրիշ ասելու բան չունիմ. ես հէնց էն ժամանակը վերայ հասայ, որ քուրաս աղջիկը բանը վերջացրել էր. ամէն բան նա ա լսել ինչ որ քեզ ասեց, մեզ էլ երեկուանից դէսն էն ա ասում։

— Հերի՛ք է, Խչէան, մեղք է ուրիշներին մեղադրելը, եթէ ամանչում ես այսքան մարդկանց մօտ խոստովանելը, ես բոլորին դուրս կը հանեմ, ինձ ծածուկ պատմիր, մեր մէջը կը մնայ։ Այս խօսքերից յետոյ մովսովը դուրս հանեց բոլորին. նա հասկանում էր թուրքերէն։

Երկար ժամանակ մովսովը Խչէանի հետ փակուած մնայց, շատ յորդորներ, քաղցր խաբէական խօսքեր, սպառնալիքներ կարդաց. ծերունու բերանից միայն լսեց ձշմարտութիւնը։

— Ի՞նչ յանկարծ դուռը յետ բանալով գոչեց մովսովը, դու ի՞նձ ես սպառնում ես սպանելու, իմացիր ո՞ւմ հետ ես խօսում. հասավո՛ւղ սրա ձեռները կապեցէ՛ք, ոտքերը շղթայեցէք, գրագի՛ր,

արձանագրիր, որ սա սպառնացաւ ինձ և սահմատ-բաղրի նման սպանել, եթէ ես իրան ազատ չթողնեմ. այդ բոլորովին պարզ իւր յանցանքը խոստովանել կը նշանակի, գրի՛ր, թող բոլոր բազմութիւնն այս խօսքերին վկայ գրուին։

— Աղա՛յ, գլխիդ մատա՛ղ, տուն մտաւ յանկարծ Սմբատը, ասենք էս բանի մէջ ոչ ես եմ մեղաւոր, ոչ էս ողորմելի Հալիւորը, բայց ես խնդրում եմ որ սրան բաց թողաս՝ իմ կռները կապես, ինձ զնջլե[1] մէջ դնես. սա ծեր մարդ ա՝ չի կարող տանիլ, համս ես, փառք Աստծու, դեռ կռներումս ուժ ունիմ. խեղճ արի՞ դրան ու իր միևնուճար աղջկանը՝ որ գլխատեռիս նշանածն ա. երեկուանից խեղճ աղջիկը տաքութեան մէջ ընկած էր. հիմի երբ որ իր հօրաքիրը գոռալով տուն ընկաւ, որ սրան դու կապել չարբանդել ես[2], հիւանդ հիւանդ տեղեցը վեր թռաւ, ուզում էր գայ քո ոտքերն ընկնի, ուժահատուած տան մէջ տեղը փռուեց ու սիրտը գնաց. արի՛, աղայ, քո աչքովդ տես ու խեղճ արի՛։

— Դու ո՞վ ես, որ համարձակուում ես իմ դէմս խօսել։

— Ես էս տան անբաղդութենի պատճառն եմ. եթէ Խչէանն իր տուած խօսքը քանդէր, աղջկանն ուրիշ հարուստ տղի տար, հիմի էս պատուհասն իր տան գլուխը չէր գալ, ոտներիդ մատա՛ղ, աղա՛յ, ինձ զնջլե դրա տեղակ։

— Արի՛, աչքիցս հեռացի՛, ես իմ յանցաւորին լաւ եմ ճանաչում։

— Որ ըտէնց ա՝ ես եմ մարդասպանը, ես մի երկու շաբաթ յառաջ իմ ձեռովս խիշտը սրեցի, ես խարնով Սահմատ-Բաղրին ըտեղ բերի, ես պատն առաջուց քանդեցի ու թուրքին մէջը կոխեցի, իմ ձեռովս էլ սպանեցի, հիմի լսեցի՞ր, դէ՛, անմեղ մարդին բաց թող ու ինձ բռնի։ Էս խօսքը քեզ մօտ էլ եմ ասում, նաչալնիկի մօտ էլ կասեմ, թող էսքան բազմութիւնը՝ հայ ու թուրք լսեն ու վկայ ըլնին, հրամայի գրագրիդ՝ ասածներս մի մին նշանակի, ես էլ տակին ձեռք քաշե՛մ։

— Ա՛յ ջամիհաթ[3], անկաջ դրէք, դարձաւ Սմբատը դէպի բազմութիւնը, Մաշատի Սահմատ-Բաղը բէգին ե՛ս եմ սպանել, իմ բերանովս իմ մեղքս խոստովանում եմ, դուք էլ վկայ կացէ՛ք։

— Սուտ ես ասում, Սմբա՛տ, հոգուդ մեղք մի՛ անիլ, ներս

---

1 Շղթայի։ 2 կաչկանդել։ 3 Բազմութիւն։

ընկաւ յանկարծ Հերիքնազը, որ պարապած էր Հեղնարի հետ, Աստծուն էլ յայտնի ա, որ էս թիլլիկ-միլիկ ձեռներն են սպանել թէ որ չէք աւատում՝ ա՛յ, արնի նշանները: Ե՛ս եմ սպանողը, եթէ բռնուել ա՝ ես պտի բռնուիմ: աղա՛յ, ոտիդ տակին մեռնե՞մ, չոքնց աղջիկն ու փաթաթուեց մովրովի ծնկները, ոչ իմ քեռին ա մեղաւոր, ոչ իմ փեսէն. մինն սպանելուց յետո խմացաւ, մկկելը խալխիցը շատ յետոյ հասաւ, ես եմ արել, ինձ բռնիր ու ինձ կախ տո՛ւր: Աստուած ինքն էլ իմանում ա. որ իմ սրտումն չարութիւն չի էլել. ես իմ քեռու աղջկայ պատկառանքը պահելու ու մեր գլուխն ազատելու համար եմ արել. ես ոչ խմացել եմ տուն մտնողը Մահմատ-Բաղրն ա, ոչ նրա դէմ մի ոխ եմ ունեցել, թէ որ ես նրան սպանած չըլնէի, հիմի ոչ իմ քեռու աղջկին ըստեղ կըլնէր, ոչ շատ կարելի ա, մենք սաղ կըլնէինք. ես մեծան միջին տեսայ հինգ զօրքայ[1] ձիաւորներին, թէ որ նրանք մեր տունը մտնէին, ի՞նչ կըլնէր մեր հալը[2]:

— Թողէ՛ք, բալէ՛ք ջա՛ն, թողէ՛ք, մովրով աղէն շատ արդար դատաւոր ա, ես սրանից շատ շնորհակալ եմ, որ ձեզ մարդատեղ չի քցում, ձեզ մհալ չի դնում[3], ես ծերացել եմ, օրերս անց են կացել, մի ոտս դերեզմանումն ա, ես եմ պատժուելու արժանի, աղջկայ խօսքն ընդհատեց Խէչանը. Սմբատ ջա՛ն, քեզ եմ յանձնում իմ տունս կառավարելը, դու իմ երկու որբերին հէլութիւն, ախպերութիւն, սիրութիւն արա. էլ ըսատուց յետը դու ձեր տունը չգնաս, բոլոր իմ ունեցածներս քեզ համար էր ու էս օր էլ ափըը դու ես. ես էս րոպէից իմ հայրական օրհնութիւնը ձեր գլխին եմ թափում, թէ որ բան ա, ես էս փորձանքիցն էլ պրծնեմ ոչ պատկո՛ւմ քո նշանածի հետ ու քո քեռուն՝ իմ սիրելի Հերիքնազին՝ քո հալալ քուեր պէս պահի ու մի լաւ ապի տուր, հետն էլ քուեր պէս անխնայ բաժինք տուր:

— Ախու ջա՛ն, խօսք մի՛ խառնի՛, թող մովրով աղէն ինձ բռնի՛:

— Սո՛ւս, էլ իրաւունք չունիս խօսելու, ես քեզ հրամայում եմ: Հերիքնազ ջա՛ն, գարձաւ ապա Խէչանը դէպի իւր քրոջ աղջիկը, դուշ քո պարտքդ կատարեցիր, մեր տան ամօթը վերացրիր, Աստուած քեզ վարձահատոյց ըլի՛. ինչս չունի, քեզ մատա՛ղ, ես կը պատժուեմ, դու քո քուերդ լաւ մտիկ տո՛ւր, միշտ մխիթարի նրան, մօրդ սիրտ տուր. ես դիտեմ ջրատար պառաւն էսքան ցաւերը չի կարող տանել, շուտով գերեզման կը մտնի. դու մի՛ տրտմիր, սիրուն բալի՛ս, Սմբատին ախտօր ու հօր պէս ընդունի՛ ես ինքըս կերթամ, նեղութիւնը կը քաշեմ ու բանտի միջից էլ Աստծուն աղօթք կանեմ, որ ձեր վերջին նեղութիւնն էս ըլլի:

— Ձի՛, չէ՛, դու չես գնալ, ես եմ մարդասպանը, ես պտի պատժուիմ, յառաջ վազեց Սմբատն ու փաթաթուեց ծերունու վիզը:

— Ո՛չ դու ես՝ ոչ նա, ե՛ս եմ մարդասպանը՝ ե՛ս. էս օրուան մարդասպանն աղջիկ ա, թող աղայ միրզէն գրի իմ խօսքերը, թող աղայ մովրովն ինձ բանտարկի, Հերիքնազը մտեցաւ ու գրկեց քեռուն ու Սմբատին:

— Ձգրե՛լ, ոչ այս ցնդած աղայի և ոչ այս յիմար աղջկայ խօսքերը, բարկացաւ մովրովը գրագրի վերայ, երբ նա ուզում էր արձանագրել նոցա ասածները, ես իմ յանցաւորին լաւ ճանաչեցի, իւր բերանովը խոստովանեց, գրանք իրանց գլխից ձեռք վերցրած անմիտներ են, բայց ես խելք ունիմ, հասկացողութիւն ունիմ, ես անմեղներին ու ցնորուածներին պատժելու միտք չունիմ:

— Ո՛րտեղից եկել էք, այնտեղ կորէ՛ք, հեռացէ՛ք երեսիցս, հրամայեց մովրովն և հասաւորները աղջկայ կռնից քարշելով յետ մղեցին, իսկ Սմբատի վզակոթը տաքացնելով դուրս վռնտեցին:

Ողջը բաղմութիւնը լուռ էր, շատերը շարժուած այս աղեխռովքիս տեսարանից՝ ծածուկ արտասուում էին, ամէնքը պարզ համոզուեցան, որ սպանողը Հերիքնազն է եղել և շատ իրաւացի է ասել. Մահմատ-Բաղը բէգի հօրեղբօր որդիքը, որոնք նոյնպէս ներկայ էին, իրանք էս արդարացնում էին աղջկանը:

— Տանուտէր, հասարակութի՛ւն, ի վերջոյ խօսեցաւ մովրովը, եկէ՛ք այս արձանագրութեան ներքևն ամէնքդ էլ վկայ գրուեցէ՛ք, դուք լսեցիք, որ Խէչանն իր բերանովը խոստովանեց, թէ սպանողն ինքն է և թէ հին ոխ է ունեցել Մահմատ-Բաղրի հետ և թէ խաբէութեամբ իւր տունն է բերել և այս չարագործութիւնը կատարել: Ես այս րոպէից սրան բանտարկում եմ, մի քանի ժամանակից սա Երևանի բերդը կերթայ. մենք սրա գործերը մանրամասն կը քննենք, ուր հարկն է կուղարկենք, իսկ ինքը եթէ փաստեր կունենայ, թող տեղն արդարանայ:

— Աղա՛յ, գլխիդ մատա՛ղ, մօտ եկան մի քանի յառաջաւո-

1 Հուժկու. 2 Դժբութիւն: 3 Ուշք չի դարձնում:

ներ հայերի և պարսիկների միջից, որոց հետ էին և սպանուողի ազգակիցքը, մեզ բաշխի՛ր, բայց Թող այդ ծերունուդն, գործիցն երևումէ, որ դա անմեղ է և աղջիկն է սպանողը. նա էլ իրաւունքով է արել, մեր ամէն մինը նոյնը կանէր. երբ պատդ ծակումէ ես տունդ մնումէ, էլ ուրիշ ի՞նչ կարաս անիլ գրիր ինչ որ ճըշմարիտ է, մենք անմէնքս ուրախութեամբ ստորագրենք։

— Արէ՛ք ամէնքդ էլ իմ աչքիցը, անպիտաննե՛ր, բարկացամովքովը, ձեզ ես մարդատեղ եմ գնումէ, բան ասումէ՝ դուք էլ նազ էք անումէ, ոչ մէկիդ ստորագրութիւնն ինձ հարկաւոր չէ, ես իմ քննութիւնը վերջացրի։

Ամէնքը յետ քաշուեցան և գլուխները կախեցին։

— Ա՛ահմատ-Բաղրի դիակը յանձնումեմ իւր ազգականներին, տօլմինեց մովքովը, Թող տանեն իւրեանց գիւղումը հողին պահ տան, մինչև որ գաւառական բժիշկն Երևանից վերադառնայ և գնայ վէրքը քննի, իսկ դու՝ Աշտարակու տանուտէ՛ր, 10 զօրահակիրներ պատրաստիր, որ այս բանտարկեալին տանեն գիւղէ գիւղ Սև ջրի գլուխը,

Ասյս անաչառ քննութիւնն անելուց յետոյ մովքովը ձի նստաւ իւր մարդկանցովն ու վերադարձաւ իւր կացարանը։

— Հա՛ տո խելքդ քննութիւն ես արել, գլխիդ մատա՛ղ, հիմի ջեբիդ բերանն արխէյին յետ բաց արա ու մի կողմը կաննի, ուրախ ուրախ մնիկ տուր, փառաւորուի՛. Խէչանենց Խէչանի փողերը մի մին ոտնատորուելու են ու քո քիսումը բնակալելու։ Ես մոռացայ հրամանաթղթերի համար բան ասել, համա քո խելքդ առանց էն էլ ծով ա, ինձանից լաւ ես հասկացել ու կրակը քցել, իզուր զը[1] ջնջել, որ ըսկի բռնելու տեղ չունենան. ախար ես քո ոսի պճեղը[2] չափ հասկացողութիւն ընչի՞ կունենամ։

Ահա Սաքոյի խրախուսականը, որ կարդաց մովքովի գլխին, երբ նա Աշտարակից վերադառնալով՝ կանչեց և իւր կատարած գործերի հաշիւը տուեց իւր մեծերին։

---

1 Հետք։ 2 կճղակ։

Լ Դ.

Ա Ն Ա Կ Ն Կ Ա Լ Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

Գիշեր էր, Զէյվայ հայաբնակ գիւղումը ոչ մի ճրագ չէր երևում, միայն գիւղի ափին շինած մի հատիկ գիղեցիկ տների սենեկներից մէկի ճրագը դեռ չէր հանգել։

Ասյս շինութիւնը մովքովի տներն էր։ Սև ջրի գլխից այժմ Սարդարաբադու գաւառակապետի կացարանը Զէյվայ էր փոխուել. Սև ջրի գլուխն այժմ ամայի էր։

Յիշեալ պատուհանի ճրագն էլ հանգաւ և խաւարն ամէն տեղ բռնեց։

Ա՛ովքովի բակումը մէնի մէջ նրա կացարանից բաւական հեռու մի ուրիշ տուն կար։

Ա՛երջին լոյսը հանգչելուց փոքր ինչ յետոյ՝ մէնումը մի ստուեր խարխափելով դիմում էր դէպի այս երկրորդ տունը։ Նա իւր քայլերն դադարեց, երբ մօտեցաւ այդ տեղին. նա ոտքի մատների վերայ էր յառաջ գնում։ Մի շատ փոքրիկ վանդակապատ լուսամուտ էր երևում պատի վերայ, ստուերը դէպի այդ լուսամուտն յառաջացաւ և ականջը դէմ տուեց։ Երևի թէ նա մի քըչքըչհին էր լսում, բայց խօսքերը չէր որոշում. շատ անհամբեր շարժմունքներ էր անում և անբաւական էր ներսը կատարուած իրողութիւնից։

Ստուերը հեռացաւ պատուհանից և չոքե չոք դէպի տան դուռը գնաց. այս կերպիւ հաստատապէս տեսաւ, որ իւր քայլուածքի ձայնը չի վեր կենում։ Դուռը ծածկած էր և ոչ փակած. անծանօթը մեծ զգուշութեամբ բանալ սկսաւ, այնպէս որ դռան ճրըճրոցը երբէք չբարձրացաւ։ Ստուերը շեմքն անց կացաւ և նոյն զգուշութեամբը յառաջ գնաց. նա մօտեցաւ մի երկրորդ ծածկած դռան. ականջը դէմ տուեց բանալու ճակին և բերանը բացեց։ Ներսի խօսակցութիւնն այժմ լսելի էր այստեղ։ Անծանօթը կանգնած տեղը դողում էր, կարծես թէ իւր սրտին անախորժ խօսքեր էր լսում։

Թող այս գարնանամուտը այստեղ իւր հետաքրքրութիւնը լցնի, իսկ մենք մանենք այդ խորհրդաւոր բնակարանի ներսը դիտելու։

Գարնան գալարձալի օրերն են, երկիրն իւր ծոպակեթիթեղ գլխարեան մէջն է, բնութիւնը ձմեռուան մերկութիւնից դուրս եկած, զմայլեցնում է իւր փառաւորութեամբն ամէն մկկին, մարդիկ ազատուել են կրակով իւրեանց անձը տաքացնելու ծանրութիւնից, իսկ այս տան մէջ մնողը սաստիկ սառնութիւն է զգում. մի խոնաւ և գարշելի ծանր օդ ցրտութեան հետ սպառափ է բերում մարդուս վերայ։ Նթէ դիշերը այս բնակարանի մէջ մնողը երկրայութեան մէջ կընկնի այս տան այս ժամանակուան խոնաւութեան մասին, ցորեկն իրան շատ բնական կերևի. տունը նոր է շինած, գետ պատերը չեն չորացել, իսկ մէջը բնակութիւն են հաստատել։ Վայ, ուրեմն, այս տան անբաղդ բնակողն ոսկրներին։

Դրսից լսուեսելու ժամանակը ներսը մի անկիւնում երկու մարդ կամաց խօսում են. նոցանից մինը մի ալևոր ծերունի է, որի ձեռք ու ոտքը շարժելուս շղթայի շառաչիւններ են լսուում, իսկ միւսը մի առոյգ երիտասարդ է։ Միակ փառաւորը և տան բոլոր կահ կարասիքը մի կիսամաշ եղէգնեայ փսիաթ է, որի վերայ այժմ նստած են երկու խօսակիցները. իսկ գետնին ծերի կողմը դրած է մի բերանը կտրած հին ջրի փարչ։

Երիտասարդը շատ ժամանակ չէ այս տեղ է. կէս ժամ հազիւ է, որ նա մտաւ տուն ու կալանաւոր ծերունու ձեռքը համբուրեց։ Նրան ներս բերողը մի թուրք եասաւուլ էր, որ դրպանիցը բանալին հանեց, տղայի կռնիցը բռնեց, տուն տարաւ ձեռքին մի աղօտ ճրագ բռնած, ներկայացրեց ծերունուն և ինքը կրկին ճրագն առաւ դուրս գնաց, պատուիրելով, որ ինչքան կարելի է տեսակցութիւնները երկար չշարունակեն, քանի որում իրեն հրամայած է շուտ ճանապարհ ձգել։

Ծերն առաջին անգամը ճրագն այստեղ եղած ժամանակը, երիտասարդին չճանաչեց, նա իւր սուր հայեացքն ուղղեց այս անսովոր տեսարանի վերայ և զարմացմամբ նայեցաւ. բայց և երիտասարդն ափշած մնաց և մի րոպէ կասկած անգամ տարաւ։ Սա՞ էր արդեօք որին ինքը անձկանօք յանկանում էր տեսնել, երկու երեք տարի մէջ այս տասիճան փոփոխութիւն կարելի՞ էր սպասել։ Մի առոյգ և պատկառելի ծերունու փոխարէն երիտասարդը տեսաւ մի վախտ, աչքերը խոր գնացած և սպասաւորն կմախք։ Ահա ինչ էր նրա կասկածելու պատճառը։

— Ախու ջա՛ն, վերջապէս աչքերի հայեացքից ճանաչեց երիտասարդն ու մօտ վազեց կալանաւորին, ախու ջա՛ն, էդ ի՞նչ օրն ես ընկել։

— Սմբատ ջա՛ն, էս դո՞ւ ես, բալա ջա՛ն, քեզ էլ ըստեղ բերին, դէ՛ ասա իմ դուռն յաւիտեան փակուեց։

— Ախու ջա՛ն . . . , կամենում էր շարունակել Սմբատը։

— Իմ երեխէքս, իմ երեխէքս անտէր ճնային, կրկնեց ծերունին, որին կարծեմ ճանաչեցիր, ընթերցո՛ղ. սա չարաբաստիկ Խէչանն էր, որ Սմբատին գրկեց և ուշագնաց եղաւ։

— Ախու ջա՛ն . . . . վա՛յ գլխես . . . ախու ջա՛ն, մի վախիլ, ես դուստաղ[1] չեմ, ես ինքս եմ եկել քեզ տեսնելու, ես քեզ համար շատ բարով եմ բերել Հերիքնազնեն ու Հեղնարիկը։

— Հեղնա՞րս . . . իմ անբաղդ բալէ՞ս . . . : Երկու խօսք և ծերունու գլուխը ծանրացաւ Սմբատի ուսի վերայ։

— Հեղնարը լաւ ա, ախու ջա՛ն, Հեղնարն էլ, Հերիքնազն էլ, Մայրան հօքիրն էլ շատ լաւ են ու քո կարօտն են քաշում։

— Հեղնարս լա՞ւ ա, կրկին ուշքի եկաւ Խէչանը, երեխես սա՞ղ ա[2], դարդ չի՞ անում, Հերիքնազս ու Մայրանս առո՞ղջ են, Սմբատ ջա՛ն, ասա՛, ասա՛։

— Է՛, ախու ջա՛ն, ամէնքն էլ լաւ առողջ են ու քո կարօտն են քաշում. դու էլ, Աստծով, շուտ կազատուիս էս տարտարոսիցը, մեր բարեկամը լաւ ա տալիս, նա խոստանում ա իր գլուխը քեզ համար յետ դնել։

— Մեր բարեկա՞մը, Սմբատ ջա՛ն, էդ ի՞նչ բարեկամ ա, որ աշխատում ա մեզ օգնել, մեզ լաչնց բարեկամ չունինք, ամէնքն էլ մոռացել են մի անտէր անտիրական բէխըզալ[3] Հալեւորի։

— Ձէ՛, ախու ջա՛ն, մենք մի լաւ բարեկամ ունինք, նրա անելովն երկու շաբաթ չեն քաշել, դու կազատուիս, մենք էլ կուրախանանք։

— Ո՞վա էդ բարեկամը։

— Աքօն։

— Աքօ՞ն . . . ի՞նչ Աքօ . . . չո՛ւտ, շուտ ասա՛. Սբմբատ ջա՛ն։

Ծերունին ամբողջ մարմնով դողում էր, նրա ատամները միմեանց էին առնում։

---

1 Յալանաւոր։ 2 Ողջ է։ 3 Անբաղդ։

— Ա՛, Սաքօն, մովլովվի միկիտանը։

— Վա՛յ գլխիս, իմ տո՛ւնը, իմ երեխէ՛քը, սուս կա՛ց Սմբատ ջա՛ն . . . սո՛ւս . . . էդ խօսքը մի՛ ասիլ . . . ձէնդ կտրի՛ . . . էդ անուշն էլ բերնիցդ չհանես . . .

Ծերունին դողդողալով ձեռներն ածում էր, նա գուռ Սմբատի բերանն ու այնպէս սիմէց, որ եթէ քթածակերը չլինէին, շունչը կը կարուէր։

— Ա՛ւս եմ ասում, Սմբատ ջա՛ն, կրկնեց նա, իմ տունը քանդողնն, իմ գուռը շարողն՛ն, իմ երեխէքանց անբաղդութիւնի պատճառո՛ւն, ինձ էս տեղը քցողն՛ն բարեկամ մի՛ ասիլ, սո՛ւս . . . սո՛ւս . . .

— Ի՞նչ ես ասում, ափու ջա՛ն, ազատուելով իր բերանը փակող ձեռքերից, ասաց Սմբատը, թէ որ Սաքօն չըլնէր, ինձ ո՞վ կարժանացնէր քո տեսութեանը. երէք ամիս ա, քանի գուռ բռնուել ես, էլ մարդ չի մնացել տանուտէրից բռնած՝ ընչանք ջրգետն ու քօմակչին էլ միջնորդ ենք քցել, տանը գինի արաղ չենք թողել՝ ծախել՝ սրա նրա փորն ենք ածել, մովլովվի սիրտը չենք կարացել գաղրացնել, խեղճ Սաքօն էլ ինչքան լեզու ունէր թափեց, անջախ մովլովվին կտարեց, կէս սհաթով քեզ մօտ գալուս հրամանն առաւ. հիմի էլ խօսք ա տալիս քեզ մի երկու շաբաթից յետո աւգառել տալ։

— Մի՛ աւտապ, բալէ՛քս, միամիտ երեխէ՛ք, փորձանքի կէս ճամփէցն յետ գառնալը խելօքութիւն ա, Սաքօն մռել ա ձեր տամարը[1], որ իմ տունը կարողանայ հիմքիցը շուռ տալ մի՛ աւտապ նրան, տուն չթողա՛ք, ոչինչ սրտ[2] չբացանէք։

— Չէ՛, ափու ջա՛ն, չէ՛, Սաքօն լաւ մարդ ա, նա շատ սրտացաւ ա քեզ համար. քեզ բռնելուց յետը մի շաբաթ չէր անցկացած ըլնել, որ ինքն իր ոտովն եկաւ գեղը, ինձ կանչել տուեց տանուտէրի տունը ու խոստացաւ քեզ ազատել տալ։

— Ախչա, թէ հէնց էն օրիցը, որ ես իրան իմ երեսը չթողի, իր սատանայ լեզուիցը չխաբուեցի։ Տեսա՞ր ինչ եկաւ իմ գլուխը. ես գիտէի որ կեղծաւոր տակնահան ա, բայց ընչանք էդ տեղը միաք չարի։

Խէչանը կարգաւ պատմեց Սմբատին մեղալի գործը, տանուտէրի խնամխօսութիւնն և իւր կասկածները, որ ունէր պատկը խափանելու մասին։

— Անպատճա՛ռ էդ փուչ-կենդանու մատը խառն ա ձեր անբաղդութիւնի ու իմ տան գլխին եկած փորձանքների մէջ, Սմբատ ջա՛ն, շարունակեց Խէչանը, իմ սիրտս տուն ա տալիս[1], որ մի խօսքս սուտ չը պտի ըլնի, հեռու կացէք էդ մարդիցը, մի՛ խաբուիք նրա շողոքոր լեզուիցը, նրա լեզուի տակին իժ օձի թոյն կայ, ասա Հեղնարիս՝ էդ անզգամին երեսը չթողայ, գեռ գուռ էլ վախեցի՛, մի օր քո գլխին էլ մի օյին չբերի, խեղճ Մահմատ-Բաղրին միտք բեր, նա Սաքօյի խաչովը խաչուեց. դրա ձեռներն արնոտ ա, նա ուզմա. ինձ վեսայ գառնայ, որ իմ մէքերն յափշտակի. ա՛յ, ի՞նչ ա նրա մաքինը, Սմբատ ջա՛ն, բայց քանի ես սալ եմ, քանի իմ շունչս դնկիս ծերին ա, նա իմ ապրանքիցը մի չոփ չի կարող գուս տանիլ, փեսէս չի՝ թէկուզ ինձանիցս ծնած զաւակս էլ ըլնէր. մեռնելուս էլ կուակ կանեմ, որ շան ու գիլի փայ ըլնի՛, վանքական ըլնի՛, ղուրդ ու ղուշն ուտի՛ ու Սաքօյի ձեռը չընկնի։ Ամա՛ն, Սմբատ ջա՛ն, Հեղնարիս մուղայիթ կա՛յ[2], չըլնի՞ թէ էդ օձի ձուտի թալաքն[3] ընկնի, թող խմանայ որ իմ սրտիցս գուս եկած անէծքը իր վրայ ու իր սերնդի վրայ կըլնի։ Աւա՛ Սաքօյի միաքը գուս չես, նրա աչքն ուռել չէր քեզ ուզելու համար, նրա սրտինն իմ կարողութիւնն ա, ձանգն ընկաւ թէ չէ քեզ էլ մի օր կը ոչնչացնի։ Էս բանումը, Սմբատ ջա՛ն, ես ամէնքիցդ աւելի Հերիքնազիս վրայ յոյս ունիմ, ասա՛ նրան իմ կողմից, աղաչանք արա՛, բերանն, աչքերը պաչ արա՛, ասա՛, որ հօր պէս, մօր պէս, ախպօր պէս պտիտ պտիտ անի Հեղնարիս գլխովը, չորսաչքանի դառնայ, մազի մէջ պահի իր քեռու աղջկանը ձուից նոր դուրս եկած հաւի ձուտի պէս, թէ չէ ուրուրը կը տանի. ասա՛ էն գիշակեր գազանի սիրտը չար ա իմ տան վրայ, ասա՛ Հերիքնազիս, իմ յոյսս նա ա, նա իմ տան չորս սիւնն ա։

— Ես չեմ հասկանում, ափու ջա՛ն, դու էնէնց բաներ ասում, որ մազերս բիզ բիզ էլան, պատասխանեց Սմբատը շուարած, էն մարդի լեզուիցը մի օրից մի օր ըսէնց խօսք չի դուս թռնել, նա ինձ քո բռնուած օրից դէսն ախպօր պէս սիրում ա, Աշտարակ եկած վախտն ընչանք ինձ չտեսնի, աղջկներիցդ չհարցնի, քեզանից խաբար չտայ, մեղ չօրտաւորի, ոտը գեղիցը դուս չի դնիլ։ Պահ պարզն

1 Երակ։ 2 Գաղտնիք։

1 Կայում է։ 2 Զգոյշ պահիր։ 3 Որոգայթ։

ասեմ, որ մի երկու հետ էլ տուն ա եկել Հեղնարին սիրա ա տուել ու գնացել։ Ղոլթ ա, Հերիքնազն ըսկի չէր ուզում տուն թողալ ըսկի երեսը տեսնելը ղաբուլ չէր անում [1], քեզ պես նա էլ չէր ուզում աւատալ բայց Մայրան հօքիրն էլ ես էլ ու Հեղնարն էլ շատ ղնամիշ արինք ու կամքն առանք։ Ես բան չեմ ասում, շատ կարելի ա, նա մաքուշն ունեցել ա Հեղնարին առնիլ քեզ լաւ յայտնի ա, որ նրա ուզողները շատ էին, համա հիմի մենք Սաքոյի մէջ էդ բանը վարաւուրդ չենք անում։

— Սմբատ ջա՛ն, ինձ լսի՛, ես քեզանից աւելի փորձուած եմ, ես մարդի աչքերիցը սիրտը կը հասկանամ, երեք ամիս ա՝ էդ օձն ամէն հնարք գործ ա դնում, մարդ չի թողում՝ մէջ ա գցում, աներեսի պես գալիս կողքիս նստում ա քարոզում, որ ես իրան բարեկամ ճանանչեմ՝ մօտ չեմ թողում, գլուխս էլ չեմ բարձրացնում, երեսին մռիկ տալիս։ Առաջի օրերը դեռ Սև ջրի գլխին մի շաբաթ ջոր գետնի վրայ էին վեր քցել ինձ, օրը մի կտոր ցամաք հայ ու էս փալչովը ջուր էին դնում կուշտս, հերիք չէր ոտներիս բլտովը [2] ու ձեռներիս ընջելը, միջքիցս էլ մի պարան էին քցել պատին կապել, որ ըսկի հիւանդանամ ժամ գալ։ Վերջն էդ նեռան ձագն ինձ տեսաւ, գլխին տուեց, սաքի թէ վրէս ցաւեց, որ էդպէս անխղճմտանք կերպով ինձ տանջում են, յետ դառաւ գնաց մովրովեցը հրաման առաւ ձեռ ու ոտս յետ անել տուեց, տակս խոիր ու քէչայ փռեց, տաք կերակրի իրաւունք էլ առաւ, գետ իրիկները ճրագ էլ վառել տուեց։ Ես ոչ մի բերան չնորհակալութիւն արի, ոչ ձէն տուի, ընդուր որ մաքինը գիտէի, որ էնպէս էլ կատարուեց։

— Յետոյ լաւ բան ես արել։

— Լսի՛ր, Սմբատ, էդ բաներից մի երկ'օր անց, մի առաւօտ քշերով քշերհանայ դուռը բաց արեց, տուն մտաւ ու սկսեց գլխիս գիլե աւետարան կարդալ, որ ես խոստովանուիմ իրան, ասեմ որ Մահմատ-Բաղրին ես եմ սպանել, գրանով, սաքի մովրովը կը քաղցրանայ վրէս ու գործը շուռ կը տայ, ինձ կարգարացնի։ Մեռա՛ւ, կարուե՛ց, մի ծպտուն չհանեցի։ Նրանից յետը գլուխս դանդ ու սար էր արել [3], մի օր գալիս էր, թէ 100 մանէթ գրագրին տանք, որ քո գործը փոխի, մէկել օրը՝ թէ քոմակչին [4] նորից քննութիւն անելու պատի գնայ Աշտարակ, 500 մանէթ որ տանք, գործին ուրիշ

1 Չէր համաձայնում 2 կողպէք 3 Ձանձրացրել էր 4 Օգնական։

ձև կը տայ.մի անգամ՝ թէ չորս թուրք կան, ամին մէնը 50ական մանէթ են ուզում, որ ինձ համար վկայ դառնան, որ սաքի իրանք քուչումն անց կենալուս պատը ծակող ձիաւորներ են տեսել, մի օր էլ ուզիղ եկաւ ասեց, թէ մովրովը 1000 մանէթ ա ուզում, որ էսօր և եթ ինձ բայ թողայ։ Չէլա՛ւ, չէլա՛ւ, միկիտան Սաքօն իմ բերնիցը մի խօսք չլսեց, ու երբոր յոյսը կտրեց, տակիս քէչէն հանիլ տուեց, բաժինս քչացրեց, կապերս էլ աւելցրեց։

Հիմի տեսնում եմ, Սմբատ ջա՛ն, որ սատանայ Սաքօն իր սրտի փափագին ուրիշ կողմից ա հասել. համ իմ տունն ա մռել, համ իմ տեղերը կերել։

— Հա՛, ափու ջա՛ն, չեմ գիտում Սաքօն իր համաթ տարաւ էդ փողերը, թէ ուրիշներին ուտացրեց, համա ում ի՛նչ տուել ենք, Սաքոյի ձեռովն ենք տուել։

— Տեսա՞թ, տեսա՞թ, որդի՛. տեսա՞թ, որ ես սուտ չեմ ասիլ լսի՛ր, Սմբատ ջա՛ն, ես ինչպէս իմ տան տէրը, ինչպէս հէր, հրամայում եմ, որ էդ միկիտանին շատուց յետն իմ շէնքը չթողաք, երեսին մռիկ չտաք ու մի քօռ կապեկ իմ գործի համար առանց գիտութիւնի չվարչէք։ Զգիտեմ, երեխէքանցս երեսը տեսնելու արժանի պտի ըլնիմ, թէ ոչ, համա ասում եմ, բան ա՝ թէ որ պարանը չլինքս քցելու վախտն էլ Սաքօն գայ ձեզ ասի, թէ ինձ մի սառը բարով տուէք՝ ձեր հօրն ազատեմ, ինքներդ թէ որ կարող էք ձեր ձեռովը գլուխս օղակի միջն անցկացրէք ու Սաքոյի ձեռով ձեր տունը մի՛ բազդաւորացնէք. էս ա իմ վերջին կտակը։ Հիմի բեր աչքդ պաչեմ, վերկաց առանց էդ օձի ձագին տեսնելու։ Հեռացիր էս մարդակեր տեղիցը. ոտի ձէն ա գալիս, երեսում ա եասավուլն ա տուն մտնում, որ քեզ ճամփու քցի՛։

Ծերունին համբուրեց Սմբատին, նա էլ սորա ձեռքը մի քանի անգամ լալով պաչեց ու սպասում էր դուռը բացուելուն, բայց ոտքերի տրոփիւնն ընդ հակառակն հեռացաւ և բոլորովին մեռելութիւնը տիրեց։

— Խաղդ դաւաճանութի՛ւն կայ, Սմբատ ջա՛ն, մեզ անկաջ դնող ա էլել, ասաց Ծերունին, թէ որ էս բանի տակիցը մի փորձուք դուրս գայ, իմացի՛ր, որ հէր միկիտանի տակին էր, հէնց աւատաս ինքն ըլնէր։

— Ափու ջա՛ն, շատ ես վախեցել դու էդ մարդիցը, շատ կարելի ա, եասավուլն ըլնէր, եկաւ գիպաւ, տեսաւ խօսում ենք ու յետ-դառաւ ապահովացրեց Սմբատը։

Այս միջոցին նա իւր կողքից կախած տորձանակին ու սրին ձեռք տուեց։

— Տասը մարդ որ վրայ թափի, վախում չեմ, մոածեց Սմբատը։

Փեսացու և աներացու, կամ ճիշդ հայր և որդի նորից իւրեանց յաւերի վերայ խօսեցան։ Ծերունին պատուիրում էր Սըմբատին ապջիկների սիրտը չցաւեցնել իւր նեղ վիճակը պատմելով, նա խրատում էր իւր դրութիւնը լաւ կողմից նկարագրել և Սըմբատն էլ հաւանութիւն էր յայտ տալիս և խոստանում էր ճշդութեամբ կատարել նորա պատուէրները, ինչպէս և կատարում էր ապջիկների խնդիրը։ Նոքա արդելել էին իւրեանց ներկայ վիճակն իւրեանց հօրն իսկութեամբ յայտնելու։

Շատ երկար խօսեցան Խէչանն ու Սմբատը, ամէն բան յիշում էին, ամէն խօսքի մէջ ապջիկների անունն էին տալիս, գիւղի բարօրութիւնն էլ չմոռացան մտաբերելու։

Խէչանի կասկածները քանի գնաց աւելացաւ, եասավուլը շատ ուշացաւ։ Ի վերջոյ նրանք լսեցին շատ ոտնաձայն և հրամայական խօսակցութիւններ, որոնք իրենց էին մօտենում։

Բանալին շարժուեց փակի մէջը, դուռը խիստ կերպիւ ձնդչաց և չորս հինգ հոգի ձրագուէ մոմերը ձեռքներին տուն թափուեցան։

Լ Ը.

ՔԱՐՆ ԷԼ Ա ԻՐԱՆՑ ԶԵՒԻՆ, ՊՕՊՕՔՆ[1] ԷՂ

Դեռ բանալին պտտուում էր փակի մէջ, որ Սմբատը տեղէցը վեր թռաւ, հանեց տորձանակը, վերի ոտքը քաշեց և պաշտպանողական դիրք առած՝ բանտի մէջ տեղը կանգնեց։

Ներս եկողները, որոնց ոտնաձայնից զգալի էր վատահութիւնները և աներկիւղ յառաջ գալը, շեմքն անց կացան, բայց էլի մի ակնթարթի մէջ յետ յետ քաշուեցան. մի քանիսը շեմքի միւս երեսը մնացին։ Սոքա ընդ ամէնը վեց հոգի էին, հինգ եասավուլ և մի դրագիր՝ նոյն հերոսը, որին մենք պատահեցանք սայլերը հա-

---

1 Ընկոյզ։

նելուն։ Նա հագած ունէր իւր պաշտօնապգեստն և մի արծաթապատ լեզուն սուր կողքից քաշ արած։

— Ի՞նչ էք ուզում էս կէս գիշերին, հանդարտութեամբ հարցրեց Խէչանը։

— Օրէնքի անունով ես եկել եմ բանտարկել այստեղ Աշտարակցի Ծվինկնց Սմբատին. ես պատրաստուում էի Աշտարակ գնալ, բայց լսեցի, որ նա գտնուում է քեզ մօտ. եթէ այս երիտասարդն է, թող անձնատուր լինի։

— Ի՞նչ է ասել սա, ի՞նչ է սրա մեղքը, որ բռնում էք, նուաղ ձայնով հարցրեց Խէչանը։

— Էդ ոչ ոքի իմանալու բանը չէ, օրէնքը դրան բանտարկում է։

— Լսեցի՞ր, Սմբա՛տ, որդի՛ս, տեսա՞ր տակ փորելը ոնց ա էլել. էս քո բարեկամի սալքած Թալաքն[1] էր, քո ոտովը կրակ ընկար, հիմի իմ տունս սուգ էլաւ, դու էլ բռնուեցիր, իմ յոյսը դու էիր։

— Վրանի Սմբատի շունչը վըէն ա, նա թալաք չէ ընկնիլ, ափու ջա՛ն, միամիտ կա՛ց, ով իր գլխոյը ձեռն ա վեր կալել թող առաջինը մօտ գայ ու իմ կռներս գնջել[2] քցի՛, ես հիմի տեսնում եմ, որ քո խօսքերդ ճշմարիտ են։

— Աղա՛յ, դարձաւ Սմբատը դէպի դրագիրը, դու ըստեղ մի՛ աշխատիլ ինձ քո ձանդը քցելու, ես փախստական մարդ չեմ, ձամփայ տուէք ես հետանամ, գնամ մեր գիղը, էս հալուորիցը մի խաբար տանիմ իր օղլու-շաղին. էգուց առաւօտ համեցէք ընտել՝ իմ ա՛էքի վրայ, թէ որ մի մազաչափ մեղք ունիմ, բռնեցէք աչքս հանեցէք։

— Ինձ ասա՛ յառաջուց, դո՞ւ ես աշտարակցի Ծվինենց Սըմբատը։

— Ես եմ, ու դու էլ շատ լաւ ճանաչում ես ինձ, գուր տեղը խօսքը կտուրը մի՛ քցիլ, անկաշկիդ բուրդը հանի՛, ինձ չես կարող դիպչիլ, խելքդ ես, դու էլ ինձ պէս ջիվան-ջահէլ[3] ես, աչքը ճամփին սպասող կունենաս։

— Ես քեզ խորհուրդ եմ՝ տալիս առանց հակառակութեան վեր դնել զէնքդ, թողալ, որ կռներդ շղթայեն. էս ես ինձանից չեմ ասում, օրէնքին ամէնքս պիտի հնազանդինք. ապա թէ ոչ, ես կըս-

---

1 Որոգայթ։ 2 Շղթայ։ 3 Նորատի։

ախպուխիմ բռնուԹիւն գործ դնել. տեսնո՞ւմ ես էս քաջերը, որ մի հրամանիս են սպասում։

— Ա՛յ, հը՛, հը՛, դառնապէս ծիծաղեցաւ Սմբատը դրա-դրի խօսքերի վերայ, ալա՛յ, ես շատ ղօչաղներիցը[1] չեմ, ես իմ գլուխս շատ չեմ գովում, համա իմացած կա՛յ. պստիկ բղէղն էլ, որ ուզում ես բռնել, նա իր գլուխը պրծացնելու համար աշխատում ա մարդ կծելու. դու ըսկի Թռչունք վեր քցի՞ ես, սաչմայ[2] դիպած մի մատնաչափ ծիտն իր սպանողին քանի սաղ ա, ուզում ա պստիկ կտցովը ցաւացնել ու ընէնց սատկել. հէր օխնա՛ծ, մի լաւ միտք արա՛, բաս ես մի ծտի, մի բղէղի չափ չկա՞մ, բաս իմ ձեռս ներս դոԹրտմացի՞լ են[3]. ընչի՞, չե՞ս հասանում, փշտովն էսպէս չի՞ն բռնում, ասը որ վեր քաշեմ բերանը դպա ձեզ արած՝ բա էսքան խալխի միջին ծնին չի՞ դիպչելը, իմ բարուԹի[4] միջը հօ ջուր չի՞ լցրած էլել։ Փշտովս էլ որ փըսա անց կենայ[5], բաս էս կողքիցս քաշ արած ղզլբաշի Թուրը քո լագդու Թրիցը քօ՞ռ ա, բաս ըսկի սրանով դիլի շլինք չե՞մ Թոդրել, բաս ես շուն վախտացնելու համա՞ր եմ քաշ տուել բաս էս խանչալի ծէրն էնքան սրուԹիւն չունի՞, որ մի երկսիդ սրտի միջը ցցուի։ Ես հօ չե՞մ ասում, Թէ քո մարդիկը կատուաձուտեր են[6], օրինաւոր չանգռել էլ չեն կարող, ես դրանց զօրուԹիւնը շատ եմ տեսել, որ անասպատ[6] ու խեղճ գեղացոնց վրայ փորձել են, իմ միջքն էլ դրանց զահրը համն առել ա, համա աւտոտացած կաց, ալա՛յ, որ անխելքուԹիւն ա հարալուէլած[7] արջին մօտենալը, ինչքան էլ սատկելուս ըլի, էլի շունչը փըչելու հրոպէին վա՛յ նրան մօտեցողին. էլ ի՞նչ երկարացնեմ, աղայ միրզա՛յ, Թէ գլխիցդ չես ձանձրացել, որ տեղից մտար, դէնը դուս իլ, ես էլ Թողամ գնամ խարարը տանելու։

— Ի՞նչ սպառնալիքներ ես տալիս, Սմբա՛տ, հօ՛ տեսնում ես, որ դու մին ես, մենք վեց. աչքով անեմ Թէ չէ, կը դառնան 66, 106, ես ի՞նչ գիտեմ, քանի քո սիրտը կուզե. բայց ես այդ չեմ կամենում, ես ինձանից ոչինչ չեմ անում, ես մի հրամանակատար մարդ եմ, երդում կերած չինովնիկ[8] եմ, իմ եղբօրս որդուն էլ չեմ խնայելիս արի ինձ լսիր ու գէնքդ Թափիր, Թոյլ տուր որ քեզ բռնեն։ Ծերունի՛, եԹէ սրան չես համոզել որ անձնատուր լինի, քեզ էլ մեծ փնաս կը հասնի, սրան էլ, ես խղճալով քեզ առաջուց ասում եմ։

— Հապար դեռ ասեցէ՛ք, ի՞նչ ա սրա մեղքը, մովրովն ի՛նձ գտաւ յանցաւոր, ի՛նձ մարդասպան ճանաչեց ու դատում ա, էլ սրանից ի՞նչ բան ունի։

— Էդքանն ես էլ չգիտեմ, միայն այս կասեմ, որ մովրովն էլ մեղք չունի, օրէնքի առաջին ամէնքը պատասխանատու են։

— Սմբա՛տ, կամենում էր խօսել Խէչանը, բայց Սմբատն ընդհատեց։

— Ախու ջա՛ն, խօսքդ մի՛ խարջել, ես մտքումս դրել եմ, որ ընչանք քեզանից խարար չտանիմ, իմ ջանս սաղ սաղ սրանց ձեռը չեմ տալ։

— Յառա՛ջ, եասավուլնե՛ր, հրամայեց գրագիրն և ինքը մի կողմը քաշուեցաւ, յառաջ եկէ՛ք, մի՛ դիպչէք էս յանդուգն երիտասարդին, ճամփայ տուէ՛ք, Թողէ՛ք անց կենայ, գնայ իր համբաւը տեղ հասցնի. բայց էՀ, ինչ որ ձեզ հրամայած է, դուք կատարեցէ՛ք, Թողէ՛ք ամէն բանն էլ իր աչքովը տեսնի և այնպէս մանրամասն լուր տանի, Թողէ՛ք գնայ պատմի, Թէ խեղճ ծերունին գլխին օղակի մէջն անց կացրած ժամանակը՝ հոգին փչելուս՝ քանի՞ անգամ գկուտաց. Թող գնայ ասի, Թէ շատ կարելի է, որ այս ողբալի բանտարկեալը մի քանի շաբաԹից պէտք է ազատուէր, բայց այս գիշեր իւր պէս մի կամակոր երիտասարդի պատճառաւ խեղդուեցաւ և ոչ ոք էլ վրէժխնդիր չի կարող լինիլ. գործն այնպէս է տարած, որ իբր Թէ Խէչանին Երևանայ բերդն ուղարկելուս իւր մարդիկը ճանապարհիցը փախցրել են և հիմի հետքը չի երևում։

Մի եասավուլ փէշի տակից մի կարճ պարան հանեց և երկու հոգով մի քանի քայլ ծերունուն մօտեցան։

— Պատեցէ՛ք, հրամայեց գրագիրը, նախ դուք երեք եասավուլներդ հանեցէ՛ք ձեր զէնքերը և այս անձնապաստան ոտքի յառաջը կարեցէ՛ք, որ չհամարձակի մօտ գնալ, օրէնքի անունովը հրամայում եմ ձեզ՝ գործ դնել ամէնայն զօրուԹիւն, կեանք չխնայել սպանուիլ սպանել, միայն Թէ արգելել սրան ծերին մօտենալու. դուք ծառայողներ էք, դուք պարտական էք սրի, կրակի յառաջը գնալ, կատարեցէ՛ք ձեր պարտքը. ինչս չունի, Թող սա ձեզանից մէկին սպանի, ինչպէս ինքն ասում է՝ արիւնն աչքի տակն է առել բայց մինչև ձեզանից մէկի հետ իւր գործը կը պրծնի, էս երկուսն էլ ծերունուն խեղդած կը լինին. վերջապէս մեռէք երեքդ էլ, ես էլ

1 Գաջերից։ 2 Հրացանի կոտորակներ։ 3 Գօսանալ։ 4 Վառօդ։ 5 Սխալի։ 6 Անզէն։ 7 Վիրաւորուած։ 8 Պաշտօնեայ։

թող ընկնիմ ձեզ հետ, միայն թէ այս երկուսը ծերունու կեանքը բառնան։

— Կացէ՛ք, ձեռքը բարձրացրեց Սմբատը, սպասեցէ՛ք, ես լաւ չհասկացայ, ի՞նչ ասեցիր դու, աղայ միրզա՛յ մին էլ ինձ գլխի քցի՛։

— Այն՝ որ քո բռնութեովդ այս ծերունին մի երկու շաբաթից կարող է ազատուիլ, քննիչը գործը նորից արծարծեց և գտաւ, որ դու ես մարդասպանն, ինչպէս որ ինքդ Աշտարակումը խոստովանել էիր, երեւեցաւ, որ խիշտն էլ դու ես սրած եղել. այժմ ինձ հրամայած է քեզ բռնել, ես ձիաւորուել էի Աշտարակ գնալ լուր բերին, որ այստեղ ես. մովսէսն, երեւումէ, լաւ է իմացել քո կատաղի բնութիւնդ, ինձ հրամայեց, որ եթէ դու հակառակութիւն կանես և քեզնուքեզը չես բռնուիլ ծերին խեղդենք, քեզ բաց թողնենք, դրանով գործն էլ վերջանայ. կարելի է այնպէս յարմարեցնել, որ այնուհետեւ էլ մեղքը քո վիզը ձգել վկաները պէտք է հաստատեն, որ Խէչանին Երեւանու բերդն ուղարկելուս դու մի քանի ձիաւորով եկել ճանապարհիդը փախցրել ես։

— Թէ որ ըտէնց ա, թէ որ էս խեղճ հալիւորը պտի ազատուի, ա՛յ էս իմ ասպապը [1], առէ՛ք, եկէք հիմի էլ կռներս կապեցէ՛ք, զինաթափ լինելով մօտ եկաւ Սմբատը։

Եասավուլները կռները քամակիցը կապեցին և ոտքերս բխոցվեցին [2]։

— Ա՜խ, Սմբատ ջա՛ն, էդ ի՞նչ արիր դու, հազիւ արտասանեց ծերունին։

— Վնաս չունի, ախու ջա՛ն, ես շատ ուրախ եմ, որ դու մի քանի օրից կը փաթաթուիս քո սիրեկաններին ու նրանց կը մխիթարես, ես մի գլուխ ունիմ, թող ձեզ մատաղ գնայ, ասա Հեղնարին ու Հերիքնազին, որ Սմբատն ընչանք էսօր ախպօր պէս ա էլել իրանց հետ ու ախպէր էլ պտի մեռնի։

— Մի համիա տղայ, դու քո ոտքովդ ականատի [3] մէջն ընկար, ըստոնք բոլոր քո բարեկամի սարքած բաներն էին, ըստուց յետը ոչ դո՛ւ կազատուիս և ոչ ե՛ս, սև ու մութն էկել ա իմ երեխէքանցը տարել։

Այդ միջոցումը ներս մտաւ բառոը միկիտան Սաքօն։

1 Ջէնք։ 2 փականքի մէջ դրին։ 3 Որոգայթ։

— Վա՛հ, էս ի՞նչ եմ տեսնում, էս ի՞նչ բան ա, աղայ միրզա՛յ, դու էս վախտ էստե՞ղ, Սմբատը զնջա՞ծ՝ ընչի՞ համար, զարմացած հարցրեց Սաքօն։

— Դո՛ւս, դուս կորի՛, անաստուա՛ծ, անխղճմտանք, անհոգի՛, անհաւա՛տ, ո՞ւր ես եկել ինչ անելու էիր՝ արիր, թէ խէչանի մէքերին տեր չդառաւ, նրա տունը հօ՛ հիմքից շուռ տուիր, էլ ի՞նչ ես ուզում, ընչի՞ ես եկել հերիք չէ արածդ՝ հիմի էլ եկել ես աչքովդ տեսնես, ուրախանա՞ս, ձչաց Խէչանը Սաքօյի վրայ։

— Աղայ Խէչա՛ն, կեղծաւոր դէմք առաւ Սաքօն, թող Աստուած իմ դուռը բերի, ինչ որ ես քեզ համար կամենում եմ, չգիտեմ՝ ընչո՞վ ես քո աչքին փուշ եմ դառել, Սմբատին հարցրո՛ւ, նա քեզ կասի իմ արածները, էս աղայ միրզին հարցրո՛ւ, էս եասավուլներիցը մի մին խաբար ա՛ռ, ամէնքն էլ քեզ կասեն, թէ ես ի՞նչ եմ ցանկացել ձեզ համար ու ի՞նչ եմ արել, հարցրո՛ւ՝ թէ ո՞վ էր որ մովսէսից խնդրեց քո աղջկայ կամքը կատարելու ու Սմբատին մի անգամ քեզ մօտ թողալու հրամանն առաւ։

— Բոլո՛րը լսեցի, բոլո՛րն էլ իմացայ՝ դու էիր, դու արիր, որ իմ աղջկների աչքերը ճամփին թողաս. ես տղէն էր իմ տան տալմաշդը, արիր՝ որ սրան էլ ճանդդ քցիս ու էգուց առաւօտ գնաս օձի պէս ներս սողաս իմ տունը, սուտ ու ղորթ խաբարներ ասես, քեզ սրտացաւ շանց տաս ու ջահել աղջկներին խաբես. մի օր էլ բալքի՛, քո չար մտքի դրածին հասնիս, բայց իմացի՛, մարդակեր գազա՛ն, որ քո մտքինդ գլուխս չի գալ Խէչանի մի ծղնօտն էլ չես կարող ճանդզել որ աչքդ կոխես։

— Խեղճ հալիւոր, ես քեզ ընամիշ չեմ անում [1], կարեկցել ձեւացրեց Սաքօն, մի օր դու ինքդ քո բերանովդ կասես, որ սխալ էիր, բայց ես զարմանում եմ, թէ էս ի՞նչ բան ա, որ էս խեղճ Սմբատին բռնեցին. ես, ՚ի հարկէ, գիտէի, որ սա իրիկուններս բանան եկաւ, մովսէսից հրամանն ես էի առել. շատ որ ուշացաւ, սիրտս կասկած ընկաւ, միամիտ վերկացայ, գամ տեղեկանամ թէ Սմբատն ո՞ւր մնաց, մին էլ աչքիս էս թամաշէն [2] ընկաւ. խնդրեմ ասա, ո՞ւր մնաց, մին էլ աչքիս էս թամաշէն ընկաւ. խնդրեմ ասա, աղա՛յ միրզա՛յ, էս ի՞նչ փորձանք ա, ի՞նչ նոր խաբար ա՝

— Այն է, որ օրէնքով Սմբատը մեղաւոր է, ես Աշտարակ էի

1 Մեղադրում։ 2 Տեսարան։

գնում սրան բանտարկելու, լսեցի որ այստեղ է, ներս եկայ և բըռնեցի։

— Ո՞վ արեց էդ քննութիւնը։

— Ես և Երևանից Խէչանի գործի համար ղրկած նոր չինովնիկը։

— Ձի՞ ընկիլ որ գնանք նրան խնդրենք Սմբատին արձակի։

— Նա հէնց այս երեկոյ գնաց։

— Ինչ էի՞ կարելի խնդրել որ արձակես Սմբատին, թէ որ սա էլ բռնուեց, էդ խելօք ծերի տունը կը քանդուի. տանը միացին երկու ջահէլ աղջիկներ ու մի չորացած պառաւ կնիկ։

— Էգուց գնալու եմ այն երկու աղջկներին էլ բանտարկելու։

— Վա՜յ գլխիս, ծուռաց ծերունին, տեսա՞ր, Սմբատ ջա՜ն։

— Ա՜խ, կատաղաբար առաձեները կրճտեց Սմբատը, պրծար իմ ձեռքիցը, մխիթան Սաքո՛, դու բարեկամութիւնի անունով մեր տակը ջուր կապեցիր ու բանն էս տեղը հասցրիր։

— Դու էլ աւատացիր, Սմբա՛տ, արդարացաւ Սաքօն, վնաս չունի, մի օր ես ձեր առաջին կարդարանամ. աղայ միրզա՛յ, դարձաւ Սաքօն դէպի գրագիրը, թէ որ հիմի գնամ մովրովին խընդրեմ, էս տղին ու էն աղջկներին ազատելու հնարք կայ։

— Մովրովը չէ՝ նաչալնիկն էլ չի կարող ազատել, գործը փոխուել է։

— Բաս ի՞նչ պտի անենք, չի՞ կարելի որ չբռնած գործը քննես։

— Բայց եթէ փախչին, ի՞նչ կանենք, ո՞վ պատասխան կը տայ։

— Ա՛ս, ես իմ գլուխս օրէնքին մատաղ կը տամ, սրանց տեղակ Սիբիր կերթամ, թէ որ սրանք փախչին։

— Պէտք չի՛, ինձ հարկաւոր չի՛, ես քեզանից ողորմութիւն չեմ ուզում, մէջ ընկաւ ծերունին, գլխովդ դիպչի՛ քո ապած լաւութիւնը, սատանայ Սաքո՛, չէ՛, աղայ միրզա՛յ, չէ՛, սրա խօսքը պարանի մի՛ դնիլ, ինձ բռնել էք, փեսացուիս էլ բռնեցիր, վեր կաց գնա իմ աղջկան էլ, իմ քուռկն էլ, իր աղջկանն էլ բռնոտի՛, իմ տունը, իմ մլքերը վանքական ա՛րա՛, իզ ու թոզը[1] կարի՛, էս

1 Հետք։

օձի ձուտի ձեռը մի ծեղ մի քցիլ աղանջաք եմ անո՛ւմ քեզ, ոտներդ եմ ընկնո՛ւմ։

— Աղայ միրզա՛յ, խօսեցաւ Սաքօն, խեղճ Խէչանը մի քիչ դաղաղած[1] ա՛ խօսում, սա մեղք չունի, քանի ամիս ա՛ մարդի, աբևի երես չի տեսնում, իր շուաքիցն էլ կասկածում ա, ողորմելին հէնց գիտի, թէ ով որ իր համար լաւ ա խօսում՝ նա ա իր տակը փորողը, ես քեզ խնդրում եմ, դու սրա ընտանիքին խնայի՛, ես ինքս գամին[2] եմ ընում, որ ոչ Սմբատը, ոչ էն աղջկները չեն փախչիլ, թէ կուզես՝ գրի, ես տակին ձեռք քաշեմ. դու քո ձեռիցն եկածը սրանց համար մի խնայիլ, ես քո լաւութիւնը կը վճարեմ, դու հէնց հիմի Սմբատին բաց թող ու էս հալիւորի գործի համար էլ լաւ գլուխ դի՛ր։

— Ես զարմանում եմ, Խէչա՛ն, Սաքօն իր գլուխը ձեր համար կաո է դրիլ դու սրան հայհոյում ես, այս ի՞նչ բան է, դու ի՞նչ ես ասում, Սմբա՛տ, հարցրեց գրագիրը։

— Ես էն վախտը կը հաւատամ դրա խօսքերին, պատասխանեց Սմբատը, թէ որ էս սհաթս էս ձեռից ոտից ընկած հալիւորին աղատիլ տայ, դրա ու իր ընտանիքի համար զամին ընկի ու ինձ թողայ՝ միամ դրա տեղը բռնուած։

— Թէ որ դու սրտով էդ ցանկանում ես, Սմբա՛տ, ասաց Սաքօն, ու թէ որ էդ կարելի ա, ես կը խնդրեմ աղայ միրզին, թող քո սրտի ցանկութիւնը կատարի, բայց աւելի լաւ կըլնէր, թէ որ դու, աղայ միրզա՛յ, իմ գամինութիւնովս բոլորին էլ բաց թողայիր։

— Ո՛չ, օրէնքը չի հրամայում, ասաց գրագիրը, կամ Խէչանը, կամ Սմբատն ու Խէչանի աղջկները։

— Բաս ո՛րն իրանք կամենան, ես պատրաստ եմ, ձեռքը կրծքին խփեց Սաքօն։

— Ընդու ջա՛ն, դարձաւ Սմբատը դէպի ծերունին, ասա թող քեզ ազատուն, գնաս տունը, ես ինամ էստեղ ձեր տեղակ։

— Չէ՛, բալե՛ս, չէ՛, Սաքոյի խնդրքով արքայութիւն էլ չեմ ուզում գնալ։

— Մխոզ բե՛ր, հեղնարին, հերիքնապին, մտածի՛, թէ ի՞նչ ուրախութիւն կըլնի նրանց համար, երբ որ քեզ կը տեսնեն։

1 Յուսահատ։ 2 երաշխաւոր։

— Քո արիւնի գնո՞վը պտի ձարեմ էդ ազատութիւնը, Սմբա՛տ։

— Ա՜խ, ափու ջա՛ն, ես ջահել եմ, կը քաշեմ, Աստուած ինձ չի կորցնիլը

— Չէ՛, որդի՛, թէ որ ազատուելու ա՝ դու ամէնից շատ իրաւունք ունիս, դու զուր տեղն իմ խաթեր կրակումն երուում ես. բայց թէ ինձ կը լսես՝ Աքօյի տարած արքայութիւնն էլ մի՛ ուզիլ։

— Ա՜խ, ափո՛ւ, ես ինձ համար ոչինչ չեմ ուզում, ես քեզ խնդրում եմ՝ խօսք տաս քեզ ազատուն։

— Ո՞ւմ ձեռովը, միկիտան Աքօյի՞, հարամկեր արէնիսում Աքօյի՞, հը՜, հը՜, հը՜։

— Երկար սպասելու ժամանակ չէ, անօրինեց գրագիրը, սըբանք արժանի են էս պատժին, գնանք մեր գործին, եասավուլնե՛ր, տարէք այս երիտասարդին միւս բանտը, կապեցէք սիւնիցը և այս գիշեր Թող սիւնին վաթաթուած՝ կանգնած մնայ, իսկ մենք գնանք Աշտարակ, այս տեղից, լուսադէմին աղջկներին բանտարկենք. գնա՛նք, Սաքօ։

Եասավուլները Սմբատին քարշ տուին, ամէնքը ձևացրին, իբրև թէ, դուրս են գնում։

— Խէչան աղա՛յ, խօսեցաւ Աքօն, էս ի՞նչ իրաւաճութիւն ա, որ դու արիր, հերիք չի՛ ինքդ բռնուած ես, քո խեղճ աղջկների, էս պատուական տղի արնի մէջ էլ մնաար, արի՛ կոտրուի՛, խնդրենք աղայ Միրզին՝ բաց Թողայ Սմբատին։

— Շատ ղըրթ ես ասում, գլուխը կախած պատասխանեց Խէչանը, ես իմ երեխէքանց ու Սմբատիս մահապարտն եմ ու գում դառնալ, իմ մեղքի համար սրանց էլ եմ ուզում պատժիլ տալ. լսի՛, Սաքօ՛, թէ որ սրտինդ էլ էդ ա, ինչ որ լեզուինդ ա, ես քո առաջին ոտով գլխով մեղաւոր եմ, թէ չէ լեզուդ ուրիշ ա՝ սիրտդ ուրիշ, Թող Աստուած քո դատախազն ըլնի՛, ես չէի ուզում կոտրուիլ իմ ընտանիքի խաթեր էլ չէի գլուխ ծռիլ թէ որ Սմբատը մէջ տեղ չըլնէր. հիմի ես կոտրուում եմ, ես խոնարհում եմ, ես ըստուց յետը քեզ ինձ բարեկամ եմ ճանաչում ու խնդրում եմ, որ իմ երեխէքանցս ու Սմբատիս ազատիլ տաս։

— Ոչինչ, աղայ Խէչա՛ն, ես քեզ վըայ չեմ նեղանում, ոնց որ ասեցի, իմ արած ծառայութիւնը դուք յետոյ կը հասկանաք, ես ուրախութիւնով իմ շլինքն եմ առնում Սմբատի ու քո աղջկների զամինութիւնը։ Աղայ Միրզայ, յատուկ խնդրում եմ, որ էս ջահել

տղին բաց Թողաս, Խէչան աղէ աղջկներին չբռնես ու աշխատես գործը սրանց օգտին փոխել, խնդրեց Աքօն։

— Եասավո՛ւլ, յետ արէք այդ երիտասարդին, հրամայեց գրագիրը, այս օրուանից, Խէչան աղա՛յ, ՚ի պատիւ Աքօյի ես էլ ձեր բարեկամների շարքումն եմ. եթէ Աքօն ձեզ օգնում է, այդ նշանակում է, որ դուք անպարտ էք։

— Աստուած քեզ վարձահատոյց ըլնի, աղայ միրզա՛յ, Աքօ ջա՛ն, դու էլ բաշխի՛ ինձ, ձեռքը ձգեց ծերունին։

Աքօն բռնեց ու համբուրեց։

— Տէր Աստուա՛ծ, դու փոշմանութիւն[1] չտաս, աչքերն երկինք բարձրացրեց ծերունին և Աքօյի գլուխը համբուրեց։

Եթէ ծերունին ինքը դողդողում չը լինէր, նա կզգար Աքօյի դողոցը, որ վերջին համբոյրի հետ նրա անձի մէջ ընկաւ։ Բայց Աքօն շատ շտապով իրեն ուղղեց և դարձաւ դէպի գրագիրը։

— Աղայ միրզա՛յ, մի խնդիր էլ ունիմ, չի՞ ըլնիլ, որ Խէչան աղէ ձեռներն ու ոտներն էլ զնջլեց ազատես ու հրամայես, որ հանգիստ պահեն, թէ որ գործը քո ձեռին ա, էդ մի ողորմութիւնն էլ արա՛։

— Կարելի է, հրամայեց գրագիրն և ծերունու կապերը քակուեցան։

Սմբատը շտապեց դնաց այս աւետիքն Աշտարակ տանելու, իսկ Աքօն ձեռք բերեց Խէչանի մեծարութիւնը։ Այնուհետև օրը մեկ էր, Աքօյի ելևմուտը տասը։

Աքօյի խնդրանքով Սմբատը յաձախեցրեց իւր այցելութիւնները Խէչանի մօտ, որի սենեակն էլ փոխեցին, երեկոները լոյս էլ տուին և տաք կերակուր էլ վճռեցին։

Նա ապրում էր իբրև մի միայնակեաց։

Աքօյի ասելովը մօտենում էին Խէչանի ազատութեան օրերը։

---

1 Ձղջումն։

ԼՕ.

ՍՏՈՒԵՐԸ, ԿԱՄ ԱՆԿՈՉ ՀԻԻՐ

Մինչ Թողինք Խէչանին կալանաւորելուց յետոյ նրա տունը խառնաչփոթի դրութեան մէջ, Սմբաթից միայն իմացանք, թէ Հեղնարը ապանութեան գիշերը զառանցանքի մէջ է եղել, իսկ միւս օրը հօր շղթայուելն իմանալով, վեր է թռել տեղիցը և տան մէջ վայր ընկել։

Ահա այդ օրից Հեղնարն անկողնից չվեր կացաւ, շարունակ տաքութիւնը և հօր կսկիծը նրան հալ ու մաշ էին անում, շատ գիշերներ բոլորովին անքուն էր մնում, ինքը տանջուում և իւր հետ իրեն նայողներին էլ տանջում էր։

Պառաւ Մարիամը ոտքի վերայ իսպառ չորացել, կմախք էր դարձել, եթէ Հեղնարին պէտք դալու կարիքը չդդար, շատ կարելի է ինքը վաղուց մի օր առանց հիւանդութեան յուխտեան աչքերը փակած կը լինէր։ Սմբաթը դարձել էր այս տան մշտական անդամը, նրա յարաբերութիւնները աղջկանց հետ բոլորովին եղբայրական էր. Հերիքնազն իւր կեանքը միանգամայն նուիրել էր Հեղնարի պահանջներին. երեք հիւանդապահներն էլ անքնութիւնից և անհանգըստութիւնից թալշամել դալկացել էին, ոչ Սմբաթի առուգութիւնը, ոչ Հերիքնազի քնքոյշ զգեցկութիւն և ոչ պառաւի կայտառութիւնը կար։ Մարիամը շատ անգամ սոխպում էր իւր աղջկանն ու Սմբաթին դլխները փոքր միջոց բարձին դնել, բայց ինքն էլ նոյնն էր լսում մկկից կամ միւսից։ Ձայը կորում էր, ինքն էր աչքերը քիչ ժամանակ փակում և դէմք յոյց տալիս, իբրև թէ քնած է, բայց իրօք, աստանէն կը քնէր՝ նա, ոչ։

— Վէ՛, հիմի հերթը ձերն ա, ես շատ քնեցի՝ դնջացայ, գըլուխս օխտը բեռը դառաւ, խնդրում էր Մարիամը, հիմի էլ մի քիչ դուք քնեցէք։

Բայց նոքա ևս միեանց խաբում էին. շատ էլ դուչէ, ուզում էին քնել, ո՞ւմ քունը կը տանէր. կիսակինդան հիւանդն օրըստօրէ դէպի վատն էր դնում, իւր տաքութեան հետ մի խեղդիչ հազ էլ սկսաւ, որ բռնելուս գլուխն երկու կտոր էր անում. այդ բանը միանդամայն մորթ և ոսկր չէնեց նրան. էլ տեղից վեր կենալու հնարաւորութիւն չկար։

Բժշկաց օգնութեան դիմելը դեռ մեր քաղաքներն էլ նոր է մտնում, դեռ հասարակ ժողովուրդը գերադրով բժշկութիւնը համարում է խաբեբայութիւն. ո՞չ միայ, որ գիւղերումը Հիպոկրատի որդիքը միայն պաշտօնապէս գաւառապետների մօտ են նշանակուած և պէտք են դալիս սպանուածներին բժշկական քննութեանց վկայականներ տալու դատաստանական գործոց համար։ Այս բանումն էլ, ձ'իշդ աղբիւրից կարող եմ ասել, որ նոցա վկայութիւնները հիմնուում են շատ անգամ իւրեանց ուղեղումն ստեղծած պատճառների վերայ, հարիւրից մէկին դեռ բժիշկը չի կարատում և զննում. մի քանի մանէթներ, քանի մի ամսուան ապահովութիւն՝ և ահա առնակալ պատճառներից դիակն առանց անհանգիստ լինելու և բժշկի դանակի սրութիւնը փորձելու աւանդուում է հողին, իսկ գործի հետ կարուում է մի թերթ լատինական բառերով և մեզ մահկանացուներիս համար անհասկանալի բացատրութիւններով։

Ա՛սրը մնացել էին Թիլ բացատողները, աղօթողները, նետ դնողները, դրբացներն ու Նարեկ կարդացող ծերունի քահանայքը։

Մարիամի պարագումներից մինն էլ այդ էր, բայի սովորան այցելու հարևան բարեկամներից, այս ծակ մարդարէները տանից այդչը ոտ չէին դուրս դնում։ Ջերմեռանդ Մարիամն էլ ջվալներով ալիւր, քթոցներով չիր և կարասներով դինի արաղ էր այդ խաբեբաների փորն ածում։ Էլ Մոշնու սուրբ Գէորգ, Ցախնու սուրբ Գէորգ, Կոշայ սուրբ Գէորգ, Բերդի սուրբ Գէորգ, ես ի՛նչ գիտեմ, Նորագաւթու սուրբ Գէորգ չմնաց, էլ մեռելատոյց աւետարան, Թուխ Մանուկ, Աղջաղալայ գիւղի պառաւի տուն չմնաց, խունկ ու մոմեր, մատաղներ էր, որ ղրկում էր, դեռ օձ ման ածող օջաղօղլու խորհրդովը մի երկու պարսկական մեչիդների էլ սպիտակ ղօչեր[1] ղրկեց, բոլորը՝ բոլորն էլ անօգուտ։ Հեղնարը, կարծես, մտքումը դրել էր պարկած տեղիցը չվեր կենալ։

— Ախու ջա՛ն, ա՞խ, եարաբ[2] ո՞ւր ես։

Հեղնարի այս բացականչութիւնները ոչ միայն լսողի սիրտն էին կարատում, իրան՝ հիւանդ աղջկանն էլ այն աշխարհն էին տանում ու յետ բերում, իսկոյն հազը սաստկանում էր և մերձ՝ի մահ վայր ու յետ ձգում։

Շատ խորհրդակցելուց յետոյ Հերիքնազն ու Սմբատն եկան այն եզրակացութեան, որ պէտք է շուտ շուտ հնարովի լուրեր և աւե-

---

1 Թոյ։ 2 Արդեօք։

տիքներ բերել հիւանդին հօրից և այս բանովը բաւականին թեթեւացրին նրա ցաւերը։

Մի օր Սմբատը տուն էր գալիս և յայտնում, որ հասավուլի ասելովը ափունը բոլորովին ազատ է, միայն թէ դեռ մովրովի մօտից հեռանալու իշաւունք չունի. միւս օրը՝ թէ քննիչը գործը վերջացնելու վերայ է և այս քանի օրս նա բոլորովին կը վերադառնայ, երրորդ օրը նամակ էր բերում, կարդում հօր կողմից գրած, որով յայտնում է իւր հանգիստ վիճակն և խնդրում է չհոգալ իւր համար. միւս օրն ինքը տանուտէրն էր տուն գալիս և այս րոպէիս Խէչանի մօտից գալն և նրանից բերած ողջոյնը յայտնում։

Այս բաներն սկզբումն իւրեանց բարերար ներգործութիւնն էին ունենում, բայց ի վերջոյ հեղնարը կասկածի տակ ընկաւ. նա նշմարում էր իւր պահապանների երեսի թանձր տրտմութիւնն և դրանից գուշակում էր, որ իրան մնոտի յոյսերով են պահում։ Երբ այդ կասկածն էլ շինծու և ուրախալի դէմքով փարատեցին, մի ուրիշ կողմից հեղնարի կասկածները սաստկացան. օրերն անց էին կենում, խոստացեալ ազատութեան ժամանակները մի քանի անգամ լացել էին և դեռ իւր աչքը ճանապարհին էր։

Վերջապէս ինչպէս ինքը Սմբատը պատմեց Խէչանին, որ Սաքօն կարողացաւ ոտքը ներս դնել Խէչանի տունը և այն յուսովը, որ իրանք մինչև հիմի հիւանդին էին պահում, նոյն յոյսը Սաքօն դրանց տուեց և զանազան ստայօղ պայմաններով փողերը էր, որ դուրս կորզեց։

— Լ՛ւ, մտածեց Սաքօն, այսուհետև ձեռներս պտի լուանամ, ես աղջիկն ինձ համար պաս էլաւ, դժար՝ թէ սա վեր կենայ տէղը, հիմի ինձ հարկաւոր ա, քանի հալիւորը բռնուած ա՝ նրա կարողութիւնը դուս ծծել։

Սաքօն լաւ գիտէր, որ Խէչանի համար իւր ընտանիքը ոչինչ էին խնայիլ և ձեռք առաւ այդ յաջող հնարքը, ու պէտք է ասել, որ նպատակին հասաւ։

Հերիքնազը թէպէտ սկզբումը շատ հակառակեց, մի նեղլքին հակակրական ձայն նրան ասում էր, որ այդ ժանտախտը տուն թողնելու չէ, բայց տանուտէրի համոզմամբը հեղնարի ստիպմունքին չկարողացաւ ընդդիմանալ։ Սաքօն տուն մտաւ և իւր շողոքորթ լեզուովը հիւանդի սրտումը կրկին յոյս զարթնացրեց։ Այս պատճառաւ Հերիքնազը հոգ էլ չէր անում, թէ Սաքօն խարդախութեամբ է փողերը դուս ծծում. զգալի օգուտն այն էր լինում, որ հիւանդը թեթեւութիւն էր զգում և այս բաւական էր։

Շատ գիշերներ Հերիքնազն ու Սմբատը ժամերով նստած հիւանդի մօտ, նրա քնած ժամանակը կամաց խորհուրդ էին անում, հնարներ էին մտածում Խէչանին ազատելու, բայց ոչ մի եզրակացութեան չէին կարողանում գալ։ Գիւղացիք ու տանուտէրն էլ վախենալով մովրովի վրէժխնդրութիւնից, խորհուրդ չէին տալիս բարձր իշխանութեան դիմելը։ Գործը մովրովի ձեռին էր, նա կարող էր այն տեղը բերել, որ մի օրուան մէջ Խէչանին ազատելու, Սիբիր ղրկելու կամ հրացանով ծակծկելու վճիռ կայանար։ Էլի ամենից օգտաւէտը Սաքօյի ձեռքով փողի շնորհիւ բան տեսնելն էր։

Ահա գլխաւոր պատճառներից մինը, որ Հերիքնազը արտաքուստ միայն ընդունելութիւնը էր ցոյց տալիս Սաքօյին և զսպում էր իւր իրաւացի զրգռուած կիրքը։

Խեղճ Հերիքնազ, չգիտէր, թէ փորձուած Սաքօյի աչքից չէր փախել իւր պատրաստակուելը. ապա եթէ այդպէս չլինէր, Սաքօն վաղուց իւր մեքենաները լարած կը լինէր նրա դէմը. Սաքօն շատ լաւ նախատեսում էր, թէ Խէչանի հարստութիւնն ի վերջոյ ո՛ւմ է մնալու։ Սաքօն իւր մէջ հաստատապէս վճռել էր, որ Հեղնարի կեանքն երկարատև չէ, թէ ջերմը փոխուել է թոքախտի, կամ ինչպէս իրանք ասում են, ճլերքի, թէ Հեղնարի գերեզմանը մօտենում է և թէ օրինաւոր ժառանգն իւր առաջին պաշտող մարդասպան գեղեցկուհին է, որ կայ։

Այսքանը գիտէր Սաքօն, իւր մի ոտքն էլ ամէն օր Խէչանի վերի անկիւնումն էր, Հերիքնազի հետ էլ ժամերով միայնակ անցկացնելու միջոցը ձեռքին ունէր և չէր լարում իւր մեքենաները, գիտէր որ իւր առումները փուխր են այդ պողովատիկը կոծելու համար և իւր ջանքն անօգուտ պիտի անցնի. Հերիքնազն իրան սիրողը չէ, նրա հասատատակամութիւնը ոչ ոք դրդուել չի կարող։

Մի այնպիսի միջոցը, որով Սաքօն իւր նպատակին մասամբ հասած պիտի լինէր, իւր բռնած ճանապարհն էր։ Դեռ քանի Խէչանի այգինների և արտերի բերքը չէր պրծել, ուրեմն և փող կար տալիս կը յափշտակէր, վերջն երբ այդ պրծաւ, նորա ընտանեաց ձեռքովը Խէչանի մօտ մուտք կը գտնէր ու փողի տոպրակը կը դատարկէր։

Ահա ի՞նչ էր նրա ծրագիրը։

Բայց մեզ յայտնի է, որ Սաքօն Խէչանի բանտարկուելու օրից չկարողացաւ ներս սողալ նորա մօտ և այդ մեծ ցաւ էր սըրտին։ Իսկ որովհետև ինքը խօսք էր տուել մովլովին Խէչանին ձերնհասելով՝ նրան իւրեանց ձանգը ձգել, Սաքօն ամէթով էր մնում իւր պաշտպանի մօտ։

Մի քանի անգամ մովլովը սաստիկ յանդիմանեց միկիտանին, որ ինքը նորա յորդորանօքը անմեղին իբրև մարդասպան բանտարկել է, իսկ հիմա անկարանում է նորա կարողութիւնից օգուտ տեսնել։

— Սաքօն իր միսը կուտի ու մաքի դրածին կը հասնի, աղայ ջա՛ն, աչքներս լի՛ս, տուն հկաւ միկիտանը մովլովի մօտ, ոտս տուն դրի, հիմի Խէչանն իմ թօռի միջին ա։

Նա պատմեց մովլովին իւր յաջողութիւնը և Խէչանի տանը ել ու մուտ անելը։

Այնուհետև հաբաթական մանր վաճառականաց ապառիկի նըման Խէչանի տանից շահուած փողի կէսը մովլովի դրպանն էր մտնում, միւս կէսը Սաքօյի դրամարկղը։

Երբ Սաքօն տեսաւ, որ Խէչանի տանն էլ ոչինչ չի մնում ծախելու և փող չհնելու, Սմբատին Խէչանի հետ տեսակցելու իրաւունքըն առնելն աւետեց։

Մի ինակ հնարքը, որ պէտք է պսակէր Սաքօյի աշխատութիւնը, Խէչանի հայրական զգացմունքը գրգռելն էր. միակ տղամարդը, որ յարմար էր Խէչանի տան համբաւը ձչդութեամբ իրան հասցնելու, Սմբատն էր։ Այս կերպով միայն Սաքօն կարող էր թէ Խէչանի ընտանեաց կասկածը փարատել և թէ նորա բարեկամութիւնը, և կարողութիւնը շահուել։

Եթէ ընթերցողը դժուարացաւ հասկանալ, կամ կասկած ունի բանտի դուռը չոքէ չոք անցնող լրտեսի անձնաւորութեան վերայ և նրա վերայ ձիշդ տեղեկութիւն առնել ցանկանում է, ապա թող միամտուի, որ այն գիշերապահը ոչ այլ ոք էր, եթէ ոչ ինքը միկիտան Սաքօն։ Նա ինքն էր ի հարկէ Սմբատին բերել տուել իւր անօրինութեամբն էր եասաւուլը ներս տարել տղային ճերմակուց մօտ և դուռը վրէն փակել, իրան՝ Սաքօյին էլ շատ հետաքրքիր էր Խէչանի ու Սմբատի մէջ եղած խօսակցութիւնը։

Սաքօն ականջ դրեց բանալու ծակովը, լսեց և գոյնը տուեց։ Նա գուշակում էր, որ Խէչանը ամէն թշուառութեանց պատճառը կարող էր իրան համարել ու կասկած տանել, բայց այսպէս մանրամասնաբար մի առ մի ամէն բանին տեղեակ լինելը Սաքօյի մտքովն երբէք չէր անցնել։

Խէչանն այնպէս տեղն ու տեղը պատմեց ամէն բանը Սմբատին, որ ոչինչ վկայութիւն չէր հարկաւոր, օրէնքի առաջին իրողութիւնը յայտնուելուն պէս Սաքօն էլ մովլովին էլ կը դատապարտուէին։

Սմբատին այս րոպէից բանտարկել տալ։ Ահա ի՛նչ ծնաւ Սաքօյի մտքումը։ Մի երկու քայլ յետ կացաւ նա իւր դարանից, ուզում էր դնալ մովլովիցն այդ իրաւունքն ստանալ, բայց կանգ առաւ. մի նոր խնդիր ծագեցաւ նորա մէջ։

Սմբատին բանտարկելը շատ գժալի միջոց է, հարցը կը ծանրանայ և բարձր իշխանութիւնի ականջը կը հասնի. վտանգաւոր ձեռնարկութիւն է այս, պէտք է Սմբատին ազատ թողուլ պէտք է Խէչանի տանից երեստեղը չկտրել պէտք է ամէն հնարք ի գործ դրնել, Խէչանին ստիպել, որ իւր՝ Սաքօյի բարեկամութիւնն իրան համար կարևոր համարի և այն՝ նոյն երեկոն չյուսացրած։

Սաքօն երկար մտածել չէր սիրում, նա ձեռաց գտաւ մեզ յայտնի հնարքը՝ Սմբատին բանտարկելը, աղջիկներին կալանաւորելու սպառնալիքը, գրագրի քննչական իրաւունքի տէր լինելը և ի վերջոյ իւր՝ Սաքօյի երաշխաւորութեամբ Սմբատին ու աղջիկներին ազատ թողլ տալը։

Այն մի քանի րոպէն, որ Խէչանին արդարացի կասկածի մէջ ձգեց իւրեանց խօսակցածը լրտեսելու մասին, այն մի քանի րոպէն բաւական եղաւ Սաքօյի համար մովլովին քնած տեղիցը զարթնացնել և իւր մտադրութեան բառացի կատարուելու հրամանն առնել։

Ընկճուեցաւ, յաղթուեց Խէչանը և իւր ձեռքովն իւր կարողութեան սպառուելուն օդնեց։

Սմբատի գնալու միւս առաւօտից սկսած՝ Խէչանի մուրհակներից օրը մի երկուսը Սաքօյի ձեռքն էին անցնում և փողերը մովլովի հետ կիսուում։

Լաւ դուռն էր բացուել Սաքօյի և մովլովի համար, բաղդը նրանց ծիծաղացել էր, Խէչանի համար էլ այս մեծ ուրախութիւն էր, նա ձկլովմը բոլորովին ազատ էր ապրում, Սմբատի պցելու թիւնները շաբաթը մի երկու անգամ լինում էին, Խէչանն իւր ընտանեաց բարի համբաւն անպատար առնում էր, էլ ի՞նչ հոգն էր նորա թէ, իւր փողերը գնում էին։

Սակայն ի՞նչ կայ աշխարհումս յաւիտեան. աշխարհս մի անիւ է, որ շարունակ պտոյտ է անում, դարձաւ և մոլորվի բաղդի անիւը. երեանու նահանդը մի նոր քննիչ գալու համբաւն իրան հասաւ:

Խեղճ մոլորվը կարծեց, թէ այս քննիչն էլ իրանից յառաջ եկած շատերի նման պիտի շշափէր ծառայողների քսակի բերանն և ուրիշ ոչինչ. այդ պատճառաւ էլ մեր խելացի մոլորվը առաջին գործն արեց խէչանին շղթայելն ու առանց գործի որպիսութիւն իմաց տալու, առանց գործերը հետը դնելու, խէչանին մի համառօտ առաջարկութեամբ երեանայ բերդն ուղարկելը, մինչև քննութիւնը վերջանալը: Իսկ խէչանի գործերը պատառեց ու ոչնչացրեց, հաւատի գիտելով, թէ քննչի հեռանալուց յետոյ կարող է անարգել արձակել տալ կալանաւորին կամ կրկին իւր մօտ պահանջել:

Այս յուսով մոլորվն իւր միւս գործերն էլ կարգի չբերեց, բայց շատ զղջաց. բանից դուրս եկաւ, որ այս նոր քննիչն իւր նախորդներին ոչինչ բանով նման չի եղել: Մի առաւօտ հասավորը վստահաբար մօտեցաւ մոլորվին ու զարթնացրեց, մի քանի խօսքով իմաց տալով, որ քննիչն եկել, իրաւարանը կողպել ու իրան սպասում է:

Ամպերը հաւաքուեցան մոլորվի գլխին, առաւօտը նորա համար մութը թուեցաւ, աչքերը սևացան և այդ դրութեամբը ներկայացաւ դաժան ու անկոչ հիւրին:

Լ Ւ:

Ք Ն Ն Ի Չ

Մարդս չի իմանում, թէ վաղն իւր գլխին ի՞նչ պէտք է գայ. նա որ այսօր երջանիկ է, չի մտածում, թէ կարող է մի տարուց, մի ամսից, մի ժամից յետոյ վերջին թշուառը դառնալ: Անպատրաստ չգտաւորը, որ իւր կեանքը անբաղդութեան շղթայի մէջ կաշկանդուած է համարում, յանկարծ մի էնչին պատճառից տեսնում է իրան երջանկութեան ծայրին կանգնած:

Բայց այսպիսի հազարաւոր օրինակները, մեր աչքի առաջին

ամէն օր պատահած կեանքի փոփոխութիւնները մարդուս վերայ սակաւ տպաւորութիւն են անում. բաղդաւորը էլ վաղուան համար չի ուզում մտածել, անբաղդն էլ իրան յաւիտեան կորած է համարում:

Եթէ մարդս այս բանը կարողանար առանց ուշադրութեան թողնել, եթէ աղքատը չյուսահատէր իւր ներկայ դառն դրութեան վերայ, եթէ հարուստը մշտ աչքի առաջ ունենար այս փոփոխութիւնները, այսքան զեղծումներ չէին պատահիլ, անանկութիւնը արհամարհած չէր լինիլ, իրաւունք, արդարութիւն և պարտաճանաչութիւն իրանց նշանակութիւնը պահպանած կը լինէին և մարդկութիւնը իւր բռնելիք ընթացքից չէր շեղուիլ:

Մարդուն տուած է գործել, աշխարհքիս բարիքը վայելելու, երջանիկ կեանք անցնելու համար քրտինք թափել, տքնիլ, գլուխը վտանգի ենթարկել, բայց արդարութեան դէմ չմեղանչել, ուրիշի ունեցածը անուղղակի միջոցներով չյափշտակել, ծուռն և պարսաւելի ճանապարհով արծաթի ու փառքի համար անձնուրաց և ընկերասէր չլինել. այս բանները ներելի չեն հոգեկան և մտաւոր արարածին:

Ամէն գործիդ մէջ ճշմարտասիրութիւն, ամէն ընթացքիդ մէջ արիութիւն և խոհեմութիւն, ամէն քայլափոխիդ հեռատես աչալրջութիւն: Ահա այն կանոնները, որ պէտք է առաջնորդեն մարդին: Յաւելի է, սակայն, որ այս սուրբ օրէնքը չենք պահում, չենք պահում, մոռանալով մարդուս վիճակի փոփոխութիւնը:

Պատմութիւնն, աւանդութիւնն և փորձը միշտ ցոյց են տուել, որ այս օրէնքի դէմ մեղանչողը ժամանակին իւր պատիժն ստանում է, բայց մենք էլի չենք խրատուում, էլի անհրեսի նման մեր պարտքը չենք ճանաչում և մեր յանցանքի փոխարէնը ստանալով՝ փոխանակ արդար հատուցում համարելու, ուրիշներին ենք մեղադրում:

Գալով մեր պատմութեան շարունակութեանը, ես ընդհանուրից մանաւորին եմ անցնում. ժողովրդին թողած՝ ես կրկին դիմում եմ նրա կառավարիչ առաջնորդներին: Խօսքս մեր մոլորվների վերայ է: Ես պատրաստ եմ դաշն կապել, թէ նոքա իւրեանց պաշտօնի մէջ մտած օրից, մոռանում են, թէ մի օր իրանց արարքը ուշադրութեան պէտք է առնուի, թէ իրանց բարի կամ չար արարքը արդարութեան առաջին հատուցում կատանայ:

Մենք տեսանք շատ մոլորվներ, իրանց պարտքը չճանաչողներ, մեր այսչափ պատմածներից հազիւ մէկի վերայ մտաը դրինք

որ կաշառք չէ կերել, իրեն յանձնած հօտի նեղութիւնը չէ կարողացել տանել, թողել իւր երեսի ջրովը հեռացել է պատերազմական դաշտը։ Գնաց նա և չզղջացաւ, իւր պատիւը պաշտպանեց, յարգանքն աւելցրեց և վերջն իւր նախկին պաշտօնի մէջ վերակոչուեցաւ։ Լուս իւր ժողովրդի համակրութիւնն և անկեղծ սէրը գրաւեց։ Միւսները օրէնքի աչքից էլ երէկ փախել են, հասարակաց դատաստանը, ամկի անէծքը նրանց քամակից հետևել է. իսկ այդ հասարակաց դատաստանը, այդ անողոք դատաւորը շատ անգամ խիստ է պատժում, շատ անգամ պատճառ է լինում օրինաց ուշքը իւր դատապարտած չարագործի վերայ գարձնելուն։

Ա.րևելեան պատերազմի ժամանակ մենք տեսանք, թէ ո՛րքան ոճիրներ գործուեցան, ո՛րքան յափշտակութիւններ, գողութիւններ, ձ՛նչումներ, հարստահարութիւններ էին լինում, հասնող հասնողի՝ տանող տանողի էր, ում ձեռն իրաւունք էր անցնում, դեռ յօգուտ իւր պաշտօնի ոչինչ չարած՝ այդ արտօնութիւնից շահուել էր ուզում, զօրապետը զօրքի եկամէին էր ծուռն աչքով նայում, արեան դէմ գնացող զինուորի սև հացի պատառին էր դաւաճանում, մատակարարները նախ իւրեանց գրպանն էին պարարում, սև հացի կէսը հող ու կիր էին անում, վաճառականն իւր վէրաճ ու թթուած մթերքովն աղնիւ գողութիւն էր անում և իւր գողակից իրաւաւէրի քամակից դէպի իւր արկղը քարշում, գաւառապետները ամկի վերայ դրած հարկը տանուպատիկ էին ծանրացնում. միով բանիւ՝ պղտոր ջուր էին գտել, ամէն ոք կարթ և ուռկան պատրաստած՝ չորս ձեռնանի էին գաւել և որսում ու որսում։

Մ՛իջոցը չէր ներում, կրիտիկական հանգամանքը չէր թոյլ տալիս արդարութեանը վրէժխնդիր լինել, գուցէ բուն արդարութիւնը շատ հեռու էր, գուցէ շատ արդարասէր կարծուած հաւատարիմներ իրանք էս ձկնորսներ էին դարձել այսօր, սակայն մի բան նախատեսում էր, թէ կը գայ մի օր՝ և արեգակի լոյսն ամէն ծըմռներ կը թափանցի, հասարակաց դատաստանի սղոցը կը տապալէ թաւ անտառների մեծամեծ և սաղարթախիտ ծառերը և ծմռներն ամէնքի աչքին էս ձեռնհաս կը լինեն։

Հասարակաց դատաստանն էր, լուռես սատանի նենգութիւնն էր, թէ նոյն իսկ արդարութեան հեռատեսութիւնն էր՝ մենք աւելորդ ենք համարում հետախուզել, բայց վերջապէս արևելեան պատերազմից յետոյ արդարութիւնը վրայ հասաւ և ամէն բան տակն ու վրայ արաւ։

Փոքրաթիւ առաքինութիւնը ճ՛խաց, խայտաց, իսկ մեծամասնութիւնը դողաց, սարսեց. խիղճը հանգիստ մարդը ոգևորեց անմեղութեան պաշտպանին, ամիկ ժողովուրդն ովսաննայիւ դիմաւորեց, իսկ մեր յաջող ձկնորսների ձեռքերը թուլացան, ուռկանները ձեռքիցն ընկան. ըստ որում թէպէտ պատերազմը գադարել էր, ջրերը պարզել էին, բայց ագահութիւնը մոլութիւն է և մոլութիւնից ազատուելը հեշտ չէ. անիծուի՛ սովորութիւնը, որ ուզես կամ ոչ, երկրորդ բնութիւն է դառնում և մարդու արիւնի հետ մէկտուում։

Բանն այս է, որ արդարութիւնը շատ արագ թռիչք ունեցաւ, դեռ ամէն ոք իւր տանը հանգիստ քնած, դեռ ոչ ոք մի շշուկ չլսացած՝ յանկարծ այդ անկոչ հիւրը ներս է մտնում Երևանու հանգը, յաղթ թօթափել դադարեցնում է ամէն գործառնութիւն, կնքի, փականքի տակ է դնում բոլոր թղթեր ու գործեր և իւր հետաքննութիւնն սկսում է։

Մի քանի գաւառներ շուտ հոտն առան և իւրեանց գլուխն ազատեցին, սակայն այսպիսի բացառութիւններ շատ սակաւ եղան։ Եթէ չեմ սխալւում, առաջին իրաւարանից մինչև վերջին գիւղական տանուտէրների ծոյը՝ բոլորի բանալին արդարութեան ձեռքն անցաւ։

Ա՛ստղ շրջանը մեզ չի թոյլ տալիս ընդլայնել այս խնդիրը և մանր գործել մի առ մի բոլոր գաւառներն ու գաւառակները։

Ա՛նենք մեր գաւառակի հետ գործ ունինք և մեր տան անցքն աւելի լաւ ու ճշդիւ կարող ենք դիտել։

— Լ՛սո՛ւմ ես ի՛նչ կայ, ուրախ ուրախ պատմում են միմեանց գիւղական ժողովուրդը. աչքներդ լի՛ս, ասում են մի մեծ մարդ ա եկել, բէգլաֆիլ[1] ամէն դատաստանատների բանքները հանել, իր էջերն ա դրել ու դռները մհրել[2]. ասում են մեր մովլովը դեռ քըջէրն ա դրել ու դռները մհրել. ասում են մեր մովլովը դեռ քըջէրն ա էլել դեռ նոր գեղացիք նախիրը արօտ են քշելուս էլել որ էդ ապայ մարդն եկել ա Զէյվայ գեղը, մտել դիւանխանէն[3] ու գործերը թափած տեղը մհրոտել[4] ու նո՛ր մովլովին զարթնացրել։

— Աչքի լիսով կեր ա՛ս, բաս հէնց գիտէիր, թէ Աստուած հալը նահախին կը տա՞յ[5]։

---

1 Ցանկարծ։ 2 Կնքել։ 3 Դատարան։ 4 Կնքել։ 5 Արդարութիւնն անպատիժ չի թողուլ մեղաւորին։

— Խեղճ մովբով, սրտանց ցաւում էին տանուտէրներն իրանց առաջաւորներով, ողէ՛ք, տուտը մեզ չհանի։

— Շատ լաւ էլա՛ւ, բաս էս խալխի աղաղանքը պտի Ճնաղ, քանդեց մեր մհալը կռուի վախտը, ձեր քինեն էլ որ մի քիչ արորուի, շատ լաւ կըլնի, ջլես ձեր Աստուածն ուրացել էիք, պատասխանում էր հասարակ ժողովուրդը։

— Ուրախացէք, ողէ՛ք, թէ որ մեր ջերից անօրէնութիւնով խլած փողերը յետ էլ չենք կարող առնիլ, հաստատ պտի աւատանք, որ պօլիմպրեալ տուողներն իրանց մեդալը կտանան, յոսսադրում էին ծաղրելով մեդալասէրներին չմանակցողները։

— Աչկեարայ գողութիւն չէր, բաս ի՞նչ Աստծու կրակ էր. ասենք կռից, բեգեռից, խարջն աւելնորդից, սելից, ցորենից, ղարաւուլից մի քիչ իրաւունք ունէին ուտելու, մերը ծախողը մատը կը լպստի, համա, էս մեդալը բոլորովին անիրաւութիւն էր. տնաքանդի մովբովն էս կռուումը խաղնոյ կապից՝ հերիք չէր, մեդալն անուշն էլ վեր արեց, խեղճ խալխի ջերի պօլիմպրեալները գողացաւ։

— Ես ու իմ Աստուածը, տեղն ա՝ որ դրան մի լաւ պաաժ ևն։

— Ընկե՛ր, քրանել ա՞, թէ մէջքը մշակութիւն անելով երկուտակուել ա, ինձանից՝ քեզանից առած պօլիմպրեալների կէսն էլ որ տայ, հերիք ա, արդարացաւ՝ պրծաւ։

— Էդ էլ ես շհատակ ասում, համա ես ի՞նչ դիտեմ, ասում են էս նոր եկող քննիչը կաշառք ուտող չէ. դեռ, ասում են, մի քանի օր ա եկել ա, Երևանի մէջը շատ չենովնիկների քարը ծռին ա քցել ամէնքն ուռի տերևի պէս դողում են։

Այս ժողովրդի կարծիքն և դատողութիւնն էր։

— Տեսա՞ր գլխներս ի՛նչ եկաւ։

— Չա՜, ախպէ՛ր, հա՜, սրա ծուխը մեր քթիցը դուրս չի գալու։

— Գիտե՞ս, ասում են՝ էտեղից են մտանել։

— Ես գիտեմ ո՛վ են այդ կարաս հոտացնող մկները, եթէ կրկին իմ իշխանութիւնը ձեռք կը բերեմ, կը տեսնեն այդ անպիտանները, այնպէս փորձանքի մէջ ձգեմ, որ յաւիտեանս չպատուին։

— Լ՛ւ, եղբա՛յր, ո՞ւր ենք ՝ի գըր տեղն երկրորդական պատճառների քամակիցն ընկնում, ամանը լցուել էր, պէտք է շրթունքներիցը թափուէր. մենք ծառայողներս մեզ բոլորովին մոռացել էինք, մեր անիրաւութեան ձայնն ամէն տեղ բարձրացել էր, ռամիկ

ժողովրդի մէջ արևն չէթողնինք՝ ողկի պէս ծծեցինք ու քամեցինք. պատերազմը վերջացաւ, ժողովուրդը դեռ շունչ չի առել մենք էլի չենք դադարում մեր հարստահարութիւններիցը. Ի հարկէ, որ այս լուրը մի օր տեղ պէտք է հասնէր, որ ուրիշն էլ չմտանէր, քամին կը տանէր։

— Ի՞նչ անես, եղբա՛յր, արի՛ ու մի անիլ, ես էս պատերազմիցը մի գող ոսկի եմ դուրս բերել, հիմա ինձ հարցրո՛ւ, քառորդը ձեռքս է. ինչպէս առաջն ասում է՝ քթաչ քթաչ հաւաքում ենք, շերեփ շերեփ դուս տալիս. ձանձն ածում է, ձիճուն կրում։

— Ի՞նչ ես արել։

— Ինչ որ դու ես արել ինձանից ուժեղին՝ իմ նաչալնիկին եմ տուել, ի՞նչ պէտք է անէի։

— Իսկ եթէ հիմա յետ ուզելու լինին։

— Չյն ժամանակը սև ու մութը մեզ կը տանի։

— Դո՞ւ ի՛նչ կանես, եթէ մեդալներիդ պօլիմպրեալներն յետ պահանջեն։

— Եթէ միայն այդքանը լինի, կարող եմ տալ, դու ասա ցանկն, սայլերի և ուրիշ տեղերից եկած արդիւնքների տեղը չեմանան։

— Վերջապէս Աստուած է Ճնացել, ապա թէ ոչ այդպիսի սառնասիրտ քննչի ձեռքից մենք բոլորս կը կորչինք։

— Այդ է բանը, որ ոչնչով չես կարողանում մուտք գտնել, այսպիսի անշահասէր քննիչ իմ 24 տարուան ծառայութեան մէջ ես չեմ տեսել. մենք իմացել ենք, որ քննիչներ գալիս են, տեսել ենք սկզբումը նրանց կծու, բայց մի երկու ժամից յետոյ՝ ոսկիների շնորհիւ՝ քաղցրացած դէմքը, ականատես ենք եղել նրանց ձևի համար ատած գրագրութեանցը, ուտացրել խմացրել վայելչութիւններ ենք ցոյց տուել նրանց և մի քանի հարիւր մանէթի Ճնաս բռով առելով՝ շատ սիրով ճանապարհ ենք դրել։ Բայց այս մարդը բացառութիւն է, մինչև օրս քննուած մեր աստիճանաւորների հետ գործ գրած վարմունքը մեզ օրինակ է, խեղճերը գլխաւորապէս իւրեանց առաջարկած կաշառքի պատճառաւ նրա խիստ բարկութեանն ենթարկուեցան։

— Կարելի է քիչ են տուել։

— Ո՛չ, եղբա՛յր, ես իմ ձեռքովս եմ համարել իմ պաշտօնակցի տուածը, ոչ մի քննիչ այդքան չի ստացել բայց տես, թէ այդ նոր պարոնն ի՞նչ է արել ամենայն քաղաքավարութեամբ փողը յետ է

տուել, այս պահեցէ՛ք, ասել է, ձեր երեխաներն ինձանից աւելի մեծ կարօտութիւն ունին, ես ինձ համար հաց ունիմ: Երբ որ գործը քննել ու յանցաւոր է գտել, հիմա, ասում է, գնա բեր, թէ ինձ առաջարկած փողերն և թէ տասն այնքան աւելի. ես հիմա համոզուեցայ, որ այն փողերը ոչ թէ քո երեխաների ուտելիքն է, այլ խեղճ ռամկի մերկ ու քաղցած մանուկների բերանի պատառը. այդ փողերն իւրեանց տէրերին պէտք է վերադարձնել:

— Ձեզ քներս լը՛յս, բաւական չէ, որ պաշտօնազուրկ պէտք է լինինք, աղքատութեամբ և մուրացկանութեամբ պիտի մեր օրն անցնենք:

Այսպէս խօսում էին ամէն տեղ երկու երեք աստիճանաւորներ միասին հաւաքուած ժամանակը:

Այս խօսակցութիւններից մէնք հասկացանք, որ Երևանու նահանգումն այժմ աւելի մեծ շփոթ է, քան թէ անցեալ պատերազմի միջոցը, ամէն ոք նոր քննչի և իւր գործողութեանց վերայ էր խորհում ու խօսում:

Այս պարոնը մի հազուագիւտ անձն էր բարձր կոչման տէր, նորա վեհ դէմքը և հեզահամբոյր բնաւորութիւնը արդարամտութիւնը գծագրել էին նորա երեսին, նորա շարժուածքը վեհ էր և ծանրաբարոյ, նորա գործքն անաչառ էր և անկոծնապահ, իսկ պարզ հագուստը և քաղցր վարմունքը մատչելի էին արել նրան ամէն կարգի մարդկանց: Շատ չանեց, գիւղացիք իրրև հայր ձանաչեցին նրան, որ և է անբաւականութիւն ունեցողներն առանց նախապէս յայտնելոյ՝ ներս էին մտնում նորա մօտ. նա ամէնքին նստացնում, խօսեցնում, վշտերն խմանում և յուսադրութեամբ հերթը գալուն հրաւիրել խոստանում: Ոչ ոք երկմիտ էր դէպի նորա խօսքերը, ամէնքն էլ անդրդուելի հաւատ էին ընծայում նորա խոստումնքներին և իւրեանց բողոքի կէսը կատարուած համարում:

Օր էր անցնիլ, որ նոր դէպքեր չլսուէր, նոր փոփոխութիւններ և ծառայողների կանգման կամ գլորման ձայնը վեր չբլնէր: Նոր քննիչը թէպէտ դատաւոր չէր, բայց կարծես թէ անզուսպ աւազակներն էլ պատկառում էին այդ մարդից. ոչ մի գաւառում ասպատակութիւնների ձայն չէր լսուում: Այս, ի հարկէ, շատ բնական էր, աւազակներին խրախուսողներն այժմ դրանով պարապելու միջոց չունէին, իւրեանց գլուխը միայն փրկելու հոգսումն էին. արդարութիւնն ամբողջ նահանգումն իւր թևերը տարածել էր և ո՞ր գողը, կամ ձանապարհ կտրողն էր ցնդել արդարութեան բարկու-

թիւնն իւր վերայ թափել. կաշառելով ազատուիլ անհնար էր, հատուցամբ Սիբիր կամ կախաղան էր լինելու. հնարագէտ աւազակներն էլ իւրեանց գլխի ճարը տեսան, թողնին հեռացան առ ժամանակ ուրիշ նահանգ, կամ արտասահման, նրանք շատ տէրերից լաւն են հասկացած եղել այն խրատը, որ ասում է. «փախիր և թագիր առժամանակ մի, մինչև անցցէ բարկութիւն տեառն»:

Ղազար չէր արևելեան պատերազմի ժամանակ ծառայողների երկիւղը, անտեղի չէր նոցա սարսափը. նոր քննչի ընորհիւ մի քանի աստիճանաւորների աներ այնպէս քանդուեցան, որ փոշին մինչև այսօր էլ բարձրանում է. թէպէտ նա իւր բարեսրտութեամբը ոչ ոքի անվերջ կորստեան պատճառ չդարձաւ, որի համար մեծ իրաւունք ունէր, բայց շատերին ծառայական պաշտօնից հաց աշխատելու միջոցից յաւիտեան զրկեց, բոլոր յափշտակածները ձեռքերիցն առաւ և ժողովրդի վերայ բաժանեց. մանաւանդ այնպիսի փողերը, որոնք մի նշանակեալ գործի համար ստացել էին:

Այդ ծառայողներից ոմանք շատ թշուառ վախճան ունեցան, այլք գործակատարներ մնան, մի քանիսն աւելի արդար վաստակով պարապեցան, իւրեանց տնտեսական դրութիւնը բարւոքելու յեսեւիյն ընկան: Այժմ կենդանիքն իւրեանց ներութիւնը, իսկ մեռածների ժառանգներն իւրեանց կեանքը բարօրութեամբ են անցկացնում:

Եղան, այո՛, և այնպիսիքը, որոնք խոյս տուին արդարադատ քննչի աչքից, մեծամեծ պալատներ ու արդիւնաբեր շինուածքներ կանգնեցին և ճոխութեան մէջ յղփացած՝ այսօր էլ պարծանքով յիշում են իւրեանց քաջարար ճոպռպրիլը, բայց դրանք շատ սակաւ են:

Մենք, ի հարկէ, չենք կարող ամէնքին յիշել կամ ճանաչել, կարծեմ այս դուրս պրծնողներից եղել են և այնպիսիները, որոնք այստեղից ազատուելով, ուրիշ գործում արդարութեան ձեռքն են մատնուել և ժողովրդի աչեան դնով ձեռք բերածները կորցրել ու ամենադառն ապքատութեան մէջ իւրեանց վախճանը տեսել են:

Թէ այսպէս և թէ այնպէս, 50 թուականներին Երևանու նահանգն եկած քննիչը մի դաժանագէտ երկնային աղէ էր ոմանց համար և արագահաս փրկիչ ընդհանուր ժողովրդի համար:

Հետևեալ գլուխները ցոյց կը տան, թէ ո՛րքան ճշմարիտ է մեր ասածն այդ զարմանալի մարդու համար, թէ արդարացրե՞ց նա ժողովրդի հաւատը և թէ հերթի սպասողներն ի՞նչ էին շահում իւրեանց բողոքից:

ԼԸ։

ՀԻՆ ՄԻԿԻՏԱՆ, ՀԻՆ ՄՈՎՐՈՎ

Ճշմարիտ է այն խօսքը, թէ մարդուս գլխաւոր դատաւորն իւր խիղճն է. նրանից արդար և ոչ մի դատաստան անող չի եղել ’ի սկզբանէ անտի և չի էլ լինելու. ի՞նչ գործում ես՝ բարի կամ չար, խիղճը քեզանից անբաժան է, տեսնում է արածներդ և իւր վճիռն ամէնքից յառաջ տալիս է, կամ գանի պակ և կամ յանցաւորի սև կնիք է դնում ճակատիդ։ Ոչ մի վճիռ, կարելի է ասած, այնպէս զգալի չի լինում, ինչպէս մարդուս ներքին դատաւորի. ամէնքին իրան է յայտնի, թէ ինքն ընչո՞ւ այսօր խիստ ուրախ է, կամ ի՞նչ կնճիռներ են պատել նորա երեսին. կուզես փակուիր սենեկումդ, կուզես անկողնի մէջ մտիր, գլուխդ վերմակի տակը կոխիր, եթէ դու քո դատաւորի առաջին սևերես ես, մի սուր խայթոց ծակում է սիրտդ, իսկ եթէ պարզերես՝ մի հրճուանք, մի ուրախութիւն փառաւորում է քեզ։

Աշխարհքս առանց փորձանքի, առանց պատահարի չէ անցել շատ անգամ անմեղն ’ի դուր տեղը պատժուել է և աւելի շատ սարսափելը չարագործը փառքերով ու պակներով և ովսաննայիս ընդունուել։ Մենք թողնենք այդ երկու անհատների արտաքին երեւոյթը և ներսը քննենք, տեսնենք, թէ անմեղն ի՞նչպէս է դիմել դէպի իւր կորուստը և չարագործն ինչպէս իւր փառքին դիմաւորել։ Տե՛ս, ահա աշխարհքը դատապարտում, թ.քում ու գանակոծ է անում մէկին, որի երեսին թէպէտ նշմարւում է փոքր ինչ տրտմութիւն, նրա մարմինը ցաւում է, բայց նրա հոգին խաղաղ, նրա սիրտն անվրդով է. նա արհամարհում, ծիծաղում է մարդկանց յիմարութեան և անմտութեան վերայ, նրա տուած պատասխանները լինում են շատ պարզ, առանց կակազանաց. ընչի՞. — որովհետև ներքին դատաւորը խիղճը վաղուց նրան արդարացրել է։

Մ՚ւս անձնաւորութիւնը յաղթական կամարի տակովն անցնելուս, դաբնիների և ծաղկների փնջերը նրա գլխին թափուելուս անգամ, կարծես, թէ՞ ախտը է, նա իրան պատրուղ ամբոխից կարծես ամաչում է, չի վստահանում իւր վեհ բարձրութեան գլխից նոցա երեսին նայել, նա համարում է, թէ այս ամէն պատիւները աչք շլացնելու և իրեն ծաղրելու համար են, նա բոպէ առ բոպէ

սպասում է, թէ ահա՛, ահա՛ նոյն փառաբանող բազմութիւնը կը գահավիժի իրեն մինչև անարգանաց անդունդը, նրա երեսին է միայն ծիծաղը, իսկ սիրտն արիւն է. ընչի՞, ո՞վ է նրա յանցանքը տեսել աշխարհքը միաձայն վկայում է նրա առաքինութիւնների, քաջութիւնների հայրենասիրութեան և այլ շատ մեծագործութիւնների համար, բոլորը հիացած են նրա վերայ և ի՞նչ է ուրեմն մեր դիւցազնի կասկածի առիթը. — նրա ներքին դատաւորը, այն խայթոցը, որ ամէն քայլափոխում ծակում է նրա սիրտը, այն ցաւը, որ մշտում է նրա հոգին, այն ներքին ձայնը որին մենք այլապէս չենք կարող կոչել եթէ ոչ Աստուծոյ ձայն։

Չի կարելի ասել թէ ամէն մի անպիտանի վերայ այքան փայլուն կերպիւ ներգործում է խղճի ձայնը. առհասարակ անզեղջ չարագործի համար ասում են, թէ նրա խղճմտանքը մեռել է։ Այդ ճշմարիտ չէ, խիղճը միշտ կենդանի է, բայց երկարատև չարագործութիւնը, շարունակ անպիտանութիւնն անօրինի համար սովորական է դարձել բթացել է նրա նուրբ զգացողութիւնը, նրա հոգին անընդունակ է դարձել խղճի ձայնին ենթարկուելու և այդ թշուառ էակը յաւիտեանս կորած է համարել իրեն և արհամարհանօք է նայել ամէն առաքինութիւններին։ Սակայն ես համոզուած եմ, թէ պատահում են մարդուս կեանքի մէջ այնպիսի օրեր, երբ ներքին ձայնն ահաւոր կերպիւ զարհնում է անդարձ մեղաւորի աչքին նրան աւելի սարսափելի կերպիւ պատժելու համար։ Եթէ առօրեայ կեանքի մէջ ևս չպատահի, վերջին րոպէին այդպիսի թշուառ ամէնքի կարեկցութեանն արժանի է։ Ահա նա անյոյս հիւանդ է, նա զգում է, որ ցաւն իւր սուր մագիլները թաղել է իւր մէջ, քայքայել է իրա մարմնի կաղմուածքի ցանցը և մի քանի րոպէից ինքը թողուլ հեռանալու է իւր սիրած աշխարհից։ Հաւատայ այդպիսին մի ուրիշ անդրաշխարհեայ կեանքին կամ ոչ, ինչ կրօն կամ համոզմունք ունեցել է, այդ միևնոյն է, նա բաժանուում է աշխարհքից և այդ բաւական է. նա այդ րոպէին թշուառ է, նա անիծում է իւր բոլոր անցեալը, իւր արած անօրէնութիւնները։

Այդպիսիքը մահի դէմ գնալուց ոչ պակաս երկիւղիւ դիմաւորում են արդարութեան առենին, երբ յանկարծ երևում է միևը, որ իւրեանց գործերը քննելու է, երբ լսում է թէ մի դատաստան պիտի կարուի նրա արածների վրայ։

Այսպիսի թշուառներից մէկը համարուելու էր մեր մովսովը. երբ յանկարծ, ասացինք, եռասվուլը զարհնացրեց նրան և յայտ-

նեց քննչի դալուստը և դատարանի կնքելը: Մի կայծա՞կ էր, որ շեշտեց խեղճ մովսովի սրտումը, թէ մի անպունդ էր, որ իւր ամենայն ահաւորութեամբը բացուեց նորա առաջին և պատրաստ էր նրան կլանելու:

Նեյքին ձայնն իւր ազդեցութիւնն ունեցաւ, նրա բոլոր ամբած անիրաւութիւնները, հարատահարութիւնները, օրինաց և իւր պաշտօնին ընդդէմ գործածները ինչպէս մի հայելու մէջ նրա առաջին պարզ երևեցան, նրա 'ի զուր տեղը դատապարտածները, 'ի թիւս որոց 'ի հարկէ, և մեր Խէչանը աչքի առաջին ցցուեցան և դատապարտում էին իրեն: Ուրբան և կամեցաւ մովսովը լսաբեր եաւսավրլի առաջին անտարբեր ինալ, չկարաց, պարզ աչքի պոչով տեսաւ, որ իւր հլու հնազանդ ծառան նկատեց իւր շփոթմունքն և ծիծաղեց իւր շարժմունքի և երկչոտութեան վերայ:

— Այրի՛, ի՞նչ ես կանդնել այստեղ, ես իսկոյն գալիս եմ, իւր վրդովմունքը կորցնելու համար բարկացաւ մեր աղէն և որպէս և իցէ, հազնուեցաւ միայնակ, նա՝ որ իւր կեանքի մէջ առանց ծառայի չէր հագնուել. հագնուեցաւ և սպրթնած՝ աշնան ծառի տերև զարձած՝ ներկայացաւ մեր քննչին:

Խորագնին աչքերը կարդացին մովսովիս երեսին սոյն իսկ րոպէից նրա յանցաւորութեան ցուցակը, իսկ մովսովի կարկտանքման երկարացրած սառը ձեռքը անսուտ վկայ եղաւ քննչի արդարացի նկատմունքին:

— Պատիւ ունիմ յարգանօք ներկայանալ ձեր մեծապատուութեանը . . . քննիչ Երևանու նահանգի:

Վարչաքաղաքական ձևերիս մէջ մովսովը պարզ գլխի ընկաւ, թէ ի՞նչ է ուզում ասել այս անադորոյն մարդը. նա հասկացաւ այդ բառերի ճիշդ նշանակութիւնը, որ էլ՝ հոգեառ հրեշտակ եմ, կամ ինչպէս մեզանում ասած է՝ քօռ գլողդ:

— Շաա . . . . շաա . . . ուրախ եմ, թոթովեց մեր մովսովը:

— Լաա գիտեմ, անձայն պատասխանն էր, 'ի հարկէ, քննչի:

— Ես քեզանից աւելի լաւ գիտեմ, մտքումն ասաց մինը, որ մի պատի տակից մովսովի և քննչի աչքից անտեսանելի կանգնած՝ դիտում էր: Այդ մարդը նոր չէր այստեղ. սա էլ մովսովի նման քննչի գալատեան հոտն առել էր և նոյն կարծիքին էր, որ այս քննիչն իրանից յառաջ եկածների կարգիցը պիտի լինի, բայց նա

մովսովի նման անհոգ, կամ աւելի լաւն ասենք, կարճատես չէր գըտնուել այդ բանի վերայ մի քանի գիշեր մտածել էր:

Այս պարոնը թէպէտ շատ լաւ գիտէր, որ ինչքան անաչառ քննիչ լինէր, չէր կարող իւր վերայ արատիք բերել չէր գանել մի հաստատ փաստ, որովհետև գրաւոր և ոչ մի կէտ չկայ իւր վերայ, ոչ մի մատենի, մի մատնաչափ թղթի վերայ իւր անունը չէ դրոշմած, իւր գործածները բոլոր բանաւոր մատենների մէջ են եղել բայց և այնպէս ապագայ գգուշութեան համար լաւ համարեց խոհեմութիւնը ձեռքից չթողնել այս բանին հետախուզել:

Երեկ երեկոյեան նա յանկարծ թամքեց իւր ձին և գնաց Նրևան: Թէպէտ շատ մթնով տեղ հասաւ, բայց յաջողեց մի քանի մերձաւորներից և գործին ծանօթներից տեղեկութիւններ հաւաքել նոր քննչի մասին: Դողայ այդ պարոնը, երբ մի քանիսի անկումը լսեց. իսկոյն եզրափակեց, որ շտապելու է սրա յառաջն առնել: Ուրբան հնարաւորութիւն ունէր՝ արեց նա:

Ընքաղաքները երկու անգամ խօսեցել էին, որ հեռատես պարոնը ձի նստաւ ու շտապեց դէպի Զէյվայ: Եկաւ խեղճը, բայց շատ ուշ: Նա մի բան աչքից փախցրել էր. նա աւելորդ էր համարել հարցնել թէ իւր Նրևան գտնուած միջոցին ո՞ր է նոր քննիչը: Գուցէ ոչ ոք չկարողանար հաստատ պատասխան տալ, բայց որում ոչ ովքն մտքից չէր անցնիլ, թէ այդ սարսափելի մարդը մեռթը գետինն առնելուց յետոյ կարող էր փօստայի կառքով ճանապարհ ընկնել դէպի Զէյվայ: Մի խօսքով շատ զղջաց անճանօթ պարոնը, որ ինքն այդ հարցն ուշադրութեան չէ առել:

Դեռ արեգակի ցօղը չէր սփռել Մասեաց կատարից Արարատեան դաշտի վերայ, որ գիշերաշրջիկն եկաւ ձին կապեց և աչքին փօստայի սայլակն ընկաւ, որ դատարանի դռանը կանգնած էր:

— Ա՛փսո՞ս իմ աշխատանք, մենք կորանք, քննիչն ըստեղ ա, անկարծիք գիշերս ա եկել, ընդմիաժին սպասել և լխսադէմին Զէյվայ հասել:

— Ին ի՞նչ փօշտի տրօյկայ[1] ա կանցելարի դռանը կանգնած, հարցրեց անճանօթ պարոնը իւր սպասաւորին:

— Զգիտեմ, կէս սհաթ կըլնի, որ մի աղայ մարդ եկաւ ու մտաւ մովսովի բակը, պատասխանեց սպասաւորը:

---

1 Սայլակ:

Պարոնը դուրս թռաւ և սկրտնեց, երբ հեռուից տեսաւ մեզ ծանօթ գրագիր հերոսին, որ ձրագը ձեռքին դողալով բռնել էր, իսկ մի անծանօթ մարդ, որին 'ի հարկէ կարողացաւ խմանալ, որ քննիչն ինքն է, կնքում էր դատարանի դուռը:

Ուշադիր էին բոլոր գաւառական պաշտօնեաները, բացի մովլովից:

— Սրա ձեռքից պրծնելը շատ դժար ա, կամ անկարելի, գուշակեց խելացի պարոնը, մեր խեղճ մովլովը խաբուց, որ կարծում էր, թէ սա էլ առաջինների պէս փողահաչ տուողներից կըլնի, չէ՛, սա շատ մարդի գլխի վրայ շուռ կը տայ, մենք կորանք: Տե՛ս, ի՞նչ գալուճն[1] ա, քշերհանայ եկել ա, քօմակչուն ու գրագրին վեր կացրել, մովլովին թողել քնած, ափսո՜ս, որ ես ձամփին ուաստ չեկայ[2], թէ չէ սա իմ առաջինը չէր կարող փախչել. հիմի մի մեր մովլովն իմացած կըլնէր ու շատ գործեր հիմի Խէչանի աղջկայ պսակի հրամանագրերի օրն ընկած կը լինէին, բայց հիմի էլ շատ ուշ ա, մենք կորա՛նք:

Ընթերցո՛ղ, կարծեմ հասկացար հիմա մեր պարոնի ո՛վ լինելը. սա միկիտան Սաքօն էր, թէ չէ մովլովի մօտ ո՞վ կար այդպէս նախատեսանողը:

— Ն՛ՀԻ, շատ հարկաւոր ա, ի՞նչ եմ գլխումս մտցրել, թէ մենք կորանք, հազիր ասեմ, որ մովլովն իր մարդկանցովը կորաւ, ինձ ի՞նչ, ես մի միկիտան մարդ եմ, իմ գլխի արածն եմ ծախում. ով էշը կըլնի, ես փալանն եմ, հօրս որդին հօ չի՛. սա չի՛ սրա հօրօխպօր տղէն թող ըլնի, ինձ համար միևա, համա ընչանք էս մրրիկն անց կենալը մեզ բաեղ մնալը խելօքութիւն չի:

Միկիտան Սաքօն էլ չհեռացաւ քննչից, այսինքն՝ ո՛չ թէ մօտ գնաց, նա դիւժ չէր, որ իւր տաքովը գնայ որոգայթն ընկնի, նա պատերի տակովը քննչի աչքից անտեսանելի դիտում էր նրա արածները:

Մէկ մտածեց Սաքօն գնալ ծածուկ մովլովին պարթնացնել, բայց էլ ի՞նչ կ'օգտէր, բանը բանից անցել էր, Սաքօն թողեց ձակատագրին խաղալ մովլովի վիճակի հետ:

Աստուածական էր ժպիտը, որ Սաքօյի երեսին երևեցաւ, երբ

1 Ձարպիկ: 2 Չհանդիպեցայ:

որ նա պատի տակիցը տեսաւ մովլովին թոյլ տաքերով և պատի ծեփ դարձած՝ դէպի քննիչը մօտենալուս:

— Գիտեմ, թէ ի՞նչքան ուրախ ես, մրթմրթաց Սաքօն մովլովի «շատ ուրախ եմ» կակազելով տուած պատասխանին, չէի՞ ուզել, որ ես սհաթս մի թեթև խօլեր դրա փորը մտնէր, ձեռաց կոլըչը էն աշխարհքը ղրկէր. համա, խե՛ղճ մարդ, հէնց իմացի՛ թէ խօլերը քիսեդ մտաւ ու քեզ էլ հալեց[1] քցեց, էլ դու էստուց յետը ձեռներդ լուա՛ մհալի մէջ փորդ հաստացնելուց, հէնց իմանաս, թէ էսօրուանից ես տեմնում եմ քեզ դղդղուած չինովնիկների[2] կարգումը: Ու Սաքօն պատի տակից գաժան կերպիւ ծիծաղեցաւ իր բարերարի, կամ ճիշդը՝ իւր գլխի վերայ:

— Դուք ներեցէ՛ք ինձ, խօսեցաւ քաղաքավարութեամբ քննչը, որ ես ձեզ անժամանակ նեղութիւն տուի և առանց ձեր ներկայութեան ձեր իրաւարանը կնքեցի. մենք ամէնքս պաշտօնական մարդիկ ենք և հաւատարմութեան երդում ենք տուած, իմ պարտքս այդպէս էր պահանջում և հիմա էլ ստիպեալ եմ յայտնել ձեզ, որ այս րոպէից դադարում է առժամանակ ձեր գործունէութիւնը, դուք ազատ էք պաշտօնակատարութիւնից մինչև ձեր գործերն աչքի անցնելն և ապա այնուհետև եթէ արդար դուրս կը գաք, որի մասին կասկած չունիմ, այդ է ամէն մի ազնիւ մարդոյ պարտականութիւնը, այնուհետև, ասացի, դուք ընդունելով իշխանութեան շնորհակալութիւնը, կը շարունակէք ձեր պաշտօնը, ձեր տեղն այժմ ժամանակաւորապէս պաշտօն է վարում ձեր օգնականը՝ նոր գործեր սկսելով իւր համար, իսկ ձեր գործերը միւսն են ինձ մօտ, ես պէտք է քրքրեմ:

— Ինչպէս ձեր կամքն է:

— Կը խնդրեի միայն, որ դուք այսօր իսկ շնորհ անէիք գրնալ Սրեան և սպասել իմ դալստեանը, գործերն այն տեղ պէտք է քննուին, իսկ ձեր ներկայութիւնը ձեր իրաւարանը քննելուս՝ ինձ աւելորդ կը լինեի:

Մովլովը լուռ էր, նա գուցէ որևիցէ բան էլ ուզում էր ասել, բայց լեզուն բերնումը չէր դառնում, և եթէ յանկարծ աչքը դէպի դիմացի պատը չդարձնէր, շատ կարելի է վայր կընկնէր: Նրա աչքերն ընկան իւր մտերմի աչքերին, մի յիմական կէտ եղաւ Սաքօն

1 Բարօք դրութիւնից: 2 Աստիճանաւոր:

մովրովի համար, իւր սիրելու ներկայութիւնը ոգևորեց մովրովին, նա մի րոպէ քաջալերուեց, կարծես մի օգնութիւն էր սպասում Սաքոյիցը, որն արդարև հասաւ։

Աչքով, գլխով նշանացի արեց Սաքոն պատի տակից մովրովին և մատները շփելով հասկացրեց այս րոպէին ինչ ընթացք բռնելը։

Մովրովին իմացաւ Սաքոյի միտքը, նա խորհուրդ էր տալիս նեղս հրաւիրել քննիչին իւր սենեակը, թէյի խնդրել և կաշառք առաջարկել, և այն ոչ թէ ընչին գումար, այլ հազարներ։

— Տունդ քանդուի՛, էլ ձեռիդ ի՞նչ ճար ունիս, էլ ի՞նչ ես կուչ եկել ապաթևել[1] հիւանդ հաւի պէս, տեսնո՞ւմ ես, մի խօսքով պոչդ պոկեց, դէ՛ բայ արա տոպրակի բերանը, էլ ո՞ր օրի համար ես պահում, ոտքով, գլխով հասկացրեց Սաքոն մովրովին, բայց խեղճ մարդ, ես ինչ որ ռավուշկայը[2] տեսնում եմ, քո քարը ծոմն ընկաւ, փողն էլ չի օգնիլ, էդ մարդը նրանցից չի երևում, դա ինձանից շատ լետ եկածն[3] ա։ Բայց կուռս կը կարեմ, գլուխս գրաւ կը տամ, թէ դրա ասածներն ինձ վրայ բանին, մեռնի՛, կորի՛, Սաքոյի կոպքովը չի կարող անց կենալ, սպասի՝ կը տեսնենք, — խնդրեմ դեռ շնորհ բերէք ինձ մօտ թէյ խմենք, մի փոքր հանգստացէք, մինչև իմ ձիս էլ պատրաստ լինի, խոնարհութեամբ հրաւիրեց մովրովը քննչին։

— Թէյի մասին ես շատ շնորհակալ եմ, ես թէյ խմելու սովորութիւն չունիմ, իսկ ձեր սենեակը մտնելն առանց այդ էլ պէտք է լինի, թոյլ տուէք ինձ ներողութիւն խնդրել և ասել որ դուք այլապէս չէք կարող վերադառնալ ձեր սենեակը, եթէ ոչ իմ և այս պարոնների հետ միասին, և թէ դուք ոչինչ չէք կարող վերցնել այն տեղից առանց մեր գիտութեան, ձեր ամէն ինչը՝ բացի մի ձեռք հագուստից, որ նոյնպէս պէտք է ականատես, դուք չպէտք է վերցնէք, ձեր ունեցած փողն էլ կը կնքուի ձեր ներկայութեամբն և կուշարկուի գանձարան պահուելու, մինչև քննութիւնը վերջանալը, իսկ ձեզ ծախսելու համար կը տրուի գանձարանից մի որոշեալ քանակութիւն։

Մովրովին էլ այժ չունեցաւ խօսելու կամ կանգնելու, նա էլ չկարողացաւ զսպել իրան և բոլոր մարմնով դողաց և եթէ եաս-

1 Թևդ կախել։ 2 Գործի հանգամանքները։ 4 Ձարպ կ։

վուլը մօտ չէր վազել և կուռը չէր բռնել, անպատճառ գետին կընկներ։

— Մի՛ շփոթուէք, խնդրեմ, նստեցէ՛ք փոքր ինչ այս նըստարանի վերայ և հանգստացէ՛ք, քաղցրութեամբ խորհուրդ տուեց քննիչը, յուսամ, որ այս պաշտօնական ձևակատարութիւնից ձեզ վշաս չի հասնիլ։

— Ես հիւանդ եմ, պատասխանեց թոյլ ձայնով մովրովը։

— Ուրեմն աւելի շուտով հարկաւոր է ձեզ շտապել Երևան, ուր կարծեմ ինչպէս նահանգական քաղաք, լաւ բժիշկ կը գտնուի։

— Դէ՛, Սաքո՛, էլ մի՛ կանչիլ, փաստափուսէդ[1] հաւաքի, մրթմրթաց Սաքոն ու երեսը լետ դարձրեց դէպի գինետունը։

Ակս ժամից մովրովին երկու եասավուլի ուղեկցութեամբ ձի հեծած՝ գնում էր դէպի Երևան. նա մի վերջի անգամ էլ ուզեցաւ իւր հաւատարմի հետ խօսել. մտեցաւ գինետանը և ի՞նչ տեսաւ. միկիտանխանէին բոլորովին դատարկ և Սաքոն մի երկու Զէյվացուց հետ կանգնած՝ փող է համարում. նրա ձին թամբած՝ դռանը կանգնած էր։

— Ես ի՞նչ բան է, հարցրեց մովրովը Սաքոյին դուրս կանչելով։

— Ոչինչ, աղա՛յ, գլուխ պրծացնելու տարի ա, դուքանիս մէջը ծախեցի, առուտուրս վերջացրի, փողերն առնում եմ, որ գլուխս առնեմ քաշուիմ, ընչանք էս սէլսեն[2] անց կենայ, տեսնենք գլխներս ի՞նչ ա գալիս։

— Միջն ապրանքն ի՞նչ արիր։

— Դարտակեցին, տարան. էժան տուի, որ ոչինչ չթողան, միկիտանխանի հոտը կորուի էս տանիցը. շատ փնաս արի, համա ի՞նչ անենք։

— Դէ՛, արի ինձ հետ գնանք։

— Չէ՛, աղա՛յ, էսօրուանից մենք էնպէս պտի անենք, որ, սաքի իրար ձանաչում չենք, երկուսիս օգուտն էլ էս ա, դու ա՛լ կերթաս՝ ես ձախ։

---

1 Ունեցած չունեցածդ։ 2 Հեզել։

— Հիմի դու աչ գնացիր, ես ձախ, մովըովի քամակիցը գըլուխը շարժելով ասում էր Սաքօն, բայց ոնց որ ես հին միլիտան Սաքօն եմ, բու էլ հին մովըովը, էսպես էլ դիտեմ, որ իմ դործս աչ գնաց, քոնը ձախ։

Լ Թ։

ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ — ԿԱՄՍԱՐԱԿԱՆՆ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

Արևանու իրաւարաններից մէկի դուռն ասեղ քցես, գետինը չի ընկնիլ. բազմութիւն, աղաղակ, բարձրաձայն ծիծաղ, հայհոյանք խառնուել են իրար, ոչինչ բան չի հասկացուում. մի բառ միայն շուտ շուտ լսողի ականջին է դիպչում՝ մե դա լ, մե դա լ։ Այս քան բազմութեան մէջ մի քաղաքացի, մի մաքուր հագնուած մարդ չի երևում. բոլորը խառնիճաղանճ ռամիկներ են, թուրք, հայ, քուրդ միմեանց վերայ ածուած են։ Հեռուումը միայն մի քանի քաղաքացիք կանգնել ծիծաղում են միամիտ ռամկի վերայ։

Երկու ոստիկանական թուրք սուրբն պաշտօնատարք շատ անգամ կամեցան մահակներով հեռացնել ամբոխն իրաւարանի դրանից, որ ներս ու դուրս անելը չարգելուի՝ հնար չեղաւ։ Նստերը բարձրացել էին լուսամուտների վանդակների վերայ և ներս էին նայում։ Երբեմն երբեմն մի քրքջուն, մի ծիծաղ բարձրանում էր պատուհանների կանգնողներից և հեռագրական մագնիսի նման լուր տալիս ներքևի կանգնածներին ներս մնած մարդու գլխի եկածը։ Խակայն բոլորը միասին մի խնդակցական ծիծաղ էին բարձրացնում և էլի լռում, սպասելով իրաւարանից դուրս եկողին։

— Հը՛, ի՞նչ արիր, քանի մի հարցեր տեղում էին այդ մարդու գլխին, մեզալը գոշիդ չի երևում, բեզդադայ չես դառե՛լ։

— Ստուած ոչ գիտայ մեր մովըովի գլուխն ու արևը, իմ գեղին պօլիմպրեալն տեղակ էս հինգ մանէթը տուին ու դուս արին. օղորմի՛ իրանց հօրը, էս էլ որ ջայլին, ի՞նչ պտի անէինք, կէսը կտրելու հօ չէ՛ինք։

Եւ ներսից դուրս եկողը ցոյց էր տալիս իւր ձեռքում ճշմած հինգ մանէթանոց թղթադրամը։

Անմիջապէս ներսից դուրս եկողի քամակից մի գրագիր կանգնում էր իրաւարանի շեմքի վերայ և ձայնելով՝ մի մարդու անուն տալիս։ Բայց կէս ժամ անցնում էր, մինչ կոչուած մարդը ճղելով ամբոխը, յառաջ էր գալիս, ներս մտնում իրաւարանը, որից յետոյ իսկոյն դուռը վրէն փակուում էր։

Նոյն և մի գոչիւնը, նոյն հռհռոցը, նոյն ծիծաղն և հայհոյանքը կրկնուում էր մովըովի ստուերի դէմ։

— . . . Շահազիզեանց — Կամսարակա՛ն — Աշտարակեցի՛, ձայն տուեց ի վերջոյ գրագիրը, Կամսարականն Աշտարակեցի՛, կրկնեց ժողովրդի արձագանքը. Կամսարականն Աշտարակեցի՛, երեքկնեց ու չորեքկնեց ամէն ոք և դեռ մարդ չէր երևում։

— Ախտեղ չէ՞, գոչեց գրագիրը։

— Իստե՛ղ էր, հէնց հիմի էստե՛ղ էր, էս սհաթս ես տեսայ, սխմուել էր խալխի մէջն ու դուս չէր կարում գալ։

— Ձեր տունը չքանդուի՛, ես կարա՞ր էս հէշտաքի[1] միջովն անց կենալ, փորիս ճխիլը դուս կը գայ, մի ձայն լսուեցաւ ամբոխի քամակի կողմից։

Բաւական միջոց անցաւ, որ ոստիկանները փայտի զօրութեամբ մի անցք բաց արին և քրտնքում կորած Շահազիզեանց — Կամսարականին ներս բերին. բանից դուրս եկաւ, որ խեղճ Կամսարականս դիպուածով ընկել է խաժամուժի կուտակի մէջ և կէս ժամ հազիւ կարողացել է դուրս ընկնել բայց օդի մէջ։ Գալոշիկը դրա վերայ մի կուշտ ծիծաղացել են։

— Բարո՛վ, պատասխան տուեց նախագահական բազկաթոռի վրայից քննիչը Կամսարականի խոնարհ ողջունին, ո՞ր տեղից ես, քո անունն ի՞նչ է։

Կամսարական Աշտարակեցին աչք ածեց չուրջ բոլորը և քթի տակին ժպտալով՝ պատասխանեց. — ես Աշտարակցի եմ, իմ անունս է . . . Շահազիզեանց — Կամսարական — աշտարակեցի։

— Այդ ի՞նչ երկար անուն ունիս, հարցրեց քննիչը քաղցրութեամբ։

— Ես իմ հօր հարազատ զաւակն եմ, աղա՛յ, իմ պապերս էլ աղնուական են էլել ու երկու ազգ են ունեցել՝ Շահազիզեանց — Կամսարական, ինքս էլ բնիկ Աշտարակցի եմ. ոչ ուզում եմ հօրս

---

1 Ամբոխ։

երախտիքը մոռանալ, ոչ պապերիս պատիւը վեր քցել ու էլ իմ ծնած տեղս՝ իմ հայրենիքս ուրանալ։

— Շատ լա՛ւ, շատ լա՛ւ. հիմա ասա ինձ, բալի Շահպէ-զեա՛նդ, ասաց քննիչը, ես նկատեցի, որ դու տուն մտնելուս շուրջ նայեցիր և ժպտացիր, ի՞նչէր պատճառը։

— Ա՛ի՛նչ, գլխիդ մատա՛ղ, լաւ մարդկանց երեսը տեսնելուս մարդի բան յաջող կերթայ, սիրտը կուրախանայ, մեր տղին տեսայ ուրախացայ։

Կամաւորականը ցոյց տուեց մովլովին։

— Շատ լա՛ւ, դիցուք քո ասածը լինի, այժմ պատասխանի՛ր ինձ. դու լաւ ճանաչո՞ւմ ես քո ցոյց տուած պարոնին։

Քննիչը նոյնպէս գլխով ցոյց տուեց մովլովին ասածց երեսը նայելու։

— Ո՞նց չեմ ճանաչում, գլխիդ մատա՛ղ, դա մեր տղէն ա, մեր տէրն ա, մեր հէրն ա, մեր տհալի բարերարն ա, քօռ պտի ըլեմ, որ չճանաչեմ։

— Քեզ ինչ հարցնեմ, պէտք է իսկութեամբ պատասխան տաս, թէ չէ լաւ չի լինիլ քեզ համար. տուա խօսողն Աստուծոյ առաջին սեւերես ծնալուց յետոյ՝ օրէնքի առաջին էլ պատժուում է։

— Ա՛ռնի՛մ Աստուծուն էլ, օրէնք դնող Թագաւորին էլ, երկուսի համար էլ մեր գլուխը մատաղ կը տանք. թէ որ նրանց մենք խաբենք, մահի ենք արժան։

— Շատ ընդհակառակ եմ, երևում է, որ դու մինչև հիմայ ներս եկողներից շատ բարձր ես կրթութեամբ և հասկացողութեամբ. այդ շատ ուրախալի է, որ ժողովրդի մէջ քեզ պէս օրինաւոր մարդիկ գտնում են. ես մինչև հիմայ ոչ մէկից չեմ լսել այդ։

— Նա արժանի չեմ այդ քան գովասանքին, գլխիդ մատա՛ղ։

— Ասա ինձ, սիրելի, ձեր մովլովին դուք երբեմն երբեմն պարգևներ, ընծաներ տալիս էիք։

— Էդ մեր պարտքն ա. մովլովը որ կայ, ես պրպ արի, թէ մհալի հէրն ա, որդիքը պարտական են իրանց հօրը պատիւ տալու, իրանց աշխատանքից նրան բաժին հանելու. մեր սող մհալը էդ շատ լաւ հասկանում ա, ու իր պարտքը կատարում, ամէն գեղ իր մասիլեցը[1] մովլովի բաժինը պտի ջոկի ու ղրկի. մի՞թէ մեր աղայ

1 Բերքից։

մովլովը ձեզ չի ասել, իր մհալիցը չնորհակալու թիւն չի արել։ ես ուրիշ մհալ չեմ ասիլ. համան յոյս ունիմ, որ մեր աղէն էլ ժողովրդից շատ բաւական կըլնի. ընէնց չի՞, մովլով աղայ, ասաց կամաւորականը։

Պատասխան չեղաւ։

— Ա՛շխարհս է այս պարոնի ասածները, հարցրեց քննիչը մովլովից խոժոռ դէմքով։

— Այո՛, ընծայ բերում են։

— Իսկ եթէ չտանէք, դարձաւ սիրալիր դէմքով քննիչը դէպի կամաւորականը, ի՞նչ կանուն ձեզ։

— Ձտանե՞նք, ո՞նց թէ չտանենք, չենք տանիլ համա մեր կօրկոթը կկիսուի[1]. դեռ տանելով, տալով, կաշառքի զօռով գեղը պարտքի տակից չենք կարողանում ազատել, ժողովուրդն ընչանք չենքը նեղու թիւնի մէջ ա. թէ որ չտանենք հօ, որդիքս էլ ծախնք՝ չենք ազատուիլ։

Կամաւորականը մովլովների բոլոր հարստահարութիւնները, կաշառակերութիւնները, ձնշումները մի առ մի պատմելուց յետոյ եզրափակեց, որ ժողովուրդը կաշառատութեան համար տրտունջ չունի իւր կառավարիչներից. ի հնուց այսպէս եկել, այսպէս էլ շարունակուում է։ Միայն թէ ինչ բանի համար, որ կաշառ առնում են, վերջացրեց Կամաւորականը, այն գլուխ տանեն, մենք ուրախութեամբ պարտքի տակ կընկնենք և կը տանք. սակայն ցաւն այս է, որ կաշառներ առնում են, փողերն՝ ի զուր գնում են և ոչ մէկի գործը չի վերջանում։

— Ընչի՞ գանգատ չէք անում, ընչի՞ լուռ թեամբ տանում էք, հարցրեց քննիչը։

— Ի՞նչ ես ասում, աղայ ջա՛ն, մենք ի՞նչ կը համարձակինք բերան բանալ դու դեռ չես խմանում, թէ ի՞նչ ասել ա ռահաթ ու մովլով. էդ կը նշանակի՝ հովիւ և ոչխար. մի՞թէ ոչխարը պտի անբան ական ըլնի իր բուրդը խուզողից, կամ թէ չէ, որ

1 կը պատժուինք։

գանգատ անենք, տակիցը կարա՞նք դուս գալ. հիմի էլ լեզուս ընդդուր համար ա բացուել, որ պարզ գիտեմ, թէ մեր աղէն իր մըհալեցը շատ չնորհակալ ա, ու էն մի քանի բաներն էլ, որ իր օրոմէն էլել են, իր մեղը չեն. ոնց որ ասեցի, չէր տալ չէր ինալ. թէ չէ միսս կերել էի՞, որ գլխիցս ձեռ էի վերցնում. թէ կուզես մի երկու բան կը պատմեմ, լսի մեր առաջուան մովրօվների արածներից:

— Ասա՛:

— Ձեմ ուզում յիշել թէ ո՛ր մհալումն էր, հարկաւոր էլ չի իմանալը, էսքանն իմացի, որ էդ մհալի մովրովը շատ հարատկեր մարդ էր, ռահաթի հոգին հանել էր, ունեցածների շատ բաժինը աչկեարայ ձեռքներիցը խլում էր, ընչանք ձուն ի՞նչ ա, համբարել էր տալիս ու երկուսն ինքը վերցնում, մինը սիրունջը թողում. քանդող քանդողի՝ տանող տանողն էր. մի երկու տարումը ցամաք հացը մհալից կորուեց. գողութիւն, աւազակութիւն, մարդասպանութիւն սովորական բաներ էին դառել. գլուխը մի սոխ էր, տանիցդ մի վերսա հեռու գլխիդ տէրը չէիր, ի՞նչ անես, լաւ էլ օրով ցերեկով 100 մարդ տեսաւ, որ քո հարևան գեղացի Թուխքը քո ախպօրն սպանեց, տաւարդ հանդիցը քշեց տարաւ՝ ձէնդ փորդ էիր քցում. ո՞ւմ գնաս, դիւան դատաստան չկայ ու թէ որ Աստուած գլխիդ խոով կացաւ, գարտակ ձեռով գնացիր, խմացի՛, որ վերջին օրդ ա: Վերջը դանակը որ ոսկոսին հասաւ, մհալի գլխաւորներից երեք մարդ խելք խելքի տուին, արինն աչքների տակն առան ու գնացին քաղաք, նահանգիկն խնդիր տուին: Դէ՛, գեղացին ի՞նչ գիտի, թէ օրէնքն ո՞րն ա, կամ օրէնքի գրքի մէջն ի՞նչ ա գրած: Դրանք մի գրագիր են գտնում, լրանց արդէն գրիլ տալիս: Դու մի՛ ասիլ էդ գրագիրը օրէնքի գրքի 10, թէ 15 հատորումը մի երկու տուն ա գտած էլել ու գրել որ նրանցով մովրովին իր արածների համար Սիբիր կարելի ա ղրկել:

Մի օր սաղ մհալը թնդում ա, որ մովրովին նահանգիկը շատ բարկացած հալ-հալբաթ[1] տարել ա: Խեղճ ժողովուրդը ձեռն առ Աստուած բռնած՝ փառք ա տուել մի երկու գիւղումէլ մատաղ են մորթել դրա համար: Երեք չորս օրից մին էլ ի՞նչ տեսնես, մովրովին եկաւ ու թունդ եկաւ, 20, 30 ձիաւոր քամակիցը քցած՝

1 Անչապաղ:

թողն երկինքն ա հանել: Ի հարկէ, էն ա, ասեցին եկել ա, որ ինչ ունի, չունի վերցնի ու քաշուի հեռանայ: Դու ո՛չ մեռնի՛ս, աղայ ջա՛ն, աչքդ բարին տեսնի՛, ինչ որ էս խալխն ա տեսնում: Հրամայում ա՞ մովրովը, որ սաղ մհալն իր կացած գեղը հաւաքուի: Ի հարկէ, որ էն իրեք արզայ[1] տուողներին էլ կանչած կը ընկեր:

— Ծօղդի՛, ձէն ա տալիս մովրովին ու մի սէլ լեռքը կակղ ձիպտոտ դրա դառնը թափում են:

— Դուս տարէք իմ կառավաթը[2], հրամայում ա մովրովին ու իր բակի դռան մէյդանումն[3] իր կառավաթը դնել ա տալիս, էն օրէնքի 15 հատորը դնում գլխատակն ու սաղ խալխի միջին թեք ընկնում ձգում:

— Դէ՛, հիմի վեր կոխեցէք էն իրեք մարդին, դռռում ա մովրովին, ու իր պարկած տեղիցն էն խեղճ խնդիր տուողներին էնքան ծեծել տալիս, որ դու էլ ասես՝ հերիք ա:

— Ձոքէ չոք մօտ եկէք, պատուիրում ա նա էդ ծեծուածներին, դպա ինձ: Ինքն ըսկի գլուխը տեղիցը չի վերցնում:

— Ը՛յ, ձեր արևկեն[4] ու քօմակը[5] գլխատակիս ա, եկէք մին էլ ալաչանք արէք, կարելի ա, սա կը լսի ու ձեզ կօգնի:

— Տեսնո՞ւմ էք, որ ձեր պաշտպանը չկարողացաւ ձեզ պէտք դալ, ծիծաղում ա բարձր բարձր մովրովը, խեղճը պիտի ծալուած՝ գլխատակիցս չի կարողանում դուս գալ: Ծօ՛, յիմարնեք, ասում ա նա, դուք կարծում էիք, թէ էս թզլթի կտրները ձեր հաւարին պտի հասնի՞ն, դուք որ սրա աչքն խմացել էք, բաս ես չգիտէի՞, բաս սրա յօդուածների դէմը ես պատրաստած բան չունէի՞. ո՞ւմ ի՞նչ արիք. ձեր մաալ տարաք՝ ձեր աչքերը հանեցիք. ամէն մի յօդուածի դիմացը 1000 մանէթ եմ պատ շարել, էդ փողերը ձեր ջանից պտի հանեմ, իմ քիսիցը հօ՛ տալու չեմ:

Քննիչը ծիծաղեցաւ:

— Հա՛, ապայ ջա՛ն, հա՛, տես ի՞նչ ա անում. — հրամայում եմ ձեզ, ասում ա, որ էդ իրեք մարդը ամէն մինդ ձեր քիսովքն էդ պատերը շարէք. գնացէք 1000 կան մանէթ բերէք էս գրքի վրէն գրէք, եթէ չէք ուզում, որ ձեր կաշիքը դաբաղանում[6] փեթին:

— Ի՞նչ պտի անէին, ապայ ջա՛ն, համ տուին, համ էլ շինք-

1 Խնդիր: 2 Մահճակալ: 3 Հրապարակ: 4 Պաշտպան: 5 Օգնական: 6 Խաղախորպանոցումը, կաշու գործարանումը:

ները երկարեց. լաւ որ երէքն էլ ունևոր մարդիկ էին, թէ չէ խեղճերը հիմի ոտքով ընտանիքով Սիբերուն կը ընկնէին:

— Իսկ ձեր մովըովն այդպիսի բաներ արել է, հարցրեց քննիչը:

— Ջէ աղայ, մեր մովըովն էդքան չի արել բայց դէ, ո՞նց կըլներ, որ մեզը ծախողը մատը չլպստեր, կռուի տարի էր, օգուտ քաղելու տարի էր, պտի շահուեր, էսպէս տարի հօ միշտ չի ըլնում:

Վհնիչն երկրորդ խոժոռ հայեացքը ձգեց մովըովի վերայ և այդքանը բաւական եղաւ խեղճի ոտք ու ձեռքը դողացնելու:

— Ասացիր, որ դու ես . . . Շահալիեան — կամաւարականն-Աշտարակեցին, խօսեցաւ քննիչը, քո անունն այս մատեանի մէջ նշանակած է. ուրեմն դու տուել ես փող, որ պատերազմական մեդալ ստանաս, այնպէս չէ՞:

— Հրամեցիք, պլխիդ մեռնի՛մ:

— Պատերազմ դնացել ես:

— Ո՛չ:

— Պատերազմական գործերումը խառնուել ես:

— Ո՛չ:

— Ուրեմն ի՞նչ իրաւամբ դու կարծում էիր, որ մեդալ կըստանաս:

— Մեր մովըովի հրամանը դուս եկաւ, որ մի պօլեմպրեալ բերողը մեդալ կառնի. ես էլ հատատացի ու տուի:

— Հրամանաթուղթ կայ դրա մասին:

— Չը՛, աղայ, ծիծաղեց Կամաւարականը, ամէն բանի համար որ հրաման պրուի, ո՞ր տեղ կերթայ, էլ թուղթ ու մրաքաա[1] չի հերիք անել. դրա համար եասաւուլներ կան, մինիստներ կան, տանուտէրներ կան, նրանց բերնով եկած խաբարին մի՞թէ մենք չենք հաւատում, բաս էլ եասաւուլն ընչի՞ ա պէտք, որ նա իր աչքի կամքն էլ չպտի կարողանայ բերանացի յայտնել ու գաշնուտակը քցելով կատարել տալ:

— Շատ կարելի է այդ մարդիկը սուտ իբրեանց օգտի համար մովըովի անունով պահանջներ են անում և մովըովը բոլորովին տեղեկութիւն չունի:

— Չէ՛, պլխիդ մեռնի՛մ, տեղ հասած օրը մենք իմանում ենք:

— Ուրեմն ա՛ռ էս փողն և դնա՛:

1 Թանաք:

Վհնիչը վերցրեց սեղանի վերայ ծալքով դարսած հինգ մանէթանոցներից մի հատ և տուեց Շահալիեանցին:

— Էս ի՞նչ փող ա, որ տուիր ինձ, ազայ չան, հարցրեց Կամաւարականը:

— Այդ քո մեդալի համար տուած փողն է, օրէնքի զօրութեամբ մեդալ տանում են միայն պատերազմին մասնակցողներն, իսկ դու ասացիր որ ինքդ չես մասնակցել:

Մեր . . . Շահալիեանց — Կամաւարականը նօթերը կիսեց ու կանդնած տեղիցը թղթադրամը շպրտեց սեղանի վերայ:

— Էդ ի՞նչ կը նշանակի, զարմացմամբ հարցրեց քննիչը:

— Ես իմ մեդալը կուզե՛մ:

— Գնդ ասացի, որ մեդալ անհնարին է քեզ տանալ, բանականացիր այդքանով և դուրս դնա՛:

— Բաս կամ ոչինչ մի տալ, ես ձեղանից զօռով չեմ ուզում, էդ էլ թող շատերի հետ դնայ, կամ իմ փողս տուէ՛ք:

— Մենք էլ քո փողն ենք տալիս:

— Ես իմ պօլեմպրեալը կուզե՛մ պօլեմպրեա՛լը, 184 . . . թուի պօլեմպրեա՛լը, ես վրէն մի տեղ էլ դանակի ծէրով պատիկ նշան եմ դրել, էն որ չըլնի՝ ես ոչի՛նչ չեմ ուզում, էդ էլ բաշխել եմ մեր աղին:

Կամաւարականը մատով մովըովին ցոյց տուեց:

— Խոցատրի՛ր խօսքդ, ես չեմ հասկանում, ասաց քննիչը:

— Էս ահմէթ, պլխիդ մեռնի՛մ: Ես Աշտարակու մէջ, էկած ժես, որ յետ ընկած, հասարակ մարդկանցից եմ. տանէք իմ աղնըւութիւնի համար էս տեղ խօսք բաց անիլը տեղը չի, բայց ռահմի մէջ էլ, փառք Աստծու, մարդ եմ՝ ինչ որ մարդին կը սազի. ես էլ ինձ համար անուն ունիմ, պատիւ ունիմ, հայ ունիմ, տուն ու տեղ ունիմ. թէ որ մի երկօրեայ ցած ըլիմ, տասիցն էլ բարձր եմ. ի՞նչ երկարացնեմ, Աշտարակու իշխաններից մինն եմ: Էս արևալոլին, էս թևերիցս կախ կախ էլած ծլանքներին[1] մի խառնիլ, կամ կարկատած չուխիս. ռահմի պտի իր ռահմութիւնի գնդրայ[2] վեր ու նիստ անի. մենք քաղքցոնց պէս չենք կարող փողներս քաղցած պահել, ամենքով տաք կերակրի համ չտեսնել, բաղարումը մի երկու կապիկի հացով ու թարաքամայ թուրքի ե-

1 Ցնցոտիներին: 2 Համաձայն:

բեսը քաշած ազուէսի պանդով օրներս անցկացնել ու զլպլտուիլ մահուաններով, չանաուզներով ու բուխարայ գոռակներով: Մենք մարդին շորով չենք պատիւ տալիս, կամ ճանանչում. ուզենանք էլ լաւ շորեր հագնիլ, չենք կարող. հիմի, ասենք, ես աղայ մարդ եմ, բայց իմ տան ծառէն եմ. ինձ շատ ամօթ ա, որ իստակ հագնուեմ, ձեռներս ստակով լուանամ ու իմ տան, իմ հանդի, իմ յիքու գործը թողամ երեսի վրայ ընկած. Աստուած մեզ էդ հայրը չտայ, էդ կը սազի քաղքցուն որ ընչանք իրիկուն ձեռները ղուռմաշների [1], ապրշմեղէնների [2] ու գուլաբաթինների [3] մէջ ա խառնուում. պապական մենք հողագործութիւնն ենք սեսել, հողագործութիւնը մեզ, մերը հողն ա, ես նրա բարաքաթին [4] մեռնե՛մ:

— Շատ լաւ բաներ ես խօսում, սիրելի՛ս, ընդհատեց քննիչը, բայց գործից հեռանում ես:

Ձէ, գլխիդ մատա՛ղ, մի քիչ էլ կնդրեմ, համբերես: Ասեցի, որ ես մեր գեղի առաջաւոր իշխաններից մինն եմ, ղօնաղասիրութիւն [5] ամէն հայ-քրիստոնեի պարտքն ա, էդ ամէնքս էլ ունինք. մեր աղէքանցը, մեր մհալը կառավարողներին, ղուլղուղի [6] մարդկանցը պատիւ տալը համ պարտք ա, համ հրամանակատարութիւն. ի հարկէ, էդպէս մեծաւորին մեր գեղը գալուց՝ մենք չենք կարող հասարակ աներում ցած բերել. ասում ա՝ հարկս հարկաւորաց՝ պատիւս արժանաւորաց՝, ում որ լաւ աներ ունի, իր աղին ընդունում ա: Աշտարակու մէջը, թէ մի երկու երեք լաւ աներ կան, մինն էլ իմ աներն ա. (ասենք, փառք իմ Աստծուն, սաղ մհալի մէջը մեր գեղն պէս լաւ աներ ոչ մի տեղ չկայ:) Էլ կարծիք չկայ, ադայ ջա՛ն, որ մենճամենճ մարդիկն իմ շեմքովը շատ ներս ու դուրս արած կըլինին. մեր ադայ-մովլովն էլ, ի հարկէ, իրան էլ լաւ յայտնի ա, որ ըսկի գործ էլ չունենայ, քէֆի համար էլա տարինը մի քանի անգամ Աշտարակ ա գալիս ու շաբաթներով կենում. ի՞նչ ասիլ կուզի, որ շատ բաժինն իմ տանն ա վեր գալիս, իմ առաը ջուրն ա անոշ անում, իրան հաչալ ըլնի՛:

— Էլ մնա՞ց:

— Էն ա հա՛, գլխիդ մատա՛ղ, շատին դիմացել ես, քէնն էլ դիմացի՛: Մին էլ սաղ մհալի մէջը հռչակուում ա, թէ ով որ մի

1 Մեսաքսեղէնների: 2 Վերի խօսքն է: 3 Ոսկեթելների 4 Լիութիւն: 5 Հիւրասիրութիւն: 6 Ծառայութեան միջի:

պօլիմպրեալ բերի, մովլովին տայ, անումը գրիլ տայ, նա մեդալ կստանայ: Տունը մի մարդ կար՝ պօլիմպրեալը ճարեց, ձէյվայ գեղը վազեց, երկուսը կայրին՝ գնացին. պատրաստուիլուն համար մի քանի մանէթ էլ աւել էրին վերցնում ու որը ոտով, որը ձիով, որն էլ երկու մարդ մի ձիու կամ մի իշի վրայ նստած՝ իրանց քցում ձէյվայ: Էս բանի համար ես ամէնքիցն աւելի ուրախացայ, աղէն (գըլխով մովլովին ցոյց տուեց) ինձ խիստ լաւ ա ճանանչում, տես ու ճանանչ ենք, միտք արի ու առանց փողի դուս ընկայ խէլի [1] տեղ գնացի. ախա՛ր ես ո՞ւմից եմ պակաս, իմ գեաղէն [2], իմ դռան ծառէն մեդալ ստանայ, ծեծից ազատուի, աշխարհքն աղնուական դառնայ ու ես՝ Շահազիզեանց — Կամսարականս ճնամ ղուրկ: Գընացի՛, գնացի, շատ ու քիչն Աստուած գիտայ, մին էլ կանգնեցի ու միտք արի. ա՛յ տղայ, ես անփող ո՞ւր եմ գնում, բան ա, բալքի [3] մովլովը պատիւս չպահեց, անփող ինձ չգրեց, աշխարհս վազուանը չի, մի քիչ սառնացել ա, հաղիր պատրաստ գնամ. մի պօլիմպրեալ մարդի երեսը չվեր բերեմ, տանեմ տամ, թէ վերցրեց, մի աչքս լիս, թէ չը վերցրեց, երկու աչքս լիս, իմ փողն իմ ջիբին կը ճնայ: Նոր յետ եմ դառել, աղայ ջա՛ն, կիսաճամփիցը, տուն եկել, մի պօլիմպրեալ ծոցս դրել ու գնացել:

Քննիչը, թուի թէ, շատ ձանձրացել էր, գլուխը կախել՝ ուշադրութիւն չէր անում:

Կամսարականն այս նկատելով՝ ծնօտը բռնեց և աղերսալից խնդրեց.

— Գլխիդ մեռնի՛մ, աղայ ջա՛ն, տեսնում եմ, որ բեզարեցիր [4], գլուխդ տարայ, համա կը խնդրեմ, որ մի քիչ էլ լսես, էս ա պրծնում եմ:

— Շատ լա՛ւ, շատ լա՛ւ, ժպտաց քննիչը և ուշադրութիւնը սրեց:

— Դեռ ձիուցը նոր էի վեր եկել, շարունակեց Կամսարականը, որ մովլովի Միկիտանն ինձ ասեց, թէ քո պօլիմպրեալը պէտքը չէ, պահ 184 . . . Թուականինը տանիս ու մի քանի մանէթ էլ մովլովի ձեռ ու ոտի համար խարջես, որ խնդիրդ կատարուի: Ինձ մնաց, ասեց Միկիտանը, երևանից բերած էն թուի ոսկիք կան, թէ կուզես՝ իր գլխովը, կամ թէ չէ քո խաթեր մի բան էլ պակասով քեզ ծախեմ, տար տուր մովլովին: Ես լսիլ էլ չուզեցի, մովլովն իմ բարեկամն ա, իմ խաթրը կը պահի, ասեցի ու դուզ քշեցի, ա-

1 Բաւականին: 2 Ծառայ. 3 Գուցէ: 4 Ձանձրացար:

դես օթախը ներս մտայ։ Ի՞նչ ես ասում, գլխիդ մեռնե՛մ, քո դուշմանի գլուխը չգայ, ինչ որ իմ գլուխն եկաւ, ոնց որ ես ասվուղ—սաղկալ[1], իմ դք ու խայտառակ էլայ։

Կամաբականը պատմեց իւր և մովսովի մէջ պատահած անցքը։

— Դեռ ես չհամարձակուեցի, հինգ մանէթանոցը կամենց ստոլիդ վըայ քցեցի, բայց իմ խեղճ պօլիմպրեալը, որի պապղոցն աչքեր էր ծակում, ընչանք դուան շիմքը մին փռռայ[2]։

— Չիմի ես դրա համար եմ ասում, աղայ ջա՛ն, կամ տալես էք, պօլիմպրեալս տուէք, կամ մեդալս, կամ թէ չէ ես ոչինչ չեմ ուզում։ Գլխիդ մեռնե՛մ, թէ իմ խօսքերումը սուտ ըլի, աչքս հանի՛, թէ չես աւատում, մեր մովսով ադին իրան հարցրու։

— Կամաբակա՛ն, դու էլ էդպէ՞ս, հոգոց հանելով ասաց մովսովը հայերէն։

— Աղայ ջա՛ն, դու էլ էդպէ՞ս, պատասխանեց նոյնպէս հառաչելով Կամաբականը, մի՞թէ ա, որ ասեցի, թէ, աղայ ջա՛ն, քո Շահազիզեանց — Կամաբականն եմ, ախա՛ր էդ խօսքն ես ինձանից հօ չէի՛ ասում, ընչանք քեզանից իրաւունք չունենայի ո՞նց կըվատահանայի. միթէ ա, որ միշտ ինձ կանչում էիր՝ իմ Կամաբական, էլ էն մարդը չէի՞, էլ քո ոտն Աշտարակ չպտի ընկնէ՞ր, երես երեսի չէինք առնի՞։

— Ուղի՞ղ են այս պարոնի պատմածները, դարձաւ քննիչը դէպի մովսովը։

Մովսովը սևացել էր։

— Ա՛յո՛, հազիւ լսելի եղաւ մովսովի բերանից։

— Տնօրինել, որ դրսի ամբոխը չջրուի՛, ամէնքն յետ բերեն իւրեանց ստացած փողերն և սպասեն, հրամայեց քննիչը. իսկ դուք, պարոն դաւառակապե՛տ, բարեհաճեցէք այս բոլոր հինգ մանէթանոցները փոխել 181 . . . թուի պօլիմպերեալի վերայ, և եթէ չկան այդպիսիները, այն ժամանակուան գնացական գնովը թղթադրամով վճարեցէք. իսկ այս պատուական անձի ոսկին գտնել անպատճառ և նոյնը վերադարձնել, երևի պահած կունենաք։

— Վո՞ւ արդարադատութիւնի համար, գլխիդ մեռնե՛մ, ես ոչ մի կապկի չեմ ուզում, խնդրեմ, ինձ հասնելիք փողը ղրկես բերդը էն անմեղ դուսաղներին, որոնք 'ի զուր տեղը տարիներով արևի

1 Նախատական։ 2 Թուաւ։

երես չեն տեսնում ու չոր հացից սավահի ոչինչ չեն ուտում, մէջ մտաւ Շահազիզեանց — Կամաբականն — Աշտարակեցի. ըստուց չեաը մեռնիմ էլ, դարդ չունիմ, Աստուած ինձ էն օրն արժանացրեց, որ իմ աչքերս քեզ պէս մի ադալաթ[3] քննիչ տեսան։

— Քո ինպրուածքդ կը կատարուի, պատասխանեց սիրով քննիչը՝ Կամաբականի ձեռքը թոթուելով. այս րոպէից ապետում եմ քեզ, որ բանտերն էլ շուտով արդարութեան ձայնը կը լսեն, այն տեղերն էլ չեն մնալ առանց իմ այցելութեան։

Ամէն մարդ իւր փողը թղթադրամով ոսկւոյ կուրսի հաշուովն ստացաւ և շնորհակալութիւն արեց քննչին։

— Մխամաձնում եմ ձեզ, խօսեցաւ քննիչն ի լուր ամենեցուն, որ ձեր տուած բոլոր պարգևներն ու կաշառքները, ինչքան հնարաւորութիւն կայ, կը պահանջուին ձեր մովսիսներից, և որովհետև շատ մասն յայտնի չէ, թէ որքա՛ն է վճարուած և ո՛ւմից, այդ ամենը կերթան յօգուտ բանտարկեալների և պատերազմի մէջ վիրաւորուած զինուորների, և այդ կը տրուի իբրև ժողովրդից նուէր. համաձայն է՞ք, թէ ոչ։

— Համաձայն ե՛նք, դլխիդ մտաղ, ձայն տուեց ամբոխը։

Շատ սակաւ մովսիսներ արդարացան, քննիչը, համարեա, պատժեց բոլորին, զրկելով ոմանց ծառայութիւնից, այլոց մի քանի տարի պաշտօնապուրկ անելով և շատ սակաւներին բոլորովին անբաղդացնելով։

Այս մովսովը վերջիններիս կարգն անցաւ։

Լ.

Ա Ն Շ Ն Ո Ր Հ Ք Ա Խ Ա Ջ Ա Կ Ն Ե Ր

Սմբատը շատ սառնութեամբ լսեց միկիտան Սաքոյի շողքորթական ցաւակից խօսքերը, երբ մի օր ինքն եկաւ Խէչանին տեսութիւն և խնդրեաւ որ իրը թէ մի նոր քննիչ էին ուղարկել Երևանից, որը անմիջապէս հրամայեց Խէչանին բերդը տանել։

1 Սրդարադատ։

— Հա՞, տարա՞ն, սաքի ուզում եմ ասել ղրկեցիք, բաս սուտ չէին խեղճ հալիւորի մտածածները, շատ լա՛ւ, տարան՝ տարան, մենք էլ ըստուց յետը տանողն ու տանել տուողն գուռը կը ճանաչենք:

Այս խօսքերը պատասխանելով միկիտանին, Սմբատը ձիու գլուխը Թեքեց դէպի Աշտարակ:

— Սմբատ ջա՛ն, ա՛յ Սմբատ, ախար մի քիչ կա՛ց, տես ի՞նչ եմ ասում, ախար դու հէնց գիտես, թէ մենք մեղաւոր ե՞նք, ախար ես Խէչանի բարեկամն եմ, թէ որ իմ թափած արտասուքը տեսնէիր, իմ հոգիլ ալանչաք անելը լսէիր, մովսովն գտակը հանել քննչին խնդրելուն ականատես ըլնէիր, էդպէս անհատ չէիր ըլնիլ: Այսպիսի խօսքեր միայն քամու բերելովը Սմբատի ականջին էին պիպչում, բայց նա ուշք չդարձրեց, մի րոպէի մէջ Սաքոյի աչքին անհետացաւ:

— Սատանի հէրն անիծած, մտածեց Սաքօն, մարդի չարիը[1] որ Թարսուի[2], 1000 տարի գլուխ տրաքացլո՛ւ, օգուտ չունի. ասենք դրանք մեզ ոչինչ չեն կարող անել, 10 տարի էլ Խէչանն անտէր բերդումը փթթելու ըլնի, ոչ ով հարցնող չի ըլնիլ. էն նոր եկած քննիչը հօ՝ չպիտի գնալ բանտի բորբոնած հոտերի միջին քաշ գալ, որ իմանալ, թէ մի Աշտարակցի Խէչան ա էլել ու գուբ տեղն էնտեղ ճռնչում ա: Էդ կողմից մեզ փորձանք չի գալ. բայց մենք մեր մաքի դրածիցը կը ղրկունք. ես սաքի ուզեցայ, որ ախուր երես շանց տամ, գարատա[3] երևամ Սմբատի մօտ — Խէչանին տանելու համար, վերջը մի քանի սուտ յոյսեր տամ, որ սաքի թէ մովսովը կարող ա մի քանի մարդի տեսնելով, կամ էն քննչի տակը փող դնելով ազատել Խէչանին, բայց էս կոպէտ լակոտը իմ սարքած փանդերիս[4] հիմքն արեգակը շուռ տուեց. հիմի պտի գնայ Աշտարակ, տանը խաբար տայ ու մենք էլ ձեռներս կը լուանանք Խէչանի չալ[5] մանէթների սանադներիցը[6]: Էս չի՛ ըլնիլ, սրան պտի էս մաքի վրայ տեղ չհասցնել, պտի ճամփէն կտրել, մեր սուտը ղրթի տակ ուտացնել ու հետն երթալ Աշտարակ:

Թէ որ յաջողուեց՝ շատ լաւ, թէ չէ կտրուեց ոչ, պտի կեանք ու արեւը Արդար Դաւթի քեալամէքումը մեղ տալ ու գնալ Խէչանի օջաղումը շէն ու բոլ ձգուել: Շատ լաւ վախտա ա, հազիր Փէրոի

1 Անիւը: 2 Շրջուի: 3 վշտալի: 4 Հնարք: 5 Խայտաբղէտ: 6 Մուրհակ:

գեղացի Նաբէն իր հրնկերներովն էտուղ են, էլ ժամանակ չպտի կորցնել:

— Տէր Աստուած, ես ի՞նչ անեմ, ես ո՞նց հասկացնեմ Հեղնարին էս տխուր խաբարը, առանց էն էլ հազը խեղդում ա, օրը մի չարէք արին ա վեր ածում սրտիցը, հիմի որ էս էլ լսի, ձեռաց կը մեռնի, Հերիքնազն էլ գժար ա ասելը, վա՛յ թէ մէրը բան հասկանայ ու էն վախտը պրծաւ, համ ինքը կը մեռնի, համ Հեղնարին կսպանի: Է՛հ, գլուխս տրաքում ա, ըսկի չեմ գիտում, ո՞ր ջուրն ընկնեմ, ձար չկայ, էլի պտի Հերիքնազի հետ խօսամ մի հնարքով:

Այսպէս մտածելով դառնում էր Սմբատը դէպի Աշտարակ և շարունակում.

— Ը՛ լա, յիմա՛ր եմ, յիմա՛ր, ո՞նց շուտ եմ խաբուում, քօմմա[1] էն սատանայ Սաքոյի արածն ա, խեղճ հալիւորն ըսկի մտ չէր թողում, ախար ես ընչի՞ պտի էսպէս քօռանալուն ըլլէի, ես ի՞նչպէս տուն թողայի, նաչար մարդի հոգի վկայել ա. ես հիմի հասկանում եմ, որ էն դատ քամակի դևի ձէնն էլ Սաքոյինն էր, նա իմ քամակիցը մտել ա բանտը, բանքի ծակովն անկաջ դրել, մեր խօսեցածները լսել, վախեցել ու գնացել էն օյինը սարքել, գրագրին ու եասավուլներին տուն ղրկել. ախա՛ր ես ընչի՞ չտուի առաջ գրագրին, յետոյ եասավուլներին, վերջն էլ էդ բելբարին սատկացրի, ընչի՞ պտի թողայի ձեռներս չարբանդեն[2]: Էն հօ անց կացաւ, էսօ՞ր ընչէ չսատկացրի, հօ կեղծաւորու թիւնը երեսին երևում էր, ուզում էր գլուխս եղել, որ սաքի Խէչանի համար սիրտը շատ ցաւում ա, կամ թէ չէ մովսովը շատ դարդոտ ա էդ մասին: Ոչի՛նչ, միկիտան Սաքօ՛, սպասի, ես խեղճ հիւանդի գարուը քաշեմ, Հեղնարին հանգստացնեմ, գնամ խաբեմ, որ իր հէրը լաւ ա, սրանով սիրան ուրախացնեմ, բալքի հազը մի քիչ թեթևանայ ու յետոյ հալբաթ[3] մի տեղ իմ ձեռս կընկնիս: Դեռ կաց, ես գնամ Երևան, ամէն բանը տեղն ու տեղն իմանամ, քո չանորդութիւնը հասկանամ, յետոյ կը տեսնենք:

— Ա՛յ տղայ, ասած ա՝ վա՛յ հախին, վա՛յ նհախին, կրկին մտածմունքը փոխեց Սմբատը, ա՛ս հէնց էն մարդին կրակն եմ ըլնում, էրում, բալքի ղրթի նա մեղք չունի, ո՞ւր եմ էսօրուանից էն մարդի շուաքի քամակիցը թռնթռում[4], դեռ մի քանի օր

1 Բոլոր: 2 կապեն: 3 Գուցէ թէ: 4 Տրտնջալ:

սպասենք, հիւանդին հանգստացնենք, երևան գնանք, բանի տակն իմանանք յետոյ, դեռ ջուրը չհասած ոտներս ընչի՞ւնք հանում...

Ահա այսպիսի շփոթ մտածմանց մէջ ձէյվլեցը հեռանալուց յետոյ Սմբատը թոյլ թոզից իւր ձիու սանձը և գնում էր հանդարտ դէպի Աշտարակ։ Հանդարտ էր գնում, որովհետև կարիք չըկար շտապելու, դրանով կարող էր Խէչանի ընտանեաց կասկածը զարթնել. երբէք այդպէս շուտ չէր դարձել նա ձէյվլից։

— Սմբատ ջա՛ն, ախա՛ր էս ի՞նչ արիր դու։

Սմբատն իւր մտքի հետ ընկած, չէր լսել ձիու ոտնաձայնը, որ իրեն հետևում էր, նա շփոթմամբ գլուխը յետ դարձրեց և տեսաւ իրեն մօտեցող Սաքոյին։

— Ձի՞ս ամանչում, հերիք չի՞ ինչքան սիրտ ես ծակել, նահատել սկսաւ Սմբատը միկիտանին, ճամփէս էլ չես թողում հանգիստ գնամ, այ անաստուա՛ծ, անաստուածի զաւա՛կ, ի՞նչ ես ուզում էն խեղճ հալիւորի տանիցը, ձեռ չես վերցնում, քանդեցիր ու քարատակեցիր, ունեցած կարողութիւնի կէսը դուս ծծեցիր, լափեցիր, ու երբ որ տեսար, թէ ձեր խաբեբայութիւնները կամաց կամաց դուս կը գայ, սուտը պոչ ունի, մի օր կը խայտառակուիք, համբերութիւններս կը հատնի, աշխարհքի միջին թուք կանենք քեզ ու քո մովլովին, վեր կալաք էն արդար մարդին, էն անմեղ ծերին հուրն յաւիտենական կորցրիք։

— Սմբատ ջա՛ն, լաւ տղայ ես, սկսաւ Սաքօն, բայց ջահել ես, քո ջահելութիւնը որ չըլնէր, շատ կարելի ա մեր մէջը վաղուց անբաւականութիւն դուս եկած կըլնէր. ախար ես զարմանում եմ, դու ո՞նց չի հասկացար ինձ, ընչանք օրս ծանր ու թեթև չարիր։ Ես բան չեմ ասում, մարդ ենք, սխալական ենք, ես իմ գլուխն ազատացնում չեմ, ես էլ պակասութիւններ կունենամ, դօսա ու գուշման[1] կունենամ, ինչին լաւութիւն, մկկելին ինձաս կըլնեմ տուած, բայց դու ո՞նց չհասկացար, որ Խէչանի տանն ու տեղին, նրա աղջկանը, ազգ ու ընտանուն, նրա մլքերին ես աչքիս լոի պէս եմ մեկ տալիս, ո՛ւմ արի, ո՛ւմ չարի Խէչանին ի՞նչ արի։ Ես մի բան եմ միաք անում, կարելի ա, դու լսել կըլնես, որ ես քո նշանածին ուզել եմ՝ նախանձում ես. համա դու քո Աստուածը, ասա՛, մինակ ե՞ս եմ էլել ուզողը. ասենք, դու երեխութիւնից գլուխդ կապած

1 Բարեկամ և թշնամի։

ես ունեցել Հեղնարի հետ, բաշիբոզութիւն էք, համա, ախպէր, դէ մարդիս շապկին իր ջանին մօտիկ ա, ասած ա՝ յառաջ մերը՝ յետոյ մերոնցը, ոչ ով իր աչքը քօռ չի ուզե, միաք արի, թէ բալքի Խէչանն իր միաքը փոխած ըլնի, օրինաւոր նշան չէ էլել մէջը, 10, 20 տարի յառաջ մի գինու քէֆ ա անց կացել, դրա համար ես էլ վեր կալայ մարդ ղրկեցի. դէ, մի ծառի պտղի 1000 մարդ քար ա քցում, ո՛ւմ զամաթն[1] ա՝ նա ա տանում. Աստուած քեզ արժանի անի, Հեղնարը քո ճակատի գրուածն էր՝ դու ես տանում։ Ի հարկէ, լաւ կըլներ, որ էն փորձանքն եկած չըլներ, չար մարդկանց բզբզելով պտուկը խափանուած չըլներ ու դուք էլ հիմի մուրալներիդ հասած ըլնեիք, բայց Աստուած էլածն օրհնի, բալքի խէրն էս է՛ր. Աստծով նշանածդ էլ կը լաւանայ, վեր կը կենայ, ընչանք էն օրն էլ Խէչանը բերդիցը կաղատուի ու մենք մի լաւ քէֆով չարսանիք կուտինք։ Ախպէրութիւնը վկայ, Սմբա՛տ, բանն էապէս ա էլել, որ ես քո անօր մօտ խնամախօս եմ ղրկել, թէ չէ ո՞ր անօրէն անխղճմտանքը կերթար եռման ջրի վրայ սառը ջուր կը լցներ։

— Չիմի դու ուզում ես ինձ աւետացնես, որ դու Խէչանի սըրտացաւ բարեկամն ես էլե՛, նրա բռնուելու, Սև Ջրի ղլխին, ձէյվումը ու հիմի էլ Երևանու բերդի չորս պատի միջին տանջանք քաշելու պատճառը դու չես էլե՛, դու ուզում ես իմ խելքումս նստացնես, որ քո ձեռով փչացած փողերը բոլորն էրանց տէրերին են գնացել ու քո քիսէն չեն մտել էլե՛. բաս դու ինձ մի մտոր քօրփայ[2] ես կարծում էլե՛, դու հէնց գիտես թէ ես չեմ հասկանում, որ ընդուր համար ղրկեցիք բերդը, որ էլ խաբէութիւններդ ծածկելու տեղ չմնայ, որ շուտով դողութիւններդ կը բռնուին։ Ձէ՛, Սաքո՛, չէ՛, ես Խէչանի խօսքերը մաքիս մէջը դեռ տպած ունիմ, որ իմ բռնուելու գիշերը գրպերի առաջին քեզ ասեց, Խէչանը մարդպէտ էր, իմաստուն էր, անխելք կարճամիտը ես էի, որ քո օձի լեզուիդ խաբուեցի ու մարդի տունը բարեկամութիւնով քանդեցի, դուռը իր օղլուշաղն վրէն շարեցի. ես հիմի եմ գլխի ընկնում, որ դու սուտ էիր ասում, թէ քեզ համար մին ա, թէ ո՞րը մեզանից ապատուէր. էս սհաթը ուրէս[3] տալիս ա, որ դու կը խեղդուէիր

1 Բաղդ։ 2 Մանուկ։ 3 Ձգացողութիւն։ Ուրէս տալ նշանակում է ղջալ։

ու չէիր թողալ ոտը բանտի շէմքիցը դուս դնել. սիրաս վկայում ա, որ գրագրի գալն էլ, լինձ ու Խչանի ընտանիքի բռնելու սազ ու բազն[1] էլ բոլորը շինովի էին, սուտ խաբարներ էին, ոչ քննիչ կար, ոչ հարցնող:

— Սմբատ ջա՛ն, հոգուդ մեղք մի՛ անիլ, կեղծաւորուում էր Սաքօն, թէ որ ես չար սիրտ ունենայի, Խչանի դէմ մի քէն, մի նախանձ սրտումս պահած ըլնէի, հիմի չէի ձիաւորուիլ ու ձիուս տրաքացնելով քառակիլոյդ հասնիլը, որ քեզ մխիթարեմ, մի ճամփայ սորվացնեմ, որ գնաս էն ողորմելի հիւանդին սիրտ տաս, չերթաս անմտաճել տուն ընկնես ու դուզդան դուզ[2] էդ վատ խաբարը տաս, խեղճ նշանածիդ արէնպարտ ըլնես:

— Ուզում ես ասել, թէ հկար, որ խօսք դուս քաշես, իմանաս, թէ ես, որ ընչանք օրս քեզանից խաբուելով սուս եմ կացել, հիմիկենց դէնն էլ քո պարանի վրայ պտի պար գա՞մ, թէ պտի ե-րևանու դիւանխանէքանց[3] դռները ջարդուռեմ, մովրովիդ ու քո անօ-րէնութիւնները աշխարհ.քովս մին անեմ ու Խչանին ձեր քցած հորից հանեմ էլի, էդ ես ուզում ասել, ընէնց չէ՞: Խմացիր բաս, Սաքօ՛, ես ոչ ովից չեմ վախենում, ես էս մի քանի օրս ոնց ըլնի, Աշտա-րակումը պտի մշնացնեմ, որ Հեղնարի սիրտը կասկած չընկնի, բան չը ֆահմի[4] ու մի քանի օրից պտի գնամ Երևան. ասում են մի նոր քննիչ ա եկել Թիֆլիզից, որ մովրովների ախբին նստում ա[5], ա-ռանց աչ ու ձախ թեքուելու, պտի ուղիղ գնամ նրա ոտներն ընկնեմ, ամէն բան տեղն ու տեղն իրան հասկացնեմ: Թէ որ նը-բան էլ ձեր կողմը քաշած ըլնիք, թէ որ յոյսս Երևանից կորուի, մի ջուխտ քիբարի[6] տրեխներ պտի գործեմ, հագնեմ, գնամ Թիֆ-լիզ, էլ մենճամենճներ չթողամ, բոլորին էլ բանի էութիւնը հաս-կացնեմ, նրանց ողորմութիւնը խնդրեմ: Հասկացա՞ր, աղայ Սաքօ՛, սիրտդ տեղն ընկա՞ւ, ծորելով հարցրեց Սմբատը, հիմի յետ դառ-նա, զուր տեղը մարդի գլուխ մի՛ տանիլ, էդ դու՝ էդ քո եկած ճամփէն:

Որքան և Սմբատը սաստիկ յարձակուում էր Սաքոյի վերայ, միևնոյն ընդ հակառակն աւելի փաղաքշանօք էր խօսում և ու-զում էր իւր մտերմութիւնը ցոյց տալ:

1 Հնարք: 2 Ուղղակի: 3 Իրաւարանաց: 4 Նկատել: 5 Հոգին հա-նել: 8 Կոկիկ:

Ոչինչ բանով Սմբատը չկարողացաւ հեռացնել Սաքոյին, նա մի խօսքի փոխարէն հարիւրն էր մխում և հետը գնում:

— Լա՛ւ, դու ինձ ասա՛, Սաքօ՛, հարցրեց Սմբատն երբ որ Մուլլադուրսուն գիւղն անցել էին և մօտենում էին Արգար Դաւթի աւերակներին, հիմի միտդ ի՞նչ ա, յետ չես դառնալո՞ւ, հետս Աշտարակ ես գալո՞ւ:

— Ախար չդամ ի՞նչ անեմ, ո՞նց թողամ քեզ պէս ախ-պէր-ապրին տխուր, տրտում, մտքի հետ ընկած ըստեղից Աշտարակ գնաս:

— Թէ որ էդպէս ա, ես հիմի հասկացայ, որ դու սրտով բարեկամ ես էլել Խչանի հետ ու լինձ հետ էլ ախպօր պէս ախ-պէր ես, ես տեսնում եմ, որ դուր եմ քեզ վրայ վատ աչքով մտիկ տուել, էլ նեղութիւն մի՛ քաշել, ախպէր, էլ ձիուդ մի՛ ջարպիլ, էս քար ու քոհէքը մի՛ ընկնիլ, յետ դա՛ռ, գնա. ոնց որ ասում ես, կերթամ Հեղնարին մի հնարքով կը միամտացնեմ, հո-րիցը լաւ լաւ խարբներ կասեմ ու երեք չորս օրից յետոյ կը գամ Զէյվայ, քեզ կը տեսնեմ, իրար հետ խելք խելքի կը տանք, բալ-քի թէ Խչանին մի լիս ու ճար անենք:

Սաքօն բուռթ մատը կծեց, նա պարզ տեսաւ, որ Սմբատն իրան յանում է և իւր խօսքերի ստութիւնները նրան շատ լաւ հասկանալի են եղել: Միթէ երկու օր յառաջ լինէր այս բանը, Սա-քօն շատ հոգս դույէ չանէր, ինչպէս ասել ենք, նա սկզբում շատ փոքր հաւատ ունէր նոր քննչի արդարամտութեան վերայ, բայց մի քանի օր էր, որ հոտն ուրիշ տեսակ էր փչում, քննչի անունն ուրիշ տեսակ էր տարածուում. այդ պատճառաւ էլ Սմբատի խօս-քերը ծանրակշիռ երևեցան նորա համար:

— Շատ լաւ, չնորհակալ եմ որ սիրտս ճանաչեցիր, հիմի կերթամ, պատասխանեց Սաքօն:

Այս խօսքերի հետ միկիտանը ձեռքը գրպանը տարաւ, հանեց թաշկինակը և քիթը սրբեց: Այդ միջոցին սոքա ձորակի բերա-նումն էին, որտեղից պէտք է բլուրը բարձրանային:

Այս ձորակի մէջն են Արգար Դաւթի կոչուած աւերակները, որոց աւանդութիւնը ես առիթ եմ ունեցել ուրիշ տեղ պատմելու[1]:

Ձմեռապարհից մի քանի քայլ հեռու ձորաբերանի մօտ գըտ-նուած աւերակի միջից յանկարծ չորս ձիաւոր դուրս եկան և յար-ձակումն արին մեր ճանապարհորդների վերայ:

— Վա՜յ դլխիս, գողեր են, գոչեց Սաքօն և ձիու գլուխը վե-րադարձրեց կրկին դէպի Մուլլադուրսուն գիւղը:

1 Տես կուսակցական վիպասանութեան մէջ:

— Զիաթախ եղի՛ր, անպիտան հա՛, գոչեցին երկուսը Սմբատի յառաջը կտրելով և կամեցան արգելել նրա ճանապարհը. իսկ միւս երկուսը կտրեցին Մօլլադուրսունի ճանապարհը։

Փախչելու տեղ չմնաց, Աշտարակ տանող ուղին մի քարքարոտ նեղ ճանապարհ է, որի միջից ութ դուրս ընկար, անհնար է քարոտ տեղերովը մարդ ձի. ուղիղ և հարթ ճանապարհը քամակի երկու ձիաւորներն են փակել։

Սմբատը միայ բլրի ստորոտումը մէջ տեղը կանգնած։

— Զիաթախ եղի՛ր, ասում ինք, կամ յետ դարձիր, ձորակը մտիր, գոնայ թուրքերից մէկը, ապա թէ ոչ տեղն ու տեղը գետինը կը փուենք։

Այս ասելով աւազակը հանեց ատրճանակը և ուղղեց դէպի Սմբատը։

Մեր տարաբաղդ փեսացուն լաւ գիտէր, որ ինչպիսի գլխից ձեռք վերցրած աւազակ էս լինի, չի վստահանալ այս բարձրաւանդակի քարքարուտի մէջ դէնք շարժել, մինչև նա իւր զօհին ձորակը չկոխի, նոյն կանգնած բարձրութիւնից Մօլլադուրսունը և ամբողջ մերձակայ գիւղերի տափարակն երևում է, քառորդ ասպարիզաչափ տեղ գութանաւորն իւր հանդն է հերկում, ուրեմն մի այդպիսի յանդուգն քայլ դժուար էր սպասել այս տեղումը։

— Իսկո՛յն, իսկո՛յն, շատ բարի՛, պատրաստ եմ կատարել հրամաններդ, պատասխանեց Սմբատը աւազակներին և ձիու գլուխը փոքր ինչ յետ ծռելով՝ դէմք ցոյց տուից, որպէս թէ վերադառնում է, բայց նա հանեց իւր կողքից կախած լայնափող ղարաբինա կոչուած ատրճանակն և երկու աւազակաց առաջին գետնի վերայ կրակեց։

Աւազակները շփոթուեցան, ծուխը նոցա աչքերը լցուեցաւ, նոցա ձիանքը խրտնեցան, և դուրս ընկան ճանապարհի միջից քարքարուտների վերայ։

Օգուտ քաղելով այս հնարքից, Սմբատը կարողացաւ իւր առաջին բացուած ճանապարհովն արշաւել դէպի վեր, որքան ձիուն ոյժ կար. բլրագագաթն էր հասել նա, որտեղից բացուում էր հարթ ճանապարհը։ Սմբատը յետ նայեցաւ և տեսաւ որ իւր առաջը կտրող աւազակներից մէկի ձին գլորուել էր քարովը ներքև, նոցանից երկուքը ձին էին աշխատում բարձրացնել, իսկ մինը նստած էր ձիու տիրոջ մօտ և նորա գլուխը թաշկինակով կապում։ Թուրքի երեսից իջնող արիւնը պարզ նշմարուում էր։

— Արտեղ ձերն ասէք, ինն էլ էնտեղ ասեցէ՛ք, ծաղրեց Սմբատն անշնորհք աւազակների վերայ ու ձիու գլուխը բաց թողեց

մինչև Յօշականայ կամրջի ձորաբերանի մուտքը, կամ Խրամը։ Այտեղից երևում է մեր հայերիս գրականութեան պաշտպան Մեսրովբի վկայարանը։

— Կո գլորութիւնին մեռնի՛մ, ո՛վ սուրբ Թարգմանիչ, երեսին խաչակնքեց Սմբատն և իջաւ ձիուցը, սանձը քարշելով հետ տուտս սկսաւ խրամն իջնել։

Սմբատն իւր ազատութեան փոխարէն մի քառորդ ժամից ջերմ աղօթք էր անում սուրբ Մեսրովբայ գերեզմանի առաջին չոքած, որին արժանի լինի՞ն ամէն կարօտակէզ հառնդուն հայեր։

— Էս չէլաս, պտի գնալ Երևան, էն քննչի համար հարց ու փորձ անել, չըլնի՞, գլորի, սատանի անկաջը խո՛ւղ, կաշառք ուտող չըլնի ու էս լակոտի խօսքովն ամէն բան տակն ու վրայ անի։

Այս խօսքերով նոյն իսկ երեկոյին ձի նստաւ Սաքօն և գնաց դէպի Երևան, նախապէս աւազակներիցը լսելով իւրեանց անյաջողութիւնը։

Հետևանքը մեզ յայտնի է։

ԽԸ.

ԿԵՆԴԱՆԻ ԱՐՁԱՆ

— Սմբատ ջա՛ն, էս անգամ Զէյվից գալուց յետը շատ արխուր ես երևում, հէնց իմանաս երեսիդ ծիծաղն էլ շինովի ընկի, ափունի համար շատ քիչ ես խօսում, երէկ տանուտէրի հետ տուն մտնելուս ես վարաւոլդ արի[1], որ մատդ բերնիդ դրիր, հասկացրիր, որ բերանիցը բան չի բայ Թողայ, մի խօսքով շատ կոտրուած ես. էս ի՞նչ բան ա, թէ որ մի նոր անբաղդութիւն ա պատահել, ընչի՞ես պահում, վախում ես, որ ցաւս աւելի սաստկանայ, դարդ մի՛ անիլ ես սովորել եմ։

— Զէ՛, Հեղնար ջա՛ն, զուր ես միտդ ցրիւ տալիս, ոչինչ չկայ, ափո՛ւն[2], փառք Աստծու, շատ լաւ ա, քեզ ասեցի, որ մի նոր քննիչ ա եկել, գործերը տակն ու վրայ ա արել ու ափունին էս երկ՛օրը կարդարացնի. էս կողմից էլ դարդ անելու ոչինչ չունինք, բայց, դու ինձ ասա՛, ընչի՞ վայ ուրախանանք, ընչանք ևըբ պտի լհեբին[3] քացի տալդ տեսնենք. հազդ որ բռնում ա, իմ սիրտս 100 կտոր ա ըլնում։

---

1 Նկատեցի։ 2 Հայբակը։ 3 Վերմակ։

— Ձէ՛, ախպէր ջա՛ն, ես վաղուց եմ ասասացել, որ դու ինձ սիրում ես, որ իմ հիւանդութիւնը քեզ զօրութիւնից քցել ա, վարդի պէս կարմիր երեսդ պատի ծեփ ա շինել կոլոլ թշերիդ ոսկոռները դուրս են թափել, էդ իմ հիւանդանալու օրից դէսը ես տեսնում եմ, համա հիմի է՛ն չէ, քեզանում մի բան կայ, մի ուրիշ ցեց երեք օր ա սիրտդ կռծում ա ու դու չես կարողանում ասել: Ա՛յ, հօքիրս ու Հերիքնազս էլ ախուր են, համա սրանք քեզ պէս չեն. ես կասեմ, որ սրանք էլ բանից խաբար չեն, ընենց չի՞, Հերիքնազ ջա՛ն, դու Սմբատի աչքերիցը վարավուրդ չի՞ս անում, որ սրտումը մի դարդ ունի մեղանից թաքուն:

— Ձէ՛, Հեղնար ջա՛ն, ես բան չեմ կարողանում Ֆահմել[1], ես տեսայ, որ մէկել օրը Զէյվէյը սէրթնած չէտ եկաւ, գլուխդ ասեմ, շատ էլ վախեցայ, բայց երբ որ պատճառն իմացայ, սիրտս հանդարտուեց. պատիկ փորձանքից ա ազատուե՞լ չորս դոզի միջից դուս պրծնելը հեշտ բան է՞ր. ես կարծում եմ, որ հիմի էլ էն շորշոփն ընկի, ուրիշ ոչինչ:

— Ի հարկէ էդ ա, ուրիշ ոչինչ, Հերիքնազն խօսքից ոգևորուեց Սմբատը. այս գիւտը որ Հերիքնազն արեց, Սմբատին օգնութիւն հասաւ. ապա թէ ոչ, հիւանդ աղջկայ խօսքերն այնպէս շփոթեցնէին նրան, որ եթէ մի փոքր էլ շարունակելու լինէր, գուցէ անկարող պիտի լինէր ծածկելու, շատ կարելի ա, որ գողերի պարապանդը[2] դեռ վրէս ա, պատի դրուսան ասեմ, որ շատ վախեցայ, ուզեցաւ հաւատացնել Սմբատը:

— Հը՛, թոյլ ժպիտ երևեցաւ Հեղնարի երեսին, ի՞նչ որդի ես, դու է՞ն պատուն ես, որ երեք օր վախն երեսիդ մնաը, դեռ քո էն օրուան սէրթնիլը էլ ես ասում եմ, որ վախից չէր:

— Էլ ուրիշ ոչինչ չկայ իմ պատումն, Հեղնար ջա՛ն, հաւատացնում եմ քեզ, ես արմանում եմ, որ դու ինձ վրայ ուրիշ կասկածներ ես տանում:

— Է՞հ, ես մեղայ Սաածու, հոգուց հանելով լռեց Հեղնարը:

— Դու չկարծես, թէ մէնակ Հեղնարն ա վարավուրդ արել, Զէյվէյն չէտ եկած ահաթն ես քեզ փոխուած տեսայ, ասայ կէս ժամից չէտդ Հերիքնազը միւս աւետկումը, երեկ մէկել օրը, դրուսան ասեմ, միաքս շատ ցրիւ էր, մին միաք էի անում, թէ գողերի ահն ա քեզ վրայ իր շորշոփը թողել, մին էլ խելքումս նստում չէր. հաղ հօ՛, ինչքան կուզես կուշ ու ձիդ արի, աշխատի մեզ ցանես, քեզն ու քեզը բռնում ես. մի ահաթ յառաջ՝ ես ուզում էի

1 Նկատել: 2 Սաբսամ:

քեզ հարցնել ժամանակ չէլաւ, շատ էլ ցաւում եմ, որ Հեղնարը կարողացել ա հասկանալ, շատ ափսոսում եմ, որ թէ դրուստ մի բան կայ, ինձանից պահում ես, մենք երկուվ խելք խելքի կըտայինք, մի բան միտք կանէինք: Դու ինձ ասա տեսնիմ, Երևանումն ի՞նչ բան ունիս, որ երեք օր ա ամէն սհաթ ասում ես, թէ պատի դնաս, ի՞նչ առուտուրդ ա մնացել, քանի՞ վախտ ա առուտուրից էլ ես կտրուել ու տանից տեղից էլ:

Սմբատը չկարողացաւ համբերել, նա լաց եղաւ, հեթկլտոցը խեղդում էր նրան:

— Տեսա՞ր, որ բնուեցիր, տեսա՞ր, որ խելքդ Հեղնարը սուտ չէ ասել ես շատ դրուստ եմ նկատել, ինչ էլել ա՝ էլել ա, էլ մի պահիլ ասա տեսնենք, էլ նոր ի՞նչ փորձանք ա Աստուած մեր գլխին բերել սոխակից Հերիքնազը:

Սմբատը լացակեղտ էր եղել նորա սիրտը չէր նստում, կարծես նոյն տղան չէր, որ ամենայն սառնութեամբ և անտարբերութեամբ առաջին անգամը Սաքոյից լսեց Խէչանին բերդը տանելու բօթը: Երկուսից մէկը սուտ էր. եթէ նա Սաքոյի մօտ իւր հաստատակամութիւնը կարողացաւ անդրդուելի պահպանել այժմ էլ կարող էր, նշանակում է նրա արտասուքն այժմ կեղծ էր: Բայց ոչ, երկուսն էլ ուղիղ էին, վէհասիրտ Սմբատին չէր կարելի թոյլ տալ Խէչանի տունն անբաղդացնող միկիտանի մօտ ընկճուիլ, նա նոյն րոպէին հասկացաւ Սաքոյի ինչ լինելը և իւր տոկուն բնաւորութեամբը բարձրացաւ սպանեց նրան, ոտիպեց նրան շան նման իւր քամակիցն ընկնիլը քծնուիլը կեղծաւորիլ և իւր փծնի հնարքներովը Սմբատին չնաբելուց յետոյ՝ արհնաբերութեան դիմել նորա կեանքը բառնալու աքնիլ: Իսկ այժմ Հերիքնազի առաջին, իւր ամենից սուրբ և նուիրական էակի դէմքն ի՞նչ կարող էր անել, եթէ ոչ սրտի զգացմունքն արտայայտել. նորա այդ զգացմունքն այնքան վառ էր դէպի Խէչանի տունը, նոցա վշտերն այն աստիճան մօտ էին իւր հոգուն, որ լացով միայն կարէր հանդարտեցնել իւր վրդովմունքը:

— Ասա ու պրծի՛, էլ ի՞նչ ես երեք տարեկան երեխի պէս լաց ըլում, դու է՛լ լաց ըլիս, մենք է՛լ լաց ըլինք, էլ քո տղամարդութիւնդ ընչո՞վ ջոկնուի, լացը կնիկ-արմատին ա տուած ու երեխեքանցը. տղամարդի կէսն էլ որ կտրեն, հոգը չը պտի ըլնի, մեղադրում էր Հերիքնազը Սմբատին:

— Սաղ ջանս էլ, որ կոտր կոտր անէին, էլի դարդ չէի անիլ, կամ մի կաթիլ արտասունք թափիլ, թէ որ ինձ հանդիպէր էն՝ ինչ որ ուզիշի դլուխն ա եկել:

— Ո՞րանի՞ կախ քցես, պէ ասա էլի, տեսնում ես, որ համ

բերութիւն չկայ, տրաքուեցի, խղճմտանք չունեմ, թէ ճմ սիրտս պղպտակից ա:

— Հերիքնազ ջա՜ն . . . ափո՜ն . . . էլ չկարողացաւ ո՛չինչ արտասանել Սմբատը, փաթաթուեց ադջկայ վզովն ու մղկատալով լալիս էր:

— Ախուն իմ՜նչ . . . իմ՜նչ էլաւ քեռիս . . . մեռա՜ւ, մեզ անտրանդ արիր, ինքն էս իր հեկեկանքն ու լացը խառնեց Սմբատի հետ Հերիքնազը:

— Չէ՛, քեզ մատաղ, չէ՛ . . . ափուն էլ ձէյվուռը չէ, բերդն են տարել, հազիւ շնչարգել լինելով կապեց միմեանց հետ Սմբատն այս մի քանի բառերը:

Այծակի հարուածի նման ներգործեցին այս խօսքերը Հերիքնազի վերայ. փոքրիկ երեխային էլ լաւ յայտնի է, որ բերդը տարած բանտարկեալին էլ ազատութիւն չկայ. բերդ և գերեզման — երկուսը մի բան են նշանակում. կալանաւորը քանի մռլոցով մտա է բանտարկուած, որչափ և նեղութեանց ու ճնշումների ներքոյ լինի, յոյս կայ, թէ երբ և իցէ կարող կը լինի ազատուիլ. այդպիսի օրինակներ շատ են եղել, մռլոցներըը տարիներով կարողութեան տէր յանցաւորներին իւրեանց մտա պահել են, վերջին կոպեկը դուրս կորզել և դարձեալ, թէ և, շատերին նոցանից ուղարկել են բերդը, բայց մի քանի բարեբաղդներին, կամ որ ճիշտն է անմեղ դատապարտուածներին արձակել են: Սակայն յաւիտենական կորուստը կուլ է տուել այնպիսի չարաբաղդներին, որոնք խորասուզուել են Երևանայ որկրամոլ բերդի անկուշտ փորի մէջ. այդ արեւնաթոյր համր գազանը քանի՛ քանի արդարների սիրտն է կերել. սեւ է բերդի դուռը, սևացնում է իւր շեմքով մի անգամ անցնողին արևը. մահ է նրա նշանաբանը և նա իւր դեվիզին խիստ հաստատ է. այդ արիւնռուշտ յովազը պարսկական բռնակալ տիրապետութեան ժամանակ բացառապէս հայի մսով էր կերակրուում, օր չանց կենար, որ քանի մի հայերի ոսկրներ չփշրէր իւր ժանիքների մէջ. իսկ այնուհետև նորա կերակուրը պակասց, նա սկսաւ անխիղճ լափել օրինքի առաջին դատապարտուածներին, էլ գանազանութիւն չարեց ազգութիւնների և կրօնների մէջ. առաւելապէս պարսիկներ էին վերջերումը նրա կերակուրը, քան թէ հայեր: Եթէ հայերը դատապարտուում էին միմիայն իւրեանց կարողութիւնով դատաւորներին փարթամացնելու համար, պարսիկներին ինքն արդարութիւնն էր ամէն մի քայլի վերայ իւր ձանգը ձգում. գողութիւն, աւազակութիւն, մարդասպանութիւն, մի չնչին պատճառով օրով ցորեկով բազմութեան մէջ ընկերի փորը դաշոյնով թափել և

վերջապէս ամենատեսակ քաղաքական և քրէական անուերելի յանցանք պարսկի համար սովորական են եղել:

Ո՞ւղ հիմա հասկանալի է Սմբատի ամենախիստ տխրութեան պատճառը, հիմա էլ մենք չենք զարմանալ թէ Հերիքնազը որքան և մի խոհեմ ադջիկ, որչափ և իւր գլուխը ծանր պահող, բերդ բառը լսելուն պէս մի խիստ ճիչ արձակեց և թուլացաւ, և եթէ Սմբատի հետ գրկախառնուած չլինէր, գետին կընկնէր:

Պարելի է, շատ կը տևէր Հերիքնազի թուլութիւնը, եթէ նոյն րոպէին իւր ականջին չդիպչէր իւր արձակած ճչից մի աւելի խիստը ծածկած գոռան միւս երեսին: Սրտաճեղ ադջիկը, ուշքի եկաւ, բայց արդէն ուշ էր, դրսի ճիչը քանի գնաց՝ սաստկացաւ, ամբողջ տունը թնդացրեց, մինչև հիւանդի սիրտը թափանցեց:

Վա՜յ, ախպէր ջա՜ն, վա՜յ, վա՜յ, քո քիրը մեռնի՜ր, Խէչան ջա՜ն, քեզ բերդն են տարել, դու մեր դուռն երեսներիս փակեցի՜ր, գոռալով տուն ընկաւ Մարիամը Հերնազի մօտ և տարածուեց հիւանդի վերայ, սեմեց ողորմելի, կխտամոռ ադջկանն իւր կրծքի մէջ և եթէ՛[1] Հերնազը գոչելով՝ աւազ էր անում:

— Վա՜յ դլխիս, մեզս անկաջ ա դրած էլել, ազազակեց Հերիքնազն ու Սմբատի հետ միևը նանի[2] և միւսը հօքիր ձայն տալով՝ վազեցին Հերնազի մօտ:

— Նանի՛, քո տունը քանդուի՛, մեր տունը քանդեցիր, հառաչում են Սմբատն ու Հերիքնազը և ուսերքիցը չեռ քաշելով, շատ դժուարութեամբ խլում են հիւանդին, կամ աւելի լաւն ասել մեռած ադջկանը Մարիամի ձեռքից:

— Ո՛ւր կտանի կնի՛կ, էս իմ՜նչ արիր, գոչեց Հերիքնազը . . . Սմբատ ջա՜ն, ջուր հասցրու, մեր քիրը ձեռից գնաց:

Ջրի մէջ, հանարեա՛, լողացրին Հերնազին, ոչ անկողինը ջրի մէջ կոխած հանած պէս արին, բաւական միջոց չարչարուեցին, քիթը քաշեցին, ականջները տրորեցին, մինչև հիւանդին աչքերը բանալ տալու յաջողեցան:

Ընդհատ թոքախտը վազուց մաշել և հալել էր նրան, այժմ բոլորովին մեռելի կերպարանք ստացած, աչքերը մտանաչափ խոր ընկած, եղունգները կապտած, մարմինը տաուց կտրած՝ մի թոյլ հայեացք ձգեց իւր պահապան հրեշտակների վերայ և ափո՜ւ չան բառերի հետ, դարձեալ նախկին դրութիւնն ստացաւ:

---

1 Ոչ: 2 Մայրիկ:

Կարեկցութեան արժան էր Մարիամի դրութիւնը. նա Հեղնարի վրայից յետ քաշուելուց յետոյ կանգնել էր պատի տակին, պատն իրեն յենարան շինել և լուռ ու մունջ գլխիկոր նայում Սըմբատի և իւր աղջկայ արարքին, արտասուքը հոսացել էր նրա աչքին, նա գարձել էր իբրև մի անկենդան արձան:

Նախկին հնարքը գործ դնելով՝ Հերիքնազն ու Սմբատը կրկին ուշքի բերին Հեղնարին: Նրա շրթունքը յետ բացուեցան և ափսոս բառը դեռ չէր լրիւ դուրս եկել բերանից, որ Հերիքնազը շտապեց նրա անունը տալ:

— Հեղնար ջա՛ն, դու մեզ սպանի՛լ ես ուզում, խեղճ չի՞ս գալիս էս ջրատար պառաւին, գլխաժեռ քուրդ, էս մեր կրակուսին էրուող ախպօրդ:

Ըհա՛ այն խօսքերը, որ հիւանդին ոգևորեցին

— Ես մեղա՛յ Աստծու, ձեզ մատա՛ղ, էլ չեմ անիլ, սիրտս ուրախ կը պահեմ, յանցաւորի նման ներողութիւն խնդրեց Հեղնարը. Հերիքնազ ջա՛ն, իմ տեղս փոխեցէ՛ք, էս ջրի միջից ինձ հանեցէ՛ք ու մօտ եկէ՛ք կողքիս նստուեցէ՛ք:

Առաջին անգամը չէր, որ Սմբատն իւր հարազատ քրոջ նման ներկայ էր լինում Հեղնարի մօտ այդպիսի դէպքում:

Մարիամն իւր դիրքը չփոխեց, նա իւր տեղիցը չշարժուեց, մինչև որ հիւանդին ուրիշ անկողնի մէջ պարկացնելուց յետոյ՝ Հերիքնազն ու Սաբատը մօտեցան խղճալուին և բերին նստացրին իւր սովորական տեղը՝ հիւանդի գլխավերևը:

— Հիմի դուք էլ նստեցէ՛ք իմ աչ ու ձախ կողմն, առաջարկեց Հեղնարը:

— Լաւ եցէ՛ք, իմ հօքե՛ր, իմ քե՛ր, իմ ախպե՛ր, լաւ ականջ դրէ՛ք, ինչ որ ասելու եմ, բայց չէ՛, դեռ առաջ խօսք տուէ՛ք, որ պատի կատարէ՛ք, օրթուում կերէ՛ք իմ արևովը, ափսոս կեանքովը, որ «չէ՛» չասէ՛ք, յետոյ բերանս բաց կանեմ:

— Հեղնար ջա՛ն, քեզ մատա՛ղ դնայ քո քիրը, ասիլ տակին մեռնե՛մ, քեզ հիմի խօսիլ չի կարելի, դու էսօր ջլիս[1] հալից[2] ընկար, ուժ չունայ մէջդ, խնդրում եմ, թէ որ մեզ սիրում ես, էսօր մի՛ խօսալ, ընչանք մի քիչ ջանի դաս, պատասխանեց Հերիքնազը:

— Ես էլ Հերիքնազի հետ ապանչաք եմ անում, Հեղնար ջա՛ն, ազիզ քի՛րս, խնդրեց Սմբատը, քո առողջութիւնը խնայի, դեռ

1 Բոլոքովից: 2 Ուժից:

քեզ խօսալու ժամանակ չի՛. մենք քեզ խօսք կը տանք, որ էգուց ինչ ասես՝ ականջ անենք, համա հիմի քիչ դնջացի՛:

— Ես ձեր խօսքը կը լսեի, թէ որ ինձ լաւ չզգայի, տեսէ՛ք՝ էլ չեմ հեթում, էլ շունչս չի կորուում, սիրտս էնպէս հանդիստ ա, որ երկու շաբաթ ա՝ ըսենց լաւ չեմ էլած. դուք միտք չանէ՛ք, թէ ես ձեզ միամոտացնելու համար եմ ասում, ձեր քաղցր արևը վկա՛յ, ափսոնիս գլուխը վկա՛յ, սուտ չեմ ասում: Դորթ ա, մի սահաթ յառաջ ափսոնիս բերդը տանիլը որ լսեցի, էլ չկարողացայ համբերել, կարելի ա կը մեռնէի էլ, թէ որ դուք յետ չըբերէիք, համա հիմի անց կայաւ. ո՞վ գիտայ, հէրս բերդիկը դուս պահ գալ՞, ես էլ նրա երեսը տեսնելու՝ նրա ձեռը պաչելու արժան պահ ըլնի՞, բայց փառք Աստծու, Իր կամքն ա, ոնց որ նա տնօրինել ա, ես հակառակում չեմ:

Հեղնարը խօսում էր ամենայն լրջութեամբ և հանգարտութեամբ:

— Աքի ի՞նչ կըլնի, որ էսօր քո խօսալիքդ թողաս, խնդրեց Սմբատը:

— Թէ որ մին էլ ասել էք, թէ որ ինձ չէք թողալ սրտինս ձեզ յայտնեմ, էս սհաթս աւելն կվատանամ ու Լոդմանի հեքիմն ինձ մահի ձեռիցը չի կարող խլել, ձեր քաղցր ըմբրոշն[1] ու արեւոտն եմ օրթում ուտում, ասաց լրջօրէն Հեղնարը:

— Լաւ եմք, ասա տեսնենք, վճռեց Հերիքնազը:

— Խօսք տուէ՛ք, որ բերանիս փակ չդնէ՛ք, թողաք, որ սըրտիս դուս ասեմ:

— Տալիս ենք:

— Գիտէ՛ք ինչ կայ, սկսաւ, Հեղնարը, վաղուց ես տեսնում եմ, որ ինձ վերջ չունիմ, իմ օրերս համրարած են, էսօր, էգուց, թէ մի ամսից, երկու ամսից, չեմ կարող ասել, բայց էս տեղերիցն էլ ես վեր կենողը չեմ, էս ցաւն ինձ դերեզման պտի տանի: Զկարծէ՛ք, որ ես պրա համար մի մազի չափ հոգս եմ անում, մի օր եմ պարա իմ Աստծուն, կը տամ ու կը պրծնեմ. էս ուզան ամէնքի գառանն էլ չըթելու ա, ամէնքն էլ էս ճամփէն պտի գնան: Չեմ կարող ասիլ թէ Աստուած մեր ո՞ր մեղքի համար զահր արեց[2], որ էս փորձանքներըս մեր գլխին եկան. իմ հէրն իր կեանքում մէջիմ

1 Կեանքով: 2 Փորձանքի մէջ ձգեց:

չէ կկչտրել[1], իր բան ու գործն էլել ա աղքատներին ու խեղճերին օգնելը, իր հոգու՝ իր ժամի ճամփեկից դուս չի եկել. ողորմածիկ մեկա էլ մի հրեշտակ էր, հաւերին էլ չէր անիծում, շատ որ պահլեն տանում էին[2] ասում էր՝ ձեզ տեսնե՛մ՝ թռունգիրը թափուիք, էրուիք ոչ. էս էր լիսահոգու առած մենծ անիծքը, իմ ջրասայր հօքիրս իրեքիս գլխովին էլ փարվան ա գնում[3] ինքը ասված կը կենայ ու գուռն եկող աղքատին ու դարիբին առանց առըքի ճամփու չի դնիլ. դու՝ Հերիքնազ Ջա՛ն, քո բարի սրտավոտ սաղ գեղի աղջկներին օրինակ ես էլել, Սմբատն էլ իր օրումին ոչ ովքե սիրտը չի կոտրել: Ինչքան ես միտք եմ անում, տեսնում եմ, որ էլի իմ մեղքն ա, որ մեր երեսովը դիպաւ, ես եմ էն փչանալուն, որ համ հօրս խօսքն ուշեցի երեսահանց չհոտրել, համ իրանից թաքուն, քեզ յայտնի ա, Հերինազ Ջա՛ն, թէ ի՛նչ անպիտանութիւն եմ արել: Հօրս հոգին վկայել ա, Աստուած իրան տուն ա տուել իմացել ա որ հինգ վեց տարեկան Սմբատը Աստծու գառը պահ մենծանայ, իր միանուճար զաւակի բաղդաւորութիւնն ա ցանկացել ու ես թաւուր տղի հետ իմ գլուխս երեխայութիւնից կապել ա: Էն ի՛նչ քաղցր օրեր էին, որ մենք երեխայ ժամանակներս անց էինք կացնում, էն ի՛նչ սէր էր, որ մենք ունէինք, հօրս սիրտը վառ աւրորում էր, որ իր սիրեկան երեխէքն ընենց սիրով էին: Ա՛խ, ի՛նչ կը ընէր էն վախտը մեռնէի ու հրեշտակների դասը դասակուէի: Անցկացան էն անմեղ տարիքը, տարան իրանց հետ մեր տան սէրն ու քաղցրութիւնը:

— Զնեղանաս, Հերնազ Ջա՛ն, խօսքդ չեմ կորցում, համա մի քիչ հանգստացի ու էնպէս խօսա՛, բարկանաս ոչ, քեզ մատա՛ղ խօսքդ մոռացնելու համար չեմ ասում, ընդմիջից Հերիքնազը:

— Շատ լա՛ւ, համաձայնեց հիւանդն և հինգ րոպէաչափ լռեց:

— Գլուխս քամիներով լցրած՝ հօրս հարստութիւնների վրայ զառահ էլած՝[4] մեր գեղի աղջկների կեղծաւոր խօսքերից խաբուելով ես ինձ շատ մենծ ումն էի կարծում, դունչս[5] շատ վեր էի բռնում, իմ նշանածիս չէի հաւանում: Եզնէ Սմբատս էլ հէնց գիտէր, թէ նախրումն էշ ունի, գալիս էր իր նշանածիցը սէր ու քաղցրութիւն հասկանալու, էլ չգիտէր, թէ ի՛նչ տեսակ ծակծկու-

1 Տրտնջել: 2 Զանձրացնել: 3 Բոլորուել: 4 Ապաստանած: 5 Ընթաց:

տուելուն ա իրան թուշ էլել[1]: Բեզ յայտնի ա, Հերիքնազ Ջա՛ն, թէ իմ յիմարութիւններս ի՛նչ տեղ հասան, չգիտեմ՝ Սմբատս իմացա՞ւ, որ իր անպիտան նշանածը մի պարծենկոտ տղի աչքերից խաբուած՝ սաղ տարի հետը ծաղ ու բաղ[2] էր անում ու համ իրան խաբում, համ իր հօրը, համ Աստծուն. չգիտեմ՝ սա հասկանում էր, թէ ո՛նց էի Աստուած Աստուած անում, որ մեր պատկը գլուխ չգայ: Ղորթ ա, ոչ մի օր ես Սմբատիս համար չար միտք չեմ արել, բայց բաց ասեմ, ոչ ամանչեմ, քօս գրողն ու մահի երեսը տեսնել ցանկանում էի, Սմբատիս ոչ: Մի՛ բարկանալ, Սմբատ Ջա՛ն, իմ աղիզ ախպե՛րս:

— Ձէ, հոգի Ջա՛ն, դու սիրտդ շուռ մի՛ տալ, անցկացած բաների վրայ ես միտք էլ չեմ անում:

— Հա՛, Սմբատ Ջա՛ն, էնքան տեղը քեզ պատում էի, որ քեզանից ապաուելու համար ուզում էի մի հնարք գտնել, քեզ իմ սիրեկան Հերիքնազիս հետ սիրացնել, ու ձեզ իրար հետ սիրացնել տալ: Ա՛խ, ես իմ մտքովս չարութիւն էի ուզում, համա չէի իմանում, թէ դրանից մենծ լաւութիւն իմ կեանքի մէջ չէի կարող ապած ընկնել, թէ որ ձեզ՝ երկու արդար ու բարեսիրտ հրեշտակներիդ իրար հետ միացնէի: Գիտե՞ս, ինչքան ուրախացայ, երբ որ հոտով վարավուրդ արի[3], որ դուք երկուսդ տաք սիրտ ունիք միմիդ վրայ, չէ՛ չասես, Սմբատ Ջա՛ն, դուշմանի[4] աչքը սառած[5] ա, ես ամէն բան տակիցն իմացայ: Էս ա, պրծայ, ասեցի ու Հերիքնազիս սկսեցի քարոզել սրա տատերը[6] մոտ, որ քեզ վրայ պատկուի. պատ ասեմ, որ ինքն էլ իր սիրտն ինձանից չծածկեց, խոստովանուեց, որ սիրում ա քեզ, համա պատկուելու համար գլուխը մահի էր տալիս, ոչինչ բանով յանձը չառաւ: Հերիքնազն էն հոդին չէր, որ իր քեռու սիրտը կոտրէր, իր սէրն իր մէջ մեռցրեց, քեզանից պահեց, ու ոնց որ տեսնում եմ, էսօր էլ քեզ ախտօր պէս ա սիրում: Մի՛ ուրանալ, Սմբատ Ջա՛ն, , որ շատ կարելի ա, դու աւելի յոյս ունէիր սրանից, համա սա իր խելքոքութիւնովը քեզ էլ սառցրեց, ու թէ որ չեմ ախալտում, քեզանից հաստատ խօսք առաւ, որ իրան քիր ու քինի ձանձանչես: Սուտ եմ ասո՞ւմ, Հերիքնազ Ջա՛ն, ձեր մէջը խօսակցութիւն չի՞ էլել, դուք ձեր սէրն իրար չէ՞ք յայտնել:

1 Դիպել: 2 Բաղդրախօսութիւն: 3 Նկատեցի: 4 Ախոյեան: 5 Հեռատես: 6 Ընկեր: Տատերը մտնել կը նշանակի յոգեբերել:

— Սուտ չէ, իսկ էդպէ՛ս ա, մենք մեր սէրն իրար բաց ենք արել և ուխտ ենք դրել, որ մեր մէջը թաղենք ու երկուսս էլ քո ուղուրին[1] մեր սիրտը մատաղ տանք։

— Ըպրի՛ս, որ խոստովանուեցիր, ես էլ հէնց էդ տեղն եմ գալիս, դուք էդպէս կամեցել էք, բայց Աստուած արդարադատ ա, ողբմած ա, նա չէր թողալ, որ սիրող սրտերն իրարից հեռանան. նա զաբուլ չէ կենալ[2], որ Հեղնարը չսիրելով Սմբատի պէս լաւ տղէ կնիկը գառնայ ու Հերիքնազը մէջ տեղը Հեղնարի խաթէր իր սիրտը մեռցնի։

— Հեղնար ջա՛ն, էսօր թողանք, խնդրեց Հերիքնազը։

— Մի՛ մոռանալ, որ դու ինձ խօսք տուիր չարգիլես, խօսքդ պահի՛, թէ չէ կը բարկանամ։

— Բաշխի՛, սուս կը կենամ, համա նեզանուում ես։

— Չէ՛ հանգարտ եմ. լսեցէ՛ք էն ա պրծնում եմ։ Ընչանք էն ահաթն էլ, Սմբատ ջա՛ն, որ մեզ ձեռ ձեռի պոի տայինն, ես քեզ չէի սիրում, զորթ ա, Հերիքնազիս խօսք էի տուել, որ հօրս խօսքիցը դուս չգամ, բայց սիրտս չէր կպչում. ինչ կըլնի՛ թող ըլնի՛, ասեցի ու ճակատիս գրուածքին հեռևեցի։ Հօ՛, տեսաք ի՞նչ էլաւ, Աստծու մատը մէջն էր, ու մեր պատկը խափանուեց. խափանուեց՝ ուրիշներին ցաւ՝ բայց ինձ համար ամէնից բաղդաւոր օրն էլաւ. էդ օրն ես իմ չսիրած նշանածի տեղակ գտայ մի սիրած՝ մի էլաւ. էդ օրն ես իմ չսիրած նշանածի տեղակ գտայ մի սիրած՝ մի մօր արգանդից ծնածի պէս ազիզ ախպէր, ախպէր, որ խոստացաւ իր գլուխն ինձ համար չխնայել, որ իր խօսքը կատարեց ու կատարում ա։

— Ու պատ մինչև իր վերջի շունչը կատարի, վըսայ բերեց Սմբատը։

— Ես կասկած չունիմ, քո քիրը դիտի էդ բանը ու դրա համար էլ ուզում ա իր ախպօրը ցանկանայ էն՝ ինչ որ ամէն մի քիր իր ազիզ մինուճար ախպօրը կը ցանկանայ։ Դիտե՞ս, ի՛նչ եմ ասում, Սմբա՛տ, Աստուած իմ Հօրն իրանից ծնած տղայ չի տուել, բայց տուել ա մի տղայ, որի պէս ոչ մի հալալ[3] զաւակ իր հօրը չէր կարող մխիթարել. Աստուած իմ Հօրը տուել ա մի աղջիկ, բայց էն աղջիկը նրա գլխին ցաւ ա էլել իր Հօրն էսքան փորձանքները պատճառ ա դառել։ Բայց մի բան կայ, ասենք իմ հէրս էս օր

1 Ի շահ քո։ 2 Չի համաձայնիլ։ 3 Հարազատ։

մահապարտի պէս երևանու բերդումը բռնուած ա, ու էգուց էլօր էլ շատ կարելի՛ ա՝ կամ գիւլլախորով[1] ըլնի, կամ Սիբիրի ճամփին մեռնի՛, համա էլի Աստուած իմ Հօրս սիրում ա, նա Հօրս ոչ-փուչ աղջկայ տեղակ տուել ա Հերիքնազի պէս մի աղջիկ, որ եթէ խեղճ Հալիւորի կենդանութեան ժամանակն էլ չկարողանայ մխիթարել նրան, մեռած վախտն էլ ա պտի նրա հոգու մխիթարանքն ըլնի, Հօրս հոգին թէ մի կողմից կը տխրի իր աղջկայ վըսայ, մէկէլ կողմից կուրախանայ Հերիքնազի պէս բարի ժառանգ ունենալով։

Ա՛յս տեղ հիւանդը փոքր ինչ կանգ առաւ։

— Հերիքնազ ջա՛ն, քեզ մատա՛ղ, իմ գլուխը կը սիրես պրոստան ասա, ինձ սիրո՞ւմ ես, յանկարծ խօսքը փոխեց Հեղնարը։

— Ի՞նչ ես ասում, Հեղնար ջա՛ն, մի՞թէ դու չգիտես։

— Սմբատ ջա՛ն, իմ արևը կը սիրես, ինձ սիրո՞ւմ ես, դարձաւ հիւանդը դէպի տղայն։

— Ոչ մի ախպէր, ես կարծում եմ, չի սիրած էլել աշխարհքիս մէջ իր քուերը՝ ինչ որ ես քեզ, պատասխանեց Սմբատը։

— Հօքիր ջա՛ն, աչքերը վեր բարձրացրեց Հեղնարը դէպի պատաւ Մարիամը, ինձ թաղես՝ թէ դբուստ չասես, ինձ սիրո՞ւմ ես։

Մարիամն իւր անշարժ դիւթիւնից էր դուրս գալիս, նրա աչքերումը միայն կենդանութեան և սրտի թախծի նշան կար։

Սմբատն ու Հերիքնազը մնացել էին իրար երեսի նայելով։

— Վ՚նաս չունի, քո լուռ մնալդ էլ ինձ համար պատասխան ա, հօքիր ջա՛ն, քո աչքերդ լեզուիդ տեղակ խօսում են, ես գիտեմ, որ դու ինձ սիրում ես, ասաց Հեղնարը, ես շատ լաւ իմանում եմ, որ ամէնքդ էլ ինձ սիրում էք, ոչ մինիդ սէրի վըսայ կասկած չունիմ. հիմի էլ էն սէրի անուամբն օրթում եմ տալիս ձեզ Հերիքնա՛զ ու Սմբա՛տ, ձեր քուերը բաղդաւորացրէք։

— Ի՞նչ կուզես, որ անենք, կարմրելով հարցրեց Հերիքնազը։

— Ա՛յ ի՞նչ, ձեր քիրն երկար չի ապրելու, ինչ որ էլ վախտ ասեցի, շատ կարելի՛ ա՝ ամիսներ քաշի, համա վերջս մահ ա, ինձ խօսք տուէք, որ իմ մահիցը յետ դուք իմ սրտիս ցանկութիւնը դըլխս կը բերէք. էն բանը, որ մի ժամանակ ես չար մտքով էի կադրլխս կը բերէք. էն բանը, որ մի ժամանակ ես չար մտքով էի կամենում, հիմի ուրախութիւնով եմ ուզում, հօրս օջաղը ծխելու,

1 Գնդապետի։

հօրս հոգին փառաւորելու համար եմ ցանկանում, հասկացա՞ք ինչ եմ ասում, վեր կացէք անխօսալ իմ առաջին կանանցէք, մօտացէք հօքօրս ձեռն էլ պաչեցէք, նրա օրհնութիւնն առէք, ակէք, որ ես էլ ձեզ պաչեմ։

— Հեղնար ջա՛ն, ուզում էր խօսիլ Սմբատը։

— Ա՛ւս, մի խօ՛սք, մի ծպտո՛ւն, մի չէ՛ թէ որ բերանից դուս ա եկել, ես էս սհաթս կը մեռնեմ, բայց ես գիտեմ որ ձէ մինդ ձեր քուեր մահը չէք ցանկանալ։

Հերիքնազն ու Սմբատը գլուխները կախել էին, շփոթը, տրամութիւնը, Հեղնարի խօսքերն այն աստիճան շարժել էին սրանց, որ բացի լռութեամբ կրծքերը բարձր ու ցածր անելուց՝ ոչինչ խօսք չէին գտնում պատասխանելու։

— Շո՛ւտ, շուտ արէ՛ք, սիրտս նեղանում ա, մէնակ ձեր խօսքը կարող ա ինձ հանգստացնել, ստիպում էր Հեղնարն և սրանից ղում։

Եւ ահա այն արձան կինը, այն ուրուական Մարիամը վեր կացաւ տեղից, յառաջ եկաւ և Հերիքնազի կուռը բռնեց անց կացրեց Սմբատի կողմը։

Աղջիկն անխօս հեռանում էր մօրը։

— Ոչ մի խօսք դուս չգա՛յ բերանից, հրամայաբար լեզու եղաւ արձանը. ինչ որ Հեղնարիս կամքն ա՝ պտի կատարէք, երեխս բերնովն Աստուած ա խօսում, ձեռդ տո՛ւր, Սմբա՛տ, ասաց Մարիամը, առ էս քո նշանածը, քո քոյր Հեղնարի հրամանն ա, բռնի՛ Հերիքնազի ձեռը։

Արձանացած Մարիամի խօսքերի ապշութիւնը սարսափ բերին մինչև անգամ Հեղնարի վերայ։

Սմբատը բառացի կատարեց պառաւի հրամանը։

— Փա՛ռք քեզ Աստուած, հիմի հանդարտ սրտով կարող եմ մեռնիլս աչքերն երկինք բարձրացրեց հիւանդը։

— Իմ ախպօր ու նրա գլխաւոր քուոր օրհնութիւնն ըլի ձեր գլխին, բալէքս, անարժան մեղաւոր բերանովս կնդրում եմ Աստծուց, որ ձեզ բազդաւորացնի ու ձեր քուորը լաւութիւն տայ ու իմ ախպօրս էլ սաղ սալամաթ իր երեխեքանց տեսութիւնին ու իր քուոր գլուխը հողը դնելուն արժանացնի, ձեռները վեր բարձրացրած օրհնում էր Մարիամը։

Պառաւ Մարիամն այս պրուքեան մէջ մնաց երկար ժամանակ նա մին նայում էր Հերիքնազի ու Սմբատի վերայ, մին էլ Հեղնարի.

վերջինիս վերայ աչք ձգած ժամանակը, նրա աչքերին արտասուքը կաթում էին։

— Հիմի ինձ մօտ եկէ՛ք, ասաց հիւանդը և պարկած տեղից առանց օգնութեան նստեց։ Շատ ժամանակ է, որ նա այս կարողութիւնից զրկուել էր։

Հեղնարը համբուրեց փոխադարձաբար երկու սիրեկանների ե՛ռեները, նոքա թաց էին անում ամէն մէկը արտասուքով հիւանդի հոտացած ձեռքերը։

Հիմի լսի՛, Սմբատ, ասաց վերջապէս հիւանդը պարկելով, ես ինձ շատ լաւ եմ զգում, ես գիտեմ, որ ընչանք իմ սրտիս փափաքը իմ լեզուովը հօրս չասեմ, նրա օրհնութիւնը ձեր համար չենդրեմ մեռնողը չեմ. հիմի քեզ հարկաւոր ա գնալ Երևան ու ջանք չընայել, իմ հօրն ազատելու ճարը տեսնել. յոյս հաստատ ա, որ պտի ափսոսիս ձեռը պաչելու արժանի ըլնիմ։

Միւս օրը Սմբատն Երևանումն էր։

ԻԳ.

ԵՐԿԱԹԸ ՏԱՓ ՏԱՓ ԿԸ ԾԵԾԵՆ

Դու աչ գնա՛, ես ձախ, ասաց Սաքօն Մովրովին ու իւր դիւանատան հաշիւները վերջացնելուց յետոյ այնպէս կորից իւր խոնարհի հեաքը, որ իւր հանապազօրեան այցելու Բաքոսի պաշտօնեայ ղազախներն էլ չէին գտնիլ։

Աշտաւուլ Մարդարը, որին մենք մոռացել էինք, ինքն իրեն շատ դատապարտում էր, Խէչանի տան պատահած բոլոր թշուառութեանց պատճառն իրան էր համարում. նա ուզում էր մի օր ներկայանալ Խէչանին և խոստովանիլ, որ ինքը միաք չունէր նրա աղջկանն ուզելու, Սաքօն էր իրեն տաքացրել, ուզում էր ներողութիւն խնդրել բայց ամօթն իրան խեղդում էր, խիղճը խիստ տանջում էր։ Եաստավուլն էլ խիղճ է ունեցել։

Մարդարը այս պատրաստութեան մէջն էր, մաքում դրել էր

դաւառից, ուր ուղարկուել էր, վերադառնալուն պէս՝ իւր սիրտը հանգստացնել, բայց այնտեղ լսեց, որ Խէչանին Երևանու բերդն են տարել: Կատաղեց եասավուլը և ջնեաց, որ յետ դառնալուն պէս Սաքոյի վրայ իւր թոյնը թափէ, կամ ինչպէս ինքն ասում էր, մի լաւ լուանայ, որ անմեղ մարդի արիւնն ընկաւ: Յետ դարձաւ Մարգարը, գինեատան դուռը կրնկի վերայ բաց էր, մէջը բոլորովին դատարկ էր, մի քանի տեղում էլ խունկ էր ծխում, կարծես այս տանիքը նոր են ննջեցեալը դուրս տարել:

Մարգարը սարսափեց, երեսին խաչակնքեց ու դուրս ելաւ:

— Ո՞նց թէ ծախեց, հալցրեց երկրորդ անգամ պրսևը կանգնած գիւղացուն:

— Ծախեց էլի՛, առուտուրը վերջացրեց ու ինքը ձին նի էլաւ, քշեց դպա Ալագեազ:

— Ինաս ծառէ՞ն:

— Ծառին էլ հետը տարաւ. մի խօսքով մարդն էլ միկիտանութիւն չի ուզում անիլ, տեսնո՞ւմ ես, գինու հոտը տանիքը կըտրելու համար մի քանի տեղ իր հօր հոգուն խունկ ա ծխում, ծիծաղելով ասաց գիւղացին:

— Ես դրա հախիցը կը գա՛մ, էսօր մովլովլին ամէն բանը կասեմ, մտածեց Մարգարն ու գնաց դէպի եասավուլխանէն, բայց ի հարկէ սառած միտց, ամէն փոփոխութիւն իրեն յայտնի եղաւ և նա լռել ստիպուեցաւ:

— Աստուած քո վնասն[1] անի, սատանայ Սաքո՛, էս բոլոր օյիններդը քո բաներն են, եթէ դու չէիր ելել, գառան նման մովլովը դեռ էր գառնալ, մհալն տունը չէր քանդիլ, խեղճ Խէչանին էս փորձանքի մէջը չէր քցիլ, ինքն էլ էդ կրակի մէջը չէր ընկնիլ:

Այս խօսքերն եղան Մարգարի վերջին մտածմունքը Սաքոյի առաւելի դէմ, սրանցով միայն ողորմելին իրան խիղճն ալդադարեցրեց:

Բայց Սաքոյի հոգը չէր, առաջն ասում է, շունը կը հա՛ էայ, քարվանը կը քո՛էայ, մեր միկիտանը չէյվնից այդ ժամանակը շատ հեռու էր, այդ խօսքերը նորա ականջին չէին հասնում:

Գնաց Սաքօն, արդա՛րև, դէպի ձախ, գնաց Աշտարակ, բայց

1 Դատաստան:

գիւղը չմտաւ, նա իջաւ իւր այգումն և կանչեց տատմօրը, նրանից իմացաւ, որ Սմբատը դեռ գիւղումն է, բայց շուտով Երևան է գնալու:

Միկիտանը ճանապարհ դրեց տատմօրը, սատկացրեց ամենախիստ հսկողութեան պատուէրներն և ինքը վեր կացաւ կանգնեց իւր այգու գլխին: Երկար խորհրդածութիւններ նրա մտքովն անց կացան: Այս այգին բռնեց Սաքօն Մարգարին խաբէութեամբ պսակը քանդել ուղարկելու պատճառը, հիմա էլ տեսաւ, որ այս ճնաց իւր վերջին յոյսը, նա զոյդ ձեռքով գրկեց այն միտքը: — Խէչանը իւր հետ այգեկից հարևան էր, թումբը թումբան, ծառը ծառի, միջնակը միջնակի հետ խառն էր. ինքը Սաքօն միաք ունէր Խէչանի բոլոր կալուածքը սեպհականացնել և այդ երջանիկ երևակայութիւնն այժմ երազական ցնորք լինելուն կասկած չմնաց: Ի՞նչ անէր, ուրեմն, այս միակ այգին էլ ձեռքից հանէր, այս էլ չկարողանար շահուիլ ամօթ չէր իրան՝ իրան — Սաքոյին, ոչ մի բանում ցարդ անյաջող չգտնուած Սաքոյին Խէչանի նման մի գիւղացու դէմ ընկճուիլ: Դիցուք նորա հարստութեան քառորդ մասն ինքը ծծել է, բայց այդ միայն փողով է եղել այդ իւր ջերմ աշխատութեամբ Խէչանի տան գլխին բերած մեծամեծ փորձութիւնների վարձատրութեան 100-րդ մասն էլ չի կարելի համարել. մի՞թէ Սաքօն այդքան միայն սպասում էր: Եթէ անպիտան քննիչը կոպեկ քըթալի նման անժամանակ ներս ընկած չըլնէր, նա Խէչանին ձէյվնումը պահելով մոտիկը էր վերջին կոպէկից գլկելուց յետոյ, նրա անշարժ կալուածքի կծիկն էլ հետ գնհատէ իւր ձեռքն առնել. բայց գլուխը քննիչը մնան նման կարասն ընկաւ ու հոտացրեց: Եթէ նա Սաքոյին անձամբ ինաս էլ չհասնի, իւր քննութեան ցանցի մէջ նրան չկարողանայ կաշկանդել, այսքանն էլ փոքր ինաս չէր, որ գոյն կերպիւ հասցրեց. խեղճ Սաքոյի եկամտի աղբիւրները ակներևյը ցամաքեցրեց. ողորմելի Սաքօն անպիտան քննչին մի ինաս չէր տուել. ո՞ր տեղից են երբեմնագէս այսպիսի որոմները յառաջ գալիս և Սաքոյի նման ժիր, աշխատասէր գործունէի աշխատանքը ոչնչացնում:

— Դէ՛, էդ դարմանի տակի ջուրը հո լինքն ինձ զօռով[1] չեկաւ, չասեց, թէ Սաքո՛, մովլովէցի ու մհալեցը ձեռներդ լուացիր,

1 Բռնի:

պրծար, հիմի էլ միկիտանկանէդ՝ բնակալդ Զէյվկոյը ցաք ու ցրիւ տո՛ւր, գլուխ առ, կոլի, դէ, քննիչն ըսկի երազումն էլ չէր կարող իմանալ, թէ աշխարհ.քումը մի մովըովներ ապրածայնող միկիտան Սաքօ կայ՝ նրան թալաքի մէջ քցեմ: Բայց չէ, Սաքօն մէնակ փողի սառաֆ [1] չի, մարդի սառաֆ էլ ա. ես մովըովը չէի, որ ախմախ [2] պէս ձաշ քուն տամ, թողամ, որ քննիչը գայ գլխիս կանգնի, ոտ ու ձեռս չալբանդի [3], գործերս մհրի [4], նոր աչքերս չռեմ, դունչս ծռեմ ու ճնամ մոլորուած, հդպէմներն ի՞նչ մարդիկ են, դրանք գլուխը քոր գալուս ոտի տակն են քորում: Չէ, ախպէր, մհալի տիրոնջ հէրն էլ անիծա՛ծ՝ միկիտանկանչնն է՛լ, իմ ջանիցը հօ լաւ չէ՞ն. էս օր կայնի, էգուց թող չըլնին. էլոր մին էլ տեսար՝ քո խիալ [5] չարած տեղդ ինքն իրան պուպուդ՝ գլուխը հանեց: Ապրի՛ս, Սաքօ ջա՛ն, ինչ որ արիր, շատ լաւ արիր, միկիտանկանէդ մի սհաթի մէջ ծախծխտաերիր, քեզ ձնաասուած աւտացիր առնողներին, լաւ գինին ու արաղը մուշտարիքանցը [6] շանց տուիր ու կխոից շատ ձեռաց ջուր խառնեցիր, գլխներըը կապեցիր, չալ չալ [7] մանէթներըը, շղշղկան ասիղնացինքը [8] չէբդ դրիր, միկիտանկանումդ էլ սաքի հօրդ հոգու համար էնքան խունկ ծուխ տուիր, որ գինու արաղի հոտը բնաւ չի գալ, գու էլ ձիդ նստեցիր, ծառայիդ ցանեցիր, գալա Ալագեազ ղշկեցիր, ինքդ գէսն եկար: Հիմի քո առաջին գործն ա՝ Երևան մտնես թէ չէ, չինովնիկներից, ղուլղի մարդկանցից հեռու մտն գալ, մովըովնցն ու իր թայֆիցը [9] ցանուիլ, մէջ ուտիլ, ղըզաղ մտն գալ, տեղն եկած վախտը փողդ տապրակը բաց անիլ, կապէկները տալ՝ մանէթների գործ չինել. ի՞նչ կուզես անիլ, թաք ըլի էսօր Երևանու բերդի մէջին քո տան պէս ընտիր բերդի գռնովը քէնդ ուզած վախտն ազատ ել ու մուտ ա-նել, խէչանի աչքը մտնել ու էնքան կորցրած մալ ու գովլաթից էս մի յիքին էլա քո ձեռը քցել:

Սաքօն այս մտածմանց մէջ ձին սանձեց և հեծաւ:

— Է՛ա՛, մի բան էլ մոռացայ, շարունակեց նա իւր խորհըրդածութիւնքը, մենձ էշն ախոռումն ա մնացել, պրի ամէն հնարք բանացնել, Սմբատի համար քննչի գուռն ու խէչանի երեսը պատնել: Թէ կուզ որ մտածմանցս քամին տանի, ոչ մինը գլուխ գա-

1 Սեզանաւոր: 2 Ցեմաք: 3 Կաշկանդել: 4 Կնքել: 5 Կասկած: 6 Յաճախորդ: 7 Փայլուն: 8 Թղթադրամ: 9 Կուսակիցներ:

լու չըլնի, պրի դարդ չի անեմ, գեռ լինճանից պրի խարջեմ, խէչանից շահուածներս էլ յետ էս գործի համար փչացնեմ, իր երդն իր գլուխը քսեմ ու Սմբատի ոտը էն երկու տեղն շեմքովն էլ տուն չթողամ:

Ճաղդը Սաքոյին աչքից չէր ձգել, այդ իսկ երեկոյեան նա իւր վաղաժամօթ բանտապետի ձեռքով խէչանի մօտ մուաք ունեցաւ. այս անգամ նրան այնպէս դժուար չեղաւ ծերունու համակրութիւնը գրաւելը. նա փորձուած էր, էլ չէր սխալուիլ:

Այդ օրը բանտապետը տուն մտաւ և խէչանին աւետեց, որ մովըովը սաոսիկ վերաւորուել է քննչի սրած անօրէնութիւններից՝ խէչանին երևանու բերդն ուղարկելը մասին. նա պաշտօնական թղթով յայտնել է նաչալնիկին խէչանի անմեղութիւնը. մովըովի հայհոյ.քով սպանութեան գործի մէջ ոչ ոք մեղաւոր չէ, Սահմռաւալը բերդն իբրև աւազակ արժանի էր սպանուելու: (Սաքօն խէչանին բերդն ուղարկելուս փութացել էր հակացնել նրան, թէ իրեն ուղարկողը ոչ թէ մովըովն է, այլ երևանից նորա գործի համար յանկարծակի ուղարկուած քննիչը):

Այժմ, ասաց բանտապետը, նաչալնիկն իրեն կանչել էր և պատուիրեց, խէչանին ծանր յանցաւորների միջից հանել և առանձին մաքուր սենեկում պահել. այս երկու երեք օրս էլ անկասկած նրա ազատութեան հրամանը կը հեռանի:

Աննկարագիր, մեծ ուրախութիւն էր խղճալի ծերունու համար այս լուրը և մեծ թեթևութիւն մահապարտ, խաժամուժ և ոճրագործների միջից առանձին խցիկի մէջ փոխադրուիլը:

Ի՞նչ նեղութիւն արդեօք էր տանում նա այդ անզեղջ աւազակների մէջ, ի՞նչ կշտամբանք, ի՞նչ հայհոյանքներ չէր լսում անպատկառ արիւնարբու բանտարկեալներից: Նորա ալիքն անարգում և այպանուում էր, նրա երեսն ամէն օր թուք էր տեսնում: անամօթ գազանները, որոնք իրանց կեանքի մէջ միայն մարդասպանութեամբ են պարապել, որոնք պատիւ, մարդկութիւն, յարգանք երբէք չեն իմացել, ամենատեսակ տանջանք տալիս էին ողորմելի ծերունուն, սուտ ձիւնաւոր էին կոչում, երեսին խաչակնքելուս ձեռքն էին բռնում, յետ քաշում, գետնին թքելու պատրուակաւ նրա երեսին էին թքում, սուտ կռիւներ էին հնարում և որպէս թէ միմեանց հետ ծեծի բռնուած ժամանակ անզգուշութիւնից նորա դէմքին էին ընկնում, թէ քանիան իբր թէ նորան ազատելու նպատակ իւրեանք էլ միւսների հետ խառնուած ասնատակ էին տալիս

խղճալոյն, իրարու հանելիք բռունցքը յանկարծակի սեպելմամբ ե-
ղած ձևացնելով ծերունու մէջքին էին իջեցնում, պատերի տակի
փոշիների մէջ նստում, հողի մէջ կոլոլւում և գալիս նրա մօտ թո-
թռում էին, աչք ու բերան հողով լցնում. բանտը փոշիի ամպով
ծածկում, աղաղակ, հարայ-հրոցը բարձրացնում և մինչև բանտա-
պետի ականջը հասցնում: Եւ ահա երբ յանկարծ բանտապետի ոտքի
ձայնն իմանում էին, վազում հանդարտ տեղերը նստում էին ու բո-
լոր յանցանքը միաձայն Խէչանի վերայ բարդում, խելացնոր է, գո-
ռում էին, գլուխը պատէ պատ է տալիս, ճիչեր է արձակում, մեզ
հայհոյում է, հողը գետնիցը քանդում տանը ցրիւ է տալիս, անխը-
ռիւ հայի և թուրքի հաւասան է հայհոյում և շատ այսպիսի գըր-
պարտանքներ շարում էին իրենց անսանձ լեզուներովը:

Տգէտ բանտապետը գիտութեամբ թէ անգիտութեամբ հաւա-
տում էր այդ չարագործների խօսքերին, իր սովորական անկարա-
գրելի հայհոյանքներով սրտի թոյնը թափում էր կրկին տարաբաղդ
Խէչանի գլխին, դեռ մի քանի մահակ էլ նրա կռացած մէջքին էր
իջեցնում և հանդարտել հրամայում:

Այս ամէնը լուռ թեամբ միայն տանում էր առաքինի ծերու-
նին և չէր ուզում երբէք ոտէտ ու բիրտ բանտապետի մօտ իր
անժեղութիւնը յայտնել գիտենալ անշուշտ, թէ այս վայրենի մար-
դուն անծանօթ է արդարութիւնը, նորա իրաւախոհութիւնը միայն
իր դաղանաբարոյ վարմունքի մէջն է, նրա արժանաւորութիւնը
իր ահռելի դէմքն ու անագորոյն ձայնն է, որով միայն դողացնում
և սասանեցնում է բանտի ձիւաղներին. ո՞ր տեղից ունէր մի գե-
նուորականութիւնից անընդունակութեան պատճառաւ արտաքսուած
ատրին աստիճանաւոր այնքան խոհականութիւն, որ առաքինու-
թիւնն ու մեղութիւնը զանազանել կարողանար:

Աւելորդ էր համարում վերոգրեալ պատճառներով Խէչանը իր
անձը բանտապետի մօտ պաշտպանել լաւ էր գտնում էլի համբերել
և իր չարագործ ընկերների տուած նեղութիւնները տանել:

Հաւանական էր ուրեմն, որ բանտապետի այս օրուան տուած
աւետիքը՝ անենակը փոխելու անօրէնութիւնը Խէչանի համար մեծ
երջանկութիւն էր:

Այս փոփոխութիւնից մի ժամ յետոյ բանտապետի խօսքերը
միանգամայն փարատեցին Խէչանի մտքից երկմտութեան նշոյլը: Բան-
տապետը մի նամակ բերեց և ծերունու մօտ թարգմանելով կարդաց
նամակը, որպէս թէ Զէյվի մովսովից էր իր վերայ գրուած:

Մովսովը լնդրում էր իրանից Խէչանին շատ հանգիստ պահել հե-
տը պատկառանօք վարուիլ և եթէ նորա մօտ գալու լինի այսուհե-
տև նորա փեսայացու Սմբատ Ծվիկեանցը շարունակ այցելութեան
իրաւունք տալ: Նամակի մէջ մովսովը յայտնում էր, որ ինքը շու-
տով կուղարկի Խէչանի մօտ իւր հաւատարիմ միկիտանին, որը կը
սովորցնի նրան նաչալնիկի մօտ բռնելիք ընթացքը և տալիք պա-
տասխանները: Եւ որովհետև Սաքօն գաւառն է ուղարկուած պաշ-
տօնական գործերով, մովսովն երեկ նորա քամակից մարդ է ուղար-
կել և յետ կոչել. նա խոստանում է Սաքօյին վերադառնալուն պէս
փութանակի առանց րոպէ կորցնելու Երևան ղրկել, որպէս զի ուշ
չլինի, ինքը, որպէս թէ, նաչալնիկից թուղթ է ստացել. որ առա-
ջիկայ օրերս պէտք է քննուի Խէչանի գործը:

Խելօք ծերունի, այս երկրորդ լուրն էլ հալած իւղի տեղ ըն-
դունելց, հաւատայ միկիտանի լարած որոգայթներին և ինքն իրեն
դատապարտում էր, որ սխալ կասկածներ է տարել մովսովի ու Սա-
քօյի վերայ, իւր բերդն ուղակուելու պատճառը նրանց է համարել
իւր բարերարների ատելի դէմ սրանջացել է:

Այսպիսի ճարտար թեամբ փորած դարանից յետոյ՝ դժուար
չէ, ուրեմն, մեզ երևակայել թէ ի՞նչ զրկաբացութեամբ այս իսկ
երեկոյին մուրթը պետինը կոխած ժամանակը ընդունեց Խէչանը Սա-
քօյին, ի՞նչ ջերմ սիրով համբուրեց նրա ճակատը, երբ որ միկի-
տանն արտասուքն աչքերին մօտեցաւ, բռնեց նրա դողդոջուն ձեռքը
մի քանի անգամ միմեանց յետևից համբուրեց և ասաց.

— Խէչան աղայ, ջանս դուս գայ քեզ համար, էս ի՞նչ օրն
ես ընկել:

— Անիծուի էդ քննիչը՝ մրղէլ[1] հօր, շարունակեց Սաքօն, նոր
եկած մարդ ա, ոչինչ չի լըսում հասկացնել, ոչ ոքի լսիլ չի ուզում,
պիտի՛ն, թէ մեր խեղճ մովսովը քեզ համար ինչ լեզու ա թա-
փել, գաղտը վեր կալաւ, ազանչաք արեց, խոստացաւ ինքը քո տեղակ
գամին[2] ընկի, թաք ըլի քեզ Զէյվիցը բերդը չղրկի, չէլա՛ւ ու
չէլա՛ւ: Մի ինչ որ օրէնքի գիրք էր բերել հետը, շուտ շուտ բաց
էր անում, մտաը վրէն դնում, թէ ըսաղ էս ա գրուած, մէկել
տեղն էն: Հէնց իմանաս, թէ մեր մովսովը խոտ ա արածել էդ
գրածների տեղը չգիտի, հօ չի՛ կարելի ամէն բանի մէջ շուտ շուտ
օրէնքի գլքի պոչերը բռնել ու կախ ընկնել:

---

1 Շեկ: 2 Նրաշխաւոր:

Խէյանը ոչինչ բանից տեղեկութիւն չունէր, նա չէր լսել ոչ նոր քննչի գալը, ոչ մովսովի քննութեան ենթարկուելը և ոչ Սաքոյի միկիտանութիւնը թողնելը: Նա ի՞նչ կարող էր մտածել, թէ Սաքոն էլ իրաւունքի տէր չն, թէ իւր տեղափոխուիլը, մովսովի նամակը՝ բոլոր Սաքոյի սարքած բաներն են, ուզեցաւ իւր գործի դըրութիւնը հասկանալ:

— Սաքո ջա՛ն, հիմի ի՞նչ յոյս կայ, հարցրեց Խէյանը:

— Ինպէս փանդ ու ֆելեր[1] բանացրինք, շարադրեց Սաքոն, որ էդ քո քննչին գլխի վրայ անկել ինք, մովսովն էն թուք ու մուր ուտող էր, կամ թէ չէ ես մեռել էի, որ քշեր ցերեկ ամսալը չմըտնէի[2] ու ոնց որ սիրտս ուզեր, էնպէս չշուռ տայի: Գլխին գըլբան նաչալնիկի, մովսովի թուղթն ստանում ա թէ չէ, ձեռայ քննչին կանչում ա ու լաւ լուանում: — «պոչը-մոչդ կը խուզեմ, ասում ա, թէ որ դու էնթաւուր օգուտ տուող մովսովի խաթրին դիպել ես»: Ախա՛ր դու ինձ ասա, Խէյան աղա՛յ, նաչալնիկը խելք չունէր, որ իր հացին քացով տար, ոչ մի մհալե մովսովից էնքան օգուտ չէ գալիս իրան, ինչքան որ մեր մովսովիցը,

— Մի թէ մովսովներն իրանք էլ կաշառք տալիս են, պարմամբ հարցրեց Խէյանը:

— Ինս դրա համար ա, որ խեղճի անուտը մի քիչ կոտրուել ա, թէ կաշառակեր ա, հոգի ունիմ տալացո՛ւկ, ձեռս սրտիս դրած կասեմ, որ մեր մովսովի առած ընծէքանցից 1000-ից մի բաժինն իրան չի մնում:

— Հիմի իմ գործն ի՞նչ տեղ ա:

— Էնից դրա համար էլ գըլուխս պատռելով եկել եմ, թէ չէ էս վախտ ես Սրևանումն ի՞նչ բան ունէի: Մհալն էի գնացել մին էլ մովսովից մի մատը գիր եմ ստանում, թէ — գլուխդ էդտեղ թրչէ, էստեղ վեր արա. ընչանք իրիկուն շան պես չարչարուել էի, բերանս նշխարք չէր մտել, նոր նստել էի հացի. գեռ երկու թիքայ[3] բերանս չէր մտել որ էդ գիլն ստացայ: Միտք արի, որ հացից վեր կը կենամ, կերթամ, բայց, արևս մեռնի՛, աղայ Խէյա՛ն, թէ սուտ եմ ասում, թիքէն բողազովս կուլ չգնայ, հէնց իմանաս, թէ մինը կոպքիս բրթեց, թէ չօռ ու ցաւ ուտե՛ս, հալբաթ մի բան կայ, որ մովսովը քեզ վռազ կանչել ա, էլ ի՞նչ քո հայ չօռլամիշ

1 Հնաբքներ: 2 Համոզէն: 3 Պատառ:

ընելու[1] վախտն ա, վեր կաց կորի: Թիքէն բերնումս վեր եմ թըռնել ու ձիու քամակն ընկել: Խեղճ Թառլանս[2], ա՛խ, ես նրա առնաղներին[3] մատա՛ղ, էն հալն ընկաւ, որ ոտս օրզանգուից հանելս ու ձիուս գետնին ձգուիլը միև էլաւ. ափսո՜ս իմ ձի, լինձ վրայ շատ երախտիք ունէր:

Սաքոն ձեռքն աչքերին տարաւ և արտասուքը, որպէս թէ, սրբեց:

— Ի՞նչ էլաւ, հարցրեց Խէյանը:

— Փռուեց մէջքի վրայ ու ոտները չռեց, ընչանք ես մովսովն կշտիցը դուս եկայ. տեսայ որ եասավուլներըը քաշ էն տալիս պոչիցը, միևն էլ գանակը սրել՝ հետը գնում ա, որ քաշին քերթի:

Սաքոն աչքերիցը թափեց:

— Դարդ մի՛ անիլ, Սաքո ջան, վխտիթարեց Խէյանը, ջանդ սաղ ըլի՛, խօսքս խօսք ըլի, որ էս գժոդքիցը դուս եկած սհաթը քո հաւանած ձին քեզ համար առնում. միևին հինգ կը տամ ու սիրունչ գոմիցը դուս կը քաշեմ:

— Էյ՛հ, դու ողջ կենա՛ս, Խէյան աղա՛յ, 100 ձի քեզ ղըրբան, նրա համար ո՞վ ա հոգս անում. էնքան էր, որ միաքս ընկաւ, լացս եկաւ. թէ չէ լսկի ես մեռա էլ չպնայի, կամ միևիցը բան էլ ա էհալչլի. տեսայ որ ձիս սատկել ա, գնացի մտայ գոմը ու աչքիս առած եասավուլի ձին դուս քաշեցի, վըրէն թռայ ու լինձ Սրևան քցեցի: Գոմի դռանը ցած եմ եկել. Թառլաբաշուն[4] ձէն տուի, որ ձին կապի, լոռա ասյ ու ինքս շտապեցի լինձ բերդը քցել հէնց իմանաս եասավուլի ձին էլ Թառլանիս օրը կընկնի:

— Ախար ընչի՞ համար էդպէս շտապելով էիր գալիս, ի՞նչ կայ որ:

— Էն կայ, որ մովսովն լինձ ղրկեց քեզ պատրաստեմ, քեզ սալվացնեմ, որ քննչին կամ նաչալնիկին էն պատասխանը տաս, լինչ որ ինքը գրել ա քեզ համար, էրևի թէ ուրիշ բան ասես, քո պատասխանը նրա գրածիցը ջոկ ըլի ու բանը փչանայ. նաչալնիկը մովսովին գրել ա, որ քո գործն էս երկու երեք օրը պտի քննուի:

— Ա՜խ, Սաքո ջա՛ն, թէ որ մովսովն լինձ էս տեղից ազատել ա տուել, գու տես, թէ գուս գալուց յետոյ ո՞նց պտի նրա ոտը գնամ ու չնորհակալութիւն անեմ:

1 Լափելու: 2 Սաքոյի ձիու անունն է: 3 Սմբակ: 4 Ախոռապետ:

— Էդ յեսի բան ա, Խէչան ալա՛յ, դու դեռ լսի. երբ որ քեզ կը հարցնեն, ասա, որ ինքդ հիւանդ էիր էն քշելը. Թուրքի խոխոջը լաւմ էիր, բայց այժ չունէիր տեղնդ վեր կենալու. վերջը տեսար, որ քուորդ աղջիկը խիշան արնոտ եկաւ ու պատմեց, ինչ որ անց էր կացել: Դու էլ ասա՝ հիւանդութիւնդ մռռացար, վեր թռար, շփոթ քցեցիր, բայց խալխի մօտ էլ յեսի այժդ կտրուես՝ նատեցիր: Մոլլոյին եկած վախտն էլ, ասա՝ դու քո անմեղութիւնդ յայտնեցիր, համա երբ որ տեսար, թէ քուորդ աղջկանն ու փեսացուդ պաի բռնեն, մեղքը քո շլինքն առար,

— Դէ լմ ասելիքս էհնոց էդ ա, դարմացմամբ ասաց Խէչանը:

— Ձէ՛, դու քո հիւանդութիւնն անպատճառ ասա՛, մին էլ որ՝ դու վախեցել ես, թէ քո քուոր աղջկանն ու փեսին կը բռնեն, ընդուր համար ես մեղքը քո շլինքն առել:

— Շատ լաւ կըլնի՛, մեքենաբար պատասխանեց Խէչանը:

— Ես մհալը գնալուս Աշտարակովն անց կացայ, երեք օր յառաջ հնտուդ էի, ասաց Սաքօն:

— Հա՛, Սաքօ ջա՛ն, հէնց հիմի ուզում էի քեզ հարցնել. երկու շաբաթ ա, որ ինձ Ձէյվնցը բերել են ու ամիսը լաբարութիւն չունիմ, եարաբ ո՞նց են երեխէքս:

— Քո բաանէդ բերելու օրն ես գնացի Աշտարակ՝ գուդ[1] ձեր առնելը, վախեցայ, որ էդ լաբարն ուրիշից կխմանան ու կը նեղանան, գնացի, սիրա առի, որ գարդ չանեն: Խեղճերը, ղըրթ ա, լսելու պէս աչքներիցը թափեցին, համա ես օրթում կրակն ընկայ, որ իմ գլուխս կապանեմ ու քեզ բերդումն երկար չեմ թողալ տալ: Սմբատը հէնց էդ օրն ուզում էր Երևան գալ, բայց ես հասկացրի, որ գնա, բերդի գուռն էլ չեն թողալ մտնելու. այ, հիմի մոլլոյովը նա աչխիկիցը խնդրեց, որ բանտապանին հրամայի Սմբատին առն թողալու. սրա վրայ էլ ջոկ գիր ա պրել: Հիմի ես քեզանից գուս կերթամ, կը խնդրեմ, որ Սմբատին չի պրգելի. քանի էատղ ես, ամէն ժամանակ կարողանայ գալ ու գնալ, մնց որ Ձէյվումն էր. դու միամիտ կաց:

— Ինքը բանտապանն ինձ ասեց, պատմեց Խէչանը:

— Է՛ա՞, բաս շատ լաւ. ես էս երկու երեք օրը Երևանումը պաի մնամ, քո գործի համար մարդիկ պաի տեսնեմ, Ձէյվայ յեսի

1 Ուղեկից:

գառնալուս Աշտարակովը կանց կենամ ու Սմբատին ինչ որ պատուէրներն ա՝ կը տամ ու կասեմ, որ դայ քեզ տեսնելու:

— Հա՛, Սաքօ ջա՛ն, հա՛, էդպէս մի բան արա՛, երեխէքանցիցս կասկածաւոր եմ:

— Անպատճա՛ռ, անպատճա՛ռ, բարի քշեր, ասեց Սաքօն ու դուրս եկաւ Խէչանի մօտից:

— Ամէն բան եղի պէս դրաստուեց. խօսում էր Սաքօն ինքն իրեն իւր իջևանը վերադառնալուս, էդուցուանից մենք մեր բաղի բանը հոգանք. երկաթը տաք տաք կը ծեծեն:

ԼԳ.

ԳՕՆԱԳՆ ԱՍՏԾՈՒՆՆ Ա

Երկու երեք օր թափառեց Սմբատն Երևանումը, շատերից խորհուրդ հարցրեց, շատերի մօտ գնաց և ամէնքից մի և նոյն խօսքը լսեց, թէ քննիչն արդարադատ մարդ է, նրա աչքից ոչինչ չի փախչել և նրան մատչելը շատ հեշտ է:

— Ուրեմն տուտ չէր ասում Սաքօն, Խէչանի գործերը քննել են, բայց մոլլովը չի նդրել, մոլլովին ինքն ա սխալացրել քննչին, թէ չէ քօռ մարդ պաի ըլներ, որ չիմանար, թէ խեղճ հալեւորը գըռ ա բռնուած. գործն ինքն իրան բզաւում ձըգաւում ա, որ էդ քննիչն էլ մի բան չի էլել մոլլովի չուանովն ա հորը մտել, մոլլովը ննց շանց ա տուել, էնպէս ա գարձրել, ամէն տեղ ասում էր էս խօսքը Սմբատը:

Ո՞նչ ես ասում, ախպե՛ր, յանդիմանում էին նրան ամէնքը, էս քննչի մօտ մոլլո՞վը կը համարձակի ձէն տալ, անձախ Աստուած էս աշխարհքին մի լիս ու ձար ա արել, մի մարդ ա գըտել որ աչքանցը ծակն ա կոխել պոչը-մռչները պոկել ա, ոչ մորթում ա՝ ոչ ապրացնում. երեւում ա էդ քօռ Խէչանը մեզաւոր էր, թէ չէ նրա անմեղութիւնն էս քննչի աչքից չէր փախչել, արդար մարդին սա բլոդը չէր գըտել:

— Ասում են դեռ էս քննիչը բերդը չի մտել մհալների մովրոների դործերը պրծել ա, հիմի էլ քաղաքի ծառայողների ջանին ա ընկել, շուտով էլ բերդը պտի մտնի, խօսեցաւ մի ուրիշը։

— Ասում են ձեր մովրովին հէնց օրն ա քցել, Սմբա՛ռ, որ քո նօքարի գլուխը չգայ, ասաց մի երրորդը, հոգին բուռն ա հանաքել. հալբաթ ձեր . . . Շահապնդեանց-Կամսարականցը լաճ կը նիսա, ասում ա նրա խօսելու ժամանակը մովրովին ուռի պէս դողդողում էր։

— Չէ, ես չեմ տեսել Կամսարականին, իմ դեղումն էլաճ վախտը նա էտեղ չէր, ի՞նչ կայ որ, մի՞թէ քննիչը մեր մովրովին նեղացրել ա, քննիչն ո՞վ ա, որ մովրովի վրայ իրաւունք ունենայ, դարմացմամբ հարցրեց Սմբատը։

— Տօ դու ըսկի բանից խաբարութիւն չես ունեցել ախար մի նոր քննիչ ա էկել մովրովիների ու ղուլղուղի մարդկանց դործերն ա քննում, ձեր մովրովին, աւատաս, հինգ, վեց հազար մանէթ առաւ ու էն սհաթը ռահաթի մէջը բաժանեց մեդալի համար, մէջ մտաւ մի չորրորդը և պատմեց մեդալի անցքը։

— Վա՜յ դլխս, բաս ես հէնց դիտեմ, թէ քննիչը մենակ նէչանի դործի համար ա եկած էլել միայ մեր մովրովին ա ծակը կոխե՞լ. Բաս նէչանին ո՞վ ա բերդը ղրկել, չըլնի՞ թէ Սաքօն ինձ խաբեց, կամ թէ մովրովին ինքն ա իր դլուխն ազատելու համար Չէյվենց ուադ արել. պտեղ ըլնի ես էս քննչին պտի դանեմ։

Սմբատը թողեց ու գնաց, նա շատ շուտ դտաւ քննչի պատսպելու տեղը։

Մեծ բազմութիւն հաւաքուած էին դռանը, Սմբատը նայեց, որ ամէն մարդ դռան կանդնած թուղթ պօլիցիականին մի խօսք ասելով ներս էր ընդունուում։

Սմբատը դողալով յառաջ եկաւ և ներս գնալու թոյլտուութիւն խնդրեց։

— Դու ո՞վ ես, հարցրեց պօլիցիականը։

— Ես Աշտարակցի եմ, իմ անունս Չվիկենց Սմբատ ա։

— Մո՛ւր, ասաց թուղթը և ինչպէս կամենում էր դուռը յետ բանալ, մի անկեանցի զօրութիւն, կարծես կրկին պինդ ծածկեց։

— Էգուց արի՛, էսօր աղէն ժամանակ չունի, ասաց թուղթը։

Հալբաթ էս քննիչն էլ թիլսյաս, ես բեզարեց, քչփչացին մի քանիսը բազմութեան միջից, թէ չէ ընչանք հիմի ո՞վ էր լսել որ արդարուն յետ դարձնեն, ուղղի համար չէ էկար։

— Էս ո՞վ էր, որ ոտներս կոխրձելով յառաջ եկաւ ընչանք դուռն ու յետ դառաւ, գի՞ծ էր, ի՞նչ ա, մի մտիկ տուէք, հէնց իմանաս քամակիցը մի մհասիլ ընկած ըլնի, ո՞նց ա թողել փախչում, խօսեցաւ մի մարդ։

Այս խօսքի վերայ շատերը յետ նայեցան, որոց թուումն և Սմբատն էր։

Մէկը շատ շտապով վազում էդ տեղիցը հեռանում էր։

Սմբատը ճանաչեց, ինքն իրան բազմութեան միջից, ինչպէս եղաւ դուրս ձգեց և անճանաչի քամակիցն ընկաւ։

— Տեսար ո՞նց կորաւ, հալբաթ էս տեղանք էլ մի չարութիւն ունի մտածեց Սմբատն ու կանգ առաւ, չըլնի՞ թէ ինձանից փախաւ, չըլնի՞ թէ սրա ասելովն եասավուլն ինձ քննչի մօտ տուն մտնելու չթողեց, թէ չէ ի՞նչ կը նշանակէր դուռը բաց անելն ու էլ յետ ծածկելը։

Այս մտածմունքով կրկին յետ դարձաւ Սմբատն ամբոխի մէջ և հեռուից դիտում էր. ամէնքին էլ տուն էին թողնում։

— Մէն էլ փորձեմ, վճռեց նա ու մօտ եկաւ։

— Ես ուզում եմ քննիչ աղին տեսնել շատ հարկաւոր դործ ունիմ, խնդրում եմ ներս թողաս ինձ։

— Համեցէք, ասաց թուղքն և ուղեցաւ դուռը բանալ առանց երեսին նայելու, բայց յանկարծ աչքն երեսին առաւ և առնուն հարցրեց։

— Էլվախտ ասեցի, որ իմ անունս Չվիկենց Սմբատ է։

— Քեզ ասեցի, որ էգուց արի, բարկացաւ պօլիցիականը և երկու ձեռքով Սմբատին յետ մղեց։

— Խեղճը գլուխը քորելով յետ գնաց։

Ամէն մարդ այս բանի վերայ մնաց զարմացած, առաջին խնդրատուն էր, որին քննչի դռանը մերժում էին։

— Ոչինչ թող էս օր էլ մնի, մտածում էր Սմբատը երեւանի փողոցները չափելով, էգուց էլ կերթամ, էլօր էլ կերթամ. ընչանք ես էդ քննչի ոտները չընկնիմ, յոյսս չեմ կորցնում։ Բայց, տէր Աստուա՛ծ, թէ որ էն փախչող մարդը նա էր՝ ո՞նց աներևոյթ էլաւ, երեսը չտեսայ, շորերն էլ հէնց իմանաս փոխած ըլնէր, հա մա մեն գալուցը նրան նմանացրի, նա իմ ձեռիցն ընչի՞ պտի կորչէր, ինձանից հո վախում չէր։ Չէ ասեմ աչքս ինձ խաբեց՝ ուրիշն ընէր՝ էլ չեմ կարող ասել, իսկ նա էր, որ կար։ — Ի՛հ հէրն անի-

ծա՛ծ, դրա համար ի՞նչ եմ գլուխս ցաւացնում, ես իմ գարդի վրայ միտք անեմ:

— Գլուխը քաշ արած՝ Խէչանի վրայ մոտածելով՝ գնաց Սմբատն երեկոյին իւր իջևանը, կամ որ ճիշդն է, իւր ծանօթ Երևանցու տունը:

Իջևանները, կամ հիւրանոցները յատուկ մեր աշխարհքումն անծանօթ էին, հիմա էլ հասարակ ժողովրդի համար դա մի վերացական բառ է:

Հայոց հիւրասիրութեան վերայ մենք շատ անգամ ենք խօսացել այդ մի և նոյն բանը, սակայ բացատրութեամբ կարող ենք սեպհականացնել Հայաստանցոցն ասեմ չգիտեմ, թէ Աֆրացուն: Վերջինիս համար ես չեմ կարող ճիշդ գաղափար տալ, սակայն Հայաստանի բնակիչների համար յատկապէս կարելի է վճռել, որ այդ երկրի օդ ու ջուր, նրա կլիմայի զօրութեամբը նորա միջի բոլոր ժողովուրդը բնիկ, թէ եկաւոր, առանձնապէս հիւրասէր են:

Գիւղացիների համար երկար բացատրութիւններ տալ չի հարկաւոր, մի անգամ ասա՝ ղօնաղն Աստծունն ա՝ պրծաւ: Քաղաքացիք ևս ոչինչ բանով պակաս չեն գիւղացիներից: Վերցնենք օրինակի համար Երևանը:

Այս քաղաքն արդարև մի վաճառաշահ տեղ չէ, մեծ առևտրական կապեր չունի ընդհանուրի նշանակութեամբ, հարթուած և հեշտացրած հաղորդակցութիւններից զուրկ է, սակայն՝ ի հնուց եղել է Այրարատ նահանգի կեդրոնաքաղաքը, այստեղ էր նստում, մեղ յայտնի է, Պարսից կուսակալը տարեկան անուամբ, այս էր թաւրիզից յետը առաջին քաղաքը, այստեղ է այժմ այս երկրի նահանգապետի կացարանը, այստեղ են հաւաքուել և հաւաքւում երկու երիք աւուր ճանապարհից բոլոր Երևանու շրջակայ գաւառի ժողովուրդը առևտրական դործով: Ամէն օր պատահել և պատահում են խաժամուժ ամբոխի բազմութիւն զանազան լեզուով և բարբառներով խօսողներ ու այլ և այլ ազգութիւններին պատկանող ժողովուրդ: Երևանի հրապարակներն ու ախոռները լեքն են լինում գիւղացոց ձիանք և գրաստներ: Այս ամէնն, ինչպէս ասացինք, շրջակայ գաւառացիք են:

Համարձակ կարելի է ասել, որ եթէ ոչ մեծ մասը, գոնէ մի նշանաւոր մասը այս եկաւորների դիշերը պատսպարւում են Երևանի քաղաքացւոց աներումը:

Հիւրանոցն, ասացի սկզբումը, որ այստեղ անծանօթ էր, այժմ

էլ շատ սակաւներին, կամ դիպուածով այս կողմերն ընկած Եւրոպացի ճանապարհորդներին է պէտք գալիս, իսկ հասարակ ժողովուրդը, իսկ դրսեցի վաճառական դասը Երևանցւոց հիւրն է:

Շատ սակաւ պիշեր կը պատահի, որ Երևանցի հայը, կամ թուրքը մի երկու հիւր չունենայ, Երևանցու հայի եղբը օտարականն չը կորի:

Յորեկն Երևանցին ինքն էլ իւր տանը մի կտոր հայ չի ուտում. նա ամբողջ օրը նստած է ծալապատիկ, կամ չոքած է իւր խանութի դրանը և իւր մանրավաճառութեամբն է պարապած, մի փոքր փողոցի հայ և սակաւ ինչ պանիր է նրա կերածը, իսկ երեկոյին նա գիտէ, որ իւր տանը հիւրեր ունի և նրա սեղանը լեքն է բանակամ խորտիկներով: Երևանցին ուրախ է, որ կարող է հիւրասիրել ամէն տես ու ճանաչչին:

Մեր երկրումն անկողինը բացառապէս մի անձի համար չէ, սովորաբար մի վերմակի ներքոյ քնում են տան անդամներից մի քանիսը, մեր մահճակները բաւականին լայն են և մեր վերմակներն ընդարձակ. գերդաստանի դլխաւոր երկու ամուսինները միշտ իւրեանց մանրիկ զաւակներին և երկու պատանէների նման միևն այս և միևն այն կողմից պահպանում ու փայփայելով քնացնում իւրեանց սիրելիներին:

Բայց մի քանի ձեռք աւելորդ և թանգագին անկողին միշտ պարսած է Երևանցու ծալքումը «ղօնաղի տեղաշոր» անուամբ և այդ անկողինը շատ սակաւ դիշեր անգործադրելի կը մնայ. մի կամ մի քանի հիւր անպատճառ պարկում են նրա տակին՝ շատ անգամ միևնոյն բոլորովին անծանօթ:

Վնաս չունի, այդ յարկի տակ մանուկներն ամէնքն էլ Աստծու հիւրերն են և միևնոյն եղբայր, ակել են Երևան առևտրի, ո՛ր պէտք է իջևանէին, ի հարկէ իւրեանց ծանօթի տանը: Դեռ ես կարող եմ ասել, որ սոցա մէջ լինում են այնպիսիքը, որոց հետ բարի տանուտէրը առաջին անգամն իւր սեղանի վերայ է ծանօթանում. մէկն ու մէկն այդ հիւրերից իրանց հետ բերել են մի ուրիշին: Այդ պարոնն էլ այսուհետև այս տան հիւրը դարձաւ:

Շատ լաւ էլ գիտէ Երևանցին, որ անշուշտ իւր տանն այս և նման հիւրեր կը լինին, բայց և նէ ինքը որոնում է շուկայումն այնպիսի եկաւորներ, որոնք ծանօթ չունին և հրաւիրում է բաժանել իւր հետ մի գաւաթ սառը ջուրը իւր յարկի տակին:

Այսպիսի հիւրասիրական յատկութեան լոկ պատմութեամբը միայն ուրիշ երկրներում պատահել է ինձ զարմացնել բոլորին: Ոչ միայն եւրոպացիք, որոց մէջ մի կտոր անվող հացն անուրեւա- կայելի է, նոյն իսկ մեր տարաբնակ եղբարց, Հայաստանի հողից ու- րիշ տեղ պատուաստուած հայերի համար իմ պատմածներս կծու հայրենասիրական ցոյցեր են համարուել, ոչինչ բանով ես չեմ կա- րողացել համոզել, թէ հնարաւոր է ամէն երկրի հիւր ունենալ: Այդ բանն ինձ համար մեծ ցաւ է եղել, հայաստանցին հեռանա- լով իւր բնիկ երկրից, այդ աստիճան փոխուել է իւր նախնեաց աղ- նիւ բնաւորութիւնից: Այո՛, համեմատաբար էլի ամէն տեղ հիւ- րասիրական զգացմունքը հայերի մէջ առատ է, բայց Հայաստանի հետ բաղդատելով ուրիշ տեղերը, իմ տեսած քաղաքների հայերը իմ աչքում խորթ եղբայրներ են երեւում:

Այս ասելով ես չեմ ուզում մեծամեծ նեղբոլշներ լսօսիլ հայաստանցու ազնիւ բնաւորութեանց վերայ, ընդհակառակն ուրիշ բաներում շատ յետ է հայաստանցին օտար տեղերից, գլխաւորա- պէս հայը յետ է մնացած:

Երեւանի ժողովուրդը հասարակական գործերի եւ ազգային ըստ ստութեան հարցի մէջ մեռած է: Ահա այն մեծ պակասու- թիւնը, որ սեւ կնիքի նման դրոշմած է Երեւանու նահանգի հայերի ճակատին. եւ ափսոս այս արատիքը բնական չէ կլանել մեր ամէն ազնիւ յատկութիւնքը:

Ա՛ղբջանէս տեղը եւ ժամանակը մեզ չեն ներում երեւանցու զանազան բնաւորութեանց վերայ երկարօրէն ճառել. հիւրասիրու- թիւնն էր որ մեր Սմբատին էլ անզգայաբար քաշեց դէպի Շ հ ա ր կոչուած Երեւանու թաղերից մէկը մի հայի տուն:

Գիշերից Սմբատը, առաւօտ ամնուռէրի հետ մի նախաճաշիկ անելուց յետոյ վերադարձաւ դէպի փողոց, ուր մնա էր քննչի խոր- հրդարանը եւ քայլերը դէպի այն կողմն ուղղեց:

Իզ.

ՔՆՆԻՉՐ ԲԱՆՏԻ ԽՈՐՔԵՐՈՒՄՐ

Քննչի դուռն այսօր բոլորովին դատարկ դաւս Սմբատը. մի հայ միայն թափառում էր այնտեղ, որին մօտեցաւ նա եւ հարցրեց վախ- վխելով.

— Ըստեղ չի՞ նոր քննիչը:

— Չէ՛, հա՛, մատը բարձրացրեց մարդը, էս օր չես կարող տեսնիլ բերդը դնաց բանտարկուածներին տեսնելու:

Սմբատը վաղեց դէպի բերդի կողմն ուր մեծ բազմութիւն դը- նում էր:

Ամբոխը մօտ էր բերդի դռան եւ Սմբատն շատակից հասնել: Նաս վազելով ընչարգել էր եղել նա եւ ոտքերի զօրութիւնը կորուել ձայրը կտրած՝ դռնայ.

— Էյ, աղայ քննիչ, այ գլխիդ մատաղ, այ քո ջանին մեռ- նեմ, մի ոտն իլ կաննի՛, խնդիր ունիմ:

Սմբատի ձայնն ուշադրութեան չառնուեցաւ: Ժողովրդի կէսը բերդի դուռն անցել էր ներս, երբ նա հասուէհաս էր: Ուժահատ հանդատանցրեց նա իւր ձայնն ու քայլերը եւ աչքով միայն հետե- ւում էր բազմութեանը. խեղճը հալից ընկել էր:

Ժողովրդը ներս անցան, բերդի դուռնը մնացին պահապանները:

Սմբատի աչքերից ժողովուրդը ծածուեցաւ բերդի խոստր պա- տերի տակին եւ ինքը մէն միայնակ հասաւ պահապանների մօտ: Ե- րեւի թէ արգելուած չէր բերդը մտնելը, Սմբատը կարողացաւ ա- զատ անց կենալ, բայց մինչ դառնում էր նա դէպի արեւելեան կող- մի շինութեան միւս երեսը, յանկարծ ականջին իւր անունը դիպաւ:

Շփոթուած կանգնեց նա ու յետ նայեց, ոչ ոք չկար. իսկ ձայնը գալիս էր հանդիպից, ուր ինքը ծուռելու էր:

Կանգնեց Սմբատն եւ հետագայ խօսակցութիւնը լսեց:

— Շատ չնորհակալ եմ, որ երեկ տուն չթողեր, առ էս մի քա- նի կապիկը քեզ բաշնիքի մսեսելիք, իսկ հիմի աչքերդ չորս բաց արա, նա դէպի բերդն է գալի, ես ներսն տեսայ այս կողմը վազե- լուս, չլինի թէ կարողանայ քննչի երեսը տեսնիլ:

— Մխամիա կաց, նա իր կեանքումը մեր աղի երեսին արժա- նի չէ լինելը ասայ երկրորդն եւ երկուքը միասին յառաջ եկան:

— Էլ չես կարող գլուխդ լինձանից պահել սատանայ Սաքո՛,

յարձակուեց Սմբատը իւր դիմացն եկող նախկին միկիտանի վերայ, ես երեկուանից քեզ ճանաչեցի, որ էս Թուրքին սարվացրիր, ինձ տուն չթողաց, հիմի ի՞նչ պտի անես:

Սաքօն մի րոպէ լրեն կոլցրեց, բայց կրկին ոգևորուելով Թուրքին ասաց.

— Ես գնացի, դու քո խօսքդ կատարի:

Յետ փախաւ Սաքօն դէպի ամբոխն և բաղմութեան մէջ խառնուեցաւ:

— Ա՞լը ես գնում, անպիտան, ձայց պօլիցիական Թուրքը Սմբատի վերայ, քեզ ասում են, որ այսօր անկարելի է քննչին ներկայանալ:

— Պէտք է տեսնի՛մ, հակառակեց Սմբատն և ուզում էր փախցնել Թուրքից:

— Կարաո՛ղ, ձայն տուեց պօլիցիականն և գոնապահ զինուորները առաջին բուսան:

Մի երկու աղճատած ուսերին բառերը պօլիցիականի բերանից լսեցրին խեղճ Սմբատի ուսերքին հրայանի կոթի հարուածները: Դրանց հետևից ոստիկանի մարակը, որից զօրութեամբ և զինուորների ուժեղ բռան չնորհիւ Սմբատը կրկին դուրս մղուեցաւ բերդից, իսկ Թուրքի մարակը հալածեց նրան մինչև սուրբ Սարգիս եկեղեցու մօտերքը:

— Լաւօր էլ չէիր, յուսահատ ա՛ն քաշեց Սմբատը, բայց կը տեսնեմ ու կը տեսնեմ, հալբաթ քննիչն էսօր կը խօսացնի Խէչանին, իրանից մի բան կիմանայ:

Սմբատի ենթադրութիւնները սխալ դուրս եկան, քննիչը մերժեաւ բերդը, այցելեց բոլոր բանտարկեալներին, պահանջեց կալանաւորների ցուցակը, տուզեց Թիւը, բայց ոչ Խէչանին տեսաւ, ոչ նրա անունն յացաւորների կարգումը կարդաց:

Մեզ յայտնի է, որ Խէչանն ուղարկուած էր մովըովից առանց դործերի, իսկ Սաքօն նախապէս տեղեկանալով քննչի այդ օրուան բանտը գալու մասին, տեղափոխել էր տուել Խէչանին աւելի ապահով և մաքուր սենեակ. բանտապետի ենթադրանն այժմ Խէչանի համար էր գործել: Սակայն քննիչը ոչ իրաւունք և ոչ տեղիք ունէր մտնել այդ ենթադրանը: Այցելեց նա բոլոր բռնուածներին, շատերից մանրամասն տեղեկութիւններ հարցրեց, մի քանիսին գոտա արդար և նոյն րոպէին արձակեց. ումանց դործերը պահանջեց և այլոց վերայ խոժոռ դէմք դարձրեց:

Բաղմութիւնը, որ հետևում էր քննչին, և ամէն տեղ իրաւունք էր ստացել նրա հետ ներս մտնելու, զարմանում էր քննչի սրամտութեան վերայ, թէ ինչպէս կարողանում է արդարը մեղաւորից զանազանել:

Սաքօն տեսնում էր քննչի խելքսւթիւնը և իւրն աւելի գովում:

— Վա՛յը կը գար մեր մովըովի գլխին, թէ որ Խէչանն էլ էս տեղ ըլնէր, մտածում էր նա, բայց ափսո՛ւր Սաքօ, դու քննչի վրայ խելք ես, դա իր մահուան օրը կիմանայ ու Խէչանի երեսը չի տեսնիլ:

Մինչդեռ Խէչանը Սաքօյի թախտրդի մէջ այնպէս էր անգգայարար կաշկանդուել, որ երբէք չէր մտաբերում, թէ նոյն րոպէին երբ ինքն ուրախ նստած է բանտապետի ննջարանում, պատի միւս երեսին ի՞նչ հրաշքներ են գործուում: Շատ ցանկալի կը լինէր, ի հարկէ, Խէչանին, որ ինքն էլ նոյն ժամին գտնուած լինէր իւր մարդասպան ընկերների հետ, յայտներ իւր ցաւերը արդարացաւ քննչին, քան թէ հանգիստ նստած իւր ընտանեաց վերայ է մտածում և Սաքօյի ու մովըովի համար կեանք ու արև խնդրում:

Երկար ժամանակ քննիչը բերդիցը դուրս չեկաւ, ամէն մի անկիւնը նա մի քանի անգամ մտաւ ու ելաւ, ամենատեսակ տեղեկութիւններն ու բողոքները դրի առաւ և սիրաը ցաւած դործուած անիրաւութիւնների վերայ՝ դարձաւ իւր բնակարանը:

Ով չուշա՝[1] նա կուշա, մինչև բերդի դուռը աչքով ճանապարհ դրեց Սաքօն քննչին և ուրախ ուրախ յետ եկաւ մտաւ Խէչանի մօտ:

Այդ օրը Սաքօն մինչև մութը գետինն առնելը ծերունու մօտից չհեռացաւ:

Սաքօյի գնալուց յետոյ Խէչանին կրկին փոխադրեցին իւր միայնարանը:

---

1 Շուտ:

ԽԵ.

Ա Ջ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա՛յ, աղայ Խէչա՛ն, եկաւ քո ցանկացած չինովնիկը, պաբա-լէն[1] դրիլ եմ տուել, պատրաստել ճեացել ա քո ձեռք քաշելը. սա կը տեսնի իր աչքովն ու կը հաստատի, տուն մանելով միւս օրը Խէչանի մօտ՝ Սաքօն բերեց մի դրագիր իւր հետ:

— Յետոյ խոստմունքը պտի կատարո՞ւի, հարցրեց Խէչանը:

— Երկու սհաթ չի քաշիլ. ամէն բան վերջացած ա, միայն էս թղթի համար ա բանը էլած:

Սաքօն ծոցիցը հանեց մի դրոշմաւոր դլուած թերթ և դրեց Խէչանի յառաջը:

Թէ ի՞նչ թուղթ էր այդ, ի՞նչ չինովնիկ էր՝ մենք մեզ թոյլ ենք տալիս յետ դառնալ երեկուան օրը:

Ասացինք, որ Սաքօն մինչև բերդի դուռն աչքով հետևեց քննչին և երբ միամտուեցաւ, որ նա էլ դառնալու չէ, ինքն ուրախ ուրախ մտաւ Խէչանի մօտ և մինչև գետինը մուրթը բռնելը այնտեղից դուրս չեկաւ:

Էհա՝ թէ ի՞նչ էր անում Սաքօն ծերունու մօտ:

— Ով հուշա՝ նա կուշա. էս էր Սաքոյի վճիռը. նա մտածում էր՝ — ասօ՛, ընչանք ե՞րբ համբերեմ, իմ դովլանն[2] անց կացաւ, իմ բարեկամ մովլոմն էլ ոտի կանգնողը չի, նրա ժամերը դուս եկան, թէ էս մի բանն էլ ձեռից թողամ, ըստուց յետոյ մի ասեղ չի ընկնիլ ձեռս, որ մատիցս փուշ հանեմ:

Այս մտքով նա մտաւ Խէչանի մօտ և իւր պերճախօսութիւնը դործ դրեց:

— Էհզդ լի՛ս, աղայ Խէչա՛ն, ժպտալով տուն ընկաւ Սաքօն, համա ասելն լաւն էն ա, ասենք՝ մեր աչքը լի՛ս:

— Ի՞նչ կայ:

— Կէն կայ, որ էդուց քո նեղութիւններին վերջ կը լինի, էս օր բանաւոր մեծաւոր վերջն օրն ա. ամէն բան պրծաւ, մովլոմն եկաւ նահանգի մօտ, երկար խօսաց ու էդուց պտի գայ իր ձեռովը քեզ աղատի:

1 Կալուածագիր: 2 Բարեբաղդ ժամանակը:

— Սաքօ ջա՛ն, բերան չի տաճար ա՞, դու ինձ համար ասելիք տաքեր հրեշտակ ես դառնում, ես քո լաւութիւնի տակից ո՞նց պտի դուս գամ:

— Իմ վարձքս հէնց էն ա, որ դու ազատուում ես, ես միանդամ քեզ ասել եմ, որ կը մեռնէի, որ քեզ ըստեղ թողայի:

— Շատ շնորհակալ եմ:

— Բայց, Խէչան աղա՛յ, բարկանաս ոչ, մի բան եմ պիտեմ, որ ինձ հարկաւոր չէր առանց քեզ հարցնելու ինձնուգլուխ ոբիշի ապրանքի վրայ իրաւունք բանացնելը, համա էլ ժամանակ չկար:

— Ըմէն բան քեզ մատա՛ղ, Սաքօ ջա՛ն, թէ կուզ սաղ մըլ-քերս էլ վեր կալած սրան նրան բաշխած ըլիս՝ դու ոչչ ըլիս, ինձ պարուլ[1] ա:

— Չէ՛, ախար ինձ հարկաւոր չէր ինձնուգլուխ բան անիլը:

— Ի՞նչ ես ասել:

— Իմ յիքրս մտի քո ունեցած յիքին ծախել եմ:

— Ո՞ւմ ես տուել:

— Ես ինքս ինձ վրայ եմ ծախել, ծախողն էլ ես եմ, առնողն էլ պատմանալ մի՛, Խէչա՛ն աղայ, յառաջ լի՛, յետոյ ինձ քաքօծ ասա: Դու գիտես, որ ժամանակիս ախպէրն էլ առանց կաշառքի բան չի շինում. քո յիքին ես կաշառք տուի:

— Սաքօ ջա՛ն, չեմ հասկանում՝ ի՞նչ ես ասում:

— Հէնց հիմի կը հասկանաս: Էս տարի մի օր մովլոմն ինձ ասեց, որ ուզում ա Աշտարակ ինձ մեր յիքումը գծնաղ[2] գալ: Ուրախութիւնով ընդունեցի ու մի լաւ քէֆ շանց տուի, սաղ Աշտարակը, մհալե առաջաւոր իշխանները կանչուած էին: Դեռ հացը չբաշած, տեսայ, որ մովլոմը տանուտէրին քցել ա յառաջն ու ողջ հասարը[3] մեր երկուսի բաժինն էլ մեն ա գալիս: — Ի՞նչ լաւ բաղ ունիս, Սաքօ՛, — յետ դառնալուս ասեց մովլոմը, շատ հասանեցի:

— Քեզ փէշքեաշ[4] ա, ասեցի, գլխիդ մեռնիմ: — Շատ շնորհակալ եմ ասեց, քո ընծէն սիրով ընդունում եմ, բայց ինձ ասա՛, բոլոր հասարը քանի՞ է, թէ ուրիշն էլ կայ: — Չէ՛, ապայ, ասեցի, կէսն էն նահալ[5] Խէչանին ա, որ հիմի բերդումն ա: — Համ, ծի-

1 Հաճելի: 2 Հիւր: 3 Պարեպար: 4 Ընծայ: 5 Անձար:

ծաղաց մովսովը, ի՞նչ ես կարծում, Սաքօ՛, հարցրեց նա, Խէչանն էլ իր բաժինը չի ընծայիլ ինձ, եթէ ես նրան սիբիրից ազատելու լինիմ: — Ընչի՞ չէ, ասեցի, զլսիդ մեռնի՛մ, դու էդ լաւութիւնն արա, իմ աչքի վրայ քո ղուլլուղը [1]:

— Էդ խօսքն էզպէս ճնաց, հայրը կերան, քէֆը քաշեցին ու վերկացանք իրար հետ գնացինք Զէյվայ: Ի՞նչ ես ասում, ալլայ Խէչան, դու մի՛ ասիլ էդ մարդը դրուա մաքումը դրել ա մեր երկսի յիքին էլ զաւթի [2], եախշցա [3] կպաս, ձէթ գառաս, պոկ չէկաս, թէ քո բաժինն էլ Խէչանի բաժինն էլ ինձ համար ձեռք բեր: Ի՞նչ անեմ, ո՞նց անեմ, ջանս ցաւում ա, ես ո՞նց վերցնեմ աչքիս լսի պէս պահած բէջարած [4] յիքին տամ մովսովին: Կակմաւմեմ ու սուս կենում: Մի քանի օր ըսենց անց կացաւ: Մի առաւօտ եաս սավուլն եկաւ ինձ կանչեց: Տուն մտայ թէ չէ, ոնց որ մի քար վերցնես, մարդի զլսի քցես, էնպէս մովսովի խօսքերն ինձ կխաչան արին:

— Տէ՛ս, ոչ տարաւ, ոչ բերեց մովսովը, ինչքա՞ն անպիտանն ես, թէ դու իմ խաթրս չէիր կոտրիլ, քո բանն ու քո հարևանի բանն ինձ էիր ծախել, խեղճ Ծերունին հիմի Սիբիրից պրծած կըլնէր:

— Ի՞նչ Ծերունի, ի՞նչ Սիբիր, զոլալով հարցրի ես:

— Էն՝ ասեց, որ Խէչանի գործը վճռուել ա, երեք օրից Սիբիրը կը տանին. դու որ էն բանն ինձ զիլ չարիր [2] տալը, ես էլ գրեցի նաչալնիկին գործն ինքն իր ձեռովը քըքրեց, Խէչանին սիբիրական արեց:

— Ամա՞ն, ալլայ ջա՛ն, ոսիլ տակին մեռնի՛մ, գոռացի ու ծնկները փաթաթուեցի, էդ վճիռը փոխիլ տուր, ձեի տեղակ հինգ յիքի քեզ մատաղ:

— Ինձ մինն ա պէտք, ասեց մովսովը, թէ որ դու էլ ու Խէչանն էլ էն բանն ինձ վրայ կը ծախէք, Խէչանը կը պրծնի, թէ չէ թող գնայ կորչի:

— Գլուխդ ի՞նչ ցաւացնեմ, Խէչան ալլայ, չարունակից Սաքօն, էն քարասիրան ինձանից մի ձեռացպիր առաւ, որ տաքի թէ ոդջ երկուսիս բաժինն էլ իմն ա ու ես իր վրայ ծախեցի, զարալէն էլ սրանից երկու տարի յեռտան թուականով գրիլ տուեց:

---

1 Ծառայութիւն: 2 Տիրապետել: 3 Օձիք: 4 Միշտ: 5 Խնայեցիր:

— Էդ ծուռը-մուռը ձամփէքն ընչի՞ էր բռնում, հարցրեց Խէչանը:

— Ընդհուպ որ իլը [1] կորչի, թէ կաշառք ա վերցնում, տաքի թէ երկու տարի յառաջ, որ ասիլ ա՝ հիմի, ես քեզանից առել եմ քո բաժին յիքին ու երկու տարի յետո իրան ծախել: Հիմի կուզես բարկացի, կուզես նեղացի, Խէչան ալլա՛յ, ես մեր երկսի բաժինն էլ միացրել եմ ու առանց քեզ Հարցնելու մովսովի անուամբը զաբալայ տուել, թէ որ ինձ զաբալայ կը տաս, որ դու էլ ինձ ես ծախել՝ շատ լաւ, թէ չէ նրա տեղակ իմ մէկել բաղերն էլ քեզ կը տամ, թող իմ բաժինը կորչի, թաք ըլի [2] դու ազատուիս:

— Էդ ի՞նչ խօսք ա, Սաքօ ջա՛ն, գարձաւ Խէչանը դէպի նախկին միկիանը, դու ինձ համար որ էդ բանն արիր, հէնց գիտես թէ ես կը թողա՞մ, որ քո մի ալքաուն [3] ինձ վրայ կորչի. գընա՛, մի զաբալայ գրիլ տուր, բեր ես ձեռք քաշեմ, տար մովսովին. երբ որ ըսանելից դուս կը գամ, տես թէ քո բաժին յիքդուս տեղակ ինձանից ի՞նչ ես ստանում:

Ահա այդ կալըաճապիրը, կամ զաբալէն էր, որ միւս օրը Սաքօն մի վարձկան գրագրի հետ տուն բերեց ու Խէչանի յառաջը գրեց:

— Ալլայ, խօսեցաւ Խէչանը գրագրի հետ, ես իմ խելքիս թամամ [4] ժամանակը իմ յօժար կամքովս Աշտարակումն ունեցած իմ Կրի առուի տակի յիքին ծախեցի Սաքոյին ու ես գլխիցն էլ փոշերն ստացայ, թէ որ օրինքի առաջին պատասխան տալու բան կայ, խնդրում եմ դու վկայ ըլնիս:

— Սաքոյի խօսքովը ձեր զաբալէն ես գրեցի, պատասխանեց գրագիրը, բայց մինչև քո երեսդ չտեսնէի, ես իրաւունք չունէի սրան տալը, հիմի քեզ միւսմէ գրիչն առնել և ստորագրել:

Խէչանը գողդոջալով կալըաճապիրը ծնկան վրայ գրեց:

Սաքօն հանեց գրիչը, թաթախեց պղնձեայ երկայնակոթ թանաքամանի մէջ և տուեց Խէչանի ձեռքը.

Գրչի ծայրը դեռ թղթին չէր տուել, դեռ նոր Խէչանն ուզում էր գանել ստորագրելու տեղը, որ բանսի դուռը յետ բացուեցաւ և տուն ընկաւ Սմբատ երկու պօլիցիական ասպիճանաւորների հետ:

---

1 Հետք: 2 Միայն թէ: 3 Խազդէ վազէ մնաք: 4 Կատարեալ:

— Ափու ջա՛ն, դու ազա՞տ ես, գոռաց Սմբատն ու վազելով մտեցաւ Խէչանին։

Ծերունու ձեռքերն ես աւելի դողացին, գլուխը ձեռքիցը վայր ընկաւ։

— Սմբատ ջա՛ն, քեզ եմ տեսնում, ասաց Ծերունին ու լուռն չկրնացաւ. նա Սմբատի դէմքումը սխմուած էր։

Չեմ կարծում, որ Սմբատը նկատած լինէր տուն մտնելուս Սաքոյին ու գրագրին. նա ինքն էլ այն ժամանակը միայն ուշքի եկաւ, երբ իւր հետի եղող պօլիցիականները խլեցին նրա գրկից Խէչանին։

Փեսայ և աներ աչքները բաց արին և իրանց մօտ գտան միայն երկու աստիճանաւորներին և բանտապետին. վերջինս ափրթնած՝ կանգնած էր դռան մօտ և երկիւղից դողում էր։

— Բայց ի՞նչ եղաւ Սաքոն իւր գրագրի հետ, հարցնում ես ինձ, ընթերցո՛ղ։

— Լա՛ւ, Սմբատի տուն ընկնելուն պէս Սաքոն խլեց Խէչանի ձեռքից կալուածագիրը, վերցրեց գլուխն ու իւր հետի գրագրին աչքով անելով՝ դուրս ընկաւ սենեկից։ Այնքան արագ կատարուեցաւ այս գործողութիւնը, որ պօլիցիական աստիճանաւորները մի մի տուներ միայն նկատեցին ու չի էլ հետաքրքրուեցան նոցա մասին։

— Դու ազա՞տ ես, ափու ջա՛ն, կրկնեց Սմբատը Խէչանին, Աստուած հասը նհախին չտուեց, մի նոր քննիչ ա եկել, նա քեզ ազատեց։

— Այս ազատութիւնն ինձ համար աւելի էն պատճառաւ ա թանգ ու սիրելի, որ քո բերանիցդ լսեցի, Սմբատ ջա՛ն, ասաց Խէչանը, ի՞նչ էլաւ Սաքոն, հիմի թող գաբալէն տայ՝ ձեռք քաշեմ, հիմի հեշտ ա, էլ ձեռս չի դողդողալ։

— Ի՞նչ Սաքո, ի՞նչ գաբալայ, ափու ջա՛ն, սարսափեց Սմբատը։

— Ո՞վ միկիտան Սաքոն, ի՞նչ էլաւ, ո՞ւր գնաց, հէնց հիմի էստեղ էր, Լրի առուի տակի յիքին իրան ծախեցի մովլովի համար, գաբալէն բերել էր, որ ձեռք քաշեմ։

— Ամէնքն էլ իրանց պատիժը կստանան, ափու ջան, յուսադրեց Սմբատը, կարծելով, թէ Խէչանը ցնորքների մէջ է. ես օր Սաքոն էլ մովլովի օրը կընկնի, քո թշնամիքդ գլխի վրայ շուռ անցան։

Ծերունին ու Սմբատը միաբանց չհասկացան ու շատ էլ չըհետևեցին։

Խէչանը լոյս աշխարհ տեսաւ, նա այս երկոյ Աշտարակումն է։

ԽՕՏ.

ԿՐԿԻՆ ԵԱՍԱՎՈՒԼ ՄԱՐԳԱՐԸ

Մի շաբաթ եռասաւոլ Մարգարը քուն չունէր, հանգստութիւնը նրանից փախել էր, ոչ ցերեկուան պաշտօնատարութեան ժամանակն և ոչ գիշերը պարկած տեղը չէր կարողանում մոռանալ Խէչանին ու Սաքոյին, առաջինի բերդն ուզարկուելը, նրա տան գլխին եկած նեղութիւնները, աղջկայ մահամերձ դրութիւնը և սրա հետ միասին Սաքոյի միկիտանութիւնը Թողլը, իւր գինեվաճառութեան հետքն այնպէս ճարպիկ կերպով կորցնելը Մարգարի մտածութեան առարկան էին դարձել. ո՛ր կողմը դարձնում էր գործը, ինքը Սաքոյի գործիք լինելն էր հաստատուում և այն բոլոր թշուառութեանց պատճառն իրան էր համարում։

Ակզբումն, ինչպէս մեզ յայտնի է, Մարգարն Աստուծոյ պատասխանին Թողից Սաքոյի անիրաւութիւնը Խէչանի տան դէմ և դրանով կամեցաւ բաւականանալ, բայց վերջումն այդ բանն էլ չօգնեց իրեն, իւր խիղճը դրանով չհանգստացաւ, մանաւանդ թէ աւելի խոր խոցեցաւ, երբ միանգամ էլ գնաց Աշտարակ և տանուտէրիցը տեղեկացաւ, որ Խէչանի աղջիկը շատ չի ապրիլ։ Այն բոպէից նրա աչքերը կայծակի տեսին. վրէժխնդրութեան ախորը նրա սրտումը բուն դրեց և նա վճռեց մինչև վերջին շունչը Սաքոյից իւր վրէժն առնել։

— Ո՛վ էնց բան չի պատռնալ մտածեց Մարգարը, օրէց օր քցելով՝ իմ խղճմտանքս ծանրանում ա, սատանայ Սաքոն իր օգտի համար իմ ձեռովը մի մհաչ միջին գովուած ընտանիքի կոլչելու պատճառը դառաւ, էլ անիրաւութիւն չմնաց՝ արեց ու ամէնքն էլ փորձանքի մէջ քցեց, ինքը վեր կացաւ կորաւ, ես նրա մէկել չարու-

թխւնների համար չեմ նեղանում, Աստուածանից իր պատիժն առնի, բայց ընչի՞ համար պաի Խչանի առուն իմ ձեռովը քանդեր, Թող Աստուած ընչանք էն օրն իմ ջանը ազատ պահի, որ միկիտանին դանեմ, ինապես առնեմ ու յեսայ Թէկուզ մեռնիմ էլ դարդ չունիմ։ Չե՛ս կարող փախչել ձեռիցս, միկիտան Սաքո՛, որտեղ ըլնիս՝ կը գտնիմ, գետնի տակիցը կը հանեմ ու քեզ հետ իմ հաշիւս կը վերջացնեմ. ոչի՛նչ, ես սովոր եմ մարդի առուն քանդել, ես հին եաասավոլ եմ, խճմռանաքս մեռել ա, քեզ էլ չեմ խնայիլ. գետ կաշխատեմ օրէնքի ձեռովը քեզ աշխարհքի միջին խայտառակել, Թէ Թէ որ էնտեղից էլ դուս պրծար, իմ գիւղի առաջևցը հո չես կարող փախչել, ընչանք աշխարհքի էն գլուխն էլ որ գնացած ըլես, քամակիցդ կը գամ ու մի օր ինձ քո աչքին կերևացնեմ։

Այս էր նրա Զէյվից հեռանալու դիշերուան վերջին հրաժարականը։ Նա կամաց վեր կացաւ տեղիցը, գուրս քաշեց իւր ձին ու աննպատակ ուղղեց դէպի Աշտարակ։

Շատ ժամանակ չէր, որ Մարգարն այն տեղից գուրս էր եկել, նա հասաւ գիտէր, որ Սաքօն այն տեղ չէ, բայց էլի գնաց. գիւղի այս գլխից մտաւ, միւս կողմից գուրս եկաւ և ուղղակի ձին քշեց դէպի Երևան։

Երեք օր էր Թափառում էր եասավոլը փողոց փողոց, տեղ Սաքոյին էր հարցնում և բոլորին էլ Երևանում լինելու պատասխանն էր առնում. բայց Թէ ո՞ր էր իջևանած, ի՞նչ տեղ է գտնում՝ այդ ոչ ոք չգիտէր։

Էլ գոմ ու ախոռ չմոռաց՝ հարցրեց Մարգարը, Սաքոյի ձիու հետքն էլ չերևաց. սիրտը կոտրած՝ յուսահատ ուղեցաւ վերադառնալ և էլի գաւառներումը որոնել նրան։ Հենց այդ տեղն էր, որ բաղդն իրան քաղցր աչքով նայեց և Սաքոյին երևեցրեց։

Այս այն ժամանակն էր, որ բազմութիւնը մուտ և ել էին անում քննչի մօտ և Սմբատը Թուղք պօլիցիականիցը հալածուեցաւ։

Սաքօն, չի հարկէ, չտեսաւ Մարգարին բազմութեան մէջ, ապա Թէ ոչ, այնպէս անխոհեմ գործ չէր բռնել ու Մարգարի ներկայութիւնը Թուղքին չէր սովորցնել, որ Սմբատին ներս չըթողնի։

— Իս լաւ էլաւ, կաղը կարմիջուճն եմ բռնել, մտածեց Մարգարն ու այդ րոպէից Սաքոյի հետքը չմոռաց. գեռ Թող մի երկու օր էլ ինայ՝ տեսնենք սրա միտքն ի՞նչա։

Այս խօսքերով նա քայլ առ քայլ հետևից Սաքոյին։ Նա տեսնում էր, Թէ ի՞նչպէս բերդն էր մտնում ու ելնում. նա մինչև անգամ տեղեկացաւ Սաքոյի և բանտապետի բարեկամութեան հաստիճառ, բանտապետի սպասաւորի ձեռքով նրանց խօսեցաւծներն իմացաւ և ինքն էլ իւր ծրագիրն էր կազմում։

Երբոր Մարգարը հաստատ իմացաւ, Թէ Սաքօն մի քանի օր գեռ Երևանումը մնալու է, ինքն իւր անելիքը մտածեց։ Ամէն բանից առելի լաւ համարեց նա այս նոր քննչի ձեռքով Սաքոյի անիրաւութիւնները բաց անել։ Այդ համոզմունքով նա յաջողեցրեց քննչի ծառաների հետ բարեկամութիւն հաստատել։

— Ես քննչի դիւանխանումը չեմ ուզում երևալ, դիմացիս Թշնամին շատ հեռու ա տեսնում, Թէ որ բան գլխի ընկնի, գըլուխ կառնի կը կոչէ, լաւն էն ա մի իրիկուն իր տանը տեսնեմ ու ամէն բան տեղնուտեղն իրան յայտնեմ։

Ահա այս վճռի վերայ հաստատուած՝ նա աննպատակ Թափառում էր Երևանի հրապարակներումը, երբ աչքովն ընկաւ քննիչը ամրոխի առաջն ընկած՝ դէպի բերդը գնալիս։

Մարգարն ամրոխի հետ ներս մտաւ բերդն և քննչի քամակից գնում էր։ Նա յանկարծ կանգ առաւ. նրա աչքովն ընկաւ Սաքօն, որ շփոթուածի նման քայլերը փոխելով՝ ժողովրդի հետ մի աչքը դէպի յետ էր։

Մարգարը լսեց Սաքոյի և պօլիցիականի խօսքերն և տեսաւ Սմբատին գուրս անելը։

Էլ չհետևեց եասավոլը քննչին, Սաքոյի հեռանալուց յետոյ ինքն էլ գուրս գնաց Սմբատի քամակից և նրան հանդիպեց ճիշդ այն ժամանակն, երբ խելքը հալածուած պօլիցիականի մորակից, յուսահատ կանգնած էր Սուրբ Սարգիս եկեղեցու կողմերն և չէր իմանում ո՞ւր գնայ, կամ ի՞նչ ձանապարհ բռնի։

Մուխը գետինն առել էր այսօր, որ քննիչը տուն եկաւ։ Նա իւր տանը մարդ չէր ընդունում և կարիք էլ չկար, ամէն ոք կարող էր ազատ մտնել նրա իրաւարանն և իւր ցաւերը յայտնել։

Ծառայի մի երկու խօսքը բաւական եղաւ քակտել տալ քննչին իւր դրած կարգը. նա իսկոյն հասկացաւ, որ իւր ձեռքի տակն էլ չարագործութիւններ են կատարուում, որ ամէն ինդրատու ներս չեն առնուում, որ ինքն իւր այդքան ձգտութեան մէջն էլ գեռ շատ պակասութիւն ունի և իւր կամաց հակառակ չի կարողանում ժողովրդի պահանջը կատարել։

Խոկոյն նա ընդունեց եպսավոր Մարգարին և Սմբատին:

— Ըղջայ Ջա՛ն, գլխիդ մատա՛ղ, երկուքն ի միասին քննչի առաքեն ընկան:

Ի՞նչ ունիք, պատմեցէք, բարձրացրեց նրանց քննիչը, միամիտ եղէք, որ ձեր խնդիրն առանց ուշադրութեան չի մնալ:

Մարգարը մի առ մի պատմեց իւր խաբուած օրից, ինչ որ անցել էր, կցելով դրա հետ և Սաքօյի ու մոլբովի բոլոր արածները, իսկ Սմբատը շարունակեց Խէչանի տան ներկայ դրութիւնը պատմել:

Քննչի անձը քաոսնեցաւ, նա այլայլուեց, նա իւր արած քննութեանց մէջ շատ գործեր էր բայց արել բայց այսպիսի եղեռնագործութիւն առաջին անգամն էր լսում: Նա երբէք չկասկածեց ձշդութեանց մասին:

— Ո՞ր է այժմ այդ ձեր ասած գարմանալի հանճարի տէր միկիտանը, հարցրեց քննիչը:

— Հիմի Երևանումն ա, գլխիդ մատա՛ղ, ասացին երկուսն էլ, բայց նրա կացարանը ոչ ով չի իմանում:

— Գետնի տակիցը կը հանեմ, շեշտեց քննիչը վերջին բառը:

— Էգուց ինքը լնանակի պէս ոտներդ կընկնի աղայ Ջան, ասաց Մարգարը, նա քո դիւանխանի դռներիցը չի հեռանում, նա ուզում ա իմանալ թէ ի՞նչ տեղ ձեռացին մոլբովի գործերը, նա գիտի որ Սմբատն աշխատում ա քո երեսը տեսնել. ինքն էլ դրա համար քանի ջանում ա կայ պտի չարչարուի որ էդ բանը գլուխ չգայ. էդ բանի համար նա իր կարողութիւնի կէսը կը տայ:

— Ահա ի՞նչպէս է, որ ես այսօր բանտում չկարողացայ տեսնել ձեր ասած Խէչանին, առաձները կրճտելով ասաց քննիչը, միթէ իմ աչքիցս այդպիսի բանը կարէր փախչել, ես ամէն տեղ մարդ եկայ բանտի մէջ, բոլոր մատեաններըը քրքրեցի և այդպիսի մի անուն չտեսայ:

— Խանտապետի սենեակն էլ մտա՞ր, գլխիդ մեռնի՛մ, ասաց ժպտալով Մարգարը, նրա քնելու օթեակն էլ բաց արի՞ր:

Քննիչը զարմացական դէմք առաւ:

— Ոչինչ բանի վրայ մի՛ զարմանալ, աղայ Ջա՛ն, դու իմաստուն մարդ ես, շատ մարդիկ ես տեսել, բայց ես իմ գլուխս կը տամ, թէ որ միկիտան Սաքօյի պէս մարդ տեսած լինես:

— Ահա բոպէիս ես ինքս կերթամ բանտն և ամէն անկիւնները նորից կը խուզարկեմ ասաց քննիչն ու տեղից կանգնեց:

— Թէ ինձ կը լսես, աղայ Ջա՛ն, չես շտապիլ, ասաց եպսավորը, ծակ ու ծուկեր քրքրելու կարիք չկայ, Խէչանը հիմի էլ չէտ իր օթախումն ա, քո գնալուց յետը բանտապետի ննջարանիցը հանեցին. եթէ ինձ չես ասատում, էգուց առաւօտ ինքդ գնա ու տե՛ս:

Քննիչն անպատճան լսեց Մարգարի խորհուրդը, հրամայեց երկուսին էլ գիշերել իւր տանը և միւս օրն առաւօտեան երկու պօլիսական ասպիճանաւորների հետ ուղարկեց նրանց Խէչանին ազատելու:

— Սաքօն հիմի ըստեղ կըլնի, գլխիդ մեռնի՛մ, ասաց Մարգարը, էս քշեր նա քնած չի ըլնիլ, ես լսեցի, որ նա ուզում ա Խէչանի բաղը ձանգը քցել. դու Սմբատին ու էս երկու աղէքանցը հրամայի բանալ մանկին, ինձ հրաման տուր, որ դռանը Սաքօյի բուսունը պահեմ, որ աչքից չփախցնեմ:

— Իրաւունք ունիս, հրամայեց քննիչն և ձանապարհ դրեց նրանց, բայց աւելի զգուշութեան համար մի քանի դարանակալներ էլ նրանց քամահկին ուղարկեց:

Մեզ յայտնի է, թէ ի՞նչպէս ներս մտաւ Սմբատը Խէչանի մօտ, ինչպէս Սաքօն յափշտակեց Խէչանի ձեռքից կալուածագիրն և դուրս ընկաւ իւր ընկերը դրադրի հետ:

Ոչ դարանակալներն և ոչ Մարգարն իրաւունք ունէր ձերբակալել Սաքօյին, նրանք միայն աչքով պահեցին:

— Խեղճ Մարգար, հոգին դուրս եկաւ երևանու շուկան պտըտելով, հարիւրաւոր ծանօթ ու անծանօթից հարցրեց. ոչ ոքից բաւարար պատասխան չառաւ, Սաքօն մի կաթիլ ջրի պէս երևանու մէջ անհետացաւ: Դարանակալներն էլ իրենց պաշտօնը չկարողացան կատարել:

Շատ զղջաց քննիչն իւր անխոհեմութեան մասին, իւր մեծադործութիւններն իւր աչքին նուաստացան, ինքն իրեն յայտնի համարեց Սաքօյի մեծութեան և հանճարի առաջին:

Երեք օր ամբողջ պօլիցիան Երևանը տակնուվրայ արեց քննչի հրամանովը. Սաքօն չկար, որ չկար:

Գաւառակապետներն էլ հոգեհան եղան, միկիտան Սաքօն չերևաց:

Ցաւն այս է, նեղանում էր քննիչը, որ այս մարդն արդարև կայ, ամէնքը նրան ճանաչում են և այժմ անհետացաւ:

Աշխարհքի էն ծերն էլ գնացած ըլես, միկիտան Սաքօ', ես երկաթէ սրխներ պտի հագնեմ, երկաթէ գաւազան ձեռս առնեմ ու քու քառակիյդ գամ, քո իզը չես կարող կոլցնել, իմ ձեռիցը չես պրծնիլ:

Էս վէճիս տուից իւր մէջ եասավուլ Մարգարն ու դիւղէ դիւղ, քաղաքէ քաղաք ձիու վրայ նստած ամիսներով պատռտում էր Սաքոյին:

ԽԱՉ:

ՀԱՐՍԱՆԻՔՆ ՈՒ ՄԱՀՆԻՔՆ ԱԽՊԻՐ ԵՆ

Շատ պարմացաւ Խէչանը, երբ Աշտարակ մնաւ, իրենց տանը մօտեցաւ և իւր ընտանիքից ոչ ոք նրա յառաջը չդուրս եկաւ: Նա տեսնում էր, որ ամէն մարդ գալես, աչքալես էին խօսում, ջահէլներից շատերն էլ վաղում էին դէպի իւրեանց տունը տեսնելու, կամ ժողովրդական խօսքով անկաջառնուկ տալու, բայց իւրեանցից յառաջ եկող չկար:

Ընանց այդ էլ Խէչանի վերայ այժ էր մնացել, հիմա երբ կասկածն ասլացաւ, երբ իւր ընտանիքը տեսնելու փափաքի վերայ իւր տանը մի ժժրալդ արկածք պատահած լինելու երկիւղն էլ վերան եկաւ, բոլորովին ձեռաց դնաց, փոքր մնաց դեռ իւրեանց դուռը չհասած՝ ձիու վրայից վայր էր ընկնում:

Բակի դռան շեմքի միւս երեսին էր, որ Հերիքնազը ծերունու ձեռքը համբուրեց:

— Բաս ո՞ր ա Հեղնարս, դողդոջուն ձայնիւ հարցրեց Խէչանը:

— Տանն ա, մի քիչ քէֆ չունի, շատ նուազ պատասխան եղաւ:

— Ախպէր ջա՜ն, սենեկի դռանը ծերի վզովը փաթաթուեց Մարիամը, ախպէր ջա՜ն, քո քիրը մեռնի, էդ ի՞նչ օրն ես ընկել, ձյաց նա և ուշադնաց եղաւ:

— Ա՛յ քի՛ր, աչքերդ բաց արա, նուազելու վախտ չէ, էս օր մեր տանն ուրախութիւն պտի ըլնի, համա սիրտս ուրիշ բան ա ասում, Հեղնարս չի երևում:

Շրջապատողներից տանիք չկար քաշեցին Մարիամին:

— Հեղնա՜րս, ո՞ւր ա Հեղնարս, տուն մտնելով գոչում էր Խէչանը, չըլի թէ աչքս դուս ա եկել:

— Էստեղ եմ, ախու ջա՜ն, շատ թոյլ ձայն եկաւ վերին անկիւնից:

Հիւանդն ինքնին կարողացաւ նստել անկողնի մէջ:

— Ա՛յ գլխիս . . . . ահա այն միակ հնչիւնը, որ լսելի եղաւ թշուառ ծերունու բերանից:

Աչտեղ իմ գրիչս կանգ է առնում, խօսքեր չեմ գտնում այս սրտաշարժ տեսարանը նկարագրելու. ամէն ոք թող ինքը մի քանի րոպէ աչքի առաջ բերի այդ տխուր հանդիսը և կզգայ:

Հայր ու աղջիկ երկուսն էլ հիւանդ, երկուսն էլ հալ ու մաշ եղած, երկուսն էլ ուժահատ, խօսելու կարողութիւնից զրկուած՝ զրկախառնուած ծնացել են. հօրը Սմբատն է զրկել քահանի կողմից ու պահպանում, իսկ աղջկանը Հերիքնազը. լռութիւնը տունը տիրել է. ներկայ եղողների միմեայն աչքերի արտասուքն է երևում և հառաչանքների ձայնն է գալես. ամէնքն անշարժ են և տխուր վիշտ են այս հոգևնաշ տեսարանին:

Փոքր ինչ հեռուումը երկու հոգի ևս բռնել են մի պատառ կնոջ, որի հեկեկանքը միայն չի լսուում և աչքերումն արտասուք չի տեսնում. խեղճ Մարիամ, նա թէպէտ սթափուել էր եղբօր խօսքերից, բայց նախկին արձանացած դրութիւնն էր տացել և թէ չէնայեմ տեսլը՝ խելքը կորցրել էր ու չէր իմանում արածը. նորա երեսի վրանուկքը միայն շարժուում էին, երբեմն ծիծաղական էին այդ ծամածռութիւնքը, երբեմն բարկացական և երբեմն զարմացական:

— Սմբա՜տ, ի՞նչ ես ապատում, կտանց քչփչաց Հերիքնազը, երկուսն էլ ձեռաց դնացին, յետ քաշինք սրանց:

Խէչանի ուշքը գլխին էր, նրա ականջը սուր էր, Հերիքնազի խօսքերը նրան, ինչպէս քնից զարթնեցրին. նա ինքն ամենայն պզտուքութեամբ յետ բացեց դատեր կռնակն իւր վզից և Հերիքնազի ու Սմբատի օգնութեամբ պարկացրեց անկողնումը:

Ախտ ջա՜ն, բարով, հալալ բարի՜ ես եկել, աչքերը բացեց Հեղնարը, կը բաշխես, որ քեզ տեսնելու վրայ ուրախացայ ու սիրտս թիլացաւ. հիմի էլ երկիւղ մի անիլ, խելքս գլուխս եկաւ. հիմի ես հասկանում եմ, թէ դու ի՞նչ նեղութիւններ ես քաշել, որ էդքան փոխուել ես. մի կողմից թէ մեր հոգսն ա քեզ մաշել, մե-

կէլ կողմից պարզ երևում ա, որ շատ ես սանջուել ու չարչարանք քաշելը թէ չէ մի դարտը, ասած ա, մարդ չի սպանիլ։ Ա՛յ ազգա-կա՛ն, բարեկամնե՛ր, գարձաւ դէպի հանդիսատեսները, շատ չնորհակալ եմ ձեզանից, գիտեմ դուք էլ ուրախացել էք իմ հօրս ա-զատուելու վրայ ու եկել էք ձեր սրտի ուրախութիւնը մեզ յայտ-նելու, բայց թողութիւն կանէք, ես լրիկունը մեզ մէնակ թողէք, մեր սրտի կարօտը լրարից առնենք ու էդուց ամէնքդ էլ համեցէք մեր տուն աչքալոս, մեր գլխի վրայ տեղ ունիք։ Հօքի՛ր, ձայնը բարձրացրեց հիւանդը, հերիք ա, ուշքի արի, մօտացի՛, մեր կշտին նստի՛։

Ա՛րևամբ լուռ ու մունջ նոյն շարժողութիւններովը բաժա-նուեց իրեն բռնողներից ու եկաւ եղբօր մօտ նստից։

Ամէնքը դուրս գնացին։

— Ես քո ջանին մեռնի՛մ, Հեղնար ջա՛ն, ասաց Խէչանը, դու էգ ի՞նչ հալի ես, մկար[1] Սմբատն ինձ խաբում էր, որ ամէն վախտ գալիս քո առողջութիւնի խաբարն էր բերում ինձ, ես տես-նում եմ, որ դու իմ գնալուց յետը տեղաշորի միջից վեր չես կա-ցել։

— Էդ ամէնը թող, ափու ջա՛ն, մեղանից ոչ մինը մեկ-լեցը պակաս չի չարչրուել քո վերից երևում ա՝ ինչ որ քաշել ես բանաի մէջ, քիրդ տեղն ու տեղն ոսկոռ ա դառել, Հերիքնազը էլ քո թողած ալ վարդը չի, աւելի վատթար կը լնէր, թէ որ աստ ման ղահրը[2] չինքին չըլնէր, Սմբատն էլ քիչ չի վեր պիտել . . . ա ի՛, ափու ջա՛ն . . . էս ի՞նչ փորձանք էր, որ մեր գլխին ե-կաւ . . .

Հեղնարն էլ չկարողացաւ շարունակել, հառն և ընչաքցելու-թիւնը նրա ձայնը կտրեցրին։ Ողորմելին չէր ուզում տեղիք տալ այդ արգելքներին, շատ ուզեցաւ էլի սկսել խօսակցութիւնը, բայց հը-նար չեղաւ. ձայնը կտրած՝ լռեց հօր երեսին նայելով արտասուքի կայլակներ էր թափում աչքերից։

— Հեղնար ջա՛ն, արևիդ մեռնիմ, խօսեցաւ Հերիքնազը, ի՞նչ բանի ես, միաք արա, որ դրանով քո հօրդ ոդջ ոդջ գե-րեզման կը դնես, հանդարտուի՛, սիրտդ բռնի՛, քեռուս անդանակ մի՛ մորթիլ ու քերթիլ. տես թէ ի՞նչ օրն ա ընկել։

1 Մի՛թէ 2 Հոգս։

— Հիւանդը փոքր ատ փոքր հանգստացաւ. հազը դադարեց. նա աջ ձեռքով նշան տուեց, որ ինքն այժմ իրեն լաւ է զգում։

— Ախու ջա՛ն, մի քանի ժամանակից յետոյ ասաց Հեղնարը, սիրտս նստեց, ես ուզում եմ քեզ հետ խօսալ պտի ականջ անես։

— Քեզ մատա՛ղ, Հեղնար ջա՛ն, մէջ մտաւ Հերիքնազը, դեռ դրա վախտը չէ, դեռ Թող քեռիս էլ մի քիչ գնջանայ, դու էլ մի փոքր ուժի արի, փառք Աստծու, հիմի էլ հօ գնալու չէ, հիմի-կէց դէնը ամէն օր մեր կշտին ա, էդո՛ւց, էլօ՛ր կը խօսաս։

— Զէ՛, խնդրում եմ, լինճ ոչ ով չը խառնի, հրամայաբար ձեռքը բարձրացրեց հիւանդը, էլ ըստուց յարմար ժամանակ չի ըլ-նիլ, ես ափունիս գալուն էի սպասում, իմ ասելու խօսքերը սիրտս կոծում էին, շատ վախտ ա՝ էս օրին էի ծնում ու հիմի փառք Աստծու արժանացայ, իմ Աստուածը մենձ ա էլել, խնդիրս գետնին չթողեց։

— Ես ուզում եմ, որ խօսայ երեխէս, մեքենաբար ընդհատեց Ծերունին, դրա ասածներն լինճ համար սուրբ են, դրա խօսքերն աւետարանի պէս պտի կատարեմ, դա վատ բան չի հանիլ իր բեր-նիցը։

— Շատ չնորհակալ եմ, ափու ջա՛ն, քո հոգին էլ վկայել ա, սրանք գետ ջահել են, դէնից չեն հասկանում, ոգևորուեց հի-ւանդը, բաս լսի՛ ինչ որ ասում եմ. քո բանուելու օրից դէսն իմ մէջքս գետնիցը չի կտրուել, ես էս տեղաշորին եմ տեսել, տեղա-շորն լինճ։

— Իմ աչքերը դուս գան, բալայ ջա՛ն, մէջ ընկաւ Խէչանը։

— Զէ՛, վնաս չունի՛, ես ուրախ եմ էս բանի համար, Աս-տուած արդարադատ ա, Նա հախը նհախին չի տալիս, ես էս պատժին արժանի եմ եղել, թէ որ ես չպատժուէի, շատ պտի նեղա-նայի. ղըրթ ա, ափու ջա՛ն, մեր տունը մի հալալ տուն ա եղել, ղըրթ ա՝ դու միշտ ճշմարտութիւնի հետ ես գնացել, բայց դու բանից խաբար չես, ոնց որ քո սիրան ա, ուրիշի սիրան էլ ընկնից ես կարծել, դու չես իմացել, թէ քո տանը մի փուչ կինդանին կար, որ պատճառով Աստուած մեր ողջ ընտանիքին պատժեց, պատժից ու դրանով լինճ ուրախացրեց, թէ որ չէր պատժել նրան, թէ որ նրա տեղակ մէնակ դու պտպշխարանք քաշէիր, ես շատ պտի նեղանայի։

— Իմ տանն ուրիշ մեղաւոր չկայ, բալայ ջա՛ն, ես եմ քո ասած անարժանը, ես եմ ու Աստուածն էլ իմ մեղքն իմ երես-ովը տուեց, խօսքը կտրեց Խէչանը։

— Չէ, դու չես, ափու ջա՛ն, Աստծուն բարկացնողն ես եմ, իմ պատճառովը դու էլ ըլար տեղը կրակի մէջ ընկար, քո մեղքը հէնց հնգան էր, որ լինձ պէս անպիտան աղջկանն երես տուիր ու սէրնիդ ու երը որ ես Աստծու ընդդէմ բան էի անում, դու կռնիցս բռնած՝ յետ չքաշեցիր: Մէնակ դու չես մեղաւորը, էս տան գլխաւորներն ամէնքն էլ մեղաւոր էին ու իրանց մեղքն ապաշխարեցին:

— Ի՞նչ ես ասում, Հեղնար ջան, ես քո խօսքերդ չեմ հասկանում, ոչ ով էս բանի մէջը մեղաւորութիւն չունի, դուք ամէնդդ էլ լոի պէս արդար էք, թէ որ Աստուած մեր տան վրայ բարկացար, ասեցի, որ իմ մեղքիցն էր, դուք իմ տեղակ տանջուեցիք. ասում ա՝ հէրերը ժուռ կերան, որդկերանց ատամն առաւ:

— Համբերի, ափու ջա՛ն, ես իմ խօսքերս մի միւս պարզեմ. դևտե՞ս ինչ ա մեր մեղաւորութիւնը, դու մեղաւոր ես ընդով, որ մի մտաք անհասկացող երեխի գլուխը կապել ես, բաշխք ես արթմայ ես արել. ես մեղաւոր եմ ընդով, որ խելքի եկած օրից քո խօսքը չեմ ուզեցել կատարել, քո հակառակ եմ գնացել, Թոդած իմ նշանածին՝ սիրել եմ մեր Հարևանի ապայ Արշակին ու կամք եմ առել իրան դնալու. Հօքերս մեղաւոր ա, որ մի կողմը Թիլ[1] ա Թոդել վրէս չաւ չի հակոդութիւն ունեցել, դրա համար էլ ես իմ չափս չեմ ճանաչել. Հերիքնազս մեղաւոր ա որ իմացել ա մեր միջի սէրը ու քեզ չի ասել, Սմբատն էլ մեղաւոր ա, որ իր աչքովը տեսել ա իր նշանածին օտար ոտի հետ խօսալուս, ու չի թքել հետացել, ընդ հակառակն աւելի սէրն աւելցրել ա ու ինց որ տեսնում ես, վերջին չնչումս էլ չի ուզում ինձ Թոդել:

— Ի՞նչ ես ասում, Հեղնար ջա՛ն, սարսափեց Ծերունին:

— Ա՛, ափու ջա՛ն, խօսքումս սուտութիւն չկայ, քո աղջիկդ քեզ որդի ասուելու արժան չի, որդի ա, Աստծուն էլ ա յայտնի, որ իմ ու Արշակի մէջ դարդակ խօսքերից ու երեխայական յիմարութիւններից աւելի ոչինչ չի անց կացել, համա էդքանն էլ շատ ա:

— Դու Արշակի վրայ աչք ես ունեցել, Հեղնա՛ր, Հարցրեց խոժոռած Հայրը:

— Ա՛, իմ հէր, Աստծուց Թաքուն չի, քեզանից ի՞նչ պահեմ: դրա համար էլ Աստուած իմ մեղքն իմ երեսովը տուեց ու

1 Թոյլ

ես շատ ուրախ եմ. հիմի խղճմտանքս հանգիստ ա, Ծիտեմ, որ դու պատի ներես, Թէ ասեմ, որ հիմի ապաշխարել եմ ու մեղքիս Թողութիւն ստացել: Տէ՛ս, տէ՛ս, ափու ջա՛ն, վատուեց Հեղնարի դէմքը, տէ՛ս, երկնքի դռները բացուել են, հրեշտակներն երեք պսակ են բռնել իրանց ձեռին, դրանց միևը հօրաքուերս ա, միևը իմը ու երրորդը քոնը. մոիկ տո՛ւր, առաջին պսակին արժանանում ա հօքիս, մէջ տեղինն իմ գլխին են դնում, վերջինը քեզ են տալիս:

— Հեղնար ջա՛ն, Թոթովեց Ծերունին, էդ ի՞նչ ես ասում իմ տունս մի՛ քանդիլ:

— Չէ, չէ, ոգևորուած շարունակում էր հիւանդը, ես սուտ չեմ ասում, մենք իրեքս էլ ճամփորթ ենք, էս օր դես ես ու հօքիս կերթանք, մի քանի օրից էլ դու մեր քառնակիցը կը գաս. բայց ընչանք խօսքս չլսեն դրախտի դռները մեր համար չեն բացուիլ մի քանի բան էլ ունեմ ասելու, խօսամ ու վերջանայ:

— Ասա՛, ասա՛, բալէ՛ս, աչքը հիւանդի վրայից չվերցնելով՝ սոսկալի դէմքով ասաց Ծերունին:

— Ես ասեցի, որ Աստուած մեր մեղքը մեր երեսովը տուեց, բայց նա ինքը շատ ողորմած ա, նա չի ուզում, որ խէչանենց խէչանի օջախն էս աշխարհքումն անցնի ու վերջանայ: Էս երկուսի մէջը (Հեղնարը մատնացոյց արեց Սմբատի ու Հերիքնազի վրայ) Աստծու հրամանովը սէրը վարուց վատուել էր, բայց սրանք ուզեցան, որ իրանց սրտի ցանկութիւնն ապանեն իրանց մէջը, էլ չմտացան, Թէ Աստուած ինչ որ անօրինել ա, էն պատի ըլնի:

— Հեղնար ջա՛ն, մրմնջաց Հերիքնազը:

— Լռացի՛ր, ափու ջան, ուշք չդարձրեց Հեղնարը, Աստծու կամքն էն ա, որ ինչպէս երեխութիւնից դու Սմբատին փեսայ ես ընդունել էնպէս էլ հիմի ճանաչես ու ինչպէս որ Հերիքնազին քո հաղալ աղջկանից չես ջոկել, էսօր էլ էն աչքովը մոիկ տաս. Հեղնարն ու Հերիքնազը քեզ համար միևն են էլել, Աստուած էլ քեզ ու մեր ամէնքին միխիթարելու համար կամենում ա, որ Հերիքնազը Հեղնարի տեղակ Սմբատի նշանածը դառնայ, դարձ՞ել ես, ափու ջա՛ն, Աստծու հրամանին:

— Սեռնիմ Աստուն, ա՛յ որդի, ասեցի, որ քո խօսքերդ ինձ համար աւետարանի կողքին գրուածի պէս են. ես էլ հիմի հասկանում եմ, իմ հոգիս էլ վկայում ա, որ դու դրէմ ես ասում. երկնքի դռները բացուել են ու մեզ կանչում են. եկէք որդի՛ք, հե-

րիքնա՛գ, Սմբա՛տ, եկէք ձեր քուռը առաջին չոքեցէք, գարձաւ ծերը դէպի նոցա. ա՛յ պառաւ քիրս, դու էլ օրհնի էս երկու երեխին ու մենք մեր ճամփէն գնանք:

Աբձանացած Մարիամը մի փոքր յառաջ նստեց, իսկ սիրահարները աչքները կախ արտասուում էին:

— Ի՞նչ է ք գլխներդ կախ քցել, ձայնը բարձրացրեց Հեղնարը, էս էլ հո ես չեմ, իմ հէրս՝ էս տան տէրն ա ձեզ հրամայողը:

Ծերունին տեղից կանգնեց, նա բռնեց երկու ամոլների կռներից և յառաջ քաշեց.

— Չոքեցէ՛ք, հրամայեց Խէչանը:

Նոքա հնազանդեցան:

— Իմ հայրական ձեռովս միացնում եմ ձեր ձեռները, ասաց ծերը, ես օրհնում եմ ձեզ, իմ զաւակնե՛րս, թող Աստծու օրհնութիւնն էլ ձեր վրէն ըլնի, Հեղնարիս կամքը թող կատարուի:

— Հիմիկեց դէնը ես ուրախ սրտով իմ աչքերս կը փակեմ, Աստուածանից խնդրել եմ, որ ձեզ էս աշխարհքում բաղդաւոր անի, գողդոջուն ձեռքերն երկինք բարձրացնելով մաղթեց Հեղնարն ու համբուրեց նրանց:

Երեք ձեռք իրար հետ դրուեցան նորանշանների գլխին, երկու ձեռքերի տէրերը բերանացի օրհնութիւններ և բարեմաղթութիւններ էին կարդում, իսկ երրորդը միայն լռել՝ աչքերով էր իւր սրտի զգացմունքը յայտնում:

Այդ Մարիամն էր:

— Խնամի Աղաջա՛ն, տանուտէ՛ր, հասարակութի՛ւն, ասաց Խէչանը հաւաքուած բազմութեանը, դուք մի՛ տխրէք իմ ու աղջկանս կամքը լսելով, ճակատի գրուածը չի ջնջուիլ, ինչ որ Աստծու կամքն ա, էն պտի ըլնի, իմ խնդիրս մէնակ էս ա, որ Սմբատիս մի փառաւոր հարսանիք անէք ու Հերիքնազիս օրինաւոր ժառանգ ձանաչէք:

Խէչանի խնդրանօք դերձիկ Սահակի տղէն գրեց կռակն և գիւղական կարգաւ սուորացրուեցաւ:

Մի ամս օրը Խէչանի տանից երկու դաշտ էին դուս տանում, այդ Հեղնարինն ու Մարիամինն էին: Ամէնքը լալիս էին, իսկ ինքը Խէչանը ձեռքերն երկինք տարածած՝ հեզամտուհչ ապօթում էր:

Ընդպիսի մի մահնիք էլ մի շաբաթ յետը պատահեցաւ եօթը կառաբելու ժամանակը Հեղնարի դերեզմանի վերայ: Մի ծերունի դէմքը չերմի վերայ դրած՝ լուռ ու մունջ լալիս էր: Ծերաէրն ըստ

աւօրութեան օրհնութիւնը վերջացնելուց յետոյ՝ ծերի կռնիցը բռնեց, ուզեցաւ բարձրացնել, որ մխիթարանք խօսի: Քահանային ձեռքը շտապ յետ քաշեց: — Ձեր տունը չքանդուի՛, ձայն տուեց նա, սա մեռած ա:

— Խեղճ մարդ, մեռնուեցիր, կրկնեցին ամէնքը, գնա՛, Աստուած հոգիդ լուսաւորի՛, պարտական ըլի էն մարդը, որ քո օջաղին խէթ մտիկ տուեց:

— Աղջա՛ն, յառաջ կանչեց տէրտէրը միւս օրը գերեզմանատունը թաղման ժամանակը Սմբատի հօրը, մեր հանգուցեալ Խէչանի կամքն էր, որ իր մեռնելուց յետոյ դու ընկիս իրա ժառանգների հէրը և աշխատես իրա օջախի ծուխը չկտրել. շուտ հարսանիքի պատրաստութիւն տես, եկող շաբաթ էսքան տրտմութիւններից յետոյ մի ուրախութիւն պտի վայելենք:

Սմբատի ու Հերիքնազի հարսանիքը շատ յաջող անց կացաւ. ամէնքն ուրախ էին, բայց նորապսակների սիրտը կոտրած էր: Փոքր առ փոքր ժամանակն ինքը բուժեց խոցուած սրտերը:

ԻՐ.

ԻՆՉ Ջ Ե Ղ Ա Ի Մ Ի Կ Ի Տ Ա Ն Ս Ա Ռ Օ Ն

Մի անգամ Պարսկաստանի խորքերում մի գիւղի հրապարակի վերայ ամբոխը հայհոյելով քարշ էր տալիս մի թշուառ մարդի. շատերն էլ քարեր էին ձգում նորա վերայ:

— Հերի՛ք է, շունչը փչեց, գժոխքը գնաց, գոռաց մի մոլլայ, դադարեցէ՛ք. այժմ պէտք է գիւղից շատ հեռու մի հոր փորէք և մէջը ձգէք:

— Ա՛յս ի՞նչ շփոթ է, ո՞վ է այս մարդը, հարցնում էին միմեանցից նոր եկող հետաքրքիրները:

— Ղէշիշ-ադայ-մոլլէն ասում է, որ սա մեր հաւատը հայհոյող է և թէ պէտք է սրան քարկոծել, պատմում էին միմեանքն և նորեկների մեկնաբանութիւնը գրգռում:

— Ո՞վ էր այդ սպանուողը և ո՞վ քէշիշ-աղայ-մօլլէն, հարցնում ես դու ինձանից, ընթերցող։

Լա՛վ։ Քեզ յայտնի է, որ միկիտան Սաքօն արդարութեան ձեռքից անհետացաւ. եասավուլ Մարգարն էլ նորա քամակիցն ընկաճ՝ որոնում էր։

Երկու տարի էր Մարգարն ամէն տեղ հարց ու խնդիր էր լինում և միկիտան Սաքոյի հոտը Պարսկաստանումն առաւ։

Նա արդարև գնաց գտաւ միկիտանին մի գիւղում և ճանաչեց։

— Սաքօն այժմ թուրքացել, մօլլայ էր դարձել և չգիտեմ ընչի՞ց. գուցէ քրիստոնէութիւնից Մահմետի կրօնքը փոխուելու պատճառաւ կոչուում էր ժողովրդից քէշիշ-աղայ-մօլլայ էլիաղ։

Մինչ խեղճ Մարգարը հնարքներ էր որոնում մօլլայ-քէշիշ-աղայից իւր վրէժն առնելու, մեր նախկին Սաքօն իւր բնական խելքովը հասկացաւ Մարգարի գալատեան պատճառն և պրդռեց իւր ժողովուրդն ընդդէմ եասավուլի, ասելով, որ այդ մարդը Մարգարէի սուրբ հաւատը հայհոյող է և ինքը Մարգարէիցը երազումը պատուէր է ստացել նրան քարկոծել տալու։

Քէշիշ-աղայ մօլլայի կամքը կատարուեցաւ։

Հիմա ասում են, որ Սաքօն մի մեծ գիւղի մօլլայ է։ Նա շատ թշուառութեանց պատճառ է դառնում; ամէն օր իւր գիւղականաց հետ կռիւներ է անում և բոլորին ձանձրացրել է։

Վ Ե Ր Ջ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ Arm.SSR
ՀՀ, Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

16294
3.0

2013